



Լոյս, արարիչ լոսոյ առաջին լոյս.
 Բնակեալք 'ի լոյս յանճարոց
 Հայր երկնաոր' 'ի դասոց լոսեղնացն օրհնեալ.
 'ի ծագել լոսոյ առաւօրոս,
 ծագէ ա 'ի Հոգիս մեր սլոյս ին իմանալի

Լոյս 'ի լոսոյ ծագումն արեգակն արդար.
 անճառ շնորհք Հօր Որդի.
 յառաջ ինն սարէն անտն ին զովեալ ընդ Հօր.
 'ի ծագել լոսոյ առաւօրոս,
 ծագէ ա 'ի Հոգիս մեր սլոյս ին իմանալի

Լոյս, 'ի Հօրե քղեոսն արքեւր քարոթեան,
 Հոգիք Սոսք Լարոս-ժոյ.
 մանկրանի եկեղեցոյ ընդ Հրէշրակն սլեւ սոսաքանն.
 'ի ծագել լոսոյ առաւօրոս,
 ծագէ ա 'ի Հոգիս մեր սլոյս ին իմանալի

Լոյս, Երրեակ Է մի անթափանչ Սոսք Երրորդութիւն.
 սլեւ ընդ երկնայնացն երկրաժեկն մեշր սոսաորեմի.
 'ի ծագել լոսոյ առաւօրոս,
 ծագէ ա 'ի Հոգիս մեր սլոյս ին իմանալի

ԼՈՅՍ 'Ի ԼՈՒՍՈՅ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՍԺԳ
2013

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian

sivacian@sympatico.ca

**Ազատ զգացէք ձեր շրջանակին զրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:
Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիւրուած է:**

Տպագրուած - Printed

POSTNET®

**NEIGHBOURHOOD BUSINESS CENTRE
Design, Print, Copy, & Ship**

**5175 Yonge St., North York, ONT. M2N
5P5**

CANADA

Tel: 416 733 8000 - Fax: 416 733 9001

www.postnet.ca/on113



Եւ Հոգի՛ եւ փեսայն՝ որ Գալոցն էմ .
 եւ որ լսէ՛ ասելով թէ եկ ,
 եւ որ Ժարաս-ի իցէ՛ եկեացէ ,
 եւ որ ո՛վ կամի
 ասանուլ զԶորն կենաց Յրի :
 (Յայտնութիւն ԻԲ : 17)

Հոգին ու Հարսը կ'ըսեն . «Եկո՛ւր» ,
 եւ ան որ կը լսէ՛ թող ըսէ . «Եկո՛ւր» :
 Ըն որ Ժարաս է՛ թող Գայ ,
 եւ ո՛վ որ կ'ուզէ՛
 թող Յրի ասնէ կենանի ջորը :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
հասել եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
Հեանեալ աղբիւրներէ.*

ԱՍՏՈՒԿԾԱՇՈՒՆԶ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՆԵԱՅ ՄԵՐՈՅ 'Ի ՀԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱԳՈՅՆ ԲԱԳՐԷ 'Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ
1805 'Ի ՎԵՆԷՏԻԿ. ՈՒՄԾԻ
'Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ԱՍՏՈՒԿԾԱՇՈՒՆԶ ԳԻՐՔ

**ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՐԱՅԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ԲԱԳԻՐՆԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԿԾ**

**ԱՍՏՈՒԿԾԱՇՈՒՆԶԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՊԷՅՐՈՒԹ. 1981**



ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

**ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ
ՇԱՐԱԿԱՆՔ
ԱՂՕԹՔ**

ՏԱՂՔ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՆԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ՇՆՈՐՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով եւ թելադրութիւններով գործս դիւրացնող մի քանի բարեկամներու:

Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց, որոնք գիրքիս մէջ գործածուած պատկերները քաշած, հայթայթած եւ հրատարակած են:

Աղօթարար եմ,

որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:



ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ԷՁ
- 4- Ծանօթութիւն
- 5- Շտորհակալութիւն
- 6- Բովանդակութիւն
- 8- Կենսագրական
- 9- Յիշատակ
- 11- Ձօն

- 13- Նախաբան
- 25- - Յառաջաբան

- 37- Ա - Լոյս 'Ի Լոսոյ
- 49- Բ - Ի՞նչ է գիտութեան նպատակը
- 53- - Գիտութեան Դասակարգում
- 55- - Սէր եւ ծառայութիւն
- 59- Գ - Ի՞նչ են մարդկային բնութիւնները
- 73- Դ - Աստուած կա՞յ թէ չկայ
- 97- Ե - Ի՞նչ է ճշմարտութիւնը
- 110- - Երրորդութիւն
- 115- Չ - Ի՞նչ է վերստին (երկրորդ) գալուստը
- 131- - Լեբան քարոզը - երանիները
- 159- Է - Ի՞նչ է աղօթքը
- 195- - Տերունական Աղօթք
- 213- Ը - Ի՞նչ է աստղագիտութիւնը
- 247- - Ի՞նչ է թուագիտութիւնը
- 277- Թ - Ի՞նչ է վերամարմնացումը
- 301- Ժ - Ի՞նչ են Հաւատքը եւ Հաւատարմը
- 323- ԺԱ - Ի՞նչ է յոյսը
- 337- ԺԲ - Ի՞նչ է սէրը
- 379- ԺԳ - Ի՞նչ է մեղքը

- 407- ԺԴ - Հայաստանեայց Առաքելական
Եկեղեցւոյ Սուրբ պատարագի
մեկնաբանութիւն
- 437- ԺԵ - Յաւերժական
- 439- - Ի՞նչ են խակրաները
- 453- - Ի՞նչ է «Գունտալինի»ն
- 465- - Ի՞նչ է խոկումը

- 475- - Վերջաբան եւ խորհրդածութիւններ
- 493- - Եզրակացութիւն

- 495- ԺԶ - Առաձներ
- 497- - Եպիգտետոս-Ոսկեայ առաձներ
- 501- - Տերվիշի մը խրատները
- 503- - Սուփիական տեսանկիւն
- 505- - Օմար Խայեամ - Քառեակներ
- 509- - Կանտի - Համբաւաւոր առաձներ
- 515- - Պուտոյակական ասացուածքներ
- 519- - Հափժնական
- 521- - Ամերիկայի բնիկներու առաձներ
- 527- - Լաօ Չուէ առաձներ
- 531- - Ժողովրդային ասացուածքներ
- 539- ԺԷ - Պատմուածքներ
- 541- - Երեք ծառեր
- 545- - «Գագի»ի Թագաւորը
- 551- - Թագաւորը եւ ծառան
- 555- - Յաւերժական ոտանաւորներ
- 566- - Բաղդատական բառացանկ

Առջեւի կողք

-Արեւագալի Ժամերգութենէն երգ-Լոյս 'ի Լոսոյ

Ետեւի կողք

-Առաւօտեան Ժամերգութենէն երգ-Առաւօտ Լոսոյ


ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ոնճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ճօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ըստանտօք գաղթած էն Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ճօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: **Յօդուածներ** հրատարակած է արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:



Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թագաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն մէջ: Ուրար կրեւու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն, **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերիմոսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննասինդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՄԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
 ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
 ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
 ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
 ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր ջանքերը իբր սյուրիս նետեր դուրս արձակուեցան:

Աղեղնախորը աշտոխի ճնաքոխ իր թիրախը ԿԵ ՏԵԱՆԷ ԵՒ Աղեղն ջորախոր ԿԵՐՊՈՎ ԿԵ ԴՐԿԷ, ուրիշաթի իր նետք արագ է՛ շեռոխ էրթայ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԴՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ Եղաք ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ սլաճոր նետք ԿԵ ՍԻՐԷ, տղյաքն ալ շատաք աղեղն:»

(յարատուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)

ԱՅՏԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արեւը կը ծագի կը ծնի, եւ մայրամուտին կը մեռնի: Աս կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ քանի որ Համայն մարդկութիւնը ամէն օր ականատես կ'ըլլայ թէ արեւածագին եւ թէ արեւամուտին: Բայց անոնք որոնք անջրպետ գացին, տեսան որ իսկական ճշմարտութիւնը ան է, որ արեւը ոչ կը ծագի եւ ոչ ալ մայրը կը մննէ, այլ իր ըյսը անդադար կը սփռէ ամէնուրեք:

Մարդ արարած կը ծնի եւ կ'ապրի կ'ըսենք կեանք ունի, կը մեռնի կ'ըսենք կեանքը աւանդեց: Մեր մարդկային տեսանկիւնէն կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ քանի որ կը տեսնենք մեռելալի անշարժ մարմինը: Ուրեմն կը Հետեւցնենք թէ Կեանքը եւ մահը իրարու Հակադիր են: Մահը ծոնոյին Հակադիրն է, այո՛, բայց երբեք Կեանքին:

Քրիստոս ըսաւ «Ես եմ Կեանքը եւ Ճշմարտութիւնը»: Քանի որ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ուրեմն Կեանքն ալ Աստուծմէ է եւ Աստուծոյ Հետ է եւ Հետեւաբար յափտենական է ու անկարելի է որ մեռնի: Եթէ կը Հաւատանք Քրիստոսի խօսքին, ուրեմն մարդիկ կեանք չունին այլ Կեանք են, եւ չեն մեռնիր:

10 Նոյեմբեր **1955**ին, Կեանքը յարմար տեսաւ մարմնանալ մանուկի մը ծոնոյով, որը կոչուեցաւ Ատա Էօզզօրլուօղլու: Ինք ծնաւ Ֆիտան եւ Վարդան ծնողաց: Իր միջոցաւ, Կեանքը ուրախութիւն եւ ինդութիւն սփռեց բոլորին, որ ճանչցան Ատան. նախ իր ծնողքին, յետոյ իր եղբօր Արմանին, որուն ինք շատ մօտ էր եւ շատ կը սիրէր. նաեւ անոր ընտանիքին՝ սիկիսոյ Էլէնայի եւ զաւակներուն՝ Մատթէոսի եւ Նատայի ու իր բոլոր ազգականներուն: Կեանքը որոշեց ըստաւորել իմ էութիւնս երբ մենք ամուսնացանք **21** Փետրուար **1987**ին:

Ատայի իմաստալից խօսքերով տեսակէսներով գաղափարներով եւ նամանաւանդ վարակիչ ինդուածքով Կեանքը անգամ մը ես երջանկութիւն եւ իմաստութիւն բերաւ ինձի, ազգականներուս նաեւ մեր բոլոր ընկերներուն:

Նոյն Կեանքը իր բացարձակ իմաստութեամբ եւ Աստուծոյ կամքով յարմար տեսաւ թողուլ Ատային մարմինը եւ վերադարձաւ իր աղբիւրին՝ Աստուծոյ, պատճառ ունենալով մէկ տարուայ քաղցկեղի հիւանդութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցին գիտակցաբար ամէն յուզարկաւորութեան կ'երգէ ուրախութեան երգ: Մենք ալ ուրախութեամբ երգենք «Ի Վերին Երուսաղէմ»ը, Ատային միջոցաւ Կեանքին աշխարհ բերած երջանկութիւնը, ուրախութիւնը եւ իմաստութիւնը տօնելու Համար:



1955-2010



**ՄՈՅՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԸ ԶՈՒՆԱ
ՎԱՊԱՄԵՌՆԻԿ ԿՈՊԱԿԻՅԻՆ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՂԱՎ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





Եթէ դու-ն դու-ն ըլլաս,
 է- էս ալ՝ էս.

Ոչ դու-ն դու-ն կ'ըլլաս,
 է- ոչ ալ էս՝ էս.

Բայց եթէ էս չեզ ըլլամ,
 է- դու-ն ալ՝ ինչ

Ըյն ապէն, թէ դու-ն դու-ն կ'ըլլաս,
 է- էս ալ՝ էս:

(Գոկո. Լեւոն Գասարճեան)

ՆԱԽԱԲԱՆ



Իմ խորին շնորհակարութիւնները
կը յայտնեմ Գերշ. Տէր Բագրատ
Եպս. Գալատանեանի, Գերշ.
Փրոֆ. Հայր Լեւոն Ծ. Վրդ.
Չէքիեանի եւ Վերապատուելի
Փրոֆ. Դոկա. Սողոմոն Նիկողոս-
եանի, իրենց գրքիս անտիպ
օրինակը կարդալու բարեհաճու-
թեան եւ կամեցողութեան, նաեւ
որպէս նախաբան այս տողերու
յաջորդական էջերուն մէջ
տեղագրուած գրութիւններուն
համար:

Վ. Ս.



ԼՈՅՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ...

Սրտի անհուն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ կ'ողջունենք “Լոյս ի Լուսոյ” գրքի լոյս ընծայումը Դր. Վահէ Սվաճեանի կողմից, որը հեղինակի տարիների աշխատանքն է եւ այս ժամանակահատուածում խոհերի եւ մտքերի համադրումը՝ որպէս իր ապրած հաւատքի իւրայատուկ վկայութիւնը եւ կեանքի անձնական փորձառութեան արտայայտութիւնը:

Արդէն իսկ գրքի յառաջաբանում շատ յստակ կերպով յայտնուած է սոյն գրութեան նպատակը: Ինչպէս կը նշէ մեծայարգ Դր. Սվաճեանը «Այս գիրքին նպատակը հաշտեցնել է աւանդութիւնը անձնական փորձառութեան հետ, անձնական փորձառութիւնը՝ գիտութեան հետ եւ գիտութիւնն ալ՝ աւանդութեան հետ: Գտնել երեքին հասարակ տեսանկիւնը: Աւանդութիւնները մեկնաբանել առանց գիտութեան օրէնքներու խախտումի եւ շեշտել անձնական փորձառութեան կարելորութիւնը եւ անհրաժեշտութիւնը հաւատարիմ Յիսուսի խօսքին ...»:

Սա ինքնատիպ մի ճանապարհորդութիւն է, որն ընթերցողին կը տանէ դէպի հաւատքի խորքերը՝ պարզ խօսակցութեամբ եւ բազմաթիւ օրինակներով երկխօսութեան բոնուելով նրա հետ: Այս գրքոյկը նաեւ ինչ որ առումով գալիս է մատչելի կերպով աւելացնելու այն ճշմարտութիւնը, որ հաւատքը եւ գիտութիւնը՝ ոչ թէ կը մերժեն միմեանց այլ կը փոխլրացնեն՝ այսպիսով առաւելագոյնս ներկայա-

ցընելով մարդկային կեանքի ամբողջականութիւնը:

Այս հրատարակութիւնը հայելին է եւ արտացոլանքը, ինչպէս նաեւ լաւագոյնս կը ներկայացնէ հեղինակին՝ Դր. Վահէ Սվաճեանին, իր հոգեւոր խորն աշխարհով, մարդկային բարձր նկարագրով եւ մեր Սուրբ Եկեղեցու գիտութեամբ զինուած ու նրա հանդէպ ունեցած սիրով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր սէրն ու գնահատանքը կը յայտնենք սիրելի Դր. Սվաճեանին, ինչպէս նաեւ աղօթք կ'առաքենք առ Միածինն Յիսուս թէ՛ իր գործի եւ գրչի յարատեւութեան եւ թէ՛ իր սիրելի կողակցի տիկին Այտայի հոգու խաղաղութեան համար:

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Հայր Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը լինեն ձեզ հետ: Ամէն:

Միրով եւ աղօթքով՝

Բագրատ եպիսկոպոս Գալստանեան

Տնօրէն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Հասարակական Հայեցակարգային Հիմնադրոյթների

Բաժնի



ՈՒ ՄԵՆՔ ԵՐԹԱՆՔ ԴԵՊԻ ԱՂԲԻՒՐԸ ԼՈՅՍԻՆ ...

Անակնկալը ցնցիչ բան մը ունի միշտ, անկախաբար ցնցումին ուրախառիթ կամ տխրաբեր բովանդակութենէն, առանց մոռանալու որ յաճախ ուրախն ու տխուրը կը գուգակցին, կը խառնուին կեանքի իրականութեան մէջ:

Այդպիսի անակնալ մըն էր, երբ ստացայ ամիսներ առաջ, սիրելի Վահէ Սվաճեանի նամակը, երբ արդէն երկա՜ր տարիներ էին անցեր մեր առաջին հանդիպումէն, ծանօթութենէն և, յատկապէս, Վահէի ու Տիկնոջը՝ Այտա Էօզգօրլուօղլուի՝ միասնաբար մասնակցութենէն 1991-ի այլեւս հեռաւո՜ր, ժամանակի մշուշէն սքօղուած այդ տօթ Օգոստոսին, Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանին հովանաւորութեամբ՝ մեր Պո-Արաքս Մշակութային Միութեան կազմակերպած Հայ Լեզուի և Մշակոյթի Ամառնային Խտացեալ Դասընթացքին: Կա՛յ անցեալ ժամանակ մը, որու միայն վերյուշն իսկ ամբողջ աշխարհ մը կ'արժէ, կ'ըսէ ժողովրդական գեղեցիկ առած մը, գոր կարելի չէ չգուգորդել սա միւս իմաստուն թելադրանքին՝ Լիացած է այն մարդը, որ կ'ապրի իր յուշերով:

Վահէի նամակը, որքան անակնկալ, նոյնքան ալ կսկծագին և ուրախառիթ էր միանգամայն իր բովանդակութեամբ, ինչպէս կը պատահի յաճախ՝ ըսինք՝ կեանքի իրականութեան մէջ, ուր կ'ընդելուզուին դաժանն ու քաղցրը, անողորքն ու մայրագորովը միահաղոյն: Երբ Վահէն կը յիշեցնէր իր

պաշտելի կողակցին՝ Այտայի տարածամ մեկնումը այս աշխարհէս, կը թարմանար մէջս ցաւ մը՝ որ արդէն ենթարկուած էր ժամանակի բուժարար սպիացման ամոքումին: Բայց Վահէ կը յայտնէր նաեւ՝ իր կողմէ աւելի քան հինգ հարիւր էջանոց գրական հոգեւոր վաստակի մը իրացումը, աւետելով անոր մօտալուտ հրատարակութիւնը և խնդրելով ստորագրեալէս նախաբանել ներկայացման երկու խօսք:

Չէի կրնար չընդառաջել: Այնքան խո՛ր էր իմ վրաս տպաւորութիւնը այդ երիտասարդ ամուլին որ, ի տես իրենց, ինքնաբուխ կը ծագէր սրտիս մէջ մաղթանքը՝ երանի՜ բոլոր գոյգերը այսպէս ըլլային:

Այսօր մանաւանդ՝ երբ կ'ապրինք աշխարհի մը մէջ, զոր կարելի չէ այլապէս բնութագրել՝ եթէ ոչ աշխարհակուլ, այսինքն՝ ինքնակեր, ինքնասպան գազան, ուր ընտանիքը սկզբունքայնօրէն չքացած, աւելի ճիշտ յօշոտուած է արդէն, տեսնել ծնունդը՝ իրերանուէր ամուլի մը հոգեխառնումին երկունքը եղող հոգեպատում մատեանի մը, ուրախութեան յորդագոյն աղբիւր կը դառնայ, և յոյսի պատնէշ: Քանի որ յոյսն ինքը՝ եթէ միշտ բերկրածին է, ուրախութիւնը՝ ոչ միայն յոյսի ծնունդ կամ առիթ, այլ յոյս է ինքնին: Չէ՛ր շաղկապէր զանոնք անտարանջատօրէն մերս անմահն Նարեկացի, երբ յաւերժութեան այգաբացին կաթոգին ծարաւովը կը գոչէր՝ «Բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն», խօսքն ուղղելով առ Այն՝ որ է «Արեգակն արդար, ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափաք անձկութեան»:

Վահէ Սվաճեանի այս գիրքը, ինչպէս ինքը հեղինակը հանգամանօրէն կը բացատրէ, նախ կտակ

մըն է, կտակի մը կատարումը: Կտակը՝ իր սիրասուն Այտային: Բայց նաեւ քառաձեռն շարադրուած երկ մըն է, նոյնինքն Այտայի ներշնչանքներով և՛ տարիներու հոգեպարար հոգեգրոյցներու ընթացքին՝ հոգեբուխ թելադրանքներու փոխադարձ ներընկալումներով:

Այս գիրքը ապա յուշարձան մըն է, լաւագոյնը՝ զոր կրնար կանգնել Վահէ իր Այտային ի յիշատակ:

Բայց այս գիրքը նաեւ «գանձարան» մըն է, այն իմաստով՝ որով այս վերնագրումը տուած են դպրոցական ընթերցանութիւններու իրենց դասականացած դասագիրքերուն Հրանդ և Զապէլ Ասատուր, մեր մշակոյթի բուրաստանին մէջ ծաղկած անմոռանալի ամուր: Վահէ Սվաճեանի այսօր համեստօրէն մեզի ներկայացուցած թանկագին հատորը իսկապէս գանձարան մըն է խոհերու, խոկումներու, աղօթախառն մտածումներու, երկնաբեւեռ հայեցողութիւններու, լուսահառաչ թելադրանքներու, հոգեպարար ներշնչումներու:

Հուսկ, այս գիրքը է՛ նաեւ – չեմ վարանիր այս հաստատութեանս մէջ – օրինակ մը, գրեթէ բնորդ մը, կոչուած՝ զարկ տալու, հրահրելու մեր մշակոյթի գրական անդաստանին մէջ բազմացումը նմանատիպ երկասիրութիւններու: Կ'ապրինք ազգովին, գուցէ և առանց անդրադառնալու – ինչ որ դէ՞ռ աւելի մտահոգիչ կը դառնայ – պատմական հանգրուանի մը մէջ, ուր հոգեխօսական, այսինքն՝ կրօնքին և հոգեւորութեան, ներքին, հոգեւոր կեանքին վերաբերող գիտական և գրական արտադրութիւնը, երբ մանաւանդ թարգմանական կալուածէն դուրս գանք,

չափազանց նօսրացած է, չըսելու համար գրեթէ անգոյ է: Երբ բաղդատենք ներկան՝ նոյնինքն այս մարզին մէջ մեր փառապանծ անցեալին հետ, կացութիւնը ողբալի հանգամանք կը ստանայ: Եթէ նկատի առնենք մանաւանդ, որ խնդրոյ առարկայ նօսրացումին կ'ընկերակցին՝ շրջապատին, հանրային կարծիքին կողմէ լռելեայն կամ բացայայտ ցուցաբերուած անտարբերութիւնը, թերագնահատանքը ու մերթ մինչէլ իսկ վերէն դիտողի երգիծոտ, արհամարհոտ, անգամ գոռոզ հայեացքը, եւս ահազանգային կը դառնայ մեզ աքցանող տխուր իրավիճակը: Պիտի չմոռնամ երբեք յարգելի, հոգելոյս հոգեւորականի մը, տարիներ առաջ նուաստիս ուղղած ճարահատ, գրեթէ յուսահատ հարցումը. «Հայր Լեւոն, ես անպէտ կամ տխումբ եմ արդեօք, որ ժամանակս հոգեւոր գիրքեր գրելով կ'անցընեն»: Բիւր ավստս, որ նման վարանում մը կը ծագէր այդ անձին մէջ, որոշ երգիծական ակնարկներէ, ծիծաղկոտ կամ հեզնոտ գնահատանքներէ, որ իրեն կ'ուղղուէին հոգեկիցներու կողմէ:

Նման հանգամանադրութեան մը մէջ, Վահէ Սվաճեանի ներկայ հեղինակութիւնը կը ստանայ ուրեմն նաեւ խիզախումի, քաջութեան արարքի մը բնութագրումը, միաժամանակ դառնալու համար մարտահրաւեր. լուրջ մարտահրաւեր մը:

«Լոյս ի լուսոյ» հատորին՝ մեր հոգեւոր գրականութեան ծիրին մէջ ներկայացուցած նշանակութեան, կատարած ներդրումին, ստանձնած խորհրդանշական իմաստի մասին այս հակիրճ նշումներէն վերջ, պիտի ուզէի քանի մը խօսք

աւելացնել՝ անոր բովանդակութեան նկատմամբ: Բնականաբար, կարելի չէ մի քանի տողերու սահմանին մէջ անդրադառնալ հինգ հարիւր և աւելի էջանոց հատորի մը պարունակութեան:

Ինչ որ կ'ուզէի շեշտել առաջին հերթին՝ Վահէ Սվաճեանի փարումն է Քրիստոսի հաւատքին: Հեղինակը հաւատացեալ քրիստոնէայ մըն է խորապէս: Իր խոհերուն և խոկումներուն հիմնական աղբիւրը, չափանիշը, ուղենիշը Աստուածաշունչն է և մասնաւորապէս Քրիստոսի խօսքը, որոնցմէ մէջբերումները կը դրուագեն գրքին ողջ հիւսուածքը: Հեղինակը ուզած է սակայն ուրուագրել իր խոհերուն համար աւելի համապարփակ, տիեզերական հորիզոն մը՝ կատարելով ակնարկներ, համեմատութիւններ այլեւայլ ժողովուրդներու մշակոյթներուն մէջ թաքուն, առկայծ ճշմարտութեան և իմաստութեան նշոյլներուն հետ, մերթ նաեւ մէջբերելով անոնցմէ պատումներ, վկայութիւններ ելն: Նոյնը կատարած է մեծ կրօնքներու և մարդկութեան մեծ միտքերուն նկատմամբ ալ, ինչպէս են պուտտայականութիւնը կամ Կանտին կամ Օմար Խայեամ ելն: Կրօնքներու միջեւ զուգահեռներու նշումները, որ երբեմն կը ներկայացուին, պէտք չէ անշուշտ հասկնալ տառացի իմաստով՝ իբրեւ միադիմի եւ միանշանակ նոյնութիւններ, այլ աւելի՝ որպէս մատնանշում կամ թելադրանք որոշ նմանութիւններու կամ հանգիստութիւններու, քանի որ գիտենք՝ թէ Քրիստոսի ճշմարտութեան հետքերը ցանուած են մարդկային հոգեւորութեան և կրօնապաշտութեան հազարամ-

եակներ ներառնող երկար, շա՛տ երկար ուղեւորութեան գրեթէ բոլոր հանգրուաններուն մէջ:

Վահէ Սվաճեանի խորհրդածութիւններուն ուրիշ շատ կարեւոր մէկ երեսակն է՝ հեղինակին սուր, հոգեգրաւ զգայնութիւնն ու հոգը բարոյական Արժէքին, մարդ անհատին և մարդկային հասարակութեան բարոյական վարքագիծին նկատմամբ: Ուշագրաւ են, մանաւանդ թէ անաչառօրէն նկատելի ու սերտելի, կը կարծեմ, ինչ որ կը գրէ ի մասնաւորի հայ եկեղեցական շրջանակներու մէջ տեղի ունեցող որոշ տհաճ, անընդունելի գործընթացներու նկատմամբ, որոնք, դժբախտաբար, փոխանակ մեղմանալու և դէպի բարւոքում ուղղուելու հեղինակին շարադրութեան և այս տողերուս գրութեան միջեւ անցած ամիսներու ընթացքին, ընդհակառակն ծանրացած են և՛ ցաւոք՝ այնպէս կը թուի որ դեռ ատելի ծանրանալու կը միտին:

Ազգային վարքագիծի վերաբերող ուրիշ կէտ մը, զոր նոյնպէս շատ կարեւոր կը նկատեմ՝ մանաւանդ հարիւրամեակի այս սեմին, Մեծ Եղեռնի նկատմամբ մեր վերաբերումն է, յաճախ փարսախներով հեռու հաւանօրէն՝ մեր Սուրբ Նահատակներուն իսկ մեզի աւանդած Կտակէն, մեզի հրամցուցած անվիճարկելի, բիրեղատիպ օրինակէն ու փաստէն:

Փակելով այս տողերը, պիտի ուզէի արտայայտել պարզ մաղթանք մը: Վահէ Սվաճեանի տարիներ առած, տարիներու ընթացքին մտածուած, գրի առնուած ու վերատեսուած այս երկասիրութիւնը թո՛ղ բերէ իր ուրոյն նպաստը այն դարաւոր չուերթին՝ որու մէջ ներգրաւուած է Հայ ժողովուրդը, յատկապէս

քրիստոնէական իր մկրտութեան և վերածնութեան երջանիկ թուականէն սկսեալ և զոր այնքան գեղեցիկ քանդակած է դիմառնաբար Նահատակ բանաստեղծը

Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին ...

Հ. Լեւոն Զեքիեան

Վենետիկ, 11 Օգոստոս 2013
Բարեկենդան Աստուածածնի



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆՔԻ ԴԵՐԸ


Եթէ կը խորհնք թէ անձնական խորհրդածու-
թիւններու Հաւաքածոյ մը կարողալ կրնայ ձանձրացուցիչ
ըլլալ, կարողացէք այս գիրքը եւ յետոյ կարծիք յայտնեցէք:
Ընդհակառակը շատ Հաճելի անակնկալի մը Հետ դեմ առ
դեմ պիտի գտնուիք, քանի որ գիրքին պարունակութիւնը
քարոզներու ծաղկաքաղ մը չէ, այլ ան կը ներկայացնէ
իմաստալից տեսակէտ՝ տեսանկիւն մը կրօնքի եւ
գիտութեան նկատմամբ:

Թէ՛ գիտական եւ թէ՛ կրօնական Հմտութիւնը,
Համայն մարդկութեան պատմութեան մէջ, այսօր ալ
ամենակարեւոր դիրքը կը գրաւէ: Գիտական եւ
կրօնական գետնի վրայ յառաջընթաց անձերու
կարծիքները, տակաւին այսօր ալ մեզի Համար արդեօք
իմաստալից են: Հեղինակին՝ Տօքթ. Վահէ Սվաճեանին
կարծիքը այդպէս է: Ան կը Հաւատայ, որ եթէ մտիկ ընէք
անոնց, կրնանք Հարստացնել եւ ճոխացնել մեր
մշակութային, ընկերային եւ Հոգեկան կեանքերը:

Աս, Հետաքրքրական գիրք մըն է: Անոր
պարունակութեան եւ գաղափարներուն Համամիտ ըլլանք
կամ ոչ, ան ցոյց կու տայ, թէ գիտութեան եւ կրօնքի
իրարու շղթայումը ինչպէս առաջագոյն դեր կը կատարեն
մարդոց կեանքէն ներս:

Վերապատուելի Փրոֆ. Դոկտ. Սողոմոն Նիկողոսեան
Աստուածաբանութեան Դոկտոր
Թորոնթոյի Համալսարան
Վիքթորիա Կաճառ





Ասրէ-որ շէ,
Եւ ցրամատրելի խանի՛ խանի՛
միջոցներ՝ աղբի-րներ ունիս,
այնխան ասրէն որ
անոնցմէ օգտուիլը շէս Գիտեր,
անոնի էրբէի Բաւականաշափ պիտի
շըլլան:

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ա

Յարմար կը նկատեմ՝ յառաջաբանը սկսիլ հետեւեալ պատմութեամբ:

ԿՐԱԿԸ

Աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը կողքի մը կար: Մի քանի հարիւր տարի առաջ, այս կողքին չորս տարբեր կողմերը չորս զատ ցեղեր կ'ապրէին՝ իրարմէ անջատ, առանց իրարու հետ կապ ունենալու: Որքան ալ ուշ եղած ըլլար, կրակը այս կողքի բնակիչներուն ալ յայտնուած էր:

Օր մը մարդաբանութեան մասնագէտ մը ուսումնասիրութեան համար իր աշակերտներուն հետ միասին ճամբորդութիւն մը կը կազմակերպէ դէպի այդ կողքին: Երկար եւ դժուար նաւու ճամբորդութենէ մը յետոյ վերջապէս կողքի կը հասնին:

Ար հանդիպին առաջին ցեղին եւ մի քանի օր իրենց մօտ կը մնան: Ար նշմարեն որ կրակէն միայն շամանները (անոնց կրօնքի քահանաները) կ'օգտուին: Ընդհանուր կարծիքը այն էր թէ կրակը Աստուծոյ կողմէ տրուած էր իբր սուրբ նուէր՝ միայն շամաններու գործածութեան համար: Շամանները խորոված միս եւ տաք կերակուր կ'ուտէին եւ կը տաքնային, բայց պարզ ժողովուրդը պաղէն կը թողար եւ հում միս կ'ուտէր:

Երբ մեկնելու ժամանակ կը Հասնի, աշակերտներէն մին կը փափաքի Հոն մնալ եւ բողորին կրակը գործածելու Հնարաւորութիւնը սորվեցնել: Միւսերը կը մեկնին եւ կը Հասնին երկրորդ ցեղին գիւղը: Այս գիւղին բնակիչները նաեւ գիտէին կրակի մասին եւ զայն կը Համարէին որպէս աստուածային ոյժ: Անոնք կը պաշտէին ամէն ինչ որ պիտոյ էր կրակ վառելու Համար, բայց կրակ չէին վառեր եւ օգտագործուիլ անկէ: Երբ մեկնելու ժամանակ կը Հասնի, ուրիշ աշակերտ մը կը փափաքի Հոն մնալ եւ անոնց սորվեցնել կրակէն օգտուելու կերպերը:

Մնացեալ խումբը կը մեկնի եւ կը Հասնի երրորդ ցեղին գիւղը: Անոնք, կրակը իրենց բերող մարդուն արձանները շինած եւ ամէն տեղ զետեղած էին: Ժողովուրդը այդ արձանները կը պաշտէր: Հին ժամանակներուն անոնք որոշեր են թէ կրակը բերողը աստուած պէտք է ըլլար եւ զայն սկսեր են պաշտել: Բայց իրենք բնաւ չէն փորձեր կրակ վառել:

Աշակերտներէն մին ալ կ'որոշէ Հոն մնալ անոնց կրակի մասին սորվեցնելու նպատակաւ:

Խումբին մնացեալ անդամները կը մեկնին եւ կը Հասնին չորրորդ ցեղին գիւղը: Այս ցեղին անդամներն ալ կրակ չէին վառեր բայց կրակի մասին խեղաթիւրուած շատ մը տուեալներու կը Հաւատային: Արակը կը պաշտէին իբր աստուած: Մարդ չէր գիտեր կրակ վառել, բայց անոր զօրութեան մասին բազմաթիւ պատմութիւններ կը պատմէին: Աշակերտ մըն ալ Հոն կը մնայ, նման իր միւս երեք ընկերներու առաքելութեամբ:

Խոսմբին մնացեալ անդամները կղզիին մէջ մի քանի օր եւս պտրտելէ յետոյ կը վերադառնան ետին թողած չորս աշակերտները առնելով իրենց եկած նաւով մեկնելու Համար:

Վռաջին գիւղը մնացող աշակերտը երբ կը սկսի բացատրութիւններ տալ, շամանները զինք կ'ամբաստանեն: Ժողովուրդը փոխանակ օտարականին տեղեկացուցած իրողութիւններուն Հաւատք ընծայելու, նախընտրած է իր շամաններուն Հաւատալ եւ աշակերտը բռնած եւ զայն այրելով մեռցուցած է:

Երկրորդ գիւղի ժողովուրդը երբ կը տեսնէ որ աշակերտը իրենց պաշտած գործիքները գործածելով կրակ կը վառէ, կարծելով թէ կրնան պատժուիլ, վախցած եւ աշակերտը անմիջապէս մեռցուցած են:

Երրորդ գիւղին աշակերտը երբ «մարդու արձանը պաշտել սխալ է» ըսած է, զինք տեղւոյն վրայ, անմիջապէս սպաննած են:

Չորրորդ գիւղին մէջ ալ երբ աշակերտը սկսած է կրակին ինչ ըլլալը բացատրել, անմիջապէս սպաննուած է:

Մնացեալ աշակերտները իրենց ուսուցիչով նաև կը վերադառնան եւ ծով կը բացուին: Համբարդութեան ընթացքին ուսուցիչը այս պտոյտին վերջաւորութիւնը Հետեւեալ ձեւով կ'եզրակացնէ. «Սորվեցնել սորվելէն եւ գիտնալէն շատ աւելի դժուար է: Անոնց, որոնք գիտնալ չեն ուզեր, սորվեցնել ամենէն դժուարն է: Տգէտները միայն իրենց գիտելիքներուն կը Հաւատան եւ կ'ընդգիմադրեն նոր գիտութիւններուն: Անոնք միշտ խառնված Հոգեբանութեան մը մէջ են, որով

կ'ատեն գիտցողները: Չանոնք կ'այրեն եւ կը մեռցնեն:»

*

Կրօնքի եւ փիլիսոփայական նիւթերու շուրջ գրել այդ ալ առանց Հակակչիւր կորանցնելու, դժուար է: Գրութեանս նպատակը Համոզել չէ, այլ կարծիքի արտայայտութիւն մըն է, որպէսզի ընթերցողին մտքին մէջ Հարցումներ ծագին ու ան յանգի իր եզրակացութիւններուն:

Համոզել շատ խնդրական Հարց մըն է, քանի որ կան բազմաթիւ կրօնքներ, յարանուանութիւններ, Հաւատքներ, որոնք պատրաստ են անմիջապէս քննադատելու: Չանագան «կրօնքներու» ներկայացուցած Հաւատալիքներու Հետեանք անձը ընդհանրապէս ինքզինք կը Հեռացնէ Ճշմարտութենէն: Իր կեանքի առաքելութեան Հաւատարիմ Հաւատացեալը միշտ Ճշմարտութիւնը կը փնտռէ, բայց անհատին «Ես»ը՝ «աստանան», Հաստատել կուտայ Հիմարկութիւն մը, որ իբրեւ թէ անձին փորձառութիւններէն ծնունդ կ'առնէ, զայն կը պաշտօնականացնէ, դնել կուտայ օրէնքներ եւ կը ստեղծէ սովորութիւններ: Հիմնարկները ունին իրենց առաքինութիւնները եւ արժանիքները, բայց նաեւ՝ իրենց թերութիւնները եւ յանցանքները:

Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը գոհանայ այն բոլոր տուեալներով, որոնք իրեն ըսուած են իր փոքր տարիքէն ի վեր: Հետեւեալ իրողութիւնը կը պարզէ մարդու ներկայ վիճակը.

«Երբ փիղի ձագ մը իր մէկ ոտքէն շլթայուի, ան չի կրնար որոշ շրջանակէ մը դուրս ելլել: Մեծնալէ յետոյ, եթէ նոյնիսկ ոտքէն բարակ չուանով մը կապուի, չուանին արտօնած Հեռաւորութենէն աւելի չերթար»:

Նոյնպէս, մեր մանկութեան, մեզի տրուած մտային շլթանները, մեր այսօրուայ չուաններն են, որոնք արգելք կը

Հանդիսանան մեր Հոգեկան յառաջդիմութեան:

Իսկ եթէ քիչ մը աւելին գիտնանք կամ Հասկնանք, այն ատեն ալ «Ես»ին ազդեցութեան տակ, կը կարծենք թէ ամէն ինչ գիտենք:

Եթէ նոյնիսկ այս օրերուս, գիտութեան եւ իմաստութեան Համար ծարաւը ընդհանուր առմամբ կը նուազի, մեզի կը վիճակի գոնէ Հաւատարմօրէն, նուիրումով եւ լի ու լի կատարել մեր բոլոր պարտականութիւնները: Այն ատեն մեր կեանքերը կ'ըլլան փոփոխութիւն յառաջ բերող զօրութիւններ: Անհատին մէջ յաղթանակողը պէտք է ըլլայ տրամաբանութիւնը եւ ոչ թէ զգացականը: Գործունէութիւնները պէտք է կատարուին սիրով եւ ոչ թէ զայրոյթով: Մեր կեանքին ցանկութիւնը պէտք չէ ըլլայ ժամանակը՝ այսինքն երկար ապրելու ցանկութիւնը, այլ պէտք է ըլլայ վե՛հ անձաւորութեան մը կերտումը: Ամէն անձ իր կեանքի վերջամտաին պիտի անդրադառնայ այս իրողութեան, նաեւ իր գործած սխալին, բայց ասա՛ ղ շատ ուշ:

Ինչո՞ւ Հիմա չըլլայ այդ անդրադարձը:

Կրօնքը եւ Հոգեւորութիւնը (spirituality) իրարու Հակասական չեն, նոյնիսկ կրօնքը կ'օգնէ որ Հոգեւոր կեանք կերտենք: Այն անձերը, որոնք որոշ Հոգեւոր յառաջացում կ'ունենան, ոչ թէ կրօնքին կը Հակառակին, այլ զայն կ'ապրին: Հոս յարմար է յիշել Յիսուսի խօսքը.

«Մի Համարիչ է թէ եկի լուծանել սրտերնս
կամ սրտաբարէս. ոչ եկի լուծանել այլ
լինուի:» (Մատթէոս Ե:17)

«Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարդարէները աւրելու: Աւրելու չեկայ, Հապա՛ կատարելու:»:

Այս անձերուն Համար կրօնքը կ'ըլլայ ներքին, մտքի բարոյական եւ Հոգեկան գաղափար մը, Հայեացք մը եւ կեցուածք մը, առանց ծէսերու եւ արտաքին զօրավիզ-

ներու: Պահպանողական դասը, իրողութեան, նամանա-
ւանդ գիտութեան վերջի տուեալներուն անգիտակից,
միշտ քննադատող եղած է եւ կարծէք Հակառակ եւ
թշնամի գիտութեան:

Պարտ ենք նուագեցնել «Ե»ին բռնապետութիւնը:
Իմացականութիւնը եւ տրամաբանութիւնը լաւ եւ
օգտակար են, բայց ձգնարտութիւնը Հասկնարու եւ
ըմբռնելու Համար ասոնց կարողութիւնն ալ սահմանափակ
է: Մարդ իր այս սահմանափակ կարողութիւններն ալ կը
սպառէ անհիմաստ Հատուածական եւ փուճ վիճաբա-
նութիւններով նոյնիսկ կռիւներով, փոխանակ գնահա-
տելու անձայն տիեզերական փայլը, փառքը ու փառաւո-
րութիւնը, որ կ'արտայայտէ Յափտեանս յափտենիցը:
Կ'ապրի որպէս խեղճ, անօգ եւ կարողութենէ զուրկ անձ
մը: Երանի միայն կարենայ անդրադառնալ թէ այդ
տիեզերքի ըութեան մէջէն Աստուծոյ կանչը մեզ կը
հրաւիրէ, գոնէ վաղանցիկօրէն, այդ ձգնարտութեան լոյսի
փորձառութիւնը ունենալու: Բայց աւա՛ղ մարդ միշտ
անտեսած է այդ կանչը: Մերժելով այդ Լոյսը, երանու-
թեան տեղ նախընտրած կ'ըլլայ դժբախտութիւնը եւ
վիշտը:

Յաւալին այն է, որ վերջին 40-50 տարուայ ընթացքին
Հիմնարկութիւնը կամաց կամաց կը քանդէ մակերեսային
իրողութիւնը, որ պահած ու պաշտպանած էր դարերով:
Ծէսերը, որ կը ներկայացնեն անհասանելի խորհուրդներու
ճգնարտութիւնը, այլեւս լիովին չեն կատարուիր, Հետեւա-
բար կորնացուցած են իրենց զօրութիւնը: ձգնարտութիւնը
Հոս ու Հոն փնտուելու պէտք չունինք, ան մեր մէջն է եւ մեր
Հաւատքն է:

ձգնարիտ Հաւատքը աւելի Հարցում կը բերէ քան թէ
պատասխան կամ լուծում: Պատասխանը ժամանակի
ընթացքին կու գայ, իր Հեռ բերելով բազմաթիւ նոր

Հարցումներ: Շատ աւելի խոր Հաւատք ունի կասկած ու տարակոյս ունեցող ուղղամիտ եւ Համարձակ անձ մը, քան թէ ան, որ կոյր զկուրայն կը Հետեւի դաւանանքի մը: Պարտինք միշտ յարգել մեր Համոզումներուն ճշմարտութիւնը եւ ուրիշներու Համոզումներուն խորհուրդը (mystery): Ոչ թէ պատասխանները, այլ Հարցումները մեզ պիտի առաջնորդեն դէպի «Խորհուրդ խորին»ին: Ճշմարտութիւնը շօշափելի բան մը չէ, այլ իրողութեան եւ խորհուրդներու միջեւ եղած յարաբերութիւնն է: Հաւատալը (belief) կամ Համոզումը վերջակէտ մը չէ, այլ ճանապարհին միայն սկիզբը: Մարդ այս կացութենէն անգիտակից, պատրանքային խաբէական երեւոյթի մը մէջ կ'ապրի: Միշտ կարեւորութիւնը ունի ընտրելու գիտութեան (knowledge) ճամբան, բայց յաճախ կը նախընտրէ պատրանքը, որովհետեւ անոր վարժ է եւ զայն կը Համարէ ապահովութիւն:

Տարբեր ժամանակներու եւ մշակոյթներու մէջ Ճշմարտութեան փորձառութիւններն ալ եղած են իրարմէ տարբեր: Երբ ապագայ սերունդներ, յետադարձ ակնարկով մեր ժամանակները քննեն, մեզ պիտի Համարեն նախնական եւ յետամնաց: Քանի որ այս շրջանի նոյնիսկ գիտուններն ու փիլիսոփաները, նաեւ մարգարէներն եւ յստակատեսները կորսուած են երկու ծայրայեղութիւններու միջեւ՝ անցած եւ անհետացած անցեալի ու գոյութիւն չունեցող եւ անձանօթ ապագայի: Նախընտրելին պիտի ըլլայ կեդրոնանալ ներկային վրայ, որ գոյութիւն ունեցող միակ ճշմարտութիւնն է:

Ընդհանուր առմամբ մեր կեանքը դասաւորելու, ապրուստը ապահովելու եւ մեր պէտքերը հոգալու Համար կը սպառենք մեր ժամերը, Հնարքները եւ զօրութիւնը: Ոչ զօրութիւն, ոչ ժամանակ եւ ոչ ալ փափաք կը մնայ հոգեւոր գիտութեան զարգացման Համար: Քիչ անձեր կը

փորձեն, բայց չեն յարատեւեր: Ար նախընտրեն Հետեւիլ որոշ տուեալ Հաւատալիքներու, որովհետեւ աւելի դիւրին է պատասխանատուութիւնը բեռցնել ուրիշ անձերուն՝ «մասնագէտներու» ուներուն վրայ, որպէսզի անոնք մեզի տան այդ Հաւատալիքները: Չայնասիւռը եւ Հեռատեսիլը սկզբունք եւ Հաւատք տարածելու ազդու միջոցներ են եւ կը գործածուին ամբօրիններու միտքերը պնդորոշելու՝ որոշ ուղղութեամբ: Բայց, եթէ այս միջոցը սխալ անձերու ձեռք ըլլայ, այն ատեն կոյրը կ'առաջնորդէ կոյրը:

Աւանդութիւնները մեզի կը բերեն դարերու փորձառութիւններ: Յանուն բնապաշտութեան եւ Հնարչութեան պէտք չէ անտեսել աւանդութիւնները: Հաւատալ միայն անձնական կարծիքի՝ թէ ինչ ճիշդ է ու բարի, կամ ինչ սխալ է ու մեղք, առանց յենելու դարերու աւանդութեան պարգեւած բարոյագիտական տուեալներու, ինքնահաւանութիւն է, սխալ ու վտանգաւոր: Միանգամայն կարեւոր է ունենալ անձնական փորձառութիւններ եւ անոնց Համաձայն ապրիլ: Բայց դժուար է, քանի որ շատ մը Հարցումներ ի մտի կուգան եւ նաեւ ուրիշներու նախատիւքին կ'ենթարկուինք: Միայն աւանդութեան տուեալներով ապրիլ կը թուի աւելի դիւրին ըլլալ, քանի որ ոչ ջանք թափելու, ոչ ալ որոշում առնելու պէտքը կը զգանք, նաեւ վայելելով ուրիշներու Հաւանութիւնը եւ վաւերացումը: Բայց ո՞րն է լաւագոյնը:

Կիլիկեան թագաւորութեան շրջանի աստուածաբան Ներսէս Լամբրոնացին (1153-1198) գրած է. «գիտութեան Հետապնդումը Աստուածասիրութիւն է»: Այս գիրքին նպատակը Հաշտեցնել է աւանդութիւնը անձնական փորձառութեան Հետ, անձնական փորձառութիւնը՝ գիտութեան Հետ եւ գիտութիւնն ալ՝ աւանդութեան Հետ: Գտնել էրեքին Հասարակ տեսանկիւնը: Աւանդութիւնները մեկնաբանել առանց գիտութեան օրէնքներու խախտումի

եւ շէշտել անձնական փորձառութեան կարեւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը հաւատարիմ Յիսուսի խօսքին.

«...Ըմէն ամէն ասեմ յեւ, Թէ որ
Լաւասորայն յիս, պարտաւս պոր ես գործեմ,
եւ նա գործեացե, եւ մեծամեծաւ եւս իան
պնոյնս գործեացե. ...» (Յովհաննոս ժ.Դ:12)

« ... Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ «ան որ ինձի
կը հաւատայ, այն գործերը որոնք ես կը գործեմ, ինք
ալ պիտի գործէ. եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի
գործէ» ...»:

* * *

Բ

Յաճախ տիկնոջ՝ Ատային հետ կը խօսէինք այս եւ նման նիւթերու շուրջ եւ որոշած էինք միասնաբար գիրք մը գրել: Կը սպասէինք իմ գործերուն քիչ մը նուազման, որպէսզի կարենայինք ժամանակ յատկացնել: Դժբախտաբար ապագայի մէջ սպրեւու սիւսը մենք ալ գործեցինք եւ մեր փափաքը չիրականացած, մահը զինք խլեց եւ մեզ իրարմէ բաժնեց: Իր վերջին օրերուն, հիւանդանոցը, փափաքեցաւ որ մեր մտադրած այս գիրքը գրեմ: Ես ալ խոստացայ: Շատ բան սորվեցայ իրմէ: Աստուած հոգին լուսաւորէ:

Գիրքիս բովանդակութիւնը կը ներկայացնէ իմ այսօրուայ խորհելակերպը՝ մտածելակերպը: Նկատի ունենալով որ ամէն ինչ հիմնուած է օրուայ փորձառութիւններուն վրայ, կարելի է յառաջիկային տարբեր ձեւով ալ արտայայտուիմ:

Այսքան էջերուն մէջ եթէ կան ուշադրութենէ վրիպած սխալներ, ընթերցողին ներողամտութեան կ'ապաւինիմ:

* * *

Գ

Գլուխ Ա - «Լոյս 'ի լուսոյ»

Ս. Երրորդութիւնն Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւի փափաքով պատրաստած եւ Մեծ Պաճի Հինգշաբթի օրուայ Արեւագալի արարողութեան ընթացքին, որպէս օրուայ պատգամ, կարգացած մէկ աշխատութիւնս է, որուն նիւթը «Լոյս»ն էր: Աս պատգամը նոյնութեամբ հրատարակուած էր եկեղեցոյ «Նոր Սերունդ» պարբերաթերթին մէջ:

Գլուխ Բ - «Ի՞նչ է գիտութեան նպատակը»

Աս յօդուածը գրած էի տարիներ առաջ, նկատի առնելով Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանը եւ անոր առաքելութիւնը: Աս գրութիւնս հրատարակուած էր վարժարանի «Մասիս» պարբերաթերթին մէջ:

Գլուխ Գ - «Աստուած կա՞յ, թէ չկայ»

Աս գրութեան մէկ մասը պատրաստած եմ ներկայ գտնուած դասախօսութեան մը ընթացքին առած նօթագրութիւններու օգտագործումով, որոնք կը ցոլացնեն օրուայ դասախօսին գաղափարները, որոնց Համամիտ եմ, իւրացուցած եմ եւ յարմար նկատած եմ զանոնք Հոս ներկայացնել:

Գլուխ ԺԴ - «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Սուրբ պատարագի մեկնաբանութիւն»

Աս գրութիւնը խոստացած էի գրել Հ. Լեւոն Չէքիեանի 1991 թուականին Վենետիկի մէջ կազմակերպած Հայկական լեզուի դասընթացքներուն մասնակցելէ յետոյ, որպէս աւարտական նիւթ, սակայն գործերու բերումով այդ գրուեցաւ տասը տարուայ ձգձգումով: Այդ ուշացման Հետեւանք Համարձակութիւն չունեցայ գրութիւնս ներկայացնել յարգելի վարդապետին:

Վաճէ Սվաճեան



Ձի ճրագ է պայտօտիւնն օրինացն՝
 էւ լոյս,
 էւ ճանապարհ կենաց՝
 յանդիմանութիւնն էւ խրատ:
 (Լուկայ 9:23)

Արդարեւ պայտօտիւնը ճրագ է,
 էւ ուսուցումը՝ լոյս.
 Խրատն ու ազդարարութիւնները
 կեննէի ճամբայ են:



«...Ե՛ս եմ լո՛յս աշխարհի. ... :»
 (Յովհաննոս Ը:12)

«Դո՛ւք է՛ն լոյս աշխարհի.
 ... :»
 (Մատթէոսի Ե:14)



-Ա-

ԼՈՒՅՍ 'Ի ԼՈՒՍՈՅ



ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ

«Եւ այս են աւետիկ զոր լուսնի առ ՚ի նմանէ՛ եւ պատգամն յեւ. զի Աստուած լոյս է, եւ խաւար ՚ի նմա շիտ, եւ ո՛չ մի» : (Լ. Թոռն Յովհաննոս Ե:5)

«Ասիկա է այն պատգամը որ իրմէ լսեցինք ու ձեզի կ'իմացնենք, թէ՛ Աստուած լոյս է ու անոր մէջ բնաւ խաւար չկայ:»

Ըստ ոմանց, Լոյսի պաշտամունքը եւ նա՛ մանաւանդ Արեւազալի ժամերգութիւնը մեզի ժառանգ մնացած է մեր նախահայրերէն, երբ անոնք տակաւին կռապաշտ կամ արեւապաշտ էին:

Մեր եկեղեցական արարողութիւններուն մէջ յաճախ կը հանդիպինք լոյսի գաղափարին եւ յաճախ ալ լոյսը մեր աղօթքներուն, քարոզներուն եւ շարականներուն մէջ մեր պաշտամունքի առարկան կ'ըլլայ:

Այն Լոյսը, որ մենք կը պաշտենք կռապաշտական շրջանէ մնացած արեւապաշտութիւն չէ, այլ աւետարանէն բխող Լոյսն է, զորս Յովհաննէս աւետարանիչ իր առաջին ընդհանրական թուղթին մէջ շատ պարզ ձեւով գրած է. «Աստուած լոյս է» (Լ. Թոռն Յովհաննոս Ե:5):

Ուստի մեր պաշտամունքի առարկայ Լոյսը նոյն ինքն Աստուած է, որուն կը ձգտինք: Լոյսի պաշտամունքը Աստուածապաշտութիւն է:

Մատթէոսի աւետարանին մէջ ալ կը կարդանք.

«Դ՛ո՛ւ ի՛նչ է՛ լոյս աշխարհի. ... եւ ո՛չ լուսանէն ճրագ՝ եւ դնէն ընդ գրոսանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի. եւ լոյս ասաց ասէնեցոսն՝ որ ՚ի ասան իցէն: Եյնպէս

լոսաորեացե լոյս յեր առաջի մարդկան,
որպէսպի յեացեն պարթա յեր Բարիս, ե-
փառաորեացեն պապ յեր որ յերկնն է:»
(Մարգէնոսի Ե:14-16)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ
դներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ որ լոյս
տայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող
լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր
բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն
է:»

Ըստ երեւոյթի առաջին հերթին, հետեւեալ երկու
գաղափարները կը թուին հակասական ըլլալ.
«Լսորոսա՞ լո՛յս է» ու մենք Լոյսը կը պաշտենք եւ
Յիսուս ինք կ'ըսէ «Դո՛ւ՛՛ն է՛ լոյս աշխարհի.»
Յովհաննու աւետարանին մէջ Յիսուս նաեւ կ'ըսէ.

«...Ե՛ս եմ լո՛յս աշխարհի. որ Գայ պննի
իմ՝ ընդ խաւար մի՛ Գնասցէ. այլ ընկալցի
պլո՛յսն կենաց:» (Յովհաննոս Ը:12)

« ...Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ,
խաւարի մէջ պիտի չքայլէ, հապա կենաց լոյսը պիտի
ունենայ:»

Եւ աւետարանիչը դարձեալ կը գրէ.

«Նո՛վա՛ս՝ կեննի՛ էր, եւ կեննի՛ն էր լո՛յս
մարդկան.» (Յովհաննոս Ը:4)

«Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր»

Քանի որ կ'ապրինք՝ կեանք ունինք, ուրեմն մենք
ալ այդ Լոյսէն մասնիկ մը ունինք, մեր ճրագն ալ վառ
է: Արդ, մենք պէտք է ճշդենք թէ՛ ու՞ր պիտի դնենք այդ
լոյսը. աշտանակի վրայ՝ որպէսզի լոյսը մեզմով
բոլորին յայտնուի, թէ՛ ոչ գրուանի մը տակ՝ ուրկէ
Լոյսը ոչ՝ մեզի եւ ոչ ալ մեր շուրջիներուն կրնայ

յայտնուիլ: Եւ եթէ այս է պարագան, մենք զմեզ կը զրկենք այդ Լոյսին շնորհած կեանքի պարգեւէն ու կը գոյատեւենք քունի կամ մահուան ստուերին մէջ:

Կրօնքներու եւ եկեղեցական արարողութիւններու բոլոր նպատակն է մեզ այս քունի եւ մահուան ստուերի անկեալ վիճակէն դուրս հանել եւ բարձրացնել Աստուածային շնորհքին:

Նա՛ մանաւանդ Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամերգութիւնները, որոնք անզուգական են, եթէ լիովին կատարուին, նոյն ինքն կեանքն են: Այս ժամերգութիւններու շարքաւորումը կը ներկայացնէ մարդկային անկումը եւ ձգտումը այդ Աստուածային լոյսին եւ ի վերջոյ միանալը Անոր:

Եկեղեցական օրը կը սկսի արեւամուտին եւ կ'աւարտի պատարագով: **ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**, որ Շաբաթ երեկոներ կը կատարուի, կը կոչուի նաեւ **ԿՐՈՍՈՒՍԵՐ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**: Կը ներկայացնէ մեր կեանքի երեկոն, երբ արդէն հաւատացեալը Լոյսէն իր կապը խզած, կը ձգտի այդ Լոյսին արժանանալ: Լոյսի ձգտումը շատ յստակ է այս ժամերգութեան մէջ:

Դպիրները կ'երգեն «Լո՛յս պարբ» երգը, ապա կղերականը իր Մաղթանքին մէջ կ'ըսէ. «Ի՞նչ էս Լոյս Գովելի, սորբ է- սուաջին Լոյսն. ... է- պլոյս ի՞նչ կենդանի, Տէ՛ր. Ժագեա՛ ՚ի սիրտս մեզ»:

Երեկոյան ժամերգութեան կը յաջորդէ **ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**: Ենթական կը ձգտի խաղաղութեան, ինչ որ յայտնի է «Շնորհեա՛ մեզ» երգին մէջ. «Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, ՚ի Գիշերի պերկնային պխաղաղութիւն ինչ. ... Ե- Իշխան խաղաղութեան Հայր Հանդերձելոյ յա-խորենին. Տէ՛ր

Լսարո-աթ ընդ մեզ է» : Այս ձգտումը յայտնի է նաեւ քահանային աղօթքին մէջ.

«Շնորհեա՛ եւ զմեզ, Տէ՛ր, անխո-ով
խաղաղութեամբ զԲիշէրն անցո-ցանել» :

Խաղաղականին կը յաջորդէ ՀԱՆՊԱՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ : Քահանան իր աղօթքին մէջ կ'ըսէ.

«Եւ այժմ աղաշեմէ՛ զմեզ, Տէր, Լսարո-աթ
մեր, զԼանԳիսոյ Բիշէրն շնորհե՛ա
խաղաղութեամբ անցո-ցանել, եւ Լասանի
'ի պաշտօն աս-ասօրո-ն» :

Երբ ենթական, Աստուծոյ շնորհքով, իր ձգտած խաղաղութեան կը տիրանայ, քունէ արթննալու եւ մահուընէ դէպի կեանք վերադառնալու ժամը հասած է : Ղուկասու աւետարանին մէջ գրուած է.

«Վասն Բիշո-թեանց եւ ողորմո-թեան
Տեառ-ն մերոյ, որով՛ այց արասցէ մեզ .
Արեգանն 'ի Բարձանց . երեւել որոց 'ի
խա-արի եւ 'ի սրո-երս մաճո- նսրէին .
ո-ղղել զոյս մեր 'ի Ճանապարհս
խաղաղութեան . » (Ղուկասու Ը : 78-79)

«Մեր Աստուծոյն զթած ողորմութեանը համար, որով Մագող արեգակը վերէն մեզի այցելութեան եկաւ՝ Խաւարի եւ մահուան ստուերի մէջ նստողներուն լոյս տալու ու մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ շտկելու.»

Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամերգութիւններու շարքաւորումին մէջ յաջորդ ժամերգութիւնը **ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ**ն է, որ պէտք է կատարուի առաւօտուն, արեւածագէն առաջ : Ժամերգութիւնը կը

սկսի «Յիշեացու՛նք ի Գիշերի» երգով: Հաւատացեալը 12 անգամ կը հրաւիրուի արթննալու կամ արթնութեան: Պօղոս առաքեալի Եփեսացիներու գրած խրատին մէջ կը կարդանք.

«...արի որ ննջեաց, եւ կանգնեա՛ց ՚ի մեռելոց, եւ լուսաւորեացէ պէ՛տեալ Քրիստոս.» (Եփեսացիս Ե:14)

«...Արթընցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ:»

Քահանան, հետեւելով այս խրատին, գոհութիւն կը յայտնէ իր աղօթքին մէջ.

«Գոհանամք պէ՛են, Տէր Աստուծ մեր, որ պարթոսցեր պէ՛տեալ ՚ի Հանգստեանէ ինոյ շնորհիւ ողորմութեան ին: Զարթո՛ւ պիտի մեր արդարութեամբ առ ի՛նչ, Տէր Աստուծ մեր, պի տեսցեն աշտ մեր պիտիութիւնն ին»: Գիշերային ժամերգութեան կը յաջորդէ

ԱՍՏՈՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ: Հաւատացեալը իր հոգեկան քունէն արթնցած Աստուծ կը փառաբանէ եւ դարձեալ կը ձգտի այն Լոյսին եւ խաղաղութեան: Այս ժամերգութեան ընթացքին կ'երգուի «Փա՛նկ ՚ի Բարչունս Աստուծոյ.» եւ «Սուրբ Աստուծ» երգերը: Եւ քահանան կ'ըսէ.

«Գոհանամք պէ՛են, Տէր Աստուծ մեր, որ երեւելի լուսով ինձ պարծացուցեր պիտեանայն արարածս ին. իսկ իմանալի լուսով պարտաւորանաց ինց՝ պիտեանեան

լոսաաորեցեր պահապանացեալս 'ի շէպ'» :

Ժամերգութիւնը կ'աւարտի «Աիօնի՛ որդիք, պարիքիք, Հա՛րսին լոսոյ ցոռի աւերիք» երգով: Երբ երգեցողութեանց բառերուն իմաստին թափանցելով երգենք պիտի զգանք անոնց զօրութիւնը եւ մեզ մղելը դէպի այն Լոյսը, զորս արդէն կը պաշտենք:

Յաջորդ ժամերգութիւնը **Արեւագլի Ժամերգութիւն** է: Ասիկա սկիզբէն մինչեւ վերջը Լոյսի փառաբանութիւն է, միանգամայն՝ աղաչանք, որպէսզի այդ Լոյսը ծագի նաեւ մեր մէջ: Կ'երգենք.

«... Զագե՛ա 'ի Հոգիս մեր պլոյս շո խմանալի» : Կղերականը իր Մաղթանքին մէջ կ'ըսէ. «Լոսոզդ շո Բրիսպոս»՝ ամենեկեան լոսաաորեցա՛լ» :

Լոյսի այս վերջին հրաւերէն յետոյ կը կատարուի **Ճաշի Ժամերգութիւնը**, որ կը բաղկանայ 3 մասերէ: Ճաշի ժամերգութիւնը կը կատարուի այն օրերուն երբ պատարագ չի մատուցուիր: Իսկ Արեւագլի արարողութեան կը յաջորդէ **Պատարագը**:

Հաւատացեալը իր ձգտումին գագաթնակէտին կը հասնի, հաղորդուելով եւ միանալով Աստուծոյ հետ: Հոգեպէս լրիւ արթուն, կը ցոլացնէ եւ ճառագայթէ Քրիստոսի Լոյսը, որպէս աշտանակի վրայ դրուած ճրագ: Սակայն պէտք է յիշենք թէ՛.

«Որ ասէ երէ 'ի լոյսն իցէ՛ եւ պեղբայր իւր արիցէ, սոսք է՛ եւ 'ի խաւարի երասկաւին» (Լ.Թոռը Յովհաննոս Բ:9)

«Ան որ կ'ըսէ թէ լուսոյ մէջ է ու իր եղբայրը կ'ատէ, անիկայ տակաւին խաւարի մէջ է»

Ի՞նչ է գաղտնիքը այս Լոյսին արժանանալու: Սաղմոսերգուն կ'ըսէ.

«Օ՞տգիւտաց ՚ի խաւարի լո՛յս ուղղոց,»
(Սաղմոսաց ՃԺԼ:4)

«Խաւարին մէջ լոյս կը ծագի ուղիղ ներուն,» (Սաղմոսաց ՃԺԲ:4)

Եւ Սողոմոն իմաստուն կ'ըսէ.

«Ղանապարհէ արդարոց որպէս լո՛յս թագէն
ասաջնորդէն եւ լոսասորէն, մինչեւ
որին լոսասորէացէ:» (Լուսկաց Գ:18)

«Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսի պէս է, որ
երթալով կը լուսաւորուի, մինչեւ կատարեալ օր ըլլայ:»

Հաւատացեալը Լոյսի ծագումին արժանանալու համար
պէտք է պատրաստուի: Պէտք է ըլլայ ուղիղ եւ արդար
ու ձերբազատուած 7 մահացու մեղքերէն:

Մեծ Պահքի տեւողութիւնը ներհայեցողութեան
չըջան մըն է: Հաւատացեալը ծոմապահութեամբ,
աղօթքով եւ Աստուծոյ ողորմութեամբ կը ջանայ
ինքզինք պատրաստել Յարութեան, այսինքն Լոյսին իր
մէջ ծագման, յարութիւն առման օրուան: Ճիշտ այս
պատճառով ալ, ապաշխարութեան այս շրջանին
Արեւազալի ժամերգութեան աւելի կարեւորութիւն
կը տրուի, որովհետեւ Արեւազալի, այսինքն Արեւի
կամ Լոյսի գալուստը Յարութեամբ իր գագաթնա-
կէտին կը հասնի:

Ծոմապահութեան համար Եսայեայ մարգարէ
հետեւեալը կը պատուիրէ.

«՛Ն պանայիսի պաւս ընտրեցի՝ ասէ Տէր:
Եւ լո՛յս պնծիւն անիրաւութեան. խակեա՛
պխարդախութիւն թոնոթեան վաճառաց
ձոց: Երչակեա՛ պնեղեալս թողութեամբ, եւ
պամեանայն մորճակս անիրաւութեան

պատրաստեալ: Բրդեա՛ խաղցե՛լոց պահաց խո,
 եւ պաղխարս անյարկս քա՛ր ՚ի քոռն խո.
 Եթէ պետանիցեա պե՛րկս՝ պե՛ցոցանիջի՛ր,
 եւ յընդհանեաց պա՛սակի խոյ՝ պակն մի՛
 արկանիցեա: Յայնժամ Ձա՛սլեսցի կանոնս
 Լոյս խո, եւ բժշկոթիւնն ի՛նչ վաղվաղակի
 Ըսացէ. եւ Բնասցէ առաջի խո
 արդարութիւնն խո, եւ փա՛ռին Լսքոռձոյ
 պէ՛ւ փակեացին:»

(Եսայեայ՝ԾԸ:6-8)

«Իմ ընդունած ծովապահութիւնս՝ Անիրաւութեան
 կապերը քակելը, Լուծին կապերը թուլցնելը,
 Հարստահարութիւն կրողները ազատ թողուլը, Ամէն
 լուծ կտրելը, Հացդ անօթիին բաժնելը, Թափառական
 տնանկները տունդ ընդունելը, Մերկ մը հագուեցնելը
 Ու մարմինդ անտեսելն է: Այն ատեն քու լոյսդ
 առաւօտի պէս պիտի ծագի Ու բժշկութիւնդ չուտով
 պիտի յայտնուի: Քու արդարութիւնդ քու արջեւէդ
 պիտի երթայ Ու Տէրոջը փառքը քու ետեւէդ քեզ պիտի
 պաշտպանէ:» (Եսայեայ ԾԸ:6-8)

*Ինքնապատրաստութեան այս ժամանակամիջոցը
 կը կոչենք նաեւ ապաշխարութեան շրջան: Ի՞նչ կը
 նշանակէ ապաշխարել: «Ապ» նախադաս մասնիկը
 աւելցնելով բառի մը առջեւ կ'ունենանք իրարու
 հակառակ իմաստ ունեցող երկու բառեր. երջանիկ -
 ապերջանիկ, աշխարել («աշխարհ») - ապաշխարել:
 Ուստի ապաշխարել կը նշանակէ աշխարհիկ բաներէ
 հեռանալ: Մեր մտքին ուղղութիւնը աշխարհիկ ՍԱ, ՏԱ
 (դա) եւ ՆԱէն՝ այսինքն «Սատանայ»էն հեռացնել եւ
 ուղղել դէպի Քրիստոս՝ այն Լոյսին որ մեր
 իւրաքանչիւրին մէջն է: Աւետարանը կ'ըսէ.*


«Ո՞չ Գիտէի եթէ Կաթո՛ւնայ,
Եւ Ընդի Կաթո՛ւնայ Բնակեալ է 'ի Յեշ:»

(Լ. Կորնթացիս Գ:16)

«Ձէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի:»

Մահեացէ Լոյս Տէառն 'ի վերայ մերոյ:

(Ժամերգութիւններու բաժինը կրկնուած է նաեւ «Մ.
Պատարագի Մեկնաբանութիւն» բաժինին մէջ):





...Իսկ անմիտ գանկացողի թշնամանաց՝
 ամպարշտեալի աստիճանն զիմաստութիւնն . Եւ
 զարարարի ի զէն յանդիմանութեանց :
 Ահաւասիկ ատաղի ատնեմ յեզ զհոգեոյ
 իմոյ զպարտամա . ոտոցից զքանս իմ յեզ :
 (Ասակաց Ա : 22-23)

...Եւ անմիտները պիտի ասեն Գիտութիւնը :
 Դարձել իմ աստարարութեանս .
 Ահա՛ իմ Հոգիս յեր զլրաց պիտի թափեմ,
 Իմ խօսիւրս յեզի պիտի հասկցնեմ :



-Բ-

ԻՆՉ Է ԳԻՏՈՒԹԵԱՆ
ՆՊԱՏԱԿԸ



Ի՞ՆՉ Է ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ուսում (education) եւ գիտութիւն (knowledge) բառերը ընդհանրապէս ունին երկու իմաստ, մին՝ հասարակ, իսկ միւսը՝ բացառիկ, որ կը հանդիպինք Մ. Գրոց մէջ: Ընդհանրապէս ուսում ըսելով մենք կը հասկնանք դպրոցական դաստիարակութիւն եւ կը պարծենանք ըսելով, թէ մեր զաւակներուն ամենալաւագոյն դպրոցներու մէջ ամենալաւագոյն ուսումը տուած ենք. բայց չենք ըսեր ամենալաւագոյն գիտութիւնը տուած ենք: Մեր ուսումնական դրութիւնը կու տայ միայն տեղեկութիւն եւ ծանօթութիւն տուեալներու մասին, բայց ան չիտար աշակերտին վեհ նպատակակէտ մը, որուն աշակերտը ձգտի եւ այդ ընտրէ իբր իր կեանքի ուղղութիւնը: Եթէ այդ վեհ նպատակակէտին ձգտումը չըլլայ ուրեմն յառաջգիւժումը ալ չի կրնար ըլլալ: Ուսումը մեզ կը պատրաստէ ապրելու մեր կեանքին միայն մէկ երեւոյթը, բայց այդ մեզի չի պատրաստեր ի յայտ բերելու կամ գտնելու ճշմարտութիւնը՝ նկատմամբ կեանքի ու տիեզերքի: Ուրեմն իսկական ուսման բուն նպատակն է աշակերտը առաջնորդել այն գիտութեան, որով ան կարենայ ինքնիրեն գտնել այդ Աստուածային ճշմարտութիւնը:

Անցեալին Ընտրեալ մը, գիտութեան նպատակը ամփոփած էր հետեւեալ նախադասութեան մէջ.

«Գիտութեան արդիւնքը, սխալ հասկացողութեան վտարումը կամ վախճանն է»:

Այս կը նշանակէ, թէ երբոր որեւէ բանի՝ գաղափարի, հաւատքի եւայլն սխալ ըլլալը հասկնանք եւ այդ իւրացնենք, մենք զմեզ անկէ ետ կը քաշենք եւ այլեւս կը հեռանանք անկէ: Երբ մեր հասկացողութիւնը կը փոխուի, ուրեմն մեր վարքը, ընթացքը եւ արարքներն ալ կը փոխուին: Հետեւեալ պատմութիւնը կը լուսաբանէ այս կէտը:

Մարդ մը քալած միջոցին, ճամբուն վրայ կը տեսնէ ոսկեգոյն առարկայ մը, որ արեւուն ճառագայթներուն տակ կը փայլի: Կարծելով թէ ոսկի է, անմիջապէս կը ծռի, կ'առնէ ու զայն քննելէ յետոյ կ'անդրադառնայ, որ ատիկա ոսկեգոյն թուղթի մէջ փաթթուած քար մըն է: Կարծելով որ ոսկի էր զայն առաւ, բայց, երբ հասկցաւ որ ոսկեգոյն թուղթի մէջ փաթթուած քար մըն էր (ճշմարիտ կամ իսկական գիտութիւն) զայն նետեց (սխալ հասկացողութիւնը վտարուած եւ իր վախճանին հասած): Ինք անմիջապէս կը մոռնայ իր այս արարքը եւ մարդու չ'ըսեր, քանի որ, ոեւէ անձ չ'ուզեր խօսիլ իր սխալներուն մասին: Աս ցոյց կուտայ, թէ երբ իսկական գիտութիւնը ի յայտ կուգայ, կը ծագի նաեւ խոնարհութիւն, քանի որ երբ անձի մը կը յայտնուի ճշմարիտ գիտութիւնը, այն անձը կը հասկնայ իր որքա՛ն անմիտ եւ յիմար եղած ըլլալը:

Ուրեմն ճշմարիտ կամ իսկական գիտութեան նպատակն է վերջ տալ բոլոր սխալ հասկացողութեանց:

«Ակիւքն իմաստութեան Երկի-դ Կեանն .
 Ըանճա՛ր Բարի ամենեցոոն որ առնէն

սնա : Պաշտօն բարի առ Լսորո-ած՝ սկիսլին

սԳօնո-թեան : Ջիմասոր-թի-ն է- սխրապ՝

ամայարիշտէ անԳոսնէն : » (Լուսկայ Լ. 7)

«Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է, բայց յիմար-
նելը իմաստութիւնն ու կրթութիւնը կ'անարգեն:»

Մինչեւ հիմա մեր կեանքերը հիմնած ենք որոշ
գաղափարներու կամ ըմբռնումներու վրայ, որոնք
ընդհանրապէս սխալ են. ուրեմն մեր բոլոր գործու-
նէութիւնը եւ վարմունքը, որոնք ծագում կ'առնեն
նման գաղափարներէ կամ ըմբռնումներէ, են նաեւ
սխալ: Հետեւեալը կը ներկայացնէ փոքր ցանկ մը նման
սխալ գաղափարներու կամ ըմբռնումներու՝ դրամը
երջանկութիւն կը բերէ, մեր զգայարանքներու միջո-
ցաւ մեր զգացած հաճոյքները մեզի կրնան տալ
ճշմարիտ երջանկութիւնը, մենք միայն մեր այս
տեսանելի եւ շօշափելի մարմինն ենք:

Երբ արթնութիւնը գայ այն ճշմարիտ եւ
իսկական գիտութեան, այն ատեն է, որ կ'անհետանայ
բոլոր դժբախտութիւնները եւ տառապանքները:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԲՈՐՈՒՄ

Մեր Ֆիզիքական՝ թանճր եւ յուզական՝ նուրբ
մարմիններու միջոցաւ է որ կրնանք յարաբերութեան
մէջ մտնել արտաքին աշխարհի հետ, եւ կը տեսնենք
զանազանութիւն, տարբերութիւն եւ նաեւ երկուու-
թիւն՝ այսինքն՝ ես եւ անոնք կամ ատոնք:

ԲՆՐՁՐԱՊՈՆ ԳԻՏՈՒԹԻՒՆը այն է, ուր հակառակ
այս տարբերակ ամէն ինչ եւ զանազանութիւնը
տեսնելու, կարելի է նաեւ տեսնել այն միակ

Իրողութիւնը, որ կը թափանցէ այդ բոլորին եւ նաեւ մեզի, եւ անդրադառնալ այդ Միութեան՝ բազմաթիւին մէջ: Մեր Ֆիզիքական մարմինը ասոր լաւագոյն օրինակն է: Կը տեսնենք, որ մարմինը ունի բազմաթիւ մասեր՝ ձեռքեր, մատներ, գլուխ, ստամոքս, սրունքներ եւ այլն: Որքան որ ալ մասերը բազմաթիւ են, շատ լաւ գիտեմ, որ մարմինիս ամբողջականութիւնը ես եմ: Շատ դիւրին է ըմբռնել միութեան գաղափարը նկատմամբ մարմինին, անոր համար, երբ մէկը մեր ուսին դպի չենք ըսեր «Ինչո՞ւ դպար ուսին», այլ հարց կու տանք «Ինչո՞ւ դպար ինծի»: Իբր մի էութիւն ես թափանցած եմ մարմինիս բոլոր մասերուն մէջ: Ուրեմն բարձրագոյն գիտութիւնն է ան, որով կը կարողանանք տեսնել այն ձգմարտութիւնը, որ թափանցած է տիեզերքի բոլոր անուններուն, ձեւերուն ու կազմութիւններուն մէջ:

«Կայէ՛վ յիս՝ եւ ես՝ ՚ի յէ՛ւ. որպէս՝ ո՛ւսն ո՛չ կարէ որո՞ւ թերեւ յանձնէ իւրմէ, եթէ չիցէ՛ Ըստարարեալ յո՛րթն, նոյնպէս եւ դո՛ւ՛ն՝ եթէ ո՛չ յի՛ս Ըստարարեալ իցէ՛վ: Եւ եմ որթ՝ եւ դո՛ւն՝ ո՛ւս. որ Ըստարարեալ է յիս եւ ես՝ ՚ի նա, նա՛ թերեւ որո՞ւ յոյժ. պի առանց իմ ո՛չինչ կարե՛վ առնել:»
(Յովհաննուս ԺԵ: 4,5)

«Իմ մէջս կեցեք ու ես ձեր մէջ: Ինչպէս ճիւղը չի կրնար ինքիւրմէ պտուղ բերել, եթէ որթին վրայ հաստատուած չըլլայ, նոյնպէս ալ դուք չեք կրնար՝ եթէ իմ վրաս հաստատուած չըլլաք: Ես որթն եմ ու դուք ճիւղերն եք: Ան որ իմ վրաս հաստատուած է՝ եւ ես անոր վրայ, անիկա շատ պտուղ պիտի բերէ, վասն զի առանց ինծի բան մը չեք կրնար ընել:»

Վերոյիշեալ բարձրագոյն գիտութենէն ԱՒԵԼԻ ՅԱԾ ԳՐՏՈՒԹԻՒՆ մըն ալ կայ, որ կ'արտօնէ մեզի տեսնել եւ ըմբռնել որ ամէն ինչ իրարմէ տարբեր եւ զատ է, բոլոր առարկաները եւ անձերը իրարմէ անջատ են: Օրինակի համար ներկարարը կը հետաքրքրուի միայն գոյներով եւ ձեւերով, ակնաբոյժը կ'ուսանի միայն աչքի մասին: Ընդհանրապէս աշխարհը կամ տիեզերքը իր ամբողջութեամբ չենք տեսներ եւ կը կարծենք, թէ ամէն ինչ իրարմէ անջատ, իրարու հետ կապ չունեցող առարկաներ կամ էութիւններ են: Անոր համար կ'ըսենք «իմ տունս», «իմ բաժինս» կամ «քու բաժինդ» եւայլն: Աստուած ստեղծեց մէկ աշխարհ, մարդիկ զայն բաժնեցին բազմաթիւ ազգերու եւ պետութիւններու:

ԱՄԵՆԱՅԱԾ ԱՍԿԱՐԴԱԿԻ ԳՐՏՈՒԹԻՒՆն այն է, ուր մէկը կ'առնէ ամբողջութեան միայն որոշ մէկ մասնիկը եւ այդ առարկան, տեսակէտը կամ հաւատքը իր միտքը ամբողջովին կը գրաւէ: Օրինակի համար՝ իմ բռնած ճամբաս միակ ճիշդ ճամբան է, իմ պաշտամունքի ձեւս միակ ճիշդ ձեւն է եւ քուկդ՝ սխալ, իմ գործելու ձեւս ճիշդ է եւ քուկդ՝ սխալ, նաեւ, նոյնիսկ, իմ կրօնքս ճիշդ կրօնքն է եւ քուկդ՝ սխալ: Աս, կեանքի նկատմամբ ամենացած տեսութիւնն է: Անոնք, որոնք այս գիտութեան լոյսին տակ կը գործեն, կ'ըլլան անհանդուրժող ու մոլեռանդ եւ բոլոր անոնք, որոնք նմանապէս նեղմիտ են միշտ կ'ըլլան յուզումով լի, վիճող եւ երբեմն ալ խռովիչ:

Եթէ մէկը ունի տեսողութիւնը ամբողջական միութեան՝ այսինքն բարձրագոյն գիտութիւն, իր դիրքը, վարքը, ընթացքը եւ գործքը կ'ըլլայ միշտ ազնիւ, վեհանձն եւ խաղաղասէր:

ՍԷՐ ԵՒ ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆ

Այն հասկացողութիւնը որ ունինք հանդէպ մեր Ֆիզիքական մարմնոյն, նաեւ կրնանք կիրարկել

նկատմամբ բարձրագոյն գիտութեան: Ենթադրենք որ խօսակցութեան ընթացքին պատահմամբ մատու աչքս մտաւ, արդեօք նոյն մատը պիտի չգործածէ՞ ի այդ աչքը շփելու համար: Վստահ եմ իմ աչքս ցաւցուցած ըլլալուն համար այդ մատը պիտի չկտրէի ու նետէի: Նմանապէս, եթէ դիպուածով ակռաս լեզուս խածնէ, գայն, պատժելու համար պիտի չկտրէի: Ես ակռայիս հանդէպ ատելութիւն մը չունիմ, ակռաս ալ ինծի մաս կը կազմէ եւ ունի նոյն կարեւորութիւնը որ ունին մարմինիս բոլոր միւս մասերը: Ուրեմն կը տեսնենք որ ուր որ միութեան գիտակցութիւնը կայ մենք անմիջապէս կը ստանձնենք սիրոյ դիրք մը բոլոր մասերուն հանդէպ: Ուր սէր կայ հանդէպ բոլորին, բնականօրէն անոր կը հետեւի ծառայութիւնը:

Այսօր անկարող ենք ծառայելու, բայց ո՛չ, որովհետեւ սէր չունինք, այլ որովհետեւ ամբողջութեան՝ մէկութեան գիտակցութիւնը չունինք: Այս միութեան գիտակցութիւնը կը կոչուի ճշմարիտ կամ իսկական գիտութիւն, որ է իմաստութիւն: Մեր բոլոր ուսուցման ընթացքին պէտք է առաջնորդուինք դէպի այս բարձրագոյն գիտութեան որպէսզի կարելի ըլլայ յառաջ բերել ինքնափոփոխութիւն մեր անձի մէջ:

«Լճէնայն ինչ ուղիղ է իմաստնոց . ե-
յարմարեալ է այնոցիկ որչ Գրասնէն
յԳրիտո-Դիւն: Ընկալարո՛ւն յԵրասո՛ւ ե- մի
յարժաԴ . ե- յԳրիտո-Դիւն իան յոակի
ընցիբ: Լճ՝ է իմաստո-Դիւն իան յականա
տրատո-ականա . ե- ամէնայն ինչ տրատո-ական
չարժէ՛ յնա : » (Լուսկայ Ը. 9-11)

«Ամէնքն ալ հասկցողին ուղիղ են Ու գիտութիւն գտնողներուն շխտակ են: Իմ խրատս առէ՛ք եւ ոչ թէ

արծաթ: Ու ընտիր ոսկիէն աւելի գիտութիւնը սիրեցէք: Վասն զի իմաստութիւնը գոհարներէն աղէկ է եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հաւասարել:»

Եթէ անձ մը ինքզինքը կարենայ փոխել, ինք կրնայ փոխել իր շրջանակը: Սուրբեր շատ քիչ եղած են, բայց ամէն մէկը մեծ ազդեցութիւն ունեցած է ամբօրիններու վրայ: Իմաստուն մարդը չ'ատեր ոեւէ մէկուն, այլ բոլորին կ'ըլլայ բարեկամ: Երբ այդ Միութեան գիտակցութիւնը դայ, մեր կեանքը ամբողջովին կը փոխուի: Մի սպասեր որ ուրիշները փոխուին, սկսէ դուն քեզմէ: Դուն աշխարհն ես եւ աշխարհը քեզմէ անջատ կամ զատ չէ: Փոխէ քու դիրքդ եւ քու աշխարհի նկատմամբ ունեցած տեսողութիւնդ ալ կը փոխուի: Ամէն բան կ'ըլլայ լաւ, բարի եւ խաղաղ: Երկուութեան տեղ ահա այս է Արութիւնը եւ Ամենաբարձրագոյն Գիտութիւնը որ է Հշմարիա Իմաստութիւնը:

«Եւ որտե՞ր էս ելիւ է՛ աստուծո՞ւն իմաստութեան խան անմարտութեան. որպէս է աստուծո՞ւն լոսոյ խան պատարի:»
(Ժողովոջ Բ:13):

«Ուստի տեսայ թէ իմաստութիւնը անմտութենէն օգտակար է, ինչպէս լոյսը խաւարէն օգտակար է:»

«Բարի՛ է իմաստութիւնն ընդ ժառանգութեան, եւ յատուցած որոց որտեանն պարեգական.» : (Ժողովոջ Է:12)

«Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է Ու արեւը տեսողներուն օգտակար է:» (Ժողովոյի է:11)



Ենկարելի է սորվելու
սկսել,
եթէ կը խորհի՞նք
Թէ արդէն գիտե՞նք :

(Եպիգրաֆոս - Epictetus)



-Գ-

ԻՆՉ ԵՆ
ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԻՆՉ ԵՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենդոց գիրքը եւ Տարուինի բարեշրջութեան հայեցողութիւնը կը հաստատեն, թէ ստեղծագործութիւնը սկսած է նախ զօրութեամբ՝ (energy) լոյսով, յետոյ մարմինով եւ յետոյ միտքով, որուն յաջորդած է իմացականութիւնը: Հանքային աշխարհը միայն մարմին ունի, բոյսերը ունին մարմին եւ նախնական միտք, քանի որ տերեւները գիտեն դէպի արեւ դառնալ եւ արմատները՝ դէպի ջուր: Ստեղծագործութեան բարեշրջումը շարունակուած է շնչուն անասուններով, որոնք ունին լրիւ կազմուած մարմին եւ միտք, եւ տակաւին նոր կը հասկցուի, թէ ունին նաեւ գոնէ նախնական իմացականութիւն: Ստեղծագործութեան վերջին բարեշրջումը եղած է մարդը, որ ունի մարմին, միտք եւ լրիւ կազմուած իմացականութիւն:

Մարմինը՝ Ֆիզիքական մարմինը, իր հինգ զգայարանքներով յարաբերութեան մէջ կը մտնէ իր միջավայրին հետ: Միտքը՝ որ զգացական մարմին կը կոչենք, կը մեկնաբանէ Ֆիզիքական մարմինի զգայարանքներու միջոցաւ եկած տուեալները եւ զգացումներ կը կազմէ եւ կ'արտայայտէ զանոնք: (Ս. Գրոց որոշ համարներուն մէջ «միտք» բառը գործածուած է «իմացական մարմինի» տեղ:) Իմացականութիւնը՝ որ իմացական մարմին կը կոչենք, կ'արտօնէ անհատին տրամաբանելու կարողութիւնը:

Այն զօրութիւնը կամ կեանքը, որ կը գործէ ամէն անհատի մէջ, կը գործէ այս երեք մարմիններու միջոցաւ: Կան անհատներ, որոնց Ֆիզիքական մարմինը աւելի կ'իշխէ քան թէ իրենց զգացական կամ իմացական մարմինները, նման մարգասէր անձերու: Կան ուրիշներ, որոնց զգացական մարմինը աւելի

կ'իշխէ. այս անձերը կ'ըլլան շատ զգայուն, ընդհանրապէս գեղարուեստասէր: Իսկ անոնք, որոնց իմացական մարմինը աւելի կ'իշխէ, կ'ըլլան պրպտողներ եւ գիտուններ:

Մարդ արարածը այս երեք մարմինները ունի եւ կը գործէ երեքին միջոցաւ: Բայց ամէն մէկ անհատի մէջ ընդհանրապէս երեքէն մին աւելի զօրաւոր կ'իշխէ: Կան հազուագիւտ անձեր, որոնց մէջ երեքն ալ համահաւասար կը գործեն: Իրենց մէջ տիրող մարմիններու տարբերութեան պատճառաւ անհատներ իրարու հոգեբանութենէն չեն հասկնար, որով անձերու միջեւ կը ծագի անհամաձայնութիւն:

Գործնական մարդը՝ ուր ֆիզիքական մարմինը կ'իշխէ, կ'ըսէ. «ըստ Աւետարանին պէտք է օգնես քեզմէ տկարին» եւ այս անձերը ընդհանրապէս անոնք են, որոնք կամաւոր կ'աշխատին բարեսիրական կազմակերպութիւններու եւ հիւանդանոցներու մէջ ...: Զգացական մարդը, որուն մէջ զգացական մարմինը աւելի կ'իշխէ, կ'ըսէ. «պէտք է հաւատաս ու Աստուած պաշտես եւ աղօթես»: Իսկ իմացական մարդը, որուն մէջ իմացական մարմինը կ'իշխէ, կ'ըսէ. «ո՞ւր է Աստուած, ո՞վ է Աստուած»:

Գործնական մարդը զգացական մարդուն կը նայի ու կ'ըսէ. «աղօթելով չ'ըլլար, Յիսուսի նման դուն ալ գործնականօրէն պէտք է օգնես, ինչպէս Ան բժշկեց հիւանդները ...»: Զգացական մարդը գործնականին կը նայի եւ կ'ըսէ. «ըրածդ լաւ է, բայց քեզ չի փրկեր, պէտք է հաւատաս որ փրկուիս»: Իսկ երկուքն ալ իմացական մարդուն կը նային ու կ'ըսեն. «ահա ծոյլ եւ անաստուած մարդ մը»: Իմացական մարդը հազարումէկ պատճառ կը գտնէ, թէ ինչու պէտք չէ գործէ նման գործնական մարդուն, ու զգացական մարդն ալ կը նմանցնէ երիտասարդ տղու մը՝ Յակոբին, որ իր

ընկերոջ կ'ըսէ թէ խենդի պէս սիրահարած է: Երբ
ընկերը հարց կու տայ, թէ որո՞ւ սիրահարած է, թէ ինք
ալ կը ճանչնա՞յ այդ աղջիկը, Յակոբ կը պատասխանէ,
թէ չի գիտեր եւ տակաւին չէ հանդիպած անոր, չէ
տեսած եւ չի ճանչնար իր սիրահարը:

Տեսնենք թէ, Ս. Գիրքը ի՞նչ կ'ըսէ ասոնց մասին:
Այս երեքէն որը աւելի նախընտրելի է: Գործնականին
համար կը գտնենք հետեւեալ համարները՝

«ասոս թէ ասիցես, թէ ո՛չ ճանաչեմ պնա՝
եւ ո՛չ պնա ճանաչէ, Գիտասջի՛ր պի տեր
պսրրոս ամենեցոոն ճանաչէ, եւ որ սրեղծ
պշոոնչ ամենեցոոն նա՛ Գիտէ պամենայն,
եւ Հասրոսպանէ իրախանչիւր ըսո Գործա
իւր» (Լուսկայ ԻԴ:12)

«Եթէ ըսես թէ՛ «Մենք ասիկա չգիտցանք», ահա
սիրտերը քննողը կը հասկնայ Ու քու Հոգիդ
պաշտպանողը ինք գիտէ եւ ամէն մարդու իր գործին
չափովը պիտի հատուցանէ:»

«Զի Գալո՛ց է որդի մարդոյ փառօ՞ղ Ըօր
իւրոյ՝ հանդերձ հրեշտակօ՞ղ իւրօ՞ղ, եւ
յայնժամ Հասրոսպէ իրախանչիւր ըսո
Գո՛րծա իւր:» (Մասրէնոս ԺԶ:27)

«Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի
գայ իր հրեշտակներուն հետ եւ այն ատեն ամէն մէկ-
կուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ:»

«Զի՞նչ օգոոս իցէ...եթէ ասիցէ ո՞ղ
Հասասոս ունէլ՝ եւ Գործա ո՛չ ունիցի.
միթէ կարիցէ՞ն Հասասոսն ասրեցոսպանէլ

ւնա, . . . սոյնպէս էւ Ըստ-արդի՝ Եթէ Գործս
 ո՛չ ունիցին, մեռեա՛լ էն առանձինն. . . ւր
 Ըստ-արդի առանց Գործոց դատարկ էն :
 . . . Տեւանէ՛լ՝ ւր ՚ի Գործոց արդարանայ
 մարդ՝ էւ ո՛չ ՚ի Ըստ-արդի միայն : . . .
 Զօրօրինակ մարմին առանց Ընդոյ մեռ-
 եալ է, սոյնպէս էւ Ըստ-արդի առանց Գոր-
 ծոց մեռեա՛լ էն : (Թոգրն Յակոբայ Ի:14-26)

«Ի՞նչ օգուտ է, ... եթէ մէկը ըսէ թէ Հաւատք ունի, ու
 գործ չունենայ: միթէ Հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա:
 ... Այսպէս ալ Հաւատքը, եթէ իրեն հետ գործ չունենայ,
 առանձինն մեռած է: ... թէ Հաւատքը առանց գործերու
 մեռած է: ... Կը տեսնէ՞ք թէ մարդ գործերով
 կ'արդարանայ, ո՛չ թէ՛ միայն Հաւատքով: ... Քանզի
 ինչպէս մարմինը առանց Հոգիի մեռած է, նոյնպէս ալ
 Հաւատքը առանց գործերու մեռած է:»

**Վերոյիշեալ համարներէն յայտնի է, թէ
 գործնականը անհրաժեշտ է փրկութեան համար: Բայց
 արդեօք բաւարար է՞ Յաջորդ համարները ուղղուած են
 զգացականին:**

«Էւ նա՛ ասէ պէինն. Ըստ-արդի ի՞նչ կէցոցին
 ւրէւ, երբ ՚ի խաղաղութեամբ:» (Ղուկաս Է:50)

«Ինք ըսաւ կնոջը. Քու Հաւատքդ քեզ փրկեց, զնա
 խաղաղութեամբ:»

«Էւ Յիսոսս ասէ ցնա, դո՛ւսարդ՝ Ըստ-
 արդի ի՞նչ կէցոցին ւրէւ. . .» (Մարկոս Է:34)

«Յիսուս ըսաւ անոր: Աղջիկ, քու Հաւատքդ քեզ բժշկեց.»

«Զի շնորհօ՛ղ նորա է՛լ փրկեալէ ՚ի յեռն
 Ըստ-արդից, էւ այս՛ շի յեռն այլ

Լսոյո՞ւ թոյ, պարգէլ- է, ոչ ՚ի Գործոց, զի
միտ՛ի պարթէսցի...» (Եփեսացիս Բ:8-9)

«Վասն զի շնորհքով փրկուած էք դուք Հաւատքի
միջոցով եւ այս՝ ոչ թէ ձեզմէ է, Հապա Աստուծոյ
պարգեւն է. Ոչ թէ գործերէն, որ մէկը չպարծենայ...»

Առաջին հերթին կը թուի որ գործնականին եւ
զգացականին համար գրուածները հակասական ըլլան:
Համբերութեամբ հետեւինք եւ տեսնենք, թէ ինչ
գրուած է իմացականին համար:

«Ե- նորոգել Հոգ-ովն միայ յերոց»
(Եփեսացիս Գ:23)

«Եւ ձեր մտքով ու հոգիով նորոգուիք»

«Ե- մի կերպարանի՛ն կերպարանօ՛ղ աշխարհիս
այսորե՛կ, այլ նորոգեցար՝- ՚ի
նորոգութիւն միայ յերոց, առ ՚ի շննել
յեւ զլա՛ւն, ե- երե զինչ էն կամէն
Լսոյո՞ւ թոյ, բարին ե- Հաճոյն ե-

կարարեալ» (Հոռովացիցիս ԺԲ:2)

«Եւ մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը,
Հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէ՛ք, որպէս
զի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու
Հաճելի եւ կատարեալ է:»

«... Ես ինչնն մտօ՛ղ իմօղ ժառանգ իմ
օրինակցն Լսոյո՞ւ թոյ: Ե- մարմնօղ օրինակցն
մեղաց:» (Հոռովացիցիս Է:25)

«... Ուրեմն ես ինքս մտքով Աստուծոյ օրէնքին կը
ծառայեմ ու մարմնով՝ մեղքի օրէնքին:»

«Բարի է իմաստորութիւն ընդ ժառանգո՞ւ-
թեան, ե- յաւելո՞ւս յոց պեասնէն

«**Վարդապետ**» (Ժողովոյ Է:12)

«Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է Ուսուցիչը տեսնողներուն օգտակար է:» (Ժողովոյ 7:11)

«**Չի մարդոյ լարոյ՝ Է՛ր պիմաստոյնիւնն է- պիմարոյնն է- պարտաւորութիւնն...»**
(Ժողովոյ Բ:26)

«Քանզի Աստուած իր առջեւ հաճելի եղող մարդուն Իմաստութիւն, գիտութիւն եւ ուրախութիւն կու տայ.»

Յովհաննու Գ: 3 *համարին մէջ Յիսուս Նիկողիմոսին՝ փարիսեցիին, օրէնքի եւ գիտութեան մարդուն, կ'ըսէ, թէ պէտք է վերստին ծնանիլ: Վերստին ծնունդը ուրեմն մտքի ուղղութեան փոփոխութեան համար ըսուած է, այսինքն մարդկային՝ աշխարհիկ օրէնքներու հետեւելու տեղ, պէտք է որ միտքը կեդրոնանայ Աստուծոյ վրայ: Աւետարանին մէջ գրուած է «...օձերու պէս խորագէտ եղէք եւ աղանիներու պէս միամիտ»: (Մատթէոս Ժ:16) Օձի պէս խորագէտ՝ խորամանկ, այսինքն օձի պէս արթուն, հսկող, զգոյշ եւ աչալուրջ: Իսկ աղանիի պէս միամիտ՝ այսինքն մէկ մտքի վրայ, եւ ան ալ կեդրոնացած Աստուծոյ վրայ, եւ ոչ թէ միտքը տարածուած ըլլայ սատանայի վրայ:*

Ըստ Ս. Գիրքի՝ յայտնի է, թէ իր տեղին համեմատ երեք ընտրութիւններն ալ՝ գործնական, զգացական եւ իմացական, կարեւոր են: Արդեօք ասոնցմէ մին աւելի նախընտրելի է՞ քան թէ միւսները: Տեսնենք, թէ յաջորդ համարները ինչ կ'ըսեն:

«**Ե- Յիսուս ասէ ցնայ սիրեացես պիւր Աստուծոյն ինչ յամենայն սրբէ ինչմէ, Ե- յամենայն անչնէ ինչմէ, Ե- յամենայն մտայ ինչ:**» (Մատթէոս ԻԲ:37)

«Յիսուս ըսաւ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ:»»

«Եւ «սիրեացես» զՏէր Աստուած ի՞նչ յամենայն սրբէ ի՞նչմէ, եւ յամենայն անշնէ ի՞նչմէ, եւ յամենայն մտապ ի՞նչ, եւ յամենայն զօրութենէ ի՞նչմէ: այս է ասաջին պատգամը» (Մարկոս ԺԳ:30)

«Եւ քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ եւ քու բոլոր գորութիւնովդ: Ասիկա է ասաջին պատգամը:»

«Սա պատգամը ասի երբ եւ ասէ «սիրեացես» զՏէր Աստուած ի՞նչ յամենայն սրբէ ի՞նչմէ, եւ յամենայն անշնէ ի՞նչմէ, եւ յամենայն զօրութենէ ի՞նչմէ եւ յամենայն մտապ ի՞նչ, եւ զքնիւր ի՞նչ ի՞բրեւ պանշն ի՞նչ» (Գևուս Ժ:27)

«Պատասխան տուաւ անիկա ու ըսաւ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ ու քու բոլոր անձովդ եւ քու բոլոր գորութիւնովդ ու քու բոլոր մտքովդ, եւ քու ընկերդ՝ քու անձիդ պէս:»»

«Երբէ Բաշինի յաջողութեանց եմ, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի: Բայց իրաւանշիր որմէ զորեալ է յայտնութիւն Ըոգոյն՝, աս իրաւանշիր օգոյն, որմէմն ՚ի Ըոգոյն զորեալ է Բան իմաստութեան, այլորմ Բան Գիտութեան ըստ նմին Ըոգոյն. միասորմ Ըասարի՛ նովին Ըոգոյն. այլորմ շնորհ»

Թժշկո-Թեանց նովին Ըոգ-ով. այլո-մ
աջողո-Թի-նէ՛լ պօրո-Թեանց...»

(Լ. Կորնթացիս ԺԳ:6-10)

«Նոյնպէս ներգործութիւնները գանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը ներգործէ ամէնքը ամէն բանի մէջ: Բայց ամէն մէկուն Հոգիին յայտնութիւնը տրուած է բոլորին շահուն համար: Մէկուն՝ Հոգիով իմաստութեան խօսք տրուած է, ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն Հոգիին տուած չափովը. Միւսին՝ հաւատք՝ նոյն Հոգիով. ուրիշին՝ բժշկութեան պարզեւներ նոյն Հոգիով. Ուրիշին՝ հրաշագործութիւններ: ...»

«Եւ ամին այսմիկ պամեանցն փոյն ՚ի մէջ
առեալ յերովի ն հա-աթով յաթակարար-
իջի զարագի նո-Թի-նն, եւ առագի նո-
Թեան ըսգիթո-Թի-նն եւ Գիթո-Թեամբն
զժո-ժկալո-Թի-նն, եւ ժո-ժկալո-Թեամբն
զհամբերո-Թի-նն, եւ համբերո-Թեամբն
զԼսթո-աթաշթո-Թի-նն եւ զԼսթո-աթ-
աթաշթո-Թեամբն զեղբայրսիթո-Թի-նն եւ
եղբայրսիթո-Թեամբն զաէր:»

(Թո-ղն Պետրոսի Երկրորդ Լ:5-7)

«Եւ այս բանին համար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքին վրայ առաքինութիւն աւելցուցէք ու առաքինութեան վրայ՝ գիտութիւն եւ գիտութեան վրայ՝ ժողովալութիւն ու ժողովալութեան վրայ՝ համբերութիւն եւ համբերութեան վրայ՝ աստուածպաշտութիւն Ու աստուածպաշտութեան վրայ՝ եղբայրսիրութիւն ու եղբայրսիրութեան վրայ՝ սէր.»

Վերոյիշեալ համարներէն յայտնի կ'ըլլայ, թէ երեքն ալ համահաւասար արժէք ունին, եւ ամէն անձի տրուած են որոշ չափով: Ընդհանուր առմամբ երեքէն մէկը կ'իշխէ մեր ընդհանուր բնութեան վրայ: Ի ծնէ

մեզի տրուած այս Աստուածային պարգեւին համաձայն մենք ալ կը յառաջանանք մեր ճանապարհին մէջ դէպի մեր Հայրական տունը՝ նման անառակ որդիին: Երանի անոր, որու մէջ երեք մարմինները համահաւասար կը գործեն: Այդ անձը կը նմանի թռչունի մը, որ իր թառած ծառին ճիւղին վրայէն թռիչք կ'առնէ երթալու իր նպատակակէտին: Ենթադրենք որ երկու թեւերը իրարու հաւասար թռչունի մը մէկ թեւը կը ներկայացնէ զգացականը, եւ միւսն ալ՝ իմացականը եւ թռիչք առնելու համար զինք ճիւղին վրայէն հրող ոտքերն ալ՝ գործնականը, այն ատեն թռչունը կարելիութիւն ունի իր տեղը հասնելու: Եթէ ոտքերով չհրէ եւ թռիչք չ'առնէ, կամ եթէ նոյնիսկ թռիչք առնէ, բայց թեւերէն մին միւսէն կարճ ըլլայ, միայն կ'որ կ'որ կը թռի եւ իր հասնելիք տեղը չի կրնար երթալ:

Երբ կ'իմանանք, թէ վերոյիշեալ սիրահարած Յակոբը չի գիտեր, թէ որու սիրահարած է, կը ծիծաղինք, որովհետեւ գիտենք թէ սա անիմաստ է: Մինչդեռ երբ հարցը Աստուծոյ կու գայ եւ կ'ըսենք. «կը սիրեմ Աստուած, կը պաշտեմ Աստուած» ու հարց տան, թէ ո՞վ է Աստուած, կամ ո՞ւր է Աստուած եւ մեր պատասխանը ըլլայ «չեմ գիտեր», այս պատասխանը ընդհանուր առմամբ տարօրինակ չի թուիր: Բայց այս երեւոյթը քիչ մը զարմանալի չէ՞:

Աւելի լաւ պիտի չըլլա՞ր եթէ գիտնայինք թէ ուր է Աստուած, ով կամ ինչ է Աստուած: Այն ատեն երբ ըսենք «կը սիրեմ եւ կը պաշտեմ Աստուած» իմաստալից կ'ըլլար:

Իմացական մարդը կը պրպտէ եւ կը ջանայ հասկնալ եւ գտնել վերի հարցումներուն պատասխանները, զգացական մարդը կը յայտնէ իր սէրը եւ պաշտամունքը եւ գործնական մարդն ալ իր գործքով ցոյց կուտայ այդ սէրը եւ պաշտամունքը:

Երեք եղբայրներ փաստաբանէ մը հեռագիր մը կը ստանան, որ իրենց հեռաւոր մէկ ազգականը մահացած է եւ իր կտակին մէջ ամէն մէկուն մեծ գումար մը ժառանգ թողած է: Ժառանգը ստանալու համար պարտին 24 ժամուայ մէջ ներկայանալ սոյն փաստաբանին գրասենեակը, որ կը գտնուի մօտակայ քաղաք մը: Այս երեք եղբայրներէն մին՝ իմացականը, կը նստի եւ կ'որոշէ, թէ ինչ ճամբով պէտք է երթան եւ երբ ճամբայ պէտք է ելլեն...: Երկրորդը՝ զգացականը, ուրախութենէն միայն կը պոռայ ու կը կանչէ, թէ հարստացած են եւ տան մէջ վեր վար կը վազէ ըսելով, թէ պէտք է ժամանակին հասնին: Երրորդը՝ գործնական մարդը, մինչ այդ արդէն ինքնաշարժ նստած ճամբայ ելած է. բայց աւա՛ղ՝ ճամբան չգիտնալուն սխալ ուղղութեամբ կ'ընթանայ: Երեքն ալ փաստաբանին գրասենեակը ճիշդ ատենին չեն հասնիր եւ ըստ կտակին բոլոր հարստութիւնը կը տրուի բարեսիրական կազմակերպութեան մը: Եթէ երեքը համագործակցէին եւ զգացականը զիրենք մղէր երթալու, գործնականը զիրենք տանէր ըստ իմացականին որոշած ճամբով եւ ուղղութեամբ, երեքն ալ կրնային ստացած ըլլալ իրենց ժառանգութիւնները:

Վերոյիշեալ համարները (Ղուկաս Ժ:27)...

բացայայտօրէն կը պարզեն կացութիւնը՝ սիրէ քու Տէր Աստուածդ քու բոլոր սրտովդ (զգացական), ու քու բոլոր մտքովդ (իմացական), եւ քու բոլոր զօրութիւնովդ (գործնական) եւ քու բոլոր անձովդ՝ այսինքն քու բոլոր հոգիովդ՝ երեքովն ալ, այն

չափերով, որ տրուած է քեզի:


Երեք բնութիւններու տէր անձեր փոխանակ զատ ճամբաներ հետապնդելու, զիրար նախատելու, պէտք է համագործակցին եւ յարգեն զիրար, որպէսզի վերոյիշեալ համարին (Թուղթ Պետրոսի Երկրորդ Ա:5-7) մէջ ինչպէս կ'ըսուի, Աստուածպաշտութիւնը դառնայ եղբայրսիրութեան ու աճի սէրը:

Կաթողիկէ ճգնաւոր մը հետեւեալը ըսած է.
«Եթէ բանի մը կը հաւատամ (believe), կ'ուզեմ գիտնալ եւ ճանչնալ զայն, որպէսզի հաւատք (faith) ընծայեմ անոր»:

Եթէ Աստուծոյ մասին ունենանք այն փորձառական գիտութիւնը, արդեօք կարելի կ'ըլլա՞յ որ չպաշտենք ու չսիրենք զինքը, եւ ունենանք իսկական հաւատք եւ ոչ «բերնի ծամոց հաւատք». եւ հարկաւ եթէ իսկապէս սիրենք, արդեօք չե՞նք գործեր ըստ Իր կամքին համաձայն:

Սիրելիներ ամէն մէկուս տրուած է ինչ որ մեզի պիտոյ է: Կարեւորը այն է որ այս պանդխտութեան ժամանակը՝ այս աշխարհի վրայի մեր կեանքը, պարապի չանցնենք եւ ըլլանք օձի պէս խորամանկ եւ աղաւնիի նման միամիտ:

Տէր Ըովոսեոս պէս, ե- ինչ ինչ ո՛չ պակասեացի:





Ի սկզբանէ էր թանն .
 Է- թանն էր առ Լսոյրուած .
 Է- Լսոյրուած էր թանն :
 նա՛ էր իսկզբանէ առ Լսոյրուած :
 Ըմբռայն ինչ՝ նոզաւ եղէ .
 Է- առանց նորա եղէ- Է- ոչինչ՝ որ
 ինչ եղէ-ն :
 Նոզաւ՝ կեանք էր ,
 Է- կեանքն՝ էր լոյս մարդկան
 (Յովհաննու- Ը:1-4)



- Դ -

ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ ԹԷ ՉԿԱՅ



ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ ԹԷ ԶԿԱՅ

Ստեղծագործութիւնը կը շարունակուի բարեչըր-
 ջումի միջոցաւ: Նախ գոյացաւ զօրութիւնը՝ լոյսը,
 յետոյ Ֆիզիքական մարմինը, որուն յաջորդեցին
 զգացական եւ ապա իմացական մարմինները: Շատ
 հաւանական է որ բարեչըրջումը շարունակուի ներգի-
 տակցութեան (intuition) ստեղծագործութեամբ: Ներ-
 կայիս, մարդկութեան մեծամասնութիւնը ունի առա-
 ջին երեք մարմինները եւ իմացականութեան միջոցաւ
 ալ տրամաբանելու կարողութիւնը: Երբեմն կ'իմա-
 նանք, թէ սա կամ նա անձը ունի նաեւ ներգիտակ-
 ցութիւն: Կ'ըսուի թէ այս առակելութիւնը առ
 հասարակ տրուած է կիներուն:

Փոքր տարիքէն ի վեր մեզի ըսուած է թէ
 Աստուած կայ: Թէ՛ մեր ծնողները, թէ՛ ուսուցիչները
 եւ թէ կղերականները մեզի սորվեցուցած են աղօթել,
 յորդորած են եկեղեցասէր եւ կրօնասէր ըլլալ:
 Աւետարանը կը գրէ հետեւեալը.

«Բայց դուք՝ մի քանի կոշտ վարդապետք պի
 մի ե յեր ուսուցիչ... Եւ մի կոշտեցի
 ուսուցիչ, պի ուսուցիչ յեր Բրիստոսն

Է:» (Մատթէոս ԻԳ: 8,10)

«Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք, վասն զի ձեր
 Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս: ... Եւ դուք
 ուսուցիչներ մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ
 է, այսինքն Քրիստոս:»

Ինչո՞ւ պէտք ունինք կրօնքի: Եթէ չաղօթեմ,
 արդեօք Աստուած կից մը պիտի զարնէ՞: Մի՛թէ
 բաւարար չէ՞ առողջ ծնանիլ, ուրախ մեծնալ, լաւ
 ուսում ստանալ, գեղեցիկ եւ հաւատարիմ անձի մը հետ
 ամուսնանալ, երկու առողջ զաւակներ եւ լաւ գործ մը

ունենալ՝ այսինքն քիչ աշխատանքով լաւ վարձատրութիւն, կոկիկ դրամագլուխի մը տէր ըլլալ, հանգիստ ծերանալ եւ խաղաղութեամբ մեռնիլ: Ո՞ւր է Աստուծոյ դերը:

Եթէ կեանքէն մեր ազնկալածը այս է, կրօնքի պէտք չունինք: Անասուններն ալ նոյնը կ'ընեն եւ բնաւ չեն աղօթեր: Կովը արտին մէջ պառկած կ'որոճայ, կանանչ խոտը կ'ուտէ եւ ճերմակ կաթ կու տայ: Բնաւ չի խորհիր, թէ խոտը ինչու կանանչ է եւ կանանչ խոտը ինչպէս ճերմակ կաթի կը վերածուի: Մարդ արարածն ալ եթէ ըսէ, թէ կրօնքի պէտք չունի, կը նշանակէ, թէ տակաւին չէ սկսած տրամաբանել:

Մարդ մը երբ ճամբան կը քալէր, ճամբուն եզերքի ծառէն խնձոր մը գետին կ'իջնայ: Ինքն ալ անօթի, գետնէն կը վերցնէ խնձորը, շփելով կը մաքրէ եւ կ'ուտէ: Այս անձը կը ներկայացնէ համայն մարդկութեան 80%-ը, որոնք կը տեսնեն միայն խնձորին օգտասիրական (utilitarian) արժէքը:

Երկրորդ անձ մը եւս կ'անցնի նոյն ճամբէն: Ան ալ կը տեսնէ խնձորի մը իյնալը: Կ'առնէ զայն, կը նայի եւ կը զմայլի բնութեան գեղեցկութեան, զոյներուն ներդաշնակութեան: Խնձորը տուն կը տանի: Կը դնէ պատուանդանի մը վրայ: Զանազան ուղղութիւններէ զայն կը լուսաւորէ, մինչեւ որ ամենալաւագոյն ձեւով յայտնաբերէ անոր գեղեցկութիւնը: Այդ գեղեցկութիւնը պաստառի մը վրայ կ'անմահացնէ, յետոյ ինքն ալ կ'ուտէ այդ խնձորը: Այս մարդը կը ներկայացնէ համայն մարդկութեան 10%-ը՝ արուեստագէտները:

Երրորդ անձ մըն ալ կը տեսնէ խնձորի մը իյնալը: Կ'առնէ խնձորը, կը նայի եւ կը տեսնէ անոր մէջ վերացական իմաստ: Կ'ըսէ. «աւ՛ղ, ամէն ինչ որ հասուննայ կ'իջնայ եւ կը մեռնի», եւ ինքն ալ կ'ուտէ

խնձորը: Համայն մարդկութեան միայն 7%-ը նման են այս մարդուն: Ասոնք են բանաստեղծները:

Չորրորդ մարդ մը եւս կ'անցնի նոյն ծառին քովէն եւ ան ալ կը տեսնէ խնձորի մը իյնալը եւ հարց կու տայ. «Խնձորը ինչո՞ւ վար ինկաւ եւ վեր չի նկաւ»: Այս անձը կը ներկայացնէ համայն մարդկութեան 2.99%-ը: Ասոնք գիտուններն են: Շնորհիւ իրենց, դարերու ընթացքին ի յայտ եկած է գիտութիւններու հաւաքածոյ մը՝ աստղաբաշխութեան, բուսաբանութեան, թուաբանութեան, բնագիտութեան, երկրաչափութեան, մարդակազմութեան եւ այլն: Մենք այսօր կը վայելենք այս գիւտերուն արդիւնքները:

Կայ նաեւ համայն մարդկութեան 0.01%-ը ներկայացնող հագուազիւտ մարդ մը, որ տեսնելով նոյն խնձորը հարց կու տայ, թէ՛ այս բոլորը՝ խնձորը, ծառը, ճամբան, երկիրը, արեւը, աստղերը եւ համայն տիեզերքը, ուրկէ՞ եկած են: Մենք գիտուններ չենք, բայց երբ խաղաղ գիշեր մը պարտէզը նստած աստղերը դիտենք, շատ հաւանաբար մենք ալ նոյն հարցումը կրնանք հարցնել: Բայց որովհետեւ հարցումը այնքան հսկայական հարց մը կը բանայ մեր առջեւ, որ անմիջապէս կը ջանանք գայն վանել մեր մտքէն: Սակայն համայն մարդկութեան 0.01%-ը ներկայացնող այդ մարդիկ, թէ՛ հարցումը կ'ընեն, եւ թէ՛ կը ջանան պատասխանը գտնել:

Ընդհանրապէս, հարցի մը պատասխանը գիտականօրէն գտնելու համար պէտք է գայն առարկայականօրէն (objectively) քննել: Բայց այս հարցով անկարելի է գիտական աշխատանոց (laboratory) մը շինել, որուն մէջ կարելի ըլլայ դնել տիեզերքը: Այս մտային հսկաները հասկցած են, թէ՛ ուղղակի քննարկութիւնը (direct investigation) անկարելի պիտի ըլլայ, սակայն չեն յուսահատած իրենց ձախողութեան

հետեւանքով: Դիմած են անուղղակի քննարկութեան (indirect investigation), ինչ որ ընդունուած եւ ճանչցուած քննարկութեան ձեւ եւ միջոց է գիտութեան մէջ:

Իրենք, իրենց պրպտումը կը հիմնեն հետեւեալ նախառաջարկներու վրայ.

ա- Տիեզերքը գոյութիւն ունի, ուրեմն արդիւնք մըն է:

բ- Մենք կը փնտռենք անոր պատճառը: Ուրեմն կ'որոշեն քննել պատճառի եւ արդիւնքի իրարու հետ ունեցած փոխ-յարաբերութիւնը: Կը գտնեն երեք օրէնքներ.

ա- Որեւէ արդիւնք առանց պատճառի գոյութիւն չ'ունենար:

Մենք քանի որ գոյութիւն ունինք, ունինք նաեւ մեր գոյութեան պատճառը՝ մեր հայրն ու մայրը: Եթէ ըսենք թէ հայր չունինք, ի՞նչ կը հասկնանք: Մեր հայրը մահացած է, կամ զինքը կ'ուրանանք: Բայց որեւէ մէկը չ'ըսեր թէ մենք ձիւնամորիկի մը միջոցին երկիրքէն ինկանք: Ծառը ունի իր պատճառը՝ հունտը: Ոսկի մատանին, ապարանջանը ունին իրենց պատճառը՝ ոսկին: Կաւէ ամանը ունի իր պատճառը՝ կաւը: Ծովու ալիքները ունին իրենց պատճառը՝ ջուրը: Ալիքները ցամաքի վրայ գոյութիւն չեն կրնար ունենար:

Երբ 1948-ին Հնդկաստան իր անկախութիւնը կը ստանայ, գիտութեան դասի ուսուցիչ մը կը յայտարարէ. «Քանի որ Անգլիոյ լուծէն ազատած ենք, աշխարհի քաջողութեան ուժը, որ անգլիացիի մը՝ Նիւլըթընի կողմէ գտնուած էր, այլեւս Հնդկաստանի մէջ ի գորու չէ»: Փաստելու համար երկրորդ յարկի պատշգամէն դուրս կը քալէ եւ դժբախտաբար վար իյնալով սրունքը կը կոտրէ: Այս եւ նման օրէնքներ, հոգ չէ թէ ով գտած ըլլայ, բոլորն ալ տիեզերական են:

Երկրորդ օրէնքը կը հռչակէ.

բ- Արդիւնքները նոյն պատճառն են զանազան կերպարանքներով:

Մատանին եւ ապարանջանը ունին տարբեր կերպարանքներ, բայց երկուքն ալ ոսկի են: Կան զանազան չափերով, ձեւերով եւ տարբեր նպատակներու համար գործածուող կաւէ ամաններ, բայց բոլորն ալ կաւ են: Կան զանազան մեծութեամբ ալիքներ, բայց բոլորն ալ ջուր են: Կան նաեւ հսկայական ալիքներ (tsunami), որոնց մէջ կը թուի ըլլալ ովկիանոսին բոլոր ջուրը: Այն ատեն այդ ալիքը կրնայ ըսել. «Ես եմ ովկիանոսը»:

Երրորդ օրէնքը կ'ըսէ.

գ- Արդիւնքէն պատճառը հանձն ոչինչ կը մնայ:
Հին Հայաստանի քաղաքներէն մէկուն մէջ, ուր ազգային վարժարաններու ուսուցիչներ ընդհանրապէս լաւ չէին վարձատրուէր, թուաբանութեան ուսուցիչ մը բաւական մտահոգուած էր իր ընտանիքի նիւթական հարցերով: Այդ ուսուցիչը, օր մը, յանկարծ ուրախութեամբ իր քով կը կանչէ իր կինը եւ կ'ըսէ թէ լուծումը գտած է իրենց նիւթական դժուարութիւններուն: Կինը կ'ուրախանայ եւ կ'ողջ գիտնալ լուծումը: Ամուսինը, որպէս թուաբանութեան ուսուցիչ, իր գտած լուծումը կը բացատրէ հետեւեալ ձեւով. « $a + b - a = b$ »: Կինը ասկէ բան մը չի հասկնար: Ամուսինը կը շարունակէ. «Գիտես, մեր ամուսնութեան օրը հայրդ քեզի ոսկի վզնոց մը նուիրած էր, դուն ան ինծի տուր: Այս հաւասարութեան մէջ « a »-ն կը ներկայացնէ ոսկին, « b »-ն ալ՝ վզնոցը: Քանի որ « $a + b - a$ » հաւասար է « b »-ին, ես վզնոցը շուկայ կը տանիմ, ոսկին

կը ծախեմ եւ վզնոցը քեզի ետ կը բերեմ:
Կինը ժպտելով խոհանոց կը վերադառնայ,
առանց վզնոցը տալու:

Ինք «a» եւ «b»-էն բան մը չէր հասկցած, սակայն շատ լաւ գիտէր, որ եթէ ոսկին վզնոցէն հանուի, վզնոցն ալ կ'անհետանայ: Եթէ պատճառը հանենք արդիւնքէն, արդիւնքը կը կորսուի:

Այս երեք օրէնքի հիման վրայ, մտային հսկաները քննեցին տիեզերքը: Տիեզերքը տեսանելի եւ շօշափելի արդիւնք մըն է, ուրեմն առաջին օրէնքին համաձայն պէտք է ունենայ պատճառ մը, հոգ չէ թէ գիտնանք կամ չգիտնանք այդ պատճառը: Քանի որ չենք գիտեր այդ պատճառը, կրնանք զայն կոչել «x»: Մեր նախահայրերը այդ պատճառը կոչած են Աստուած:

Մինչեւ հիմա ի՞նչ ըսինք: Ինչ որ մեր ուսուցիչները, մեր ծնողները եւ մեր կղերականները արդէն մեզի ըսած էին. Աստուած կայ: Բայց ո՞ր Աստուածը, ո՞ր է Աստուած, ինչպէ՞ս տեսնել զինք ու ինչպէ՞ս խօսիլ իր հետ: Հազարումէկ հարցումներ կու գայ մեր միտքը, բայց ընդհանրապէս կը հեռացնենք նման հարցումներ մեր մտքէն, որպէսզի հերետիկոս չհամարուինք: Անձ մը կ'ըսէ. «Ես նուիրուած եմ Աստուծոյ»: Եթէ հարց տանք, թէ ո՞վ է իր նուիրուած Աստուածը, կ'ըսէ. «Չեմ գիտեր»:

Երիտասարդ Յակոբ, իր ընկերոջ կ'ըսէ, թէ խենդի պէս սիրահարած է: Երբ ընկերը հարց կու տայ, թէ որո՞ւ սիրահարած է, թէ ինքն ալ կը ճանչնա՞յ այդ աղջիկը, Յակոբ կը պատասխանէ, թէ չի գիտեր եւ տակաւին չէ հանդիպած անոր, չէ տեսած եւ չի ճանչնար իր սիրահարը:

Կը ծիծաղինք, որովհետեւ գիտենք, թէ սա անիմաստ է: Մինչդեռ երբ հարցը Աստուծոյ կու գայ եւ ըսենք. «Կը

սիրեմ Աստուած, կը պաշտեմ Աստուած» ու եթէ հարց տան, թէ ո՞վ է Աստուած, կամ ո՞ւր է Աստուած եւ մեր պատասխանը ըլլայ «չեմ գիտեր», ընդհանուր առմամբ այս պատասխանը տարօրինակ չի թուիր: Սակայն եւ այնպէս, այս երեւոյթը քիչ մը զարմանալի չէ՞:

Կիրարկենք երկրորդ օրէնքը:

Նիւթական՝ հանքային, բուսական, անասնական եւ մարդկային աշխարհները բոլորն ալ արդիւնքներ են, ուրեմն են նաեւ դրսերեւումը այդ պատճառին՝ զանազան կերպարանքներով: Օրէնքը կ'ըսէ «արդիւնքները պատճառն են՝ զանազան կերպարանքներով»:

Տիեզերքի անհուն տարածութեան մէջ կան հարիւր հազարաւոր աստղախումբեր (galaxies): Յարդգողի ճանապարհը՝ Ծիր կաթին (milky way) ասոնցմէ միայն մէկ հատն է, որուն անհուն տարածութեան մէջ կան հարիւր հազարաւոր աստղեր: Արեւը աստղերէն միայն մէկ հատն է: Արեւային դրութեան հսկայական մեծութեան մէջ կան բազմաթիւ մոլորակներ, ասոնցմէ մին ալ աշխարհն է: Աշխարհի վրայ կան հինգ ցամաքամասեր (continents): Ասոնցմէ մին Հիւսիսային Ամերիկան է: Հոն կան երեք երկիրներ, որոնցմէ մին Գանատան է: Գանատայի մէջ կան բազմաթիւ նահանգներ, որոնցմէ մին ալ Օնթարիոն է, ուր կան բազմաթիւ քաղաքներ: Այդ քաղաքներէն մէկ հատն ալ Թորոնթոն է: Թորոնթո ունի բազմաթիւ թաղամասեր: Թաղամասի մը մէջ կան բազմաթիւ փողոցներ: Այդ փողոցներուն վրայ կան բազմաթիւ տուներ: Այդ տուներէն մին ձեր տունն է, ուր դուք կը բնակիք: Ձեր տան մէջ կան բազմաթիւ սենեակներ եւ այս պահուս դուք կը գտնուիք անոնցմէ մէկուն մէջ: Հաւանաբար հոն կը գտնուին գոնէ մի քանի աթոռներ եւ բազկաթոռ մը: Դուք, միայն մէկ հատին վրայ նստած էք: Այս պատկերը համայն

ստեղծագործութեան անհունութեան մէջ ոչնչութիւն մըն է: Բայց քանի որ դուք այս ստեղծագործութեան մէջ էք, դուք ալ ունիք այդ պատճառը ձեր մէջ:

Բոլոր կաւէ ամանները յառաջ եկած են կաւէն: Կը գոյատեւեն իբրեւ աման, բայց նաեւ՝ իբրեւ կաւ: Եթէ նոյնիսկ կոտրենք եւ փշրենք բոլոր ամանները, կը մնայ դարձեալ կաւը: Անցեալին կարմիր աման մը յղացաւ գաղափար մը եւ յայտարարեց. «Մեր մէջ կաւ չկայ»: Միւս ամանները անոր հետեւելով ըսին. «Այո, մեր մէջ կաւ չկայ»: Որքան հեռու է կաւը ամանէն, ոսկին՝ մատանիէն, այնքան հեռու է Աստուած մեզմէ:

Աւետարանին մէջ Աստուծոյ թագաւորութեան մօտ ըլլալը գրուած է: Երկու հազար տարի անցաւ, մարդիկ տակաւին կը սպասեն: «Մօտ»-ը՝ ժամանակի իմաստով չէ ըսուած, այլ միջոցի՝ հեռաւորութեան համար ըսուած է: Ինչպէս մեր քիթը մեր երեսին այնքան մօտ է, որ գայն չենք տեսներ, նոյնպէս ալ Աստուած մեզի այնքան մօտ է, որ Ձինք չենք տեսներ: Միթէ մեր մարմիններուն Աստուծոյ տաճարներ ըլլալը չէ գրուած[՞]:

«Ո՞չ Գիտէի երէ Գաճար էի Լսոյ-Ժոյ,

Եւ Ըոգի Լսոյ-Ժոյ Բնակեալ է 'ի յեւ»

(Լ. Կորնթացիս Գ:16)

«Ձէք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի:»

Կաւէ ամանը պէտք չունի էջմիածին, Երուսաղէմ, Մէքքա կամ Հիմալայա երթալու՝ իր աստուածը գտնելու: Այդ ամանին աստուածը կաւն է, ուրկէ կու գան բոլոր կաւէ ամանները: Այն պատճառը, որուն մէջ կը գոյատեւեն բոլոր կաւէ ամանները, իրենց վախճանին կը մնայ նորէն կաւը:

Ստեղծագործութեան ճշմարտութիւնը՝ պատճառը եւ նախանիւթը, ուրկէ եկած է տիեզերքը, որուն մէջ

կը գոյատեւէ եւ երբ իր վախճանին հասնի, մնացողը պիտի ըլլայ նորէն այդ պատճառը: Այդ պատճառը կը կոչենք Աստուած:

Եթէ կաւէ ամանին հարցնենք «Ո՞վ ես դուն», ան կրնայ պատասխանել. «Յակոբին մեղրի ամանը»: Բայց մենք որու պատկանիլը եւ ինչ բանի ծառայած ըլլալը չէինք հարցուցած: Բայց դուն, դուն ես, դուն ո՞վ ես: Ամանը ինչ հասկնայ, թէ ինք կաւ է:

Եթէ մէկը մեզի հարցնէ. «դուն ո՞վ ես», ընդհանրապէս կը պատասխանենք նման ամանին. կ'ըսենք մեր անունը: Բայց հարցումը «անունդ ի՞նչ է» չէր: Այս անգամ կու տանք մեր ծնողաց անունները, ըսելով, թէ անոնց զաւակն ենք, կամ կ'ըսենք մեր հասցէն, մեր գործը ...: Վերջապէս ճարահատ ցոյց կու տանք մեր մարմինը: Յանկարծ, եթէ արկածի մը հետեւանք, կորսնցնենք մեր երկու սրունքները եւ նաեւ երկու թեւերը, ճիշդ է թէ կեանքը շատ կը դժուարանայ եւ որքան որ մարմնին ծանրութեան եւ ծաւալին կէսը կը պակսի, մենք տակաւին նոյնն ենք: «Ո՞վ եմ ես», «ո՞վ ես դուն»: Փիլիսոփայ մը ըսած է. «կը խորհիմ, անոր համար եմ», բայց ուրիշներ ալ ըսած են ճիշդ հակառակը. «եմ, անոր համար կը խորհիմ»: Հարց կու տամ թէ ո՞վ ականատես եւ գիտակից է ձեր խորհուրդներուն: Զանազան խորհուրդներ մեր միտքերուն մէջ միշտ կը ծագին եւ կ'անհետանան: Մնայուն չեն: Այդ պատճառով ալ ես իմ խորհուրդներս չեմ, բայց խորհուրդները իմս են: Այն միակ անփոփոխելին, որ միշտ նոյնն է ամենուն մէջ, որ ականատես եւ գիտակից է մեր բոլոր խորհուրդներուն, զգացումներուն եւ գործքերուն, մեր «գիտակցութիւնն» է (consciousness):

Նախաճաշի սեղանին վրայի Յակոբին մեղրի ամանը կրնայ շատ ուրախ ըլլալ, քանի որ ընտանիքի

բոլոր անդամները զայն կը բռնեն, կը շոյեն...: Մեր հին երկիրները կային նաեւ թուքի կամ խուխի ամաններ, որոնք կը դրուէին գետինը եւ ոչ սեղանի վրայ: Նոյն տան այդ խուխի ամանը կրնայ սոսկալի տխուր ըլլալ, որովհետեւ ոչ ոք իր քովը կը մօտենայ, նոյնիսկ մարդիկ կը ջանան հեռուէն անցնիլ: Խուխի ամանը կը նայի մեղրի ամանին եւ կը նախանձի: Եթէ գիտնայ թէ ինք կաւ է եւ մեղրի ամանն ալ կաւ է եւ երկուքն ալ իրենց ծառայութիւնը կը մատուցանեն համայնքին, այն ատեն կը փարատի բոլոր դժբախտութիւնները, նախանձը կը վերնայ: Կը ծագի իսկական սէր, խաղաղութիւն եւ երջանկութիւն:

Եթէ այս կեանքը՝ «գիտակցութիւնը» (consciousness) մեր մէջ չըլլար, արդեօք ինծի համար կարելի պիտի ըլլա՞ր այս գրութիւնը գրել, ձեզի համար ալ՝ կարդալ: Նոյն կեանքն է, որ կը գործէ բոլորին մէջ: Բոյսերուն մէջ, անասուններուն մէջ, իմ ու ձեր մէջ: Բայց կը յայտնուի տարբեր կերպարանքներով: Որեւէ երկու ձիւնի փաթիլ նոյնը չեն ըլլար: Անգլերէն ասացուածքը կ'ըսէ «variety is the spice of life»: Կան զանազան ելեկտրական լամբարներ (light bulbs), ոմանք պզտիկ՝ տկար լոյսով, ոմանք կը սփռեն զօրաւոր լոյս՝ մինչեւ հեռունները, ոմանք գունաւոր: Սակայն ելեկտրականութիւնը, որ կը հոսի ամենուն մէջէն, նոյնն է: Տարբերութիւնները կը պատկանին լամբարներուն եւ ոչ ելեկտրականութեան: Մենք, մեր խորքին մէջ կը գտնենք այն էութիւնը, որուն միջոցաւ կը կենդանան մեր Ֆիզիքական, զգացական եւ իմացական կազմածքները՝ մարմինները: Այդ էութիւնը՝ այդ «գիտակցութիւնը» կը կոչենք Աստուած: Տարբեր կրօնքներ տուած են տարբեր անուններ: Հնդիկները կը կոչեն Պրահմա, Զինացիները՝ Թաօ, Մահմէտականները՝ Ալլահ, Հիւսիսային Ամերիկայի բնիկները՝ Մանիթո:

Երբ անգլիախօս մարդ մը կ'այցեւելէր Գանատայի Փրանսախօս նահանգի գիւղերէն մին, ճաշարան մը կը մտնէ եւ գաւաթ մը ջուր կը խնդրէ. «*May I have a glass of water, please*»: Փրանսախօս մատուցողը ըստւածը կը հասկնայ եւ անոր կը հրամցնէ գաւաթ մը ջուր. «*Avec plaisir, voici de l'eau pour toi*»: Անգլիախօսը չի մերժեր հրամցուածը, առարկելով, թէ ինք «*water*» ուզած էր եւ ոչ թէ «*eau*»: Ինչ անուն ալ որ տրուի, ջուրը ջուր է եւ ծարաւը կը յագեցնէ:

Տարբեր ազգերու լեզուներուն մէջ, Աստուծոյ տրուած է տարբեր անուններ. *Dieu, Theos, Deus, God*: Ինչքան ալ տրուած անունները տարբեր ըլլան, Աստուած մէկ է:

Տակաւին չգիտնալով տիեզերքի պատճառին ինչ ըլլալը, վերեւ գայն կոչած էինք «*x*»: Մեր նախահայրերը լաւ հասկցած են այս տիեզերքին պատճառը: Ի՞նչ կ'ուզէիք որ կոչէին այն էութիւնը, որ այս բոլորը մեզի տուած է: Բոլորը ըսելու պէտք չկայ.
 աս մեզի տուած է: Մեզի ըսելու ալ պէտք չկայ.
 աս սուած է: Միացնենք բառերը.

Աստուած է:

Հայերէնի մէջ, պատճառին տրուած անունը շատ աւելի իմաստալից է եւ իր մէջ կը պարունակէ իր բացատրութիւնը: Եկեղեցւոյ հայրերը նաեւ հասկնալով Անոր իրողութիւնը եւ կեանք ըլլալը, գայն ներկայացուցած են «*է*» գիրով: Հայաստանեայց եկեղեցւոյ խորաններուն վրայ յաճախ կը տեսնենք «*է*» գիրը: Թուագիտութեան (*numerology*) մէջ «*7*» թիւը կը ներկայացնէ Աստուած: «*է*» գիրը այբուբենին 7-երորդ գիրն է: Արեւմուտքի մէջն ալ լատին գիրերուն 7-երորդը «*G*» տառն է, որ կը ներկայացնէ նաեւ Աստուած: Օրինակ ազատ որմնազիրներու՝ մասոններու նշանին մաս կը կազմէ այդ տառը:

Հայերէնի «է» գիրը շատ աւելի իմաստալից է քան «G» գիրը: «է» գիրը հական բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է: Աստուած չէր եւ պիտի չըլլայ, այլ է, քանի որ Ինք ժամանակի դրութենէ դուրս է, որով յաւիտենական է: Ճիշդ ասոր համար հետեւեալ համարներուն մէջ կը տեսնենք, թէ Աստուծոյ համար միշտ հական բային ներկայ ժամանակը գործածուած է:

«Է- ասէ Լոյսո-աթ ցՄովսէս Էս Էմ

Լոյսո-աթ որ Էն» (Ելէ Գ: 14)

«ԷԼ Աստուած ըսաւ Մովսէսին. «Ես եմ Որ Է՛ն»»

«Լօէ ցնոսայ Յիսո-ս. ամէն ամէն ասէմ

չեւ. յա-աջ Էան ցլինելն ԼբրաՀամմո- Էմ

Էս» (ՅովՀաննո- Ը:58)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես»»

Յաւիտենականութիւն չի նշանակեր անվերջ ժամանակ, այլ կը նշանակէ ժամանակի դրութենէն դուրս ըլլալ: Աստուած ժամանակի ենթակայ չէ, այլ ժամանակը Անոր մէջ է եւ Անոր ենթակայ:

Ուրիշ կրօնքներու մէջ Աստուած ներկայացուած է տարբեր գիրերով: Հինտու կրօնքին մէջ Աստուած ներկայացուած է հնդկական «օմ» բարդգիրով: Քրիստոնեաներուն մէջ շատեր հակառակ են այս «օմ»ին, առարկելով, թէ հեթանոսական է: Իսկութեան մէջ ատիկա «օմ» չէ, այլ «առմ» է: «ա»-ը եւ «ռ»-ն միացուցած են եւ եղած է «օ»: Հայերէնի մէջ ալ պարագան նոյնն է. Գրաբարի մէջ «աւր» կամ «աւուր» կը նշանակէ «օր»: Աշխարհաբարի մէջ «ա»-ը եւ «ռ»-ն միացած, եղած է «օ»:

Տարբեր սովորութիւններ եւ կրօնքներ գիտնալ լաւ է, ոչ թէ կրօնափոխ ըլլալու, այլ՝ մեր կրօնքը ալ աւելի լաւ հասկնալու համար, աւելի կարեւորը,

հասկնալու համար, թէ Աստուած իսկապէս տիեզերական է: Բոլոր կրօնքները, իրենց մակերեսային եւ մշակութային տարբերութիւնները մէկդի, խորքին մէջ նոյնն են եւ նոյն պատգամը կու տան: Տարբեր սովորութիւնները եւ կրօնքները գիտնալ կ'օգնէ նաեւ աւելի զիւրաւ գտնելու ճշմարտութեան ճամբան:

Ի՞նչ է իմաստը «առում»ին:

«Ի սկսբանէ էր Բանն էւ Բանն էր առ»

Լսորո-առ, էւ Լսորո-առ էր Բանն:»

(Յովհաննոս Ը:1)

«Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր:»

«Բան» բառը որ յունարէն «logos» բառին թարգմանութիւնն է, ունի զանազան իմաստներ: Առօրեայ խօսակցութեան մէջ «բան» կը նշանակէ անորոշ առարկայ մը, գաղափար մը, հոլթիւն մը, որուն անգլերէն թարգմանութիւնն է (thing): Անորոշ ըլլալը յատկանշական է, որովհետեւ մարդուս միտքը Աստուծոյ հոլթիւնը լրիւ հասկնալու կարող չէ: «Բան»-ին երկրորդ իմաստն է բանականութիւն՝ այսինքն «logic»: Ստեղծագործութեան բարեշրջման ամէն մէկ քայլը կը հետեւի տրամաբանական յառաջացումի մը (logical progression): Իսկ «Բան»-ին երրորդ իմաստն ալ է խօսք: Աւետարանի անգլերէն թարգմանութեան մէջ «Բան»-ին համար, իր «խօսք» իմաստին պատճառով, գործածուած է (word) բառը: Խօսքը՝ ձայն կը ներկայացնէ եւ ձայնը՝ թրթռացում: Հարկաւ այս մեր հանած ձայնը չէ, որ ականջով կը լսենք, այլ Աստուծոյ ձայնն է: Այսօր «ամբողջական բնագիտութիւնը» (Quantum physics) փաստած է, թէ ամէն ինչ՝ ըլլայ զօրութիւն (energy), ըլլայ նիւթ, կազմուած են ալիքներէ, որոնք թրթռացում են: «Առում»-ը կը ներկայացնէ ուրեմն «Բան»-ը՝ այդ

Աստուածային ձայնը՝ խօսքը, թրթռացումը: Ձայն հանելու գործարանը կը սկսի ձայնական լարերէն (vocal chords) եւ կը պարունակէ բերանն ու շրթունքները: «Ա» ձայնը կը կազմուի կոկորդին ամենէն վարի մասէն՝ ձայնական լարերէն, որ ձայնի գործարանին սկիզբն է: «Ու» ձայնը կը կազմուի քիմքով, որ ձայնի գործարանին մէջտեղն է եւ «մ» ձայնը շրթունքներով՝ ձայնի գործարանին վերջին մասով: Ուրեմն «առում» կամ «օմ» կը ներկայացնէ Աստուածաշունչին մէջ գրուած «ես եմ ալֆան եւ օմէղան»՝ «առաջինը եւ վերջինը», քանի որ կը ներկայացնէ ձայնին՝ «Բան»ին սկիզբը, մէջտեղը՝ այսինքն գոյատեւումը եւ վերջը: Այս կը նշանակէ ամէն բանի Աստուծմէ բղխիլը եւ Աստուծոյ մէջ վերջանալը:

Մեր ազօթքները միշտ կը վերջացնենք «ամէն» բառով: Ան կազմուած է «առում»-ին առաջին եւ վերջին գիրերովը՝ «ա» եւ «մ», որուն այբուբենական շարքի մէջ «մէն» կ'ըսուի:

Առօրեայ խօսակցութեան մէջ յաճախ կը գործածենք «ամէն բան» (everything) ասացուածք, որու մէջ թէ՛ «ամէն» եւ թէ՛ «բան» բառերը կը ներկայացնեն Աստուած: Աստուած ամէն տեղ է: Բոլոր տիեզերքի բովանդակութիւնը իր մարմինը կը ներկայացնէ, որով ամէն բան է:

Շատ յատկանշական է նաեւ նայիլ եւ տեսնել հետեւեալները: Հնդկական «օմ» նշանը՝ գիրը (պատկեր թիւ-1), շատ կը նմանի Կ. Պոլսոյ մէջ հրատարակուած Կոմիտասեան պատարագի ձայնագրեալ գիրքի կողքի վրայի «է» գիրին (պատկեր թիւ-2): Պատկեր թիւ 3-ը արաբերէն տառերով գրուած «Ալլահ» բառն է: Եթէ մեր երեւակայութիւնը քիչ մը գործածենք եւ զայն 90 աստիճան դարձնենք (պատկեր թիւ-4), առաջին երկուքին հետ որոշ նմանութիւններ կը տեսնենք:


Արդեօք այս նմանութիւնները կան, որովհետեւ Աստուած մէկ է:



Թիւ-1



Թիւ-2



Թիւ-3



Թիւ-4

Հին Հայաստանի մէջ երկու ընկերներ կը յաճախեն վանքի մը ճեմարանը: Երբ շրջանաւարտ կ'ըլլան, կը ձեռնադրուին կուսակրօն կղերական: Մին կը մեկուսանայ եւ իբր ճգնաւոր լերան մը գագաթը իր օրերը աղօթքով կ'անցնէ: Միւսը վանքը կը մնայ: Տարիները կ'անցնին եւ վանքը մնացողը վանահայր կը նշանակուի: Ան երբեմն-երբեմն որոշ թիւով աշակերտներ իր ճգնաւոր ընկերոջ քով կը ղրկէ, որպէսզի տեսնեն եւ սորվին նաեւ ճգնաւորի կեանքը: Ժգնաւորը բաւական ծերացած, իր աշակերտներուն խնդրանքներուն եւ պնդումներուն հետեւանք, վերջապէս օր մը, առաջին անգամ ըլլալով, կ'որոշէ լեռնէն վար իջնել եւ վանք այցելել:

Երկու ընկերներ զիրար ողջունելէ յետոյ կ'երթան վանահօր սենեակը եւ իրարու կը պատմեն իրենց յուշերը: Օդին տաքութիւնը նեղութիւն կը պատճառէ: Վանահայրը պատին վրայ կոճակ մը կը դարձնէ եւ ձեղունէն կախուած հովահարը կը սկսի դառնալ: Ժգնաւորը զարմացած, անմիջապէս կը հարցնէ. «Այս ի՞նչ է»: Վանահայրը

կը բացատրէ, թէ վերջին տարիներուն նոր գիւտեր եղած են եւ կ'ըսէ այդ «ելեկտրակահանութիւն» է: Ճգնաւորը կը հաստատէ, թէ աշակերտներէն իմացած էր ելեկտրակահանութեան մասին, բայց չէր կրցած լրիւ ըմբռնել անոր իմաստը եւ հիմա հասկցած ըլլալը կը յայտնէ: Քիչ յետոյ, երեկոյեան, սենեակը կը մ'իջնէ: Վանահայրը պատին վրայ ուրիշ կոծակ մը կը դարձնէ եւ սենեակը կը լուսաւորուի: Ճգնաւորը զարմացած դարձեալ կը հարցնէ «աս ի՞նչ է»: Վանահօր պատասխանը կ'ըլլայ «ելեկտրակահանութիւն»: Ճգնաւորին միտքը կը սկսի պղտորիլ: Ընդունած էր հովահարին ելեկտրակահանութիւն ըլլալը, բայց հիմա որ լոյսին ալ ելեկտրակահանութիւն կ'ըսուի, չի համոզուիր, սակայն ձայն չի հաներ: Քիչ յետոյ վանահայրը «Լուրերը մտիկ ընելու ժամը եկաւ» կ'ըսէ: Տուփի մը վրայ գտնուող կոծակ մը կը դարձնէ եւ տուփը կը սկսի խօսիլ: Երբ ճգնաւորը կը հարցնէ, թէ այդ ինչ է, պատասխանը դարձեալ կ'ըլլայ «ելեկտրակահանութիւն»: Ճգնաւորը այլեւս չի դիմանար, կ'առարկէ. «Հովահարին ելեկտրակահանութիւն ըսիր՝ ընդունեցի, լոյսին ելեկտրակահանութիւն ըսիր, չընդունեցի, բայց առ ի քաղաքավարութիւն ձայն չհանեցի եւ ընդունած ձեւացուցի, հիմա ալ այս խօսող տուփին ելեկտրակահանութիւն կ'ըսես, չեմ կրնար ընդունիլ: Վստահ եմ, որ զիս կը խաբես եւ կը ծաղրես»: Վանահայրը կը բացատրէ, թէ անոնք չեն ելեկտրակահանութիւնը, այլ անոնք ելեկտրակահանութեան

ըրածին արդիւնքներն են, իսկ ելեկտրականութիւնը թելերուն մէջ է ու կ'աւելցնէ. «Սա պատին վրայի երկու ծակերը կը տեսնե՞ս, ելեկտրականութիւնը հոն է»: Ճգնաւորը անմիջապէս կ'երթայ եւ կը նայի այդ ծակերուն մէջ եւ կ'ըսէ, թէ բան մը չի տեսներ: Վանահայրը ճարահատ, վերջապէս կ'ըսէ, թէ ելեկտրականութիւնը հասկնալու համար մատը պէտք է այդ ծակին մէջ խոթէ: Հետաքրքիր ճգնաւորը, գիտնալու համար, թէ ինչ է ելեկտրականութիւնը, մատը ծակին մէջ կը խոթէ: Անմիջապէս հոսանքը կը զարնէ եւ ճգնաւորը «առւ» պոռալով կ'երթայ դիմացի պատին կը փակչի: Այս անգամ վանահայրը հետաքրքրուած, կ'ուզէ ճգնաւորին զգացածը գիտնալ: Ճգնաւորին պատասխանը կ'ըլլայ. «Թէ՛ վրայես եւ թէ՛ մէջէս բան մը անցաւ»: Վանահայրը կ'ըսէ. «Թէեւ աչքս միշտ վրադ էր, սակայն վրայէդ կամ մէջէդ անցնող բան մը չտեսայ»: Ճգնաւորը, որքան որ կը ջանայ իր զգացածը վանահօր բացատրել եւ հասկցնել, չի կարողանար: Ճարահատ կ'ըսէ. «Անկարող եմ բացատրելու, եթէ դուն ալ իսկապէս կ'ուզես հասկնալ եւ գիտնալ թէ ինչ է ելեկտրականութիւնը, դուն ալ մատդ այդ ծակին մէջ խոթէ»: Վանահայրն ալ իր հետաքրքրութիւնը գոհացնելու համար, երբ մատը ծակը կը խոթէ, հոսանքը կը զարնէ եւ «ռւա» պոռալով, ինքն ալ, կ'երթայ դիմացի պատին կը փակչի:

Քիչ յետոյ պարտէզէն մեծ աղմուկ մը կ'իմացուի: Երկուքն ալ պատուհան կը

մօտենան եւ կը տեսնեն որ ճգնաւորին աշակերտները, որոնք անոր հետ վանք եկած էին, կը կռուին վանքի աշակերտներուն հետ: Անմիջապէս կը միջամտեն եւ կռիւը կը դադրի: Կռուին դրդապատճառը կը հարցնեն: Ըստ տղոցմէ մէկուն, երբ անոնք սենեակին մէջ կը խօսէին, աշակերտները զիրենք պատուհանէն կը դիտէին ու մտիկ կ'ընէին: Երբ «առւ» եւ «ուա» բացականչութիւնները իմացուեցան, երկու խումբերու մէջ հարց ծագած էր, թէ ելեկտրականութեան փորձառութիւնը ունենալու համար պէտք էր պողալ «առւ», թէ ոչ՝ «ուա»:

Ձանազան անձեր նոյն փորձառութիւնները կ'արտայայտեն տարբեր ձեւերով, այսպէսով ալ կը գոյանան տարբեր կրօնքներ: Երկու կղերականներն ալ նոյն փորձառութիւնը ունեցան. ելեկտրականութիւնը երկուքին համար ալ նոյնն էր:

Նմանապէս Աստուած մէկ է, բայց կրօնքները՝ բազմաթիւ: Ո՞րը ճիշդ է «առւ»-ն թէ «ուա»-ն, թէ ոչ երկուքն ալ: Մարդիկ վարժուած են միշտ մակերեսայինը տեսնել: Երբ զանազան լամբարներու շարքի մը նայինք, առ հասարակ կը տեսնենք իրենց տարբերութիւնները եւ ընդհանրապէս չենք տեսներ այն նոյն ելեկտրականութիւնը, որ կը հոսի բոլորին մէջէն: Մեզի կը մնայ փորձառութիւնը ունենալ այն ելեկտրականութեան, որ կը հոսի բոլոր լամբարներուն մէջէն եւ կը լուսաւորէ զանոնք: Ուստի, մենք ալ պատին վրայի այդ ծակին մէջ պէտք է խոթենք մեր մատը:

Այր մը, իր կինը եւ իրենց հինգ տարու տղան, ամառուայ գիշեր մը պտոյտի կ'ելլեն: Տղան, ճամբան հանդարտ լծին վրայ լիալուսինի ցոլացումը տեսնելով, հօրը կը

հարցնէ. «Ի՞նչ է այս լոյսը»: Հայրը կ'ըսէ, թէ լուսինն է եւ կ'աւելցնէ. «Նման լիալուսնոտ օր մը, ես եւ մայրդ մեր սէրը իրարու յայտնեցինք եւ որոշեցինք ամուսնանալ: Տարիներ վերջ, երբ օր մը դուն ալ մեծնաս, շատ հաւանաբար, նման լիալուսնոտ օր մը, դուն ալ քու սէրդ կը յայտնես անձի մը, որուն հետ որոշած ես ամուսնանալ եւ կը կազմես քու ընտանիքդ»: Տղան ուրախ գուարթ կը շարունակէ ճամբան:

Քիչ յետոյ թեթեւ հով մը կ'ելլէ եւ հանդարտ լիճը քիչ մը կ'ալեկոծի: Լուսինի ցոլացումը տղուն կոտրած կ'երեւի ու տղան կը սկսի լալ: Երբ հայրը կը հարցնէ, թէ ինչու կու լայ, տղան կը պատասխանէ թէ հօրը ըսածները իրեն պիտի չպատահին, քանի որ լուսինը այլեւս կոտրած է: Հայրը կը հաւաստիացնէ, թէ կոտրուած երեւցածը լուսինին ցոլացումն է, եւ ոչ թէ լուսինը, որ երկինքի վրայ միակտոր կը կենայ:

Երբեմն մենք ալ մարդկութեան մէջ կը տեսնենք հովերու եւ փոթորիկներու հետեւանք կոտրուած երեւցող ցոլացումներ, որոնք կը կոչենք մարդկային տկարութիւններ: Հովերը կը ներկայացնեն մեր խորհուրդներուն փոթորիկները, իսկ ալիքները՝ մեր զգացումներուն փոթորիկները: Անոնց ազդեցութեան տակ կոտրած կը թուինք ըլլալ եւ ընկղմելու վտանգի մէջ, նման Գալիլեայի ծովուն վրայի աշակերտներուն նաւուն: Բայց վախ պէտք չէ ունենանք՝ լուսինը երկինքի մէջ լման է եւ կոտրուած չէ: Քրիստոս նաւուն մէջ է, անկարելի է որ այդ նաւը ընկղմի: Միայն պէտք է Ձինք արթնցնել, որպէսզի հանդարտեցնէ հովերը եւ

ծովերը՝ այսինքն խորհուրդներու եւ զգացումներու փոթորիկները:

Եթէ ներհայեցողութեամբ մեր մտքի ուղղութիւնը դարձնենք դէպի մեր ճշմարիտ հուշեան՝ Քրիստոսի, կ'ունենանք Աստուածային փորձառութիւնը եւ ճգնաւորին նման մենք ալ մեր մատը խոթած կ'ըլլանք այդ ծակին մէջ: Իսկ եթէ մեր մտքին ուղղութիւնը ըլլայ դէպի դուրս՝ աշխարհի շրջուցիչ սա, տա (դա) եւ նա-ի վրայ, մեր փորձառութիւնն ալ կ'ըլլայ սատանայական:

«Թեպէտ Է- Գնացից Էս 'ի մէջ սրտ-երաց մահու, ոչ երկեայց 'ի շարէ զի դո- Տէր ընդ իս Էս» (Սաղմոս ԻԲ:4)

«Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ, Չարէն պիտի չվախնամ, Վասն զի դուն ինծի հետ ես...» (Սաղմոս ԻԳ:4)





Աշխարհի թուր կրօնէները, որոշ
 Հարցերու մէջ որդան ալ իրարմէ
 Կարժերին, միասնաբար կը
 Հոշակեն, թէ այս աշխարի վրայ
 միակ Գոյաբեւոյր ճշմարտութիւնն
 է:
 (Աանտի)




Եւ թանիջի՛ն պճշմարտութիւն, եւ
 ճշմարտութիւն ազատեացէ պէտզ:
 (Յովհաննոս- Ը:32)

ՉԼոգի՛ն ճշմարտութեան. զոր աշխարհա
 ոչ կարէ ընդունիլ, զի ոչ տեսանէ
 զնա՛ եւ ոչ ճանաչէ զնա: Բայց դու՛ն
 ճանաչէ՛ն զնա, զի աս յէզ Բնակեացէ,
 եւ ընդ յէզ եղիցի:
 (Յովհաննոս- ԺԴ:17)



- Ե -

Ի՞ՆՉ Է
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ
(ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ)



Ի՞նչ է ճշմարտութիւնը

Ի՞նչ է ճշմարտութիւնը: Բնութիւնը իր մէջ ճշմարտութեան ճամբան մեզի ցոյց տուող օրինակներ ունի: Մեզի կը մնայ արթուն եւ աշալուրջ ըլլալ ու տեսնել այդ ճշմարտութիւնը եւ մեր իւրաքանչիւր փորձառութենէն սորվիլ ինչ որ պիտոյ է:

Թագաւոր մը կ'երագէ, թէ ինք մուրացկան մըն է: Այս երագը մի քանի օր կը կրկնուի: Թագաւորը չփոթած եւ մտահոգ հարց կու տայ. «Արդեօ՞ք ես թագաւոր մըն եմ եւ կ'երագեմ որ մուրացկան մըն եմ, կամ մուրացկան մըն եմ եւ կ'երագեմ թէ թագաւոր եմ»:

Ամէն մարդ իր կեանքի ընթացքին կ'ունենայ երագ տեսնելու փորձառութիւնը: Գիտուններ եւ բժիշկներ կ'ըսեն թէ ամէն անձ ամէն գիշեր իր քունին մէջ անպայման կը տեսնէ երագ, բայց դժբախտաբար կամ բարեբախտաբար քիչ անգամ կը յիշէ այդ երագները: Այս երագներէն ոմանք կ'ըլլան եռանդոտ՝ կարծես իրական: Երբ կ'երագենք մենք միշտ ինքզինքնիս այդ երագին մէջ կը գտնենք: Կը հաւատանք որ այդ երագին մէջ բոլոր պատահածները իրողութիւն են, ապա թէ ոչ, ինչո՞ւ երբեմն, նամանականդ եթէ երագը վախազդու է, արիւն քրտինք եւ սրտի բաբախումով կ'արթնանք մեր քունէն:

Երբ բժշկական համալսարան կը յաճախէի, առաջին տարուայ քննութիւններուն, դժբախտաբար, իւրաքանչիւր դասէ ձախողեցայ՝ սոսկալի վատ նիշերով: Վստահ էի, որ անկարողութեանս պատճառով, համալսարանէն պիտի վտարուէի: Բոլոր ապագաս խորտակուած, նուաստացած եւ ընկճուած, կը խորհէի այս վատ լուրը հօրս եւ մօրս ինչպէս հաղորդել: Իրենք իմ վրաս բացարձակ վստահութիւն ունէին: Ինծի

համար իրենց հանգիստը գոհած, Գանատա գաղթած էին: Ահա՛, իմ այս ձախողութեամբ անոնք յուսախաբ պիտի ըլլային: Այս կացութիւնը զիս ալ աւելի կը տանջէր, քան թէ բժշկական քննութիւններու ձախողութիւնս: Նոր կեանք եկաւ վրաս երբ քունէս արթնցայ եւ հասկցայ որ այդ բոլորն ալ երազ էին: Իրողութիւնը այն էր որ տակաւին քննութիւններն անգամ չէինք գրած: Այնքան այս երազին ազդեցութեան տակ մնացած էի, որ առանց չափազանցելու, մի քանի վայրկեաններ անցան մինչեւ որ ինքզինքս համոզեցի որ այդ երազ էր եւ ոչ իրողութիւն: Հոս աւելցնեմ որ տարեվերջին յաջող քննութիւններ գրեցի՝ բոլորն ալ բարձր նիշերով պսակուած:

Երբ երազի մէջ կը գտնուինք, այդ երազը կը թուի իրական ըլլալ: Երբ քունէն արթննանք, միայն ու միայն այն ատեն կը հասկնանք, թէ այդ երազ էր եւ ոչ իրողութիւն: Եթէ երազի մէջ մէկը մեզի ըսէ. «Մի նեղուիր, այս ձախողութիւնները իսկական չեն», անկարելի է որ հաւատանք: Հիմա որ այս արթուն կեանքը կ'ապրինք, իր բոլոր ուրախութիւններով եւ տխրութիւններով, եթէ մէկը գայ եւ ըսէ. «Մի տխրիր, հոգ մի ըներ, այս իսկական չէ», պիտի հաւատա՞նք իրեն:

Խորունկ քունի մէջ մեր «գիտակցութիւնը» (consciousness) կը թուի ներկայ չըլլալ, բայց երբ արթննանք, նոյն կեանքը, որ երէկ ապրած էինք, կը շարունակենք: Ասոր համար վստահ ենք, թէ «գիտակցութիւնը» ներկայ էր եւ կը գործէր խորունկ քունի մակարդակի վրայ: Երբ քունի մէջ կ'երազենք, «գիտակցութիւնը» կը գործէ երազի մակարդակի վրայ եւ երբ արթննանք՝ արթուն մակարդակի վրայ:

Արդեօք կարելի է՞ որ մեր արթուն կարծած մակարդակն ալ ըլլայ ուրիշ երկրորդական երազի

մակարդակ մը:

Քնանալու համար, կը ջանանք մենք զմեզ քունի պատրաստել՝ հանգիստ, խաղաղ եւ առանց աղմուկի միջավայրի մը մէջ: Բայց չենք կրնար ինքզինքնիս քնացնել: Շատեր կ'ուզեն քնանալ, բայց անքնութենէ կը տառապին: Քունը կու գայ ինքնին, առանց մեր գիտակցութեան: Երկվայրկեանային յափշտակութեամբ մը կը խլէ մեր «գիտակցութիւնը» այս արթնութեան մակարդակէն: Նոյնն ալ է երազի մակարդակէ խորունկ քունի անցնիլը եւ նաեւ վերադարձը՝ արթննալը: Բոլորն ալ «գիտակցութեան» (consciousness) մակարդակի փոփոխութիւններ են: Որքան ալ մեր երազը հաճելի չ'ըլլայ եւ ուզենք անոր վերջ տալ, մենք մեր ջանքերով անկարելի է որ արթննանք: Բայց երբ ժամանակը գայ, ակնթարթի մէջ ինքզինքնիս արթուն կը գտնենք:

Արդեօք եթէ այս ներկայ գիտակցութիւնը՝ այս կեանքը վերջանայ (այսինքն եթէ մեռնինք), այն ատեն մեր «գիտակցութիւնը» (consciousness) վերոյիշեալ երեք մակարդակներէն տարբեր մակարդակի մը անցած պիտի ըլլա՞յ: Ինչպէս երազի մէջ արթուն կեանքի մասին ոչինչ գիտենք, նոյնպէս արթուն կեանքի մէջ ալ, մահէն ետքի կեանքին մասին ոչինչ գիտենք:

Միթէ կարելի է՞ գիտնալ յաջորդ կեանքի մասին առանց մեռնելու:

Որքան լաւ կ'ըլլար եթէ կարենայինք ինքզինքնիս արթնցնել երազէ մը որ հաճելի չէ: Երբեմն կը պատահի որ արթննանք եւ գիտենք թէ արթուն ենք, բայց տակաւին երազը կը շարունակուի, նամանաւանդ եթէ երազը հաճելի երազ մըն է: Կ'երեւի «գիտակցութիւնը» (consciousness) երկու մակարդակի միջեւ կը խաղայ: Ուրեմն պէտք է կարելի ըլլայ նաեւ փորձառական գիտակցութիւն ունենալ յաջորդ

*կեանքի մասին, առանց մեռնելու: Վստահ եմ ճիշդ
ասոր համար գրուած են հետեւեալները:*

«Եւս պայտ Գիտաստիճ վասն ժամանակիս. պի
արդ՝ ժամ իսկ է մեզ 'ի շնոյ պարթնոսւ
պի աշտմ մերոյ է մեզ փրկոթիւնն՝ շան
յորժամ Հասարակաց շն:» (Հոռոմայեցիս ԺԳ:11)

«Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ
քունէն արթնանք. վասն զի Հիմա մօտ է մեզի
փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ Հաւատացիք:»

«Եյլ ամենայն ինչ յանդիմանեալ 'ի լոսոյ՝
յայտնի լինի. պի ամենայն ինչ որ յայտնի
է՝ լոյս է: Վասն որոյ էւս ասէ. արի որ
ննջեսոք. էւ կանգնեսոք 'ի մեռելոց, էւ
լոսասորեսոցէ ցէպէս 'Բրիտանոս:»

(Եփեսացիս Ե:13-14)

«Բայց երբ բան մը լոյսի մէջ ցուցաբերուած է՝ յայտնի
կ'ըլլայ վասն զի ամէն բան որ յայտնի կ'ըլլայ՝ լոյս է:
Անոր համար կ'ըսէ. «Արթնցիր, գուն որ կը քնանաս եւ
կանգնէ՝ մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի
տայ:»

*Այս կեանքը, որ այս աշխարհի վրայ կ'ապրինք,
ունի իր հաճելի, տխուր ու զժուարին ժամանակները,
նման մեր երազներուն: Ամենավատ վիճակն անգամ
կ'անհետանայ երբ արթնանք այս «քունէն»: Այս
կեանքն ալ երազի նման է, ճշմարտութիւն չէ, այլ՝
պատրանք (illusion) մը:*

*Վիլեամ Շէքսպիր ըսած է. «Աշխարհը բեմ մըն է
եւ բոլորս դերասաններ»: Թատերախաղի միջոցին
դերակատարներ կու գան, իրենց դերը կը կատարեն ու
կը մեկնին, բայց թատերախաղը կը շարունակուի:*

Ներկայացման մը մէջ, դժբախտ, կաղ եւ կոյր մուրացկանի մը դերը, դերասանը այնքան լաւ կը ներկայացնէ որ բոլոր ներկաները յուզուած կու լան: Այդ նոյն դերասանը, իր դերը աւարտելէ յետոյ, ուրախ ու զուարթ է, ո՛չ դժբախտ, ո՛չ կաղ, ո՛չ կոյր, ո՛չ ալ մուրացկան: Երբ այդքան լաւ դերակատար մըն է, վստահաբար նիւթական լաւ դիրք ունեցող անձ մըն է: Թատերախաղի նման այս կեանքն ալ կը ներկայացնէ խաբէական երեւոյթ մը: Մեզի կը մնայ ուրեմն արթննալ եւ գիտնալ թէ մենք ալ դերասաններ ենք թատերախաղի մը մէջ:

Ուրեմն, ի՞նչ է ճշմարտութիւնը:

Երբ երկու ժամուայ առինքնող շարժանկար մը կը դիտենք, երբեմն նիւթով այնքան կը տարուիք որ այդ ժամանակահատուածին ինչպէս անցնիլը չենք զգար: Նիւթն ալ, եթէ բաւական ազդեցիկ ըլլայ, նոյնիսկ որոշ չափով կրնայ մեր աշխարհահայեացքը փոխել: Ինչո՞ւ կ'ազդուինք: Շարժանկարին ներկայացուցած զանազան պատկերները արդեօք ճշմարտութիւն են: Բոլոր պատմութիւնը որքան ալ ազդեցիկ ըլլայ, ճշմարտութիւն չէ, այլ պաստառին վրայ, միայն ու միայն, զանազան գոյներով ներդաշնակօրէն ի յայտ եկած պատկերներու շարժախաղ մըն է: Միակ ճշմարտութիւնը լոյսն է, որ երբ ժապաւէնին մէջէն անցնի, զանազան գոյներ առնելով պաստառին վրայ կը ցոլանայ: Մենք կը տեսնենք այս լոյսի շարժախաղին կենդանացուցած անձերը, վայրերը, առարկաները որոնցմով յառաջ կու գայ պատմութիւն մը: Երբ շարժանկարին ժապաւէնը փոխենք, պատմութիւնը կը փոխուի, բայց լոյսը կը մնայ նորէն՝ անփոփոխելի: Այդ անփոփոխելին է միակ ճշմարտութիւնը: Աստուծոյ լոյսն ալ, տիեզերքի պաստառին վրայ կը ցոլանայ ի յայտ բերելով մեր այս աշխարհի կեանքը:

Ուրեմն, ի՞նչ է ճշմարտութիւնը:

Մեր հինգ զգայարանքներու միջոցաւ յարաբերութեան մէջ կը մտնենք մեր միջավայրին հետ եւ փորձառութիւնը կ'ունենանք բոլորին որ գոյութիւն ունին: Քանի որ կը տեսնենք, կը շօշափենք, կը հոտոտենք, կը համտեսենք եւ կը լսենք, ուրեմն այս աշխարհը եւ տիեզերքը (universe) պէտք է ըլլան ճշմարիտ իրողութիւն մը: «Ամբողջական բնագիտութիւնը» (Quantum physics) վերջին տարիներու գիւտերու հետեւանք, լրիւ փոխած է տիեզերքի եւ ստեղծագործութեան նկատմամբ մեր ունեցած հասկացողութիւնը:

Բոսական, անասնական եւ մարդկային աշխարհի բոլոր ապրող մարմինները կազմուած են բջիջներէ: Ամէն բջիջ նման հանքային աշխարհի, կազմուած է մասնիկներէ (molecules): Ամէն մէկ մասնիկ կազմուած է հիւլէներէ (atoms): Ամէն մէկ հիւլէ կազմուած է փրօթոններէ, նիւթրոններէ եւ էլեկտրոններէ: Իսկ առաջին երկուքը կազմուած են աւելի փոքր մասերէ, որոնք կը կոչուին «quarks»: Ամէն մէկ հիւլէի 99%-ը պարապութիւն է (space): Մէջտեղը կայ փոքր կորիզ (nucleus) մը, որուն շուրջ կը շրջին էլեկտրոններ, որոնց կորիզէն ունեցած հեռաւորութիւնը կորիզի տրամագրծին մօտաւորապէս հարիւր անգամն է: Եթէ հիւլէին միայն 1%-ը պինդ եւ հաստատուն մարմին է եւ մնացեալը պարապութիւն, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ երբ իրարու կը նայինք պինդ եւ հաստատուն մարմին մը կը տեսնենք: Ըստ բնագիտութեան (physics) իրողութիւնը այն է, որ մեր մարմիններուն միայն 1%-ը պինդ է եւ 99%-ը՝ պարապութիւն: Կը թուի, թէ մեր զգայարանքները մեզ կը խաբեն:

Ուրեմն, ի՞նչ է ճշմարտութիւնը:

Քայլ մը աւելի յառաջ երթանք: «Ամբողջական

բնագիտութիւնը» (Quantum physics) նոյնիսկ կ'ըսէ թէ հիւլէններուն կորիզի կազմիչները իրենք պինդ եւ հաստատուն մարմիններ չեն, այլ ալիքներու պատիկ խոնուած կոյտեր են: Ուրեմն, նոյնիսկ այդ 1%-ի կազմիչները, որոնք կը թուին պինդ եւ հաստատուն մարմին ըլլալ, անոնք անգամ միայն զօրութեան ալիքներ են: Ինչպէս երազներու բոլոր բովանդակութիւնը, ներառեալ մենք (քանի որ մենք ալ միշտ մեր երազներուն մէջն ենք) ճշմարտութիւն չէ, բայց երբ երազին մէջ կը գտնուինք, իսկական ըլլալ կը թուի: Ինչպէս շարժանկարի պատկերները իսկական չեն քանի որ միակ ճշմարտութիւնը լամբարէն ելլող լոյսն է, որուն միջոցաւ պատկերները պաստառին վրայ կը խաղան բայց մեր վրայ ազդեցութիւն կ'ունենան իբր թէ իսկական են, նմանապէս այս կեանքը որ կ'ապրինք եւ ամէն փորձառութիւնները որ կ'ունենանք հոս, որ կը թուի մեզի իսկական եւ ճշմարիտ ըլլալ, կրնայ միայն պատրանք (illusion) մը ըլլալ: Բնագիտութիւնը կարծէք կը փաստէ այս կէտը:

Ուրեմն, ի՞նչ է ճշմարտութիւնը:

Ճշմարտութիւնը այն զօրութիւնն է՝ այն լոյսը, որուն միջոցաւ այս պատրանքի պատկերը տիեզերքի վրայ կը խաղայ: Այս ճշմարտութիւնը կը կոչենք Աստուած: Աւետարանն ալ կը գրէ նոյնը.

«Լսարուստ լոյս է» (Լ. Թոմաս Թոմասնոս Ե:5):

Ուրեմն մենք ալ պէտք է ձգտինք այդ Լոյսին՝ նոյն ինքն Աստուծոյ: Լոյսի պաշտամունքը Աստուածապաշտութիւն է: Մտածեսի աւետարանին մէջ ալ կը կարդանք.

«Ի՞նչ է լոյս աշխարհի. ... է- ո՛չ լուսանէն ճրագ՝ է- դնէն ընդ Գրուանաւ, այլ ՚ի վերայ աշրանակի. է- լոյս րայ»

ամենեկոյնն՝ որ ՚ի Կանն իցեն: Այնպէս
 Լուսա-որեացի Լոյս Յեր առաջի մարդկան,
 որպէսպի Կեացեն Կերթա Յեր Բարիս, Ե-
 փառա-որեացեն Կհայր Յեր որ յերկինս է:»
 (Մարգէն Ե:14-16)

«Դո՛ւք էք աշխարհի Լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ
 դներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ որ Լոյս
 տայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող Լուսա-
 ւորուի ձեր Լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի
 գործերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է:»

Միթէ պաստառին վրայի շարժապատկերն ալ լոյս չէ՞:

«Ամբողջական բնագիտութիւնը» (Quantum physics)
 նաեւ փաստած է որ այն տեսանելի եւ «չօշափելի»
 տիեզերքի միլիառաւոր աստղախումբերը (galaxies),
 իրենց միլիառաւոր աստղերով եւ ամէն աստղ իր
 բազմաթիւ մոլորակներով կը կազմեն տիեզերքի
 միայն 5%-ը: Անդին կը մնայ 95%-ը, որուն 25%-ը
 կոչուած է «մութ մարմին» (dark matter), քանի որ
 անտեսանելի է, բայց որովհետեւ անոր քաշողական
 ուժի ազդեցութիւնը կարողացած են չափել, գիտեն թէ
 գոյութիւն ունի: Իսկ մնացեալ 70%-ը կը պարունակէ
 միայն զօրութիւն (energy) եւ չեն գիտեր թէ ինչ է այս
 զօրութեան բնութիւնը: Ճիշդ ատոր համար ալ զայն
 կոչած են «մութ զօրութիւն» (dark energy): Կայ նաեւ
 «սեւ ծակ» (black hole) կոչուած դրութիւն մը, որ նաեւ
 անտեսանելի է, որովհետեւ իր քաշողական ուժը
 այնքան զօրաւոր է, որ նոյնիսկ Լոյսը չի կրնար անոր
 քաշողական ուժէն ձերբազատուիլ եւ ճառագայթել:
 «Սեւ ծակ»-ը, որ կրնայ ունենալ անհուն խտութիւն
 (infinitely dense), բայց նոյն ատեն անհունօրէն պզտիկ
 (infinitesimal) այսինքն անսահմանական: Մեծ պայթու-
 մով մը կը պայթի (big bang) եւ զօրութեան ալիքները

կը շողան ամենուրեք: Կը կազմուին հիւլէններ, ուրկէ ի յայտ կու գայ «չօշափելի» եւ տեսանելի տիեզերքը, որուն կը հետեւի հանքային, բուսական, անասնական եւ մարդկային մարմիններու ստեղծագործութիւնը:

«Ամբողջական բնագիտութիւնը» (Quantum physics) նաեւ կ'ըսէ թէ՛ ժամանակը (time) եւ միջոցը (space) յարաբերական (relative) են: Միայն ներկան՝ «հիմա»-ն եւ «հոս»-ը գոյութիւն ունին: Որոշ եզրակացութիւններ կան, թէ անցեալին ինչ որ եղած է, որ պատմութեան անցած է, ներկայիս ինչ որ կը պատահի եւ ապագային ինչ որ պիտի ըլլայ, բոլորն ալ հիմա նոյն ատեն կ'ըլլան:

«Որ ինչ եղեւն այն ահա կայ, եւ որ ինչ լինելոցն էր՝ ահա եղեւ. եւ Աստուծոյ»

Խնդրեացէ պահապանեալն:» (ժողովոյ Գ:15)

«Ինչ որ եղած է հիմա ալ կայ Ու ինչ որ պիտի ըլլայ՝ արդէն եղած է: Աստուած անցածը կը փնտռէ:»

Նոյն իսկ կը գուշակեն, թէ կան մէկէ աւելի տիեզերքներ (multiverse), որ միասնաբար կը գոյատեւեն նոյն ատեն եւ նոյն տեղը: Մեր գիտցած բնագիտութեան օրէնքները (laws of physics) ի զօրու են մեր տիեզերքի մէջ ամենուրեք: Կ'ենթադրուի թէ ուրիշ տիեզերքներու բնագիտութեան օրէնքները կրնան ամբողջովին տարբեր ըլլալ բաղադրամասեր մեր տիեզերքին: Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ բազմաթիւ տիեզերքներ միաժամանակ եւ միատեղ՝ միասնաբար գոյատեւեն, սակայն իրարմէ ամբողջովին անջատ: Ամէն բանի օրինակը բնութեան մէջ մեզի տրուած է: Զայնասփիւռի միջոցաւ կարելի է զանազան կայաններ մտիկ ընել: Երբ ձայնասփիւռը կեդրոնացնենք մեր փափաքած կայանի ալիքին (frequency) վրայ, կրնանք միայն այդ կայանը ունկնդրել: Անկարելի է նոյն

ձայնասփիւռէն, նոյն ատեն, երկու տարբեր կայաններ ունկընդրել: Նմանապէս շատ հաւանական է, որ ամէն մէկ տիեզերք կը գոյատեւէ որոշ մէկ ալիքային յաճախականութեան (frequency) մը վրայ: Ինչպէս անկարելի է նոյն ձայնասփիւռին վրայէն նոյն ատեն երկու զատ կայաններ մտիկ ընել, նմանապէս ալ անկարելի է մէկէ աւելի տիեզերքի գոյութեան փորձառութիւնը ունենալ: Հարկաւ միշտ կարելի է կայանը փոխել, բայց միայն մէկ կայան եւ մէկ տիեզերք նոյն ատենին: Արդեօք այդ է՞ր մեր ուսուցիչներուն, ծնողներուն եւ կղերականներուն մեզի սորվեցուցածը՝ մահէն ետք երկինք կամ դժոխք երթալու հարցը: Արդեօք կարելի է՞, որ մեր ապրած կեանքով, փոխենք մեզ կազմող զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը եւ անոր հետեւանք փոխենք տիեզերք՝ ի պատշաճի (մեռնիլ ներկայ տիեզերքին): Բայց ի՞նչ է Աւետարանին պատգամը, հասնիլ աւելի հաճելի տիեզերքի մը, կամ հասնիլ այն ճշմարտութեան, որ ակն է բոլոր տիեզերքներուն:

«...Ես եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւնը...»

Եիսն է կեանք...» (Յովհաննոս ԺԴ:6)

«...Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը...»

ըսաւ Յիսուս: Ուրեմն մեր պարտականութիւնն է մեր այս կեանքին մէջ յայտնաբերել այդ ճշմարտութիւնը՝ Քրիստոսը, եւ չբաւականանալ պատրանքային (illusory) գոյութեամբ: Ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը կը կազմեն երրորդութիւն մը:





Երջանկութիւնը՝

խորհածիդ,

խօսածիդ

է-

ըրածիդ

Համերաշխութեան մէջ կը կայանայ:

(Աանդի)

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Երկրաչափութեան մէջ ամենակայուն ձեւը եռանկիւնն է:

Բնագիտութեան մէջ կը տեսնենք, որ «սեւ ծակ»ը ակն է զօրութեան: Անկէ կը բխի զօրութիւնը, որուն միջոցով ալ կը կազմուին եւ կը գոյանան հիւլէները եւ հիւլէներու հետեւանք բոլոր տիեզերքի ստեղծագործութիւնը ի յայտ կու գայ:

Երբ պայծառ օր մը ծովեզերք կեցած դիտենք, ի՞նչ կը տեսնենք: Պատասխանը շատ հաւանական է, որ ըլլայ «ծովը»: Եթէ հարց տանք «ուրիշ ի՞նչ կը տեսնենք», կրնանք ըսել «ջուր» եւ նոյնպէս ճիշդ է: Եթէ հարց տանք երրորդ անգամ մը եւս «ուրիշ ի՞նչ կը տեսնենք», նոյն ճշգրտութեամբ կրնանք պատասխանել «ալիքներ»: Կը տեսնենք երեք տարբեր բան, բայց անկարելի է երեքէն որեւէ մէկը տեսնել միւսերէն անջատ: Ծովը, ջուրը եւ ալիքները միասին կը կազմեն երրորդութիւն մը: Ծովը ամբողջութիւնն է, ջուրը՝ գործիչ միջոցը, ալիքները՝ անոր խաղը եւ արտայայտութիւնները: Եթէ ուշադրութեամբ դիտենք, կը տեսնենք, որ ալիքներ կու գան ու կ'երթան: Կան տարբեր մեծութեամբ ալիքներ: Երբեմն մեծ ալիք մը կու գայ եւ կը կլլէ պատիկ ալիքները: Պատիկ ալիք մը կը նայի իր բոլորտիքը, կը տեսնէ աւելի արագ յառաջացող եւ աւելի մեծ ալիք մը: Կը նախանձի եւ կու լայ իր դժբախտութեան վրայ: Կը տեսնէ իր դրացի ալիքը որ կ'անհետանայ: Ինք ալ մեռնելու եւ անհետանալու վախով կը շարունակէ գոյատեւել: Փոխանակ բոլորտիքը եւ միւս ալիքները դիտելու, գոնէ քիչ մը ներհայեցողութեան գիտակցութիւնը ունենայ եւ դէպի ներս՝ իր մէջ նայի, պիտի տեսնէ, որ ինք ջուր է եւ այն մեծ եւ արագ յառաջացող ալիքն ալ ջուր է: Արդէն այդ վայրկեանէն իսկ իր բոլոր

դժբախտութիւնները կը փարատին: Պիտի գիտակցի, թէ եթէ նոյնիսկ դադրի որպէս ալիք գոյատեւելէ, դարձեալ պիտի մնայ որպէս ջուր, որ անմահ է:

Այն սկը, ուրկէ կը բխի բոլոր ստեղծագործութիւնը, որուն մէջ կը գոյատեւէ եւ ուր կը վերադառնայ ստեղծագործութիւնը իր վախճանին, այն սկը կը կոչենք Հայր Աստուած, որ է Ճմարտութիւնը: Այն զօրութիւնը, որ կը բխի Հօրմէն, որուն միջոցաւ բոլոր ստեղծագործութիւնը ի յայտ կու գայ եւ կը գոյատեւէ, զայն կը կոչենք Սուրբ Հոգի, որ է Ճանապարհը: Եւ այն բոլոր արտայայտութիւնները՝ ստեղծագործութեան խաղը, որ կը կազմէ տիեզերքը, զայն կը կոչենք Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, որ է կեանքը: Ճիշդ ասոր համար ամէն մէկ անձի ճշմարիտ էութիւնը՝ կեանքը Քրիստոսն է: Այս պատճառաւ սաղմոսերգուն կ'ըսէ.

«Եւեղի եւ Գնացից եւ՝ ՚ի մէջ սրտ-երայ
մահոս, ոչ երկեայց ՚ի շարե զի դոս Տէր

ընդ իս էս...» (Սաղմոս ԻԲ:4)

«Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ, Չարէն պիտի չվախնամ, Վասն զի դուն ինձի հետ ես...» (Սաղմոս ԻԳ:4)

Մենք որ ծովու ալիք չենք, կրնանք ներհայեցողութեան գիտակցութիւն ունենալ: Անոր միջոցաւ կրնանք ունենալ նաեւ փորձառական գիտութիւնը մեր ճշմարիտ էութեան, որ է անմահ՝ նոյն ինքն Քրիստոս: Այն ատեն երբ Յիսուս ըսէ «խաչդ առ եւ ետեւէս եկուր», մենք ալ իրեն նման յօժարաբար կ'երթանք խաչուելու՝ խաչելու մեր «Ես»-ը: Եթէ գիտնանք, փորձառութեամբ եւ ոչ իմացականօրէն, թէ մեր իսկական էութիւնը մեր «Ես»-ը չէ, այլ Քրիստոս ինքն է, դիւրաւ կրնանք ըսել. «Մահ ո՞ւր է քու

խայթոցը»։ Երբ կարենանք խաչել մեր «Նս»-ը, այն ատեն ի յայտ կու գայ Քրիստոս, Իր Լոյսը կը ճառագայթէ ուր որ ըլլանք եւ ուրախութեամբ կրնանք տալ այն նոյն աւետիսը որ երկու հազար տարի առաջ հրեշտակները տուին։

«Քրիստոս յարեալ ՚ի մեռելոց» :





«Ար կարժէի թէ
Եսպու-աժ ճշմարտութիւն է.
Բայց հասկցայ թէ
Ճշմարտութիւնը Եսպու-աժային է:»

(Աանտի)



«Երանի այն մարդուն՝ որ
 աջ յեռիք կրօնի կ'երկարէ,
 իսկ յախը Գեորգեան:»



- 2 -

**ԻՆՉ Է ՎԵՐՍՏԻՆ
(ԵՐԿՐՈՐԴ) ԳԱՆՈՒՍՏԸ
(ԵՐԱՆ ՔԱՐՈՋԸ - ԵՐԱՆԻՆԵՐԸ)**



Ի՞ՆՉ Է ՎԵՐՍՍԻՆ (ԵՐԿՐՈՐԴ) ԳՎՈՒՄՍԸ (ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ - ԵՐԱՆԻՆԵՐԸ)

Ի՞նչ է վերստին գալուստը:

Ըստ ընկալեալ սովորութեան Յիսուսի ծնունդը կը ներկայացնէ Քրիստոսի առաջին գալուստը: Քրիստոս, Յիսուսի միջոցաւ, աշխարհի վրայ յայտնուեցաւ: Իսկ երկրորդ գալուստը՝ պիտի ըլլայ նոյն ինքն Քրիստոսի գալուստը, Իր փառքովը՝ իբր թագաւոր եւ իշխան:

Յիսուս, երկու հազար տարի առաջ, իր աշակերտներուն ըսաւ, թէ մօտ էր Աստուծոյ թագաւորութեան գալուստը:

Հետեւեալ համարները կը շեշտեն այս իրողութիւնը:

«Եւ ասել. «այաշխարհեցէ՛լ՝ պի մերջեալ է արժայոթիւն երկնից :» (Մարգեևոսի Գ:2)

«Ու կ'ըսէր. «Ապաշխարեցէք, վասն զի երկնքի թագաւորութիւնը մօտեցած է»:»

«... այաշխարհեցէ՛լ՝ պի մերջեալ է արժայոթիւն երկնից :» (Մարգեևոսի Դ:17)

«... Ապաշխարեցէք, վասն զի երկնքի թագաւորութիւնը մօտ է:»

«... Դէ մերջեալ է արժայոթիւն երկնից :» (Մարգեևոսի Ժ:7)

«... երկնքի թագաւորութիւնը մօտեցած է:»

«Դէ կայարեալ է ժամանակ. եւ Հասեալ է արժայոթիւն Աստուծոյ. այաշխարհեցէ՛լ՝ եւ Հասարացէ՛լ յաստարանն :» (Մարկոսի Ը:15)

«Ժամանակը լրացած է եւ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէք ու աւետարանիւն հաւատացէք:»

«... Գիտաստեղծ թէ մերջ է արշայո-թի-ն

Մարո-ժոյ:» (Ղուկասո- ԻԼ:31)

«... գիտցեք թէ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է:»

Աշակերտները կ'ակնկալէին, թէ այդ երկրորդ
գալուստը շուտով պիտի պատահի, բայց գալուստի
ժամանակին համար գրուած է որ մէկը չի գիտեր,
բացի միայն Հայր Աստուած: Կարդանք հետեւեալ
համարը:

«Բայց վասն առ-որն այնորիկ է- ժամո- ,

ոչ ո՛չ Գիտէ. ոչ Ըրեշտակէ երկնից, է- ոչ

որդի՛ թայց միայն Հայր:» (Մարթէոսի ԻԳ:36)

«Իսկ այն օրուան եւ այն ժամուն համար մարդ չի
գիտեր, ոչ ալ երկնքի հրեշտակները, հապա միայն իմ
Հայր:»

Մարգիկ ոչ միայն Յիսուսի օրէն՝ երկու հազար
տարիէ ի վեր կը սպասեն Աստուծոյ թագաւորութեան
գալուստին, այլ՝ 2600 տարիէ ի վեր, որովհետեւ
Յիսուսի ծնունդէն մօտաւորապէս 600 տարի առաջ
մարգարէներն ալ ըսած էին որ Աստուծոյ թագաւո-
րութեան գալուստը մօտ է:

Այս ուղղութեամբ հետեւեալները գրուած են.

«... զի մերջ է օր Տեառն, է- քեկո-մն

յՄարո-ժոյ Հասեալ է:» (Եսայի ԺԳ:6)

«... վասն զի Տէրոջը օրը մօտ է. Անիկա
Ամենակարողէն եկած աւերման պէս պիտի գայ:»

«... զի մերջ է օր Տեառն. ԻՔրէ- Թըշ-

ո-առ-ո-թի-ն 'ի Թշո-առ-ո-թե՛նէ Հասցէ:»

«...Քանզի Տէրոջը օրը մօտ է, Ու Ամենակարողէն եկած
աւերումին պէս պիտի գայ:» (Յովէլայ Լ:15)

«Երկերոսն յերեսաց Գեարն Լսարոսն. զի մերն է օր Տեառն. զի պարարաստաց Գեառն զպոռ իւր, Ըրաւորեաց զԿոշնականս իւր :» (Սոփոնիայ Ա:7)

«Տէր Եւովային առջեւ լուռ կեցի՛ր, Քանզի Տէրոջը օրը մօտ է, Քանզի Տէրը գոհ պատրաստեց, իր կոչ նականները հրաւիրեց:»

Աւետարանին մէջ գրուած է նաեւ թէ այն օրը պիտի չգայ:

«...է- մի ի-ի իրօշ ...» (Բ.Թեաաղոնիկէցիս Բ:3)

« ...վասն զի այն օրը պիտի չգայ»

Վերլուծենք վերի համարներուն բովանդակութիւնը: Թէ՛ հին եւ թէ՛ նոր կտակարանները կ'ըսեն, թէ մօտ է «գալուստը», բայց 2600 տարի անցած է այդ «մօտ է» ըսուած օրէն ի վեր: Կարելի է տակաւին 2600 տարի եւս անցնի: Շատ հաւանաբար «մօտ»-ը ըսուած է ոչ թէ ժամանակի համար, այլ միջոցի՝ հեռաւորութեան, կամ կախեալ է անձին պատրաստ ըլլալու կացութենէն:

Ահա թէ Յիսուս դպիրներէն միուն ինչ ըսաւ.

«Ե- Գեառն Յիսուս թէ իմաստութեամբ եր զպարարաստանին՝ աւել ցնա. շեա Ըրաւոր

յարձայութենէն Լսարոսն :» (Մարկոսի ՄԲ:34)

«Յիսուս տեսնելով որ անիկա խելացութիւնով պատասխան տուաւ, ըսաւ անոր. «Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես»:»

Դարձեալ ըստ սովորութեանց «երկրորդ գալուստը» պիտի ըլլայ Յիսուսի վերստին գալուստը, այս անգամ ոչ իբրեւ մանուկ, այլ՝ իբրեւ Աստուած եւ թագաւոր, ամպերու վրայէն իր հրեշտակներու զօրքերով: Այս գալուստը փայլակի լոյսին նման պիտի տեսնուի արեւելքէն մինչեւ արեւմուտք: Այս ըմբռնումը կը համապատասխանէ Մատթէոսի ավետա-

ըրանի ԻԴ:27-40 համարներուն նկարագրութեան:

Շատ ուշադիր պէտք է ըլլանք եւ բառացի իմաստով պէտք չէ առնենք այս եւ նման նկարագրութիւններ: Յիսուս իր աշակերտներուն ըսած է, թէ իրենց կը բացատրէ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց ժողովուրդին միայն առակներով կը խօսի, այսինքն պատմութիւններով՝ ծածուկ: Այս կը կարգանք հետեւեալ համարներուն մէջ.

«Եւ ասէ ցնոսայ. յէս Գոռեալ է Գրիգէլ
 Վխորհորոս արժայոթեան Լսգոռոյ:
 Բայց նոցա որ արգաւիճե՛ն՝ ամենայն
 ինչ ասակօ՛ղ լինի: Վի Գեասնելով Գեայեն՝
 Եւ մի Գեայեն, Եւ լսելով Լոռոյեն՝ Եւ մի
 իմաստցին.» (Մարկոսի Դ:11-12)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ձեզի տրուած է դիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց՝ որ դուրսէն են, ամէն բան առակներով կ'ըլլայ. Որպէս զի տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն, եւ լսելով լսեն՝ ու չիմանան, ...»»

«... յէս Գոռեալ է Գրիգէլ Վխորհորոս
 արժայոթեան Լսգոռոյ. Բայց այլոցն
 ասակօղ, Վի Գեայեն՝ Եւ մի Գեայեն, Եւ
 Լոռոյեն՝ Եւ մի իմաստցին:» (Ղուկասոս Ը:10)

«...Ձեզի տրուած է հասկնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն առակներով կը խօսիմ. Որպէս զի տեսնելով՝ չտեսնեն եւ լսելով՝ չիմանան:»

Գալով «Երկրորդ գալուստ»-ի Մատթէոսի վերոյիշեալ նկարագրութեան, Ղուկասի աւետարանին մէջ «Երկրորդ գալուստ»-ի՝ Աստուծոյ թագաւորութեան գալուստի մասին կ'ըսուի, թէ նման արտաքին

տեսնելիք բան չկայ: Սա յայտնի է հետեւեալ համարին մէջ:

«... ոչ Գայ արեւոյն-Բիւն Լարո-Զոյ
խորանօժ. Եւ շասիցեն Բէ աւա-ասիկ ասոր
է՛ կամ անոր, զի աւա արեւոյն-Բիւն
Լարո-Զոյ ՚ի ներդա ՚ի յեւ է:

(Ղուկասոս ԺԷ:20-21)

«... Աստուծոյ Թագաւորութիւնը դրսէն երեւցած
բաներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'Ահա
հոս է', կամ 'Ահա՛ հոն', վասն զի Աստուծոյ
Թագաւորութիւնը ձեր ներսի դին է:»

Ուրեմն ի՞նչ է «երկրորդ գալուստ»-ը՝ Աստուծոյ
Թագաւորութեան գալուստը:

Համայն մարդկութիւնը կ'ուզէ մահէն յետոյ
«երկինք» երթալ, հոն հանգիստ եւ հաճելի կեանք
ապրիլ: Յոր՝ Աստուծոյ հաւատարիմ ծառան, հարց կու
տայ, թէ արդեօք մահէն յետոյ գոյութիւն պիտի
ունենա՞նք: Հետեւեալ համարին մէջ կը կարդանք.

«Բայց այր Վախճանեալ Գնաց. անկեալ
մարդ Եւ ո՞չ Եւս իցէ:» (Յովք ԺԴ:10)

«Բայց մարդը կը մեռնի ու կ'երթայ: Մարդը իր հոգին
կ'աւանդէ ու ետքը ո՞ւր ըլլալը յայտնի չըլլար:»

Բայց յաջորդող համարին մէջ կարծէք յոյս մը ունի որ
նորէն պիտի գոյատեւէ՝ այսինքն քունէն պիտի
արթննայ:

«Եւ մարդ ննջեաց՝ Եւ ո՞չ յարիցէ: Մին-
չեւ երկինչ իցեն ոչ կարկայեացին, Եւ ոչ
պարթիցեն ՚ի շնոյ իւրեանց:» (Յովք ԺԴ:12)

«Այսպէս ալ մարդը գետինը կը պառկի ու չ'ելլեր.
մինչեւ որ ա՛լ երկինք չըլլայ՝ պիտի չ'ելլէ, ու իր
քունէն պիտի չարթննայ:»

14-րդ համարին մէջ մահէն յետոյ գոյատեւելու մասին դարձեալ հարց կու տայ:

**«Ե՞րբ մեռանիցի մարդ կէցցէ, վախճանեալ
պատարս կենաց իրոց: Ապասեցից մինչ
միտանգամ լինիցիմ.»** (Յովք ԺԳ:14)

«Եթէ մարդը մեռնի, պիտի կենդանանա՞յ արդեօք:
Պատերազմիս բոլոր օրերը պիտի սպասեմ, մինչեւ որ իմ
փոխուելու կարգս գայ:»

**Արդեօք այս վերջին համարը ցոյց կու տայ, թէ
ան փոխուելու համար նպատակ չունի՞ մահուան
սպասելու եւ կ'որոշէ այս կեանքի մէջ այդ օրուան
սպասել: Պէտք է անդրադառնանք որ ան «պատերազմիս
բոլոր օրերը» ասութեամբ այս կեանքը կը նկատէ
պատերազմ մը:**

**Մարդիկ կը հաւատան, թէ երկրորդ գալստեան
անոնք, որոնք իրենց մահէն առաջ «բարի» եղած են
յարութիւն պիտի առնեն եւ ապրող «բարի»ներուն հետ
երկինք պիտի բարձրանան եւ Աստուծոյ թագաւորու-
թեան մէջ յաւիտեան՝ այսինքն անվերջ ժամանակ
պիտի ապրին: Այս կը թուի ըլլալ մի քիչ մանկական
հասկացողութիւն: Վասնզի «յաւիտեանականութիւն»-ը
«անվերջ ժամանակ» չէ, այլ ժամանակի դրութենէն
դուրս ըլլալ է:**

**Ուրեմն ի՞նչ է «երկրորդ գալուստ»-ը՝ Աստուծոյ
թագաւորութեան գալուստը:**

**Մարդ արարած կը նմանի ճիաքաշ կառքի մը,
որուն կառապանը պէտք է ըլլայ իր ճշմարիտ
էութիւնը՝ Քրիստոս, որպէսզի ճիերուն սանձը ի ձեռին,
կառքը լաւ կառավարուի եւ լաւ ընթանայ: Բայց կը
թուի, թէ կառքին կառապանը Քրիստոս չէ: Ուրեմն ո՞վ
է մեր կառքին՝ կեանքին կառապանը: Կը կարդանք
հետեւեալները:**

«Հակառակորդն հոյարդացեալ 'ի վերայ
ամենայնի՝ որ անուանեալ իցէ Լսարո-աթ՝
կամ պաշտօն. մինչեւ նադել նմա՝ 'ի
դաճարին Լսարո-թոյ է- ցո-ցանել զանձն՝
ընէ ասարո-աթ իցէ :» (Բ. Թեաղոսիկեցիս Բ:4)

«Այն Հակառակորդը Հպարտացած ամենուն վրայ, որ
աստուած պիտի կոչուի կամ պաշտուի, մինչեւ իսկ
Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինք
ցուցնէ իբր աստուած:»

«Որոյ Բալոս-սոն ըսոյ աստեցո-թեամբ
ասարանայի է. ամենայն զօրո-թեամբ է-
նշանօղ է- արո-եարի-ղ արօղղ. » (Բ. Թե Բ:9)

«Անօրէնին զալը Սատանային ազդեցութիւնովն է,
բոլոր զօրութիւնով եւ նշաններով ու սուս
հրաշքներով:» (Բ. Թեաղոսիկեցիս Բ: 9)

Ուրեմն ո՞վ է այս սա տա նայի ազդեցութիւնով
եկող եւ մեր կեանքը կառավարողը: Նոյն ինքն մեր
«Ես»-ն (ego) է: Մենք պէտք է մեր կեանքի կառապանը
փոխենք, բայց աշխարհիկ սա տա (դա)՝ նայէ խաբուած,
անկարող ենք «Ես»-ին ազդեցութիւնը չհզօքացնել:
«Ես»-ը ստախօս է եւ խաբեբայ: Կը կարծենք, որ եթէ
«Ես»-ը չհզօքացնենք, մենք ալ կ'ոչնչանանք: Ճիշդ
ասոր համար բերանացի շատ բան կ'ըսենք, բայց
գործնականօրէն ոչինչ կ'ընենք: Շատ դիւրութեամբ
պատասխանատուութիւնը կը նետենք մեր վրայէն,
օրինակի համար կ'ըսենք. «Կը հաւատամ, անոր համար
փրկուած եմ», կամ «Յիսուս իմ մեղքերուս համար
մեռաւ որ ես փրկուիմ» եւ կը սպասենք մեր մահուան,
որպէսզի երկինք երթանք: Եթէ աս ճիշդ ըլլար, Յիսուս
չէր ըսեր «խաչդ առ եւ ետեւէս եկողը»:

Ուրեմն ի՞նչ է որ արգելք կը հանդիսանայ

*փրկութեան՝ «Երկրորդ գալուստ»-ին: Կարդանք
հետեւեալը.*

«...նոյնանակ զի ըստերն ճշմարտութեան ոչ

ընկալան՝ զի ասորէացին» (Բ. Թեոաղոնիկէցիս Բ:10)

*«... Քանի որ անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին
որ փրկուին.»*

*Որովհետեւ մենք ալ չենք կերտեր այդ ճշմարտու-
թեան սէրը, հետեւաբար փորձառութիւնը չենք
ունենար «Երկրորդ գալուստ»-ին: Աւետարանը նաեւ կը
զգուշացնէ, թէ չհաւատանք սուտերու, երբ ըսուի թէ
«Երկրորդ գալուստ»-ը հոս է, կամ հոն: Կարդանք.*

*«մի վաղձաղակի խոփել Յէզ 'ի մրաց' ե-
մի պարհոփել, մի Ըոգփոփ, եւ մի Բանիւ,
եւ մի Իղթոփէ՛ իբրեւ թէ 'ի մէնջ. որպէս
թէ եկեալ Ըասեալ իցե օր Տեառն:»*

(Բ. Թեոաղոնիկէցիս Բ:2)

*«Ձըլլայ որ շուտ մը խախտիք ձեր միտքէն ու չըլլայ
որ խոփիք՝ ո՛չ հոգիով ու ո՛չ խօսքով, ոչ ալ թուղթով
մը իբր թէ մեզմէ գրուած, որպէս թէ Քրիստոսին օրը
եկած հասած է:»*

*Հետեւեալ համարը շատ հետաքրքրական է եւ
առաջին հերթին կը թուի հակասական ըլլալ:*

*«Որ խնդրիցէ պաննն իւր ասորէցոցանել,
կորոսացէ պնա. եւ որ կորոսացէ,
ասորէցոսացէ պնա:» (Ղո-Կասոս ԺԷ:33)*

*«Ով որ իր կեանքը կ'ուզէ ապրեցնել՝ պիտի կորսնցնէ
զանիկայ եւ ով որ կը կորսնցնէ՝ պիտի ապրեցնէ
զանիկայ:»*

*Ի՞նչ պիտի կորսնցնենք եւ ի՞նչ է որ պիտի
ապրեցնենք: Պէտք է կորսնցնենք «Յս»-ին կառավարած
կեանքը, որպէսզի ապրեցնենք Քրիստոսի կառավարած
կեանքը: Երբ Քրիստոս ձիերուն սանձը իր ձեռք առնէ,*

արդէն «Ես»-ը ինքնին կ'ոչնչանայ: Կը տեսնենք, թէ այս իրողութիւն մըն է, քանզի գրուած է.

«Եւ ապա յայտնեացի անօրէնն: Վոր Տէր Յիսոսս ստորակեացէ Ըոգոսով Բերանոյ ի-րոյ, Եւ խափանեացէ յայտնո-թիւնն Գալաթեան ի-րոյ:» (Բ. ԹԵՍԱԿՈՆԻԿԷՅԻՆ Բ: 8)

«Ու ետքը պիտի յայտնուի այն անօրէնը, որ Տէրը իր բերնին շունչովը պիտի սպառէ ու իր գալուստին յայտնութեամբը պիտի կորսնցնէ:»

Վերոյիշեալ համարներուն մէջ Եսայի եւ Յովէլ մարգարէներն ալ Տէրոջը օրուան գալուստին համար նոյնպէս «աւերման պէս պիտի գայ» կ'ըսեն: Իսկ Սոփոնիա կ'ըսէ «Տէրը զոհ պատրաստեց»: Ինչո՞ւ Աստուծոյ թագաւորութիւնը՝ Քրիստոսի գալուստը իր հետը բերէ աւերում եւ պահանջէ զոհ: Ի՞նչ է որ պիտի աւերակուի եւ զոհուի: Առանց այդ զոհին եւ աւերին անկարելի է որ Քրիստոսի «երկրորդ գալուստը» իրականանայ: Այդ՝ «Ես»-ին քանդումն եւ զոհուիլն է:

Ի՞նչ պէտք է ընենք որպէզի մեր կեանքին սանձը Քրիստոս իր ձեռքերուն մէջ առնէ: Առաջին հերթին պէտք է այդ փափաքը ունենանք: Կարդանք հետեւեալ երկու համարները.

«Ինչորէցէ՛ ձախ վարժայո-թիւնն Աստուծոյ Եւ վարդապետութիւնն նորա, Եւ այդ ամենայն յաւելցի յեւ:» (Մարտիոսի .9: 33)

«Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի արուին:»

«Բայց խնդրէցէ՛ զարժայո-թիւնն Աստուծոյ Եւ այն յաւելցի յեւ:» (Ղուկասոս ԺԲ: 31)

«Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք եւ

այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին:»

Վստահօրէն, որոնց որ հարցնենք, ունին այս նոյն փափաքը, բայց արդեօք ոեւէ մէկը յաջողած է՞ այս փափաքին հասնիլ: Որքա՞ն բուռն կը փափաքինք:

Հնդկաստանի մէջ երիտասարդ մը կը փափաքի Աստուած տեսնել եւ կը սկսի պրպտել եւ վերջապէս կը սորվի, որ երկրին հիւսիսային կողմը լերան մը վրայ, քարայրի մը մէջ ճգնաւոր մը կայ, որու համար կ'ըսուի թէ Աստուած տեսած է եւ եթէ հաւանի կրնայ իրեն այդ գաղտնիքը յայտնել: Տղան մեծ եռանդով կը ճամբորդէ եւ կը հասնի այդ վայրը: Հոն կը գտնէ տարիքոտ, մորուսաւոր, խաղաղ մարդ մը, աչքերը գոց նստած՝ կը թուի քնանալ: Երբ ինք կը վարանէր ծերունին արթնցնել, մարդը աչքերը կը բանայ եւ կը հարցնէ, թէ ի՞նչ կ'ուզէ: Տղան իր փափաքը կը յայտնէ. «Աստուած տեսնել կ'ուզեմ»: Ծգնաւորը կը հասկնայ թէ տղան անկեղծ է: Կ'ընդունի իր քով պահել որպէս աշակերտ ու իրեն սորվեցնել, պայմանաւ որ տղան առանց առարկուլթեան իր բոլոր ըսածները լիովին կատարէ: Տղան կը համակերպի եւ յաջորդ ամիսներուն իրենց կրօնական գիրքերու մեկնաբանութեան դասաւանդութիւնները կ'ըլլան: Օրեր եւ ամիսներ կ'անցնին: Ծգնաւորը միշտ իրեն գործ կուտայ՝ կրակի համար չորցած ծառի ճիւղեր հաւաքել, կերակուր եփել, ամանները լուլալ, քարայրը ալլել, գետէն ջուր կրել...: Տղան երկար ժամանակ առանց գանգատի գործերը կը կատարէ:

Տարի մը կ'անցնի եւ օր մը տղան ճգնաւորին հարց կու տայ. «Դուն ալ կ'ուտես՝ ես ալ, դուն

գետ կ'երթաս եւ կը լուացուիս՝ ես ալ նոյնը կ'ընեմ, դուն խոկումի պահ կը պահես՝ ես ալ նոյնը կ'ընեմ, դուն կը քնանաս՝ ես ալ ուրեմն ո՞ւր է մեր տարբերութիւնը, ինչո՞ւ բոլոր գործերը ես կ'ընեմ եւ դուն բնաւ գործ չես ըներ, ինչո՞ւ դուն Աստուած տեսած ես եւ ես տակաւին չեմ կրնար տեսնել:» Ճգնաւորը շատ հանդարտ, կամաց կամաց գլուխը վեր կը բարձրացնէ ու կը պատասխանէ. «Քեզի ո՞վ ըսաւ որ նոյնը կ'ընենք: Երբ դուն կը լոգնաս՝ ուտելու մասին կը խորհիս, երբ կը ճաշես՝ խոկումի մասին կը խորհիս, իսկ խոկումի (meditation) պահուն ալ քննալ կը խորհիս. իսկ ես երբ կը լոգնամ՝ միայն լուացուելու մասին կը խորհիմ, երբ կը ճաշեմ՝ միայն ուտելու մասին կը խորհիմ, իսկ խոկումի պահուն ալ ոչ մէկ բան կը խորհիմ:» Երիտասարդը շնորհակալութիւն կը յայտնէ որ դաս մը եւս սորված է: Կը հասկնայ սորված դասին կարեւորութիւնը եւ այնուհետեւ միշտ կը ջանայ իր խորհուրդներու ողողումը զսպել եւ զայն միշտ իր ներկայ ստանձնած աշխատանքին վրայ կեդրոնացնել: Միջոց մը յետոյ տղան կամաց կամաց կը յաջողի ինք իր միտքին դեկը իր ձեռքը առնել: Ճգնաւորն ալ այդ կը հասկնայ եւ կ'ուրախանայ:

Երկու տարի եւս կ'անցնի, բայց երիտասարդը տակաւին Աստուած չէ տեսած: Դարձեալ անհամբերութիւն կը ծագի իր մէջ: Կը ներկայանայ ճգնաւորին, կը խոնարհի անոր առջեւ եւ կը հարցնէ, թէ երբ պիտի տեսնէ Աստուած եւ կ'ուզէ գիտնալ գաղտնի-

քը: Ճգնաւորը, առանց բառ մը ըսելու, նշան կ'ընէ որպէսզի աշակերտը իրեն հետեւի եւ զայն կը տանի գետ: Ինք ջուր մտնելէ յետոյ, նշան կ'ընէ որ տղան ալ մտնէ: Տղուն գլուխը ջուրին մէջ կը մխրճէ եւ չի ձգեր որ դուրս հանէ: Մէկուկէս վայրկեան կ'անցնի եւ տղան այլեւս անկարող շունչը բռնելու, կը սկսի պայքարիլ, որպէսզի կարենայ շնչել: Խեղդուելու մօտ, ճգնաւորը իր աշակերտին գլուխը ջուրէն դուրս կը հանէ: Երիտասարդը հեւհեւ, վերջապէս ինքզինք կ'ամփոփէ եւ հարց կու տայ, թէ ինչու համար խեղդուելու աստիճան իր գլուխը ջուրին մէջ պահած էր: Ճգնաւորը հարցումին պատասխան չի տար, բայց ինք հարցում մը կը հարցնէ. «Գլուխդ ջուրէն դուրս հանելէս մէկ երկվայրկեան առաջ մտածումդ ի՞նչ էր»: Աշակերտը զարմացած կը պատասխանէ. «Օդ՝ շնչել կ'ուզէի»: Այն ատեն ճգնաւորը կ'ըսէ. «Դուն տակաւին շատ ժամանակ կ'ուզես Աստուած տեսնելու համար: Դուն նախ պէտք է Աստուած տեսնել ուզես քու բոլոր հոլթիւնովդ, քու բոլոր զօրութեամբդ, քու բոլոր մըտքովդ ու քու բոլոր սրտովդ, այն աստիճանի որ նոյնիսկ այդ խեղդուելու պահուն անգամ պէտք էր քու խորհուրդդ Աստուծոյ վրայ ըլլար, քան թէ օդի եւ շնչելու վրայ»: Այս «երկրորդ գալուստ»-ը՝ Աստուծոյ թագաւորութեան գալուստը որքա՞ն բուռն կը փափաքինք: Պէտք է ըլլանք ուղղամիտ եւ առանց տատամսումի: Կարդանք հետեւեալ համարները.

«... ոչ ո՛ր արկանէ յե-ն-ն պմաճո՛վ, է- Լայեցի

յէրոս, եթէ յաջողեալ իցէ արվայոթեան
Ասորո-ժոյ:» (Ղուկասոս Թ:62)

«...Ով որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար չէ:»

«... որպէս զժոռարաս որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարվայոթեան Ասորո-ժոյ: Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ թակ ասղան անցանել, իան մեծասրան յարվայոթեան Ասորո-ժոյ մտանել:» (Ղուկասոս ԺԲ:24-25)

«Որչա՛փ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց, որ հարստութիւն ունին: Քանզի ակելի դիւրին է, որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ:»

«Դիւրին է մալխոյ ընդ թակ ասղան անցանել, իան մեծասրան յարվայոթեան

Ասորո-ժոյ մտանել:» (Մարկոսի Ժ:25)

«Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ:»

Մարդուն հարստութիւնը չէ որ արգելք կը հանդիսանայ Աստուծոյ թագաւորութեան մոտքին, այլ՝ իր կապուածութիւնը այդ հարստութեան: Հոս «հարստութիւն»-ը չի ներկայացնէր միայն նիւթական՝ դրամական հարստութիւն, այլ բոլոր տեսակի յարումներ, որոնց կը ձգտինք: Ասոնք կրնան ըլլալ խորհուրդներու հարստութիւն՝ զբաղ միտք, կառչած մնալ մեր կարծիքներուն, մեր գործերուն, մեր ընտանիքին եւայլն: Աս չի նշանակէր անտեսել մեր պարտականութիւնները, այլ կատարել զանոնք ամենայն ուրախութեամբ, որքան ալ դժուար, տաժանելի ըլլայ մեր կեանքի պայմանները: Ուրախութեամբ գործելէ ալ

աւելի կարեւոր է որ կապուած չըլլանք մեր ջանքերու եւ ըրած գործերու արդիւնքներուն: Պէտք է գործենք իբր թէ գործողը մենք չենք՝ այլ Քրիստոս, որ կը գործէ մեր միջոցով: Մեզի կը մնայ մեր լաւագոյնը ընել՝ ըլլալ լաւ գործիչ մը Քրիստոսի ձեռքին մէջ, որպէս ձիաքաշ կառք՝ կառապանին հրամաններուն հնազանդ:



Երանի ամենեցուն որ բնակեալ են
'ի ցան Տէառն,...

Երանեալ է այր որոյ օգնութիւն
իւր 'ի վէն է....
(Սաղմոս 29:5-6)

ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ-ԵՐԱՆԻՆԵՐԸ

Յիսուս «լերան քարոզին» մէջ կը շեշտէ, թէ ովքեր պիտի տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը:

«Երանի աղէաբաց Հոգւոյ, սի նոցայ է

աղէայոութիւն երկնից:» (Մարթէոսի Ե:3)

«Երանի՛ Հոգւով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է:»

Հոգիով աղքատները՝ այսինքն անոնք, որոնք խոնարհ են եւ արժանի երկնքի թագաւորութեան: Եթէ անձը որեւէ կերպով հպարտ է՝ իր ուսումով, նիւթական հարստութեամբ, գեղեցկութեամբ, համբաւով եւ կամ կը կարծէ թէ արդէն գտած է ճշմարտութիւնը՝ այսինքն «փրկուած» է, պիտի չունենայ Քրիստոս գտնելու այդ օրհնութիւնը: Այս ակնարկը նաեւ է խորհուրդներու աղքատութեան, այսինքն միտք մը որ կը զսպէ իր խորհուրդներու ողորումը:

«Երանի ագաւորաց, սի նո՛ւ միխթարեա-

ցիւն:» (Մարթէոսի Ե:4)

«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի միխթարուին:»

Այս համարը, շատ անգամ, յուղարկաւորութիւններու առիթով տրուած քարոզներու ընթացքին կ'իմանանք, սակայն հոս նշուած «սգաւոր»-ը բնաւ կապակցութիւն չունի մահացած անձի մը ետին մնացած «սգաւոր»-ին հետ:

Համայն մարդկութիւնը, ընտանեկան անդամներէն մէկուն, կամ նիւթական կորուստի պարագային, գետերու չափ արցունք կը թափէ: Արդեօք քանի՞ կաթիլ արցունք թափուած է երբ կորսնցուած է Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը: Այս պատճառով պէտք է սգաւոր ըլլանք եւ այն աստիճան որ Աստուած, մագնիսի նման, քաշէ մեր միտքը եւ

էութիւնը դէպի իրեն, որպէսզի մխիթարուինք:

«Երանի Ընդոց, պի նո՛վա Չառանգիւցիւն

պէրկիր:» (Մարթէոսի Ե:5)

«Երանի՛ Ըեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը:»

Հոս հեզ կը նշանակէ բոլոր էութեամբ յանձնուիլ: Ջանալ տեսնել միայն Աստուած՝ ամէն բանի եւ ամէն անձի մէջ: Այսպէսով երկուութիւնը մէջտեղէն կը վերնայ: Աս չի նշանակեր հարստութենէ, ընտանիքէ եւ ընկերներէ հեռանալ, այլ հասկնալ, թէ ամէն բան Աստուծմէ է եւ Աստուծոյ կը պատկանի եւ ոչ մեզի, վայելելով հանդերձ այդ բոլորը: Այդ վայելքին համար պէտք է փառք տրուի Աստուծոյ:

«Երանի շաղցելեալ եւ Չարասի իցե՛ն

արդարութեան, պի նո՛վա յագիւցիւն:»

(Մարթէոս Ե:6)

«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան:»

Յայտնի է թէ մարդիկ իսկութեան մէջ չեն փնտռեր Աստուծոյ արդարութիւնը՝ այսինքն նոյն ինքն Աստուած: Եթէ մարդուն մէջ, նոյնիսկ դոյզն ինչ, Աստուած տեսնելու փափաքը ծագի, այն ատեն յոյս կայ որ այդ փափաքը ուռճանայ, զօրանայ ու հասնի սովահարի մը անօթութիւնը եւ անապատին մէջ պապակած մարդու մը իր ծարաւը յագեցնելու փափաքի աստիճանին: Այն ատեն անձը կ'օրհնուի իր փափաքին իրականացումովը:

«Երանի ողորմա՛ջաց, պի նո՛վա ողորմութեան

Գրոցիւն:» (Մարթէոսի Ե:7)

«Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն:»

Աստուած տեսնելու պայմաններէն մին ալ

ողորմած ըլլալ է: Յանկուլթիւն, նախանձ եւ ատելութիւն կը ծագին մեր «Ես»-էն եւ մեր անգիտակցութեան (ignorance) հետեւանքով ալ կը խափանեն մեր Աստուած տեսնելու փափաքին իրականացումը: Ուրեմն պէտք է ողորմութիւն ցոյց տանք բոլորին, որպէսզի չէզոքացնենք վերոյիշեալ անբաղձալի խորհուրդները: Հարկ է սիրել բարին, բայց չատել չարը՝ ցոյց տալ պարզապէս անտարբերութիւն արարքին եւ սէր անձին: Առանց նախանձելու ուրախին հետ ուրախանալ, որպէսզի բազմապատկուի անոր ուրախութիւնը եւ տխուրին հետ տխրիլ, որպէսզի բաժնուի անոր տխրութիւնը եւ չուրախանալ իր տխրութեան վրայով: Այն ատեն երանի կ'ըլլայ մեզի, որովհետեւ ողորմութիւն կը գտնենք եւ պատրաստ կ'ըլլանք Աստուած տեսնելու: Նոյնը կ'ըսէ Սողոմոն իմաստուն.

«Լնձրն իւրոսմ Բարի Գործէ այր
 ողորմած, կորոսասնէ պմարմին իւր՝ այր
 անողորմ:» (Լուսկայ ԺԷ:17)

«Ողորմած մարդը իր անձին աղէկութիւն կ'ընէ, Բայց անողորմ մարդը մարմինին նեղութիւն կու տայ:»

«... Էս որ ողորմի աշխարհի՝ երանելի է:»
 (Լուսկայ ԺԴ:21)

«... աղքատին ողորմողը երանելի կըլլայ:»

«Երանի այնոցիկ՝ որ սորբէնն սրտիւն, պի
 նոխա պԼասորոսած ցիւցիւն:» (Մարթէոսի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած:»

Ի՞նչ կը նշանակէ «սրտով մաքուր» ըլլալ: Վստահաբար բոլորս ալ կը ճանչնանք գոնէ մի քանի անձեր, որոնք իրենց բարոյականով ունին բացարձակ մաքուր սիրտ: Բայց ասոնցմէ ոեւէ մէկը Աստուած

տեսած է⁶: Լաւ բարոյականը կարեւոր է եւ ամէն կրօնք կը շեշտէ անոր կարեւորութիւնը, սակայն լաւ բարոյականը բաւարար չէ: Յիսուսի ըսած «մաքուր սիրտ»-ը այն միտքն է, որ մաքրուած է բոլոր խորհուրդներէ: Երբ որոշենք աղօթել կամ Աստուծոյ վրայ խորհիլ, շատ զարմանալիօրէն, երկվայրկեանի մէջ, այդ խորհուրդին տեղ կու գան հազարումէկ զանազան խորհուրդներ: Ինչպէս վերոյիշեալ ճգնաւորը ըսած էր իր աշակերտին, թէ խոկումի պահուն բնաւ խորհուրդ չէր ունենար, մեզի ալ կը վիճակի աղօթքով ու խոկումով վանել նման խորհուրդները եւ մաքրել մեր միտքը այդպիսի խորհուրդներէ, որպէսզի ըլլանք մաքուր միտքով՝ «սրտով մաքուր»: Այս խորհուրդներու ողողումը ունի հիմնական պատճառներ: Ամենակարեւորը մեր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի նկատմամբ մեր ունեցած անգիտակցութիւնն է (ignorance): Թէեւ իմացականօրէն գիտենք, թէ Աստուած մեր մէջ ներկայ է նաեւ ամենուրեք, բայց փորձառական գիտակցութեամբ տակաւին այդ արդիւնքին չենք հասած: Ուստի, մենք փոխանակ զանազանութիւնը տեսնելու որպէս միութեան դրսերեւումները, ընդհակառակը միութեան մէջ կը տեսնենք զանազանութիւնը: Այս անգիտակցութեան հետեւանքով «Ես»-ը դիւրութեամբ կը խաբէ մեզ եւ մենք ալ մեր անձը կը տեսնենք Աստուծմէ եւ մէկզմէկէ անջատ: «Ես»-ին զօրութեամբ կը հակինք որոշ բաներու, կը կապուինք անոնց, կամ կը խրտչինք եւ կը հեռանանք անոնցմէ: Մեր զանազան իղձերը կամ խոսափումները արդելք կը հանդիսանան մեր Աստուած տեսնելու փափաքին, նման վերոյիշեալ աշակերտին, որուն խեղդուելու՝ նեղ կացութեան պահուն նախապատուութիւնը շնչել էր, քան թէ Աստուած տեսնել:

Մենք սերտորէն կապուած ենք այս աշխարհին եւ այս կապուածութիւնը Աստուած տեսնելու արգելքն է:

Մարդ արարած շատ զարմանալի է. կ'ըսէ թէ կը ձգտի Աստուծոյ, բայց եթէ Աստուած դայ եւ շնորհէ իր լոյսը, կը վախճի եւ կը նախընտրէ իր այս պատրանքի կեանքը: Կարդանք.

«Նովաւ կէանձ էր է- կէանձն էր լոյս մարդկան է- լոյսն 'ի խաւարի անդ լոսաւորէ է- խաւար մնա ոչ էղէ- Ըսասո. ...Էր լոյսն ճշմարտի որ լոսաւոր ասնէ պամենայն մարդ որ Գալոց է յաշխարհ, Յաշխարհի էր է- աշխարհ նովաւ էղէ- է- աշխարհ պնա ոչ Ժանեաւ. » (Յովհաննոս Ա:4-5,9-10)

«Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանիկա չճանչցաւ: ... Ճշմարտ Լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չճանչցաւ:

«Եւ այս իսկ է դասաստան. պի լոյս էկն յաշխարհ, է- սիրեցին մարդիկ պխաւար ասաւել լան պլոյս. ... » (Յովհաննոս Գ:19)

«Այս է դասապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, ...»

Կը վախնանք, որ եթէ մեր «Ես»-ը չէզոքացնենք մեր անհատականութիւնն (individuality) ալ կը կորսնցընենք, ինչ որ որոշ չափով ճշմարտութիւն մըն է: Անհատականութիւն՝ եսականութիւն կը ծագին «Ես»-էն:

Քալէ լով յառաջանալու համար պէտք է մեր ոտքը վերցնենք (անջատել) իր կոխած տեղէն՝ գետինէն եւ

զայն դնենք (կառչել) գետինը ուրիշ վայրի մը վրայ, ապա թէ ոչ յառաջացում չ'ըլլար: Նոյնպէս հոգեկան գետնի վրայ յառաջացումի համար ալ պէտք է անջատենք՝ հեռացնենք մենք զմեզ մեր անհատական-նութենէն (individuality), որպէսզի միանանք ամբողջութեան՝ Աստուծոյ: «Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի» բառարանին մէջ «ամբողջ» բառին համար տրուած բացատրութիւններէն մին հետեւեալն է. «ամբիծ, անարատ, անվնաս, անեղծ, անապական եւ անփորձ» եւ որպէս գործածութեան օրինակ գրուած է. «Ամբողջ պահելով զհոգի եւ զմարմին մեր»:

Պէտք է կորսնցնենք մեր անհատական կեանքը, որպէսզի ապրեցնենք մեր ամբողջական կեանքը:

«Որ խնդրիցէ պանչն իւր ապրեցո-ցանել,
կորո-սցէ պնա. է- որ կորո-սցէ, ապրե-
ցո-սցէ պնա:» (Ղուկասոս ԺԷ:33)

«Ով որ իր կեանքը կ'ուզէ ապրեցնել՝ պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ կը կորսնցնէ՝ պիտի ապրեցնէ զանիկա:»

«*Illusions – Adventures of a reluctant messiah*» անուն փոքր գրքի մը սկիզբի մի քանի էջերուն մէջ գետակի մը յատակը ապրող խնչի նման փոքր էակներու մասին պատմութիւն մը գրուած է: Ըստ իրենց իմաստութեան եւ սովորութեան պէտք է կառչին քարերուն, որպէսզի հոսանքը զիրենք չքշէ եւ չտանի դէպի անդունդ՝ անհետացում ու մահ: Որպէս մահու եւ կենաց հարց, իւրաքանչիւրը, ի գին ամէն բանի, պարտի կառչիլ քարերուն: Անոնցմէ մին կ'ուզէ գիտնալ, թէ ինչ կայ ջուրին գացած այլ տեղեր եւ կ'որոշէ այլեւս չկառչիլ քարերուն: Միւս բոլոր խնչերը կ'աղաչեն եւ կը պաղատին, բայց ան իր

որոշումին մէջ վճռական, թող կու տայ եւ հոսանքը զինք կը քշէ եւ կը տանի: Մնացողները կը սգան, իսկ ան, քարերուն գարնուելով, քիչ մը կը տապալակի, բայց ի վերջոյ կը հասնի ծով: Հոս հրաշալի տեղ՝ ուտելիքը առատ, ընդարձակ վայր: Ան կը խորհի, թէ բաղդատամբ այս նոր տեղին, իր նախորդ տեղը խեղճուկրակ վայր մըն էր: Կ'ուզէ ետ երթալ եւ բոլոր բարեկամներուն տեղեկացնել, սակայն գետին հոսանքին դէմ չի կրնար լողալ:

Մենք ալ կը նմանինք անոնց, որոնք կը գոհանան գետակի յատակի ճղճիմ կեանքով՝ այս աշխարհիկ կեանքով, երբ անդին կայ հսկայ ովկիանոս մը:

«Երանի խաղաղարարաց, պի նովա որդի՛վ

Ասորոշոյ կոշեացին :» (Մարտէոս 17:9)

«Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:»

Հին Հայաստանի վանքերուն միտն մէջ, օր մը, աշակերտներու միջեւ կռիւ կը ծագի: Վարդապետը բոլոր աշակերտները հարցաքննելէ յետոյ, գլխաւոր խռովիչներուն ովքեր ըլլալը կը ճշդէ եւ վանահօր կը գրէ, թէ այդ երկու տղաքը վանքէն վտարել կը խորհի: Վանահայրը անմիջապէս կը տեղեկացնէ, թէ ինք մօտ ատենէն վանք պիտի վերադառնայ եւ կը պատուիրէ որեւէ քայլ չառնել մինչեւ իր վերադարձը: Երբ վանք կը հասնի, ոչ կը հարցաքննէ եւ ոչ ալ կը հանդիմանէ այդ տղաքը, այլ կը պահանջէ որ բոլոր աշակերտները ամէն օր իր հետ աղօթեն: Շաբաթ մը յետոյ տղոց հոգեվիճակը կը փոխուի: Անոնք կը մոռնան իրենց

բոլոր անհամաձայնութիւնները: Վանքէն ներս խաղաղութիւնը կը վերահաստատուի:

Անոնք, որոնց սրտին մէջ ծագած է Աստուծոյ լոյսը՝ Քրիստոս, ինչպէս վանահօր, անոնք կրնան իրենց բոլորտիքը սփռել այդ խաղաղութիւնը: Անոնք պիտի կոչուին Աստուծոյ որդիները: Իսկութեան մէջ բոլորս ալ Աստուծոյ որդիներ ենք, բայց խաբուած ենք մեր «Ես»-էն:

«Երանի որ Հալաթել իցեն վասն արդարութեան, ւնի նոցա է արժայոթիւն երկնից: Երանի է յեւ՝ յորժամ նախարիցեն ւնից է Հալաթէացեն, է- առիցեն ւնիւնայն քան շար ւնիւնջ սո-տ՝ վասն իմ: ցնժացել է- ուրախ լերո-տ. ւնի վարձի յեր քաւո-մ էն յերկնն. ...» (Մարթէոսի Ե:10-12)

«Երանի՛ անոնց՝ որ Հալածուած են արդարութեան Համար, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է: Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը Հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի Համար: Յնձացէք եւ ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը. ...»

Շատերուն ծանօթ է «Նասրէտտին հօճա»-ի պատմութիւնները: Օր մը հօճան եւ իր տղան կը ճամբորդեն՝ հօճան իշուն վրայ, տղան քովէն քալելով: Զանոնք տեսնող անցորդ մը հօճային նախատինք կը տեղացնէ. «Չե՞ս ամչնար, դուն իշուն վրայ հանգիստ նստեր ես եւ խեղճ տղան կը քալեցնես»: Հօճան իրաւունք կու տայ մարդուն եւ էչէն վար իջնելով, տղան կը նստեցնէ իշուն վրայ: Քիչ յետոյ ուրիշ անցորդ մը գանոնք կը տեսնէ եւ հօճային կ'ըսէ. «Տխմար մարդ, երիտասարդը

իշուն վրայ նստեցուցեր ես եւ դուն ալ «հշու պէս», իշուն քովէն կը քալես»: Հօճան անոր ալ իրաւունք կու տայ: Այս անգամ ինքն ալ իշուն վրայ կը նստի եւ այդպէս կը շարունակեն իրենց ճամբան: Երբ ուրիշ ճամբորդ մը զիրենք երկուքով իշուն վրայ կը տեսնէ, բարկութեամբ կը պոռայ. «Անխիղճ մարդ, չես ամչնար, մեղքցիր խեղճ կենդանիին: Երկուքդ ալ վրան հեծեր էք: Չես տեսներ իշուն հոգին բերանը եկեր է»: Հօճան կը խորհի, այս մարդուն ալ իրաւունք կու տայ: Երկուքն ալ հշէն վար կ'իջնեն: Ճամբան կը հանդիպին բարեկամի մը որ հօճան բարեւելէ յետոյ կ'ըսէ. «Հօճա քեզի ի՞նչ եղաւ, խելքդ կորսնցուցիր: Քանի որ հշը քովդ է ինչո՞ւ կը քալես եւ կը յոգնիս: Մարդ արարած, հշը ստեղծուեր է որպէսզի վրան նստիս»:

Աստուած փնտռելու ճամբուն վրայ ալ շատ մը փորձառութիւններէ պիտի անցնուի: Ամէն մարդ, ամէն կրօնք, ամէն դաւանանք իր տեսակետին վրայ պիտի պնդէ: Մարդիկ հաճեցնել անկարելի է, անոր համար որոշումը պէտք է ըլլայ հետեւիլ այն ներքին ձայնին որ կու գայ ճշմարիտ վարդապետէն՝ Քրիստոսէն:

Քրիստոսի առաջին գալուստը եղաւ բոլոր տիեզերքի ստեղծագործութեամբ եւ հարկաւ ներառեալ մարդկութեան: Երկրորդ գալուստը պիտի ըլլայ «որդի մարդոյ» միջոցաւ: Յիսուս մեզի ցոյց տուաւ թէ կարելի էր Քրիստոս ի յայտ բերել մեր մէջ: Իսկ Յիսուսի համար ե՞րբ եղաւ Քրիստոսի երկրորդ գալուստը: Աւետարանը, այս ուղղութեամբ, բացայայտ բան մը չ'ըսեր: Հաւանական է որ այդ պատահեցաւ

անապատին մէջ, երբ ինք յաղթեց իր «Ես»-ին՝ «սա տա նա»յին:

«Յայնժամ ասէ ցնա Յիսուս. երբ յեզոս իմ սասորանայ. զի Գրեալ է՝ Տէարն Լսորո՞ժոյ չո՞ւմ երկիր պագցես, է- զնա միայն պաշտպեսցես: Լոյս երբ զնա սասորանայ. է- ահա՛ Ըրեշտակի մասրեան՝ է- պաշտելին զնա:» (Մատթէոսի Դ:10-11)

«Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Ետիս գնա, Սատանայ, վասն զի գրուած է թէ՛՝ Գու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես ու միայն զանիկա պաշտես՝»: Այն ատեն Սատանան զանիկա թողուց եւ Հրեշտակները եկան ու անոր սպասաւորութիւն կ'ընէին:»

Լերան վրայ Յիսուսի այլակերպութիւնը ցոյց տուաւ Քրիստոսի լրիւ արտայայտութիւնը: Ասիկա ի՞նչ կը նշանակէ: Կարգանք.

«Զի Լսորո՞ժոս որ ասաց ՚ի խաւարէ լոյս շաղկէ. որ է- շաղկեաց իսկ ՚ի սիրտս մեր ՚ի լոսասորո՞ւնի-ն Գիտութեան փասացն ամենայն ՚ի զեմս Յիսուսի Բրիտանի:»

(Բ. Կորնթացիս Դ:6)

«Վասն զի Աստուած որ Հրաման ըրաւ որ խաւարէն լոյս ծագի, ինք մեր սրտերուն մէջ ծագեցաւ: Աստուծոյ փառքին զխտութեան լոյսը տալու Համար Յիսուս Քրիստոսի անձովը:

Մենք ալ, մեր ծնունդով, կը ներկայացնենք Քրիստոսի առաջին գալուստը: Գրուած է.

«Զի ամենեւէն զո՞ւ՜ զորի՜ լոսոյ է՜ ...»

(Լ. Թեաղոնիկեցիս Ե:5)

«Վասն զի գուք ամէնքդ լուսոյ որդիներ էք ...»

Մենք ալ, նման Յիսուսի, պարտ ենք ի յայտ բերել երկրորդ գալուստը՝ Քրիստոսի յայտնութիւնը: Քրիստոս ինքզինք կը յայտնէ անոնց, որոնք պատրաստ են եւ «յարմար» պահուն: Ինչպէս մենք զմեզ չենք կրնար քնացնել, բայց կրնանք քնանալու պատրաստել, նմանապէս չենք կրնար մենք մեր ջանքերով երկրորդ գալուստը բերել, բայց կրնանք զմեզ պատրաստել: Ինչպէս քունը ակնթարթի մէջ մեր գիտակցութիւնը կը յափշտակէ, Քրիստոսի գալուստն ալ նոյն ձեւով պիտի ըլլայ: Երբ քունէ արթնանք, ինչպէս մեր գիտակցութեան մակարդակը կը փոխուի՝ արթուն աշխարհը ի յայտ կու գայ ամենուրեք, նման արեւելքէն մինչեւ արեւմուտք երեւցող փայլակի, այնպէս ալ պիտի ըլլայ «երկրորդ գալուստ»ը: Միթէ չէ՞ գրուած.

«Զի որպէս փայլանն փայտաբանեալ 'ի ներվոյ երկնից' ընդ երկնի-վ Շաբիցե, նոյնպէս է- որդի մարդոյ յա-ո-րն ի-ր-ո-մ:» (Ղուկասոս ԺԷ:24)

«Վասն զի ինչպէս փայլակը երկինքին տակ մէկ դիէն փայլատակելով՝ մինչեւ երկինքի տակ միւս գին լոյս կու տայ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին մարդոյ իր գալուն օրը:»

«Զի որպէս փայլանն՝ որ էլանէ յարե-էլից՝ է- երե-ի մինչէ- յարե-մո-րոս, այնպէս էղիցի Բալոսոսն որդո-ոյ մարդո-ն:» (Մարքէոսի ԻԴ:27)

«Վասն զի ինչպէս փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կ'երեւնայ, այնպէս պիտի ըլլայ Որդի մարդոյ գալուստը:»

Այն անձը, որ կ'ունենայ երկրորդ գալուստը, Աստուծոյ զօրութիւնը կու գայ անոր վրայ, ինչպէս գրուած է հետեւեալ համարին մէջ:

«այլ առջիկ գորութիւնն 'ի Հասանել Հոգոյն
արեւոյ 'ի վերայ յեր...» (Գործի Լուսիւոյ Լ:8)
«Բայց Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը գորութիւն
պիտի առնէք. ...»

Քրիստոսի վերստին գալուստը միայն քրիստոնեաներուն վերապահուած առանձնաշնորհում մը չէ, այլ ի զօրու է համայն մարդկութեան: Կը կարդանք.

«Եւ եկեացեն յարեւելից եւ յարեմոսից,
եւ 'ի Հիւստոյ եւ 'ի Հարաւոյ, եւ
բազմեացին յարեւոյութեան Լստոյ:»
(Գաւառոս ԺԳ:29)

«Այնտեղ պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն եւ հիւսիսէն ու հարաւէն ու պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեանը մէջ:»

Յիսուսի օրով ո՞վ էր ամենէն շատ հաւատք ունեցող մարդը: Այն «հեթանոս» հռովմայեցի հարիւրապետը, որ Յիսուսէն իր ծառային բժշկութիւնը ինդրեց: Յիսուս այս հեթանոս հռովմայեցիին ծառան բժշկելով ցոյց տուաւ, թէ ինք կրօնքներու մէջ խտրութիւն չէր դներ, ուրեմն ինչո՞ւ մենք կը դներք:

Մեզի կը մնայ ինքզինքնիս պատրաստել այս գալուստին:

Իմացականօրէն գիտենք թէ Քրիստոս արդէն իսկ մեզի հետ է, քանի որ ինք ըսաւ.

«Եւ ահա-ասիկ ես ընդ յեւ եմ գամենայն
առաջս՝ մինչեւ 'ի կարարաժ աշխարհի:»
(Մարտիոս ԻԸ:20)
«Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը:»

Իմացականօրէն գիտնալ բաւարար չէ, քանի որ փորձառականօրէն անգիտակից ենք: Պէտք է ունենանք փորձառական գիտակցութիւնն ալ, որպէսզի լրիւ ի յայտ բերենք Քրիստոս, որ է մեր կեանքի բուն նպատակը: Պէտք չէ սպասենք մեռնելու «երկինք երթալու համար»:

Ինչո՞ւ լրիւ ի յայտ բերել Քրիստոսի յայտնութիւնը մեր մէջ:

Հետեւեալ համարներուն մէջ կը կարդանք, որ մահէն ետք ոչինչ ենք, հետեւաբար ինչ որ պէտք է ընենք պէտք է այս ներկայ կեանքի միջոցին ըլլայ:

«Բանսնի ո՞վ էն՝ որ Ըստասարեն աստեանայն կենդանիս: Գոյ յոյս թէ շոն որ կենդանի է՝ լստ է իան պատեծ մեռեալ: Բանսնի որ կենդանիէն էն՝ Գիտեն նոյա թէ մեռանելոց էն. է մեռեալէն ոչ էն Գիտան էն ոչ իմի: Են ոչ էս Գոն նոցա վարձի՝ սն մոսացա յիշատակ նոցա. է սեր իան նոցա՝ է արելու թիւն նոցա՝ է նախանջ նոցա՝ աս կորեա. է Բաթիւն իան ոչ Գոյ նոցա յաիտեանս յամենայնի յայսմիկ՝ որ արարեալ էն ընդ արեգակամբ:»

(Մոզոզ Թ: 4-6)

«Բայց բոլոր կենդանիներուն ընկերացող մարդը յոյս ունի, Վասն զի ողջ շունը մեռած առիւծէն աղէկ է: Որովհետեւ անոնք որ կ'ապրին, գիտեն թէ պիտի մեռնին. Բայց մեռելները բան մը չեն գիտեր Ու ալ վարձք մը չեն առներ. Վասն զի անոնց յիշատակը մոռցուեցաւ: Թէ՛ անոնց սէրը, թէ՛ ատելութիւնը Եւ թէ՛

նախանձը արդէն կորսուեցան Ու անոնք արեւուն տակ եղող բաներէն Ա՛լ յաւիտեան բաժին չունին:»

«Սակայն է- ՚ի մէջ նոցա պատահար է որդե-ոց մարդկան: է- պատահար է անասնոց, է- պատահար յամենեւին ՚ի նոցա: Որպէս մաս սորա՝ նոյնպէս է- մահ նորա: է- շո-նշ է յամենեւին: է- պնճ աստեղութիւն էղէ- մարդոց վան պանաս- նոյ, է- ոշինշ. պի ամենայն ինչ ընդո- նայն է: Լմենայն ՚ի մի քեղի երթայ. ամենայն էղէ- ՚ի Հողոյ, է- ամենայն քանայն ՚ի Հող» (Ժողովող Գ: 19-20)

«Վասն զի մարդոց որդիներուն պատահածը եւ անասուններուն պատահածը նոյնն են. Մէկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս կը մեռնի: Ամենուն շունչը նոյնն է: Մարդը անասունէն աւելի բան մը չունի, Վասն զի ամէն բան ունայնութիւն է: Ամէնքը նոյն տեղը կ'երթան: Ամէն բան Հողէն եղաւ ու ամէն բան Հող պիտի դառնայ:»

Աստուածային տիեզերքի պատահարն վրայ արտայայտութեան՝ ստեղծագործութեան գլխաւոր յատկութիւնները երեք հատ են. Էութիւն գոյութիւն (existence), գիտութիւն (knowledge) եւ երանութիւն (bliss):

Ա- ԷՈՒԹԻՒ: Տիեզերքը՝ Աստուծոյ ստեղծագործութիւնը, կը ներկայացնէ Աստուծոյ մարմինը եւ քանի որ մենք ալ մաս կը կազմենք այս ստեղծագործութեան, մենք ալ մաս կը կազմենք այդ Աստուածային գոյութեան: Կը կարդանք հետեւեալը.

«Որպէս մարմին մի է, է- անդամս քապո-մս ունի. է- ամենայն քապո-մ

անդամով մարմնոյն՝ մի մարմնն է. նոյն-

պէս է- **Քրիստոս**: (Լ Կորնթացիս ԺԲ:12)

«Քանզի ինչպէս մարմինը մէկ է եւ շատ անդամներ ունի, եւ այն մարմինն բոլոր անդամները, թէեւ շատ են, բայց մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ:»

Մեր գիտակցութեան մէջ այս գոյութիւնը ժամանակաւոր է եւ կը պատկանի այս աշխարհիկ կեանքին: Ան կը սկսի մեր ծնունդով եւ կը վերջանայ մեր մահով: Քրիստոսի մեր մէջ ի յայտ գալը մեզի կ'արտօնէ փորձառութիւնը ունենալու յաւիտենականութեան՝ որ կը նշանակէ ժամանակի դրութենէ դուրս ըլլալ: Ամէն ինչ որ ժամանակի մէջ է, ենթակայ է ժամանակի՝ այսինքն փոփոխութեան: Ծնունդ եւ մահ մաս կը կազմեն այդ փոփոխութեան: Յաւիտենականութեան փորձառական եւ ոչ իմացական գիտակցութիւնը մեզի կը յայտնէ անմահութեան զաղափարը եւ գիտակցութիւնը: Ան որ անմահ է վախ չ'ունենար, ուրեմն դժբախտութիւն ալ չ'ունենար:

«... է- **Ընդուն** է որ վկայէ, **պի Ընդուն** իսկ

է **Տշմարտութիւնն**: » (Լ Յովհաննէս Ե:6)

«... եւ Հոգին է, որ կը վկայէ, վասն զի Հոգին ճշմարտութիւնն է:»

Ճշմարտութիւնը նաեւ էութիւնն է:

Բ-ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Մարդոց գիտութիւնը որոշ չափով սահմանափակ է եւ դարերու ընթացքին միշտ աւելցած է եւ կը շարունակէ աւելնալ: Գիտութիւնը եւ բարեշրջումը կ'ընթանան միշտ միասին եւ միշտ աւելի արագ, քան թէ անցեալին: Մէկ բջիջէ կազմուած պարզ կեանքը յառաջ եկած է մօտաւորապէս չորս միլիառ տարի առաջ, իսկ բազմաբջջային պարզ էակներ՝ մէկ միլիառ տարի առաջ: Ողնայարաւոր կենդանիներ ստեղծուեցան մի քանի հարիւր միլիոն տարի առաջ, իսկ ստնաւորներ՝ մի քանի տասնեակ միլիոն տարի

առաջ: Նախամարդը (hominid) երկու միլիոն տարի առաջ, իսկ ներկայ մարդը՝ մի քանի հարիւր հազար տարի առաջ: Մարդ սկսաւ գործիք գործածել եւ հաղորդակցիլ յօղաբաժան լեզուով՝ մի քանի տասնեակ հազար տարի առաջ, իսկ քաղաքներու մէջ հաւաքուելով սկսաւ քաղաքակրթութիւնը՝ միայն մի քանի հազար տարի առաջ: ճարտարարուեստական յեղաշրջումը՝ (industrial revolution) երեք հարիւր տարի առաջ եւ տեղեկութեան դարը՝ (information age) երեսուն տարի առաջ: Յառաջիկայ յառաջացումները կը թուին աւելի արագ ընթանալ եւ շատ հաւանական է, որ չափուին միայն մի քանի տարիով եւ յետոյ ալ՝ մի քանի ամիսով: Համակարգիչներու կարողութիւնը կը կրկնապատկուի ամէն տասնըութը ամիս, եւ կը գուշակուի թէ 2020 տարուոյ մէջ իրենց կարողութիւնը պիտի գերիշխէ մարդկային ուղեղի կարողութեան:

Գիտութիւնը լաւ է, բայց այդ գիտութիւնը կարելի է գործածել թէ՛ բարի եւ թէ՛ վատ նպատակի համար: Այս գիտութիւնը որպէսզի լաւ նպատակի համար գործածուի, պէտք կայ իմաստութեան: Իմաստութիւնը ճիշդ եւ լաւ գործելու գիտութիւնն է, որ կարելի չէ գիրքերէ սորվիլ: Ան Ս. Հոգիի շնորհքներէն մին է:

Ս. Հոգին կը պարգեւէ իմաստութիւն ունենալու կարողութիւնը: Իմաստութիւնն ալ գիտութիւնն է, որ անհատը կը սորվի միայն կեանքի փորձառութեամբ: Մանուկը կը տեսնէ մոմին բոցը եւ կ'ուզէ զայն բռնել: Ծնողքը կը զգուշացնէ, թէ մատը կրնայ այրիլ: Ան չի հասկնար եւ չի սորվիր մինչեւ որ մատը այրէ: Ատկէ յետոյ անկարելի է որ անգամ մըն ալ բոցին քով երթայ: Ասոր համար երկար կեանք ունեցողներ՝ տարիքոտներ աւելի իմաստուն կ'ըլլան, քան թէ երիտասարդները: Առակաց ԺԵ:31 համարը կը գրէ.

«Կեանքի յանդիմանութիւնը լսող ականջը իմաստուններուն մէջ կը բնակի»: Անոնք, որոնք այդ կարողութեամբ չեն պարզեւատրուած իրենց կեանքին մէջ նոյն սխալները կը կրկնեն, առանց իրենց փորձառութիւնէն դաս առնելու եւ բան մը սորվելու:

«Թեպէտք է բաժինէ շնորհաց էն՝ այլ Ըոգի նոյն է: Եթէ բաժինէ պաշտամանց էն, այլ Տէր նոյն է: Եթէ բաժինէ յաջողութեանց էն, այլ Լսարան նոյն է՝ որ աջողէ պատենայն յամենայնի: Բայց իրաւանշիր որ ունի գոտեալ է յայտնութիւն Ըոգոյն՝ առ իրաւանշիր օգոտ: Ուրեմն ՚ի Ըոգոյն գոտեալ է բան իմաստարութեան այլոմ բան Գիտութեան ըստ նմին Ըոգոյ. » (Լ Կորնթացիս ԺԲ:4-8)

«Պարզեւները զանազան են, բայց տուողը նոյն Հոգին է: Նաեւ պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրը կու տայ: Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը ներգործէ ամէնքը ամէն բանի մէջ: Բայց ամէն մէկուն Հոգին յայտնութիւնը տրուած է բոլորին շահուն համար: Մէկուն՝ Հոգիով իմաստութեան խօսք տրուած է, ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն Հոգիին տուած չափովը.»

Հաւ եւ օգտակար է իմաստութիւնը, կը կարգանք հետեւեալը.

«Բարի է իմաստարութիւն ընդ ժառանգութեան, է- յաւելոտա՞ որոց գիտանէն պարեգակն» (Ժողովող Է:12)

«Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է, Ու արեւը տեսողներուն օգտակար է:» (Ժողովողի Է:11)

«Զի մարդոց բարոյ՝ է՛ր պիմաստոութիւն
 է- պիտոութիւն է- պարաստութիւն...»
 (ժողովոյ Բ:26)

«Քանզի Աստուած իր առջեւ հաճելի եղող մարդուն
 իմաստութիւն, գիտութիւն եւ ուրախութիւն կու տայ ...»

Մեր իւրաքանչիւրը Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է եւ Քրիստոս մեր մէջ կը բնակի: Եթէ արտօնենք որ Քրիստոս լրիւ ի յայտ գայ մեր մէջ, կը ծագի նաեւ այն գիտակցութիւնը ճշմարիտ գիտութեան եւ իմաստութեան: Այսպէսով պատրաստ կ'ըլլանք յաջորդ բարեշրջումին: Այդ շրջանին իմաստութիւնը եւ ներգիտակցութիւնը (intuition) ամենուն համար բնական պիտի ըլլան:

գ-ԵՐԱՍՏՈՒԹԻՒՆ: Յիսուս իր լերան քարոզին մէջ «երանի» ըսաւ անոնց, որոնք Աստուած տեսնելու պիտի արժանանային: Մեր առօրեայ կեանքի ընթացքին կան ուրախ օրեր, երջանիկ պահեր, բայց դժբախտաբար անոնք միշտ փոփոխութեան ենթակայ են եւ հետեւաբար՝ ժամանակաւոր: Իրենց կը յաջորդէ տխրութիւն, դժբախտութիւն, ցաւ եւ տաժանք:

Մարդիկ ունին երեք «մարմիններ»՝ Ֆիզիքական, մտային եւ իմացական: Երբ Ֆիզիքայէս առողջ կ'ըլլանք եւ զգացականօրէն (մտային) ալ երջանիկ սիրալիր յարաբերութիւններ կ'ունենանք մեր սիրելիներուն հետ. յանկարծ, գործի տեղէն մեր ներկայացուցած բոլոր զաղափարները կը մերժուին: Իմացականօրէն կ'ընկճուինք, հետեւաբար կը տխրինք: Միջոց մը յետոյ գործատեղիի վերակացուն կը տեղեկացնէ, թէ ընդունուած է մեր թելադրութիւնները եւ նոյնիսկ կ'արժանանանք թոշակի յաւելման: Այլեւս պէտք է ուրախ ըլլանք: Բայց ափսո՛ս, տարեկան բժշկական քննութեան ի յայտ կու գայ թոքին վրայ քաղցկեղի նշան մը: Իմացական եւ զգացականօրէն վիճակը շատ

լաւ է, բայց այս անգամ ալ Ֆիզիքականը մեզ կը տխրեցնէ: Վերահաստում է յետոյ Ֆիզիքական առողջութիւնը կը վերահաստատուի, ուրեմն ուրախութեան ժամանակը հասած է: Դժբախտաբար ոչ: Այս անգամ տան երիտասարդ տղան՝ 16 տարեկան, դիրք կը բռնէ մեր փափաքներուն դէմ եւ կ'ուզէ տունէն հեռանալ, ընկերուհիին հետ զատ բնակիլ: Ֆիզիքականը եւ իմացականը լաւ կ'ընթանան, բայց զգացականը մեզ կը տխրեցնէ: Հագուազիւտ է որ երեքը՝ Ֆիզիքականը, մտայինը եւ իմացականը, միասին լաւ ընթանան: Իսկ եթէ նոյնիսկ ընթանան, այդ կը պատահի միայն շատ կարճ ժամանակի համար: Այսպէս կեանքի բոլոր ընթացքին կարելի չըլլար բացարձակ անդորրութեան եւ խաղաղութեան ինչ ըլլալը գիտնալ եւ հետեւաբար զանոնք վայելել:

«Խաղաղութիւնն ինքուստ չէ, պատշաճութիւնն պիտի պահանջուի: Եւ որովհետեւ աշխարհս պատշաճութիւնն չէ, մի խոստովանուի որ անոր մէջ չկայ քանակական արդարեւն»:

(Յովհաննէս Ժ: 27)

«Խաղաղութիւնը կը թողուի ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի, ոչ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ: Սրտերնիդ չխուզիլ ու չվախնայ:»

Երբ Քրիստոս լրիւ ի յայտ կուգայ մեր մէջ, այն ատեն երանութիւնը՝ երջանկութիւնը եւ խաղաղութիւնը կ'ըլլան յաւիտենական:

«Եւ որով իմանալով մեզ եւ Տէառն, ընկալայի պահանջ ... խնդրութեամբ Հոգւոյն Արքայ» (Լ Թեաղոնիկէցի Լ: 6)

«Դուք ալ՝ մեզի ու Տէրոջը նմանելով ընդունեցիք խօսքը ... Սուրբ Հոգիին ուրախութիւնովը»:

Ուրեմն պարտինք Քրիստոս լրիւ ի յայտ բերել մեր մէջ, որպէսզի ապրինք՝ գոյատեւենք երանութեան մէջ լրիւ գիտակցութեամբ, որպէսզի Աստուած փառաւորուի: Կը կարդանք.

«Եթէ ո՞չ գիտէ՛, զի մարմին չէր պաճար
էն Հոգեւոյն որ է ՚ի Յէզ' զոր ունի՛ն
յԼսոյր-Ժոյ: Եւ շէ՛տ անձանց որ ...
փառաւոր արարէ՛ զԼսոյր-աժ ՚ի մարմինս
չէր եւ յոգիս չէր:» (Լ Արնշապիւ Զ:19-20)

«Զէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծմէ առած էք ու դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ կը պատկանին:»

Վերջին տարիներուն բժշկութեան մէջ

կ'օգտագործուի «PET Scan»-ը (positron emission tomography), որ զանազան պայմաններու տակ ուղեղին որ մասին աւելի գործունէութիւն կատարելը ցոյց կու տայ: Փորձեր կատարուած են զանազան անձերու վրայ: Հետազօտութեան հետեւանք ճշգրտած է թէ երբ անձը իր ուղեղին աջ կողմը գործածէ, ինքզինք երջանիկ կը զգայ: Այս փաստուած է Թիպէթի վանականներուն խոկումի ընթացքին անոնց վրայ կատարուած «PET Scan»-ի հետեւանք: Կաթուածահարներ, որոնց ուղեղին ձախ կողմը լրիւ վնասուած է, ուղեղին աջ կողմին լաւ գործելուն պատճառաւ, հակառակ իրենց ֆիզիքական դժուարութեանց եւ անկողնոյ ծառայութեան վիճակին, աւելի երանութեան մէջ կ'ըլլան՝ անտարբեր իրենց դժուարին կացութեան:

Մարդկութեան մեծամասնութիւնը իրենց զաւակներուն կը սորվեցնէ այն ինչ որ քաղաքակրթեալ աշխարհի մէջ յաջող եւ հանգիստ կեանք մը

ապրելու համար հարկաւոր է՝ անհատականութիւն, մրցակցութիւն ...: Այս բոլորը ուղեղին ձախ կողմի գործունէութեան մաս կը կազմեն:


Ի՞նչ է Քրիստոս լրիւ ի յայտ բերել մեր մէջ:

Կը թուի թէ ուղեղին աջ կողմի «կառապան»-ը Քրիստոսն է, իսկ ձախ կողմի «կառապան»-ն ալ՝ «Շն»-ը: Ինչպէ՞ս կարելի է ուղեղին աջ կողմը աւելի գործածել: Պարտ ենք ինքզինքնիս մարզել եւ օգտագործել տիեզերքի զօրութեան հոսանքը՝ Ս. Հոգիի զօրութիւնը:

1939-ին, Ռուսաստանի մէջ, Սիմէօն Քիրլիեան (Semyon Kirlian) անուն հայ մը, պատահամբ, գտաւ լուսանկարչութեան մասնաւոր կերպ մը, որով կը կարողանար նկարել որեւէ էակի մը մարմինէն ճառագայթող զօրութիւնը: (Տեսնել վարի երեք նկարները) Այսօր, նկարելու այս կերպը ճանչցուած է «Քիրլիեան լուսանկարչութիւն» անունով (Kirlian photography): Վերջին եօթանասուն տարիներու ընթացքին զանազան փորձեր կատարուած են: Ոմանք չեն հաւատար եւ կարեւորութիւն չեն տար, իսկ ուրիշներ ալ լրջութեամբ կ'ընդունին իր գիւտը: Նոյնիսկ համբաւաւոր Նիքոլա Թէսլա (Nikola Tesla) թէ՛ մեքենագիտական եւ թէ՛ էլեկտրական ճարտարագէտ, նաեւ փիլիսոփայ ու բանաստեղծ, որ 19 եւ 20երորդ դարերու աշխարհի առաջնակարգ գիտունը եղած է, փորձեր կատարած է այս նիւթով՝ իր կեանքի մայրամուտին:

Քիրլիեանի ամենակարեւոր փորձերէն մին եղած է տերեւի մը նկարը, որ ցոյց կուտայ տերեւէն ճառագայթող զօրութիւնը: Ինք կտրած է տերեւին մէկ մասը եւ զայն դարձեալ նկարած: Զարմանքով տեսած է, թէ նկարին մէջ, տերեւին պակասած մասին տեղն ալ, դարձեալ զօրութիւն գոյութիւն ունի՝ կարծես տերեւը լման ըլլար: Նկարած է մարդոց մարմինին, նաեւ

առարկաններու շուրջի զօրութեան ճառագայթումը: Այս վերջին կացութիւնը զարմանք պէտք չէ պատճառէ, քանի որ բոլոր տիեզերքը՝ նիւթական, բուսական, անասնական ու մարդկային աշխարհները, բոլորն ալ յառաջ կու գան նոյն զօրութենէն՝ Սուրբ Հոգիէն, որ կը բխի Հօրմէն եւ կը հոսի անդադար եւ ամենուրէք:



Կարգ մը յստակատեսեր, մարդոց մարմիններուն շուրջի այս զօրութեան ճառագայթները, որ փառապսակ (aura) կը կոչուի, տեսնելու կարողութիւնը ունին: Անոնք, զօրութեան ճառագայթներու գոյնէն եւ փայլէն ենթակային Ֆիզիքական, մտային, կամ հոգեբանական վիճակին մասին որոշ եզրակացութիւններու կը յանգին: Այս փառապսակի ճառագայթումը, անհատին մէջէն հոսող զօրութեան աստիճանին համաձայն, կրնայ ըլլալ թեթեւ, տկար կամ զօրաւոր, նաեւ կրնայ ունենալ զանազան գոյներ:

Յստակատես մը հետեւեալ դէպքը կը պատմէ: Բարձր շէնքի մը մէջ, վար իջնելու համար վերելակի կը սպասէի: Երբ վերելակին դռները բացուեցան, ներսը անձ մը կար, որուն շուրջ փառապսակի ճառագայթումը չտեսայ: Մտքէս «Այս մարդը մեռած է» ըսի ու վերելակէն ներս չմտայ: Դռները փակուելէն յետոյ, վերելակը յանկարծ տասը յարկ վար ինկաւ եւ մէջի անձը մեռած գտնուեցաւ:

Դէպքի յատկանշականութիւնը այն է թէ, տակաւին անձը չմեռած, զօրութիւնը, կանխաւ

կացութեան գիտակից, քաշուած է անոր մէջէն: Կը թուի , թէ տիեզերքը հիմնուած է այս զօրութեամբ: Այս տիեզերական զօրութեան՝ Սուրբ Հոգիի հոսանքը, որ յայտնաբերած է տիեզերքը եւ պատճառն է անոր գոյատեւման, կարելիութիւնը ունի որ աւելիով հոսի մեր մէջ, այն աստիճան որ փառապսակի ճառագայթումը աւելնայ եւ դառնայ լուսապսակի՝ (halo) տեսանելի բոլորին, այնպէս, ինչպէս Յիսուսի պատահեցաւ՝ այլակերպման ընթացքին: Մենք յստակատեսեր չենք, բայց երբեմն մենք ալ կ'անդրադառնանք որոշ անձերու մէջ նման յաւելեալ զօրութեան հոսանքի ներկայութեան եւ «երեսը շնորհք կայ» կ'ըսենք: Մեզի այնպէս կը թուի, թէ այս անձերուն երեսը տարբեր փայլ մը կայ: Աւետարանն ալ կը գրէ թէ Ս. Հոգին զօրութիւն է:

«Կի աւետարանն մեր ոչ եղև առ յեզ միայն բանիս, այլ եւ զօրութեամբ՝ եւ Ըստոյնով սրբով, ...» (Լ. Թեոադոսիկէցիս Լ:5)

«Որ մեր աւետարանը ոչ միայն խօսքով քարոզուեցաւ ձեզի, հապա զօրութիւնով ալ եւ Սուրբ Հոգիով ...»

Չինական բժշկութիւնը կ'օգտագործէ այս զօրութեան հոսանքը՝ բուժելու որոշ հիւանդութիւններ, քանի որ հիւանդութիւններու պատճառը այս զօրութեան հոսանքին խափանման հետեւանքն է: Ես, որպէս սրտի հիւանդութիւններու մասնագէտ, անձնապէս շօշափած եւ զգացած եմ այս զօրութեան բաբախումը (pulsation) անձի վրայ, սկիզբը զայն կարծած եմ երակային զարկ, բայց երբ բաղդատած եմ սրտի զարկին հետ, տեսած եմ որ երկուքին յաճախականութիւնները իրարմէ շատ տարբեր են: Դժբախտաբար չեմ գիտեր զայն քննել եւ կարենալ գործածել ախտաճանաչման համար:

Յիսուս բազում հիւանդներ դարմանեց, իրմէ

յաւելեալ զօրութիւն փոխանցելով անոնց: Յիսուսի մէջ Քրիստոս լրիւ ի յայտ եկած էր, որով ան ունէր այդ զօրութիւնը գործածելու՝ փոխանցելու գիտութիւնը: Մենք այդ գիտութիւնը չունինք, որով այս բժշկութիւնները կը համարենք հրաշքներ: Այո՛, մեր ներկայ հասկացողութեամբ ասոնք հրաշք են: Նախնական մարդուն սխալ հասկացողութեամբն ալ կայծակը, Աստուծոյ բարկութեան հետեւանք, մարդիկ պատժելու համար երկինքէն զրկուած կրակ էր:

Մարկոս Ե:25-34 եւ Ղուկաս Ը:43-48 համարներուն մէջ կը կարդանք նոյն դէպքը: Հիւանդ կին մը Յիսուսի հանդերձի քղանցքին կը դպչի եւ կը բժշկուի: Յիսուս կը զգայ եւ հարց կուտայ. «Մ՛ի էր ան որ ինծի դպաւ ... քանզի իմացայ որ ինձմէ զօրութիւն մը ելաւ»: Աշակերտները կը զարմանան, քանի որ ամբոխը գիրար կը հրմշտէր եւ հարկաւ՝ Յիսուսն ալ: Հիւանդ կնոջ դպչիլը տարբեր էր եւ նպատակաւոր, հետեւաբար զօրութեան հոսանք մը հոսած էր Յիսուսէն դէպի կինը: Յիսուս գիտակից իր ունեցած զօրութեան, զգացած էր այդ հոսանքի փոխանցումը եւ այդ զօրութիւնն էր որ բժշկեց կինը: Այդ պահուն ուրիշներ ալ դպան Յիսուսի, բայց զօրութեան որեւէ հոսանք չհոսեցաւ իրմէ դէպի անոնց, քանի որ իրենք ընդունակ չէին այդ զօրութեան: Յիսուս, ճիշդ այս պատճառով, միշտ կ'ըսէր «քու հաւատքդ քեզ բժշկեց» անոնց, որոնք բժշկուեցան՝ այսինքն այս անձերը ընդունակ էին:

Քրիստոսի մեր մէջ լրիւ ի յայտ գալը՝ տիեզերական այդ զօրութեան հոսանքին մեր մէջ յաւելեալ հոսքը, կ'իրականանայ մեր արտօնութեամբ: Որպէսզի այս պատահի, պարտաւոր ենք մի առ մի չէզոքացնել այն արգելքները, որոնք կ'ընդիմադրեն այդ զօրութեան հոսքին: Այնպէս ինչպէս ելեկտրական շրջանցքի մը (electrical circuit) ընդդիմադրութիւնները (resistors)

Ելեկտրական հոսանքին հոսելուն արգելք կը հանդիսանան եւ անոր վոլթական քանակը (voltage) կը պակսեցնեն: Նմանապէս, մեր մէջ հոսող Ս. Հոգիի զօրութեան հոսանքը կը հանդիպի ընդդիմադրութեան՝ արգելակներու: Ասոնք եօթը մահացու մեղքերն են՝ յօրինուած մեր «Ես»-էն: Հոսանքը կը տկարանայ, որով Աստուածային այդ զօրութիւնը լրիւ ի յայտ չի գար մեր մէջ: Նկատելով որ այդ զօրութեան արտայայտութիւնը Քրիստոսն է, ուրեմն Քրիստոս լրիւ ի յայտ չի գար մեր մէջ:

Պատարագի ընթացքին, վերաբերումին, սարկաւազը կ'ըսէ.

«Համբարձել իշխանի զտրուան յեր 'ի վեր,
 Համբարձցի զտրուանի յաւիտենից եւ մտցել
 թագաւոր փառաց»

«Իշխաններ վեր բարձրացուցք ձեր դռները, որ յաւիտենականութեան բարձրացած դռներէն փառքի թագաւորը ներս մտնէ»

որուն կը փոխադարձէ պատարագիչը.

«Ով է սա թագաւոր փառաց, Տէր Հօր
 զօրութեամբ իրով, Տէր կարող 'ի
 պատերազմի:»

«Ով է այս փառքի թագաւորը՝ որ իր զօրութեամբ Հօր է եւ Տէր՝ որ պատերազմի մէջ կարող:»

Ասիկա մեզի անդրադարձ մըն է եւ հրակէր, որպէսզի այս զօրութիւնը մեր մէջ հոսի: Մեզի պարտ է պատրաստ ըլլալ: Ասոնք, որոնք պատրաստ չեն, սարկաւազը զանոնք կը զգուշացնէ հեռու մնալ.

«Մի՛ ո՛վ յերախայից, մի՛ ո՛վ 'ի թերահասարկաց
 րից եւ մի՛ ո՛վ յապաշխարողաց եւ յանմատ-

բից մեր Յէսայի յասորոսածային խորհոսորդս» :
Կարդանք հետեւեալ համարները .

«Վասն այտորիկ ասեմ յեւ. ամենայն մեղէ
եւ Ըայհոյոսութիւնէ ըողցին մարդկան, Բայց
յհոգոսն Ըայհոյոսութիւն մի ըողցի : Եւ որ
ոչ ասիցէ Բան զորդոս մարդոյ՝ ըողցի
նմա . Բայց որ զհոգոսն սրբոյ ասիցէ՝ մի
ըողցի նմա, մի յայսմ աշխարհի, եւ մի՛ ի
Ըանդեր յէլոսմն : » (Մարբէոս ԺԲ : 31-32)

«Անոր համար ձեզի կ'ըսեմ . «Ամէն մեղք եւ
Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ
Հոգիին դէմ եղած Հայհոյութիւնը պիտի չներուի
մարդոց» : Եւ ով որ Որդի մարդոց դէմ բան ըսէ, պիտի
ներուի անոր, բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ ըսէ,
պիտի չներուի անոր, ո՛չ այս աշխարհին մէջ եւ ոչ
գալու աշխարհին մէջ :»

«Ըմէն ասեմ յեւ, զի ամենայն ըողցի
որդոս մարդկան մեղէ՝ եւ Ըայհոյոս-
ութիւնէ՝ որչափ եւ Ըայհոյեացեն, Բայց որ
Ըայհոյեացէ զհոգին սոսրբ, ոչ ունիցի
ըողոսութիւն յասիցեան, այլ պարտապան ը-
ցի յասիցեանիցն մեղաց : » (Մարկոս Գ : 28-29)

«Ձմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ «Ամէն մեղք պիտի
ներուի մարդոց որդիներուն եւ Հայհոյութիւնները՝
որչափ որ Հայհոյեն . Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ
Հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չուենայ, հապա
յաւիտեանական դատաստանին պարտաւոր պիտի ըլլայ :»

«Եւ ամենայն որ ասէ Բան զորդոս մար-
դոյ, ըողցի նմա . Բայց որ զհոգին սոսրբ

Հայհոյիցէ, մի ըողջի նմա : (Ղուկաս ԺԲ:10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր:»

Ի՞նչը մեղք է եւ հայոյանք Սուրբ Հոգիին դէմ եւ ինչո՞ւ ներելի չէ:

Ամբողջական բնագիտութիւնը (*quantum physics*) ցոյց կու տայ, թէ բոլոր ստեղծագործութիւնը ի յայտ եկած է այդ զօրութեան պատճառով: Այդ զօրութեան հոսանքին որեւէ արգելք, արգելք կը հանդիսանայ նաեւ անոր ներգործութեան: Ուրեմն այնքան ատեն որ մենք զմեզ այդ զօրութեան ընդունակ անօթներ ըլլալու չենք պատրաստեր, հայհոյած՝ նախատած կ'ըլլանք այդ զօրութեան: Ան միշտ եւ առատօրէն կը հոսի տիեզերքի մէջ: Ձրի է բոլոր անոնց, որոնք ընդունակ են: Այդ զօրութենէն չօգտուելու կորուստը յաւիտեան մեզի հետ կը մնայ: Ժամանակի դրութեան մէջ ըլլալով այդ առիթները փախցուցած կ'ըլլանք, եւ այս է ամենամեծ աններելի մեղքը «որ լոյսը աշխարհ եկաւ եւ մարդիկ նախընտրեցին խաւարը»:

«Ողորմեա ինչ Լսոյո-աթ, ըսոյ մեծի ողորմութեան խո-մ, ըսոյ բազում Գրո-թեան խո-մ, խա-եա պանօրէնութի-նա իմ»





«Մի Հպարդօրէնար առ-աջի Բաճաւորի,
 Է- մի 'ի Կեղեկ» մեծամեծաց մարտիրո-
 զի լաւ- իցե իեզ' Բե ասիցե ու-
 'ի վեր առ իս մարտիր, . . .»

(Լուսակոյ ԻԵ:6-7)

«Թաճաւորին առ-ջե- մի պարճիր,
 Ե- մեծերո-ն Կեղը մի կենար-
 Վասն զի աղեկ է որ իեզի ըսեն Բե
 Հոս ելիր, . . .»

ԻՆՉ Է ԱՂՕԹՔԸ

Աղեքսանտրիոյ աստուածաբաններէն Կղեմէս ըսած է, թէ «Աղօթքը Աստուծոյ հետ խօսակցութիւն» է:

Աշխարհի բոլոր կրօնքները կը յանձնարարեն աղօթել եւ աղօթքը գոյութիւն ունի ամէն քաղաքակրթութեան եւ բոլոր մշակոյթներու մէջ, որով աղօթքը համայն մարդկութեան համար անհրաժեշտութիւն մըն է: Աղօթքը բնագրական է:

Ըստ բարեշրջման օրէնքին լաւը, օգտակարը եւ որոշ առաւելութիւն մը յատկացնողը կը գոյատեւէ եւ կ'աճի. իսկ տկարը, անօգուտը եւ որոշ առաւելութիւն մը չունեցողը կ'անհետանայ: Աղօթքը մարդու ստեղծագործութենէն ի վեր գոյութիւն ունի, որով պէտք է ըլլայ լաւ, օգտակար եւ պարզեւէ որոշ առաւելութիւն, որ կրնայ օգնել մարդու գոյատեւման:

Աղօթքը կրնայ ըլլալ հաւաքական կամ անհատական մեկուսի:

Հաւաքական աղօթքները կը կատարուին, եկեղեցւոյ մէջ, բոլոր հաւատացեալներու մասնակցութեամբ կամ ընտանեկան / ընկերային յարկերու տակ՝ ներկաներու մասնակցութեամբ:

Հաւաքական աղօթքին նպատակն է.

ա - Մեզի ցոյց տալ հոգեւոր ճամբորդութեան ճանապարհը.

բ - Դասակարգերու մէջ հաւասարութիւն ստեղծել

Եկեղեցւոյ մէջ, Աստուծոյ առջեւ, հաւասարապէս կը խոնարհին աղքատն ու հարուստը, ուսեալը եւ անուսը, իմաստունն ու տխմարը, թագաւորը եւ ծառան:

Իսկական աղօթքը պէտք է ըլլայ անհատական, մասնակի, ներքին, սրտաբուխ եւ իր նպատակով՝

վճռական: Ճշմարիտ աղօթքը պէտք է նմանի առեւտուրի ցանկի մը, կամ շուկայ գացող մարդու պատրաստած գնումներու ցանկին: Աստուած գերմարդկային կարողութիւններով զօրութիւն մըն է, բայց ենթակայէն անջատ գերմարդկային կարողութիւններով անհատ մը է, որ պատրաստ կը սպասէ անոր ինդրանքներուն, որպէսզի ըստ անոր եւ, ինչու է, նաեւ ըստ իր քմահաճոյքին զայն գոհացնէ. «Հիւանդ եմ բժշկէ զիս, հոգ է թէ բժիշկին ըսածները չեմ կատարեր, բայց Քեզի կ'ապաւինիմ», «Զաւակս առողջ ծնի, հոգ է թէ յղութեանս չըջանին ինքզինքս լաւ չեմ ինամած», «Երբ տունէն բացակայ ըլլամ տունս գողերէն պաշտպանէ, հոգ է թէ դռները եւ պատուհանները չեմ կղպած», «Գործիս մէջ ինծի յաջողութիւն պարգեւէ, հոգ է թէ ես լաւ չեմ աշխատիր», «Քննութիւններս լաւ նիշերով պսակուին, հոգ է թէ դասերս չեմ սորված» ...: Աստուած անձնական բժիշկ, ոստիկան եւայլն ... է: Եթէ նպատակը փափաքներու ցանկ մը ներկայացնել է, աւելի յարմար կ'ըլլայ զայն ներկայացնել Ալաատտինի մոգական լապտերէն ելլող դիւթին՝ ճինին: Նոյնիսկ ան միայն երեք փափաքի գոհացում կու տայ: Յիսուս լերան քարոզին մէջ պատուիրեց շատախօս չըլլալ աղօթքի ատեն եւ զգուշացուց որ աղօթքները երկար չըլլան:

«Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինիցիս որպէս կէղծաւորէն. պի սիրեն 'ի ժողովորդս եւ յանկիւնս Ըրասպարակաց կալ յաղօթս, որպէս պի երեւեսցին մարդկան: Ամէն ասեմ յէպ' այն իսկ են վարձի նոցա: Այլ որո յորժամ կայցես յաղօթս, մոտո 'ի

աննեանկ ին՝ է- փակեա պտու-րս ին, է- կայ
 յաղօթս աս- Հայր ին ՚ի թաթու-կ. է- Հայրն
 ին որ քեաննէ ՚ի թաթու-կ, Հայրու-սցէ ինչ
 յայրնապէս: Ե- յորժամ կայցէ՛ յաղօթս,
 մի շարխօսի՛ լինի՛ի իճրէ- պէ-Բաննոսան. պի
 Համարին թէ ՚ի Բապու-մ խօսից ի-րեանց
 լսէ՛լի լինիցին: Լ-րդ՝ մի նմանիցէ՛ նոցա-
 պի Գրիգէ Հայրն Յեր պինչ պիտոյ է Յեւ,
 մինչէ- Յեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ:
 Ե- արդ այսպէս կայցէ՛ դու-՛ յաղօթս-
 Հայր մեր որ յերկինս: սուրճ էղիցի անու-ն
 ին: Եկեացէ արժայո-թի-ն ին: Եղիցին կամ՛ի
 ին որպէս յերկինս է- յերկրի: պՀաց մեր
 Հանապապորդ՝ քու-ր մեւ այսօր: է- Թող
 մեւ պարարիս մեր, որպէս է- մե՛ի Թողու-մ՛ի
 մերոց պարարանաց: է- մի քանիք պմեւ
 ՚ի փորձո-թի-ն: այլ փակեա պմեւ ՚ի շարէն:
 պի ին է արժայո-թի-ն է- պօրո-թի-ն է-
 փառ-՛ի յա-իքեանս ամէն: (Մարթէոս 9:5-13)
 «Ու երբոր աղօթք կ'ընես, կեղծաւորներուն նման մի
 ըլլար, որոնք կը սիրեն ժողովարաններուն մէջ ու
 Հրապարակներուն անկիւնները կայնելով աղօթք ընել,
 որպէս զի մարդոց երեւանս. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
 Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: Իսկ դուն երբ
 աղօթք կ'ընես, մտիւ քու ներքին սենեակդ ու դուռդ
 գոցէ եւ աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը
 գտնուի եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի
 յայտնապէս Հատուցում պիտի ընէ: Երբ աղօթք կ'ընէք,

Հեթանոսներուն պէս շատախօս մի՛ ըլլաք, վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին: Ուրեմն անոնց մի՛ նմանիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած: Ուստի այսպէս աղօթք ըրէք դուք: «Ով Հայր մեր որ երկիրքն ես, քու անունդ սուրբ ըլլայ: Քու թագաւորութիւնդ գայ: Քու կամքդ ըլլայ ինչպէս երկիրքը՝ նոյնպէս երկրի վրայ: Մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի սուր, Մեզի ներք մեր պարտքերը ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն: Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ: քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

(Տէրունական աղօթքի մեկնաբանութեան համար տեսնել այս գրութեան վերջի մասը)

Սրտանց եղած աղօթքը մեզ կը միացնէ Աստուծոյ՝ մեր ճշմարիտ էութեան: Աղօթքը պէտք է ըլլայ ոչ թէ արտաքին կացութիւնները՝ դժուարութիւնները փոխելու համար, այլ՝ ստանալու այն զօրութիւնը, որով կարենանք դիմադրել եւ հանդուրժել այն բոլորին, որոնց կ'ենթարկուինք: Աստուծոյ շնորհքները եւ զօրութիւնը՝ Ս. Հոգին, անդադար եւ առատօրէն կը տեղայ բոլորին վրայ: Արտաքին բաներու համար Աստուծմէ որեւէ խնդրանք ոչ թէ սխալ է, այլ նոյնիսկ անարգանք՝ Աստուծոյ: Ճիշդ այս պատճառով ալ Ս. Հոգիի դէմ եղած մեղքը աններելի է: Անկեղծ աղօթքը մեզ կը փոխէ Ս. Հոգիի զօրութեան ընդունակ անօթներ ըլլալու: Երբ մենք կը փոխուինք, կը փոխուի նաեւ մեր շրջակայքը եւ նոյն չափով ալ՝ աշխարհը: Աշխարհը կը գտնուի «միջոցի» եւ «ժամանակի» դրութեան մէջ, հետեւաբար ենթակայ է փոփոխութեան եւ անտեւականութեան (impermanence): Փոփոխութիւնը իր հետ կը բերէ դժբախտութիւն: Մարդ արարած կը ձգտի միշտ անփոփոխելիին, մնայունին եւ տեւականութեան: Միակ տեւականը յաւիտենականութիւնն է, որ է միջոցի եւ ժամանակի դրութենէ դուրս ըլլալ: Միակ անփոփոխելին եւ յաւիտենականը

Աստուած է: Աղօթքն ալ այն հոգեկան սանդուխը կամ կամուրջն է, որ մեզ կը կապէ այդ անփոփոխելի յաւիտենականութեան՝ Աստուծոյ: Ճշմարիտ աղօթքը Աստուծոյ միանալու տենչանք մըն է, Զայն տեսնել ամենուրեք՝ ամէն անձի, ամէն բանի մէջ եւ հարկաւ, նաեւ մեր մէջ:

Հոգեւոր ճամբորդութեան ընթացքին, անձին հասած հոգեւոր մակարդակին համեմատ, կը փոխուի նաեւ աղօթքին բովանդակութիւնը: Դպրոցը, նախա-կըրթարանի առաջին դասարանի թուաբանութեան մակարդակը պարզ գումարում եւ հանում է: Բայց, համալսարանի բարձրաստիճան թուաբանութիւնը կը յայտնաբերէ բնագիտութեան ամենաբարդ իրողութիւնները: « $E = mc^2$ » պարզ հաւասարութիւնը կը ներկայացնէ հսկայական բնագիտական իրողութիւններ: Այս պարզ հաւասարութիւնը տարիներու աշխատանք եւ բազմաթիւ բարդ թուաբանական գործողութիւններու, լուծումներու հետեւանք ի յայտ եկած է: Այս երկուքն ալ թուաբանութիւն են: Աղօթքն ալ, նմանապէս, կրնայ ըլլալ փափաքներու ցանկ մը անոնց համար, որոնք հոգեկան դպրոցին մէջ տակաւին նախակրթարանի առաջին դասարանն են: Աղօթքը նաեւ կրնայ ըլլալ անձայն, շատ պարզ՝ հայեացք մը, նայուածք մը, կեցուածք մը: Աղօթքը, որպէսզի այդ պարզութեան հասնի, յարատեւ եւ երկարատեւ աշխատանքի կը կարօտի՝ աղօթողին կողմէ:

Այս հոգեկան դպրոցի դասարաններն ալ, նման թուաբանութեան, ունին զանազան մակարդակի աղօթքներ:

ա- Խնդրանք՝ կեանքի հանգիստի համար աշխարհիկ օրհնութիւններ.

բ- Խնդրանք՝ Փիզիքական եւ մտային առողջութեան համար.

դ- Խնդրանք՝ մեղքերու թողութեան եւ մահէ յետոյ երկինք երթալու.

դ- Խնդրանք՝ բարոյական եւ հոգեկան արժէքներ ստանալու.

ե- Աղօթք «Մաքուր սիրտ» կերտելու համար եւ սէր դէպի Աստուած.

զ- Աստուած տեսնելու փափաք.

Աղօթքը սիրոյ զբօսանքն է: Հոս յարմար է մէջբերել Կ. Պոլսոյ պատրիարքներէն երջանկա- յիշատակ Շնորհք Արք. Գալուստեանի թարգմանած «Աստուծոյ կանչը» գիրքին Մայիս 31ի մասը.

«Լսէ, Ես կը պատասխանեմ: Աւելի ժամանակ յատկացուր աղօթքի: Աղօթքը շատ տեսակներ ունի, սակայն ինչ տեսակ ալ ըլլայ, աղօթքը օղակն է որ Հոգին, միտքը եւ սիրտը կը կապէ Աստուծոյ: Այնպէս որ, եթէ աղօթքը հաւատքի հայեացք մըն է, Սիրոյ նայուածք մը կամ բառ մըն է, կամ պարզ վստահութեան կեցուածք մըն է, եթէ որեւէ աղերսանք ալ չպարունակէ իր մէջ, այսուհանդերձ անհրաժեշտ ամէն ինչ կը հայթայթուի ու կ'ապահովուի աղօթողին: Որովհետեւ Հոգին, որ օղակուած է Աստուծոյ, միացած է Անոր Հետ, կ'ընդունի Անոր միջոցաւ ամէն բան: Հոգին ալ, երբ մարդկային կերպարանքի մէջ է, պետք ունի այն բաներու, որոնք կը պատկանին իր բնակարանին- մարմինին:»

Աղօթքը կարելի է բաժնել զանազան մասերու:

ա:-Երկրպագութիւն

բ:-Աղերսանք

գ:-Փառաբանութիւն

դ:-Հաւատք

է:-Անձնատուութիւն

զ:-Օրհնութիւն

է:-Խոկում՝ ներհայեցողութիւն

ւ:- **ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ.**

Երկրպագութիւնը աղօթքին մաս կը կազմէ եւ ցոյց կուտայ խոնարհութիւն եւ հեզութիւն:

«Երկիր-ը Տէարն խրատ է- իմաստութիւն-ն.

է- սկիզբն փառաց պատասխանի արասցէ

մնա : » (Լուսնաց ժ:33)

«Տէրօջը վախը իմատութեան խրատն է Ու վառքին առջեւէն խոնարհութիւնը կ'երթայ:»

Ճշմարիտ աղօթքին ամենամեծ արդեւքներէն մին ալ իմացական հպարտութիւնն է: Այդ պատճառով ալ կը յանձնարարուի, որ անձը որքան բարձրանայ, նոյն չափով ալ ինքզինք խոնարհեցնէ, որպէսզի ստանայ Տիրոջ շնորհքները:

Որչափ 'ի մեծութիւն Լասանիցեա՝ 'ի

խոնարհութեան կալ պանծն շո. է- առաջի

Տէարն Գրոցեա շնորհա : » (Լուսնաց ժ:9:3)

Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքներուն ընթացքին ժողովուրդին քանիցս կը տրուի «Աստուծոյ երկրպագեսցուք» հրահանգը: Անցեալին, եկեղեցւոյ մէջ կը տեսնուէր բազմաթիւ անձեր, որոնք ծունկի եկած, իրենց ճակատը մինչեւ գետին դպցնելով, երկրպագութիւն կ'ընէին՝ տրուած իւրաքանչիւր հրահանգով: Այսօր, եկեղեցւոյ մէջ չի տեսնուիր նոյնիսկ մէկ անձ, որ նման ձեւով երկրպագէ: Շատ քիչ անձեր իրենց մէջքը գոնէ թեթեւ մը կը ծռեն: Կը թուի, թէ մեր նախնիքները աւելի խոնարհ էին եւ հեզ, քան թէ՛ մենք: Ճիշդ է, թէ ճշմարիտ երկրպագութիւնը Փիզիքականը չէ, այլ՝ մտայինը: Սակայն պէտք է

մոռցուի նաեւ, թէ արտաքինը ներքինին ցոլացումն է՝ Փրիզի քաղաքը մտայինին դրսերեւումն է: Ինչ որ միտքը կը խորհի, մարմինը այդ կը գործէ: Հարցը միթէ նոյնը չէ՞ր Յիսուսի օրով ալ: Հրեաները տաճարը դարձուցած էին առեւտուրի վայր՝ շուկայի: Յիսուս ալ, խարազանը ի ձեռին, վաճառողները դուրս վռնտեց: Այս օրինակն ալ ցոյց կու տայ, թէ արտաքինը ներքինին ցոլացումն է: Ապականած միտքերու հետեւանք, իրենց գործերն ալ ապականած էին: Այդ ապականած գործերով ալ պղծած էին տաճարը:

Ս. Գրքի մէջ գրուած տաճարի պղծման պատմութիւնը՝ արտաքինին ներքինին ցոլացման պարագան, կարելի է այլաբանական ձեւով ալ մեկնաբանել: Ըստ Աւետարանի մարդիկ Աստուծոյ տաճարներ են, որով վերելի օրինակին մէջ, տաճարը կը ներկայացնէ մարդը, իսկ Յիսուսի խարազանով գալը՝ Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ: Վաճառականներն ալ, մէկէ աւելի՝ կը ներկայացնեն խորհուրդներուն ողորումը: Իսկ քահանայապետն ալ, որ անոնց արտօնած է, շատ հաւանաբար՝ «Ես»-ը: Երբ Քրիստոս ի յայտ կու գայ անձին մէջ, իր ներկայութիւնը կը գերիշխէ «Ես»-ին եւ կը վանէ խորհուրդներու ողորումը, վերասրբացնելով անձը (մաքուր սիրտ):

բ:- Աղերսւսք.

Ինչպէս վերելի տողերուն մէջ կ'անդրադարձուի, աղերսանքը Աստուծոյ ներկայացուած բաղձանքներու ցանկ մը պէտք չէ ըլլայ: Աստուած գիտէ, թէ անհատը ինչի պէտք ունի: Անձը, տարուած «Ես»-էն, հազարումէկ բան կը խնդրէ, հոգ չէ թէ իր ուզածները ըլլան իրեն օգտակար կամ ոչ: Աստուած ամենուն տուած է այն, ինչ որ օգտակար է: Այս տեսակի աղերսական աղօթքն ալ ունի իր օգուտը՝ գոնէ

ենթակային կը յիշեցնէ Աստուծոյ գերիշխանութիւնը: Ան կրնայ ունենալ նաեւ իր վնասը: Երբ տգէտին (ignorant), իր անտեղի ուզածները չպարգեւուին, ան կրնայ յուսախաբ ըլլալ, եւ այդ կրնայ պատճառ ըլլալ, որ ան անհաւատ դառնայ: Աստուծոյ համար ընդունելի աղերսանքը հաւատքի, յոյսի եւ սիրոյ խնդրանքն է, որպէսզի անձը, զինուած այս երեքով, կարենայ յաղթել իր «Ես»-ին: Այսպէսով աղերսանքը կ'ըլլայ սկիզբը իր հաւատքին, իր սիրոյն, իր յոյսին եւ իր աստուածապաշտութեան: Երբ աղերսանքը սրտանց ըլլայ, կը շարժէ Աստուծոյ ողորմութիւնը: Կ'ըսուի թէ, երբ բարեպաշտ անձ մը եթէ մէկ քայլ առնէ դէպի Աստուած, Աստուած ալ, ի փոխարէն, հինգ քայլ կ'առնէ դէպի այդ անձը:

«Սիրոյ առն խորհեացի պիրսոննս, պի
յԼսոյո՞ւնոյ ուղղեացին Գնացի նորա:»
(Լուսակայ Ժ.Գ: 9)

«Մարդուն սիրտը իր ճամբան կը հնարէ, Բայց Տէրը կ'ուղղէ անոր քայլերը:»

գ:- ՓԱՌՔԱՆՈՒԹԻՒՆ.

Աստուած փառաբանել պէտք է աղօթքին մաս կազմէ: Փառաբանութիւնը շնորհակալութեան արտայայտութիւն մըն է Աստուծոյ տուած շնորհքին՝ այս ապրուած կեանքին եւ անձին ունեցած գիտակցութեանը (consciousness), որ է Աստուծոյ գիտակցութիւնը, ինչ որ կը լուսաւորէ բոլորը: Աստուած ինք փառաբանութեան պէտք չունի, այլ անձը պէտք ունի Աստուած փառաբանելու: Երբ անձը Աստուած կը փառաբանէ կը հռչակէ նաեւ Անոր գերիշխանութիւնը: Աս կը նշանակէ թէ նուազած է իր «Ես»-ին ազդեցութիւնը, դիւրացնելով ձերբազատումը անոր ճիրաններէն:

«Սաբաակէս զամոյարիշրոս յերեասց
 Թափառորի. եւ ուղղեացի արդարո՞թեամբ
 աթոռ նորոս : » (Լուսկաց ԻԵ : 5)

«Վերցուր թագաւորին առջեւէն ամբարիշտը Ու անոր
 աթոռը արդարութեամբ կը հաստատուի:»

Աս ալ իր կարգին կը դիւրացնէ անձնատուութիւնը
 (surrender):

դ:- ՀԱՄԱՔ.

Ինչպէս եկեղեցին ունի իր հաւատքի
 պաշտօնական դաւանանքը՝ «Հաւատամք»-ը, որ
 համայնքը կը կրկնէ ամէն պատարագի, նոյնպէս ալ
 անձը իր աղօթքներուն մէջ պարտ է դաւանի իր
 հաւատքը՝ իր Աստուծոյ հետ ունեցած փոխյարաբերու-
 թիւնը, այսինքն Անոր գերիշխանութիւնը եւ իր
 ծառայ ըլլալու հանգամանքը: Գործքերը յառաջ կու
 գան իղձերէն: Իղձերը յառաջ կու գան համոզում-
 ներէն (beliefs): Համոզումները ընդհանուր առմամբ կը
 կազմուին աշխարհիկ տուեալներու վրայով,
 հետեւաբար՝ խախտելի են: Այս տուեալները անձը կը
 ստանայ «Ես»-ին կառավարած միտքով եւ զգայա-
 րանքներու միջոցաւ: Հաւատքը (faith) կը ծագի
 փորձառութեամբ ստացուած գիտութենէ եւ անխախ-
 տելի է: Նման հաւատքի տէր անձը կ'ըլլայ քաջ եւ
 անվախ:

«Ես»-ին խաբեբայութիւններուն հետեւանքով
 յաղթանակը կ'երեւի որպէս «Ես»-ին ընկերը եւ
 երկչոտութիւնը ինքզինք կը ներկայացնէ իբր
 հեզութիւն, արգելք հանդիսանալով հոգեւոր ճանա-
 պարհին մէջ յառաջացման: Այն անձը որ իր միտքով
 կը ծառայէ իր զգայարանքներուն եւ իղձերուն, չի
 կրնար Աստուծոյ ծառայել:

«Ոչ ո՛վ կարէ երկուց ցիւրանց թառայել . կամ զմե՛ն ասորիցէ եւ զմե՛նան սիրիցէ՞ կամ զմե՛ն մեծարիցէ՛ եւ զմե՛նան արհամարիցէ . ոչ կարէ՛լ Լսորո՛ւթոյ թառայել եւ մամոնայի : » (Մատթէոսի .9 :24)

«Մարդ մը չի կրնար երկու տիրոջ ծառայութիւն ընել . վասն զի կա՛մ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի՛ եւ միւսը պիտի արհամարէ . չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնային :»

Այն անձը, որ իր հաւատքի գորութեամբ իր զգացումներուն եւ իղձերուն կը տիրապետէ, կրնայ Աստուծոյ ծառայ դառնալ:

Ե:- **ԱՆՁԱՏՏՈՒԹԻՒՆ (surrender).**

Ինչպէս գիտենք կեանքի կառապանը «Ես»-ն է: Անձնատուութիւն կամ յանձնուիլ, կը նշանակէ կեանքին սանձերը «Ես»-էն առնել եւ տալ իսկական էութեան՝ Քրիստոսի:

«Դարչո՞ւ աս Տեարն զԳործս ի՞նչ . եւ Հասարացիսցին խորհուրդով ի՞նչ . . . » (Լուսկայ Ժ9 :3)

«Քու գործերդ Տէրոջը յանձնէ եւ քու խորհուրդներդ պիտի հաստատուին :»

Ի՞նչ է աղօթքին դերը ասոր մէջ: Աղօթքի գլխաւոր դրդապատճառներէն մին վախը եւ յուսահատութիւնն է: Դժուարին կացութեան մը պարագային, նոյնիսկ ինքզինք «անաստուած» համարող անձը, զարմանալիօրէն, կը սկսի աղօթել: Սա ցոյց կուտայ «Ես»-ին անձին օգնելու անկարողութիւնը եւ անձն ալ, անդրադառնալով այս իրողութեան, օգնութեան համար կը դիմէ Աստուծոյ: Հետեւաբար, անձին մտքին մէջ կը նուաստանայ «Ես»-ին բռնապետութիւնը եւ աս ինքնին Աստուծոյ գորութեան ճամբան կը բանայ: Այդ գորութիւնը իր ազդեցութեամբ կը վանէ

վախը եւ յուսահատութիւնը ու անձը դիւրութեամբ կը հանդուրժէ այդ դժուարին կացութեան: Ճիշդ այս պատճառով ալ կեանքի դժուարին եւ տաժանելի պահերը աւելի օգտակար են այս ճամբորդութեան, քան թէ հանգիստ պահերը:

«Զի զոր «իբէ Տէր՝ Խրաբէ Կանջէ զամէ-

նայն որդի զոր ընդունի:» (Լուսկայ Գ:12)

«Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ, ինչպէս հայր մը իր սիրական գաւակին կ'ընէ:»

Անոնք կ'օգնեն նուաստացնելու «Յս»-ը, որպէսզի ի յայտ գայ Քրիստոսի լոյսը, եթէ, անշուշտ, անձը ունենայ այդ արթնութիւնը եւ գիտակցութիւնը: Իսկ եթէ անձը քունի մէջ է (ստուերս մահու) չօգտագործեր առիթը: Գալիլեայի ծովուն վրայ Յիսուսի աշակերտները փոթորիկի բռնուեցան: Ի՞նչ պիտի ըլլար անոնց վախճանը, եթէ նաևուն մէջ քնացող Յիսուսը չարթնցնէին: Հովերը եւ ալիքները պիտի չդադրէին եւ նաևը, հաւանաբար, պիտի ընկղմէր: Անոնք գիտցան պատշաճ՝ դժուար պահուն աղօթել՝ Յիսուսը արթնցնել:

Չ:- **Օրհնութիւն.**

Աղօթողը պարտ է օրհնութիւն սփռել ամենուն վրայ՝ ընտանեկան անդամներու, բարեկամներու, նաեւ թշնամիներու: Բարեպաշտը, այն չափով որ անկեղծ օրհնութիւն կը բաղձայ ուրիշներուն, նոյն չափով ալ օրհնութիւն կը ստանայ Աստուծմէ: Այս տեսակի աղօթքը կրնայ օգտակար ըլլալ նոյնիսկ աղօթողէն հեռու գտնուող անձերուն: Ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) ցոյց տուած է, թէ երբ ելեկտրոն մը փոփոխութեան ենթարկուի, անցեալին մէջ անոր զոյգը եղած էլեկտրոնը, եթէ նոյնիսկ տիեզերքի միւս կողմն ալ գտնուի, միանգամայն կը փոխուի: Աս կը պատահի առանց անոնց միջեւ որեւէ յարաբերութեան: Կը թուի թէ էլեկտրոնները ամբողջութեան՝ մէկու-

Թեան նկատմամբ մարդոցմէ աւելի գիտակցութիւն ունին: Այս գիտակցութիւնն է ամենաբարձրագոյն աղօթքը: Ուրեմն կը թուի, թէ բոլոր տիեզերքը ինք շարունակական աղօթք մըն է: Ելեկարոններու փորձը ցոյց կուտայ թէ խորհուրդները իրենց ազդեցութիւնները կրնան ունենալ նոյնիսկ հեռու գտնուող անձերու վրայ: Ամէն խորհուրդ ի պատշաճի կը սփռէ, որոշ թրթռացումով ալիքներ:

«Սակայն է- 'ի մորի շո-մ մի անիծաներ
Խաչա-որի, է- 'ի շտեմարանս «եներկաց շոց
մի անիծաներ մեծի. զի Խո-շո-նէ էրկնից
Ըսասո-ցանէն զբարբա- շո, է- որոց Խե-ձ
Էն պարմէն զբան շո:» (Ժողովոյ Ժ: 20)

«Միտքիդ մէջ անգամ թագաւորին անէծք մի՛ տար եւ քու ննջարանիդ մէջ մեծերուն անէծք մի՛ տար. Վասն գի երկնքի թռչունը այդ ձայնը կը տանի Ու թեւաւորը խօսքը կը պատմէ:»

Ձայնը տանող երկինքի թռչունը խորհուրդներու ալիքային սփռումն է:

Հետեւեալը, սրտանց աղօթքի եւ աղօթքին ուրիշ անձի վրայ ունեցած ազդեցութեան մէկ օրինակն է, որ մայրս, որպէս իր կեանքէն դրուագ մը, ինծի պատմած էր: Մայրս տասնըմէկ տարեկանին, իր այրի մօր եւ պատիկ քրոջը հետ, 1915-ին, տեղահան եղած է եւ աքսորուած: Զինուորներ եկած եւ լուր տուած են որպէսզի յաջորդ օր շոքեկառքի կայանը հաւաքուին եւ հետերնին առնեն միայն այն ինչ որ իրենք կրնան կրել: Կացութիւնը նոյնն է նաեւ քաղաքի բոլոր հայերուն համար: Իրենց դրացիներէն մին ունէր տարիքոտ մայր մը, որ կաթուածահար, մի քանի տարիէ ի վեր անկողնոյ կը ծառայէր, սակայն մահացու վիճակ չունէր: Դրացին չէր գիտեր ինչ ըներ: Չէր կրնար

մայրը հետը տանիլ, չէր ալ կրնար առանձին ձգել, քանի որ ան խնամքի կը կարօտէր: Ճարահատ, բոլոր դրացիները, ներառեալ մեծ մայրս եւ մայրս, կը հաւաքուին հիւանդին անկողնին շուրջ եւ ծնկաչոք կ'աղօթեն՝ պարզապէս երգելով «Տէր Ողորմեա»-ն:

Հիւանդին առողջութիւնը մէկ ժամ յետոյ յանկարծ կը վատթարանայ եւ հիւանդը կը մեռնի: Անմիջապէս իրենց թաղին քահանան կը կանչեն, հիւանդը կը թաղեն եւ յաջորդ օր ալ, առանց աւելորդ մտահոգութեան, Ատաբազարէ կը մեկնին դէպի Էսկի-չէհիր: Աստուծոյ ողորմութիւնը կու գայ այնպէս ինչպէս որ օգտակար է եւ բարի: Ուրեմն կը տեսնուի, թէ աղօթքները՝ խորհուրդները ամբոխներու վրայ կրնան ազդեցութիւն գործել: Ըստ Մոնդոց ԺԸ:32 համարին, Աստուած կը հաւանի Սողոմ եւ Գոմորը չկործանել, եթէ միայն տասը արդար անձ գտնուի: Կը տեսնուի, որ խորհուրդները կարեւոր են նոյնիսկ աշխարհ կործանումէ փրկելու:

Է:- ԽՈՒՆԻԱ (ԱԵՐՀԱՅԵՅՈՂՈՒԹԻԱ).

Ներհայեցողութիւնը կը համարուի անձայն՝ լռելեայն աղօթք: Անոր նպատակն է կերտել «մաքուր սիրտ»՝ միտք մը որ ուշիմ է եւ արթուն՝ առանց խորհուրդներու ողողումի: Լերան քարոզին մէջ ալ Յիսուս կ'ըսէ.

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ էն սրտիւն, պի նո՛վա պԼասոոսա՜ր տիւսցէն»: (Մարթէոսի Ե:8)
«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Արդեօք ասկէ աւելի լաւ աղօթք մը կրնայ ըլլա՞ր: Աղօթող անձին միակ փափաքը պէտք է ըլլայ Աստուած տեսնել: Աւետարանն ալ կ'ըսէ.

«Բայց խնդրեցէ՛ք պարձայութիւն Ասոոսա-»

Զոյ. Եւ այն յաւելցի Յէզ» : (Ղուկասոս ԺԲ:31)
 «Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք եւ
 այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին»:

Երբ անձը Աստուած տեսնէ, այսինքն երբ
 Քրիստոս լրիւ ի յայտ գայ անոր մէջ, այն ատեն, անձը
 թէ՛ Աստուած փառաբանած կ'ըլլայ եւ թէ՛ Աստուծոյ
 օրհնութիւնը կը սփռէ իր շուրջը: Քանի որ Աստուած
 ալ հաւանած է այդ անձին միջոցաւ ի յայտ գալ, սա
 ինքնին ապացոյց է անձին խոնարհութեան, հաւատքին
 եւ անձնատուութեան:

Աղօթքը ձգմարտութիւնը չի փոխեր, որպէսզի
 ձգմարտութիւնը յարմարի անձին կարիքներուն, այլ
 կը փոխէ անձը, որպէսզի անձը յարմարի ձգմարտու-
 թեան: Ձգմարտ աղօթքը կը բարձրացնէ մարդկային
 գիտակցութեան մակարդակը, որով անձը կը տեսնէ
 միտութիւնը բազմաթիւին մէջ եւ կ'ըմբռնէ Անոր
 կամքը եւ կ'իւրացնէ զայն: Երբ իր կամքը կը
 նոյնանայ Աստուծոյ կամքին հետ, շատ դիւրաւ կը
 հանդուրժէ ամէն տեսակ դժուարութեանց եւ ցաւի,
 ինչպէս Յիսուս յօժարաբար հանդուրժեց խաչը եւ
 մահը: Ծննդաբերութեան ատեն Աստուծոյ կամքը
 նորածինին միջոցաւ յայտնուիլ է: Աս ալ նոյնն է մօր
 կամքին հետ, որն է ծնունդ տալ երախային: Որովհետեւ
 երկու կամքերն ալ նոյնն են, մայրը
 յօժարաբար կը հանդուրժէ ծննդաբերութեան բոլոր
 ցաւերուն եւ, հակառակ իր ցաւերուն, խնդումներես կը
 դիմաւորէ նորածինը:

«Ես»-ին բռնապետութեան հետեւանք, անձը,
 անգիտակից ձգմարտ էութեան, կը ստեղծէ չաստուած
 մը, կը դնէ զայն իրմէ դուրս՝ հեռուն եւ կ'աղօթէ
 «աստուծոյ» մը որ գոյութիւն չունի: Ձգմարտ
 աղօթքը պէտք է ըլլայ ներհայեցողութեամբ, որպէսզի,
 թէ՛ մարմինը, թէ՛ միտքը եւ թէ՛ իմացականութիւնը

դառնան հետազոտութեան աշխատանոց մը (laboratory), ուր անձը շարունակէ իր պրպտումները, որպէսզի իր մէջ ունենայ Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը: Երբ անձը Աստուած իրմէ անջատ կը տեսնէ, ուրիշներն ալ իրմէ անջատ կը տեսնէ: Սակայն Աստուած ամէն անձի մէջ է, բայց կը թուի, թէ գոնէ գիտակցականօրէն, ամէն անձ Աստուծոյ մէջ չէ:

Ճշմարտութեան յատկութիւններն են էութիւն, Գիտութիւն եւ Երանութիւն: Մարդու միտքը, «Աստուծոյ Լոյսը»՝ գիտակցութիւնը ցոլացնող միջոցն է, ինչպէս լուսինը կը ցոլացնէ արեւին լոյսը: Մարդիկ, իրենց միտքերուն որակին համաձայն, կրնան ըլլալ թոյլ՝ ծոյլ, զբաղ՝ գործունեայ կամ հանդարտ՝ մաքուր: Ծոյլ մարդը, որուն միտքը թուլցած է, ոչ իղձ ունի ոչ ալ հոգեկան յառաջացման փափաք: Ան ոեւէ մէկու բնաւ օգուտ չունի եւ ոչ ալ ինքզինքին: Չի գործեր՝ օրերը կ'անցնէ պարապի, կարծես քունի մէջ ըլլալ:

«Աստուծոյն ունի պէտանային • անչն

Գործարեաց՝ չաղցիցէ»: (Լուսնայ մԹ: 15)

«Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ եւ թոյլ մարդը անօթի կը մնայ»:

Հոս նշուած անօթին, հոգեկան հացի անօթի է եւ չունի Աստուծոյ շնորհքները: Սակայն այս անձն ալ գոյութիւն ունի, ուրեմն է փաստ «էութեան», որով Աստուծոյ մաս կը կազմէ:

Անձեր, որոնց միտքը զբաղ է, կ'ըլլան գործունեայ՝ կ'աշխատին անընդհատ: Շնորհիւ անոնց, քաղաքակրթութիւնը ունեցած է իր յառաջդիմութիւնները: Այս անձերը փաստ են, թէ՛ «էութեան» եւ թէ՛ «Գիտութեան» գոյութեան:

Այս անձերուն, նաեւ ընդհանուր առմամբ համայն մարդկութեան, կը պակսի «Երանութեան» փորձառութիւնը: Երբ անձին միտքը խորհուրդներու ողողումով

«Հարուստ» կ'ըլլայ, այդ անձին՝ հարուստ մարդուն համար, շատ դժուար կ'ըլլայ Աստուծոյ թագաւորութիւնը մտնել:

«... որպէս ղ-ժո-արա- որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարձայո-թիւն Լսորո-ժոյ: Գիւրադոյն իցէ մալխոյ ընդ շակ ասղան անցանել, խան մեծասրան յարձայո-թիւն Լսորո-ժոյ մտանել»: (Դու-կասու- ժԼ:24-25)

«Որչա՛փ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց, որ Հարստութիւն ունին: Քանզի ակելի դիւրին է, որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ Հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ»:

Կան նաեւ քիչ թիւով անձեր «սրտով մաքուր», որոնց միտքը հանդարտ է եւ կեդրոնացած միայն Աստուծոյ վրայ: Անոնք բացարձակ իշխանութիւն ունին իրենց խորհուրդներուն վրայ: Ասոնք, մեղուի պէս չեն գործեր, այլ իրենց գործքերն են միայն ամենաանհրաժեշտ արարքները: Երբեմն գործունեայ մարդիկ անգիտակցաբար եւ սխալ դատողութեամբ զիրենք ծոյլ կը համարեն: Այս անձերուն եւ ծոյլ անձերուն միջեւ մե՛ծ տարբերութիւն կայ: Ծոյլ մարդուն միտքը քնացած է, իսկ «սրտով մաքուր» մարդուն միտքը կատարելապէս արթուն, ուշիմ եւ աշխոյժ է, նոյնիսկ գործունեայ մարդուն միտքէն ալ ակելի: Ան Աստուած տեսած եւ իր միտքը Անոր վրայ կեդրոնացուցած, կ'ապրի երանութեան մէջ: Ան չի գործեր, ոչ թէ ծոյլ ըլլալուն համար, այլ որովհետեւ գիտէ թէ ամէն ինչ Աստուծամով կատարեալ է, որով գործելու պէտք չկայ: Աւետարանի մէջ ո՞ւր գրուած է, թէ Յիսուս գործի գնաց կամ աշխատեցաւ, բայց երբ անհրաժեշտ էր, թէ՛ բժշկեց եւ թէ՛ մեռելները յարուց: Այսպիսի անձեր լրիւ ի յայտ կը բերեն

Ճշմարտութիւնը, ի յայտ բերելով ոչ միայն անոր էութիւնը եւ Գիտութիւնը, այլ նաեւ Շրանութիւնը:

Այս երանութեան հասնելու համար աղօթքնեցողն նպատակը «մաքուր սիրտ» կերտել պէտք է ըլլայ: Միտքը բանալին է թէ՛ գերութեան եւ թէ՛ ազատագրութեան: Անձին կը մնայ ճշդեւ ինչպէս գործածել այդ միտքը: Կրնայ տիրապետել անոր եւ զայն կեդրոնացնել Քրիստոսի վրայ, բայց կը թուի թէ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իրենց միտքերը յանձնած են իրենց «Ես»-երուն: Ան ալ, անձնասէր եւ խաբեբայ, իր իշխանութեան շարունակութիւնը ապահովելու համար, կը ստեղծէ խորհուրդներու ողողում մը, որ զբաղ կը պահէ միտքը եւ այս խորհուրդներու «վարագոյրը» արգելք կը հանդիսանայ, որպէսզի անձը տեսնէ իր իսկական էութիւնը՝ Քրիստոս:

«Լյոբ Ըեզ՝ Բժիշկ է սրբի. ցեց ոսկերաց

սիրոյ Ըոգած»: (Լուսկայ ԺԴ:30)

«Հանդարտ սիրտը մարմնին կեանք է, Բայց նախանձը ոսկորներուն փտտութիւն է»:

Հանդարտ սիրտը Խորհուրդներէ մաքրուած միտքն է: Անձին պարտ է վերահաստատել իր իշխանութիւնը՝ իր միտքին վրայ: Անկարելի կը թուի խորհուրդներու ողողումը դադրեցնել, բայց կարելի է բացարձակապէս արթուն, ուշիմ, գիտակցաբար եւ ուշադրութեամբ հետեւիլ եւ «տեսնել» զանոնք՝ իր մտքի աչքով, առարկայականօրէն, իբր թէ խորհուրդները իրը չըլլային: Անձը պարտ է իր ուշադրութիւնը կեդրոնացնել իրարու շարունակական, սակայն տարբեր խորհուրդներու միջեւ գտնուող լուծեան կարծ ժամանակամիջոցին վրայ, ուր բնաւ խորհուրդ գոյութիւն չունի: Եթէ առանց յուսահատութեամբ յարատեւէ, ժամանակի ընթացքին կարելիութիւնը կ'ունեն-

նայ «վարագոյրին ճեղքէն» վաղանցիկօրէն նշմարել իր ճշմարիտ հուծիւնը: Երբ ուշագրուծիւնը չի կեդրոնանար իր խորհուրդներուն վրայ, անոնց ողողումը կը դադրի: Հետեւաբար «վարագոյրը» աւելի կը բացուի եւ կը տեսնէ Աստուած՝ Քրիստոս լրիւ ի յայտ կուգայ իր մէջ, որովհետեւ ան կ'ըլլայ «մաքուր սրտով»: Աստուածային շնորհքը կը պատէ անձը: Ճիշդ է թէ Աստուածային շնորհքը արդէն պատած է ամէն անձ, բայց անձը փորձառական գիտակցութիւնը կ'ունենայ այդ շնորհքին, երբ կը միանայ Աստուծոյ կը «համտեսէ» անմահութիւնը եւ այն ատեն կրնայ ըսել ես աշխարհի մէջ եմ բայց

«... ես՝ շեմ յայտմ աշխարհէ»: (Յովհաննոս Լ:23)
 «... ես այս աշխարհէն չեմ»:

Այս է ճշմարիտ անձնատուութիւնը, որ կը ծագի ճշմարիտ հասկացողութենէ, քան թէ յուսահատութենէ: Համայն մարդկութիւնը կը փնտռէ Ֆիզիքական, մտային՝ զգացական եւ իմացական անդորրութիւն եւ խաղաղութիւն: Բիւրաւոր անգամ փաստուած է, թէ «Ես»-ը անկարող է այդ ապահովութիւնը հայթայթելու: Ահա ճշմարիտ աղօթքը: Սաղմոսերգուն կը գրէ.

«Կանխեցէ՛ք եւ Ժաներո՞ւ՛ն պի ես եմ

Լսոցո՞ւս՞»: (Սաղմոսաց ԽԵ:11)

«Հանդարտ կեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ՛ ես եմ Աստուած»: (Սաղմոսաց ԽԶ:10)

Հանդարտ կենալ կը նշանակէ լուռ մնալ, գործունէութիւնները եւ խորհուրդները դադրեցնել, ինչպէս վերեւ սահմանեցինք «սրտով մաքուր» անձը:

«Եւ մի կերպարանի՛ն կերպարանօ՛ն աշխարհիս
 այսօրիկ, այլ նորոգեցարո՞ւ՛ն ՚ի նորոգո՞ւ-
 թիւն միայ յերոց, առ ՚ի լննել յեզ

պլակն, եւ եթէ պինչ են կամէն
 Ասորո-Չոյ, Բարին եւ Ըստոյն եւ
 կարարեալ» : (Հոգևայեցիս ԺԲ:2)

«Եւ մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը,
 հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէք, որպէս
 զի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու
 հաճելի եւ կատարեալ է»:

Մտքով նորոգուիլն ալ կը նշանակէ ուշադրութիւնը
 կեդրոնացնել ճշմարիտ հուծեան՝ Քրիստոսի վրայ,
 քան թէ խորհուրդներու: Խորհուրդները կը ծագին
 «Ես»-էն եւ անոր աշխարհիկ սա տա (դա) եւ նա-ի
 յարումներէն, ինչպէս նաեւ իր անցեալի փորձառու-
 թիւններէն (յիշողութիւն) եւ ապագայի արարքներէն
 (ցանկութիւն): Այս վերջին երկուքը գոյութիւն չունին,
 քանի որ ոեւէ անձ չի կրնար Ֆիզիքապէս ապրիլ ոչ
 անցեալի եւ ոչ ալ ապագայի մէջ: Մարդ արարած, իր
 կեանքի ամբողջ տեւողութեան, միայն ներկան կ'ապրի:
 Ուրեմն, ուշադրութիւնը պէտք է կեդրոնացուի միայն
 ներկային վրայ եւ ոչ թէ անցեալի արարքներուն եւ
 զղշումներուն, կամ ապագայի ակնկալութիւններուն
 վրայ: Աստուած դուրսէն ոչինչ կ'ընէ անձին, այլ ամէն
 ինչ՝ միայն անձին միջոցաւ: Ճիշդ ասոր համար
 անգլերէն առածը կ'ըսէ. «God helps those who help themselves»:
 Աստուծոյ շնորհքներուն արտայայտութիւնը չխաբա-
 նել անհատին պատասխանատուութիւնն է: Կարդանք.

«Եթէ մարտո-ցանիցեա պարարաւ ինչ 'ի
 վերայ սեղանոյ, եւ անոր յիշիցեա՝ եթէ
 եղբայր ինչ ունիցի ինչ խել պէն, Թող
 պարարաւ ինչ առաջի սեղանոյն. եւ եթէ
 նախ Ըստեաց ընդ եղբօր ինչ, եւ ապա

Եկեալ մաքու-աջիբր զպարարաբն խ» :

(Մաքրելոսի Ե:23-24)

«Ուրեմն եթէ քու ընծադ սեղանին վրայ բերես ու Հոն միտքդ դայ թէ քու եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, Հոն ձգէ ընծադ սեղանին առջեւ, գնա առաջ եղբորդ Հետ Հաշտուէ ու ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես»:

Խորան բերուած ընծան՝ նուէրը աղօթքն է: Ըստ այս համարին, ճշմարիտ աղօթքը պէտք է ըլլայ միայն «մաքուր սրտով», որովհետեւ ան որ մաքուր սիրտ ունի իր միտքը այլեւս չունենար որեւէ յարում, նախապաշարում, յոռետեսութիւն, ինքնակարեկցութիւն, քրթմնջանք, նախանձ, ատելութիւն, ցաւ ու վիշտ, սխալ հասկացողութիւն, վախ, կարօտ, որեւէ տեսակի սահմանափակում, գայրոյթ, բարկութիւն կամ դժգոհութիւն:

Աղօթքը առեւտուր մը չէ, ենթակայ սակարկութեան: Աղօթքներ կան, որոնք կը նմանին սակարկութեան. «Եթէ զաւակս այս մահացու հիւանդութենէ բժշկուի, կը խոստանամ տարի մը ամէն կիրակի եկեղեցի երթալ եւ մոմ վառել, կամ պիւտճէիս համաձայն եկեղեցիին շօշափելի գումար մը նուիրել, կամ աղքատ մանուկ մը բարոյապէս որդեգրել ու անոր ծախսերը հոգալ:» Բարեպաշտը, որ անկեղծօրէն կ'աղօթէ, պատրաստ է միայն տալու եւ ոչ՝ ուզելու: Ընտանեկան անդամներ, ընկերներ, բարեկամներ եւ թշնամիներ կու գան ու կ'երթան: Անհատը առանձին կը ծնի եւ առանձին ալ կը մեռնի, որով նախընտրելի է որ անձը, փոխան սակարկութեան, ինքզինք շրջապատէ Աստուծոյ լոյսով: Ասոր առաջին քայլը ինքնաճանաչումն է, որուն կը յաջորդէ արթնութիւնը եւ յաւելեալ գիտակցութիւնը (consciousness), ինչ որ կը յայտնաբերէ Աստուծոյ լոյսը՝ Քրիստոս:

«Լոյս Տէարն շո-նշ մարդկան, է- որ լննէ

պշտեմարանս արտի» : (Լաւակայ Ի:27)

«Մարդուն հոգին Տէրովը Լոյսն է, Սրտին բոլոր շտեմարանները կը քննէ»:

Այս ճամբորդութեան սկիզբը կը թուի դժուար ըլլալ, քանի որ աղօթողը՝ բարեպաշտը, տակաւին որեւէ փորձառութիւն չունի ու իր բռնած ընթացքին ուղիղ եւ ճշգրտութիւնը հաստատող ապացոյց կ'ուզէ: Հակառակ սկզբնային յուսախաբութիւններու յարատեւութիւնը կարեւոր է:

«Երդար ողորմի՛ է- ցայ փոխ: Զա-

կէնաց ցանկո-թի-ն Բարեաց» :

(Լաւակայ ԺԳ:12)

«Ուշացած յոյսը սիրտը կը հիւանդացնէ: Բայց փափաքին հասնելը կեանքի ծառ մըն է»:

Երբ երկարատեւ ճամբորդութենէ յետոյ, բարեպաշտը կը յաջողի չեզոքացնել այն բոլորը, որ «Ես»ը կերտած էր, կը յաջողի կերտել «մաքուր սիրտ»: Այս պահուն բարեպաշտը ինքզինք խոցելի կը զգայ: Միտքը պարպուած է, սակայն Քրիստոս տակաւին ի յայտ չէ եկած: Պարապութիւն մը կը զգայ: Աս կարեւոր է, որպէսզի Աւետարանին մէջ գրուած վերոյիշեալ միտքի փոփոխութիւնը տեղի ունենայ:

«Երիվար պարտաստի յա-ո-ր պարեապմի .

Բայց ՚ի Տէարնէ է օգնականո-թի-ն» :

(Լաւակայ ԻԼ:31)

«Զին պատերազմի համար կը պատրաստուի, Բայց փրկութիւնը Տէրովնէն է»:

Պատրաստ ձին՝ պատրաստ միտքն է, բայց Քրիստոսի ի յայտ գալը Աստուծմէ է: Իսկական աղօթքը, գործնականօրէն եւ ոչ իմացականօրէն, Քրիստոս իր գաղտնի վայրէն ի յայտ բերել է: Բարեպաշտութիւնը

Ժամանակաւոր հոգեվիճակ մը չէ, այլ մնայուն կերպով պէտք է գրաւէ անձին ամբողջ հոլթիւնը: Աս չի նշանակեր ճգնաւորի նման լեռ մեկուսանալ եւ փակ աչքերով նստիլ կեանքի տեւողութեան ընթացքին: Պարտ ենք ապրիլ մեր առօրեայ կեանքը, ապահովել մեր ապրուստը, կատարել ընտանեկան բոլոր պարտականութիւնները, զուարճանալ ընկերներու հետ..., բայց միտքը միշտ հաստատ Քրիստոսի վրայ՝ Զինք տեսնել ամենուրեք եւ ամէն անձի մէջ եւ գործել իբր թէ Քրիստոս կը գործէ մեր միջոցաւ, հետեւաբար կառչած չըլլալ մեր գործերուն արդիւնքներուն:

«Դարձ» առ Տէր զԳործս ին. Եւ Ըստ-
 րասրեացին խորհուրդի ին»: (Լուսնայ Ժ:Գ:3)
 «Քու գործերդ Տէրոջը յանձնէ եւ քու խորհուրդներդ պիտի հաստատուին»:

Ճգնաւորութիւնը, «Ես»ին դէմ յաղթանակը դիւրացնելու համար, մեկուսացման միջոց մըն է: Սակայն, մարդ կրնայ ինքզինք առանձին՝ մեկուսացած զգալ շուկայի բազմութեան մէջ, կամ ճիշդ հակառակը, լերան դագաթը, առանձինն, ինքզինք զգալ մտային բազմութեան մէջ:

Հոս յարմար է կարճ հնդկական պատմութիւն մը մէջբերել. «Ինչպէս գիտենք Հնդկաստանի մէջ շատ անձեր կան, որոնք ինքզինքնին ճգնաւոր կը համարեն: Անոնք, պարզ նարնջագոյն զգեստ մը հագուած, աղօթելով կը շրջին: Աշխարհէն քաշուած, չեն գործեր: Իրենց առօրեայ ուտելիքը կը մուրան: Ասոնցմէ մին, փողոցի մը որոշ մէկ վայրը, բոլոր օրը նստած կը խոկայ: Այնպէս կը պատահի, որ ճիշդ իր դիմացը, փողոցին միւս կողմը, ամուսինը մահացած կին մը, իր եւ իր երկու զաւակներուն ապրուստի եւ կարիք-

ներուն հոգացման հարկաւոր նիւթականը ապահովելու միակ ճարը աշխարհի ամենահին արհեստը գործելու մէջ գտած է: Ճգնաւորը, իր միտքին մէջ կը նախատէ, ամէն օր իր տան մէջ տարբեր մարդ մը ընդունող այդ կիներ, ըսելով, թէ ան մեղքի մէջ մխրճուած անվայել անձ մըն է: Ամէն օր նման խորհուրդներ իր միտքին մէջ կը կրկնուին, ականատես ըլլալով կնոջ առօրեայ արարքներուն: Կիներ, ճամբուն միւս կողմը, կը տեսնէ ճգնաւորը եւ ներքնապէս իր բախտին վրայ կու լայ: Միշտ կ'ունենայ, իրականացումը անկարելի բաղձանքը՝ ըլլալ անոր նման: Օրհնութիւններ կը տեղացնէ ճգնաւորին վրայ՝ անոր «սրբութեան» եւ աղօթքներուն համար:

Կը պատահի, որ երկուքն ալ նոյն օր կը մահանան եւ միասնաբար Աստուծոյ կը ներկայանան: Աստուած նախ կը քննէ կնոջ կեանքը եւ անոր արարքները: Հրեշտակներուն կը հրահանգէ կիներ տանին երկինքի շքեղ պալատներէն մէկուն: Ճգնաւորը, ի տես այդ մեղաւորին այդպիսի լաւ տեղ դրկուիլը, թէ՛ կը զարմանայ եւ թէ կ'ուրախանայ՝ ակնկալելով աւելի մեծ պատիւի արժանանալ, քանի որ ինք իր կեանքը աղօթքով անցուցած էր: Աստուած, անոր ալ կեանքը կը քննէ եւ կը հրահանգէ ճգնաւորը դժոխք տանիլ: Ան ապշած կ'առարկէ եւ այս անարդարութեան համար բացատրութիւն կը պահանջէ: Աստուած կը պատասխանէ ըսելով, թէ ճգնաւորը իր կեանքի տեւողութեան իր միտքը պոռնիկի եւ պոռնիկութեան վրայ

կեդրոնացուցած էր, իսկ կինը, ամէն օր, իր միտքը կեդրոնացուցած էր սուրբի եւ սրբութեան վրայ եւ պոռնիկութիւնը, իր եւ զաւակներուն գոյատեւումը ապահովելու համար, անհրաժեշտ արարք մըն էր»:

Այսօր մարդկային ուշադրութեան կեդրոնացման ժամանակամիջոցը շատ կարճցած է: Ճիշդ այդ պատճառով ալ հեռատեսիլի կամ շարժանկարի ժապաւէններուն տեսարանները, պատկերները շուտ-շուտ կը փոխուին: Պատմութիւնները արագ կ'ընթանան:


Մարդկային միտքը, անընդհատ ճիւղէ ճիւղ ցատկատող կապիկի նման, անընդհատ խորհուրդէ խորհուրդ կը ցատկէ: Բայց եւ այնպէս, թէ՛ կապիկը եւ թէ՛ միտքը, հոգ չէ թէ դժուար, կարելի է մարզել: Սակայն, կատղած կապիկ մը մարզել շատ աւելի դժուար է: Այսօրուայ մարդու միտքը, իր կրճատուած ուշադրութեան կեդրոնացման թզաչափով կը նմանի այդ կատղած կապիկին: Դժբախտաբար, նոր սերունդը կորսնցուցած է միտքը մարզելու կարողութիւնը: Անցեալին, նախակրթարանի եւ միջնակարգի մէջ, աշակերտներուն կը ստիպէին ոտանաւոր գոց՝ անգիր սորվիլ: Այսօր գոց սորվիլը, պարապ աշխատանք կը համարուի, որով դպրոցական ծրագիրներէ հանուած է: Այսօրուայ աշակերտութիւնը նոյնիսկ աղիւսակը գոց չի սորվիր, որուն գործած աւերը տեսանելի է: Ներկայ սերունդը, նոյնիսկ ամենապարզ հաշիւ մը, մտքով չի կրնար ընել եւ կը կարօտի հաշուիչ մեքենայի: Գոց սորվիլը կը մարզէ թէ՛ ուղեղը եւ թէ՛ միտքը: Կարեւորը գոց սորվուածը չէ, այլ գոց սորվիլն է: Գոց սորվելու համար աշակերտը պարտ է իր միտքը կեդրոնացնել կարդացած նիւթին վրայ, զայն քանիցս կրկնելով: Աս եւ ասոր նման վարժութիւններ կը մարզեն միտքը եւ կ'օգնեն, որպէսզի ուղեղային

բջիջներու միջեւ նոր հաղորդակցութեան կապեր յառաջ գան (synapse), նաեւ կազմուին նոր ելեկտրական, տարրաբանական եւ բջիջային շղթայումներ, որոնք կը գոյատեւեն անհատի կեանքի տեւողութեանը:

«Սորոգոսմն երիբասարդի լոյս
Ճանապարհաց իրոց. նա՛ իւր յորժամ
Զերասցի՛ ոչ մերժեսցի՛ ի նոցանէ»: (Լուսակաց ԻԲ:6)

«Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը՝ որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»:

Ներկայ դարուս, սկսելով մանուկներէ, թէ՛ տան եւ թէ՛ դպրոցներէ ներս, դաստիարակութեան եւ ուսուցման կերպը ուղեղին ձախ կողմը մարզելու դրութեան վրայ հիմնուած է, ինչ որ աշխարհի ներկայ ապրելակերպին համակերպելու, ապրուստ հայթայթելու, «հանգիստ» կեանք մը ապահովելու համար կարեւոր է: Զախ ուղեղը ամէն բան կը դասաւորէ:



«Արբոյ իմաստոնոյ յաջակողմ իւր, Է- ախրոյ
անմտի ՚ի Յախակողմ իւր» : (Ժողովողի Ժ:2)

«Իմաստունին սիրտը իր աջ կողմն է, իսկ անմտին
սիրտը իր ձախ կողմն է»:

*Իմաստունը իր աջ ուղեղը կը գործածէ, իսկ անմտը՝
ձախ:*

«Զ-ի Էրկայնա-ո-որձ Է- ամէ կէնայ յաջմէ
իւրմէ, Է- յաւելկէ իւրմէ փառ-ի Է-
մէ-ճ-ո-լ-ի-ն» : (Լուսկայ Գ:16)

«Անոր աջ ձեռքին մէջ օրերու երկայնութիւն Եւ ձախ
ձեռքին մէջ Հարստութիւն ու փառք կայ»:

*Օրերու երկարութիւնը յաւիտենականութեան փորձա-
ռութիւնն է, որ ուղեղի աջ կողմին փորձառութիւնն է:
Իսկ Հարստութիւնը՝ մտքի խորհուրդներու Հարստու-
թիւնն է, որ կը պատկանի ուղեղի ձախ կողմին:*

«Խոսոյ Հողմ է Հի-ս-սի. Բայց անո-ամբ
աջոյ կոշի» : (Լուսկայ ԻԷ:16)

«Ջանիկա պահողը հովը կը պահէ Եւ աջ ձեռքին մէջ
պահուած իւղը գինք կը յայտնէ»:

*Պարտ ենք մեր ուղեղային գործածութիւնը փոխելու
ձախ ուղեղէն դէպի աջ: Ըստ Աստուածաշունչի կը թուի
թէ Քրիստոսի յայտնուելը աջ ուղեղային փորձառու-
թիւն մըն է:*

*Մարդ արարած, ուղեղին աջ կողմը գործածելու
մէջ սկսնակ, սակայն ամէն բան դասաւորող ուղեղի
ձախ կողմը գործածելու մէջ մասնագէտ, նոյնիսկ
աղօթելն անգամ դասաւորած է: Աղօթք ճաշէ առաջ,
աղօթք ճաշէ յետոյ, աղօթք պառկելէ առաջ, աղօթք
արթննալէ յետոյ, աղօթք բժշկութեան համար, աղօթք
մեռեալներու հոգիներուն համար...: Աղօթքները
դասաւորելու մէջ որեւէ անպատեհութիւն չկայ, սա-*

կայն պէտք է գիտցուի, թէ ինչն^օւ համար կ'աղօթուի:

Վերլուծենք «Ճաշակեսցուք» աղօթքը: Աղօթքին բառերուն իմաստը շատ յստակ նաեւ պարզ է եւ բացատրութեան չի կարօտիր: Բայց ի^օնչ է աղօթքին նպատակը: Նպատակը անդրադառնալ է, թէ բոյս մը կամ անասուն մը իր կեանքը զոհած է, որպէսզի մարդ իրեն պիտոյ սնունդը առնելով ապահով է իր գոյատեւումը: Որով այս շնորհակալութեան աղօթքը, եղած զոհողութեան նկատմամբ, աղօթողին անդրադարձն է:

Հիւսիսային Ամերիկայի բնիկներու ամենակենսական սնունդի աղբիւրը եղած էր ամերիկեան գոմէշը: Անոնք դարերով զայն որսացած, անոր միսը կերած, նաեւ օգտագործած էին մորթը: Իւրաքանչիւր որսէ առաջ կը կատարուէր մասնաւոր որսորդական արարողութիւն՝ աղօթք մը: Այս արարողութեան նպատակը շնորհակալութիւն յայտնել էր Աստուծոյ՝ «Մանիդու»ի, նաեւ՝ «գոմէշի հոգիին»: Կ'որսային միայն այնքան, որքան իրենց պէտք էր, ոչ աւելին: Դարերով միասնաբար գոյատեւեցին: Երբ ագահ եւրոպացին եկաւ, անոնց մորթէն նիւթական շահ ապահովելու միտումով, բոլոր գոմէշները անխնայ սպաննեց, առանց արարողութեան, առանց աղօթքի, առանց շնորհակալութիւն յայտնելու: Ասոր հետեւանքը գոմէշներուն բնաջնջումը եղաւ:

Շնորհակալութիւն արտայայտող «Ճաշակեսցուք» աղօթքի բնագրին մէջ «պատրաստեալ» բառը գործածուած է: Վերջերս, փոխան «պատրաստեալ»ի, կ'ընդհանրանայ «պարգեւեալ» բառը: Խաւարամտութենէ ծագող այս փոփոխութեան կարիք չկայ: Աստուած ստեղծեց թէ՛ բոյսը, թէ՛ անասունը, թէ՛ ալ ճաշը պատրաստող անձը: Քանի որ բոլոր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ Աստուծոյ «մարմինը»,

Աստուած թէ՛ բոյսին մէջ է, թէ՛ միսին, թէ՛ ալ ճաշը պատրաստողին: Ուրեմն ո՞վ է պատրաստողը, ո՞վ է պարզեւողը եւ ո՞վ է զոհուողը: Ուստի ի՞նչ տարբերութիւն կայ այդ երեքին միջեւ: Ճիշդ այդ պատճառով, պատարագի ընթացքին պատարագիչը կ'ըսէ.

«Եւս զէոյս ի շոյոց շեզ մարոցանեմէ ըսր
ամենայնի եւ յաղախ ամենեցոռն» .

«Քուկդ՝ որ քեզմէ է՝ քեզի կը նուիրենք բոլորի կողմէ՝
բոլորին համար»:

Եթէ անձին ամբողջ կեանքը դառնայ բարեպաշտութեան արտայայտութիւն եղող աղօթքի, այն ատեն պէտք չըլլար որեւէ դասաւորեալ աղօթքով աղօթելու, բայց, մինչ այդ, կարեւոր է շարունակել դասաւորեալ աղօթքները:

Բարեպաշտութիւնը կարելի է հետեւեալ կերպով դասաւորել.

ա:- Տեսնել Աստուած ամէն բանի եւ ամէն անձի մէջ: Աս ամենավեհ բարեպաշտութիւնն է: Այս անձերու կեանքը կ'ըլլայ մէկական աղօթք:

բ:- Տեսնել Աստուած եւ ստեղծագործութիւնը անջատաբար: Անոնք ալ կը պաշտեն Աստուած, կը յարգեն եւ գովթ ցոյց կուտան իրենցմէ տկարին, բայց հեռու կը կենան անոնցմէ, որոնք «Աստուած չեն պաշտեր»:

գ:- Տեսնել Աստուած միայն կուռքերու մէջ, կամ միայն եկեղեցւոյ մէջ: Անոնց համար անկարելի է աղօթել առանց դասաւորեալ աղօթքի, կամ եկեղեցական արարողութեան:

Ուրեմն ի՞նչ է աղօթքը եւ ի՞նչ է անոր նպատակը եւ զօրութիւնը: Համայն մարդկութիւնը յաճախ կ'աղօթէ: Ընդհանուր առմամբ, շատեր, կարծելով թէ Աստուծոյ կ'աղօթեն, անգիտակցաբար իրենց «Ես»ին կ'աղօթեն, քանի որ «Ես»ը անոնց մտքին կառապանն է:

«Պատրճառոս խնդրէ այր որ կամիցի խակել ՚ի
 Բարեկամաց իրոց . յամենայն ժամանակի
 նախադ լիցի : » (Լուսակաց ժ.Լ:1)

«Ինքնահանոյ մարդը իր ցանկութիւնը կը փնտռէ եւ
 ամէն խորհուրդի դէմ կը կենայ:»

Մարդկութեան մեծամասնութիւնը կը նմանի
 ժամերով ամէն տեղ բանալի փնտռող անձի մը՝
 անգիտակից, թէ բանալին արդէն իսկ իր գրպանն է:
 Ան, իր կեանքի տեւողութեան, նաեւ ամենուրեք կը
 փնտռէ Աստուած, անգիտակից, թէ Ան արդէն իսկ իր
 մէջը՝ «գրպան»ն է:

Կը խնդրենք Աստուծոյ ողորմութիւնը եւ մեզի կը
 թուի, թէ այդ ողորմութիւնը կախեալ է իր
 քմահաճոյքէն: Սակայն, Աստուած նոյնիսկ այդ
 ազատութիւնը ինքզինքին չէ վերապահած, որովհե-
 տեւ ինք ալն եւ աղբիւրն է սիրոյ: Իր մէջ չկայ
 խտրութիւն եւ իր ողորմութիւնը ու շնորհները կը
 տեղացնէ բոլորին:

«Որ խնդրէ պճէր՝ Գրոյցէ պարտութիւն
 արդարութեամբ Հանդերձ . Եւ որ
 ուղղութեամբ խնդրէն պնա՝ Գրոյցէն
 պատշաղութիւն : » (Լուսակաց ժ.Գ:6)

«Ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ անօրէնութիւնը
 կը քառուի Ու Տէրջը վախովը մարդ չարութեան կը
 հեռանայ:» (Կը թուի աշխարհաբարի թարգմանողը սխալած
 ըլլայ)

Երբ անառակ որդին տուն վերադառձաւ, հայրը, միւս
 որդւոյն եւ անոր միջեւ, անառակութեանը պատ-
 ճառով, խտրութիւն չըրաւ եւ անկէ չխնայեց իր
 ամենէն պարարտ հորթը:

Երբ տան մը սենեակներուն վարագոյրները
 բանանք, արեւուն ճառագայթները բոլոր սենեակներէն

ներս կը լեցուին եւ զանոնք կը լուսաւորեն: Արեւը, սենեակներէն ոմանք լուսաւորելու, ոմանք ալ չլուսաւորելու ազատութիւնը չունի: Ան կը ճառագայթէ ամենուրեք եւ շարունակաբար: Մեր պարտականութիւնն է բանալ վարագոյրը: Երբ լոյսը սենեակէն ներս մտնէ, սենեակը անմիջապէս կը լուսաւորուի, հոգ չէ թէ նախապէս որքան երկար ժամանակ խաւարի մէջ մնացած ըլլայ եւ ինչ աստիճանի «թանձր» եղած ըլլայ այդ խաւարը: Ակնթարթի մը մէջ այդ խաւարը կ'անհետանայ:

Մարդիկ, նման Սողոմոն իմաստունի, անկարելի կը համարեն Աստուծոյ յայտնութիւնը: Կարդանք.

«Եւ որտե՞ս էս պամենայն արարածս Ասորո՞ւ» . պի որ կարասցէ մարդ Գրանել պարարածն արարեալ 'ի ներշոյ արեգական . որտան ջանասցի մարդ խնդրել՝ եւ ոչ Գրցել: Ինչպի որչափ ասասցէ իմաստունն Գրցել՝ ոչ կարասցէ Գրանել:» (Ժողովուրդ Ը:17)

«Այն ատեն Աստուծոյ բոլոր գործերէն հասկցայ, թէ մարդ չի կրնար գտնել այն գործը, որ արեւուն տակ կ'ըլլայ. Վասն զի մարդ կ'աշխատի փնտուելու, բայց չի գտներ Ու թէեւ իմաստունն ալ «Գիտեմ» ըսէ՝ գտնելու կարող չ'ըլլար:»

Բայց շատ լաւ գիտենք, որ Յիսուս յաջողեցաւ: Հետեւեալ համարն ալ կը շեշտէ այդ կարելիութիւնը:

«Զի ելի՞ իմ են ելի՞ կենաց. եւ պարասորին կամի՞ իմ 'ի Տէր:» (Լուսնայ Ը:35)

«Վասն զի զիս գտնողը կեանք կը գտնէ Ու Տէրջմէ շնորհք կը ստանայ:»

Ճիշդ է որ անձը չի կրնար յայտնաբերել Քրիստոս, ինչպէս չի կրնար ինքզինք քնացնել, բայց կրնայ ինքզինք քնանալու պատրաստել: Աստուծոյ ողորմու-

Թիւնը յայտնաբերել ալ նման պարագայ մըն է: Յայտնաբերումը ապահովելու համար մեզի կ'իյնայ պատրաստուիլ՝ վարագոյրը բանալ: Ակնթարթի մը մէջ Աստուծոյ ողորմութիւնը եւ շնորհքները կը խուժեն եւ կը լեցնեն անձին բոլոր հուրիւնը, կ'անհետանայ անգիտութիւնը, Քրիստոս լրիւ ի յայտ կու գայ անձին մէջ: Բարեպաշտը չի կրնար ըսել «ես Աստուած տեսայ», քանզի այդ պահուն Գիտցողը, Գիտնալը եւ Գիտցուածը իրարու մէջ կը լուծուին եւ Երրորդութիւնը կ'ըլլայ մէկ Միութիւն՝ զուտ եւ անարատ գիտակցութիւն: Աստուծոյ բարիքները անձրեւի պէս կը տեղան: Աղօթքը՝ հողը հերկել եւ ցանելն է՝ օգտուելու համար անձրեւին շնորհած բարիքներէն: Գրութեան սկիզբը կղեմէս ըսած էր, թէ աղօթքը «Աստուծոյ հետ խօսակցութիւն» մըն է: Սակայն ճշմարիտ աղօթքը բարեպաշտը կ'ուղղէ ինքզինքին՝ իր ճշմարիտ հուրեան՝ Քրիստոսի, որպէսզի բանայ վարագոյրը եւ հերկէ հողը: Ահա թէ ինչպէս կ'աղօթէ սուրբ մը.

ՍՈՒՐԲ ԹԵՐԵՉԱՅԻ ՄՊՕԹՔԸ.

Թո՛ղ խաղաղութիւնը հաստատուի այսօր ամէնուր:
 Թո՛ղ քու սրտիդ մէջ իջնէ Աստուծոյ երաշխիքը, թէ դու հոն ես ուր պէտք է որ ըլլայիր:
 Թո՛ղ չմոռնաս երբեք՝ որ քու հաւատքէդ ծնող Հնարաւորութիւնները անսահման են:
 Իցի՛ւ թէ կարենաս լաւ գործածել Աստուծմէ քեզի շնորհուած ձիրքերը եւ փոխանցել քեզի պարգեւուած սերը:
 Թո՛ղ երջանիկ ըլլաս՝ գիտնալով որ դու Աստուծոյ որդին ես:
 Թո՛ղ Աստուծոյ ներկայութիւնը ոսկորներուդ մէջ թափանցէ եւ տայ Հոգիիդ ազատութիւնը՝ երգելու, պարելու, օրհնելու եւ սիրելու:
 Այո՛, Աստուած ներկայ է մեր մէջ՝ մեզմէ իւրաքանչիւրիս ու մեր բոլորիս համար:

(Անգլերէնէ հայերէնի թարգմանեց Հայր Լեւոն Զէքիեան)

ՍՈՒՐԲ ՓՐԱՆԻՍ ԱՍԻՍԻՐԻ ՎՊՈԹՔԸ

Ո՛վ Տէր, զիս Քու խաղաղութեանդ գործիքը ըրէ
 Որ կարենամ սերմանել
 Սէր՝ ուր կը տիրէ ատելութիւն
 Ներողամտութիւն՝ ուր կը տիրէ սրամտութիւն.
 Հաւատք՝ ուր կը տիրէ կասկած.
 Յոյս՝ ուր կը տիրէ յուսահատութիւն.
 Լոյս՝ ուր կը տիրէ խաւարամտութիւն.
 Ուրախութիւն՝ ուր կը տիրէ տրամոլութիւն.

Աստուած իմ եւ Տէր իմ, շնորհէ որ չլինաւեմ
 Մխիթարուիլ այլ՝ մխիթարել
 Հասկցուիլ այլ՝ Հասկնալ
 Սիրուիլ այլ՝ սիրել
 Քանի որ,
 Տալով է որ կը ստանանք.
 Ներելով է որ կը ներուինք,
 Մեր «Ես»ին մահուամբն է որ կ'արժանանանք
 յաւիտենական կեանքի :

* * *

Հարկ է կարդալ նաեւ **ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՐԻ** աղօթքները:





Աղօթիչը անձի մը անարժանութեան
 է- ցկարութեան խոսքովանանձն է :

Աղօթիչի պահուն նախընդրելի է
 սրբանց աղօթել՝ սակաւաթի-
 քաւերով, ինչ թէ շարախօսել՝
 առանց սրբաթուխ քաւերու :
 (Վանգի)



ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր

որ յերկինս:

սորք Եղիցի անոն ին:

Եկեացէ արվայս-Թիւն ին:

Եղիցին կամ ին որպէս յերկինս Ե- յերկրի:

Կհայ մեր Հանապազորդ՝ որոր մեզ աշօր:

Ե- Թող մեզ պարարիս մեր, որպէս Ե- մեկ Թողորմի մերոց պարգապանաց:

Ե- մի գրանիս պեւ ՚ի վորջո-Թիւն:

այլ վերկեա պեւ ՚ի շարեն:

Կն ին Ե արվայս-Թիւն Ե- պորո-Թիւն Ե- վատի յա-Թիւնս ամեն:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Այս նիւթին առնչութեամբ պատշաճ է հասկնալ յաճախ ըսուած Տէրունական աղօթքին իմաստը:

«Հայր մեր»:

Ինչո՞ւ «Հայր մեր» եւ ոչ «Մայր մեր», կամ միայն «Տէր մեր»: Աստուած սեռ չունի, ոչ արու է եւ ոչ ալ էգ, ուրեմն աւելի յարմար կ'ըլլար եթէ «Տէր մեր» ըսուէր: Բայց Յիսուս մասնաւոր ընտրեց «Հայր մեր»-ը: Շատ դիւրաւ կրնար ըսել «Մայր մեր», բայց իր ժամանակին հրեայ ժողովուրդը ըլլալով նահապետական ընկերութիւն մը, այդ ժողովուրդին «Մայր մեր»ը ընդունիլ անկարելի կ'ըլլար: Հնդկական կրօնքի որոշ աղանդներ Աստուծոյ համար կը գործածեն «Մայր մեր» արտայայտութիւնը: Ինչո՞ւ Հայր կամ Մայր: Մանուկ տղայ մը միշտ կը ջանայ իր հօր նմանիլ եւ

կ'ընդօրինակէ զինք իր ամէն արարքին մէջ, ինչպէս աղջիկ զաւակ մը՝ իր մօր: Կարգանք.

«... պարճանէ որդւոց Հայրէ իւրեանց:»

(Լուսկայ մէ:6)

«... Եւ որդիներուն պարծանքը իրենց Հայրերն են:»

Մանուկը նաեւ ունի սէր, յարգանք, բացարձակ վստահութիւն, հաւատք եւ յոյս իր ծնողքին հանդէպ, որով կ'ապաւինի անոնց հոգածութեան եւ ինքզինք ապահով կը զգայ անոնց ներկայութեան: Յիսուս պատուիրած էր աղօթքի ընթացքին շատախօս չըլլալ: Ան, միայն «Հայր» բառը գործածելով կը մատնանշէ այն բոլոր յատկութիւնները, զորս աղօթող բարեպաշտը պէտք է ունենայ Աստուծոյ հանդէպ, ինչպէս մանուկ մը կ'ունենայ իր ծնողքին հանդէպ:

«որ յերկինս»:

Ո՞ր է երկինքը: Ըստ սովորութեան, շատեր կ'ակնկալեն որ երկինք ամպերէն վեր տեղ մըն է, այն աստիճանի, որ անջրպետ գացող օդաչուներէն մին ամբարտաւանօրէն ըսած էր, թէ երկինք չէր գտած, ցոյց տալով իր հասկացողութեան մակարդակը: Աւետարանը բացայայտօրէն կ'ըսէ, թէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներ են եւ Աստուած մեր մէջ կը բնակի: Եթէ Աստուած թէ երկինքի մէջ է եւ նոյն ատեն մեր մէջ կը բնակի, ուրեմն հարկ է, որ երկինքն ալ մեր մէջ ըլլայ: Իւրաքանչիւր անձ կրնայ նոյնը ըսել, ուրեմն անոնցմէ որո՞ւն մէջ է երկինքը: Քանի որ երկինքը ամէն անձի մէջ է, պէտք է ըլլայ թէ՛ ժամանակի եւ թէ՛ միջոցի դրութենէ դուրս: Երկինքը յաւիտենականութիւնն է: Միայն «յերկինս» բառով կը դաւանինք Աստուծոյ յաւիտենականութիւնը, նաեւ իր գերիշխանութիւնը, իր ամենակարող, ամենագէտ եւ ամենուրեք ըլլալը:

«սուրբ էղիցի անուան զո»:

Հին եւ նաեւ նոր կտակարանի մէջ կը տեսնուի, որ Աստուծոյ անուան զօրութիւնը անհուն է: Կարգանք մի քանի օրինակներ.

«Մե՞ շարարէ՞ զՏէր ինեւ, եւ Բարձր արասցու՞ զանուան նորայ ՚ի միասին:»

(Սաղմոսաց ԼԳ:3)

«Ինծի հետ Տէրը մեծցուցէք Ու մէկտեղ բարձրացնէք անոր անունը:»

«Երո՞ ՚ի յեւն նորա մասրոսացու՞ պատարագ օրհնութեան յամենայն ժամ Եսրոսթոյ. այս ինչն է զպարու շրջանց խոստովանելոց յանուան նորա:»

(Եբրայեցիս ԺԳ:15)

«Ուստի անոր ձեռքով ամէն ատեն Աստուծոյ օրհնութեան պատարագ մատուցանենք, այսինքն մեր շրթունքներուն պտուղը, որոնք իր անունը կը դաւանին:»

«Կի ամենայն որ կարդասցէ զանուան Տէարն՝ կէցցէ:» (Հոովմայեցիս Ժ:13)

«Քանզի «ով որ Տէրոջը անունը կը կանչէ պիտի փրկուի»:»

«...Եմէն ամէն ասեմ յեւ. զի զոր ինչ խնորիցէ՞ ՚ի Ըօրէ իմմէ յանուան իմ, րասցէ յեւ:» (Յովհաննոս Ժ:9:23)

«Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզի:»

Ինչպէ՞ս բարձրացնել Աստուծոյ անունը: Ինչպէ՞ս Իր անուանը դաւանանքը ըլլայ պատարագ: Ինչպէ՞ս Իր անունը ըսելով փրկուինք: Ըստ Յովհաննոս աւետարանիչի, զաղտնիքը Քրիստոս ինքն է՝ ամէն ինչ պէտք

է ըլլայ Քրիստոսի անուանը միջոցաւ: «Անունդ սուրբ ըլլայ» փափաք մըն է, որ աղօթողը պէտք է ունենայ: Արդեօք իր փափաքէն կախեա՞լ է Աստուծոյ անուանը սուրբ ըլլալը: Անձը փափաքի կամ ոչ, Աստուծոյ անունը յաւիտեան սուրբ է: Եւ ի՞նչ է իր անունը: Ըստ Հին կտակարանի «Եհովա» է: Նոր կտակարանն ալ կ'աւելցնէ «Քրիստոս» անունը, որ կը նշանակէ փրկիչ: Բարեպաշտներ պարզապէս զինք կ'անուանեն եւ կը կոչեն «Տէր»: Հնդկական կրօնքի հետեւողներ Աստուծոյ տուած են հազար տարբեր անուններ եւ կը հաւատան թէ այս հազար անունները բերանացի կամ լռելեայն կրկնելով արժանի կ'ըլլան շնորհքներ ստանալու: Որոշ իրողութիւն մը գոյութիւն ունի այդ արարքին մէջ: Իր անուան կրկնութիւնը, միտքը՝ հետեւաբար խորհուրդները կը կեդրոնացնէ Աստուծոյ վրայ, քան թէ՛ «սա» «տա» (դա) եւ «նա»ի, եթէ կրկնութիւնը չըլլայ առ ի ձեւակերպութիւն՝ առ ի սովորութիւն: Հայաստանեայց Եկեղեցին ալ կ'օգտագործէ նման արարք: Աւագ Հինգշաբթի, լացի դիչեր, բոլոր հաւատացեալներ ծնկաչոք քառասուն անգամ կը կրկնեն «Տէր Ողորմեա» աղերսանքը, քառասուն անգամ կրկնելով Աստուծոյ «Տէր» անունը: Չեմ կարծեր որ Յիսուսի նպատակը պարզապէս անուան կրկնութիւնն էր, երբ Ան սորվեցուց «Քու անունդ սուրբ ըլլայ» աղօթքը: Տեսնենք թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ:

«Ոչինչ եղեւն՝ աւա անուն կոչեցեալ է նմա. եւ յայտնի եղեւ որպիսի ինչ է մարդ. ...» (Ժողովուրդի Զ:10)

«Ինչ որ եղաւ, արդէն անոր անուն դրուած է եւ յայտնի է թէ մարդ է (անուն դնողը) ...»

Վերեւ յիշուած է, թէ մարդ արարած իր ուղեղին ձախ կողմը գործածելու հմտութիւնը ունի, հետեւաբար

ամէն ինչ դասաւորելու մէջ ալ մասնագէտ է: Աստուածաշունչն ալ կ'ըսէ թէ բոլոր անունները մարդու կողմէ դրուած են եւ ստեղծագործուած ամէն ինչ անուանուած եւ դասաւորուած է: Աստուած ինք իր ստեղծագործութեան մէջ է եւ բոլոր անուանաւորուած տիեզերքը իր մարմինը կը ներկայացնէ: Ուրեմն տիեզերքի բոլոր անունները են նաեւ Աստուծոյ անունը, քանի որ կը ներկայացնեն անոր մէկ մասնիկը: Երբ աղօթքի մէջ կ'ըսենք «Քու անունդ սուրբ ըլլայ» այդ կը ներկայացնէ մեր ամէն բանի մէջ Աստուած տեսնելու փափաքը: Այս փափաք մըն է ինքնափոփոխութեան, արթնութեան եւ գիտակցութեան մակարդակի բարձրացման համար, որպէսզի բազմաթիւին մէջ միութիւնը տեսնենք: Կարդանք.

«Յամէնայն ճանապարհս ինչ Զանիտր պնա պի ուղիղ արասցէ պճանապարհս ինչ: Է- ոյն ինչ մի Գայթաղեացի:» (Լուսկայ Գ:6)
 «Քու բոլոր ճամբաներուդ մէջ զանիկա ճանչցիր Ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ:»

«Բարի է անուան բարի՝ ինչ պնոյրմո- թիւնն բարի, է- օր մաւուան ի-րոյ՝ ինչ պնոյր Զննդեան ի-րոյ:» (Ժողովողի Է:2)
 «Բարի անունը՝ հոտաւէտ իւղէն Ու մաւուան օրը ծննդեան օրէն աղէկ է:» (Ժողովողի Է:1)

Երբ ամէն տեղ եւ ամէն անունի մէջ Աստուած տեսնենք, այն ատեն անունը կ'ըլլայ «բարի», այսինքն սուրբ: Այս ալ կ'ըլլայ «Ես»ին մահով: Ճիշդ այդ պատճառով ալ գրուած է, թէ բարի՝ սուրբ է («Ես»ին) մահուան օրը, քան թէ իր ծննդեան օրը:

«Էկեացէ արժայո- թիւն ինչ»: Մարդիկ կը փափաքին մահէ յետոյ «երկինք»

երթալ եւ այս անգամ ալ Աստուծոյ ներկայութեան մէջ շարունակել ապրիլ: Այս խորհելակերպը ծոյլ մարդու յոյսը եւ փափաքն է: Աղօթքին այս աղերսանքի մասն ալ բարեպաշտին մէջ փափաքն է: Ի՞նչ կը նշանակէ այս փափաքը: Սպասել, որպէսզի Աստուած յօժարի իր զօրքերով դալ, աշխարհը անօրէններուն ձեռքէն գրաւել եւ անոնք բնաջնջել: Ո՞վ է արդարը, որ արժանի պիտի ըլլայ Անոր թագաւորութեանը մէջ մնալու: Նման փափաքի մը իրականացումը կ'ըլլայ բոլոր մարդկութեան աւերը եւ անհետացումը: Աւետարանը կ'ըսէ, թէ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն իսկ եկած է, մեր մէջն է եւ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են: Ուրեմն մեզի կը մնայ ոչ թէ իմացական, այլ փորձառականօրէն գիտնալ այս իրողութիւնը: Պարտ ենք ճանչնալ եւ գիտնալ, թէ այս տիեզերքի «սա» «տա» (դա) եւ «նա»ն միայն պատրանք մըն է եւ ոչ ճշմարտութիւն: Միակ ճշմարտութիւնը Աստուած է (տեսնել նաեւ «Ի՞նչ է ճշմարտութիւնը» գրութիւնը): Պէտք է մեր աղօթքները ըլլան նման հայեացքով, որպէսզի օր մը անգիտակցութիւնը (ignorance) անհետանայ եւ յայտնուի Աստուծոյ թագաւորութիւնը: Մեզի կը մնայ «Ես»ը չհզոքացնել՝ վերցնել ամբարիշտը եւ ներկայացնել առանց խորհուրդներու միտքը՝ աղքատները:

«Սարակեալս պանոսարիշոս յերեսաց
 Թագաւորի. եւ ուղղեացի արդարոթեամբ
 աթոռ նորա:» (Լուսկաց ԻԵ:5)

«Վերցուր թագաւորին առջեւէն ամբարիշտը Ու անոր
 աթոռը արդարութեամբ կը հաստատուի:»

«Թագաւորս յորժամ ճշմարտոթեամբ

դասորցի պրնանկա, ախոռ նորա ՚ի

վկայութիւնն Հասարակացի : » (Առակաց ԻԹ : 14)

«Աղքատները ճշմարտութեամբ դատող թագաւորին
աթոռը Յաւիտեան Հաստատ պիտի ըլլայ :»

«Էդիցին կամէ ՛ո որպէս յերկինս եւ յերկրի» :

Ահա բարեպաշտէն փափաք մը եւս: Սակայն բարեպաշտը ինչպէ՞ս գիտնայ Աստուծոյ կամքը: Անցեալին՝ նման խաչակիրներու (նաեւ բազմաթիւ ուրիշներ, որոնք պատմութեան անցած են), եւ ներկայիս «ճիհատ» անուան տակ մարդիկ, յանուն Աստուծոյ կամքին պատերազմած, աւերներ գործած եւ գազանութիւններ կատարած են: Ո՞վ գիտէ Աստուծոյ կամքը: Այս փափաքին իրականացումն ալ դարձեալ կախեալ է աղօթողէն: Ան կը կարօտի անձնատուութեան: Երբ անձը կը յանձնուի Աստուծոյ եւ կը դառնայ անոր ձեռքին մէջ գործիք մը, այլեւս գործողը ինք չըլլար, այլ՝ Քրիստոս: Քանի որ Քրիստոս կը գործէ, գործն ալ կ'ըլլայ ըստ Իր կամքին եւ այլեւս արարքները բարեպաշտին չեն պատկանիր, որով ինքն ալ կապուած չըլլար անոնց արդիւնքներուն: Բարեպաշտին կը մնայ լաւ գործիք մը ըլլալ Քրիստոսի ձեռքին մէջ: Եթէ անգիտութիւնը փարատի եւ Քրիստոս լրիւ ի յայտ գայ անձին մէջ, երկուքը միացած կ'ըլլան իբր մէկ: Բարեպաշտին կամքն ալ Քրիստոսի կամքին հետ կը նոյնանայ: Այսպէսով իր աղօթքին փափաքն ալ իրականացած կ'ըլլայ: Բոլոր արարքները կ'ըլլան սիրով, բարի եւ օգտակար բոլորին:

«Ահա մէր Հանապապորդ՝ Գոռ մէջ այսօր» :

Բարեպաշտը, այս անգամ փափաք չի յայտներ՝ այլ ինդրանք: Անդրադարձած իր անձնական անկարողութեան, կը յուսայ Աստուծոմէ այն, ինչ որ իրեն անկարելի կը թուի: Ինչպէս վերեւ յիշուած է,

երբ բարեպաշտը մէկ քայլ առնէ դէպի Աստուած, Աստուած ալ հինգ քայլ կ'առնէ դէպի անոր: Բարեպաշտը պարտ է այդ առաջին քայլը առնել: Աս կը համապատասխանէ նաեւ հետեւեալ համարներուն.

«Սիրոյ առն խորհեացի պրատոնս, պի
յլնայոթոյ ուղղեացին Գնացի նորա:»

(Լուսակաց ԺԶ:9)

«Մարդուն սիրտը իր ճամբան կը հնարէ, Բայց Տէրը կ'ուղղէ անոր քայլերը:»

«Ոչ ելիլ դուռն ընդդէմս պիս, այլ ես
ընդդէմս պիս. ...» (Յովհաննոս ԺԵ:16)

«Ո՛չ թէ դուք զիս ընտրեցիք, ապա ե՛ս ձեզ ընտրեցի. ...»

Բայց ի՞նչ է բարեպաշտին խնդրածը: Իր առօրեայ հա՞ցը: Այն հացը, որուն կը կարօտի սնուցանելու իր Փրփրեական մարմի՞նը, այսինքն բառին բուն իմաստով անօթի չմնալ: Յիսուսի ըսած «հաց»ը անպայման պարզ աշխարհիկ իմաստ ունեցող հացը չէ, այլ իր ըսած «հացը» հոգեկան «հաց»ն է՝ Աստուծոյ շնորհքները: Ուրեմն բարեպաշտին խնդրանքը այն է, որ այդ շնորհքները իրեն ալ յայտնուին: Կարդանք.

«... Բաց պաշս ին, ես յաճեաց Լացիս:»

(Լուսակաց Ի:13)

«... Աչքերդ բաց, որպէս զի հացով կ'չտանաս:»

«Ոչ սովամահ առնել Տէր պանջն արդարոց.
Ես պիտանս ամարշարաց կորթանեացի:»

(Լուսակաց Ժ:3)

«Տէրը արդարին հոգին անօթի չի թողուր, Բայց ամբարիչաներուն ցանկութիւնը կը խափանէ:»

«Երդարն յոտել իրում յաճեցոցանել
պանջն իր. ես անջինի ամարշարաց՝

Կարօրեալէ : » (Լաւակայ ԺԳ : 25)

«Արդարը մինչեւ իր անձին կշտանալը կ'ուտէ , Բայց ամբարիշտները կարօտութիւն պիտի քաշեն:»

Ինչո՞ւ այսօրուայ «հաց»ը: Ի՞նչ է իմաստը եւ նպատակը «այսօրուայ»ին: Մարդու խորհուրդները ընդհանուր առմամբ կեդրոնացած են անցեալի յուշերու կամ ապագայի ակնկալութիւններու վրայ: Ինչպէս վերեւ յիշեցինք, որեւէ անձ չի կրնար Ֆիզիքս քապէս ապրիլ անցեալի կամ ապագայի մէջ: Իր կեանքի բոլոր տեսողութեան Ֆիզիքս քապէս միայն ներկային մէջ կ'ապրի: Ներկան յաւիտեանական է: Բարեպաշտը «այսօրուայ» ըսելով կը ինդրէ շնորհք եւ կարողութիւն, որպէսզի կարենայ կեդրոնանալ միայն ներկային վրայ եւ ապրիլ միայն ներկան, որպէսզի կարենայ «համտեսել» յաւիտեանականութիւնը: Աս, ժամանակի դրութենէ դուրս ըլլալ է:

Ինչպէս անձը կրնայ քնանալու պատրաստուիլ, բայց չի կրնար ինքզինք քնացնել, սակայն քունը ակնթարթի մէջ կը յափշտակէ իր գիտակցութիւնը, նմանապէս ալ իր ջանքերով չի կրնար Քրիստոս յայտնաբերել, այլ կրնայ ինքզինք պատրաստել այդ գալուստին, որ, որեւէ ժամանակ, ակնթարթի մէջ կրնայ յափշտակել իր գիտակցութիւնը՝ լեցնել իր էութիւնը Աստուածային լոյսով: Բարեպաշտին պարտ է միշտ արթուն մնալ, նման հինգ իմաստուն կոյսերուն, դիմաւորելու «փեսան», երբ ան գայ՝ առանց լուր տալու: Պէտք չէ նմանիլ միւս հինգ յիմար կոյսերուն եւ անհամբերութեան պատճառով առիթը փախցնել: Հետեւեալը կը շեշտէ այս իրողութիւնը.

«Լրդ՝ արձո՞ն կացե՛վ. ոչ Գիբե՛է երբ Գիբ Գանն Գայցե, յերեկորեայ, եթէ 'ի մէջ Գիշերի, եթէ 'ի Լաւախօսի, եթէ ընդ

առաւօրոյս : » (Մարկոսի ժԳ : 35)

«Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ե՞րբ պիտի գայ տանտէրը, իրիկո՞ւնը՝ թէ կէսգիշերին՝ թէ հասիսօսի՞ն՝ թէ առտուն :»

Հետեւեալ համարները բացայայտօրէն կը պարզեն այս աղօթքին իմաստը.

«Յորժամ նադիցիս յընթերիս ուրեւ ՚ի սեղան հզօրաց. իմանալով իմասջիւր որինչ առաջի դնիցի, եւ ապա միեւջիւր սլէտն ին : Գիտասջիւր թէ այնպիսի ինչ եւ իւր պարտ է պարտասորել : ապա թէ ազաւազոյն իցեա մի ցանկանայցեա խորոկաց նորա. սի այն իակ կցեալ երթայ սկէնացն սորոթեան : Մի ճգրիւր՝ եթէ ցանակ իցեա՝ ընդ մեծասան, այլ ին իմասորոթեամբոյ մերժեա ՚ի նման : Եթէ հաստարեացեա սերեա սո ՚ի վերայ նորա, ոչ ուրե՛վ երեւի սի հանդերձեալ ե նորա իւր թեա ուրպեա սարժոոյ. եւ դառնայ ՚ի ցոռն նահապեցի իւրոյ : Մի ուրեւր հաց ընդ առն շարական. եւ մի ցանկանար կերակրոյ նորա : սոր օրինակ թէ մաւ ո՛վ կլանէ՝ այնպեա ուրեւ եւ ըմպէ : Մի մոթանիցեա սնա առ իւր, եւ մի ուրիցեա սհաց ին ընդ նմա, սի նորկրացոցանէ սնա. եւ ապականէ սքանա ին բարիս : »

(Առակաց ԻԳ : 1-8)

«Երբ իշխանի հետ սեղան նստիս, Առջեւդ դրուածին աղէկ նայէ. ու եթէ դուն ախորժակի տէր մարդ ես, Կոկորդիդ վրայ դանակ դի՛ր: Անոր ազնիւ կերակուրներուն մի՛ ցանկար, Վասն զի անոնք խաբէութեան հաց են: Հարուստ ըլլալու մի աշխատիր, Քու խորհուրդէդ ետ կեցի՛ր: Աչք պիտի անկե՞ս այն բանին, որ ոչինչ է. Անիկա անշուշտ իրեն թեւեր կը շինէ ու արծիւի պէս օդը կը թռչի: Չար աչք ունեցողին հացը մի՛ ուտեր եւ անոր ազնիւ կերակուրներուն մի՛ ցանկար. Վասն զի անիկա իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ, այնպէս է: «Կե՛ր ու խմէ՛», կ'ըսէ քեզի, Բայց անոր սիրտը քեզի հետ չէ: Կերած պատառդ պիտի փսխես ու հաճելի խօսքերդ պիտի կորսնցնես:»

«Իշխանը» անձին «Ես»ն է, իր պատրաստած ճոխ սեղանը՝ աշխարհի պատրանքային շլացուցիչ «սա» «տա» (դա) եւ «նա»երն են: «Ախորժակի տէր մարդը» ցանկութիւններ ունեցող մարդն է: «Կոկորդիդ վրայ դանակ դիր» կը նշանակէ ցանկութիւններդ զսպէ եւ անոնցմէ մի տարուիր: Այդ «սա» «տա» (դա) եւ «նա»երը «խաբէութեան հաց են», ճշմարտութիւն չեն այլ պատրանքային են: «Հարուստ ըլլալու մի աշխատիր»էն պիտի հասկնանք՝ շատ խորհուրդներ մի ունենար: «Խորհուրդէդ ետ կեցիր» կը նշանակէ միտքիդ խորհուրդներու ողողումը դադրեցուր: «Աչք պիտի անկե՞ս այն բանին որ ոչինչ է»ն ալ կը նշանակէ՝ պիտի ցանկա՞ս անոր, որ պատրանք մըն է: «Արծիւի պէս օդը կը թռչի»ն ալ ինքզինք բարձր եւ իբր ճշմարիտ ցոյց կու տայ է: Մնացեալը բացայայտ է:

~~«Է- Թող մեզ պարտութիս մեր, որպէս է- մե՛՛~~
թողու-մէ՛ մերոց պարտասպանաց» :

Մակերեսային հասկացողութեամբ կը թուի ըլլալ սակարկութիւն եւ «պարտքերու»՝ մեղքերու թողութեան խնդրանք, այն չափով որ մենք կը ներենք մեզի դէմ յանցանք գործողները: Այս վերջինը սակարկու-

Թեան մասն է: Մակարկութիւնը կը թուի ըլլալ արդար եւ մեզ կը մղէ հանդուրժող, ներողամիտ եւ բարեացակամ ըլլալ, նոյնիսկ մեր թշնամիներուն հանդէպ: Արդեօք այդ է՞ր Յիսուսի նպատակը, երբ «պարտք» բառը գործածեց եւ ոչ մեղք բառը: Մարդկային տկարութիւններէն մին ալ իր վրայ պատասխանատուութիւն առնելու անկարողութիւնն է: Ծննդոց գիրքին մէջ կը տեսնենք, թէ սկսեալ նոյնիսկ առաջին մարդէն, մարդ իր մատնուած կացութեան համար իր վրայ չէ առած որեւէ պատասխանատուութիւն: Կը տեսնենք, որ Ադամ իր անկումին համար կը մեղադրէ Եւան, իսկ Եւան ալ, իր կարգին, կը մեղադրէ օձը: (Իսկ խեղճ օձը մարդկային էակ չըլլալով, որեւէ մեկը չի մեղադրեր): Մարդ արարած պատասխանատու է իր բոլոր խորհուրդներուն եւ արարքներուն, որոնք կը ծագին խորհուրդներէն: Ասոնք յառաջ կը բերեն հակազդեցութիւններ (reactions), որոնք, իրենց կարգին, յառաջ կը բերեն պարտքերը: Անձը նաեւ պատասխանատու է իր նկարագրին, որ կը կազմուի իր խորհուրդներէն եւ սովորութիւններէն: Այս հիման վրայ անձը պատասխանատու է այն բոլոր կացութիւններուն, որոնց ինք կ'ենթարկուի իր կեանքի ընթացքին: Ինչ որ կը պատահի իրեն, ինք կերտած է եւ արդիւնքն է իր ստեղծած հակազդեցութիւններուն: Ասոնք կրնան ըլլալ լաւ կամ վատ: Եթէ նոյնիսկ բարեպաշտին պատահածը ուրիշ անձի մը արարքն է, բարեպաշտը պէտք է իր վրայ առնէ այդ պատասխանատուութիւնը եւ նկատէ այդ անձը իբր գործիք մը Աստուծոյ ձեռքին մէջ եւ չմեղադրէ անձը: Յիսուս գիտէր թէ պիտի խաչուէր: Յօժարաբար ընդունեց իր ճակատագիրը: Չուզեց խուսափիլ իր ճակատագրէն, երբ նոյնիսկ առիթը ունէր: Յուդային ըսաւ իր պարտականութիւնը կատարել: Ինք բնաւ

չմեղադրեց Յուդան: Յուդան գիտակից, ինքզինք մեղադրեց եւ անձնասպան եղաւ: Յանցանքը որո՞ւն էր: Յուդա, պարզապէս, Աստուծոյ կամքը կատարող գործիք մըն էր: Յիսուս ոչ հրեաները մեղադրեց, ոչ ալ հռովմայեցիները, այլ ըսաւ «Հայր ներէ իրենց, որովհետեւ չեն գիտեր, թէ ինչ կ'ընեն»: Այս հայեցողութեամբ բարեպաշտը բոլոր մեղադրանքները իր վրայ պարտի ընդունիլ: Ինք ներած կ'ըլլայ բոլոր անոնք, որոնց միջոցաւ եղած էին իր դէմ կատարուած բոլոր պատահարները: Ան ոչ թէ կը ներէ, այլ ներելու իսկ պէտք չունի, քանի որ արդէն սկիզբէն իսկ մեղադրած չէ: Այն ատեն Աստուած ալ կը ներէ իր «պարտքերը»՝ մեղքերը: Յիսուս «անոնք կը ներեմ» չըսաւ, այլ Հօրմէն խնդրեց, որպէսզի անոնց արարքները իրենց պարտքեր չըլլան: Յատկանշական են հետեւեալ համարները.

«Որ Հասրոցանէ շար փոխանակ Բարոոյ,
 շար 'ի րանէ նորա մի պակասեացէ:»

(Լուսկայ ԺԷ:13)

«Ով որ աղեկութեան փոխարէն չարիք կը հատուցանէ, չարիքը անոր տունէն պակաս պիտի չըլլայ:»

«Մի ասիցես թէ ասոց վրէժ 'ի թշնամոյն.
 այլ Համբեր Տէարն, պի չեզ օգնական
 լիցի:» (Լուսկայ Ի:22)

«Ձարութեան փոխարէնը Հատուցանեմ», մի՛ ըսեր, Տէրօջը սպասէ ու անիկա քեզի պիտի օգնէ:»

Աւելի լաւ է բնաւ «պարտք» չունենալ: Եթէ այս «պարտք»երը կը ծագին անձին խորհուրդներէն եւ անոնց հետեւանք՝ արարքներէն, բարեպաշտը պարտի զսպել իր խորհուրդները եւ ունենալ միայն բարի, լաւ եւ օգտակար խորհուրդներ: Որով իր արարքներն ալ, որ կը ծագին խորհուրդներէ, կ'ըլլան բարի, լաւ եւ

օգտակար: Բարեպաշտը, նոյնիսկ, այս արարքներուն արդիւնքներուն պէտք չէ կապուած ըլլայ, որպէսզի անոնք ըլլան Աստուծոյ արարքները: Երբ արարքները իրեն չեն պատկանիր, չեն ալ կրնալ յառաջ բերել որեւէ հակազդեցութիւն, դառնալ «պարտք»ի, այսպէսով իր բոլոր պարտքերը ներուած կ'ըլլան:

«Է- մի քանիք պէ- պ'ի փորձո- թի- ն: այլ փրկե- ա պէ- պ'ի շարէն: պի լո է արեւոյտ- թի- ն է- պօրո- թի- ն է- փառ- լ յա- իրե- անա մա- լն»:

Առաջին նախադասութիւնը աստուածաբաններու միջեւ երկար վիճաբանութիւններու պատճառ եղած է: Ըստ ոմանց, Յիսուս չէ ըսած վերի առաջին նախադասութիւնը, այլ ակելի վերջ ուրիշներ ակելցուցած են: Իրենց համար դժուար եղած է ակետարանի ներկայացուցած սիրոյ Աստուծոյ գաղափարը հաշտեցնել, անձը փորձութեան տանող Աստուծոյ գաղափարին հետ: Յիսուսի ամէն խօսքը կշռուած է՝ ծառայելու նախատեսուած որոշ նպատակի: Որեւէ հակասութիւն գոյութիւն չունի սիրոյ Աստուծոյ գաղափարին հետ:

Միթէ աշխարհ, եւ ինչու չէ, բոլոր տիեզերքը Աստուծոյ ստեղծագործութիւնը չէ՞: Եթէ կ'ընդունինք թէ Աստուած է միակ ճշմարտութիւնը, ուրեմն ստեղծագործութիւնը, ներառեալ աշխարհը, տիեզերքի պաստառին վրայ խաղացող շարժանկարի պատկերի նման պատրանք մըն է եւ ոչ ճշմարտութիւն: Մարդ արարած, տարուած եւ խաբուած իր «Ես»էն՝ «չարէն», կը փորձուի աշխարհի շլացուցիչ «սա» «տա» (դա) եւ «նա»ի պատրանքին: Տարուած այն կարծիքով, թէ պատրանքը ճշմարտութիւնն է, կը մոռնայ իր իսկական էութիւնը, կ'ըլլայ աշխարհի գերին եւ կը կապուի անոր: Անգիտութիւնը կը գրաւէ իր միտքը:

Փորձութիւնը տեղի կուտայ մոլութեան, որ նման հարբած մարդու կը կորսնցնէ զանազանելու կարողութիւնը, օգտակարը՝ վնասակարէն, ճշմարտութիւնը՝ պատրանքէն:

Այլաբանական իմաստով մեկնաբանենք Ադամ եւ Եւայի պատմութիւնը: Ադամ կը ներկայացնէ մարդուս հոլութիւնը, Եւան՝ իր «Ես»ը եւ օձն ալ՝ ստեղծագործութեան պատրանքը: Եւա՝ «Ես»ը, կը փորձուի եւ կը խաբուի օձէն՝ ստեղծագործութեան պատրանքէն: Իր կարգին Ադամ՝ մարդը, կը փորձուի եւ կը խաբուի իր «Ես»էն, կարծելով թէ «Ես»ը իր ճշմարիտ հոլութիւնն է: Պէտք չէ մոռնանք, որ Եւա Ադամի կողէն ստեղծուած է, հետեւաբար անոր մաս կը կազմէ: Ադամ ալ կ'ուտէ արգիլեալ պտուղէն եւ կը մոռնայ իր Աստուածային ծագումն ու հոլութիւնը: Գիտութեան ծառին պտուղը, Ադամին, բարին չարէն զատելու կարողութիւնը կուտայ: Ահա, այսպէսով կը ծագի երկուութիւնը՝ «ես» եւ «ան»: Մարդը իր ինքնութիւնը հաստատած «Ես»ին վրայ՝ նոյնացած անոր հետ, կ'ապրի պատրանքային ժամանակի եւ միջոցի դրութեան մէջ, փոխանակ գոյատեւելու դրախտի՝ յաւիտենականութեան մէջ: Ժամանակի մէջ, ամէն ինչ ենթակայ է փոփոխութեան, ինչ որ պատճառ կ'ըլլայ դժբախտութեան: Ստեղծագործութեան պատրանքային փորձութենէն ազատելու համար, բարեպաշտը պարտ է փոխել իր մտքի ուղղութիւնը՝ աշխարհիկ, պատրանքային եւ արտաքին «սա» «տա» (դա) եւ «նա»յէ դէպի ներքին իր ճշմարիտ հոլութեան՝ Քրիստոսի: Երբ Աստուծոյ թագաւորութիւնը իրեն յայտնուի ազատած՝ փրկուած կ'ըլլայ, նաեւ իր «Ես»էն՝ «չարէն»: Քրիստոս լրիւ ի յայտ կուգայ իր մէջ եւ ինք ալ կը տեսնէ, որ Երանութեամբ ի յայտ եկած է տիեզերքը, Երանութեան մէջ կը գոյատեւէ եւ Երանութեան կը վերադառնայ: Ինք, Աստուած կը

տեսնէ ամէն տեղ, ամէն անձի մէջ եւ ամէն բանի մէջ՝ ամենայն փոքր մասնիկէն մինչեւ ամենամեծ աստղախումբերու մէջ: Այն ատեն կրնայ ըսել ոչ համոզումով (belief) այլ հաւատքով (faith) «Քուկղ է թագաւորութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

**Աղօթքը ինդրանք չէ: Ան Հոգիին կարօսն է:
(Կանտի)**





Մեր դժբախտութիւններուն Համար
 ուրիշներ մեղադրել կը նշանակէ
 դաստիարակութեան պակաս :
 Իսկ եթէ անչը ինչպիսի մեղադրէ,
 այդ կ'ըլլայ դաստիարակութեան սկիզբը :
 Ոչ ինչպիսի է ոչ ալ ուրիշներ շմեղադրել
 դաստիարակութեան իր ասարտին Հասնիլն
 է :
 (Եպիգորատ-Epictetus)



Աստուած է Ընդուն Ըամայն ցիւեւերէի,
 Տիւեւերէն Ըամայն մարմինը Անոր,
 Դասերն ու կարգերն Ըրեշտակների,
 Զգայարանն էն այդ Ըսկայ կապի,
 Երկինէն ցարերէ, է- անդամներն ալ
 Թագաորութիւնն էն այս Բնութեան,
 Միաստուածութիւնն Ըլնց այս է որ կայ,
 Ե- խաբէութիւն է ամէն ուրիշ Բան:
 (Օմար Խայեամ)



-Ը-

Ի՞ՆՉ ԵՆ

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ



ԻՆՉ ԵՆ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹՈՒՎԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉ Է ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեայ յարանուանութիւններու ընդհանուր առմամբ մեծամասնութիւնը, աստղագիտութիւնը «սատանայական» համարելով, անոր հանդէպ բուռն հակառակութիւն ցոյց կուտան: Հին կտակարանի կարգ մը որոշ համարներուն հենելով, կը յանգին նման որոշումի: Ասոնց ամենէն կարեւորն է:

«...Եթէ կարասցեն կատարել. պիտի աշխարհացար ՚ի խորհուրդս ին: Յարիցեն ասորեցոսացեն ըստիւ ասորեղագիտի նոր նշմարեն պատեղա երկնից. պատմեցեն ինչ պիտի Գալոց է ՚ի վերայ ին: Ահա-ասիկ ամենիւն իբրեւ պատի- ՚ի հոր այրեացին, եւ մի ասորեցոսացեն պանջինս իրեանց ՚ի Բոցոյ անոր. պիտի նսորս ի վերայ կայծականց հորոյ, նոյն եղիցին ինչ յօգնականութիւն:» (Եսայի ԽԷ: 13-14)

«Որհուրդներուդ շատութենէն ձանձրացար: Հիմա երկիւնքը գնողները, աստղագետները, Նոր ամիսներով գուշակութիւն ընողները թող ելլեն եւ քու վրաս գալիք չարիքէն քեզ ազատեն: Ահա անոնք մղելի պէս պիտի ըլլան Ու գանոնք կրակը պիտի այրէ: Իրենց հոգին բոցին գօրութենէն պիտի չկրնան ազատել: Տաքնալու համար կայծ մը, կամ դիմացը նստելու համար կրակ պիտի չմնայ:»

Եթէ բոլոր գլուխը ուշադրութեամբ կարդանք, կը տեսնենք, թէ անէծքը Բաբելոնի կոյս աղջիկներուն

ուղղուած (Համար 1) է եւ ոչ աստղագէտներուն: Նոյնիսկ պարտ ենք գրուածները աւելի վերացական իմաստով առնել: Նոյն գլխուն 10երորդ համարին մէջ կը կարդանք.

«... Եւ վասն վարակութեան շարութեանց շոյ: Ան ասելիք՝ թէ Ես եմ, Եւ չի՛նք ո՛ր իմ ընկեր: Այս Գրքաւոր, Ան ասնոցոս պայտ ՚ի միտ. Եւ պոռնկութիւնն ին յամօթ լիցի ինչ. Ան ասացել ՚ի սրբի ինձ, Ես եմ, Եւ չի՛նք ո՛ր իմ ընկեր:» (Եսայի ԽԷ:10)

«Դուն քու չարութեանդ ապաւինեցար Ու ըսիր. «Զիս տեսող չկայ»: Քեզ գլխէ հանողը քու իմաստութիւնդ ու գիտութիւնդ են: Սրտիդ մէջ ըսիր. «Ես եմ ու ինձմէ զատ մէկը չկայ:»»

Սա կը նշանակէ, թէ անէծքը «Ես»ին համար է, եւ վստահաբար, կոյս աղջիկներուն համար ալ չէ, այլ՝ եսասիրութիւնն է որ անէծքի կ'ենթարկուի: Այն օրերուն, գիտութեան մեծ մասը աստղագիտութեան վրայ հիմնուած էր, ուրեմն անէծքը, այդ գիտութեան անձին տուած ինքնահաւանութեան եւ հպարտութեան համար է: Այսօր ունինք բազմաթիւ այլ գիտութիւններ եւ աստղագիտութիւնը ընդհանուր առմամբ մոռցուած է: Եթէ այսօրուայ գիտութիւններն ալ անհատին տան ինքնահաւանութիւն եւ մեծամոլութիւն, այն ատեն այդ անձը անէծքի կ'ենթարկուի, եւ ոմանք սխալմամբ կրնան հետեւեցնել, թէ անոր ունեցած գիտութիւններն ալ անէծքի ենթարկուած ըլլան:

Հետեւեալ համարն ալ աստղագիտութեան դէմ իբր օրինակ եւ փաստ կը տրուի.

«Եւ եթէ մտանկոյն յերկիրն զոր Տէր
 Լսորոսաթ րասցէ իւզ. մի ուսանկոյն առնել
 ըսոր Գարշէլեաց աշտացն այնոցիկ: Մի
 Գրանկոյն 'ի իւզ' որ ածիցէ զուսոր իւր
 կամ զուսոր իւր զբոցով. եւ դիւթիցէ
 դիւթութիւն, եւ Հմայիցէ, եւ Հասահարոյ
 լինիցի. եւ կախարդիցէ կախարդանօղ, եւ
 զՀուկ, եւ նշանագէտ լինիցի առ 'ի
 զմեռեալս Հարցանելոյ: Բանսի պիղծ է
 րեառն ամենայն որ առնէ զայն. սի վասն
 այսպիսի Գարշէլեաց սատակեացէ զնոսա Տէր
 'ի իւն» (Բ.Օրէնք ԺԲ:9-12)

«Երբ քու Տէր Աստուածոյդ քեզի սուած երկիրը մտնես,
 այն ազգերուն գարշելի գործերուն պէս ընել մի՛
 սորվիր: Ձեր մէջ թող չգտնուի այնպիսի մարդ մը, որ
 իր տղան կամ աղջիկը կրակէ անցնէ կամ բաղդ նայի
 կամ գուշակութիւն կամ Հմայութիւն եւ կամ
 դիւթութիւն ընէ. Նաեւ կախարդ կամ վհուկ կամ
 նշանագէտ կամ մեռելահմայ չգտնուի. Վասն զի ով որ
 այս բաները ընէ, Տէրըն առջեւ գարշելի կ'ըլլայ ու
 այս գարշելի բաներուն Համար քու Տէր Աստուածդ քու
 առջեւէդ կը Հալածէ գանոնք:»

**Հոս պարտ ենք ուշագիւր ըլլալ, որպէսզի սխալ
 եզրակացութիւններու չյանգինք: Համարին մէջ
 աստղագիտութեան մասին որեւէ ակնարկ չկայ, այլ
 զգուշացումը կախարդութեան դէմ է: Աստղագիտու-
 թիւնը կախարդութիւն չէ, պէտք չէ որ ալ նման
 նպատակի Համար գործածուի: Հետեւեալ Համարն ալ
 արեւը լուսինը կամ երկնակամարի աստղերը
 չպաշտելու Համար զգուշացում մըն է: Այս Համարը**

չ'արգիլեր անոնց գիտութիւնը, ընդհակառակը, կ'ըսէ թէ անոնք դրուած են բոլոր ազգերուն համար:

«Եւ մի Հայեցեալ ընդ Երկիրս Գեասանիցեա
յարեգանն էւ պլուսինն էւ պաստեղս, էւ
յամենայն պարտ Երկնից, էւ մուրեալ
Երկիր պագանիցեա նոցա, էւ պաշտիցեա
յնոսս. պոր Բաթանեաց Տէր Ասորոսաթ
ամենայն ապագայ որ 'ի ներշոյ Երկնից.»

(Երկր. Օրէնք Դ:19)

«Նաեւ աչքերդ երկինք վերցնելով ու արեւը կամ լուսինը կամ աստղերն ու երկնքի բոլոր գարդը տեսնելով մի՛ խաբուիր ու անոնց երկրպագութիւն մի ընէր եւ զանոնք մի՛ պաշտեր. որովհետեւ քու Տէր Աստուածդ զանոնք բոլոր երկնքի տակ եղող ազգերուն համար կարգաւորեց:»

Արդարեւ հին Յունական եւ Հռովմէական քաղաքակրթութեան շրջանին, անոնք պաշտեցին կենդանակամարին համաստեղութիւնները եւ նաեւ ուրիշ համաստեղութիւններ՝ (constellations) իբր չաստուած եւ չաստուածուհիներ: Աւելի հին քաղաքակրթութիւններ ալ գործած են նոյն սխալը, ներառեալ հրեաները, որուն մասին պիտի անդրադառնամ աւելի յետոյ: Նոյնպէս պէտք է մոռնանք, թէ որեւէ գիտութիւն՝ ըլլայ աստղագիտութիւն կամ արդի այլ գիտութեան ճիւղեր կրնան անձին տալ հպարտութեան եւ հետեւաբար եսասիրութեան զգացում, որ կը համարուի եսապաշտութիւն: Այն ատեն զգուշացումը գիտութեան դէմ չըլլար, այլ կ'ըլլայ եսապաշտութեան դէմ: Բոլոր գիտութիւնները իրենք իրենց չէզոք են: Մարդ արարած զանոնք կրնայ օգտագործել լաւ եւ բարի, կամ ալ չար եւ վնասակար նպատակի համար:

«՚ի վերայ շերանց մի ուրիշէ: Եւ մի
 Հմայիցէ. Եւ մի Հասագէտի շննիցէ:
 (Ղեհակն ԺԹ: 26)

«Միւր արիւնովը մի՛ ուտէք. մի՛ հմայէք եւ
 գուշակութիւն մի՛ ընէք:»

**Այս վերի համարի զգուշացումը գուշակութեան
 համար է եւ ոչ աստղագիտութեան, իսկ յաջորդ
 համարն ալ դիւթուութեան (magic) եւ կախարդութեան
 դէմ զգուշացում է:**

«Եւ ինձն անցուցանէր զորոքիս իւր ընդ
 Հոր յերկրին թե՛ննամայ, Եւ Հմայէր, Եւ
 Հասահարց շննէր, Եւ դիւթէր. Եւ արար
 վհուկս Եւ թողիշս. Բազմացոյց ասնել շար
 ասաջի Տեառն աս ՚ի Բարկացուցանելոյ
 պնա:» (Երկրորդ մնացորդաց ԼԳ: 6)

«Անիկա Ենովմին որդին ձորին մէջ իր որդիները
 կրակէ անցուց ու գուշակութիւն, հմայութիւն ու
 դիւթութիւն կ'ընէր, վհուկներ ու նշանագէտներ ունէր
 եւ Տէրջը առջեւ չարութիւն ըրաւ եւ զանիկա
 բարկացուց:»

**Տեսնենք, թէ Մննդոց գրքին մէջ աստղագիտութեան
 մասին ի՞նչ գրուած է:**

«Եւ ասաց Աստուած՝ Եղիցին լուսաւորի՛ ՚ի
 Հասարարութեան Երկնից, ՚ի լուսաւորու-
 թիւն ՚ի վերա Երկրի. Եւ մեկնել ՚ի մէջ
 րորնջեան Եւ ՚ի մէջ Գիշերոյ. Եւ Եղիցին
 ՚ի նշանս, Եւ ՚ի Ժամանակս, Եւ յաւորս,
 Եւ ՚ի րարիս: Եւ Եղիցին ՚ի լուսաւորու-
 թիւն ՚ի Հասարարութեան Երկնից Ժագել

յերկիր • Եւ Եղիւ այնպէս : » (Օճնդոց Լ : 14-15)
 «Աստուած ըսաւ. «Երկիրնքի Հաստատութեանը մէջ
 լուսաւորներ թող ըլլան, որպէսզի ցորեկը գիշերէն
 գատեն եւ նշաններու եւ օրերու ու տարիներու Համար
 ըլլան: Ու երկիրնքի Հաստատութեանը մէջ լուսաւորներու
 Համար ըլլան, որպէս զի երկրի վրայ լոյս տան» Ու
 այնպէս եղաւ:»

Գրուած է, թէ լուսաւորները եղած են օրերը տարիները եւ ատենները՝ եղանակները, դարաշրջանները եւ այլն որոշելու համար: Համարը նաեւ կ'ըսէ, թէ անոնք եղած են նշաններու համար: Արդեօք մեր պարտականութիւնը չէ՞ այդ նշանները հասկնալու գիտութիւնը մշակել, սորվիլ: Աստղագիտութեան նպատակը գուշակութիւն ընել չէ, այլ եղանակները եւ դարաշրջանները հասկնալու համար պէտք է գործածուի: Մոգերը չգուշակեցին Յիսուսի ծնունդը, այլ իրենց աստղագիտական գիտութեամբ ուսումնասիրեցին աստղերը եւ զինք գտան (աւելի ետք պիտի անդրադառնամ ասոր մասին): Եթէ իրենց գիտութիւնը Աստուծոյ կամքին հակառակ էր, հետեւաբար «աստանայական», արդեօք Աստուած, երազի մէջ, անոնց պիտի երեւնա՞ր: Յիսուսի ծնունդի մասին բուն գուշակութիւն ընողը Եսայի մարգարէն էր, բայց ան մարգարէութիւն կը համարենք եւ կ'ըլլայ ընդունելի: Արդեօք ինքն ալ աստղագիտական հաշիւներով ըրա՞ւ իր գուշակութիւնը: Եթէ աստղագիտութիւնը ժխտական գիտութիւն մը ըլլար հետեւեալը գրուած չէր ըլլար:

«Լամբանայցեա պմապարօվիւն 'ի ժամանակի իրօմ. Եւ պիշելբաւարն 'ի վերայ վարսից իրօց աշիցե՞ա ընդ նոսա : » (Յոբայ 1, Լ : 32)
 «Մագարօթը ժամանակին կրնա՞ս Հանել Ու Արջին եւ իր գաւակներուն առաջնորդել:»

Մազարօթը՝ կենդանակամար կամ կենդանակերպներն (zodiac) է, իսկ Մեծ Արջը եւ զաւակները՝ Փոքր Արջ համաստեղութիւններէն (constellations) են:

Սաղմոսերգուն կ'ըսէ, թէ երկիրն քի աստղերը, Աստուծոյ աշխատած ձեռագործն են: Հետեւաբար աստղագիտութեան նպատակն ալ այդ ձեռագործը հասկնալն է: Կարդանք հետեւեալ երկու համարները.

«Տեանց զերկինս զԳործս մաքանց խոց,
զլուսինս եւ զաստղոս զորս Գորս
Հասարարեցեր:» (Սաղմոս Ը: 4)

«Երբ տեսնեմ երկինքը՝ քու մատերուդ գործը՝ Լուսինը ու աստղերը, գործնք դուն հաստատեցիր.» (Սաղմոս Ը:3)

«Երկինէ պարմեն զնոսոս Լարոսոսոյ, եւ
զարարաթս յեռաց նորս պարմե
Հասարարութիւն: Օր՝ առոր Բոյսէ զԲան.
Եւ Գիշեր՝ Գիշերի ցոցանէ զԳիտութիւն:
Ոչ են Բանէ եւ ոչ են խօսէ, որոց ոչ լսին
յայնէ նոցա: Ընդ ամենայն երկիր եւ
Բարբառ նոցա, մինչեւ 'ի ԺաԳոս աշխարհի
են խօսէ նոցա:» (Սաղմոս ԺԸ: 1-5)

«Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ Ու երկինքի հաստատութիւնը անոր ձեռքերուն գործերը կը ցուցնէ: Օրը օրին կը յայտնէ խօսքը ու գիշերը գիշերին կը ցուցնէ գիտութիւնը: Ձկայ զրոյց ու չկան խօսքեր: Անոնց ձայնը չլսուիր: Բայց ամէն երկիր ելաւ անոնց հնչիւնը Ու մինչեւ աշխարհի ծայրը՝ անոնց խօսքը: Անոնց մէջ արեւին համար վրան մը կանգնեց.» (Սաղմոս ԺԹ:1-4)

Հոս բացայայտօրէն գրուած է, թէ այդ Աստուածային ձեռագործը օրը օրին կը յայտնէ Աստուծոյ խօսքը եւ ցոյց կուտայ անոնց գիտութիւնը: Համաձայն յաջորդ

համարին, Աստուած ինք դրած է անոնց անունները:

«Թո՛ւ է պահպանութիւնն ասորեղաց, է-
պամենեւեանն պնոսա յանոսանէ կոչէ:»

(Աաղմոս ճԽԶ: 4)

«Աստուերուն թիւը կը համրէ, Անոնց ամէնքն ալ իրենց անուններովը կը կանչէ:» (Մաղմոս ձՆԻ: 4)

Նոր կտակարանի մէջ ալ աստղագիտութեան կարեւորութեան մասին օրինակներ կը գտնենք. վերեւ յիշուած մոգերու այցելութիւնը եւ Յիսուսի ծննդեան աստղը, որու մասին կը կարդանք (Մատթէոս Բ:2) համարին մէջ: Ղուկաս աւետարանիչ բացայայտօրէն կը գրէ երկինքի նշաններուն մասին եւ երբ այդ նշանները տեսնուին պիտի գիտնանք, թէ մօտ է երկրորդ գալուստը՝ հաւանաբար իր հետ բերելով մարդկային յաւելեալ բարեշրջում եւ գիտակցութեան մակարդակի բարձրացում:

«Եւ եղիցին նշանով յարեգականն է- ի լոսն է- յասորեղս. է- յերկրի քաղնասոց հեթանոսաց՝ ՚ի յահեղ քարքաոոց իբրէ- շոզնու է- խոռովութեան, յելանելոյ ոգոոց մարդկան յերկնուէ՝ է- ՚ի կարծեաց եկելոց ՚ի վերա ցրեպերաց. պի պորութիւնով երկնից շարժեացին: Եւ յայնժամ ցեպենն պորոյ մարդոց եկեալ՝ ամպովով պորութեամբ է- փառով քաղմով:» (Ղուկաս ԻԸ: 25-27)

«Արեգակին եւ լուսինն ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան ու երկրի վրայ ազգերը ասպնութեամբ պիտի տագնապին եւ ծովն ու ալիքները պիտի գուռան. Մարդոց պիտեբը պիտի նուազին իրենց վախէն եւ աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն, վասն զի երկնքի գորութիւնները պիտի շարժին: Այն ատեն պիտի

տեսնեն Որդին մարդոյ ամպի մէջ եկած գօրութիւնով
ու մեծ փառքով:»

Այն եկեղեցիները, որոնք կը դատապարտեն
աստղագիտութիւնը, իրենք կը գործածեն աստղաբա-
նական եւ աստղագիտական տուեալները՝ որոշելու
համար շարժական տօներու թուականը՝ ինչպէս
Զատիկը:

Աստղագիտութիւնը (astrology) ծագում առած է
աստղաբաշխութենէ (astronomy): Վերջինը աստղերու եւ
մոլորակներու գիտութիւնն է: Ան կ'ուսումնասիրէ
անոնց շարժումները, ծնունդը եւ վախճանը: Արդի
ժամանակներուս ան աւելի ընդլայնած է իր
տեսասահմանը, կ'ուսումնասիրէ նաեւ տիեզերքի
(universe) կազմութիւնը եւ բարեշրջումը, ինչպէս նաեւ
բարեշրջումը բնագիտութեան օրէնքներուն: Աստղա-
գիտութիւնը կ'ուսումնասիրէ այդ աստղերու շար-
ժումներուն ոչ միայն իրարու հետ ունեցած յարա-
բերութիւնները, այլ նաեւ այդ յարաբերութիւններուն
աշխարհի եւ մարդոց վրայ ունեցած ազդեցութիւն-
ները: Հին ժամանակներ երկու գիտութիւնները
միասին կ'ընթանային եւ նոյնիսկ աստղագիտութիւնը
աւելի յառաջացած էր քան աստղաբաշխութիւնը: Երբ
եկեղեցիներ աստղագիտութիւնը համարեցին իբր
«սատանայական» գիտութիւն, զայն, ընդհանուր առ-
մամբ, դատապարտեցին կորսուելու: Եւրոպայի մէջ
երբ զարթօնքի դարաշրջան սկսաւ, աստղաբաշխու-
թիւնն ալ սկսաւ յառաջանալ: Հեռագիտակի գիւտով
կարելի եղաւ աւելի լաւ տեսնել եւ հետեւիլ մոլորակ-
ներու շարժումներուն: Գիտցուեցաւ, թէ աշխարհն է
որ արեւին շուրջ կը դառնար, եւ ոչ թէ արեւը
աշխարհի շուրջ: Նոյնքան կարեւոր է գիտնալ, թէ
աշխարհ տափակ է, այլ գնդաձեւ: Անհերքելի փաստեր
կան, թէ հին ժամանակներուն մարդոց կեանքը
սերտօրէն շղթայուած էր աստղերուն հետ: Ասոր

փաստերը կը տեսնենք Կիզաի Բուրգերուն վրայ: Երեք գլխաւոր բուրգերուն թէ՛ չափերը եւ թէ՛ իրենց դիրքերը կը համապատասխանեն «որդի մարդոյ» կոչեալ Օրիոն համաստեղութեան (Orion constellation) գօտիի երեք աստղերուն:

Քարահունջը (stonehenge) որ աշխարհի շատ մը կողմերը կայ, անոնց ամենահռչակաւորը Անգլիա կը գտնուի, կը ներկայացնեն նաեւ հին աստղադիտարանները (observatory): Հայաստանի մէջ կան միայն 3 հատ, որոնցմէ մին անձնապէս տեսնելու բարեբախտութիւնը ունեցայ: Իսկ վերջերս եղած պեղումներու հետեւանք կէօպէքլիթէփէ, հին արեւմտեան Հայաստանի (ներկայիս Թուրքիա) մէջ գտնուած է Եգիպտական բուրգերէն նուազագոյն հինգ հազար տարի աւելի հին քարահունջ մը:

Անոնք, որոնք կը պաշտպանեն աստղագիտութիւնը եւ կը հաւատան թէ աստղերու իրարու հետ ունեցած յարաբերութիւնները կարող են ազդելու աշխարհիկ արարքներու վրայ, իրենց տեսակէտը կը հիմնեն հետեւեալ տրամաբանութեան վրայ:

Եթէ կը հաւատանք թէ Աստուած ամէն տեղ է, ուրեմն ինք թափանցած է տիեզերքի բոլոր կողմերուն եւ մասերուն մէջ, ինչպէս մենք թափանցած ենք մեր մարմիններուն բոլոր մասերուն եւ բջիջներուն մէջ: Ուրեմն տիեզերքն ալ պէտք է ներկայացնէ Աստուծոյ մարմինը: Մեր մարմիններու բջիջները բոլորն ալ իրարու հետ հաղորդակցութեան մէջ են եւ եթէ մարմինին մէկ մասը հիւանդանայ, բոլոր մարմինը կ'ազդուի: Նմանապէս տիեզերքի մէջ ալ, ամէն ինչ իրար կապուած է իբր Աստուծոյ մարմինի բջիջներ եւ իրարու հետ յարաբերութեան մէջ են: Հետեւաբար մէկ տեղի մէջ եղած՝ պատահած փոփոխութիւնը իր ազդեցութիւնը կրնայ ունենալ ուրիշ վայրի մը վրայ:

Աստղագիտութիւնն ալ հետեւաբար ուսումնասիրութիւնն է մոլորակներու աշխարհի վրայ ունեցած ազդեցութեան: Անգլերէն ասացուածքը կ'ըսէ «as above, so below» այսինքն «ինչպէս վերը, այնպէս ալ վարը»:

Զարմանալիօրէն, մարդկային պատմութեան սկիզբէն մինչեւ այսօր, ամէն կարեւոր արարքներ կը համապատասխանեն «աստղերու» իրարու հետ ունեցած որոշ յարաբերութիւններուն: Արդեօք այս արդիւնք մըն է՞ վերոյիշեալ «ինչպէս վերը, այնպէս ալ վարը» տրամաբանութեան կամ օրէնքին, ապա թէ ոչ կան կազմակերպութիւններ՝ գաղտնի կամ ոչ, որոնք կը հետեւին աստղերու շարժումներուն եւ կ'իրականացնեն արարքներ՝ մասնաւոր օրերու կամ ժամանակներու, որպէսզի անոնք համապատասխանեն աստղագիտական որոշ տուեալներու: Եթէ այո, ի՞նչ նպատակի համար: Իսկ, այս գաղափարը ինչպէ՞ս հաշտեցնել բնական աղէտներու հետ, որոնք նաեւ կը համապատասխանեն աստղագիտական տուեալներու: Հրեաներուն վեցանկիւն աստղը կը ներկայացնէ երկու եռանկիւն, միտն գագաթը դէպի վեր, իսկ միւսինը՝ դէպի վար: Կարծէք կ'ըսէ «ինչպէս վերը, այնպէս ալ վարը»:

Աստղագիտութիւնն է որ տուած է առաջին օրացոյցը: Աստղաբաշխութիւնը մօտաւորապէս 1500 տարի յետոյ կատարելագործած է գայն: Նոյնիսկ մեր այսօրուայ օրացոյցը տակաւին աշխարհի ամէն կողմ չի գործածուիր: Ճիշդ այդ պատճառով ալ տօներու թուականներն եղած են խառնակ: Զատկուայ տօնը, որ հրէական տօն մըն է, մենք՝ հայերս կը տօնենք տարբեր ժամանակ, հրեաները տարբեր ժամանակ: Յոյներն ալ, որոնք քրիստոնեայ են, գայն կը տօնեն տարբեր թուականի: Զատկուայ թուականը ամէն տարի կը փոխուի, որովհետեւ ան կը գուգաղիպի գարնան գիշերահաւասարէն՝ (equinox) այսինքն Մարտի 21էն

յետոյ եկող լիալուսինին հետեւող առաջին Կիրակիին: Զատիկի տօնին օրը հիմնուած է լուսինի օրացոյցի վրայ, քան թէ արեւի օրացոյցի: Կան Գրիգորեան (Gregorian) եւ Յուլիան (Julian) տոմարներ, որոնք ներկայիս իրարմէ տասնըերեք օրով կը տարբերին: Յուլիանի օրացոյցը հին է: Պատրաստուած է ՔԱ 46ին: Գրիգորեանը՝ 1582 թուականին, Գրիգոր ԺԳ. պապի կողմէ: Երկու օրացոյցերու միջեւ եղած տարբերութիւնը ամէն հարիւր տարին մէկ օր կ'աւելնայ, սակայն, նոյնիսկ աս ամբողջովին չի շտկեր երկու օրացոյցերու տարբերութիւնը, անհրաժեշտ էր 2000 թուականինը ցատկել եւ օր մը չաւելցնել: Ներկայիս կ'օգտագործենք Գրիգորեան օրացոյցը: Մենք՝ հայերս Մնունդը կը տօնենք Յունուար 6ին, իսկ Հռովմէական կաթողիկէ եկեղեցին՝ Դեկտեմբեր 25ին: Որոշ ուղղափառ եկեղեցիներ իրենց տօներուն օրերը կ'որոշեն ըստ Յուլիանի տոմարի եւ Մնունդը կը տօնեն համաձայն Յուլիանի օրացոյցի: Ուքրանացիներ Մնունդը կը տօնեն Յունուար 7ին, որովհետեւ Դեկտեմբեր 25էն 13 օր յետոյ եկած թուականը Յունուար 7-ն է: Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Երուսաղէմի Պատրիարքութիւնը միակն է, որ հետեւելով Յուլիանի օրացոյցի, Մնունդը կը տօնէ Յունուար 6էն 13 օր ետք՝ Յունուար 19ին: 2100 թուականին այս տարբերութիւնները պիտի հասնի 14 օրուայ: Յոյները, որ Մնունդը կը տօնեն Դեկտեմբեր 25ին, Զատիկուայ համար կը գործածեն Յուլիանի օրացոյցը: Ընդհանրացած Գրիգորեան օրացոյցի յարմարելու համար 13 օր կ'աւելցնեն, ուրեմն լիալուսինի օրն ալ կը փոխուի, հետեւաբար՝ անոր հետեւող Կիրակին եւ նաեւ Զատիկուայ օրը:

Առաջին քրիստոնեաները Մնունդը, Աստուածայայտնութիւն եւ Մկրտութիւնը կը տօնէին Յունուար

ճին: Այդ թուականներուն Հոռոմի մէջ Դեկտեմբեր 25ին կը տօնուէր «Հեթանոսական» տօն մը: Օրուայ քրիստոնեայ կղերականները չյաջողելով արգելք հանդիսանալ այդ տօնախմբութեան, որոշեցին Մնունդի տօնակատարութիւնը տեղափոխել Դեկտեմբեր 25ին, որպէսզի ժողովուրդը շարունակէ իր տօնախմբութեան սովորութիւնը, բայց տօնակատարութեան առարկան ըլլայ Յիսուսի ծնունդը: Իրենք կը շարունակեն տօնել Աստուածայայտնութիւնը եւ Մկրտութիւնը Յունուար ճին, իսկ մենք՝ երեքը միասին:

Ի՞նչ էր Դեկտեմբեր 25ի «Հեթանոսական» տօնին իմաստը, որ այդ օրը յարմար համարուեցաւ Մնունդի տօնի համար: Արդեօք այս տօնը աստղագիտութեան հետ կապ մը ունի՞: Մարդիկ միշտ ժամանակի եւ միջոցի դրութեան մէջ կը տեսնեն երկոտութիւն՝ ես եւ անոնք, չար եւ բարի, լաւ եւ գէշ, եւայլն: Արեւը կը ներկայացնէ բարին, քանի որ առանց արեւի կեանք գոյութիւն չի կրնար ունենալ, իսկ գիշերը, մութը կամ խաւարը՝ չարը: Աշնան օրերը երթալով կը կարճնան եւ գիշերները կ'երկարին: Կը թուի թէ չարը կը յաղթէ բարիին: Դեկտեմբեր 21ը ամենակարճ լոյս օրն է եւ ցորեկը երեք օր նոյն կարճութեամբ կը մնայ: Դեկտեմբեր 25ին, առաջին անգամ, լոյս օրը կը սկսի երկարիլ, յաղթելով խաւարին: Արեւը մեռած էր եւ կը վերածնի: Այս երեւոյթը պատճառ կ'ըլլայ մեծ տօնակատարութեան: Ուրեմն յարմար կը թուի նոյն օրը տօնել Աստուծոյ Լոյսին ծնունդը: Ինչպէս արեւը ինքզինք կը գոհէ սպառելով իր զօրութիւնը մեզի պարգեւելու համար այդ զօրութիւնը՝ ջերմութիւնը՝ հետեւաբար կեանք, միթէ Յիսուս ալ ինքզինք չգոհե՞ց համայն մարդկութեան համար, որպէսզի մենք ունենանք յաւիտենական կեանք: Ուրեմն յարմար

նկատուած է, որ արեւի վերածնունդը եւ Յիսուսի ծնունդը կատարուին նոյն օր:

Ուրեմն Ի՞նչ է աստղագիտութիւնը:

Շատեր աստղագիտութիւնը կը համարեն որպէս թաքուն գիտութիւն: Ի՞նչ է թաքուն գիտութիւնը: Ան գերբնական կամ գերմարդկային գիտութիւն մը չէ: Այլ ան, զայն գիտցող քիչերու կողմէ, համայն մարդկութենէ ծածուկ պահուած գիտութիւն մըն է: Ան չէ հրապարակուած եւ ընդհանրացած, մնացած է որպէս քիչերու սեփականութիւն: Այսօր ալ կան զանազան թաքուն գիտութիւններ: Կառավարութիւններ զանոնք ժողովուրդէն ծածուկ կը պահեն, զանոնք կնքելով «ԳԱՂՏՆԻ» (SECRET or CLASSIFIED) կնիքով: Հիւլէական զօրութեան գիւտը, որ թաքուն կը նկատուէր կառավարութիւններու կողմէ, այսօր այդ գիտութեան հմուտ անձերու թիւը հետզհետէ կ'աւելնայ: Որեւէ գիտութիւն՝ թաքուն կամ ոչ, կարելի է գործածել թէ՛ բարի եւ թէ՛ չար նպատակով: Այս կախում ունի զայն օգտագործող անձին՝ որոշումէն: Քաղաքներ լուսաւորելու նպատակով, հիւլէական զօրութեան ելեկտրականութիւն հայթայթման համար գործածութիւնը օգտակար կիրարկում մըն է, սակայն որպէս ուումը՝ կործանիչ է:

Ճիշդ է թէ աստղագիտութիւնը շահագործող շատ խաբեբաներ՝ զեղծարարներ կան, որոնք տկար միտքով անձեր կը խաբեն՝ կախարդութեամբ կամ ապագայի գուշակմամբ: Գուցէ նման տեսակի մարդոց գործածութեան արգելք ըլլալու նպատակով աստղագիտութիւնը, որպէս թաքուն գիտութիւն, հանրութենէն ծածուկ պահուած էր:

Երբեմն իշխող մարմիններ, երբ որոշ գիտութիւններու մասին տեղեկութիւն չունին, կամ անոնց բովանդակութիւնը իրենց քարոզած տեսակէտին

հակառակ է եւ կը նուագեցնէ իրենց ամբոխներու վրայ ունեցած բռնապետական ոյժը, զանոնք «Թաքուն» կը համարեն: Ասոր ցայտուն մէկ օրինակը հետեւեալն է: Հռովմէական Եկեղեցւոյ հաւատաքննութեան (inquisition) շրջանին, Գաղիլէո (Galileo), իր կեանքը փրկելու համար, դատարանի առջեւ, ստիպուեցաւ ուրանալ իր աստղաբաշխական գիւտը՝ աշխարհին արեւին շուրջ դառնալը: Մինչդեռ, ըստ եկեղեցւոյ իշխանաւորներուն, արեւն էր որ աշխարհին շուրջ կը դառնար: Այսօր իր գիւտը բոլորին կողմէ ընդունուած է: Անոնք նաեւ «Թաքուն» բառին կու տան ժխտական ակնարկութիւն, որ տարածուած է ժողովուրդին մէջ: Աստղագիտութիւնն ալ պախարակուած եւ դատապարտուած, այսօր կը համարուի իբր կորսուած գիտութիւն: Հետեւաբար համայն մարդկութիւնը փոխանակ հետեւելու Աստուածաշունչի տուած խորհուրդին եւ Աստուծոյ տուած նշանները տեսնելով խորացնելու իր հասկացողութիւնը եւ հաւատքը, կը հետեւին իշխող մարմիններու կողմէ իրենց հրամցուած հաւատալիքներուն: Արդեօք գաղտնի պահելը նպատակաւոր է⁶: Արդեօք իրենք չեն գիտեր եւ չեն արտօներ, որ ուրիշներն ալ գիտնան: Հոս յարմար է Աւետարանէն հետեւեալ մէջբերումը ընել.

«Թոյլ Կոտէ պնասա • Կոյրէ Էն՝ Կորաց
 առաջնորդէ: Կոյր Կորի յորժամ
 առաջնորդէ՝ ախալէ, Է- Էրկո՞լին ՚ի
 խորխորաց աճկանին:» (Մատթէոս ԺԵ: 14)

«Թող տուէք զանոնք իրենք կոյր են ու կոյրերու առաջնորդ: Եթէ կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոքր պիտի լցնան:»

Հին քաղաքակրթութիւնները յառաջացած էին աւելի աստղագիտութեան մէջ քան թէ աստղաբաշխու-

Թեան մէջ: Կը կարծուէր, թէ աշխարհ տիեզերքի կեդրոնն էր: Այս գիտութիւնը յառաջացած էր նաեւ Բաբելոնեան շրջանին, նոյնիսկ անկէ ալ առաջ: Իրենք հասկցած էին, թէ աշխարհ եւ երկնակամարի աստղերը կը յայտարարէին Աստուծոյ փառքը եւ կամքը: Աստղագիտութեան միջոցով կը յայտնաբերէին այդ փառքը եւ կամքը: Աստուածաշունչի գրութեան ժամանակ աստղագիտութիւնը ընդունուած էր իբր ճշմարիտ գիտութիւն: Այս գիտութիւնը մեզի կը փոխանցէ դարաշրջաններու իմաստը եւ նաեւ քիչ մըն ալ իմաստութիւնը: Աստուածաշունչի մէջ շատ բաներ պէտք է բառացի իմաստով առնուի, այլ վերացական իմաստով:

Աստղագիտութիւնը պէտք է ըլլայ աստղերու կամ անոնց ներկայացուցած մարդակերպ կամ կենդանակերպ էակներու պաշտամունքը՝ ներկայացուած պատկերները պաշտել իբր չաստուած եւ չաստուածուհիներ, ինչպէս յոյները եւ այլ քաղաքակրթութիւններ ըրած էին: Աստղագիտութիւնը կրօնք մը է եւ պէտք է որ կրօնքի վերածուի: Այդ պատկերները միայն գործիքներ՝ խորհրդանշաններ են, որ կը բխին մարդու հոգեբանութենէն: Անոնք միայն ցոյց կուտան մոլորակներու շարժումներու եւ մարդկային փորձառութիւններու յարաբերութիւնը: Կը թուի թէ մարդկային որոշ փորձառութիւնները կը համապատասխանեն մոլորակներու պտոյտներուն: Վերոյիշեալ Ծննդոց գիրքի եւ Ղուկասի աւետարանէն եղած մէջբերումները բացայայտօրէն կը յայտնեն թէ արեւի, լուսնոյ եւ մոլորակներուն նշանները մաս կը կազմեն Աստուծոյ նպատակին: Այս նշաններու ուսումնասիրութիւնը աստղագիտութիւն է:

Անցեալի աստղագէտներ երկնակամարին վրայ նշմարած են կայուն՝ անշարժ աստղեր եւ նաեւ

չարժուն՝ պտըտող աստղեր: Գտած են 7 պտըտող աստղեր: Իրենք հեռագիտակ չունենալով արեւի գրուժեան մէջ գտնուող 9 մոլորակներէն միայն 5 հատը տեսած էին եւ հին աստղագիտութիւնը ուրեմն հիմնուած է 7 պտըտող աստղերու վրայ: Իրենք զանոնք «աստղ» կոչած են, բայց մենք այսօր գիտենք որ միայն Արեւը աստղ է, իսկ 5ը մոլորակ եւ մէկն ալ՝ Լուսինը, արբանեակ: (Այս գրութեան մէջ երբեմն մտրտակներուն ալ «աստղ» բառը ջակերտի մէջ ըլլալով գործածուած է:): Իններորդ մոլորակը գտնուեցաւ միայն 1930ականներուն: Հետաքրքրական է նաեւ հետեւեալը.

Վէլիքովսքի անուն ռուս-հրեայ բժիշկ մը, երբ կ'ուսումնասիրէ հին աստղագիտական գրութիւնները, կը նշմարէ որ Բաբելոնեան եւ աւելի հին գրութիւններու մէջ Արուսեակի մասին որեւէ ակնարկութիւն չկայ: Իր եզրակացութիւնը այն է, թէ գոնէ 3500 տարի առաջ, կամ աւելի, Լուսնի թագէն (Jupiter) կտոր մը փրժած եւ արեւին շուրջ ծիր մտնելով եղած է մոլորակներէն մին: Արեւին մօտ ըլլալով, առաւօտեան երկնակամարին վրայ, արեւածագէն անմիջապէս առաջ երեւցող ամենափայլուն «աստղն» է: Անունը Արուսեակ է, որովհետեւ Արեւի լոյսին գալուստը կը ծանուցանէ: Աստղագիտութեան մէջ, նոյն իմաստով, նաեւ կոչուած է Լուսաբեր: Այդ օրերու աստղաբաշխեր համաձայն չեն եղած իր տեսութեան, հակառակ որ այս տեսութեան հենելով ինք Արուսեակի ջերմութեան նկատմամբ եւ այլ գուշակութիւններ ըրած է, որ այսօր անոնց ճիշդ ըլլալը փաստուած է:


Ուրեմն ի՞նչ է աստղագիտութիւնը:

Անցեալի աստղաբաշխ-աստղագէտները ուսումնասիրեցին այս պտըտող «աստղերուն» յարաբերութիւնը անչարժ աստղերուն հետ: Երկնակամարի վրայի կայուն աստղերու խմբակները իրար միացնե-




































լով, իրենց երեւակայութեան մէջ զանոնք նմանցուցին զանազան կենդանիներու եւ իւրաքանչիւրը անուանեցին համապատասխան անուններով:

Ասոնց անունները ժամանակի ընթացքին փոփոխութեան ենթարկուեցան: Այժմու անունները կուզան Յունական եւ Լատինական աղբիւրներէ: Աշխարհի շուրջի երկնակամարի 360 աստիճանը բաժնած են 12 հաւասար մասերու: (Տես պատկեր թիւ: 1)

Պատկեր:1-ԿԵՆԴԱՆԱԿԱՄԱՐ




Պատկեր:2-ԿԵՆԴՐԱՆԱԿԵՐՊԵՐ ԵՒ «ԱՍՏՂԵՐ»

ԿԵՆԴՐԱՆԱԿԵՐՊԻ 12 ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅՆՆԵՐՈՒ ՈՒ «ԱՍՏՂԵՐՈՒ» ՄՈԼՈՐԱԿՆԵՐՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅՆՆԵՐ		«ԱՍՏՂԵՐ» ՄՈԼՈՐԱԿՆԵՐ	
	 ԽՈՅ		ԱՐԵՒ
	 ՅՈՒՒ		ԼՈՒՄԵՆ
	 ԵՐԿՈՒՈՐԻԱԿՆԵՐ		8 ՓՈՅԼԱԾՈՒՒ
	 ԽԵՅԳԵՏԻՆ		6 ԱՐՈՒՍԵԱԿ
	 ԱՌԻԲՑ		5 ԱՇԽԱՐՀ
	 ԿՈՅՍ		7 ՀՐԱՏ
	 ԿՇԻՈՒՔ		1 ԼՈՒՄԵՆԹԱԳ
	 ԿԱՐԻՃ		2 ԵՐԵՒԱԿ
	 ԱՂԵՂՆԱՐՈՐ		3 ՈՒՌԱՆՈՍ
	 ԱՅՈՒՂՁԻՐ		4 ՊՈՍԻԿՈՆ
	 ԶՐՀՈՍ ԿԱՄ ԶՐԿԻՐ	 9 ՊՂՈՒՏՈՆ	
	 ԶԳՆԵՐ		

Մոլորակները որեւէ Արեւիկ ունենալով
 Հեղուորոտիանս արտադր են կազմում որեւէ
 որեւէ ժամերը (ՆԵՑԵՆՊՅՏԻԿ = 1-9)

Պատկեր:3-ՄՈՒՈՐԱԿՆԵՐ



Ամէն մէկը կը համապատասխանէ աստղախումբի մը՝ պատկերի մը: Այս աստղախումբերու՝ ընդհանրապէս կենդանապատկերներու հաւաքածոն կը կոչուի «կենդանակամար կամ կենդանակերպ» (երբեմն ալ Աղթարք) (zodiac):

(Կենդանակերպին եւ նաեւ «աստղ»երուն անուններուն. պատկերներուն եւ նշաններուն համար տես պատկերներ թիւք: 2 եւ 3)

Դարաշրջանները կ'որոշուին դարնանային գիշերահաւասարին՝ (equinox) այսինքն Մարտ 21 կամ 22ի առաւօտուն արեւածագին արեւին երկնակամարին վրայ գրաւած վայրէն՝ մէջը գտնուած համաստեղութենէն (constellation): Կենդանակերպի (zodiac) համաստեղութիւնները, ամիսներու շարքաւորումին հետեւելով, կ'ընթանան ժամացոյցի ուղղութեամբ, բայց դարաշրջանները կ'ընթանան ժամացոյցի հակառակ ուղղութեամբ: Արեւը, ամէն տարի դարնանային գիշերահաւասարին, երկնակամարին վրայ աւելի ետ կէտի մը վրայ կը ծագի: 2160 տարի կը տեւէ որ 30 աստիճան աւելի ետ երթալով կենդանակամարի 12 համաստեղութիւններէն մէկէն միւսը անցնի: Լման երկնակամարի շրջանակը կը լրացնէ 25920 տարիէն:

Կը կարծուի թէ ջրհեղեղը պատահած է «Ջրհոս»ի դարաշրջանին: Մօտ ատենէ դարձեալ «Ջրկիր»ի դարաշրջանը պիտի սկսի, որով ջրհեղեղը պէտք է եղած ըլլայ մօտաւորապէս 25000 տարի առաջ: Եգիպտական «Մփինքս»ը (Sphinx) որ առիւծի մարմին ունի, շատ հաւանաբար քանդակուած է «Առիւծ»ի դարաշրջանին մէջ, որով պէտք է ունենայ մօտաւորապէս 10000-12000 տարուայ հնութիւն:

Տեսնենք, թէ Աստուածաշունչին մէջ ինչ




աստղագիտական օրինակներ կան: Արդեօք զուգադիպութիւն մըն է՞ հրեաներուն 12 ցեղ ունենալը՝ կենդանապատկերին վրայի թիւով: Երուսաղէմ ունի 12 դուռ: Նմանապէս Յիսուս ընտրեց միայն 12 աշակերտներ: Այս թիւը զուգադիպութիւն մը չէր, քանի որ աշակերտները, Յուդայի մահէն յետոյ, անհրաժեշտութիւն զգացին իրենց թիւը 12 ըլլալով պահել, որով Մատաթիան աւելցուցին իբր աշակերտ:

ՅԻՍՈՒՍ ԾՆՈՆԵՂԱՆ ԱՍՏՂԸ.

Քէլէր (I. Kepler), աշխարհահռչակ աստղաբաշխը, 1600ական թուականներուն, հաշուելով որոշած է, թէ մեր օրացոյցով ՔԱ 6 թուականին «Լուսնթագ» (Jupiter) եւ «Երեւակ» (Saturn) մոլորակներու հանդիպումը (conjunction), պէտք էր եղած ըլլար Յիսուսի ծնունդը մատնանշող աստղը: Նոյն ատեն, այս երկու «աստղ»երուն Օրիոն համաստեղութեան՝ (constellation of Orion) «Որդի մարդոյ» գօտիի երեք թագաւորներ կոչեալ 3 աստղերուն հետ հանդիպումը, կազմած է շիտակ գիծ մը: «Լուսնթագ» մոլորակներուն ամենամեծը կը կոչուէր Արքայ «աստղ»: «Երեւակ»ն ալ ճանցուած էր իբր հրեաներուն աստղը: (Տես Պատկեր ԹԻւ: 4) Հրեաներուն «սուրբ օրը» Շաբաթ օրն է եւ Շաբաթ օրն ալ «Երեւակ»ի օրն է: Շաբթուայ ամէն օրը կը համապատասխանէ «աստղ»ի մը: Այս իրողութիւնը օրերու հայկական անուններէն յայտնի չէ, սակայն եթէ օրերուն արեւմտեան լեզուներով գրուած անունները քննենք, իրողութիւնը անմիջապէս ի յայտ կուգայ: (Տես Պատկեր ԹԻւ: 5)

Ուրեմն զարմանք պէտք չէ պատճառէ, 3 մոգերու Հրէաստան գալը եւ Յիսուսը փնտռելը: Այդ երկու աստղերու հանդիպումը բացայայտօրէն կ'աւետէր հրեաներու արքայի ծնունդը: Նոյն ատեն Օրիոնի 3 աստղերը կ'աւետէին 3 մոգերու այցելութիւնը:


Պատկեր:4



Պատկեր:5

ՕՐԵՐՈՒ		ԱՆՈՒՆՆԵՐ		ՄՈՒՐԱԿԻ ԱՆՈՒՆ	
ՀԱՅԵՐԷՆ	ԱՆԳԼԵՐԷՆ	ՖՐԱՆՍԵՐԷՆ	ԱՆԳԼԵՐԷՆ	ՖՐԱՆՍԵՐԷՆ	
Կիրակի	Sunday	Dimanche	Sun	Soleil	
Երկուշաբթի	Monday	Lundi	Moon	Lune	
Երեքշաբթի	Tuesday	Mardi	Mars	Mars	
Չորեքշաբթի	Wednesday	Mercredi	Mercury	Mercure	
Հինգշաբթի	Thursday	Jeudi	Jupiter	Jupiter	
Ուրբաթ	Friday	Vendredi	Venus	Venus	
Շաբաթ	Saturday	Samedi	Saturn	Saturne	

Ըստ հին եւ նոր կտակարանի, մարդկային բոլոր արարքները հետեւած են աստղագիտական կենդանակամարի դարաշրջաններուն: Երբ հրեաները Եգիպտոսէ ելլելու կը պատրաստուէին, մահուան հրեշտակը մեռցուց ամէն ընտանիքի առաջին զաւակը, բայց հրեաները ազատեցան՝ իրենց մորթած գառնուկին արիւնը դրան վրայ քսելով: Այս առաջին նշանն էր յաջորդ դարաշրջանին՝ «Նոյ»ի շրջանին: Եգիպտոսէ ելլելնէն ետք երբ Մովսէս լեռ ելաւ տասը պատուիրանները ստանալու, հրեայ ժողովուրդը ոսկիէ հորթ մը շինեց եւ սկսաւ զայն պաշտել: Ինչո՞ւ հորթ եւ ոչ ուրիշ կուռք մը:



Որովհետեւ իրենք «Յուլ»ի դարաշրջանի մէջ գտնուելով, յարմար դատած էին հորթը՝ իբր կուռք: Ուրեմն կը պաշտէին աստղերը՝ «Յուլ»ի համաստեղութիւնը: Մովսէս երբ լեռնէն իջաւ կոտորեց եւ փճացուց հորթէ կուռքը, նաեւ նշելով «Յուլ»ի դարաշրջանի վերջը:

Ինչպէս նախատեսուած էր գառնուկի արիւնէն, յաջորդ դարաշրջանը եղաւ «Խոյ»ի շրջան: Այս դարաշրջանի (ՔԱ 1400) միջոցին պատահեցաւ Երիթովի պատերուն փլուզումը՝ խոյի եղջիւրի փողահարութեամբ: Յիսուս՝ Գառն Աստուծոյ, ծնաւ այս դարաշրջանի վերջաւորութեան: Ան, յաջորդ դարաշրջան՝ «Զուկ»ի շրջան մուտքի համար պատրաստութիւնները ըրաւ: Իր ընտրած աշակերտներուն մեծ մասը ձկնորսներ էին եւ ըսաւ թէ զիրենք մարդու որսորդ պիտի ընէր: Զուկով կերակրեց 5000 հոգին: «Խոյ»-ի դարաշրջանը վերջացաւ «Գառն Աստուծոյ»ի խաչելութեամբ: Սկսաւ «Զկներ»ի դարաշրջանը: Յիսուս ինք աշակերտներուն ըսած էր, թէ իրենց հետ պիտի ըլլար միայն միւնչեւ այդ դարաշրջանի վերջ:



«...Եւ աւա-ասիկ էս ընդ յեզ էմ
 պամենայն ա-որս՝ մինչեւ կարարած
 աշխարհի:» (Մարգէնոս ԻԲ: 20)
 «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս
 վերջը: Ամէն:»

Աւետարանի անգլերէն լեզուով նոր թարգմանութիւնները գործածած են «age» բառը քան թէ «world» բառը: Ուրեմն «աշխարհի վերջը» կը նշանակէ «դարաշրջանին վերջը»: Պօղոս անգամ կ'ակնարկէ դարաշրջանի (Խոյի դարաշրջանի) վերջաւորութեան մասին: Կարդանք:

«Եյլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա. Բայց Գրեցաւ վասն մերոյ խրատոս, յոյս վախճան յա-իբեանցն Էւաս:»
 (Լ Աորնիայիս Ժ: 11)

«Բայց այս ամէն բաները իբրև օրինակ կը պատահէին անոնց. իսկ մեզի՛ քանի որ դարերուն վերջը Հասա՛ խրատ ըլլալու համար գրուեցան:»

«... Բայց արդ՛ ա-ասիկ, միանգամ՛ ՚ի կարարաժ յա-իտեանց՛ յանարգո-ի մեղաց ի-րով պարարագա-ն յայտնալ է:»
(Եբրայեցիս Թ: 26)


«... բայց Հիմա մէկ անգամ դարեր անցնելէ վերջը՛ իր անձին պատարագովը յայտնուեցա՛ մեղքը մէկդի՛ ձգելու համար:»

Թէեւ Յիսուս ինք նոր կրօնք մը չհիմնեց, բայց իր աշակերտները հիմնեցին Քրիստոնէութիւնը, որուն նշանն էր ձուկը: Յունարէն «Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդի փրկիչ» նախադասութեան բառերուն առաջին տառերով կը կազմուի ձուկ բառը: (Տես Պատկեր Թիւ: 6Ա-Բ) Եպիսկոպոսներու թագն ալ կը ներկայացնէ ձուկին բերանը: (Տես Պատկեր Թիւ: 7)

ՊԱՏԿԵՐ:6Ա

I	X	Θ	Υ	Σ
Iesous	Christos	Theou	Yios	Soter
ՅԻՍՈՒ	ՔՐԻՍՏՈՍ	ԱՍՏՈՒԹՅՈՅ	ՈՐՈՒ	ՓՐԿԵՐ
Jesus	Christ	God's	Son	Saviour

ՊԱՏԿԵՐ:6Բ



ՊԱՏԿԵՐ:7



Այս օրերուն ջրային աղէտներ շատ կը պատահին: Արդեօք ասոնք «Ջրհոս»ի դարաշրջանին մօտեցած է և «Ձկներ»ու դարաշրջանին վերջաւորութեան մօտաւոր

ըլլալուն նշաններն են: Հռովմէական Կաթողիկէ եկեղեցին, իր հօտին՝ հետեւորդներուն, Ուրբաթ օրերը պահք բռնելու համար պայման դրած էր ձուկ ուտել: Այսօր, այլեւս այդ օրէնքը ի զօրու չէ: Ծովերու մէջ ձուկերուն թիւը զգալիօրէն կը նուազի: Մեծ ու պատիկ ձուկեր մեծ թիւերով կարծէք անձնասպան կ'ըլլան: Միթէ ասոնք բոլորն ալ նշաններ չեն «Զկներ» ի շրջանի վերջաւորութեան:

Կարեւոր է նաեւ Աւետարանը կարդալ առանց նախապաշարումի եւ կարծիքներու նախադրացումի: Այն ատեն կարելի կ'ըլլայ տեսնել որոշ իրողութիւններ: Կարդանք հետեւեալ երկու համարները.

«Եւ ասալէ երկուս, յաշակերտաց անոր՝
 եւ ասէ ցնոսս. երթայ՛ ՚ի խաղալէն, եւ
 իբրեւ մտանիցել՛ ՚ի խաղալէն՝ պատահեացէ
 յեւ այր մի, որ ասփոր ջրոյ յուս ունիցի,
 եւ երթայ՛ զհեցո նորա: Եւ յոր ցոռն
 մտանիցէ, ասասչի՛ց ցտանոցերն. վարդապետ
 պէտք ասէ՝ ո՞ր էն իջավանէն, որ
 աշակերտօ՛ւս ուրիցեմ զպարիկն: Եւ նա
 ցոցցէ յեւ վերնացոռն մի մեծ՝ զարդարե-
 տալ. անդ պարտաստեալի՛ մեւ:» (Մարտոս
 ԺԴ: 13-15)

«Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց ու ըսաւ անոնց. «Գացէք քաղաքը ու ձեզի մարդ մը պիտի պատահի՝ որ ուսին վրայ ջուրի սափոր մը կը տանի, գացէ՛ք անոր ետեւէն: Ուր որ մտնէ, տանը տէրոջը ըսէք. «Վարդապետը կ'ըսէ, Ո՞ր է օթեւանը, ուր աշակերտներուս հետ մէկտեղ կարենամ գտնուիլ ուտել»: Ան ալ ձեզի յարգարուած ու պատրաստ մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ. հոն պատրաստեցէք մեզի:»

«Եւ ասէ ցնոսաւ. ահա՛ իբրեւ մտանիցելէ՛ ՚ի շաղափն, պատարհեացել յեւ այր մի Բարձեալ սաստիկ ջրոյ. երբիջիւղէ՛ պահար նորա՛ ՚ի ցոռնն յոր մտանիցել. եւ ասասջիւղէ՛ պտանոցեր ցոռնն. վարդապետ ասէ իւր. ո՞ր էն վանիւն իմ, յորում պտասելն ուրիցեմ աշակերտութիս Ըանդերձ: Եւ նա ցոցցել յեւ վերնագոռն մի մեջ պարտարեալ, եւ անտ պատարաստեալի:» (Ղոսկաս ԻԲ: 10-12)

«Ըստ անոնց. «Երբ քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի պատահի, որ ուսին վրայ ջուրի սափոր մը ունի. անոր ետեւէն գացէք այն տունը, ուր ինք կը մտնէ: Այն տանտիրոջ ըսէք. «Վարդապետը կ'ըսէ՛. Ո՞ր է օթեւանը ուր աշակերտներուս հետ մեկտեղ զատիկը կարենամ ուտել»: Ան ալ ձեզի յարգարուած մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ, հոն պատրաստեցէք»:»

Կարելի է՞ որ ջուրի սափորով մարդը, իր բառացի իմաստէն աւելի, ակնարկ մը ըլլայ «Ջրկիր»ի դարաշրջանի ներկայացման: Եթէ նման հայեացքով կարդանք, կարելի կ'ըլլայ հետեւցնել որ Յիսուս կ'ըսէր, թէ համայն մարդկութիւնը Քրիստոսի հետ պիտի հաղորդուի «Ջրկիր»ի դարաշրջանին մէջ, որովհետեւ Ջատիկի տօնին առթիւ, վերջին ընթրիքին, հաղորդութեան խորհուրդը դրուեցաւ: Կարելի է որ մարդկային բարեշրջում եւ գիտակցութեան մակարդակի բարձրացում ըլլայ յաջորդ դարաշրջանին: Թերեւս ճիշդ այդ պատճառով ալ զատիկը տօնեց վերնատան մը մէջ՝ տան բարձր յարկին մէջ, որ կը ներկայացնէ գիտակցութեան մակարդակի բարձրացում:

Յունական դիցաբանութեան մէջ ալ կը տեսնենք դարաշրջաններու համապատասխանող առասպելներ:

Մինասաւրոսի (Minotaur) առասպելը, շատ հաւանաբար, կը պատկանի «Ցուլ»ի դարաշրջանին: (Տես Պատկեր Թիւ: 8) Իսկ Յասոն եւ Արգոնաւորքներու (Jason & the Argonauts) ոսկեբուրդ ոչխարի մորթը (golden fleece) գտնելու արկածախնդրութիւններու առասպելը վստահաբար կը պատկանի «Խոյ»ի դարաշրջանին (Տես Պատկեր Թիւ: 9):

Պատկեր:8



Պատկեր:9



Պատկեր:10



Վերջերս Երուսաղէմի մօտ բանտի մէջ եղած պեղումներու հետեւանք յայտնաբերուած հին եկեղեցիի մը գետնի խճանկարը ցոյց կուտայ «Զինեք» դարաշրջանը ներկայացնող պատկեր (Տես Պատկեր Թիւ: 10):

Հոս յարմար է նաեւ ուսումնասիրել հետեւեալ համարները.

«Զխա՞րդ անկաւ յերկնից արուսեակն՝ որ ընդ առաւօրն թափէր. անկաւ յերկիր, խորրոսկեցաւ՝ որ առաւելը առ ամենայն աշխատ: Դու առելիր ՚ի մորի խոմ. ելից յերկնն, ՚ի վերոյ իան պաստիշու երկնից արկից պաշտոն իմ...» (Եսայի ԺԴ: 12-13)

«Ով առտունց ծագող Արուսեակ, Ի՞նչպէս երկնքէն ինկար Ու մինչեւ գետինը կործանեցար, Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր: Դուն սրտիդ մէջ ըսած էիր. «Երկինք ելլեմ Ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնեմ» ...»

«որոշէա եւ ես ընկալայ Ըօրմէ իմմէ, եւ ցայ նոցա պաստիշն առաւօրոսն:» (Յայրնո-թիւն Բ: 28)

«Ինչպէս ես ալ իմ Հօրմէս առի ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը:»

«Ես Յիսուս ... ես արմատի եւ սէռ ՚ի դաս-Դայ, եւ ասորդ պայծառ անաս-օ-յոյն:» (Յայրնո-Նի-ն ԻԲ:16)

«Ես՝ Յիսուս ... ես Դաւիթին արմատն ու ցեղէն եմ ու առաւօտեան պայծառ աստղը:»


Այս երեք համարներուն նամանականդ առաջինը եւ վերջինը կը թուին հակասական ըլլալ: Առաջինին մէջ Եսայի մարգարէն կ'ըսէ թէ Արուսեակը՝ առտուայ աստղը, որ Լուսաբեր ալ կը կոչուի, «երկինքէն ինկաւ», որովհետեւ ուզեց Աստուծոյ աթոռը նստիլ: Աս ընդհանրապէս կը վերագրուի «սատանայի» եւ անոր անկումին: Սակայն երրորդ համարին մէջ Յիսուս բացայայտօրէն կ'ըսէ. «ես եմ առաւօտեան պայծառ աստղը»: Ինչպէ՞ս հաշտեցնել առաւօտեան աստղին նկատմամբ այս երկու հակասական դադափարները: Աստղագիտութեան մէջ ան Յիսուս կը ներկայացնէ՞, թէ ոչ «սատանան»: Ո՞վ է «սատանան»: Արդեօք կարելի է՞, որ Արուսեակը ներկայացնէ մարդը, քանի որ մարդու միջոցաւ կարելի է ունենալ գիտակցութեան մակարդակի բարձրացում եւ Աստուածային փորձառութիւն եւ հետեւաբար Աստուածայայտնութիւն, ինչպէս Յիսուս՝ որդի մարդոյ, ի յայտ բերաւ Աստուած: Որովհետեւ Աստուածայայտնութիւնը մարդու միջոցաւ կարելի է, ուրեմն հարկ է, որ Արուսեակը ներկայացնէ մարդը: Արուսեակը կը ծանուցանէ՞ կը յայտարարէ Արեւին գալուստը: Նմանապէս մարդն ալ իր գոյութեամբ եւ կարողութեամբ պէտք է ծանուցանէ՞ յայտարարէ Աստուածայայտնութիւնը: Աստուած ստեղծեց մարդը իր «պատկերին» նման: Աս չի նշանակեր թէ Աստուած Ֆիզիքապէս մարդու կը նմանի, կամ մարդը՝ Աստուծոյ: Այլ ան կը նշանակէ, թէ

մարդ արարածն ալ ունի այն գիտակցութիւնը (consciousness), որ Աստուածային է եւ այդ գիտակցութեան մակարդակը մինչեւ կատարեալ Աստուածայայտնութիւն բարձրացնելու կարողութիւնը ունի: Եսայի մարգարէին ըսածը այն է որ մարդուն «Ես»ը՝ «աստանան» կառավարիչը եղաւ մարդուն եւ մարդուս «Ես»ն է, որ արգելք կը հանդիսանայ այդ Աստուածայայտնութեան: Արդեօք վերոյիշեալ Վէլիքովսքիի եզրակացութիւնը նկատմամբ Արուսեակի Լուսնթագէն փրթած ըլլալը ճիշդ է^o: Լուսնթագ կը ներկայացնէ մոլորակներու Արքան, այսինքն Քրիստոս: Նոյնիսկ անունը կը յայտնէ այս իրողութիւնը, Լուսնթագ՝ Լոյսերու թագը (թագաւորը): Մարդ, դրախտին մէջ, Աստուծոյ հետ էր: Արուսեակ ալ Լուսնթագին հետ էր: Մարդուն իր «Ես»էն խաբուելով դրախտէն դուրս նետուելը՝ Աստուծոյ ներկայութենէն բաժնուելը, գոնէ իր գիտակցութեան մէջ, արդեօք չի^o համապատասխաներ Արուսեակին Լուսնթագէն գաւաւելուն՝ բաժնուելուն: Արդեօք աս «Ինչպէս վերը, այնպէս ալ վարը» օրէնքին համար օրինակ մըն է^o, թէ ոչ, անոնք, որոնք Մենդոց գիրքը գրեցին, կը հետեւէին աստղերու շարժումներուն եւ մարդկային պատմութիւնը անոր համաձայն գրեցին, որպէսզի ան յարմարի աստղերու շարժումներուն:

Երկրորդ մէջբերումն ալ հետաքրքրական է եւ կը գրէ «անոր որ յաղթէ» (համար 26) պիտի տամ առաւօտեան աստղը, ինչպէս Ես ալ Հօրմէս առի: Մեզի կը մնայ միայն յաղթել մեր «Ես»ին: Ինչպէս Յիսուսի միջոցաւ Աստուծոյ՝ Քրիստոսի յայտնութիւնը եղաւ, նմանապէս մեզի համար ալ կարելի պիտի ըլլայ մեր Առաւօտեան աստղի պարտականութիւնը կատարել՝ յայտարարելով եւ յայտնաբերելով Արեւածագը՝ Աստուածայայտնութիւնը: Ճիշդ ասոր համար երրորդ

համարին մէջ Յիսուս կ'ըսէ «Ես եմ առաւօտեան
 աստղը»: Յիսուս թէ կատարեալ մարդ էր եւ նաեւ
 կատարեալ Աստուած: Իբր կատարեալ մարդ ըսաւ «Ես
 եմ Արուսեակը», որովհետեւ Արուսեակը կը
 ներկայացնէր մարդը, որ յայտնաբերեց Աստուածա-
 յայտնութիւնը:

Քրիստոս ըսաւ «Ես եմ կեանքը»: Քանի որ
 կ'ապրինք Քրիստոս մեր հետն է արդէն: Մեզի կը մնայ
 միայն յաղթել «Ես»ին եւ կերտել բարձրագոյն
 գիտակցութիւն՝ Աստուածայայտնութիւն:




ԱՂԹԱՐՔԻ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ



ԽՈՅ

ՅՈՒԼ

ԵՐԿՈՒՈՐԻԱԿՆԵՐ



ԽԵՅՔԵՏԻՆ

ԱՌԻԾ


ԿՈՅՍ



ԿՇԻՌՔ

ԿԱՐԻՃ

ԱՂԵՂՆԱԲՈՐ



ԱՅԾԵՂՁԻՐ

ՋՐԿԻՐ

ՉԿՆԵՐ

ԻՆՉ Է ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Նման աստղագիտութեան, թուագիտութիւնն ալ եկեղեցւոյ պաշտօնական մարմիններու կողմէ պախարակուած գիտութիւն մը եղած է, հակառակ որ Ս. Գիրքի մէջ որեւէ ակնարկութիւն մը չկայ այս գիտութեան դէմ:

Ամբողջական բնագիտութիւնը (quantum physics), որուն միջոցաւ գիտուններ կ'ուսումնասիրեն տիեզերքը եւ անոր օրէնքները, ի յայտ բերած է թէ ստեղծագործութեան բոլոր օրէնքները կը հետեւին որոշ մաթէմատիքական հաշիւներու՝ հաւասարութիւններու: Այսօրուայ աստղաբաշխերը կ'եզրակացունեն, թէ գոյութիւն ունին մէկէ աւելի տիեզերքներ: Ինչպէ՞ս հասնիլ նման եզրակացութեան մը, երբ մարդ արարած տակաւին իր մէջ գտնուած տիեզերքը իր ամբողջականութեամբ չէ տեսած: Իրենք նման եզրակացութիւններու հասած են, հենելով որոշ մաթէմատիքական հաւասարութիւններու լուծումներու արդիւնքներուն վրայ, ապա թէ ոչ անկարելի պիտի ըլլար տեսնել կամ գիտնալ ուրիշ տիեզերքներու մասին: Այս արդիւնքները կը յայտնեն, թէ կարելի է որ մէկէ աւելի տիեզերքներ գոյութիւն ունենան: Կը թուի թէ բոլոր տիեզերքը հիմնուած է մաթէմատիքական եւ թուաբանական հաշիւներու եւ օրէնքներու համեմատ: Ուրեմն, զարմանալի պէտք չէ ըլլայ, որ թուագիտութիւնն ալ որոշ չափով հիմնուած ըլլայ հաստատ հիման մը վրայ եւ կարող ըլլայ յայտնաբերել որոշ իրողութիւններ:

Ի՞նչ է թուագիտութիւնը:

Բնութեան մէջ կան որոշ կայաթիւեր (constants), որոնք կը թուին տիեզերական ըլլալ եւ վստահաբար կը բխին այն իրողութիւնէն, թէ տիեզերքը հիմնուած է

Թուլաբանական եւ մաթէմատիքական հաշիւներու վրայ: Այս կայաթիւերու խախտումը պատճառ կրնայ ըլլալ որ աշխարհ եւ նաեւ տիեզերքը բնաջնջման ենթարկուի:

Արեւէն աշխարհ եկած ջերմութիւնը կը ներկայացնէ այդ կայաթիւերէն մին: Ամէն մէկ մանրերկրորդի մէջ, իւրաքանչիւր քառակուսի սանթիմէթրի վրայ կը տեղայ 0.0417 գոլ (calorie): Եթէ այս չնչին չափով մը փոխուի, հաւանական է որ աշխարհն ալ բնաջնջուի:

Լոյսի արագութիւնն (c) ալ կը ներկայացնէ այս կայաթիւերէն մին: Ընդհանուր առմամբ կ'ըսենք թէ 300000 քիլօմէթր է մէկ երկվայրկեանի մէջ: Իրողութիւնը՝ 299792458 մէթր է: Անգլիախօս երկիրներու մէջ գիտցուած է որպէս 186000 մղոն: Այս գիւտը ըրած է Բէօմէր, 1710ին եւ հրատարակուած 1729ին՝ իր մահուանէն յետոյ: Վաւերացուած է 1790ին եւ 1874ին ալ՝ դարձեալ:

Հնդկաստանի եօգայաններէն (yogi) Սայանա, 1387ին, արեւին հանդէպ ունեցած յարգանքը հետեւեալ նախադասութեամբ կ'արտայայտէ. «Խոր յարգանօք, կը խոնարհիմ արեւին, որ կը ճամբորդէ 2202 «վօեանա» կէս «նիմէշա»ի մէջ»: Մէկ «վօեանա»ն մօտաւորապէս 9 մղոն է, իսկ մէկ «նիմէշա»ն ալ մէկ երկվայրկեանի 16/75 երրորդն է: Եթէ հաշուենք, լոյսի արագութիւնը կ'ըլլայ 185794 մղոն՝ մէկ երկվայրկեանի մէջ: Այս յարգանքի նախադասութիւնը ի յայտ կը բերէ իրենց դարերով գիտցած իրողութիւնը:

Ան կ'ըսէ, թէ հին եօգայանները 108 թիւը կը համարեն իբր «սուրբ» թիւ: Ինչպէս որ արեւմուտքի մէջ երկնակամարը բաժնուած է 12 մասերու, իրենք ալ երկնակամարի 360 աստիճանը բաժնած են 27 մասերու եւ ասոնց իւրաքանչիւրն ալ 4ի: Յառաջ կուգայ 108

մասեր: Արեւը, իր պտոյտի միջոցին, կ'անցնի ամէն մէկէն: Այս կը համապատասխանէ վերոյիշեալ աստղագիտութեան բաժնին կենդանակերպին: Անոնք իրենց բաժանումը կատարած են հետեւեալ տուեալներու վրայ: Երկրին արեւէն ունեցած հեռաւորութիւնը, արեւին տրամագծին 108 անգամն է: Արեւին տրամագծին չափն ալ երկրին տրամագիծին 108 անգամն է: Իսկ լուսնին երկրէն ունեցած հեռաւորութիւնը, լուսնի տրամագծին 108 անգամն է: Այս տուեալներուն հենելով անոնք կ'ըսեն, թէ 108 աստիճան կայ մարդկային գիտակցութեան եւ Աստուածային գիտակցութեան միջեւ:

Անոնք, նաեւ կը հաւատան, թէ մարդկային արարքները, նամանաւանդ մարդոց կենսաբանական շրջանները սերտօրէն կապուած են «աստղ»երու շրջաններուն հետ: Անոնք ըսած են, թէ մարդու ներքին մտային ժամացոյցը օրը կը հաշուէ 24 ժամ եւ 50 վայրկեան, որ կը համապատասխանէ ճիշդ լուսնի շրջանին: Վերջերս կատարուած են մասնաւոր փորձեր: Անհատներ ապրած են գետնին տակ, խորունկ տեղ, առանց արեւի, կամ ժամացոյցի օգնութեան: Անոնք, վստահելով իրենց ներքին բնական ժամացոյցին, չափած են իրենց օրերը: Անոնց օրերը եղած են 24 ժամ եւ 50 վայրկեան: Ինչ-որ համապատասխան է վերի գուշակութեան: Կը թուի, թէ մենք, ամէն առաւօտ, նայելով արեւին եւ ժամացոյցին, կը շտկենք մեր ներքին ժամացոյցները՝ յարմարցնելով արեւին:

Շատերու կողմէ գիտցուած կայաթիւ մըն է «փի» (π) կոչուած 3.14159... թիւը, որ կը ներկայացնէ շրջանակի մը շրջագիծին կամ ծաւալին ունեցած յարաբերութիւնը՝ իր շարաւիղին հետ:


Բնութեան հետաքրքրական, բայց աւելի նուազ գիտցուած կայաթիւերէն մին ալ է «Ֆի»ն (φ), որ կը

ներկայացնէ հետեւեալ համեմատութիւնը. $(1+\sqrt{5})/2$,
ինչ որ 1.618033... թիւն է: Այս կայաթիւին կը
հանդիպինք բնութեան մէջ ամենուրեք: Օրինակներու
համար՝ Տես Պատկեր 1Ա-է: Այս համեմատութիւնը
ունեցող ամէն ինչ մարդու աչքին ալ աւելի հաճելի
կ'երեւի: Ճիշդ այս պատճառով ալ ան կոչուած է
«ոսկեայ համեմատութիւն» (Golden ratio) կամ
«Աստուածային համեմատութիւն» (Divine proportion):
Ճարտարապետներ, հնադարեան ժամանակներէն ի վեր
գիտցած են այս համեմատութիւնը եւ գործածած են
իրենց կառոյցներուն շինութեան մէջ (Տես Պատկեր
2Ա-դ): Ի՞նչ է «Փ»ին: Ենթադրենք որեւէ տուեալ
երկարութիւն մը: Այդ կոչենք «c» ու զայն բաժնենք
երկու մասերու՝ «a» եւ «b», ուր $b:a = c:b = 1.618033\dots$: (Տես
Պատկեր 3) Զարմանալիօրէն բնութեան որեւէ
կայաթիւը կարող չենք պարզ եւ ամբողջական
թիւերով ներկայացնել: Անոնք միշտ իրենց մէջ կը
պարունակեն անորոշութեան նշոյլ մը: Նոյեան
տապանի եւ Տապանակի չափերը, որոնք Աստուծոյ
կողմէ տրուած էին, մօտաւորապէս կը համա-
պատասխանեն այս համեմատութեան: (Տես Պատկեր
4Ա-բ)

Ուրեմն Նոյեան տապանին լայնութեան եւ բարձրու-
թեան չափերուն համեմատութիւնն էր. $50 : 30 = 1.666\dots$,
որ «Փ»ի շատ մօտ է:

Իսկ տապանակին երկարութեան եւ լայնութեան
ինչպէս նաեւ երկարութեան եւ բարձրութեան չափերն
ալ, նմանապէս, նոյն համեմատութեամբ էին. $2.5 : 1.5 =$
 $5 : 3 = 1.666\dots$:





ՊԱՏԿԵՐ 3




ՊԱՏԿԵՐ 1 Ե - Է



ՊԱՏԿԵՐ 2 ս - ր



ՊԱՏԿԵՐ 4ս-բ



«Եւ այսպէս արասցեն պրասպանն :
 յերեւելահարեւոյ կանգնուց պերկայնութիւնն

ցաստանին, Ե- ՚ն յիսոսն կանգնոյ պայանո-
 թիւն, Ե- յերեսոսն կանգնոյ պարզրո-
 թիւն : (Մանրոց Զ : 15)

«Այս ձեռով շինես զանիկա: Տապանին երկայնու-
 թիւնը երեք հարիւր կանգուն, լայնութիւնը յիսուն
 կանգուն եւ բարձրութիւնը երեսուն կանգուն ըլլայ:

«Երասցես ցաստանակ զկայոս-թեան յանօրո-
 փայտից : յերկոսց կանգնոց Ե- ՚ն կիսոյ
 պերկայնութիւնն նորա, Ե- ՚ն կանգնոց Ե-
 ՚ն կիսոյ պայանութիւնն նորա, Ե- ՚ն կանգնոց
 Ե- ՚ն կիսոյ պարզրոս-թիւնն նորա : »

(Եւէ ԻԵ : 10)

«Սատիմի փայտէ տապանակ մը թող շինեն. անոր
 երկայնութիւնը՝ երկու կանգուն ու կէս եւ
 լայնութիւնը՝ մէկ կանգուն ու կէս եւ բարձրութիւնը
 մէկ կանգուն ու կէս ըլլայ:»




**Այս համեմատութիւնը նաեւ կը գտնուի Վերգիլիոսի
 դիւցազներ գրութիւններէն Եգէականի (Virgil's Aeneid)
 կառոյցին մէջ: Մոզարթ նոյն համեմատութիւնը
 օգտագործած է իր սօնաթներուն մէջ, ինչպէս նաեւ
 Պէթովէն՝ իր հինգերորդ համանուագին մէջ:
 «Ստրատիվարի»ի շինած ջութակներուն ձայնի
 ծակերուն տեղերը նաեւ կը համապատասխանեն այս
 համեմատութեան:**

Թիւերու ուրիշ հետաքրքրական շարքաւորում մը
 եւս կայ, որ որոշ կապ ունի նաեւ «Փ»ի հետ:
 Արեւմուտքի մէջ այս շարքաւորումը առաջին անգամ
 հրատարակած է Ֆիպոնաչչի կոչեալ Փիզացի
 Լէօնարտօն: Ան, 1202 թուականին, Վենետիկի մէջ
 հրատարակած «Liber Abaci» կոչեալ գրքին մէջ գրած է
 այս թիւերու շարքաւորումին մասին: Թէեւ այս
 գիտութիւնը արեւմուտքի մէջ ինք տարածած է,

սակայն արեւելքի՝ Հնդկաստանի մէջ արդէն իսկ կը գիտցուէր ՔԱ 200 թուականին: Ֆիպոնաչչի թիւերու յառաջատուութիւնը կը սկսի 0 եւ 1 ով: Շարքաւորումին վերջի երկու թիւերը իրարու հետ գումարելով կարելի կ'ըլլայ գտնել յաջորդ թիւը: Ուրեմն շարքաւորումը կ'ըլլայ հետեւեալը. $0+1 = 1, 1+1 = 2, 2+1 = 3, 3+2 = 5, 5+3 = 8, 8+5 = 13 \dots$ այսինքն շարքաւորումը կ'ըլլայ $0, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144, 233 \dots$ եւայլն: Այս թիւերէն որեւէ մէկը եթէ իրմէ առաջուան թիւով բաժնուի արդիւնքը հետզհետէ կը մօտենայ «Փ»ի: $1:1 = 1, 2:1 = 2, 3:2 = 1.5, 5:3 = 1.666\dots, 8:5 = 1.6, 13:8 = 1.625, 21:13 = 1.615\dots, 34:21 = 1.619\dots, 55:34 = 1.617\dots, 89:55 = 1.618\dots, 144:89 = 1.617\dots, 233:144 = 1.618\dots$, եւայլն: Այս թիւերու յառաջատուութիւնն ալ ծնունդ տուած է «Ոսկեայ պարուրածեւի»ն (Golden Spiral): (Տես Պատկեր 5ւ-բ)

ՊԱՏԿԵՐ 5ւ-բ

ՊԱՏԿԵՐ 6



Եթէ տուեալ մէկ միութիւն չափ կողմով քառակուսի մը գծենք եւ շարունակենք նման քառակուսիներ քով քովի գծել, ուր իւրաքանչիւր յաջորդող քառակուսիին

ՊԱՏԿԵՐ 7ւ-ե



կողմի չափերը հետեւին վերոյիշեալ թիւերու շարքաւորումին, յառաջ կուգայ պարուրածեւ գծագրութիւն

մը: Ամէն քառորդ շրջանի այդ պարուրածեւ գծագրութիւնը կեդրոնէն կը հեռանայ ճիշդ «Փ»ի համեմատութեամբ: Բնութեան մէջ յաճախ կը հանդիպինք նման չափերով պարուրածեւերու: (Տես Պատկեր 6) Յիշենք ասոնցմէ մի քանին. խեցեմորդ, խղունջ, ճարխոտ եւ այլն: «Փ»ի կը հետեւին նաեւ տերեւները, ճիւղերը եւ պտուղները...: (Տես Պատկեր 7Ա-Ե)

Յոյն մատթէմատիկոս Պիլթագորոս (Pythagoras), որ հիմնած է երկրաչափական տեսացոյցեր, զբաղած է նաեւ թուագիտութեամբ: Ան կը հաւատար, թէ ամէն ինչ կարելի էր մատթէմատիկով յայտնաբերել:

ՊԱՏԿԵՐ: 8			
ԱՅԲՈՒՐԵՆԱՎՈՆ ԹՈՒՄՏՈՒՌՈՒԲՆ			
ՀԵՐՈՒՅԵԱ ԱՐԵՐՈՅԵԱ		ՀԵՐՈՒՅԵԱ ԱՐԵՐՈՅԵԱ	
Ա	1	Ճ	100
Բ	2	Մ	200
Գ	3	Յ	300
Դ	4	Ն	400
Ե	5	Շ	500
Զ	6	Ո	600
Է	7	Չ	700
Ը	8	Պ	800
Թ	9	Ղ	900
Ժ	10	Ռ	1000
Ի	20	Ս	2000
Լ	30	Վ	3000
Խ	40	Տ	4000
Ս	50	Ր	5000
Կ	60	Յ	6000
Հ	70	Ի	7000
Չ	80	Փ	8000
Ղ	90	Ք	9000

իրեն, միակ ճշմարտութիւնը թիւերն էին: Թէեւ ան որպէս փրկիստփայ չէ ճանչցուած, սակայն իր ազդեցութիւնը ունեցած է Պլատոնի (Plato) վրայ:

Թուագիտութիւնը ընդհանուր առմամբ գործածուած է Ս. Գիրքի պարբերութիւնները այբբենական թիւերով մեկնելու համար: Նպատակը այդ թիւերուն համեմատ յայտնաբերել եւ մեկնաբանել է անոնցները եւ այլաբանութիւնները: Այբուբենի իւրաքանչիւր գիրը ունի իր թուային արժէքը: (Տես պատկեր 8) Հին ժամանակներուն հայկական տառերու իբր թիւ գործածման օրինակներէն մին ալ Զուարթնոցի մէջ գտնուած արեւի ժամացոյցի թիւերն են: (Տես պատկեր 9)

նեւ է անոնցները եւ այլաբանութիւնները: Այբուբենի իւրաքանչիւր գիրը ունի իր թուային արժէքը: (Տես պատկեր 8) Հին ժամանակներուն հայկական տառերու իբր թիւ գործածման օրինակներէն մին ալ Զուարթնոցի մէջ գտնուած արեւի ժամացոյցի թիւերն են: (Տես պատկեր 9)



Նման հայերէնի, այբբենական թուային արժէքներ գոյութիւն ունին ուրիշ լեզուներու գիրերուն համար ար: Ասոնցմէ կարեւորներն են եբրայերէնը, արամերէնը, արաբերէնը, յունարէնը: Հաւանական է որ կրնան գտնուիլ ուրիշ հին լեզուներ եւս, որոնք ալ ունէին նման այբբենական թիւեր: Լատիներէնի մէջ միայն մի քանի գիրեր ունեցած են թուային արժէք, ինչպէս $I = 1, V = 5, X = 10, L = 50, C = 100, D = 500$ եւ $M = 1000$: Ներկայիս լատին, ինչպէս նաեւ հայկական տառերը որպէս թիւ կը գործածուին միայն տարիներու թուականներուն, նաեւ կարգ մը գիրքերու զանազան գլուխներուն համար: Այս գործածութիւնն իսկ վերջին տարիներուն հետզհետէ կը նուազի: Մօտ անցեալին, լատին բոլոր գիրերուն տրուած են նոր արժէքներ՝ թուագիտութեան մէջ գործածման համար: (Տես սրահեր 10)

ՊԱՏԿԵՐ 10

1	2	3	4	5	6	7	8	9
A	B	C	D	E	F	G	H	I
J	K	L	M	N	O	P	Q	R
S	T	U	V	W	X	Y	Z	

Նման այբբենական թուատուութեան կարելի է հաշուել ամէն անունի թիւը, իրարու հետ գումարելով անուան ամէն մէկ գրին թուային արժէքը: Եթէ արգիւնքը ըլլայ 10ը կամ անկէ աւելի մեծ, հարկ է զայն միաւոր թիւի վերածել՝ նաեւ անոր ամէն մէկ թիւը իրարու հետ գումարելով: Ամէն թիւ իր իմաստը ունի, որով կ'իմաստաւորուին նաեւ անունները:

Հետաքրքրական է նաեւ հետեւեալ իրողութիւնը: Ըստ ժողովրդային ասացուածքի, հայերէնը աղօթքի լեզու է: Եթէ հայերէնը Աստուծոյ հետ խօսելու համար յարմար լեզու մըն է, պէտք է ունենայ նաեւ որոշ թուագիտական յատկութիւններ: Այդ յատկութիւնները պէտք է ներկայացնեն ստեղծագործութիւնը: Ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնը՝ մարմինը կը ներկայացնէ եւ հիմնուած է թուաբանական հաշիւներու վրայ: Երբ Այբուբենին ամէն մէկ տառին տրուի, ոչ թէ իրենց հին թուային արժէքները, այլ միայն իրենց շարքին համապատասխանող թիւեր՝ «1»էն մինչեւ «36», ի յայտ կուգայ, թէ աստղագիտութեան եօթը «աստղերուն» համապատասխանող եօթը մետաղներու հին հայկական անուններուն թիւերը նոյնն են մետաղներու հիւլէական թիւերուն հետ: (Տես Պատկեր 11) Պատկերին մէջ ներկայացուած մետաղներուն (նոր-հին անուններով) համապատասխանող «աստղեր»ը հետեւեալներն են՝ ներկայացուած նոյն կարգով. Արեւ (Ոսկի), Արուսեակ (Պղինձ-Մեղ), Լուսին (Արծաթ-Արծ), Հրատ (Երկաթ-Ալգաթ), Լուսնիթազ (Անագ, Թիթեղ, Կլայեկ-Կլաէկ), Երեւակ (Կապար-Արճիճ) եւ Փայլածու (Մնդիկ-Մնգիկ):

ՊԱՏԿԵՐ 11

Old Armenian Names of metals			
Ո Ս Կ Ի	– Gold	Au <u>79</u>	$\text{Ո}^{24} + \text{Ս}^{29} + \text{Կ}^{15} + \text{Ի}^{11} = \underline{79}$
Մ Ե Դ	– Copper	Cu <u>29</u>	$\text{Մ}^{20} + \text{Ե}^5 + \text{Դ}^4 = \underline{29}$
Ա Ր Ծ	– Silver	Ag <u>47</u>	$\text{Ա}^1 + \text{Ր}^{32} + \text{Ծ}^{14} = \underline{47}$
Ա Լ Գ Ա Թ	– Iron	Fe <u>26</u>	$\text{Ա}^1 + \text{Լ}^{12} + \text{Գ}^3 + \text{Ա}^1 + \text{Թ}^9 = \underline{26}$
Կ Լ Ա Է Կ	– Tin	Sn <u>50</u>	$\text{Կ}^{15} + \text{Լ}^{12} + \text{Ա}^1 + \text{Է}^7 + \text{Կ}^{15} = \underline{50}$
Ա Ր Ճ Ի Ճ	– Lead	Pb <u>82</u>	$\text{Ա}^1 + \text{Ր}^{32} + \text{Ճ}^{19} + \text{Ի}^{11} + \text{Ճ}^{19} = \underline{82}$
Ս Ն Գ Ի Կ	– Mercury	Hg <u>80</u>	$\text{Ս}^{29} + \text{Ն}^{22} + \text{Գ}^3 + \text{Ի}^{11} + \text{Կ}^{15} = \underline{80}$

(Աւնուած լեզուաբան Գէորգ Կարապետեանի ներկայացումէն):

ՉԱՆՁԱՆ ԹԻԷՐՈՒ ԻՎԱՍՏԵՐՈ.

ԹԻ «0»

«0» Թիւը, թուագիտութեան մէջ արժէք մը չէ ունեցած: Բայց Չինաստանի «Թաօ»ական կրօնքի մէջ կը ներկայացնէ ոչնչութիւն, մահ եւ անյայտը: Նոյն ատեն ան կը ներկայացնէ կեանքի եւ ստեղծագործութեան ամբողջութիւնը: Եթէ անոնց հարցուի, թէ Աստուած ո՞վ է, կամ ո՞ւր է, պատասխանը կ'ըլլայ միայն ժխտական: Ինչ որ ըսուի, կ'ըսեն թէ այդ չէ: Երբ վերջապէս ըսուի, թէ ալ բան չմնաց, ուրեմն միայն ոչնչութիւն, այն ատեն կ'ըսեն. ճիշդ այդ ոչնչութիւնը Աստուած է եւ ամէն բան է:

ԹԻ «1»

«1» Թիւը կը ներկայացնէ միութիւն եւ եզակեանութիւն, որ հիմնուած է «Աստուած մէկ է»ի գաղափարին վրայ:

«Լուր Իսրայել, Տէր Աստուած մեր՝ Տէր

մի է: (Երկր. Օրինաց .2:4)

«Ով Իսրայել. մտիկ ըրէ. մեր Տէր Աստուածը մի միայն Տէր է:»

«Մի է Տէր, ... մի Աստուած, էւ Ըայր

ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի, էւ

ընդ ամենեան, էւ յամենեան 'ի մեզ:»

(Եփեսացիս Դ:5-6)

«Տէրը մէկ է. ... Մէկ է Աստուած եւ ամէնուն Հայրը, որ ամէնուն վրայ ու ամէնուն հետ եւ ձեր ամէնուն մէջն է:»

«... էւ Էղիցին մի Ըօր՝ էւ մի Ըօվիւ:»

(Յովհաննոս Ժ:16)

«... եւ ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ:»

ԹԻՒ «2»

«2» *Թիւը կը ներկայացնէ երկուութիւն եւ բազմազանութիւն: Ան կը ներկայացնէ նաեւ ընտրութիւն երկու հակառակներու միջեւ, ուրեմն պայքար եւ բախում:*

«Ոչ ո՛վ կարէ երկու-ց տերանց շահաւայել. կամ սմինն ասորիցէ՛՝ է- սմէ-անն սիրիցէ. կամ սմինն մեծարիցէ՛՝ է- սմէ-անն արհամարիցէ. ոչ կարէ՛լ Լսորո-շոյ շահաւայել է- մամոնայի: (Մատթէոսի .9:24)

«Մարդ մը չի կրնար երկու տիրոջ ծառայութիւն ընել. վասն զի կամ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կամ մէկուն պիտի յարի՛ եւ միւսը պիտի արհամարհէ. չք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնային:»

«...ամէն ըստ-որո-շինն թաշանեալ յանձն ի-ր՝ աս-երի. է- ամէն չաղաչ կամ որոնն թաշանեալ յանձն ի-ր՝ ոչ կայցէ:»

(Մատթէոսի ԺԲ:25)

«... Ամէն թագաւորութիւն իրեն մէջ բաժնուած՝ կ'աւերի. եւ ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չի կրնար կենալ:»

«Լյնպէս եղիցի ՚ի կայարածի աշխարհիս. ելցեն Հրեշտակէ՛՝ է- մէկնեացեն սշարս ՚ի միջոյ արդարոց,» (Մատթէոսի ԺԳ:49)

«Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը: Կրեշտակները պիտի ելլեն ու արդարներուն մէջէն չարերը պիտի գտնեն.»

Ամէն անձի մէջ երկուութիւն գոյութիւն ունի: Կան երկու «կառապաններ»՝ «Ես»ը եւ Քրիստոս: Որո՞ւն ձեռքերուն մէջ պիտի դնենք մեր կեանքի սանցը: Եթէ ճիշդ որոշումով երկու հակառակութիւնները հաշ-

տուրին, անձին մէջ կը ծագի ներդաշնակութիւն եւ միաբանութիւն:

«... Ելէ Երկո՝ ՚ի Յէնջ միաբանիցեւն յԵրկրի վրայ ամէն իրաց, զինչ է՝ խնդրեացէն՝ Եղիցի նոցա ՚ի Ըօրէ իմմէ որ յԵրկինս է:»

(Մարգէնոսի ժԼ:19)

«... Եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին, ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս որ երկինքն է:»

ԹԻՒ «3»

«3» թիւը կը ներկայացնէ անխախտելի կայուն-նութիւն եւ կատարելագործութիւն: Աս հիմնուած է Երրորդութեան գաղափարին վրայ: Նաեւ պէտք չէ մոռնանք, որ ամենակայուն երկրաչափական ձեւն ալ եռանկիւնն է, նամանաւանդ հաւասարակողմ եռանկիւնը: Որքան որ ալ Ս. Գիրքի մէջ չէ գործածուած «Երրորդութիւն» բառը, եւ ճիշդ է, թէ Աստուած մէկ է, սակայն Աստուածայայտնութիւնը կարելի է միայն «Երրորդութեան» միջոցաւ: Հայրը՝ ակն է, ուրկէ կը բխի Ս. Հոգին՝ միջոցը, ի յայտ բերելով Որդին՝ արտայայտութիւնը: Միասնաբար ի յայտ կու գայ կատարելագործութիւն:

Չինական «Թաօ» կրօնքն ալ կ'ըսէ հետեւեալը. Ոչինչութիւնը Թաօ է, «Թաօ»էն կը բխի «1», մէկէն կը բխի «2», եւ երկուքէն կը բխի «3», իսկ երեքէն ալ ամէն ինչ որ գոյութիւն ունի:

Աստուծոյ յատկութիւններն ալ երեք են՝ ամենագէտ, ամենակարող եւ ամենուրեք: Իր գործերն ալ նմանապէս երեք են՝ սուրբ, ուղղափառ եւ արդար:

Ուրիշ մարգերու մէջ ալ, կատարելագործութեան համար, երրորդութիւնը կարեւոր է: Մարդը, որ ստեղծագործութեան գաղաթն է եւ որուն գիտակցու-

Թեամբ կարելի է Աստուածայայտնութիւնը, կազմուած է իմացական, զգացական եւ Ֆիզիքական մարմիններէ: Մարդկային արարքներն ալ հիմնուած են երրորդութեան վրայ: Ոչինչէն ծնունդ կ'առնէ խորհուրդը, խորհուրդէն՝ խօսքը, եւ խօսքէն ալ՝ գործքը:

Ստեղծագործութիւնը հիմնուած է տիեզերքի եռատարած միջոցով՝ երկայնք, լայնք եւ բարձրութիւն (x, y, z առանցքները): Ժամանակն ալ ունի անցեալ, ներկայ եւ ապագայ: Բոլոր Ֆիզիքական մարմինները գոյութիւն ունին միայն երեք վիճակով՝ պինթ, հեղուկ եւ կազային:

Երբ մոգերը այցելեցին Յիսուս մանուկին, անոր տունն երեք նուէրներ՝ խունկ՝ իր Աստուածութեան համար, ոսկի՝ իր Թագաւորութեան համար եւ զմուռս՝ իր մարդկութեան համար:

Հայաստանեայց Եկեղեցին ալ կազմուած է երեք մասերէ, որոնք կը ներկայացնեն մարդու կատարելագործման երեք հանգրուանները: Գաւիթ՝ անոնց համար, որ տակաւին չեն ապաշխարած: Սրահ՝ անոնց համար որ ապաշխարած են: Խորան, որ աւելի բարձր բեմի վրայ կը գտնուի, կը մատնանշէ անձին գիտակցութեան մակարդակի բարձրացման անհրաժեշտութիւնը՝ հաղորդուելու Աստուծոյ հետ եւ միանալու Անոր: Յիսուս ալ, երբ իր վերջին ընթրիքին հաղորդութեան խորհուրդը դրաւ, զայն ըրաւ վերնատան մէջ՝ մատնանշելով անհրաժեշտութիւնը գիտակցական մակարդակի բարձրացման, նախ քան ճշմարիտ հաղորդութեան: Յիսուսի կեանքին նպատակը, որ մահուան յաղթել էր, իրագործուեցաւ՝ Քրիստոսի յարութեամբ, Անոր խաչելութենէն երեք օր յետոյ:

ԹԻՒ «4»

«4» Թիւր կը ներկայացնէ ստեղծագործութիւնը՝

Փիզիքական աշխարհը եւ մարդկային կեանքը:

Տարուայ եղանակները չորս են՝ գարուն, ամառ, աշուն եւ ձմեռ: Աշխարհ ունի չորս կողմեր՝ հիւսիս, հարաւ, արեւելք եւ արեւմուտք: Թիւ «3»ի մէջ ըսած էինք, թէ միջոցը ունի երեք առանցքներ, բայց առանց չորրորդ առանցքի՝ ժամանակի, այդ ստեղծագործութիւնը կ'ըլլայ միայն կայուն (static): Բարեշրջման համար անհրաժեշտ է չորրորդ առանցքը, նաեւ անհրաժեշտ են չորս տարրեր՝ ջուր, հող, օդ եւ կրակ:

Խաչը 4 թեւեր ունի, որոնք կը ներկայացնեն միջոցի եւ ժամանակի 4 առանցքները՝ ստեղծագործութիւնը: Յիսուս իր խաչելութեամբ մեռաւ միջոցի եւ ժամանակի պատրանքային գոյութեան, Յարութիւն առաւ յաւիտենականութեան:

Այս կեանքը է նաեւ փորձառութեան շրջան մը եւ թիւ «4»ն ալ նաեւ փորձառութիւն կը ներկայացնէ:

«Լճա-ասիկ վաճառեցի պէտք ոչ վասն արժախոյ, եւ պերժոցի պէտք 'ի Հնոցէ ասդէպոտ-թէնէ.» (Եսայի ԽԼ:10)

«Աճա քեզ մաքրեցի, բայց ոչ թէ արծաթի պէս: Քեզ նեղութեան Հալոցին մէջ փորձեցի:»

«Եւ անցոցից պերրորդ մասն ընդ Հո-ր, եւ ջեոոցից պնոսա որպէս ջեոնո-արժախ. եւ փորձեցից պնոսա որպէս փորձի ոսկի: Սա կարդասցէ պանոն իմ, եւ ես լո-այց նմա: Եւ ասացից՝ Ժողովո-րդ իմ է սա. եւ նա ասացէ՝ Տէր Աստուած իմ եւ դո-ս:» (Զախարիա ԺԳ:9)

«Այդ երրորդ մասը կրակէ պիտի անցնեմ, Զանոնք պիտի գտեմ՝ ինչպէս արծաթը կը գտուի, Զանոնք

պիտի փորձեմ՝ ինչպէս ոսկին կը փորձուի. Անոնք իմ անունս պիտի կանչեն. Ու ես անոնց պատասխան պիտի տամ: Ես պիտի ըսեմ. «Անիկա իմ ժողովուրդս է»:
Անոնք ալ՝ «Տէրը իմ Աստուածս է», պիտի ըսեն:»

Ջրհեղեղի անձրեւը 40 օր տեւեց:

«Եւ եղեւ անցրեւ ՚ի վերայ երկրի
պճատաստան որիւ, եւ պճարաստան Գիշեր:»
(Մանդոյ Է:12)

«Ու երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր
անձրեւ եկաւ:»

Մովսէս Սինա լեռան վրայ 40 օր կեցաւ:

«Եւ եմոսոր մովսէս ՚ի մէջ ամպոյն, եւ ել
՚ի լեռանն. եւ եր Մովսէս ՚ի լեռին անդ
պճատաստան որիւ եւ պճատաստան Գիշեր:»
(Ելից ԻԴ:18)

«Մովսէս ամպին մէջէն մտաւ ու լեռը եկաւ եւ
քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը մնաց:»

Հրեաները 40 տարի անապատին մէջ թափառեցան:

«Եւ Բարկայաս արքայորոշեամբ Տէր ՚ի
վերայ Իսրայելի, եւ յաժէցոյց պնտաս
յանապատին ամս շատաստան. մինչեւ
ասորակեցաս ամեն աշուն որ արարին պշարիս
ատաջի Տեարն:» (Թ՛սոյ ԼԲ:13)

«Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայելի վրայ բորբոքեցաւ
ու գանոնք քառասուն տարի անապատին մէջ պտոցուց,
մինչեւ որ Տէրոջը առջեւ չարութիւն ընող սերունդը
բոլորովին սպառեցաւ:»

Յիսուս 40 օր անապատին մէջ «սատանայէն» (Իր «Ես»էն) փորձուեցաւ:

«Եւ պահեալ պճատաստան որիւ եւ

սխալ-աստ-ն Գիշեր՝ աստ խաղցեալ : »
(Մատթեոս Դ:2)

«Քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծով պահելէն ետքը անօթեցաւ:»

«Եւ եր նա անդ ստորոքս խառ-աստ-ն
փորձեալ ՚ի աստանայէ : Եւ եր ընդ
Գաւանս, Եւ Հրեշտակէ պաշտօնն սնա : »
(Մարկոս Լ:13)

«Քառասուն օր Հոն էր՝ անապատին մէջ՝ Սատանայէն
փորձուած եւ գազաններու Հետ էր ու Հրեշտակները
իրեն սպասարկութիւն կ'ընէին:»

«ստորոքս խառ-աստ-ն փորձեալ ՚ի
աստանայէ : ... » (Գոհաս Դ:2)

«Ուր քառասուն օր Սատանայէն փորձուեցաւ : ...»

**Յիսուս Քրիստոս իր յարութենէն ետք 40 օր
աշխարհի վրայ շրջեցաւ :**

«Որոց յանդիման կացոյց սխալն կենդանի
... յստորոքս խառ-աստ-ն երեւել նոցա՝ ...»
(Գործք Լուսիւոց Լ:3)

«Որոց ինքզինք ցուցուց՝ կենդանի, ... քառասուն
օրուան մէջ անոց երեւնալով ...»

Թուագիտութեան մէջ 40 = 4+0 = 4

Թիւ «5»


«5» թիւը կը ներկայացնէ շնորհք եւ հասկացողութիւն:

«Եւ ասէ. Եւ դոս աս իւր խոսակա
անոշոնս. Ժողովն ընդիր սմոտնեմեաց
Հինգ Հարիւր սիկո. Եւ կնամամոնն սանոյշ.
սկէս այնորով երկերիւր Եւ յխոտն. Եւ

պետեանէն զի Գն պանոյշ երկերի-ր ե- յխոսան :
 ե- Հիբրեկ Հինգ Հարի-ր սիկո ըստ
 սրբո-՞րեան . ե- ե-զ Յիթեմեապ Հիմեմեա-
 միոզ : Ե- արասպեո պայն ե-զ յօթո-մն
 սրբո-՞րեան . ե-զ եփեալ ըստ արո-եասի
 ի-զաԳործապ . ե-զ յօթո-մն սրբո-՞րեան
 լինիցի : » (Եւրոյ 1 : 23-25)

«Առ քեզի պատուական Համեմներ, գուտ գմուռս Հինգ
 Հարիւր սիկո . եւ անոր կէսին չափ՝ այսինքն երկու
 Հարիւր յիսուն սիկո անուշաճոտ կինամոն ու երկու
 Հարիւր յիսուն սիկո անուշաճոտ ինկեղէզն եւ Հինգ
 Հարիւր սիկո կասիա՝ սրբարանին սիկոլին Համեմատ . ու
 մէկ Հիմն ձէթ եւ սուրբ օծման իւղ պիտի ընես
 գայն՝ իւղագործի արհեստով բաղագրուած : Անիկա
 սուրբ օծման իւղ պիտի ըլլայ :»

Պատկեր 11



Օծման իւղը կազմուած է 5 տարբեր իւղերէ :

Հնգազիծը առողջութեան եւ փրկութեան նշան է : (Տես պատկեր 11)

Ս. Հոգիի շնորհները աշակերտներուն վրայ եկաւ Քրիստոսի յարութենէն 50 օր ետք : 5+0 = 5

«Ե- ՚ի կասարել ա-ո-րցն պենդակոսպէից ,
 ...Ե- լցան ամեմեմեան Հոգ-ոզ սրբոզ ... »
 (Գործք Լուսիւոյ Բ : 1-4)
 «Երբ Պնտեկոստի օրը Հասաւ ... եւ ամէնքն ալ Սուրբ
 Հոգւով լեցուեցան ...»

Թիւ «6»

«6» թիւը կը ներկայացնէ «մարդը» : Մարդ ստեղծուած էր ստեղծագործութեան ճրգ օրը : Ան կը ներկայացնէ նաեւ ամուսնութիւն, ներդաշնակութիւն,

գեղեցկութիւն եւ սէր:

Յիսուս, Կանայի հարսանիքին, 6 սափոր ջուրը գինիի վերածեց:


«Ընդ էին Խակոյկէ կճեայէ վեց՝ ըսոյ

արբո-Նեան Հրէից ...» (Յովհաննոս Բ:6)

«Հոն վեց հատ քարէ կարասներ դրուած էին Հրէից մաքրուելու սովորութեանը համեմատ, ...»

Այս թիւին նշանն է վեցանկիւնը: (Տես պատկեր 12) Շրջանակին շրջագիծը վեցի բաժնուած է՝ իր շարաւիղին չափով: Ան կը ներկայացնէ երկու եռանկիւն, մէկուն գագաթը դէպի վեր, իսկ միւսինը՝ դէպի վար: Ասոր իմաստը «ինչպէս վերը, այնպէս ալ վարը»ն է, եւ

ՊԵՏԱԵՐ 12 ՊԵՏԱԵՐ 13



ցոյց կուտայ տիեզերական ներդաշնակութիւնը: Ան նաեւ կը նշանակէ «Աստուած մարդացաւ, որպէսզի մարդ Աստուածանայ»: Բնութեան մէջ յաճախ կը հանդիպինք վեցանկիւնի՝ մեղուններու բեղակներուն եւ որոշ բիւրեղներու կազմուածքին մէջ: Հրեաներէն առաջ վեցանկիւն աստղը հայկական նշան էր:(Տես պատկեր 13)

ԹԻՒ «7»

«7» թիւը Աստուծոյ թիւն է: Ստեղծագործութեան 7րդ օրը Աստուած հանգչեցաւ եւ այդ օրը սուրբ եղաւ: Այբուբենի 7րդ գիրն ալ «է» է եւ Աստուած կը ներկայացնէ: Քանի որ Աստուած կատարեալ է եւ ամբողջութիւն, «7» թիւն ալ կը ներկայացնէ կատարելութիւն, լրացում եւ ամբողջականացում:

Մարդ ունի 7 խակրաներ «դռներ» (chakra): Այլակերպութիւնը՝ Աստուածայայտնութիւնը կ'ըլլայ երբ Գունտալինիի (kundalini) զօրութիւնը՝ Ս. Հոգիի զօրութիւնը, «Փառաց Թագաւորը» (prana) հասնի 7րդ

խակրային՝ գանկի գագաթի խակրային: Յիսուս ինք
փաստեց որ այս այլակերպութիւնը կարելի էր:

ԹԻՒ «8»

«8» թիւը կը նշանակէ վերածնունդ եւ
նորոգութիւն: Նոյնպէս կը նշանակէ վերամփոփում եւ
բարեշրջում:

Ջրհեղեղէն ետք, համայն մարդկութեան վերա-
ծընունդին համար, միայն 8 հոգի մահէ ազատեցաւ:
Նոյ, իր կիներ ու իր երեք զաւակները, իրենց կիներով:

«Նա՛ եւ ոչ իսկ զբանն աշխարհիս
խնայեաց. բայց ցոյց տուաւ ինչպէս
զարդարութեան խորոզ. պահեաց ՚ի
ջրհեղեղէ աշխարհի՝ ամպար շտեղծեց
աջեակ:» (Թ. ու ղ. Գեորգի երկրորդ Բ: 5)

«Ու առաջուան աշխարհին ալ չխնայեց. միայն թէ
Նոյը, ու թերող անձը, արդարութեան քարոզիչը՝
պահեց, երբ Ջրհեղեղը ամբարիշտներուն աշխարհին
վրայ բերաւ:»

Հրեաները նորածին մանչ զաւակի թլփատու-
թիւնը՝ փոփոխութեան նշան, ծնունդէն ետք ծրգ օրը
կ'ընեն:

Հայաստանեայց Եկեղեցին ալ Մնունդի տօնը 8 օր
կը տօնէ:

ԹԻՒ «9»

«9» թիւն ալ կը պատկանի մարդուն եւ
դատողութիւն կը նշանակէ: Մարդուն տրուած է
դատելու եւ զատելու կարողութիւնը: Իրեն կը մնայ
զատել բարին եւ լաւը կամ չարն ու մեղքը: Ճիշդ
դատողութեան հետեւանք այս թիւը կընայ նաեւ
ներկայացնել յաջողութիւնը: Յաջողութեան հետեւանք

ալ կ'ըլլայ իրագործումը, որ է Ս. Հոգիի պարգեւները ստանալ: Այս պարգեւներն ալ 9 հատ են:

«Ուրեմն 'ի Ըոգոյն ցոտեալ է Բան իմաստութեան. այլո՛ւմ Բան Գիցոտութեան ըստ նմին Ըոգոյ. միտո՛ւմն Ըատարգի՛ նովին Ըոգոյ. այլո՛ւմ շնորհա Բժշկոտութեանց նովին Ըոգոյ. այլո՛ւմ աջոյոտութեանէ սորոտութեանց. այլո՛ւմ մարգարէոտութեան. այլո՛ւմ ընցրոտութեան Ըոգոյ. այլո՛ւմ ապրի շէտոտաց. այլո՛ւմ Բարգմանոտութեան շէտոտաց : » (Լ Կորնթացիս ԺԳ:8-10)

«Մեկուն՝ Հոգւով իմաստութեան խօսք տրուած է, ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն Հոգիին տուած չափովը. Միւսին՝ հաւատք՝ նոյն Հոգիով. ուրիշին՝ բժշկութեան պարգեւներ նոյն Հոգիով. Ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու ընտրութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն:»

ԹԻՒ «10»

«10» թիւը կը վերածուի «1»ի (1+0 = 1), ուրեմն պէտք է ունենայ նաեւ թիւ «1»ի նոյն նշանակութիւնները: Յովհաննու աւետարանին մէջ Յիսուս 10 անգամ «Ես եմ» ըսած է:

- «Ես եմ Հացն կենաց» (9:35) «Ես եմ Հացն իջեալ յերկնից»(9:41)
- «Ես եմ Հացն կենդանի» (9:51) «Ես եմ լոյս աշխարհի» (1:12)
- «Ես եմ որ վկայեմ զնան իմ»(1:18) «Ես եմ ցոտուն» (1:7,9)
- «Ես եմ Ըոգին իմ» (1:14) «Ես եմ յարոտութեան էտ կեանի»
- «Ես եմ որքն ճշմարտի» (1Կ:1,5) (ժԼ:25)
- «Ես եմ ճանապարհն՝ էտ ճշմարտութեան էտ կեանի»(ժԴ:6)

Թու «12»

«12» թիւն ալ կարելի է վերածել «3»ի ($1+2 = 3$), ուրեմն պէտք է ներկայացնէ նոյն յատկութիւնները: Այս թիւը առանցիկն շեշտել անհրաժեշտ է, որովհետեւ կարեւոր տեղ կը գրաւէ Ս. Գիրքի մէջ: Իսրայէլի ցեղերը 12 հատ էին. Յիսուս ունէր 12 աշակերտներ. կենդանապատկերի համաստեղութիւնները (zodiac constellations) 12 հատ են. Ըստ Յովհաննէսի վերին Երուսաղեմը ունի 12 հիմեր, 12 դռներ եւ 12 հրեշտակներ. քաղաքին չափը 12000 ասպարէզ է եւ պարիսպներուն չափը 144 կանգուն, որ է 12×12 : (Յայտնութիւն ԻԱ:16-21)

Հետաքրքրական եւ յատկանշական է, թէ Յիսուսի անունը արդէն իսկ սկիզբէն որոշուած էր: Իմաստը, եբրայերէնի մէջ, կը թուի «փրկիչ» ըլլալ: Արդեօք այդ անունը ընտրուած էր նաեւ որոշ թուագիտական օրէնքներու հիման վրա՞: Երբ Յիսուսի անուան ամէն մէկ տառին տանք իր թուային արժէքը հետեւեալը ի յայտ կուգայ. Յ = 300, Ի = 20, Ս = 2000, Ո = 600, Ի = 7000, Ս = 2000 : Ասոնց գումարը 11920 է, որ կը վերածուի ($1+1+9+2+0 = 13$, $1+3 = 4$) 4ի: Ինչպէս վերեւ յիշեցինք, այս թիւը կը ներկայացնէ ստեղծագործութիւնը: Յիսուսի ծնունդը նպատակաւոր էր: Աստուած մարդեղանալով իջաւ իր ստեղծագործութեան մէջ: Աւետարանն ալ կ'ըսէ, թէ Յիսուս կատարեալ մարդ էր: Հակառակ այս իրողութեան, յարմար էր որ Իր անունը ներկայացնէր բոլոր ստեղծագործութիւնը, քան թէ միայն մարդկութիւնը: Բայց, եթէ միայն մարդկութիւնը ներկայացնէր, անուան թիւը կրնար ըլլալ «6»՝ մարդուն թիւը:

Քննենք տեսնենք, թէ ինչ է Քրիստոս անուան թուագիտական արժէքը.

Ք = 9000, Ր = 5000, Ի = 20, Ս = 2000, Տ = 4000, Ո = 600, Ս = 2000 : Այս թիւերուն գումարը 22620 է, որ կը վերածուի (2+2+6+2+0 = 12, 1+2 = 3) 3ի: Այս թիւը կատարելագործութիւն եւ կայունութիւն կը ներկայացնէ, որ է Երրորդութիւն: Քրիստոս ալ Երրորդութեան «Անձ»երէն մին է: Եթէ նկատի ունենանք ամբողջ անունը՝ «Յիսուս Քրիստոս», համաձայն թուագիտութեան, թիւը կ'ըլլայ 4+3 = 7: Այս թիւը Աստուծոյ թիւն է, ինչ որ կը յայտնէ, թէ Քրիստոսի լրիւ յայտնութիւնը Յիսուսի միջոցաւ եղաւ: Ասկէ ալ կը հետեւցուի, թէ Աստուածայայտնութիւնը միայն ստեղծագործութեան միջոցաւ կարելի կ'ըլլայ:

Ճշմարտութիւն է, թէ Քրիստոս արդէն իսկ բոլորիս մէջ է, ապա թէ ոչ ստեղծագործութեան մէջ բաժին պիտի չունենայինք: Սակայն, ինչպէս Յիսուս, Գալիլեայի ծովուն վրայ, նաևուն մէջ, անտարբեր հովերու եւ ալիքներու պատճառած փոթորիկին, կը քնանար, նոյնպէս ալ Քրիստոս մեր մարդկային «նաւերուն» մէջ կը քնանայ, անտարբեր մեր խորհուրդներուն՝ հովերու եւ զգացումներուն՝ ալիքներուն յառաջացուցած փոթորիկներուն: Ինչպէս աշակերտները արթնցուցին Յիսուսը, նոյնպէս ալ մեզի կը վիճակի արթնցնել Քրիստոսը, որպէսզի հանդարտի նաև մեր խորհուրդներու եւ զգացումներու փոթորիկները: Պարտ ենք հետեւիլ իր խօսքին. «խաչդ առ եւ ետեւէս եկուր», որպէսզի մենք ալ մաս եւ բաժին ունենանք Աստուածայայտնութեան մէջ:

Հայաստանեան աղաւաղեալ ուղղագրութեամբ Յիսուս կը գրուի «Հիսուս» ձեւով: Այս փոփոխութիւնը թուագիտութեան մէջ կը փոխէ անուան թուային արժէքը: Կ'ըլլայ «8»: «Հիսուս Քրիստոս»ի թուային արժէքն ալ կ'ըլլայ «2»: Այս թիւը երկուութիւն կը ներկայացնէ: Եթէ վայրկեանի մը

համար ընդունինք, որ թէ՛ մարդկային, թէ՛ ալ Աստուածային բնութիւնները ներկայացնող այս թիւը յարմար թիւ է, բայց եւ այնպէս շատ աւելի յարմար պիտի ըլլար որ այս թիւը ներկայացնէր միայն «Յիսուս» անունը եւ ոչ «Յիսուս Քրիստոս», որ է Աստուածայայտնութիւն: Աստուած երկու բնութիւն չունի, բայց Յիսուս երկու բնութիւն ունէր: Ուրեմն յարկ է որ գոնէ թուագիտական օրէնքներու համաձայն փոխեն «Հիսուս» բառին ուղղագրութիւնը, անոր տալով իր ճիշդ տիեզերական արժէքը եւ զօրութիւնը ու գրեն Յիսուս:

Անգլերէն լեզուի մէջ ալ, ըստ իրենց տառերու թուային արժէքներուն, «Jesus» անունն թիւն է «2», որ կրնայ իր երկու բնութիւնները ներկայացնել: Իսկ «Christ»-ի թիւն ալ «5» է եւ կրնայ ներկայացնել Աստուածային շնորհքը: Բայց յատկանշականը այն է որ «Jesus Christ»-ի թիւը դարձեալ կ'ըլլայ «7», ինչ որ պէտք է ըլլայ:

Ս. Գիրքի մէջ կան յատկանշական մի քանի թիւեր, որոնց մասին որոշ տեղեկութիւն տալ անհրաժեշտ է:

«Լ»-ը ցնա Յիսուս. ոչ ասեմ վեպ՝ թէ մինչեւ յեթն անգամ, այլ՝ մինչեւ յեթնանասնեկին եւթն:» (Մարտեոս ԺԲ:22)

«Յիսուս ըսաւ անոր. «Քեզի չեմ ըսեր թէ մինչեւ եօթը անգամ, հապա մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:»

Պետրոս, Յիսուսի կը հարցնէ թէ քանի՞ անգամ պէտք է ներել մեր եղբոր (եղբայր կը նշանակէ որեւէ ուրիշ անձ): Յիսուսի պատասխանը կ'ըլլայ 70x7 (նոր թարգմանութիւններու մէջ երբեմն 77 անգամ գրուած է): Այս երկու տարբերակ թարգմանութիւններուն թուագիտական արժէքներն ալ իրարմէ տարբեր

կ'ըլլան: Վերոյիշեալ «70x7» կը վերածուի 70x7 = 490 որ կ'ըլլայ 4+9+0 = 13 եւ հետեւաբար 1+ 3 = 4 , իսկ «77» կը վերածուի 7+7 = 14, որ կ'ըլլայ 1+ 4 = 5: Թիւ «4»ը ստեղծագործութեան թիւն է, որ իմաստ մը չունենար այս ուղղութեամբ: Բայց թիւ «5»ը, որ շնորհք կը ներկայացնէ, իմաստալից է: Ուրեմն Աստուածային շնորհք ստանալու համար յարկ է որ ներողամիտ ըլլանք՝ հանդէպ բոլորին: Միթէ Տէրունական աղօթքն ալ նոյնը չըսէր. «ներէ մեր պարտքերը ինչպէս որ մենք կը ներենք մեզի պարտականներուն»: Այն չափով որ մենք կը ներենք, նոյն չափով ալ մեզի կը ներուի, եւ այն չափով ալ արժանի կ'ըլլանք Աստուծոյ շնորհքները ստանալու:

Հետաքրքրական են նաեւ յաջորդ երկու թիւերը:

«...Էս ընդ նմա Հարեօր խոսասուն է շորս Հապարէ, որ ունէին պանուն նորս, ... Բայց միայն Հարեօր խոսասուն է շորս Հապարէն, որի ապարեալ էն յերկրէ:»

(Յայտնութիւն ԺԳ:1,3)

« ... ու անոր Հետ Հարիւր քառասունը չորս Հազարը, որոնք ունէին անոր անունը ... բացի այն Հարիւր քառասունը չորս Հազարէն, որոնք երկրէն գնուած էին:»

«Լաօր է իմաստութիւն. որ ունի միտս՝ Համարեացի պիտի Գապանին. Թիւ էղեալն մարդոյ, էս Թիւ անան նորս՝ է այս. զից Հարեօր վախսուն էս զից:»

(Յայտնութիւն ԺԳ:18)

«Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի, թող Հաշուէ գազանին թիւը. քանզի մարդու մը թիւն է ու անոր թիւը վեց Հարիւր վաթսունը վեց է:»

«144000»ը թուռագիտութեան մէջ կը վերածուի 9ի ($1+4+4+0+0+0=9$): «666»ն ալ կը վերածուի 9ի ($6+6+6 = 18$, որ է $1+8 = 9$): Կը թուի, թէ երկուքն ալ կը ներկայացնեն նոյն թիւը, ուրեմն՝ նոյն յատկութիւնները: Ինչպէ՞ս կ'ըլլայ որ թէ՛ փրկուածները եւ թէ՛ գազանը՝ սատանան ունենան նոյն թիւը: Շատ հաւանական է որ այս երկու թիւերն ալ (144000 եւ 666) կը ներկայացնեն նոյն բանը՝ մարդը: Ինչպէս վերեւ գրուած է, «9» թիւը կը ներկայացնէ «դատողութիւն եւ ընտրութիւն»: Կը թուի, թէ մարդ իր դատողութեան եւ ընտրութեան հետեւանք կամ կը փրկուի, կամ կը դառնայ գազան: Ինչո՞ւ գրել բարդ թիւ մը՝ «144000», եթէ կարելի էր գրել միայն «9» թիւը: Ուսումնասիրենք «144000» թիւը: «1» թիւը միութիւն կը ներկայացնէ, ուստի մարդու միտքը պէտք է կեդրոնանայ այդ միութեան՝ Աստուծոյ վրայ, այն աստիճան որ միանայ եւ նոյնանայ անոր հետ: «1»ին յաջորդող երկու «4» թիւերը (44) կը ներկայացնեն մարդը, որ կ'ապրի այս ստեղծագործութեան մէջ, թէ՛ Փիզիքապէս եւ թէ՛ ալ զգացականօրէն: Վերջապէս անձը երբ հասնի գիտակցութեան մակարդակի մը, եւ գոյատեւէ միայն երանութեան եւ յաւիտենականութեան մէջ՝ անտարբեր այս աշխարհի պատրանքային կեանքին՝ թէ Փիզիքապէս, թէ զգացականօրէն եւ թէ իմացականօրէն, կ'ըլլայ մեռած այս աշխարհին, ինչ որ կը ներկայացուի այս երեք «0»ներով: Ուրեմն իւրաքանչիւր «0» կը ներկայացնէ մարդուն վերոյիշեալ երեք մարմինները: «0»ն մահը կը ներկայացնէ: Այս պարագային, ճիշդ դատողութեան եւ զատողութեան հետեւանք «9» թիւը մարդու համար կ'ըլլայ փրկութիւն:

Ինչպէս «666» թիւը գազանը կը ներկայացնէ, շատեր կ'ըսեն թէ «777» թիւն ալ սրբութիւն եւ Աստուած կը ներկայացնէ: Ասոր մասին աւելի գրելու

նպատակ չկայ, քանի որ Ս. Գիրքի մէջ այս թիւին չենք հանդիպիր:

Թիւ «6»ը, ինչպէս վերեւ գրուած է, կը ներկայացնէ մարդը: Թիւ «666»ի մէջ այս «6»ը կրկնուած է երեք անգամ: Երբ մարդ կը կառավարուի իր «Ես»ին կողմէ թէ Փիզիքապէս, թէ զգացականօրէն եւ թէ իմացականօրէն՝ այսինքն մտայինօրէն իր խորհուրդները չեն կեդրոնացած Աստուծոյ վրայ, այս պարագային ալ կը ներկայացնէ գազանը՝ իր «Ես»ը: Հոս թիւ «9» կ'ըլլայ մարդը, որ իր դատողութեան եւ զատողութեան մէջ սխալած եւ ձախողած է: Ամենակարեւորը խորհուրդներու զսպումն է, քանի որ խորհուրդներէն կը ծագի խօսքը, խօսքէն ալ՝ գործքը: Երբ խորհուրդները ըլլան աշխարհիկ «սա» «տա» (դա) «նա»ի վրայ (թիւ «6»), անձին խօսքերը եւ գործքերն ալ կ'ըլլան սատանայական: Իսկ եթէ խորհուրդները կեդրոնացած ըլլան Աստուծոյ վրայ (թիւ «1»)՝ «Ես»ը կարելիութիւնը չի կրնար ունենալ նաեւ կառավարելու խօսքերն ու գործքերը: Աստուծոյ վրայ կեդրոնացած խորհուրդներէն կը ծագի միայն սուրբ, արդար եւ ուղիղ խօսքեր եւ գործքեր: Այն ատեն անձն ալ Յիսուսի նման կրնայ ըսել «այս աշխարհի մէջ եմ բայց այս աշխարհէն չեմ»:

« ... դու՛ յաշխարհէ աստի ե՛լ. ես՝ շեմ

յայսմ աշխարհէ: » (Յովհաննոս Լ:23)

« ... դուք այս աշխարհէն եք, ես այս աշխարհէն չեմ. »

« մինչդեռ յաշխարհի եմ. լոյս եմ

աշխարհի: » (Յովհաննոս Թ:5)

«Քանի որ ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ:»

Մեզի ալ կը մնայ աշխարհի լոյսը դառնալ:



ԱՍՏՈՒԱՅՆԱՆՈՒԹԻՒՆ

ՍՏԵՂՈՎԱԳՐԾՈՒԹԻՒՅՆ ԱՌՁՈՅՔ

(*Թուագրասութեան մէջ թիւ 4*)

ՍՏԵՂՈՎԱԳՐԾՈՒԹԻՒՅՆ ԱԷՁ

ՄԱՐԴՈՒ ԱՌՁՈՅՔ

(*Թուագրասութեան մէջ թիւ 6*)

ՄԱՐԴՈՒՆ ԱՂ

ԱՁԱՏ ԿԱՔԵՈՎ Ա ԿԱՐՈՂՈՒԹԵԱՔԸ

ՉԱՆՁԱՆԵՂՈՒ ԵՒ ԸՆՏՐԵՂՈՒ ԻՐ ԿԵՆՔԻ ԿԱՌԱՊԱՆ

(*Թուագրասութեան մէջ թիւ 9*)

ՃԻՇԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՍԽԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Քրիստոս

(144000)

Մարդ

Թուագրասութեան մէջ

«Ես»

(666)



ՈՐՈՇՈՒՄ ՊԱՏՃԱՐԱՆԵՐ և ՀՐԱՊՈՒԹՅ ԱՉՈՒԿՆԵՐ


ԻՄԱՏՈՒԹԻՒՆ
ՍԷՐ և ԳՈՒԹ
ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆ
ՉԱՅՈՂՈՒԹԻՒՆ
ՅԱՆԿՈՒԹԻՒՆ
ԿԻՐԸ
ՉՕՐՈՒԹԻՒՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ
ՉՈՒՄՆՈՒԹԻՒՆ

ԴԱՏՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՄԸ

ԳԻՏՈՒԹԻՒՆ
ԵՐԱՆՈՒԹԻՒՆ
ԷՈՒԹԻՒՆ-ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԽՍԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ
ՎԻՅՏ
ՄԱՃ

(Տես «Թ՛նչ է Թուագրասութիւնը» Գլուխ-Ը, էջ 261, 265, 267, 272-274)



Ձի գետցեն՝ էւ մի գետցեն, էւ
չուծցեն՝ էւ մի իմասցին:
(Ղաւկաս 8:10)

Որպէսպիսի գեանելով՝ շրեանեն, էւ լսելով՝ շիմանան:



-Թ-

Ի՞ՆՉ Է

ՎԵՐԱՄԱՐՄՆԱՅՈՒՄԸ



Ի՞ՆՉ Է ՎԵՐԱՄԱՐՄՆԱՅՈՒՄԸ

Այս նիւթին նկատմամբ իմ հետաքրքրութիւնը սկսաւ երբ հեռատեսիլէն Հնդկաստանի մէջ Թովմաս առաքեալի հիմնած եկեղեցւոյ մասին ուսուցողական յայտագիր մը կը դիտէի: Պատմաբանը ակնարկեց, թէ այդ եկեղեցին միակ քրիստոնեայ եկեղեցին էր, որ վերամարմնացման կը հաւատար: Այս պատճառ եղաւ, որ պրպտեմ եւ այդ եկեղեցւոյ դաւանանքին մասին աւելի տեղեկութիւն գտնեմ: Կատարած պրպտումիս հետեւանք սորվեցայ, որ հեռատեսիլի տեղեկատուն սխալած էր: Վերամարմնացումը մաս չէր կազմեր Ս. Թովմասի կազմած եկեղեցւոյ դաւանանքին: Շատ հետաքրքրական էր նաեւ տեսնել, որ անոնց ծիսակատարութիւնը զարմանալիօրէն նմանութիւն ունէր Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսերուն:

Վերամարմնացումը անհրաժեշտօրէն մաս եւ բաժին կը կազմէ արեւելեան կրօնքներուն: Ըստ այս կրօնքներու, մինչեւ Աստուածայայտնութեան կատարելագործումը, հոգին պէտք ունի բազմաթիւ վերամարմնացումներու: Վերամարմնացումը կը թուի ըլլալ անձին զարգացման կամուրջը կամ շղթայումը տիեզերքի բարեշրջման հետ, որ կ'ընթանայ դէպի կատարեալ Աստուածայայտնութիւն:

Վերամարմնացման գաղափարը կը թուի գոհացրնել որոշ մարդկային ձգտումներ: Մարդ արարած, նոյնացած իր «ԵՍ»ին հետ, կը ձգտի երկար կեանքի եւ անմահութեան: Դժբախտաբար, երբ իր բոլորտիքը կը դիտէ, կ'անդրադառնայ, թէ աղքատ կամ հարուստ, ուսեալ կամ անուս, թագաւոր կամ ծառայ բոլորն ալ դատապարտուած են մեռնելու: Վերամարմնացման գաղափարը եթէ նոյնիսկ ամբողջովին չի գոհացներ միտքը եւ «ԵՍ»ը՝ նկատմամբ անմահութեան, գոնէ

դարձեալ վերադառնալու յոյսով, կը մեղմացնէ մահ-
լան զաղափարի ազդեցութիւնը:

Երբ կը դիտենք մարդկային կեանքը, կը տեսնենք
անդժուծիւն, ցաւ ու վիշտ եւ կեանքը շատերուն
համար կը թուի չարչարանք մը ըլլալ:

Ամէն արարք կը թուի ըստ բախտի ըլլալ,
հետեւաբար ողբերգական: Անձեր կան, որոնք կը ծնին
տկար, Ֆիզիքսպէս պակասաւոր, աղքատ... Իսկ ուրիշ-
ներ հանճար, առողջ, հարուստ...: Աս կը թուի կապուած
ըլլալ Աստուծոյ փափաքին եւ քմահաճոյքին: Հետեւա-
բար Տիեզերք եւ Աստուած կը թուին անարդար ըլլալ:
Քա՛լ լիցի: Եթէ Աստուած սէր է, ամենակարող եւ
ամենագէտ, ինչո՞ւ տեղի կու տայ տառապանքի: Մեր
ներկայ Ֆիզիքսական կեանքերը կը թուին առաջնոր-
դուիլ մեր իղձերէն, փափաքներէն եւ կարիքներէն ու
ասկէ զատ ուրիշ նպատակ մը չ'երեւիր հորիզոնին
վրայ: Այո՛, կը հաւատանք որ մահէն ետք պիտի
ունենանք յաւիտենական կեանք: Բայց ո՞ւր: Այդ կը
թուի մեզմէ եւ մեր ապրած կեանքէն կախեալ ըլլալ:
Երկսայրի (dilemma) կացութեան մը առջեւ կը գտնու-
ինք՝ երթալ «երկինք», կամ «դժոխք»: Վերամարմնա-
ցումը կը պատասխանէ նաեւ այս երկսայրի դժուարու-
թեան, քանի որ անձը իր անցեալի կեանքերուն
հետեւանք կը գտնուի իր ներկայ կացութեան մէջ:
Ուրեմն, անձը միայն ինքզինք պէտք է մեղադրէ իր
ներկայ վիճակին եւ կացութեան համար: Աս նաեւ կը
համապատասխանէ այն տիեզերական անխախտելի
օրէնքին, թէ «ամէն արդիւնք պէտք է ունենայ իր
պատճառը»: Արեւելեան կրօնքներու մէջ զայն կը կոչեն
«զարմա»ի (karma) օրէնք: Աս կը համապատասխանէ
Աւետարանի եւ Հին Կտակարանի հետեւեալ համար-
ներուն.

«Աւերմանեցէ՛ յեւ յարդարո՞թիւն, եւ

Հնչեցե՛լ պրո-ղ կէնաց- լո-սա-որ արարե՛լ
 յեւ զլոյս Գրիգոր-Էեան- խնորհեցե՛լ զՏէր՝
 մինչեւ եկեացեն յեւ արդիւնէ՛ արդարո-
 ՞ւն : » (Ովսէէ Ժ : 12)

«Ձեզի արդարութիւնով ցանեցէ՛ք Ու ողորմութիւնով
 Հնձեցէ՛ք: ... Քանզի Տէրը փնտռելու ատենն է: Մինչեւ
 ինք գայ ու ձեր վրայ արդարութիւն տեղացնէ:»

«Չորօրինակ ցեօի զայնոսիկ որ զանազան
 ցեղան արօրադիր առնեն. որ սերմանեն զնո-
 սա՝ ցա-ս Հնչեացեն ՚ի նոցանէ : » (Յովբ Դ : 8)

«Ինչպէս տեսայ, անօրէնութիւն Հերկողները Եւ
 անօրէնութիւն ցանողները նոյնը կը Հնձեն:»

«Բանչի զայդ որ սերմանէ ճշտելով՝
 ճշտելով է- Հնչեացէ. է- որ սերմանէ
 արագոր-Էեամբ՝ արագոր-Էեամբ է- Հնչեացէ :
 » (Բ Կորնթացիս Թ : 6)

«Բայց ասիկա կ'իմացնեմ թէ՛ ան որ խնայելով կը
 սերմանէ՛ խնայելով պիտի Հնձէ ու ան որ
 առատութիւնով կը սերմանէ՛ առատութիւնով պիտի
 Հնձէ:»

«Մի խաբի՛ւ, Լսորո-սա՞ ոչ արհամարի : զի
 զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն Հնչեացէ :
 որ սերմանէ ՚ի մարմին ի-ր, ՚ի մարմնոյ
 անցի Հնչեացէ զառականութիւն-ն. է- որ
 սերմանէ ՚ի Հոգին, ՚ի Հոգո-ոյ անցի Հըն-
 յեացէ զկէանս յա-իցեանից : » (Գաղատացիս .9 : 7-8)

«Մի խաբուիք, Աստուած ծաղր չըլլար: Վասն զի ինչ
 որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի Հնձէ: Ան որ իր
 մարմինին կը սերմանէ, այն մարմինէն ապականութիւն

պիտի հնձէ ու ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիին յաւիտենական կեանք պիտի հնձէ:»

«Որդեակ՝ մի շար Գործեր, եւ շար ոչ
 Ըստոյէ վեզ: Յանիրաւոյն ՚ի Բոսոյ լեր, եւ
 նոյն մերձեացին ՚ի վեռ: Յակօսս անիրաւ-
 մի սերմաներ, զի մի Ընչեացեա եւ շնա-
 պարիկ շար ՚ի նմանէ:» (Սիրաչ Է:1-3)

«Do no evil, and evil will never befall you. Stay away from
 wrong, and it will turn away from you. My son, do not sow
 the furrows of injustice, and you will not reap a sevenfold
 crop.» (The Apocrypha- Sirach 7:1-3)

Արեւելեան կրօնքներու բազմաթիւ կրօնական
 գիրքերուն մէջ վերամարմնացման մասին շատ ակ-
 նարկներ կան: Հետեւեալ համարները կը ներկայացնեն
 անոնցմէ միայն երկուքը.

«Ինչպէս այս մարմինի մէջ, մարմնացեալ անձը
 կ'անցնի մանկութենէ պատանեութեան եւ
 վերջապէս խոր ծերութեան, նմանապէս նաեւ
 ուրիշ մարմինի մը: Ասոր գիտակից մարդը
 (մահուան նկատմամբ) վիշտով չի տառապիր»
 (Պակավատ Աիթա 2:13)

«Ինչպէս մարդ մը իր Հինցած զգեստները կը
 նետէ եւ նորը կը Հագուի, նմանապէս
 մարմնացեալ անձը կը նետէ իր մաշած եւ
 Հինցած մարմինը եւ կ'առնէ մարմին մը որ նոր
 է:» (Պակավատ Աիթա 2:22)

Կը թուի, թէ ըստ անոնց, երբ մարմինը յառաջ-
 դիմութեան այլեւս պէտք եղած ձեւով չի ծառայեր,
 անձը կը լքէ այդ մարմինը: Իր նախորդ կեանքերու
 ընթացքին կերտած խորհուրդներուն, խօսքերուն եւ
 արարքներուն համապատասխան նոր մարմին մը
 կ'առնէ: Իր ընտրած նոր կեանքը իր իղձերն ու փա-

փառքները իրականացնելու եւ իր պարտքերը վճարելու ամենայարմարն է: Իր ընտրութեան նպատակը իր հոգեկան յառաջացման արգելք հանդիսացող այդ իղձ եւ փափառքները իրականացնել, զանոնք սպառել եւ յառաջացման ճամբան բանալ է: Բայց աւա՛ղ, ընդհանուր առմամբ կը ստեղծուին նոր իղձ եւ փափառքներ: Հետեւաբար վերամարմնացման «անիւ»ը յաւիտեան կը դառնայ:

Բոլոր կրօնքները կը յանձնարարեն ազնիւ եւ վեհ խորհուրդներ, խօսքեր եւ արարքներ ունենալ, քանի որ այս կեանքի ընթացքին է որ կը կերտենք մեր յաջորդ կեանքը: Ազնիւ եւ վեհ ընթացքը կը դիրքորոշէ յաջորդ վերամարմնացումի բարեվիճակ կացութիւնը, իսկ վատ խորհուրդ, խօսք եւ արարքներն ալ՝ ճիշդ հակառակը: Նման արարքներ անձին վրայ կրնան տարբեր ազդեցութիւններ ունենալ: Աս կախեալ է անձին նպատակէն եւ մտածումէն: Օրինակ «սուր դանակով անձի մը փորը կտրել»: Եթէ արարքը չարակամութեամբ եղած է՝ անձը վիրաւորելու, ցացնելու եւ նոյնիսկ սպաննելու նպատակաւ, անձին՝ ոճրագործին վրայ իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ: Իսկ եթէ նոյն արարքը կատարուի վիրաբոյժի մը կողմէ՝ անձը բուժելու նպատակաւ, իր ազդեցութիւնը կ'ըլլայ դրական: Արարքէն զատ նպատակը կը թուի աւելի կարեւոր ըլլալ: Արդէն խօսք եւ արարք կը ծագին խորհուրդներէ:

Միջին արեւելքի կրօնքները՝ հին կտակարանի Մովսիսական կրօնքը, Քրիստոնէութիւնը եւ Մահմէտականութիւնը վերամարմնացման հակապատկերը կը ներկայացնեն: Ըստ այս կրօնքներու մարդ ունի միայն մէկ կեանք եւ այս կեանքի ընթացքին իր խորհուրդներու, խօսքերու եւ արարքներու հետեւանք կ'որոշուի

Թէ որ պիտի անցնէ իր յաւիտենական կեանքը. «Երկինք»ի մէջ, Թէ ոչ՝ «Դժոխք»ի:

Ըստ հետեւեալ համարին արդեօ՞ք համայն մարդկութիւնը դժոխք պիտի երթայ:

«Վանայի ամենեւին մեղան. Եւ նոսապեալ էն

ի փառացն Լսարո-Չոյ:» (Հոովմայեցիս Գ:23)

«Վասն զի ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան.»

Ո՞ր է «Երկինք»ը եւ որ է դժոխքը: Ո՞վ է արժանի «Երկինք»ի:

Եթէ ծնունդներու փոփոխակ ըլլալը հետեւանք է բախտի, որ կը մնայ տիեզերական «պատճառ եւ արդիւնք»ի օրէնքը: Իսկ եթէ պատճառը Աստուծոյ կամքն է, այն ատեն ինչո՞ւ պատժել գող աւազակը կամ մարդասպանը: Միթէ անոնք չե՞ն գործեր իրենց ստեղծուած բնութեան համաձայն:

«Նոյնիսկ իմաստուն մարդը կը գործէ իր բնութեան համաձայն, էակները կը Հետեւին իրենց բնութեան: Ի՞նչ օգուտ ունի զսպումը:» (Պակապատ Կիթա 111:33)

Ուրեմն պէտք է որ Աստուած պատժենք, իրենց ստեղծիչը: Քա՛ւ լիցի:

Երբ մանուկ մը կը մահանայ, կ'ըսենք «ի՞նչ մեղք ունէր»: Եթէ միայն մէկ կեանք է որ կ'ապրինք, որ է արդարութիւնը: Կ'ըսուի, թէ որովհետեւ մանուկները անմեղ են շիտակ «Երկինք» կ'երթան յաւիտեան ապրելու՝ Աստուծոյ ներկայութեան մէջ: Եթէ ասոր կը հաւատանք ինչո՞ւ կը տխրինք երբ անմեղ մանուկ մը մահանայ: Եթէ այս հաւատքը ճիշդ է, ընդհակառակը պէտք է ուրախանանք եւ մեր զաւակներուն յաւիտեան լաւութեան եւ երջանկութեան համար, անոնք տակաւին չափահաս չեղած եւ մեղք չգործած, պէտք է զանոնք սպաննենք: Ինչո՞ւ պատժել անոնք, որոնք

մանկասպանութիւն կը գործեն: Կը թուի թէ մեր հաւատացածին մենք ալ չենք հաւատար:

Ըստ որոշ տուեալներու Հրեաները հին ժամանակներուն կը հաւատային վերամարմնացման եւ իրենց «Գապալա»ի գրութիւններուն մէջ ականարկ կայ մի քանի կեանքերու մասին:

Յովսէփոս (Josephus)՝ Հրեայ պատմաբան մը, իր գրութիւններէն մէկուն մէջ «Իմաստութիւն Սողոմոնի»էն հետեւեալ մէջբերումը ըրած է.

«Ծնիլ աւուղջ մարմին եւ անդամներով, անցեալ կեանքերու առաքինութեան եւ արժանիքներու վարձատրութիւնն է»:

Այս համարէն յայտնի կ'ըլլայ, թէ գոնէ Սողոմոն իմաստուն վերամարմնացման կը հաւատար: Կը թուի թէ Հրեաներուն մէջ կան զանազան ճիւղաւորումներ: Ոմանք վերամարմնացման կը հաւատան, ոմանք ալ՝ ոչ: Վերջի երկու հարիւր տարուայ ընթացքին, Եւրոպացի Հրեաներու ազդեցութեամբ, ոչ կը հաւատան վերամարմնացումի, ոչ ալ՝ մահէ ետք որեւէ կեանքի:

Մահմետականները կը հաւատան «երկինք» եւ «դժոխք»ի, իսկ վերամարմնացման՝ ընդհանուր առմամբ ոչ: Կը հաւատան որ եթէ կրօնքի եւ Աստուծոյ համար մեռնին, ուղղակի «երկինք» պիտի երթան: Որով յանուն կրօնքի եւ Ալլահի, իրենց մարմնոյն վրայ ումբ փաթթելով կը կատարեն ինքնազոհողութիւն, որոնց մասին լրատուական միջոցներէն կը տեղեկանանք: Երանի թէ իրենց կրօնքը լաւ հասկցած ըլլային եւ հասկնային թէ «Աստուծոյ համար մեռնիլ» կը նշանակէ իրենց «ԵՍ»ը մեռցնել եւ ոչ իրենց մարմինը: Որքան որ վերամարմնացման չեն հաւատար, սակայն կայ ժողովրդային հասկացողութիւն մը, ըստ որու, վատ կեանքի մը հետեւանք կարելի է վերամարմնանալ իբր շուն կամ կատու: Ճիշտ ասոր

համար ալ կ'ատեն եւ կ'արհամարեն այդ կենդանիները: Նոյն պատճառաւ իրենց համար մեծ անարգանք կը նկատուի, երբ իրենց «շուն», «շան զաւակ» կամ «շան լակոտ» ըսուի: Սուփիականութիւնը (Sufism) որ Մահմէտական կրօնքի ճիւղաւորումներէն մին է, կարծէք աւելի մօտ է վերամարմնացումի գաղափարին: Ծէլալէթթին Րումի հետեւեալը ըսած է.

«Քար էի ու մեռայ եւ բոյս եղայ, բոյս էի ու մեռայ եւ կենդանի եղայ, կենդանի էի ու մեռայ եւ մարդ եղայ: Ինչո՞ւ վախնամ մեռնելէ: Մեռնելով ե՞րբ նուազեցայ որ: Մարդ եմ ու պիտի մեռնիմ եւ հրեշտակ պիտի ըլլամ:»

Աս որոշ ակնարկութիւն մըն է վերամարմնացման եւ աւելին, կը թուի ըլլալ զօրաւոր ակնարկութիւն մը բարեշրջման գաղափարին:

Ըստ որոշ աղբիւրներու, հին ժամանակներուն, քրիստոնեաներն ալ կը հաւատային վերամարմնացման: Ինչպէս գիտենք սկզբնական ժամանակներուն օրուան եպիսկոպոսներու միջեւ բաւական գաղափարներու տարբերութիւններ գոյութիւն ունեցած են, այն աստիճան որ կարգ մը եպիսկոպոսներ նահատակուած, ուրիշներ աքսորուած եւ ոմանք ալ հերետիկոս հռչակուած են: Կոստանդիանոս կայսրը, իր նախաձեռնութեամբ գումարուած չորրորդ դարու եպիսկոպոսական ժողովին վրայ մեծ ազդեցութիւն ունեցած է: Այս ժողովին, կայսեր ճնշման տակ, կատարուած է այսօրուայ Քրիստոնէութեան հաւատքի ձեւաւորումը: Ամբոխները կրօնքի միջոցաւ աւելի լաւ եւ դիւրաւ կառավարելու նպատակով, յարմար նկատուած է վերամարմնացումը դաւանանքէն դուրս ձգել: Իսկ 638ի Կ. Պոլսոյ եպիսկոպոսական ժողովին, Յուստինիանի (Justinian) օրով, վերամարմնացումը վերջնականապէս հռչակուած է հերետիկոսային հաւատալիք:

Ըստ ուղղափառ եկեղեցիներու, անձը, մահէն ետք խորունկ քունի մէջ կը մտնէ: Ճիշդ ասոր համար ալ մեր եկեղեցւոյ մէջ մեռեալ բառը չի գործածուիր այլ ննջեցեալ՝ քնացող կ'ըսուի: Աշխարհի վերջաւորութեան, անոնք որոնք արժանի են յարութեան, նոր լուսոյ մարմին առնելով Աստուծոյ թագաւորութեան մէջ յաւիտեան երջանիկ պիտի ապրին: Հռովմի Կաթողիկէ եկեղեցին կը հաւատայ քաւարանի գոյութեան, ուր մեռեալ մարդոց հոգիները կը սպասեն դատաստանի օրուան: Բացի Յիսուսէ եւ իր վերակենդանացուցած անձերէ, ոչ ոք մահուընէ ետք եկած է, որ այս գաղափարներէն որմէկուն ճշգրտութեան մասին որոշ տեղեկութիւն մը տար: Մեզի հասած Ս. Գիրքը, (որքան ալ փոփոխութեան ենթարկուած ըլլայ) տեսնենք ի՞նչ կ'ըսէ այս նիւթին շուրջ: Հին կտակարանին մէջ վերամարմնացման գաղափարը ժխտող շատ օրինակներ կան: Հետեւեալները կը ներկայացնեն անոնցմէ միայն երկուքը.

«Բանպի որ կենդանիէն էն՝ Գիրքէն նո՛ւա թէ մեռելանոց էն. եւ մեռելալէն ոչ էն Գիրքակ է ոչ իմի՛: Եւ ոչ էւս Գոն նոցա վարձէ՛ պի մեռացաւ յեշտարակ նոցա. եւ սեր իսկ նոցա՛ էւ արելու-թիւն նոցա՛ էւ նախանջ նոցա՛ աւա կորեաւ. եւ թաշիւն իսկ ոչ Գոյ նոցա յաւիրեանս յամենայնի յայսմիկ՝ որ արարեալ էն ընդ արեգակամբ:»
(Ժողովող Թ: 5-6)

«Որովհետեւ անոնք որ կ'ապրին, գիտեն թէ պիտի մեռնին. Բայց մեռելները բան մը չեն գիտեր Ու ալ վարձք մը չեն առներ. Վասն գիտանց յիշատակը մտոցուեցաւ: Թէ՛ անոնց սէրը, թէ՛ ատելութիւնը եւ թէ՛

նախանձը արդէն կորսուեցան Ու անոնք արեւուն տակ եղող բաներէն Ա՛լ յաւիտեան բաժին չ'ունին:»

Եւ որ ես կէանս ընդ կնոջ ի՞նչ պոր սիրեցեր պամենայն ասորս կէնաց ընդ ունայնոս թեան ի՞նչ, որ ցոտեալ է ի՛նչ ընդ արեգակամբ ամենայն ասորի վախճանի ի՞նչ: Զի այն է թաշին ի՞նչ կէանս ի՞նչ, եւ ի՛նչ վաստակս պոր վաստակեա ի՛նչ ներդոյ արեգական: Զամենայն ինչ որ ինչ Գրոցէ յեան ի՞նչ Գործել, որչափ ի՛նչ կարի ի՞նչ մ իցէ Գործեաջիր. զի ոչ է խորհորտ եւ Գիտութիւն եւ իմաստութիւն ի՛նչ դժոտոյս յոր դոս երթալոցն ես:» (Ժողովող Թ: 9-10)

«Քու սիրած կնոջդ Հեա կեանք վայելէ Քու ունայն կեանքիդ բոլոր օրերուն մէջ, Որ Աստուած քեզի տուաւ արեւուն տակ, Բոլոր ունայն օրերուդ մէջ: Վասն զի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է՝ Արեւուն տակ կատարած աշխատանքիդ: Զեռքդ ինչ որ գտնէ ընելու, Բոլոր ուժովդ ըրէ, Քանզի գերեզմանիդ մէջ Գործ, խորհողդ, գիտութիւն ու իմաստութիւն չկայ:»

Նոր կտակարանին մէջ կան մի քանի համարներ, որոնց մասին կ'արժէ խորհրդածել:

«Եւ ելեալ Յիսոսս ի՛նչ կողմանս Փիլիպպեայ կէասրեայն, Հարցաներ ցաշակերպան՝ եւ ասեր. զի՞նչ ո՞վ ասէն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոց: Եւ նոյն ասէն, ոմն՝ զՅովհաննէս մարդիչ, եւ այլի՛նչ զԵղիս, եւ կէտի՛նչ զԵրեմիս, կամ զմի ո՞վ ի՛նչ

մարտարէիցն : » (Մարթէոսի Ժ:Զ :13-14)

«Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը երթալով՝ իր աշակերտներուն Հարցոց ու ըսաւ. «մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդին մարդոյ»: Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Մկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»:»

«այլ ասեմ յեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է. է- ոչ Ժանեան զնա, այլ արարին ընդ նա՝ զորինչ կամեցան. նոյնպէս է- որդի մարդոյ շարշարելոց է ՚ի նոցանէ: Յայնժամ ՚ի միտ ատին աշակերտին, թէ վասն Յովհաննէսն մկրտչի՝ ասաց ցնոսա :» (Մարթէոսի ԺԷ :12-13)

«Բայց ձեզի կ'ըսեմ թէ Եղիան արդէն եկած է եւ զանիկա չճանչցան, Հապա ինչ որ ուզեցին ըրին անոր. նոյնպէս ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի:» Այն ատեն Հասկցան աշակերտները թէ Յովհաննէս Մկրտչին Համար ըսաւ անոնց:»

Յայտնի է թէ Հրեայ Ժողովուրդը Յիսուսի ատեն վերամարմնացման կը հաւատար, քանի որ կ'ակնկալէին թէ Եղիան կամ Երեմիան որպէս Յիսուս վերամարմնացած էին: Երբեմն անձեր առարկութիւն կ'ընեն ըսելով թէ Եղիա չէր մեռած եւ հրեղէն կառքով երկինք բարձրացած էր, որով չէր կրնար վերամարմնացած ըլլալ: Հապա՞ Երեմիան կամ ուրիշ մարգարէներ, որոնք բոլորն ալ մեռած էին: Յիսուսի իբր մանուկ ծնելուն մասին տեղեկութիւն ունինք: Որով Յիսուս հրեղէն կառքով վերադարձած Եղիա մը չէր կրնար ըլլալ: Երկրորդ համարը աւելի յատկանշական է, ուր Յիսուս ինք բացայայտօրէն կ'ըսէ թէ Եղիա արդէն իսկ վերամարմնացած էր իբր Յովհաննէս Մկրտիչ, քանի որ գիտենք նաեւ Յովհաննէսի ծնունդին մասին:

Այլակերպութեան ատեն Յիսուս արդեօք որու

հետ կը խօսէ՞ր: Աւետարանը կ'ըսէ Եղիայի եւ Մովսէսի հետ: Այլակերպութեան ատեն Յովհաննէս Մկրտիչ արդէն իսկ գլխատուած եւ սպաննուած էր, ուրեմն Յիսուսի հետ խօսողը Եղիան է՞ր թէ Յովհաննէս: Կարեւորը ո՞րն է. նախորդ մարմնացումները՝ թէ վերջինը:

«Պատասխան ետ Յիսուս»՝ էւ ասէ ցնա. ասէն ասէն ասեմ չեւ, եթէ ոչ ո՛վ թնցի 'ի վերսորին, ո՛չ կարէ Կրիստոսնէլ զարեայոս-թիւն Լսարո-ժոյ: Եսէ ցնա Նիկողեմոս. զիս՞րդ կարէ մարդ թնանէ՛լ որ թնեալն իցէ. միեթէ՛ մա՞րթ ինչ իցէ անորէն յորովայն մօր ի-րոյ կրկին մտանէ՛լ է- թնանէլ:»

(Յովհաննոս Գ:3-4)

«Պատասխան տուա Յիսուս եւ ըսաւ անոր. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի. Եթէ մարդ մը նորէն չծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել»: Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ մարդ մը նորէն ծնանիլ, որ ծերացած է: Հնարաւո՞ր բան է, որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի:»

Նիկողեմոսի պատասխանէն յայտնի է թէ ան վերամարմնացման չէր հաւատար: Հոս, Յիսուսի ըսած «վերստին ծնունդ»ը աւելի վերացական իմաստով կ'առնուի եւ ոչ վերամարմնացման իմաստով: Ան կը նշանակէ մտքի ուղղութեան փոփոխութիւն՝ արտաքին «ՍԱ» «ԴԱ» «ՆԱ»յէ դէպի ներքին Քրիստոս: Արդեօք Յիսուս կը հաւատա՞ր վերամարմնացման եւ ըսել ուզեց թէ մահէն ետք Նիկողեմոսի հոգին իր յաջորդ վերամարմնացումին արժանի պիտի ըլլար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնելու:

«Որ յաղթէ՛ արարից զնա սիւն Կաճարի

Լսարան-Ժողովոյ, եւ արքայախոսաց մի եւս
եւջեւ. եւ Գրեցեց ՚ի վերայ նորա պաննոն

Լսարան-Ժողովոյ, ...» (Յայտնութիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, զանիկա իմ Աստուծոյս տաճարին
մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ:
Անոր վրայ իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ ...»

Այս համարն ալ կը թուի ակնարկուածիւն մը ըլլալ
վերամարմնացման նկատմամբ: Կերելի թէ մինչեւ որ
անձը «յաղթանակը ձեռք չձգէ» միշտ «դուրս պիտի
ելլէ», իսկ եթէ «յաղթէ» Աստուծոյ պիտի չբաժնուի՝
«տաճարին մէջ սիւն պիտի ըլլայ»: «Դուրս ելլել»
հաւանաբար կը նշանակէ վերամարմնացման եւ
մահուան անիւի շարունակական դառնալը: Իսկ
յաղթելն ալ, որ կը նշանակէ «ԵՍ»ին յաղթել, կը
դադրեցնէ անիւին դառնալը՝ մնայուն մաս կազմելով
Աստուծոյ տաճարին:

Յատկանշական է նաեւ Յիսուսի եւ աշակերտ-
ներուն միջեւ եղած հետեւեալ խօսակցութիւնը:

«Եւ մինչդեռ անցաներ, երբս այր մի կոյր
՚ի շնէ. եւ Լարցին ցնա աշակերտին նորա՝
եւ ասէն. ուսէի՝ ո՞յր վնաս է, ցորա՞ լել
Լօր եւ մօր իւրոյ՝ պի կոյր շնաս:
Պարասխանի եր Յիսուս. ոչ դորա վնաս
է, եւ ոչ Լօր եւ մօր իւրոյ. այլ պի
յայտնի լիցին Գործին Լսարան-Ժողովոյ ՚ի դմա:»
(Յովհաննոս Թ:1-3)

«Երբ կ'անցնէր, մարդ մը տեսաւ կոյր ծնած: Իր
աշակերտները հարցուցին իրեն ու ըսին. «Ռաբբի,
որովն է մեղքը, ասո՞ր թէ իր ծնողքին, որ անիկա
կոյր ծնաւ»: Պատասխան տուաւ Յիսուս. «Ո՛չ ատորն է

մեղքը, ո՛չ ալ իր ծնողքին, հապա որպէս զի Աստուծոյ
գործերը ասոր վրայ յայտնի ըլլան»։»

Յատկանշական է նաեւ աշակերտներուն հարցումը: Ինչպէ՞ս կոյր ծնած անձ մը իր մեղքերուն համար կոյր կը ծնի, եթէ այդ մեղքերը իր ծնունդէն առաջ չէ գործած: Եւ եթէ մեղքը իր ծնունդէն առաջ գործած է, պէտք է գործած ըլլայ իր նախկին կեանքերուն ընթացքին: Իրենց հարցուցած հարցումէն յայտնի կ'ըլլայ թէ գոնէ աշակերտները կը հաւատային վերամարմնացման: Յիսուսի պատասխանն ալ շատ հետաքրքրական է եւ տեղին: Յիսուս իր պատասխանով ըսել կ'ուզէ թէ ամէն ինչ որ այս աշխարհի պատրանքային երեւոյթի մէջ կը գտնուի կարեւորութիւն չունի: Յիսուս լաւ գիտէր, որ միակ ճշմարտութիւնը Աստուած էր եւ միւս բոլորը միայն պատրանք: Նոյնիսկ եթէ վերամարմնացումը իրողութիւն ըլլար այս պատրանքային մակարդակի վրայ, ի՞նչ առնչութիւն ունի ճշմարտութեան հետ: Երբ գիշերը քունի մէջ կ'երագենք եւ երբ առաւօտուն կ'արթննանք, երազը եւ երագին մէջլինները բոլորը կ'ոչնչանան, հետեւեալ երագի մէջլի անձն ալ կը մեռնի: Յաջորդ գիշեր եթէ դարձեալ երագենք անձը վերամարմնացած կ'ըլլա՞յ եւ առաւօտուն դարձե՞ալ կը մեռնի: Երագի մէջլի անձին կեանքը կարճ ըլլալ կը թուի: Մեր կեանքն ալ շատ կարճ կը թուի ըլլալ երբ բաղդատենք յաւիտենականութեան հետ: Երբ քունէն կ'արթննանք, երագին մէջլի անձին մահուան համար սուգ կը բռնե՞նք: Չեմ կարծեր: Ճիշդ այս պատճառաւ Յիսուսի պատասխանը ամենալաւն էր, քանի որ ստեղծագործութիւնը իր բոլոր բարեշրջումներով կը գոյատեւէ միայն ու միայն ցոլացնելով Աստուծոյ «Լոյսը»՝ ցոյց տալու համար Անոր փառքը:

Ուրեմն վերամարմնացում կա՞յ թէ ոչ եւ ի՞նչ է վերամարմնացումը:

Վերեւ վերամարմնացման մասին կրօնական գիրքերու տուած տեղեկութիւնները ուսումնասիրեցինք: Համայն մարդկութեան համար կը թուի շատ խառնակ վիճակ եւ հաւատալիք մը ըլլալ: Կրօնքներու ներկայացուցած վաւերացումները պէտք են նաեւ հաշտ ըլլալ անձնական փորձառութիւններու եւ գիտութեան հետ: Ժողովուրդներու մէջ զանազան գիրքեր եւ պատմութիւններ կը չըջին, ցոյց տալով վերամարմնացման գոյութիւնը: Հետեւեալ պատմութիւնը տարիներ առաջ գիրքի մը մէջ կարդացած էի: Անունները եւ տարիները լաւ չեմ յիշեր:

Լիբանանի մէջ 4-5 տարու աղջիկ մը կ'ըսէ, թէ իր անունը Ֆատիմէ է, ինչ որ իր ծնողքին գինք կոչած անունը չէ եւ մօտակայ գիւղի մը անունը տալով կ'աւելցնէ, թէ այդ գիւղին մէջ դաշունահարուած եւ սպաննուած է: Ծնողքը նախ կարեւորութիւն չի տար, խորհելով թէ հեռատեսիլի պատմութիւններու ազդեցութեամբ մանկական երեւակայութիւն մըն է: Երբ մանուկը նոյն դէպքը բազմաթիւ անգամներ կը կրկնէ, օգնութեան կը դիմեն: Վերջապէս կ'որոշուի մանուկին ըսած գիւղը երթալ եւ հարցուփորձել: Այդ պրպտումին հետեւանք ի յայտ կու գայ, թէ մանուկին տուած անունով կին մը, մանուկին ծնունդէն մօտաւորապէս ինը ամիս առաջ, դանակով սպաննուած էր: Մանուկը իր ներկայ կեանքին մէջ բնաւ այդ գիւղը չէր գացած եւ անոր մասին տեղեկութիւն ալ չունէր:

Այս եւ նման պատմութիւններու ճշգրտութեան ստուգումը դժուար է, որով որեւէ տեսակէտ չեն փաստեր: Թերեւս պատմուածը իրողութիւն է, թերեւս ալ զգայականութիւն ստեղծելու եւ գիրք ծախելու

համար կեղծ պատմուածք մըն է:

Հոգեբաններ կ'ըսեն թէ օգտագործելով քնածու-
թիւնը (hypnosis), յետադարձութեան (regression) միջոցաւ
կրնան ենթակայէն անոր անցեալի կեանքին մասին
տեղեկութիւն առնել: Յիշողութիւնը ուղեղային
գործառնութիւն մըն է: Երբ ուղեղին որոշ մասերը
վնասուին, անձն ալ իր յիշողութիւնը կը կորսնցնէ:
Խոր ծերութեան կամ հիւանդութեան հետեւանք երբ
ուղեղային բջիջներու թիւերը զգալիօրէն կը նուազին
(Dementia, Alzheimer's) անձը կը ցնդի (մտազարութիւն):
Իր ուղեղի յիշողութեան շտեմարաններուն մէջ այլեւս
նոր յիշողութիւններ արձանագրելու կարողութիւնը
չ'ունենար: Եթէ նոյնիսկ վերամարմնացում գոյութիւն
ունենայ, անձին ուղեղը կը պատկանի իր նոր մար-
մինին, հետեւաբար չէ ունեցած անցեալի փորձառու-
թիւնները, որ կարենան այդ փորձառութիւնները իր
յիշողութեան մէջ արձանագրուած ըլլան: Ուրեմն
ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ անցեալ կեանքեր յիշել:
Արդեօք ի՞նչ է որ քնածութեան ենթակայ անձը կը յիշէ
ու կը պատմէ: Եթէ ընդունինք թէ ժամանակը
փոխ-յարաբերական է (relative) ինչպէս ամբողջական
բնագիտութիւնը (quantum physics) կ'ենթադրէ, հաւանա-
կան է որ անցեալը, ներկան եւ ապագան բոլորն ալ նոյն
ատեն կը գոյատեւեն: Մեզի համար ժամանակը, իր
անցեալ, ներկայ եւ ապագայով կը թուի իրողութիւն
մը ըլլալ, կրնայ միայն պատրանքային ըլլալ: Կարելի
է, որ քնածութեան միջոցին ենթական այս պատրան-
քային իրողութենէ անգիտակից, ականատես կ'ըլլայ
որոշ «անձերու եւ արարքներու» զօրութեան մակար-
դակի վրայ համապատասխան իր անձին գտնուած
զօրութեան թրթռացումի յաճախականութեան: Իր
տուած տեղեկութիւնը, մեզի՝ պատրանքի իրողութեան
մէջ եղողներու, կը թուին անցեալին պատահած ըլլալ:

Բոլոր ստեղծագործութիւնը՝ տիեզերքը կը ներկայացնէ Աստուծոյ մարմինը: Տիեզերքի մէջ եղող ամէն ինչ՝ քար, բոյս, կենդանի եւ մարդ արարած, բոլորն ալ մաս կը կազմեն Աստուծոյ մարմնին եւ բջիջներն են այդ մարմնին: Բնութեան մէջ ամէն ինչ կը թուի հետեւիլ «ինչպէս վերը, այնպէս ալ վարը» առածին: Բնութիւնը մեզի տուած է մանրաշխարհի (microcosm) մէջ ինչ որ կը պատահի մեծաշխարհի (macrocosm) մէջ: Մեր մարմիններն ալ կազմուած են բազմաթիւ բջիջներէ: Ամէն օր միլիոնաւոր բջիջներ կը մեռնին եւ նորերը կը ծնին: Մեռնող բջիջը ինք ետ չի գար: Օրինակ առնենք մեր մորթին բջիջները: Անոնք յօժարաբար ինքզինքնին կը զոհեն ու կը կազմեն մեռած բջիջներու խաւ մը, պաշտպանելու համար ամբողջ մարմինը՝ արտաքին վնասներէ: Ճիշդ է թէ բջիջները կը բազմանան ծնունդ տալով իրենց նմանին: Մարդիկ ալ նոյնը չեն ընե՞ր: Մեռնող բջիջ մը ինք դարձեալ ետ չի գար: Այո, իր յատկութիւնները յաջորդ սերունդին կ'անցնի, բայց ինք ետ չի գար: Մեր մարմիններու բջիջները կրնան փոփոխութեան ենթարկուիլ (mutation) եւ փոխուիլ, նաեւ անոնց յատկութիւնները: Այս փոփոխութիւնները կրնան ըլլալ դէպի լաւ եւ անձին օգտակար, կամ դէպի վատ՝ անձին վնասակար: Օրինակի համար բջիջ մը փոխուելով դէպի վատ, կը դառնայ քաղցկեղի բջիջ եւ բազմանալով կը սպառնայ անձին կեանքին:

Նմանապէս ամէն անձ Աստուծոյ մարմնին մէջ որպէս բջիջ մը, երբ մեռնի այլեւս ետ չի գար: Նոյն ատեն ամէն անձ իր յատկութիւնները կը փոխանցէ յաջորդ սերունդին, այսինքն ուրիշ անձի մը: Նման մեր մարմիններու բջիջներուն, մենք ալ մեր կարգին, մեր ապրելակերպով, կարելի է որ փոփոխութեան ենթարկենք մեր անձերը: Ինչպէս մեր մարմիններու

բջիջները դէպի լաւ փոխուելով անձը կը զօրացնեն եւ անոր առողջ եւ երկար կեանք կը պարգեւեն, կամ դէպի վատ փոխուելով կը հիւանդացնեն եւ անձին մահուան պատճառ կ'ըլլան, մենք ալ, մեր վարուելակերպով եւ ապրումով կարելի է որ փոխենք մեզ կազմող զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը դէպի լաւ կամ դէպի վատ: Եթէ դէպի վատ փոխենք, քաղցկեղի նման, կը խաբանենք Աստուածայայտնութիւնը: Իսկ եթէ դէպի լաւ փոխենք, նոյնիսկ մեր մահէն յետոյ, մեր անձին միջոցաւ եղած յառաջդիմութիւնը, զօրութեան թրթռացումի յաճախականութեան փոփոխումի միջոցաւ կը փոխանցուի ուրիշ նորածին ազնիւ անձի մը: Ամէն անձի կեանքը՝ զինք կազմող զօրութիւնը, Աստուածային է եւ Աստուծմէ բխած է եւ անձին մահուան ատեն կը վերադառնայ Աստուծոյ, փոխուած անձին ապրած կեանքին համաձայն: Երբ յաջորդ անգամ մը եւս այդ նոյն զօրութիւնը դարձեալ մարմին եւ անձ մը կազմէ, այդ անձը կ'ըլլայ համապատասխան այդ զօրութեան թրթռացումի յաճախականութեան: Լաւ գիտենք որ զօրութիւնը կրնայ տեղեկութիւն պարունակել: Չայնասփիւռի ալիքները կարող են իրենց թրթռացումի յաճախականութեան եղանակաւորումով (FM-Frequency Modulation), կամ իրենց լայնութեան եղանակաւորումով (AM-Amplitude Modulation) որոշ տեղեկութիւն սփռել, որ ուրիշ վայրի մը մէջ գտնուող ընդունակ գործիքի մը միջոցաւ կարելի կ'ըլլայ ստանալ: Մեր մարմիններն ալ նման են այդ ընդունակ գործիքներուն: Չայնասփիւռի ամէն մէկ կայան կը ներկայացնէ ան որ առաջուց արձանագրուած է իր ալիքին վրայ: Նմանապէս մարդոց մարմիններն ալ կ'ապրին եւ կը գործեն ըստ իրենց բնութեան որ կ'որոշուի զիրենք կազմող զօրութեան թրթռացումի յաճախականու-

Թեան եւ լայնութեան եղանակաւորումով: Քաղցկեղի բջիջ մը յառաջ կը բերէ ուրիշ քաղցկեղի բջիջներ, իսկ դէպի լաւ փոփոխութիւն ունեցող բջիջ մը, նման լաւ եւ օգտակար բջիջներ: Երբ քաղցկեղի բջիջներ շատնան եւ սպառնան ենթակային կեանքին, անձը կ'ենթարկուի վիրաբուժական հատումի, վերջնականապէս ազատելու անոնցմէ: Արդեօք հին կտակարանի ջրհեղեղը եւ Սողոմ եւ Գոմորի պատահածները նման վիրաբուժական հատումներ է՞ին մեծաշխարհային (on a macrocosmic scale) չափի վրայ: Երբեմն քաղցկեղի բջիջները այնքան արագ կը բազմանան, որ մազերակները չեն կրնար նոյն արագութեամբ բազմանալ եւ սնունդ հայթայթել կազմուող ուռին: Ուռին բջիջներուն մէկ մասը մահուան կ'ենթարկուին եւ ուռին կեդրոնը յառաջ կու գայ հեղուկի հաւաքածոյ մը՝ կազմուած մեռեալ բջիջներէ: Արդեօք պատերազմներու միջոցաւ կատարուած աղէտները եւ միլիոնաւոր անձերու մահն ալ, վատ խորհուրդներու հետեւանք, նման ինքնասպանութիւն մըն է՞:

Ուրեմն վերամարմնացում կա՞յ թէ ոչ եւ ի՞նչ է վերամարմնացումը:

Արդեօք, կարելի է՞ որ բոլոր կրօնքները նոյնը կ'ըսեն, բայց մարդոց ըմբռնումներն են որ կը տարբերին: Եթէ ինչ որ անձ մը կը խորհի, կը խօսի եւ կը գործէ կարեւոր են եւ գինք փոփոխութեան կ'ենթարկեն եւ մահէն յետոյ այս փոփոխութիւնը կը մնայ եւ կը վերածնի ուրիշ անձի մը մէջ, ըսել է թէ վերամարմնացում գոյութիւն ունի: Հետեւաբար մեր այսօրուայ արարքները, խօսքերը եւ խորհուրդները կը գոյատեւեն եւ կ'ազդեն ապագայի վրայ: Ուրեմն այս կը համապատասխանէ «պատճառ եւ արդիւնք»ի (karma) օրէնքին:

Ո՞վ է անձը: Եթէ անձը նոյնացած է իր «ԵՍ»ին

հետ եւ կը հաւատայ այս պատրանքային գոյութեան իբր ճշմարտութիւն, այն ատեն կը հաւատայ վերամարմնացման, նման արեւելեան կրօնքներու, կարծելով թէ իր «ԵՍ»ն ալ պիտի վերամարմնանայ: Կը խորհիմ թէ սխալած կ'ըլլայ, քանի որ անձին մահուան հետ նաեւ կը մեռնի իր «ԵՍ»ը: Իսկ միջին արեւելքի կրօնքներէն մէկուն պատկանող նման անձ մը, որ նաեւ նոյնացած է իր «ԵՍ»ին հետ եւ կ'ըսէ թէ վերամարմնացում չկայ, ճիշդ ըսած կ'ըլլայ, քանի որ իր «ԵՍ»ը ետ պիտի չգայ: Բայց եթէ անձը պատրանքային գոյութենէն չէ խաբուած ու տարուած եւ անդրադարձած է իր ճշմարիտ էութեան, որ է Աստուածային զօրութիւն՝ Քրիստոսի մի մասնիկ եւ ոչ իր «ԵՍ»ը եւ պատկանի արեւելեան կրօնքներէն մէկուն ու ըսէ. «այս զօրութիւնը իմ մահէս յետոյ կը գոյատեւէ եւ նորէն մարմին կ'ըլլայ, անոր համար վերամարմնացում կայ» ինք ճիշդ կ'ըլլայ: Միջին արեւելքի մէջ ալ անձը երբ հասկցած է թէ ինք միայն այդ Աստուածային գիտակցութիւնն (consciousness) է եւ կազմուած է Ս. Հոգիի զօրութեամբ, որ բնագիտութիւնը կը կոչէ «մութ զօրութիւն» (dark energy) եւ դարձեալ կ'ըսէ վերամարմնացում չկայ, կը սխալի:

«Երբ Տէրը կը մարմնանայ եւ վերջն ալ կը ձգէ այդ մարմինը «անոնք» հետը կը տանի, ինչպէս Հովը հետը կը տանի բոյրը (ձաղիկներուն):
(Պակաւատ Աիթա 15:8)

Մառի հունտ մը կը թուի փոքր ոչնչութիւն մը ըլլալ, բայց իր մէջ կը պարունակէ լման ծառ մը: Ժամանակի ընթացքին ծնունդ կու տայ եւ կը վերածուի հսկայ ծառի մը: Լաւ եւ օգտակար հունտ մը տեղի կու տայ լաւ եւ օգտակար ծառի մը: Անօգուտ հունտ մըն ալ՝ անօգուտ ծառի մը: Ինչպէս հունտը կը հետեւի «պատճառ եւ արդիւնք»ի օրէնքին, նմանապէս

մեր խորհուրդներն ալ: Անոնք կը թուին ոչնչութիւն մը ըլլալ բայց ժամանակի ընթացքին տեղի կրնան տալ հակայական արարքներու: Մեզի, որոմի տեղ, հարկ է օգտակար հունտեր ցանել, այսինքն լաւ եւ բարի խորհուրդներ ունենալ: Նման խորհուրդներ կերտելու համար հարկ է որ մեր հաճոյքի իղձերը եւ կիրքերը փոխարինենք գութի իղձերու եւ դատողութեան խորհուրդները փոխարինենք զանազանելու եւ զատելու իմաստութեան հետ: Հաճոյք, կիրք եւ դատել կը պատկանին «ԵՍ»ին, իսկ գութ, իմաստութիւն եւ երանութիւն կը պատկանին Քրիստոսի:

«Այն ո՞ր ո՞վ 'ի մարդկանէ Գիտէ՛ ինչ պարտոյն է՞նէ ոչ Ըոգի՛ մարտոյն որ 'ի նմա. նոյնպէս է- ոչ պարտո-ածոյնն ո՞վ Գիտէ է՞նէ ոչ Ըոգին Աստուծոյ:» (Լ. Արնթացիս Ի:11)

«Ուստի էղբար՛ի սորբ՛ի ... նայեցարո՛ւի ընդ առա՛իւնն է- ընդ իսահայտեց խոստովանո- լեան մերոյ ընդ Յիսուս Բրիստոս:» (Եբրայեցիս Գ:1)

«Այսո՛ւնտեղէ՛ որ ինչ ճշմարտո- լեա՛մբ է, որ ինչ պարկեշտո-լեա՛մբ, որ ինչ արտարո-լեա՛մբ, որ ինչ արբո-լեա՛մբ, որ ինչ սիրով, որ ինչ Լամբա- Բարեաց, որ ինչ ինքն-լեա՛մբ, որ ինչ Գովո-լեա՛մբ, պա՛յն խորհիջի՛:» (Փիլիպեցիս Դ:8)





...Երդ զի Գեներդ զիս՝ Ե-
 Հաւարացիք,
 Երանի որոց ոչ իցէ Գեներալ՝ Ե-
 Հաւարացիքն :
 (Յովհաննոս Ի : 29)

...Որովհետեւ դուն զիս Գեսար՝
 Հաւարացիք . Երանի՛ անոնց որ Գեսար շէն
 ու կը Հաւարան :



-Ժ-

Ի՞նչ են
ՀԱԲԱՏԱԼ ԵՒ ՀԱԲԱՏ-ԻՐ



Ի՞ՆՉ ԵՆ ՀԱՒԱՏԱԼԸ ԵՒ ՀԱՒԱՏՔԸ

Անգլերէն լեզուի մէջ յատկանշական երկու բառեր կան. «belief» եւ «faith»: Երկուքն ալ իբր անուն կը գործածուին: «Belief»-ին բայ վիճակն ալ «to believe» է: Հայերէն լեզուի մէջ երկուքին ալ փոխարժէքը «հաւատք» բառն է, որմէ կը սերի «հաւատալ» բայը: Վստահ չեմ թէ ասիկա հայերէն լեզուի համար առաւելութիւն մըն է, թէ ոչ պակասութիւն: Կարծեմ մենք Հայերս զատողութիւն չենք դրած երկու բառերուն միջեւ, գիտնալով որ առաջինը մտային ճամբորդութեան մը սկիզբն է, իսկ երկրորդը՝ վերջաւորութիւնը:

Այս գրութեան մէջ պիտի ջանամ զանազանութիւն մը դնել երկուքին միջեւ: Առաջինին՝ այս մտային ճամբորդութեան սկզբնաւորութեան համար հաւատալ բայը եւ հաւատալիք անունը պիտի գործածեմ, իսկ երկրորդին՝ ճամբորդութեան վերջաւորութեան համար՝ չակերտեալ «հաւատք» բառը:

«Հաւատք»ը մարդու բնութեան մաս կը կազմէ, առաքինութիւն մըն է, ինչ որ ի ծնէ ամէն մարդ կ'ունենայ: Երախտն կը ծնի բացարձակ «հաւատք»ով: Ան անխախտելի «հաւատք» ունի իր ծնողքին, նամանաւանդ մօրը վրայ, թէ ան իր բոլոր հոգերուն եւ կարիքներուն պիտի հասնի եւ զինք պիտի խնամէ: Նորածինը իր ճիչերով մօրը կ'իմացնէ իր կարիքները՝ անկասկածելի «հաւատք»ով: Շատ անգամ երբ օտար մը մօտենայ եւ իրեն մատակարարէ, ինք այդ անձին հանդէպ «հաւատք» չունենալուն, անօթի ըլլալով հանդերձ, կը մերժէ անոր տուած ճաշը: Նոյն կերակուրը եթէ մայրը տայ զայն խնդումներես կը լափէ:

Կը թուի թէ մանկութեան ընթացքին մենք կը կորսնցնենք մեր անմեղութիւնը եւ «հաւատք»ն ալ՝

որոշ չափով:

«Եւ կոչեաց առ ինչն Յիսուս մանուկ մի,
կացոյց զնա ՚ի մէջ նոցա, եւ ասէ. ամէն
ամէն ասեմ յեւ, ելել ոչ դարձնել, եւ
լինիջի ի թրեւ զմանկորի, ոչ մտանիցէ
յարժայո-լինն երկնից:» (Մատթէոսի ԺԲ:2-3)

«Եւ Յիսուս սղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց
մէջտեղը կայնեցոց Ու ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Եթէ դարձի չգաք եւ սղոց պէս չըլլաք, երկնքի
Թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք:»»

«Եւ Յիսուս թոյլ տուաւ մանկացոյց՝ եւ
մի արգելուով զտոսա Գալ առ իս, զի
այդպիսեացոյց է արժայո-լինն երկնից:»
(Մատթէոսի ԺԹ:14)

«Յիսուս ըսաւ. «Թո՛ղ սուէք այդ մանր սղոցը եւ մի
արգիլեք անոնք ինծի դպլն, վասն զի երկնքի
Թագաւորութիւնը այդպիսիներունն է:»»

**Վերոյիշեալ համարներէն կը տեսնենք, որ
անհրաժեշտ է մեր կորսնցուցած մանկական հաւատքը
վերակերտել: Առանց նման «հաւատք»ի հոգեկան
զետնի վրայ յառաջդիմել անկարելի է:**

**«Հաւատք»ը որեւէ կրօնքի առանձնաշնորհումը
չէ: Յիսուսի օրով, Իսրայէլի մէջ ամենէն շատ
«հաւատք» ունեցող անձը ո՞վ էր:**

«... ամէն ասեմ յեւ եւ ոչ յԻսրայէլի այս-
պիսի Ըսաստա Գորի երթէի:» (Մատթէոս Ը:10)

«... Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես
այսչափ հաւատք չգտայ:»

**Ըստ Յիսուսի, չաստուածներու հաւատալուն համար
«հեթանոս» համարուող Հռովմայեցի հարիւրապետն
էր: (Տես Մատթէոս Ը:5-10)**

Մանկական «հաւատք»ին կորուստին պատճառը մեր իմացականութիւնն է: Նոյն իմացականութիւնը, իմաստութեամբ գործածելով, պարտ ենք վերակերտել նման «հաւատք»:

Յարմար է մէջբերել «հաւատք»ի նկատմամբ Կանտիի ըսած երկու խօսքերը :

«Հաւատքը հասկնալի բան մը չէ, այլ վիճակ մըն է, որու համնելու համար պէտք է հասուննալ:»

«Հաւատքը պէտք է գինուի իմաստութիւնով ... կոյր հաւատքը մահուան դատապարտուած է:»

«Հաւատք» կերտելու այս մտային ճամբորդութեան ընթացքին կ'անցնինք զանազան հանգրուաններէ: Առաջին աստիճանը՝ հանգրուանը ուրիշներէ մեզի տրուած հաւատալիքներուն հաւատալ է: Մարդկութեան մեծամասնութիւնը այս աստիճանին վրայ տեղաջլ կ'ընէ: Կը հետեւի բոլոր իրեն ըսուածներուն, ինչպէս ոչխարները կը հետեւին հովիւին:

Անոնք, որոնք հաւատալու երկրորդ աստիճանին կը հասնին, կը հաւատան Ս. Գրոց եւ իրենք կ'ըսուանասիրեն գրութիւնները, փոխանակ ընդունելու ուրիշներու մեկնաբանութիւնները: Օգտակար է կարող ուսուցիչ մը գտնել: Սակայն պէտք չէ մոռնալ Յիսուսի խօսքը:

«Բայց դու՛ն՝ մի պո՛ղ կոչե՛լ վարդապետ պի մի է յեր ուսուցիչ... Եւ մի կոչեցի՛լ ուսուցիչ, պի ուսուցիչ յեր Քրիստոսն է:» (Մաթթէոս ԻԳ: 8,10)

«Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս:»

Եթէ անձը լուրջ է եւ իր աղօթքները Աստուածային յայտնութիւն կը խնդրեն, անկարելի է որ պէտք եղած ուսուցիչը իրեն չյայտնուի: Այս նախաձեռնարկն ալ հաւատալէ «հաւատք»ի անցնելու սկիզբն է: Յիսուս «Երանի» կ'ըսէ անոնց, որոնք այս քայլը կ'առնեն:

«...Լըդդ պի տեսերդդ պի»՝ Եւ Հաւատապետ,
Երանի որոց ոչ իցէ տեսալ՝ Եւ
Հաւատապետն:» (Յովհաննոս Ի:29)

«...Որովհետեւ դուն զիս տեսար, ատոր համար հաւատացիր. երանի՛ անոնց, որ տեսած չեն ու կը հաւատան:»

Երանելի են անոնք, որովհետեւ հաւատքի ճամբուն վրայ են: Կաթողիկէ ճգնաւոր մը հետեւեալը ըսած է. «Եթէ բանի մը կը հաւատամ (believe), կ'ուզեմ գիտնալ եւ ճանչնալ զայն, որպէսզի հաւատք (faith) ընծայեմ անոր»:

Կը հաւատանք բանի մը, որ չենք տեսած եւ չենք գիտեր: «Հաւատք» ունենալ փորձառական գիտութեան կը կարօտի:

Հաւատալու երրորդ հանգրուանը տրամաբանութեամբ եւ իմաստութեամբ հասկնալն է: Որով իմացականութիւնը կրնայ որոշ չափով օգտակար ըլլալ: Անհրաժեշտ չէ անձի մը համար գիտուն, կամ նոյնիսկ խելացի ըլլալ, սակայն անհրաժեշտ է անկեղծ ըլլալ: Յարմար կը նկատեմ այս կապակցութեամբ պատմութիւն մը յիշել, որ մայրս ինծի պատմած էր, երբ տակաւին փոքր էի: Վստահ եմ իր նպատակը ճիշդ այս գաղափարը ինծի սորվեցնել էր:

Եկեղեցոյ քահանան, երբ օրուայ մէջ մասնակի փոքր խորանը կը զարդարէր, խորանին առջեւ ծունկի եկած հաւատացեալի մը աղօթքը կ'իմանայ. «Աստուած իմ, մեղքերդ քեզի կը ներեմ»: Քահանան

զարմացած ետին կը նայի եւ կը տեսնէ
 հաւատացեալը: Կամաց մը կը մօտենայ եւ
 աղօթքին ճշգրիտ ձեւը անոր կ'ըսէ:
 «Աստուած իմ, մեղքերս ինձի ներէ»: Մարդը
 ուրախ, ըսուածը չմոռնալու համար, ճամբան
 զայն կրկնելով-կրկնելով տուն կ'երթայ:
 Դժբախտաբար, սորվածը գրելու ժամանակ
 չունեցած, կը մոռնայ: Տունէն թուղթ եւ
 մատիտ կ'առնէ ու ետ եկեղեցի կը վազէ:
 Քահանան կը փնտռէ, բայց ափսոս, իրեն
 կ'ըսեն թէ քահանան, ձուկ բռնելու համար
 նաւակով ծով բացուած է: Ծովեզերք
 կ'երթայ, վազելով նաւակին կը հասնի եւ
 քահանային կը հարցնէ թէ ինչպէ՞ս պէտք է
 աղօթել: Երբ քահանան կը տեսնէ, որ մարդը
 ծովուն վրայէն վազելով կու գայ, կը
 հասկնայ անոր հաւատքին զօրութիւնը եւ
 կ'ըսէ. «դուն շարունակէ քու գիտցած ձեւովդ
 աղօթել»:

Կարեւորը բառերը չեն, այլ սրտին անկեղծութիւնն է:

Երբորդ հանգրուանը ճամբան կը բանայ չորրորդ
 եւ վերջին հանգրուանին, որ է փորձառական գիտութիւնը,
 ինչ որ ճշմարիտ եւ անխախտելի «հաւատք»ն է:
 Այս չորս հաւատքի աստիճանները ընդհանրապէս կը
 համապատասխանեն մարդկային չորս բնութիւններու:
 (Տես Գլուխ Գ: «Ի՞նչ են մարդկային բնութիւնները», էջ-59)

Հաւատալու այս չորս աստիճաններուն մակար-
 դակը հասկնալու համար հարցնենք հետեւեալ երեք
 հարցումները եւ հետեւինք տրուած պատասխան-
 ներուն: Աստուած կա՞յ թէ չկայ:

Հոգի ունի՞ս թէ ոչ եւ ի՞նչ պիտի ըլլայ հոգիիդ երբ
 մեռնիս:

Մահէ ետք կեանք կա՞յ թէ ոչ:

ա- Անոնք, որոնց միտքը կեդրոնացած է իրենց Փրկիչֆական մարմնի պէտքերուն վրայ եւ հաւատալու ճամբուն առաջին աստիճանին վրայ կը գտնուին, կը պատասխանեն հետեւեալ ձեւով. «Ծնողքս, ուսուցիչներս եւ քահանան բոլորն ալ կ'ըսեն թէ Աստուած կայ, ուրեմն կը հաւատամ որ կայ: Անոնք նաեւ կ'ըսեն թէ մարդիկ հոգի ունին, բայց կենդանիները՝ ոչ: Ուրեմն կը հաւատամ թէ հոգի մը ունիմ: Նաեւ ըստ ըսուածին, կը հաւատամ թէ երբ օր մը մեռնիմ եւ մինչ այդ բարի եղած ըլլամ, այսինքն մեղք գործած չըլլամ, «երկինք» պիտի երթամ եւ յաւիտեան պիտի ապրիմ Աստուծոյ ներկայութեան»:

բ- Զգացական մարդիկ, որոնք ընդհանուր առմամբ կը գտնուին հաւատալու երկրորդ աստիճանին, հետեւեալ ձեւով կը պատասխանեն. «Կը հաւատամ որ Աստուած կայ եւ ես ալ հոգի մը ունիմ, որովհետեւ Ս. Գիրքին մէջ կարդացած եմ: Աստուած իր միածին Որդին աշխարհ զրկեց: Ան մեր մեղքերուն համար մեռաւ, որպէսզի մենք փրկուինք: Պէտք է հաւատանք որ փրկուինք: Երբ մեռնիմ ես յոյսով եմ, որովհետեւ երբ Յիսուս իր երկրորդ գալուստին զօրքերով թագաւորելու գայ, բոլոր բարիները յարութիւն պիտի առնեն եւ պիտի ապրին իր թագաւորութեան մէջ»:

գ- Երրորդ հանգրոցանի հասնող իմացական մարդը, որուն միտքը կեդրոնացած է Աստուծոյ վրայ, կը պատասխանէ. «Ոչնչութենէ միայն ոչնչութիւն կու գայ: Ամէն արդիւնք պատճառ մը պէտք է ունենայ: Քանի որ աշխարհը կամ տիեզերքը գոյութիւն ունին, պատճառ մը պէտք է ունենան, ուրկէ գոյութիւն առած են: Այդ պատճառը կը կոչենք Աստուած: Եթէ ես հոս եմ, ուրեմն ես ալ ոչնչութենէ յառաջ չեկայ: Ինչ վիճակով, կամ ուր որ էի՝ զիս յառաջ բերող պատճառը եթէ հոգի կը կոչենք, ուրեմն հոգի ունիմ: Ծնունդէս առաջ ինչ եւ

ուր որ էի, մահէս յետոյ ալ նոյն տեղը եւ նոյնը պիտի ըլլամ, ուրեմն կրնամ ըսել թէ կերպով մը պիտի գոյատեւեմ:

դ- «Հաւատք»ի չորրորդ աստիճանին հասնող անձը, որ շատ հագուագիւտ կը գտնուի, ներգիտակցութիւն (intuition) ունեցող անձն է, որ մարդկային բարեչրջման յաջորդ հանգրուանն է: Երբ այս անձը պատասխանէ վերի հարցումներուն դժուար կ'ըլլայ ըմբռնել իր տուած պատասխանները: Ան կ'ըսէ.

«Ես եւ Հայր իմ մի եմք» (Յովհաննոս Ժ:30)

«Ես ու Հայրը մէկ ենք:»

«Հայր ... որպէս եւ մե՛կ մի եմք:»

(Յովհաննոս ԺԷ:11)

«Հայր ... ինչպէս մենք մէկ ենք»

«Ես եմ լոյս աշխարհի.» (Յովհաննոս Ը:12)

«Ես եմ աշխարհի լոյսը.»

«Ես եմ Լացն կենաց:» (Յովհաննոս 9:48)

«Ես եմ կենաց հացը:»

«Ես եմ յարութիւն եւ կենե՛կ.» (Յովհաննոս

ԺԸ:25)

«Ես եմ յարութիւնը եւ կենեքը»

«...Ես եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւն եւ կենե՛կ...» (Յովհաննոս ԺԴ:6)

«...Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կենեքը...»

«Լսէ ցնոսայ Յիսոսս. ամէն ամէն ասեմ չե՛ս. յառաջ ինչ ցլինելն Աբրահամոս եմ ես» (Յովհաննոս Ը:58)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես»:»

Եղէ ես ալիս եւ ո՛վ, սկիզբն եւ

Կարարաթ. » (Յայրնորիւն ԻԼ:6)

«Ես եմ Ալֆան եւ Օմէլան, Սկիզբն ու Վախճանը.»

Ներգիտակցութիւնը կերտելու համար անձը կը կարօտի իր երեք բնութիւններուն՝ մարմիններուն համերաշխութեան: Ուրեմն «հաւատք» ունենալ կը կարօտի փորձառական գիտութեան, գոնէ նուազագոյն Ս. Գրքի յենելով գիտնալ, թէ մենք ալ կարելիութիւնը ունինք, ժամանակի ընթացքին, ապրիլ նման Յիսուսի եւ փորձառութեամբ գիտնալ գրուածները:

Մարդկային միտքը իր հաւատացածները ստուգելու համար միշտ փաստ կը փնտռէ կամ կ'ուզէ: Առանց փաստի հաւատալը, Աստուծոյ ողորմութեամբ, կրնայ ապագային «հաւատք»ի վերածուիլ, ինչ որ հոգեկան գետնի վրայ անկեղծ յարատեւութեան կը կարօտի: Միեւնոյն ատեն, առանց փաստի հաւատալը, կրնայ նաեւ անձը մոլորեցնելու կամ յուսախաբ ընելու պատճառ ըլլալ:

Երբ մարդ արարած որեւէ բանի մը համար փաստ կը փնտռէ, այդ փաստը կրնայ գտնել հետեւեալ երեք միջոցներով:

ա- Փաստը մեզի կրնայ գալ մեր հինգ զգայարանքներու միջոցաւ: Այսինքն այն որ կը տեսնենք, կը լսենք, կը շօշափենք ... եւայլն: «Ի՞նչ է Ճշմարտութիւնը» (Գլուխ Ե) գրութեան մէջ, ամբողջական բնագիտութիւնը փաստած էր, թէ ինչ որ մենք ճշմարտութիւն ըլլալ կը կարծենք՝ մեր շօշափած եւ տեսած Ֆիզիքական մարմինները, 99% միջոցի պարապութիւն են: Զգոյշ պէտք է ըլլանք, քանի որ այն բոլորը որ մեր զգայարանքները կը թուին վաւերացնել, կրնան սխալ ըլլալ: Ուրեմն կը թուի թէ մեր զգայարանքները մեզ կը խաբեն:

«Այի Ըստատու Գնամի, Է ոչ Կարծեօվ:»

(Բ Արնիւսի Ե:7)

«Վասն զի հաւատքով կը քալենք: ու ո՛չ թէ երեւոյթով:»

բ- Փաստը մեզի կրնայ գալ նաեւ եզրակացու-
թեամբ: Երբ մուխ կը տեսնենք, կ'եզրակացնենք թէ
կրակ կայ: Երբ կը դիտենք բնութիւնը անոր գեղեցկու-
թիւնը, զօրութիւնը, կարողութիւնը, ներդաշնակու-
թիւնը, բարդութիւնը, բազմազանութիւնը եւ անոր
կարգ ու կանոնով յօրինուածքը անկարելի է
չհետեւեցնել, թէ այդ պատահական չէ, շատ աւելի մեծ
ծրագրի մը մաս եւ բաժին կը կազմէ եւ պէտք է
յօրինող մը ունենայ:

գ- Փաստը մեզի կրնայ գալ նաեւ յայտնու-
թեամբ: Մարդ արարած իր գիտակցութեան մակար-
դակի բարձրացմամբ կարող է նաեւ հասկնալ ան, որ կը
թուի անհասկնալի ըլլալ: Գիտուններ, որոնք նոր
գիւտեր կ'ընեն, մեծամասնութեամբ կ'ըսեն, թէ իրենց
ըրած գիւտերը իրենց յայտնուած են: Կ'ըսուի թէ
աշխարհահռչակ գիտուն Թէսլա, իր ըրած գիւտերը
նախ երազի կամ տեսիլքի մէջ կը տեսնէր եւ յետոյ
զանոնք կը գործադրէր: Ճիշդ է թէ այս յայտնութիւն-
ները ինքնին չեն ըլլար: Անձը, իր միտքը նոյնիսկ
տարիներով կեդրոնացուցած է այդ հարցին վրայ:
Կրնանք ըսել թէ խոկումի երկար ժամեր յատկացու-
ցած է այդ նպատակին համար: Իր անկեղծութեան եւ
յարատելութեան շնորհիւ, կամ իբր պարգեւ, ստացած
է այդ յայտնութիւնը: Երեւակայեցէք, Թէսլաի միտքը
ինչ աստիճան կեդրոնացած էր իր կատարելիք
գիւտերուն վրայ, որ նոյնիսկ, երբ իր գիտակցութիւնը
կը գտնուէր երազի մակարդակի վրայ, չէր շեղած
նպատակէն: Երբ տեսիլք կը տեսնէր, թերեւս գիտակ-
ցութեան մակարդակի որոշ չափով բարձրացում
կ'ունենար: Նմանապէս, եթէ մենք ալ անկեղծօրէն եւ
յարատելութեամբ խոկումի երկար պահեր յատկա-
ցընենք մեր հոգեւոր առաքելութեան, արդեօք ողոր-

մած Աստուած մեզի ալ չի^օ շնորհեր մեր փնտռած յայտնութիւնը եւ գիտակցութիւնը:

Երբ բժշկական համալսարան կը յաճախէի, տեղեկութիւն տրուեցաւ զանազան հիւանդութիւններու եւ անոնց դարմանումին մասին: Կը հաւատայի, թէ պիտի կարենայի հիւանդ դարմանել: Երբ սկսայ հիւանդանոցը աշխատիլ ու հիւանդներու հետ դէմ յանդիման գալ, բոլոր այն կարողութիւնները որ կը հաւատայի ունենալ, անհետացան: Հիւանդ բուժելու մէջ անկարող էի: Փորձառու բժիշկներու հսկողութեան տակ կերտեցի ճշմարիտ ինքնավստահութիւն եւ հիւանդները պատշաճ կերպով խնամելու պատրաստ ըլլալու «հաւատք»: Հասկցայ թէ ինչ որ համալսարանը սորված էի բժշկութիւն չէր, այլ բժշկութեան լեզուն էր, իսկ բժշկութիւնը կը սորվէի հիւանդանոցը աշխատելով:

Նմանապէս «հաւատք» կերտելու համար, նման համալսարանական դասաւանդութիւններու հետեւելու, պէտք ունինք մեր իմացականութեան եւ անոր մեզի ցոյց տուած ուղղութեանը: Բայց իմացականութիւնը, ճշմարտութիւնը մեզի ըմբռնել տալու եւ «հաւատք»ի հասցնելու համար առանձինն բաւարար չէ: Կարելոր է եւ անհրաժեշտ սորվիլ ու գիտնալ Ս. Գրոց պարունակութիւնները, բայց նման վերոյիշեալ իմ բժշկական փորձառութեան, եթէ գործնականը անոր չհետեւի, այդ գիտութիւնը ոչ մէկ բանի օգտակար կրնայ ըլլալ: Մուհամմէտ հետեւեալը ըսած է.

«Բոլոր մեր իմացական գիտելիքները կը նմանին իշու մը, որ բեռնաւորուած է ծանր գիրքերով:»

Միթէ Ս. Գիրքն ալ նոյնը չ'ըսե՞ր:

«Զի է մարդ՝ գի վաստակ նորայ

Իմաստոտութեամբ է- Գրեցոտութեամբ է-
 արոտութեամբ. ... սակայն է- այս ընդ-
 ունայնոտութիւն է՝ է- շարոտութիւն մեծ:»
 (Ժողովոյ Բ:21)

«Վասն զի մարդ կայ որուն աշխատութիւնը
 Իմաստութեամբ, գիտութեամբ եւ յաջողութեամբ
 կ'ըլլայ, ... Ասիկայ ալ ունայնութիւն ու մեծ չարիք է:»

«Գրեցոտութեան է Իմաստոտոյն խան
 զանգրիտն, ... սակայն է- այն ունայնոտութիւն
 է՝ է- յօշարոտութիւն ոգոտ:» (Ժողովոյ Գ:8-9)

«Քանզի Իմաստունը անմիտէն աւելի Ի՞նչ բան ունի. ...
 Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է:»

**Անձնական փորձառութեամբ եղած գիտութիւնը կը
 վտարէ ամէն տեսակի կասկած:**

Ի՞նչ բանի ուէք է «ՀԱՄՏ» ԸՆԾԱԿԵՆՔ:

Վերոյիշեալ տուեալներու համաձայն «Հաւատք»
 պէտք է ունենանք.

ա- Թէ մեր ներկայ Ֆիզիքական աշխարհիկ
 կեանքը պատրանքային է, երազի մը նման:

բ- Թէ Աստուած գոյութիւն ունի:

գ- Թէ կարելի է գիտակցութեան մակարդակի
 բարձրացումով ճշմարտութեան յայտնութեան փոր-
 ձառութիւնը ունենալ: Կան անձեր, որոնք յաջողած են,
 ինչպէս՝ Յիսուս: Այդ, մեզի համար ալ պէտք է կարելի
 ըլլայ: Յիսուս ըսաւ, թէ անոնք, որոնք Իր խօսքերուն
 «Հաւատք» կ'ընծայեն, կրնան իր ըրածներէն աւելի
 մեծ գործեր ընել:

«Լճէն ամէն ասեմ չեզ, Եւ որ Հաւատոյն
 յիս, զգործս զոր էս գործեմ, է- նա
 գործեացել, է- մեծամեծս է-ս խան զնոյնս»

Գործեացե՛. զի ես առ Հայր երթամ:»
(ՅովՀաննոս ԺԴ:12)

«Ան որ ինձի կը հաւատայ, այն գործերը որոնք ես կը գործեմ, ինք ալ պիտի գործէ եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ: Վասն զի ես Հօրս քով կ'երթամ:»

Ի՞նչօրէս ԿԵՐՏԵԼ ԵՄԱՆ «ՀԱԽՏՔ» ԱՐ:

ա- Առաջին քայլը գիտակցութեան մակարդակի բարձրացումով ճշմարտութեան յայտնութեան փորձառութիւնը ունենալու կարելիութիւնը իմանալու գիտնալ է: Վստահ եմ, այսօր բոլոր աշխարհ այս կարելիութիւնը արդէն իսկ իմացած է, քանի որ բոլոր կրօնքներն ալ նոյնը կը քարոզեն՝ հոգ չէ թէ տարբեր անուններ տան. «փրկութիւն», «չարչարանքէ ազատում», «երկիրք երթալ» ... եւայլն: Այս քայլը պէտք է հաւատալու սկիզբը ըլլայ:

բ- Երկրորդ քայլը կը պատկանի իմացականութեան: Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր կեանքը կ'ապրի համաձայն իր բնութեան, որ հետեւանքն է ծնողքէն ստացուած ֆիզիքական եւ մտային ժառանգութեանց: Ամէն անձի բնութիւնը ուրեմն ի ծնէ որոշուած է: Ճիշդ է թէ անձի մը բնութիւնը կախեալ է իր ժառանգութենէն: Պէտք չէ մոռնանք նաեւ իր կեանքի պարագաները եւ փորձառութիւնները, որոնք նաեւ դեր կը խաղան անհատին բնութեանը ձեւաւորման: Կը թուի թէ մեր արարքները կ'որոշենք մեր ազատ կամքով: Ընդհակառակը, ընդհանրապէս մեր որոշումները միշտ կը համապատասխանեն մեր բնութիւններուն: Անհրաժեշտ է որ մեր իմացականութիւնը գործածելով վերաքննենք մեր արարքները եւ իմաստութեամբ որոշենք անոնց վնասակար թէ օգտակար եւ բարի ըլլալը մեզի եւ համայն մարդկութեան: Օգտագործելով մեր ազատ կամքը, պէտք է իմաստութեամբ խորհինք, խօսինք եւ

գործենք միայն լաւագոյնը, օգտակարը եւ բարին, նոյնիսկ եթէ հակառակ ըլլայ այդ արարքը մեր բնութեան: Այս առաջին քայլն է ինքնափոփոխութեան, նաեւ ճամբան կը բանայ վստահութեան եւ անձնատուութեան: Անձի մը համար, յարատեւ ջանքով, կարելի է փոխել իր բնութիւնը՝ աւելի փափաքելի մակարդակի մը հասցնելու համար:

Գ- Երրորդ քայլն ալ աղօթքով եւ խոկումով գործնականօրէն ցոյց տալ է յարատեւութիւն, անկեղծութիւն եւ վճռականութիւն: Ասոնց նպատակն ալ հաւատալը փոխել է անխախտելի «հաւատք»ի: Աղօթքով ինդրուածը պէտք է ըլլայ Աստուածային ողորմութիւն ստանալու համար, որպէսզի անձին կամքը զօրացնէ: Զօրաւոր կամքը կը դիւրացնէ անձին ինքնափոփոխութիւնը եւ անձնատուութիւնը: Իսկ խոկումը անձին մտքին ուղղութիւնը կը կեդրոնացնէ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի վրայ: Ան, նաեւ կը լուսաւորէ հոգեկան յառաջացման ճամբան:

«Հաւատք»ը ինքնին որեւէ կերպով կեանքը չի փոխեր, բայց կը փոխէ անձը: Նման «հաւատք»ով անձը իր միտքը կը կեդրոնացնէ Աստուծոյ վրայ: Անկեղծութիւնը եւ յարատեւութիւնը անհրաժեշտ են: Հարցումներ եւ կասկածներ պիտի ծագին, փորձելու համար անձին «հաւատք»ի զօրութիւնը եւ իր անկեղծութիւնը:

Երբ բժշկական համալսարան դասաւանդել սկսայ, զարմանալիօրէն տեսայ, թէ աշակերտի մը գիտելիքներուն մակարդակին նկատմամբ կազմած կարծիքս եւ քննութեան արդիւնք իր ստացած նիշը ընդհանրապէս իրարու կը համապատասխանէին:

Դպրոցական տարիներուն աշակերտը յաճախ քննութիւններու կ'ենթարկուի: Աշակերտին ուսման մակարդակը յայտնաբերող այդ քննութիւններուն արդիւնքները, ուսուցիչներէն աւելի աշակերտներու

համար է: Աշակերտը այդպէսով կը գիտնայ ու կը հասկնայ իր գիտութեան մակարդակը: Նմանապէս, հաւատալու եւ «հաւատք»ի ճամբորդութեան ընթացքին փորձառութիւնները՝ տարակոյսները, հարցերը եւ յուսահատութիւնները, անձին համար անհրաժեշտ են՝ նման դպրոցական քննութիւններուն: Ուրեմն այդ բոլորը Աստուծոյ համար չեն, որպէսզի Ան գիտնայ անձին կամքի զօրութիւնը, այլ անձին համար են, որպէսզի անձը գիտնայ իր ուղղամտութեան մակարդակը եւ աստիճանը: Աստուած արդէն գիտէ մեր թէ՛ Ալֆան եւ թէ՛ Օմէղան: Անձը, ժամանակի ընթացքին, ուղղամտութեան եւ յարատեւութեան հետեւանք, իր անխախտելի «հաւատք»ին պտուղը կը քաղէ: Ինք դադրեցուցած իր խորհուրդներու ողողումը եւ միտքը կեդրոնացուցած Աստուծոյ վրայ, նման հինգ իմաստուն կոյսերուն, յոյսով կը սպասէ «փեսային»: Մենք ալ, երբ գիշերը անկողին մտնենք, նոյն յոյսով չե՞նք սպասեր որ քունը գայ: Ինչպէս քունը կուգայ ակնդարթի մը մէջ, առանց մեր ջանքին, նմանապէս Աստուածայայտնութիւնը կ'ըլլայ ակնդարթի մը մէջ՝ իր պատշաճ ժամանակին: Քրիստոսի Լոյսը կը փայլի անձին միջոցաւ: Վերոյիշեալ «հաւատք»ը, որ անձին գործնական «հաւատք»ն էր, անխախտելի ըլլալով հանդերձ, ենթակայ էր «քննութիւններու»: Սակայն, Աստուածայայտնութենէ յետոյ «քննութիւններն» ալ կը դադրին, նման դպրոցական աշակերտին, որուն քննութիւններն ալ կը դադրին, երբ ան շրջանաւարտ կ'ըլլայ:

Ո՞րքան կը փափաքինք կերտել նման «հաւատք» մը: Ո՞րքան կը խռովինք կամ անհանգիստ կ'ըլլանք եթէ չունինք նման «հաւատք»: Ո՞րքան գոհ ենք մեր ներկայ հաւատալու մակարդակէն:

Եթէ գող մը գիտնայ, թէ տան մը մէջ մեծ

հարստութիւն կայ, մինչեւ որ այդ գանձին տիրանայ, իր հանգիստը եւ քունը կը փախցնէ: Արդեօք մենք ալ, նման այդ գողին, նոյնքան անհանգիստ կ'ըլլա՞նք կամ մեր քունը կը փախցնե՞նք մեր ներքին գանձին՝ Քրիստոսի յայտնութեան արժանանալու համար:

Նման «հաւատք»ի մը կերտման յաջողութեան համար անձը պարտ է ինքզինք պատրաստէ: Բարկութիւն, ագահութիւն, եսասիրութիւն եւ հպարտութիւն ամենավնասակար մարդկային բնութիւններն են, որ անձը պէտք է գիտնայ զսպել եւ կառավարել: Անձը նաեւ պէտք է կերտէ ինքնաճանաչում, գիտնալու համար, թէ ուր է եւ ուր կ'ուզէ երթալ: «Հաւատք»ը անոր կու տայ ինքզինք դաստիարակելու զօրութիւնը:

Այն բաները, որ մարդու իմացականութիւնը չ'ըմբռներ, «հաւատք»ը զայն հասկնալի կ'ընէ: Հաւատքը իմաստութեան աչքերուն լոյսն է:

Հոգեւոր ուղեւորութեան ճամբան խորտուբորտ է եւ խոչնդոտներով լի: Յուսահատութիւն, կիրքեր, վհատութիւն, վախկոտութիւն եւ անտարբերութիւն միայն «հաւատք»ի զօրութեամբ կարելի է յաղթել: Այս խոչնդոտներուն պատճառը մարդկային թերութիւններն են՝ ինքնազսպումի պակաս, ցանկութիւններ, իմացական կամ այլ հպարտութիւն, անբարտաւանութիւն, անհաւատութիւն, սիրոյ պակաս, ծուլութիւն եւ խորհուրդներու հարստութիւն՝ ողողում:

Հաւատալը պէտք է յարմարի անձին կանխայղացեալ կարծիքներուն եւ փափաքներուն, ապա թէ ոչ անձը չի կրնար ընդունիլ ու հաւատալ իրեն օտար եկած գաղափար մը: Բայց «հաւատք»ը չի յենիր կանխայղացուած գաղափարի մը: Հաւատալը կը կառչի անձին գաղափարներուն, իսկ «հաւատք»ը՝ կ'արձակէ գանոնք: Մարդ արարած միշտ կը կառչի իրեն ծանօթ

ամէն ինչի, որովհետեւ ինքզինք ապահով կը զգայ: Հետեւաբար կը կառչինք նաեւ մեզի ներկայացուած հաւատալիքներուն: Դժբախտաբար աս պատ մը կը քաշէ մեր յառաջդիմութեան առջեւ: Ամբոխներ ուխտագնացութեան կ'երթան յաւելեալ հաւատք կերտելու նպատակով, կարծելով թէ որոշ վայրեր մասնաւոր զօրութիւն ունին: Ասոնք բոլորն ալ հաւատալիքներ են, որ «հաւատք»ի հետ բնաւ կապակցութիւն չունին: Անձ մը պէտք չունի Երուսաղէմ, Մէքքա կամ Հիմալայաներ երթալու: «Հաւատք»ի ճամբան սանդուխի մը կը նմանի: Մեզի պարտ է աստիճան առ աստիճան բարձրանալ, մինչեւ որ հաւատալը դառնայ «հաւատք»ի: Մեր հաւատացածները, իւրաքանչիւր յառաջդիմութեան հետ, պէտք է փոխուին: Անձը, իւրաքանչիւր աստիճանի բարձրացման, կ'ըլլայ աւելի հանդուրժող եւ խղճամիտ: Հաւատացեալը պէտք չէ ըսէ թէ. «Իմ հաւատացածս աւելի ճիշդ է», այլ իր ապրելակերպով եւ գործքով այդ պէտք է ցոյց տայ: «Հաւատք»ը վիճելի չէ: Երբ անձ մը կը վիճաբանի իր հաւատացածներուն համար, ան ի յայտ կը բերէ այն իրողութիւնը, թէ ինք տակաւին չի գիտեր «հաւատք»ին ինչ ըլլալը:

«Հաւատք»ը ակն է դրական զգացումներու՝ ինքնավստահութեան եւ ապաւինութեան: «Հաւատք»ը բացարձակ անձնատուութիւն է, յանձնուիլ է: «Հաւատք»ը ան գիտակցութիւնն է, թէ մեր Ֆիզիքական, զգացական եւ իմացական մարմինները Աստուծոյ կը պատկանին ու մեր ձիրքերը, կարողութիւնները եւ կեանքը Իր շնորհքներն են: «Հաւատք»ը ակն է հեզութեան: «Հաւատք»ը, որ չէ փորձուած «հաւատք» չէ, ինչպէս անձնատուութիւնը, որ չէ փորձուած անձնատուութիւն չէ: «Հաւատք»ը կ'ըլլայ առանց նենգութեան եւ կը պահանջէ պարզութիւն եւ

ազատամտութիւն: Երբ մեր ազօթքներուն նիւթը մեր Փրփրփական կարիքներն են, կը հակասեն «հաւատք»ին: Աստուծոյ բարիքները եւ շնորհքները կը տեղան անընդհատ եւ ամենուրեք: Մեր ընդունակութիւնն է որ կը պակսի:

Հոգեւոր ճամբորդութեան համար «հաւատք»ը եւ վճռականութիւնը անհրաժեշտ են: Յայտնութիւնը հոգեկան փորձառութիւն մըն է, որը անաստուածներու համար կարելի չէ՝ իրենց «հաւատք»ի պակասի պատճառով: Այդ փորձառութիւնը նաեւ կարելի չէ բոլոր անոնց, որոնք երեւակայական աստուածապաշտներ են, քանի որ «հաւատք» չունին, բայց կը հաւատան խեղաթիւրուած Աստուծոյ գաղափարի մը: Այն անձը որ կը պնդէ իր հաւատացածին եւ զայն կը պաշտպանէ ի գին ամէն բանի, գաղտնի հպարտութիւն ունի, ինչ որ կը խափանէ «հաւատք»ի ճամբան: Մոլեռանդութիւնը գաղտնի եւ չափազանց հպարտութեան նշանն է:

Մարդ պէտք է միշտ ազատամիտ ըլլայ եւ փոփոխութեան ձգտի: Այն ըոպէին որ կ'ըսէ. «Ես ճշմարտութիւնը գտայ» իր յառաջացումը կը դադրի, տեղքայլ կ'ընէ եւ Աստուածայայտնութեան յոյսն ալ կը մեռնի: Աստուածայայտնութիւն ունեցող մը ոչ թէ «Ես ճշմարտութիւնը գտայ» կ'ըսէ այլ կ'ըսէ. «Ես եմ ճշմարտութիւնը», որովհետեւ ան նոյնացած է Քրիստոսի հետ:

Լաւ է որ անձ մը ծնի «Եկեղեցիին մէջ», բայց եթէ այդ Եկեղեցին իր պարտականութիւնը լաւ կատարած է, անձը պէտք չէ «մեռնի Եկեղեցիին մէջ»: Միթէ Յիսուս ալ չծնա՞ւ «Տաճարին մէջ», բայց հոգին աւանդեց «բարձրացած» խաչին վրայ: Տաճարը հալածեց զինք եւ իր աշակերտները: Այս վերջինները լքեցին Տաճարը եւ կազմեցին Քրիստոնէութիւնը եւ

Եկեղեցին:

«Հաւատք»ը «Յոյս»ին ճամբան կը բանայ :



ԱՂՕԹՔ

*Տէր, ըրէ՛ զիս գործիք մը Քու
խաղաղութեանդ համար: Ուր
ատելութիւն կայ, հոն սէր ցանեմ,
ուր վիրավորանք կայ, հոն
ներում, ուր կասկած կայ՝ հաւատք,
հոն ուր յուսախարութիւն կայ՝ յոյս,
հոն ուր մթութիւն կայ՝ լոյս,
և հոն ուր տխրութիւն կայ՝
ուրախութիւն:*

Սուրբ Ֆրանսիս Ասսիս

© SylmarjanHanelugnerHekyatner




Ան որ Հաւապով ունի,
Քացապրոտ-Թեան կարծի չկայ:

Ան որ Հաւապով չունի,

Քացապրել կարելի չէ:

(Թովմաս Ագիանս)



Ջարմանալիօրէն է- ցարօրինակ
 Հազար թրիշէ անցան իբր ձէկ
 Երբ յոսացի երկինէ Հասնիչ,
 Աարժէս յոյսս պարապի էր:
 Անորհի- յարապէ- յոյսիս
 Համբերաբար

Հոգիս Բարձրացաւ- ու Բարձրացաւ-
 Մինչէ- որ նպաստակին Հասաւ- :
 (St. John of the Cross)



-ԺԱ-

ԻՆՉ Է ՅՈՅՍԸ



Ի՞ՆՉ Է ՅՈՅՍԸ

Յոյսը առաքինութիւն մըն է, որ ամէն մարդ ի ծնէ ունի: Ֆրանսացի նշանաւոր գրագէտ Վիքթօր Հիւկօ ըսած է.

«Աստուած ամէն մարդու ճակատին վրայ յոյս բառը գրած է»:

Յոյսը զգացական եւ հոգեկան վիճակ մըն է: Ենթական, այս վիճակին մէջ, ինքզինք կը համոզէ, թէ որեւէ մէկ կացութիւն, ինչպէսին են արարքներ, ձեռնարկներ, հաւատալիքներ կամ փափաքներու իրականացում, դրական արդիւնք պիտի ունենան:

Պօղոս առաքեալ ալ կը մատնանշէ մարդկային երեք կարեւոր յատկութիւններ. հաւատք յոյս եւ սէր:

«Բայց արդ՝ մեան հաւատքի, յոյս, սէր . սոխա երեւեան. եւ մեծ խան ցասաս՝ սէր

է: (Ը Կորնթացիս ԺԳ:13)

«Ուստի հիմա կը մնայ՝ հաւատք, յոյս, սէր: Այս երեքը ու ասոնց մեծագոյնը սէրն է»:

Ըստ Պօղոս առաքեալի ասոնց մեծագոյնը սէրն է:

Երբ աստուածաբան բարեկամի մը հետ այս նիւթին մասին կը զրուցէի, հասկցայ, թէ ինք Պօղոսի հետ համակարծիք չէր: Յոյսը կը համարէր ամենակարեւորը: Ըստ իր տեսակէտին մարդ առանց յոյսի չէր կրնար ապրիլ: Այս տեսակէտը ինծի խորհիլ տուաւ: Իրեն հետ համաձայն եմ թէ առանց յոյսի կեանքը դժուար է եւ տաժանելի: Մարդ արարած միշտ ապագայի երջանկութեան յոյսով է որ կ'ապրի եւ կը տոկայ նաեւ դժուարութիւններու: Անոնք, որոնք յուսահատութեան կը մատնուին, ապրելու եռանդը կը կորսնցնեն եւ նոյնիսկ կը խորհին անձնասպան ըլլալ: Մարդկութեան որոշ մէկ համեմատութիւնը կ'ապրի

այն յոյսով որ մահէն յետոյ իր Ֆիզիքական եւ հոգեւոր կեանքով երկինք պիտի երթայ: Իսկ, ըստ արեւելեան կրօնքներու հաւատացողներուն, անոնք պիտի վերամարմնանան եւ յաջորդ կեանքի ընթացքին պիտի բարելաւեն իրենց անձերը: Հարկաւ երկինքի գաղափարին հետ կայ նաեւ դժոխք երթալու վախը: Երկինք՝ դրախտ եւ դժոխք մասնաւոր վայրեր չեն, այլ վիճակներ են՝ հոս աշխարհի վրայ: Մեր կեանքը կրնանք ապրիլ դրախտի, կամ դժոխքի մէջ: Աս մեզմէ կախեալ է: Յոյս չունեցողներ դժոխքի մէջ կ'ապրին: Իտալացի գրագէտ Տանթէ (Dante Alighieri) միջնադարեան իտալացի բանաստեղծ իր «Աստուծային կատակերգութիւն» երկին մէջ դժոխքի առնչութեամբ գրած է.

«Ա՛ն, որ հոս (դժոխք) կուգայ, թող քէ ամէն տեսակի յոյս»:

Արդեօ՞ք ինք ըսել կ'ուզէր. «ան որ իր յոյսը կը կորսնցնէ, հոս (դժոխք) կուգայ»:

Երբ անձը վախճանը անորոշ դժուարութեան մը հետ դէմ յանդիման կու գայ, յոյսը իրեն նոր զօրութիւն կու տայ: Միտքը կը լուսաւորէ, վախը եւ անորոշութիւնը կը վանէ, կ'ընդարձակէ հայեացքը՝ դիւրացնելով յաղթանակը: Յոյսը անհատին կորովը եւ վճռականութիւնը կ'աւելցնէ: Հոգեբանները կ'ըսեն, թէ կարելի է նաեւ կերտել յոյսը: Ըստ իրենց յոյսը կախեալ է երեք տուեալներէ. Նպատակէ, Կամքի զօրութենէ եւ Կարողութենէ: Ըստ հոգեբաններու կարելի է չափել անհատի մը ունեցած յոյսին որակը: Այս կարելի է, եթէ նկատի առնուի վերոյիշեալ երեք տուեալները, ինչպէս նաեւ անհատին վճռականութիւնը, թէ ինչքան լուրջ է եւ թէ որքան կը փափաքի իրականացնել իր յոյսերը: Իր փափաքը իրականացնե-

լու համար հարկաւոր կամ քի զօրուլթեան եւ կարողութեան չափը այս վերջինէն կախեալ է:

Յոյսին որակը նաեւ կախեալ է անհատին հաւատքէն, թէ որ աստիճան կը հաւատայ իր փափաքին իրականացման կարելիութեան:

Մարդկութեան որոշ մէկ համեմատութիւնը կը հաւատայ թէ մահէ ետք «երկինք» պիտի երթայ: Հաւատալը բաւարար չէ, այլ պէտք է «հաւատք» կերտել: (Տես «Ի՞նչ են հաւատալը եւ հաւատքը» գլուխ Ժ, Էջ-301) Ճշմարիտ յոյսը՝ բարձր որակով յոյսը, կը բխի «հաւատք»էն եւ առանց «հաւատք»ի կարելի չէ նաեւ յոյս ունենալ: Միջնադարեան կաթողիկէ աստուածաբան Թոմաս Ագւինաս (Thomas Aquinas) գրած է.

«Հաւատքը կ'ակնկալէ անտեսանելին, յոյսը՝ անհասանելին:»

Այս կապակցութեամբ Աւետարանը կը գրէ.

«Զի՞նչ էն Հաւատք, եթէ ոչ՝ յոսացելոց իրաց Հաստատութիւնն. եւ յանդիմանութիւնն որոց ոչն էրէ-ին:» (Եբրայեցիս ԺԷ:1)

«Արդ՝ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերեւցած բաներուն ավացոյցն է.»

«Եյլ Աստուած յոսոյ՝ լի արացել պէտք ամենայն խնդրութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելու չեպ յոսով՝ պօրութեամբ Հոգւոյն Սրբոյ:» (Հովնայեցիս ԺԷ:13)

«Արդ՝ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ կատարեալ ուրախութիւնով ու խաղաղութիւնով՝ ձեր հաւատքին համաձայն, որպէս զի ձեր յոյսը աւատանայ Սուրբ Հոգիին զօրութիւնով:»

Ինչպէս մարդիկ ընդհանուր առմամբ կը գոհանան պարզ հաւատալով եւ «հաւատք» չեն կերտեր, նոյնպէս ալ կը գոհանան փոքր յոյսով, որ է լաւատեսութիւն,

որով բարձր որակով ճշմարիտ յոյս չեն կերտեր: Փոքր յոյսը՝ լաւատեսութիւնը, այս պատրանքային կեանքը առանց ընկճուելու ապրելու համար բաւարար կը նկատուի: Առանց կատարեալ յոյսով կեանքի համար Ս. Գիրքին մէջ հետեւեալը գրուած է.

«Բանպի պանդոկոսոս եմէ մէկ առաջի ինչ
եւ նշոյեալ՝ որպէս ամենայն Ըարդ մեր.
Երբեւ պարոտեր եւն առորդ մեր ՚ի վերայ
երկրի. եւ ոչ զոն մեր մնացոտաթի ինչ:»
(Լ Մնացորդ ԻԹ:15)

«Վասն զի մենք քու առջեւ մեր բոլոր հայրերուն պէս օտարականներ ու պանդոկոսներ ենք. երկրի վրայ մեր օրերը շուքի պէս են. ու մնացուն բան՝ մը չկայ:»

Փոքր յոյսը՝ լաւատեսութիւնը, անհատին ուսերուն վրայ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր: Իսկական յոյս կերտող անձը իր փափաքին իրականացման բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ առած է եւ շատ լաւ գիտէ թէ յաջողութիւնը իրմէ կախեալ է: Ծշմարիտ յոյսը պատասխանատուութեան հետ միասին անձին կու տայ ուժ եւ կարողութիւն, իմաստութիւն եւ ճիշդ դատողութիւն, նաեւ քաջութիւն եւ վճռականութիւն: Ալէքսանտր Փօփ (Alexander Pope) 18երորդ դարույ Անգլիացի բանաստեղծ երբ հետեւեալը գրած է, վստահ եմ ի մտի ունէր փոքր յոյսը կամ լաւատեսութիւնը.

«Մարդիկ յաւատեան (օրհնուելու) յոյսով
կապրին. Երբեք չեն (օրհնուիր), բայց միշտ
(յոյսը ունին որ) պիտի օրհնուին:»

Ծշմարիտ յոյսը հիմնուած է այդ օրհնութեան իրականացման վրայ: Յոյսը հոգեպէս արթնցած անձի մը երազն է: Աւետարանին մէջ գրուած է.

«Որոյ կամեցաւ Լսորոտաթ ցոցանել, ինչ

պի՞նչ է մեծութիւնն փառաց խորհուրդոյն
նորա՝ ի Հէթանոսս . որ է Բրիսպոս ՚ի Յէւ,

յոյսն փառաց .» (Առդոսացիս Ա : 27)

«Որոնց Աստուած ուղեց գիտցնել իր խորհուրդին
փառաւոր ճոխութիւնը Հեթանոսներուն մէջ, որ է
Քրիստոս ձեր մէջ՝ փառաց յոյսը .»

Յուսահատութիւնը կ'ազդէ անձին խորհուրդ-
ներուն, զգացումներուն, վարքին ինչպէս նաեւ
Ֆիզիքական առողջութեան վրայ: Ան իր հետ կը բերէ
տիրութիւն, պարապութեան զգացում, մտահոգու-
թիւն, անձկութիւն, հոգ, անկարողութիւն, յանցաւորի
զգացում, անհանգստութիւն, ջղայնութիւն, ինքզինք
անարժան զգալ եւ այլն: Ֆիզիքապէս ալ պատճառ
կրնայ ըլլալ անձին ախորժակէ դադրելուն, կամ
որկրամոլութեան, արգելք ըլլալ քնանալուն, կամ
պատճառ դառնալ երկար ժամեր քնանալուն, յոգնու-
թեան, դժուարամարսութեան, մկանային ցաւերու:
Ինչպէս նաեւ անկարող ըլլայ միտքը կեդրոնացնելու,
նաեւ կրնայ պատճառ ըլլալ մոռացութեան, անորոշու-
թեան, անտարբերութեան: Ընդհանուր առմամբ ասոնց
բոլորն ալ անդարմանելի են: Եթէ անձը քիչ մը իր
կարողութիւնը վերագտնէ յուսահատութեան հետե-
ւանք, նոյնիսկ կրնայ անձնասպանութիւն փորձել:
Երգիծաբան, գրագէտ եւ դերասան Վ. Գ. Ֆիլդս (W. C.
Fields) ըսած է.

«Երբ ամէն բան կը կորսնցնենք ներառեալ
յոյսը, կեանքը կ'ըլլայ շնորհազրկութիւն եւ
մահը՝ պարտաւորութիւն:»

Ուրեմն, յոյսը կամ անոր բացակայութիւնը՝ յուսա-
հատութիւնը կ'որոշեն անձի մը տրամադրութիւնը:

Ըստ հոգեբոյժերու մեր տրամադրութիւնը
կախեալ է մեր ուղեղներուն մէջ գտնուող որոշ
բաղադրութիւններէ, ինչպիսին են «Տոփամին»ը

(Dopamin) եւ «Սէրոթօնին»ը (Serotonin): Երբ ասոնց հաւասարակշռութիւնը կը խախտի, կամ իրենց քանակութիւնները կը պակսին, անհատը կ'ենթարկուի յուսահատութեան: Բայց մարդ չի գիտեր թէ ինչո՞ւ անոնց քանակը կը փոխուի: Վստահ եմ կարելի է կերտել հոգեկան եւ մտային վիճակ մը, որ աւելցնէ անոնց քանակը եւ փոխէ անհատին տրամադրութիւնը: Ընկճումի կամ յուսահատիչ տրամադրութեան պատճառ կրնան ըլլալ կեանքի որոշ պայմանները. ընտանիքի մէջ մահ կամ հիւանդութիւնը, որոշ դեղերու հակազդեցութիւնը, ինչպէս նաեւ կարգ մը հիւանդութիւններու ազդեցութիւնը:

Որպէս սրտաբան, բազմաթիւ անգամներ ծանր հիւանդներ ինամելու առիթը ունեցած եմ, որոնք սրտի տաքնապի հետեւանք մահուան դուռը կը գտնուէին: Թէ՛ հիւանդին, թէ՛ ալ իր պարագաներուն վիճակին լրջութիւնը տեղեկացնելով հանդերձ, միշտ պզտիկ յոյսի դուռ մը բաց ձգած եմ: Յոյսը բոլորովին հիւանդէն առնել կը նշանակէ զինք մահուան դատապարտել: Քանիցս ականատես եղած եմ այն իրողութեան, թէ համաձայն բոլոր բժշկական տուեալներուն հիւանդը պէտք է կազդուրուէր եւ առողջանար, բայց երբ ան յոյսը կտրած էր, ուշ կամ կանուխ, հիւանդանոցէն չելած մահացած էր: Երբեմն հակառակն ալ պատահած է: Այն հիւանդը, որուն մահը կը սպասուէր, հետեւանք իր ունեցած յոյսին, տուն դրկուելու աստիճան կազդուրուած էր: Ուրեմն, առողջ կեանք մը ապրելու համար յոյսը անհրաժեշտ է:

ԻՆՁԻ ՎՐԱՅ ՊԷՏԵ Է ՂԵՆԱՔ ԱԵՐ յՈՍԱԸ:

Մարդկութեան որոշ մէկ համեմատութիւնը կը յուսայ մահէն վերջ «երկինք» երթալ, որով մարդ արարած իր կեանքի ընթացքին կը ջանայ գոնէ քիչ մը բարի ըլլալ: Սակայն կը կարծէ. թէ «երկինք» երթալու

յոյսը մահուամբ կ'իրականանայ:

Հռովմայեցի փիլիսոփայ, քաղաքագէտ եւ ծերակուտական Մարկոս Թուլլիոս Միսէրօ (Marcus Tullius Cicero) ըսած է.

«Քանի որ կեանք կայ, յոյս կայ:»

Ս. Գիրքին մէջ ալ նոյնը գրուած է.

«Բանսի ո՞վ էն՝ որ Լաւասարէն ամենայն կենդանիս: Գոյ յոյս թէ շուն որ կենդանի է՝ լաւ է ինչ քան զառեւծ մեռեալ: (Ժողովող Թ: 4)

«Բայց բոլոր կենդանիներուն ընկերացող մարդը յոյս ունի, Վասն զի ողջ շունը մեռած առիծէն աղէկ է:»

Յոյսը պէտք է կեդրոնանայ նպատակի մը վրայ, որուն իրականացումը պէտք է ըլլայ այս կեանքի ընթացքին: Անհատը պէտք է յոյս ունենայ, որպէսզի ինքզինքը կարենայ հասունցնել եւ պատրաստել Աստուածայայտնութեան արժանանալու:

Գերմանացի գրագէտ եւ քաղաքագէտ Եօհան Վօլֆկէնկ վօն Կօղէ (Johann Wolfgang von Goethe) ըսած է:

«Անոնք, որոնք տարբեր կեանքի յոյսը չունին, այս կեանքին համար ալ մեռած են:»

Իսկ ամերիկացի գրագէտ եւ բանաստեղծ էտկար Ալլան Փօ (Edgar Allan Poe) ըսած է.

«Իննիսուն եւ ինը կը գոհանան երազելով բայց աշխարհի յոյսը հարկերորդ անձին վրայ է, որ կ'իրականացնէ երազը:»

Յոյսին նպատակը պէտք է Աստուածայայտնութիւնը ըլլայ: Ս. Գիրքին մէջ գրուած է.

«Վասն անոն ինչ Լամբերտի Տէառն, Լամբերտ անչն իմ Բանի ինձ, յոսացաւ անչն իմ 'ի Տէառն:» (Սաղմոս ճԹ: 5)

«Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձս կը սպասէ Ու անոր խօսքին կը յուսամ:» (Սաղմոս ձԼ:5)

Յոյսը ապագային համար է, բայց մեր յուսացածը իրականացնելու ժամանակը ներկան է եւ ոչ ապագան: Ամերիկացի ճարտարապետ, գրագէտ եւ ուսուցիչ Ֆրանք Լոյս Րայդ (Frank Lloyd Wright) գրած է.

«Ներկան միշտ յառաջացող շուք մըն է, որ երեկը եւ վաղը իրարմէ կը բաժնէ, բոլոր յոյսը ասոր (ներկային) մէջ է:»

Ամէն անձ իր յոյսի որակը պէտք է չափէ: Կարեւոր է գիտնալ, թէ ունեցածը պարզ փոքր յոյս՝ լաւատեսութիւն մըն է՞, թէ ոչ ճշմարիտ յոյս: Ճշմարիտ յոյսը հիմնուած եւ կեդրոնացած է նպատակակէտի մը վրայ: Զինուած է կամքի զօրութեամբ եւ ջանքի յարատեւութեան վճռականութեամբ, իրականացնելու համար նպատակակէտը:

Անգլիացի գրագէտ եւ բանաստեղծ Թ. Ս. Էլիօթ (T. S. Eliot) գրած է հետեւեալը.

«Հոգիիս ըսի, խաղաղ եղիր, եւ սպասէ առանց յոյսի, քանի որ յոյսը պիտի ըլլայ սխալ բանի:»

Ինք կ'անդրադառնայ ճիշդ այն կէտին, թէ ընդհանուր մարդկութիւնը սխալ բանի կը յուսայ: Ինք, խաղաղութիւն կը փափաքի, որով կ'ուզէ իր խորհուրդներու ողորմմը դադրեցնել եւ ինքզինք պատրաստել Աստուածայայտնութեան: Պօղոս առաքեալ, հետեւեալ համարներուն մէջ բոլոր հարցը լաւ ձեւով ամփոփած է :

«որով է- պընժայո-թիւն ընկալա՛վ
Ըստ-սորովէ 'ի շնո՛րԸս յայտարիւ. յորո՞մ
կամէ, է- պարթի՛մէ յոսո՞վ փասացն
Ըստ-ժոյ: Եւ ոչ այս շափ միայն, այլ է-
պարթի՛մէ է-ս 'ի նեղո-թիւնս մեր: Բանպի

Գիտեմք, եթէ նեղութիւնս զհամբերութիւնս
 Գործեն: Համբերութիւնս՝ զհանդէսս. Հան-
 դէս՝ զյոյսս. յոյս՝ ո՛չ երբեք ամաշեցո-
 ցանէ. զի ա՛նքն Լստո-ժոյս աստե՛տէ է ՚ի
 սիրտս մեր, ՚ի յեանս Հոգո՛ւն Արքոյ՝ որ
 ցո-տ- մէջ: (Հովհաննէս Ե:2-5)

«Որով ընդունեցինք Հաւատքով, այս շնորհքին
 մօտենալը, որուն մէջ կեցեր ենք եւ Աստուծոյ փառքին
 յուսովը կը պարծինք: Ո՛չ միայն այսքան՝ Հապա նաեւ
 նեղութիւններու մէջ կը պարծինք. վասն զի գիտենք
 թէ նեղութիւնը Համբերութիւն կը գործէ եւ
 Համբերութիւնը՝ փորձառութիւն ու փորձառութիւնը՝
 յոյս. եւ յոյսը ամօթով չի ձգեր. վասն զի Աստուծոյ
 սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Սուրբ Հոգիին
 միջոցով, որ մեզի տրուեցաւ:»

*Յոյսը այն Աստուածային Լոյսն է, որ պէտք է
 ծագի ամէն անձի մէջ: Երբ անձը իր նախնական
 քայլերը կ'առնէ դէպի այդ Լոյսը, ուրիշ ամէն ինչ իր
 կարեւորութիւնը կը կորսնցնէ: Աւետարանին մէջ
 գրուած է.*

«Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձնին՝
 որքէ զանձն իւր՝ որպէս եւ նայն ասորք
 է:» (Լ. Յովհաննոս Գ:3)

«Ամէն ով որ այս յոյսը անոր վրայ ունի, ինքզինք կը
 մաքրէ, ինչպէս անիկա մաքուր է:»

*Սկզբնապիսի գրագէտ եւ դիւանագէտ Սամուէլ Սմայլս
 (Samuel Smiles) ըսած է.*

«Յոյսը կը նմանի արեւին, որքան անոր
 դառնանք, մեր կրած բեռը շուքի նման մեր
 ետին կը մնայ:»

*Շատերը կը վախնան եւ քաջութիւնը չունին նոյնիսկ
 այդ առաջին քայլը առնելու: Յոյսը կուտայ այդ*

քաջութիւնը: Ֆրանսայի բանակի հրամանատար եւ կայսր Նափոլէօն Պօնափարթ (Napoleon Bonaparte) ըսած է:

«Քաջութիւնը սիրոյ պէս է, յոյս պէտք է ունենայ որ աճի:»

Որքան որ կը թուի, թէ քաջութիւնը յոյսէն կուգայ, անոր բուն ազը Քրիստոս Ինքն է: Ս. Գրքին մէջ գրուած է:

«Ընչ Տէառն 'ի վերայ երկի-շաժաց ի-րոյ,
է- որչ յոսան յողորմութիւն նորա:
(Սաղմոս 138:18)

«Ահա Տէրօջը աչքը իմէ վախցողներուն Ու իր ողորմութիւնը յուսացողներուն վրայ է:» (Սաղմոս 138:18)

Աստուածաբան բարեկամիս, սիրոյ նկատմամբ յոյսին աւելի կարեւոր ըլլալու տեսակէտը առաջին հերթին ճիշդ կը թուի: Յոյսը մարդուս ապրելու քաջութիւնը կու տայ: Բայց պէտք չէ մոռնանք որ «հաւատք»ը եւ «յոյս»ը երկուքն ալ մարդկային յատկութիւններ եւ հոգեվիճակներ են: Աստուած ոչ հաւատքի եւ ոչ ալ յոյսի պէտք ունի: Բայց «Սէր»ը Աստուծային է: Աստուած սէր ունի եւ Սէր է, հետեւաբար գերագոյնը «Սէր»ն է:

Ճշմարիտ յոյսին արդիւնքը փոքր յոյսին տուած ժամանակաւոր երջանկութիւնը չէ, այլ Աստուծոյ Սիրոյն տուած յաւիտենական Երանութիւնն է:

Մեզի կը մնայ աստուծային Լոյսին նկատմամբ կատարեալ «հաւատք» կազմելու գիտակցութիւնը ունենալ: Այդ հաւատքէն է որ մեր մէջ պիտի ծագի, Լոյսին յայտնութիւնը իրականացնելու յոյսը: Այդ յոյսին տուած քաջութեամբ, վճռականութեամբ եւ յարատեւ ջանքով կարելի պիտի ըլլայ իրականացնել Աստուծայայտնութիւնը: Միայն այսպէսով կարելի կ'ըլլայ յայտարարել «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Հասարեա Հասարոյ՛,

Հասարասարեա յոսոյ՛

Հիմնեցո սիրոյ՛:

ՄԻՈՂ ՁԱՓԱՆԻՐ՝ ԿԱՐՕՏԻ ԵՒ ՏԵՆՁԱՆԵՐ ԲԱՆԱԿՆ Է



ԸՌՈՑ ՈՏՍ ՎԸՐԴԸՊԵՏԻՆ

Մարեա՛ Մարեա, դոս Հոգաս՛ էս սբաղոսմ ինի՛ սբաղեալ էս-
Քայց ասար՛ ասկաւ ինչ պիտոյ է. Մարեամ մասն Քարի ընտրեաց,
որ ո՛չ Քարչոյի ՚ի սմանէ:» (Ղուկաս Ժ:41-42)



Կեանքը կարճ է ինչո՞ւ - խոնով կ'անցնէս,

Մի՞թէ մաճիճդ ինչո՞ւ - դաճաղի վերածէս,

Արքնցիւր Սէրն իմ,

Գեղեցկութիւնդ կը վարանուի,

Երբ մահը Գայ յաւիտեան պիտի ննջէս :

(Օմար Խայեամ)



-ԺԲ-

ԻՆՉ Է ՍԷՐԸ



Ի՞ՆՉ Է ՍԷՐԸ

«*Կը Լոռմ՝ ուր կամի շնչէ. եւ զՅայն նորա լսեա. այլ ոչ Գրեթէս ուստի Գայ՝ կամ յո երթեայ. սոյնպէս՝ եւ ամենայն թնեալն ՚ի Լոռուոյն :*» (Յովհաննոս Գ:8)

«*Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ, Անոր ձայնը կը լսես, բայց չես գտեր ուրի՛ց՝ կու գայ, կամ ո՞ւր կ'երթայ: Այսպէս ալ է այն ամէնը, որ Հոգիէն կը ծնանի:*»

Սէրը օգի կը նմանի, չենք տեսներ բայց անկարելի է առանց անոր ապրիլ: Իսկ եթէ «շարժի»՝ հոսի, դարձեալ չենք տեսներ բայց կը զգանք, ինչպէս երբ օգը շարժի՝ փչէ, հովը չենք տեսներ բայց կը զգանք:

«*Եւ մե՛կ Լաւարացա՛յ, եւ թանեա՛յ զսէրն Լսորո-թոյ՝ զոր ունի առ մեզ: Լսորո-աթ սէր է, եւ որ կայ ՚ի սէրն՝ թնակեալ է յԼսորո-աթ, եւ Լսորո-աթ ՚ի նմա թնակէ:*» (Լ Յովհաննոս Դ:16)

«*Մենք ճանչցանք ու հաւատացինք թէ Աստուած մեզ կը սիրէ: Աստուած սէր է: Ան, որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի ու Աստուած՝ անոր մէջ:*»

Սիրելը աստուածային ամենակարեւոր պատուիրանն է:

«*Կը ամենայն օրէնդ ՚ի մի թան կատարին. ՚ի սիրեացեան զնկէր ին իբրեւ զանձն ին :*» (Գաղատացիս Է:14)

«*Վասն զի բոլոր օրէնքը այս մէկ խօսքին մէջ կ'ամփոփուի. «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս:»»*

«*Կը այս է պարո-իրանն զոր լուարո-է*

Իսկ զբանէ, զի սիրեացո՛ւն զմեմեանս : »

(Լ Յովհաննոս Գ:11)

«Վասն զի ասիկա այն պատուիրանքն է որ դուք սկիզբէն լսեցիք, որ մէկզմէկ սիրենք:»

«Եւ Յիսոսա ասէ ցնա. սիրեացեա զՏէր Լսորոսա՞ ի՞նչ յամենայն սրտէ ի՞նչմէ, եւ յամենայն անձնէ ի՞նչմէ, եւ յամենայն մտապ ի՞նչ: Եյս է մե՞ծն եւ ասաջի՞ն պարոտ-բրան: Եւ երկրորդն՝ նման ամին. սիրեցեա զընկեր ի՞նչ՝ ի՞բրեւ զանձն ի՞նչ: Յայս երկուս պարոտ-բրանս ամենայն օրէնի՞ եւ մարտարէի՞ կատեալ կան: » (Մարտեոսի ԻԲ:37-40)

«Յիսուս ըսաւ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ: Այս է առաջին պատուիրանքը: Ու երկրորդը՝ ասոր նման. «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրանքէն կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէները:»

«Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ: Եւ զբանն իմ զոր լսէի՞՝ ոչ է իմ, այլ Ըօրն՝ որ ասաիւտացն զիս : »

(Յովհաննոս ԺԳ:24)

«Ան որ զիս չի սիրեր, իմ խօսքերս չի պահեր: Այն խօսքը որ կը լսէք, իմս չէ, հապա Հօրս, որ զիս զրկեց:»

Յայսմ Գիտասացեն ամենեկեան՝ եթէ իմ աշակերտդ էի, եթէ սիրեցէի՞ զմեմեանս : »

(Յովհաննոս ԺԳ:35)

«Ասով ամէնքը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ իրարու վրայ սէր ունենաք:»

Յոյներու մօտ «սէր»ի դասաւորումը երեք է, նոյնիսկ երբ անոնց մասին կ'արտայայտուին, կը գործածեն երեք տարբեր բառեր:

ա- «էրօս» (ερος), կը նկարագրէ տարփական (erotic) սէրը:

բ- «Ֆիլօս» (φιλος), կը նկարագրէ եղբայրական սէրը:

գ- «Աղափէ» (αγαπη), կը նկարագրէ աստուածային սէրը:

Յաջորդ դասաւորումն ալ կը համապատասխանէ յունական դասաւորումին:

ա- Անասնական սէր - համապատասխան տարփական սէրի:

բ- Մարդկային սէր - համապատասխան եղբայրական սիրոյ:

գ- Աստուածային սէր - նոյնն է վերելի յունական դասաւորման հետ:

Կայ նաեւ ուրիշ դասաւորում մը եւս որուն մասին աւելի վերջ պիտի անդրադառնամ:

«Սէր» բառը ընդհանուր առմամբ գեղծուած եւ նախատուած բառ մըն է: Անոր սխալ իմաստով գործածուիթեան հետեւանք արժէքն ալ կորսնցուցած է: Կը կարծենք, թէ մեր ընտանեկան անդամներուն եւ մեր ընկերներուն հանդէպ մեր ունեցած դրական զգացումները սէրը կը ներկայացնեն: Ճիշդ է թէ այդ զգացումները սիրոյ մաս կը կազմեն, բայց իսկական՝ ճշմարիտ սէրը շատ աւելին է, զորս կորսնցուցած ենք:

«Զի եթէ սիրիցէ՛լ զայնոսիկ որ սիրենն զյեզ՝ զինչ վարձի իցեն, ո՞չ ապա՛լեն եմախոսոսող զնոյն Գործեն: Եւ եթէ որայցէ՛լ միայն ողջոյն Բարեկամաց յերոց՝ զինչ

աւելի անէ՛լ. ո՞չ ապաշէն մախաւորէ Եւ
 մեղաւորէ զնոյն Գործէն:» (Մատթ. Ե:46-47)
 «Վասն զի եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ
 առաւելութիւն կ'ունենաք. չէ՞ որ մաքսաւորներն ալ
 նոյնը կ'ընեն: Եւ եթէ միայն ձեր եղբայրներուն բարեւ
 տաք, ի՞նչ աւելի կ'ընէք ուրիշներէն. չէ՞ որ
 մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն:»

**Շատ քիչեր գիտակից են իսկական սիրոյն բուն
 իմաստին: Սիրոյ տուած գոհունակութիւնը ոչ թէ
 սիրոյ զգացումն է, այլ անոր յայտնաբերած երջանկու-
 թիւնն է: Ուրեմն ճշմարիտ սիրոյ արդիւնքն ալ
 երանութիւնն է: Շատեր կը ցանկան Աստուածային
 սիրոյ, բայց աւա՛ղ ան յաճախ կը խոսափի անոնցմէ:
 Ճշմարիտ Աստուածային սէրը ի յայտ կու գայ միայն
 «մաքուր սիրտ»ին՝ պատրաստ մտքին մէջ:**

«Զանձինս յեր սրբել Ընապանդոս-Եւամբ
 Ճշմարտութեան Ըոգոյն, Եղբայրսիրոս-
 Եւան ասանց կեղծաւորութեան, ՚ի սորբ
 սրբել սիրել սերտիւ զմիմեանս:»
 (Լ Պեդրոս Ե:22)

«Ձեր անձերը մաքրեցէ՛ք Հոգիին միջոցաւ, ճշմարտու-
 թեանը հնազանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ
 ըլլալով: Սուրբ սրտով մէկգմէկ պի՛նդ սիրեցէք՝»

**Սէրը կը ծագի միայն երբ միութիւնը կը տեսնենք
 բազմաթիւին մէջ: Ան ուժաբան եւ յարատեւ զօրու-
 թիւն մըն է: Կատարեալ սիրոյ պահասին գլխաւոր
 պատճառներէն մին այն է, թէ շատերու համար
 Աստուած տակաւին ճշմարտութիւն մը չէ, այլ միայն
 գաղափար մը: Ճշմարիտ սէրը մէկ է, բայց անոր
 (արտայայտութիւնները՝) դրսերեւումները՝ բազմաթիւ:
 Երբ ճշմարիտ Աստուածային սէրը անձին մէջ ծագի,
 անոր կու տայ խաղաղութիւն, ազնուութիւն, ծառայու-
 թեան ոգի, զոհողութիւն, քաջութիւն, գուժ (ոգորմու-**

թեան ոգի), եւ հեզուութիւն: Եթէ նոյնիսկ այս բոլորը միասնաբար գոյութիւն ունենան, չեն ներկայացներ ճշմարիտ սէրը, այնքան ատեն որ անոնց չ'ընկերակցիր երջանկութիւնը: Երանութիւնը ուղեղային գործառութիւն մըն է, որ յառաջ կու գայ եօթերորդ խակրայէն գործող Աստուածային զօրութենէն: Իսկ այդ զօրութեան արտայայտութիւնը չորրորդ սրտի խակրայէն անձին կու տայ երջանկութեան զգացումը: Առանց երջանկութեան սէրը գոյութիւն չի կրնար ունենալ:

Տիեզերքի մէջ իրարու հակասական երկու ուժեր կը գործեն: Մին դրական՝ քաջողական ուժն է, որ բնագիտութեան մէջ կը գտնուի ամենուրեք, ինչպէս ձգողական ուժը, մաքնիսային քաջողութիւնը, ելեկտրոնն ու բրոթոնի, ինչպէս նաեւ մանրէներու եւ հիւլէներու միջեւ: Վերջինին արձակման հետեւանք յառաջ եկած է հիւլէական ռումբը:

Միւս հակասական ուժն ալ ժխտական՝ ետ մղող, վանող ուժն է, որ մերժող է, ինչպէս երկու ելեկտրոններու միջեւ: Այս ուժի հետեւանք տեղի ունեցած է մեծ պայթումը (big bang) եւ զօրութիւնը սփռուած ամենուրեք: Ծնորհիւ քաջողութեան ուժին, զօրութիւնը ամփոփուած է, եղած մարմին եւ մեր գիտցած Ֆիզիքական ստեղծագործութիւնը ի յայտ եկած: Երբ տիեզերքի զօրութիւնը կ'ենթարկուի վանող ուժին, յառաջ կու գայ երկուութիւն, ամէն ինչ կը զատորոշուի, հետեւաբար աններդաշնակութիւնը ի յայտ կու գայ եւ կը սկսի պատրանքային կեանքը: Պարտ ենք համակերպիլ տիեզերական քաջողական ուժին եւ տեսնել միութիւնը բոլորին մէջ: Այս է հրապուրիչ ուժը ուրկէ կը ծագի սէրը:

Ա- ԱՆԱՍՆԱԿԱՆ ՍԵՐ-

Երբ այդ եւ կնոջ միջեւ սեռային յարաբերութիւնները առաջնակարգ պատճառն են իրենց

ամուսնութեան, այդ կը խափանէ ամէն ինչ, կը վատնէ նաեւ աստուածային սէրը: Սեռային մերձաւորութիւնը պէտք չէ առաջնակարգ պատճառը ըլլայ այր եւ կնոջ փոխ-յարաբերութիւններուն մէջ, որովհետեւ սեռային զգացումը սիրոյ զգացում չէ: Սեռային մերձաւորութիւնը երբ տուփանքային է, կը ծագի տիրապետութիւն, չարաչար գործածութիւն, չափազանց համարձակութիւն, որոնք ժամանակի ընթացքին կը վանեն մտերմութիւնը եւ հասկացողութիւնը, ինչ որ սէրը կ'իջեցնէ անասնական սիրոյ մակարդակի: Անասնական սէրը բղջախոհութիւն (lust) է եւ պատճառ կ'ըլլայ ցանկութիւններու, կիրքերու, նախազբաղումներու եւ նախապաշարումներու, որոնք բոլորն ալ կը խափանեն ճշմարիտ սիրոյ ներգործումը: Անասնական սէրը կախեալ է Ֆրզիքական առարկայականէն, ան երկուութիւն է եւ զատողամիտ: Ան միշտ երջանկութիւն կը փնտռէ, բայց բնաւ չի գտներ, հետեւաբար միշտ յուզումով լի է: Բայց երբ սէրը առաջնակարգ է յարաբերութեան մը մէջ, սեռային մերձաւորութիւնը կ'ըլլայ միայն սիրոյ մէկ արտայայտութիւնը:

Այր եւ կնոջմէ իւրաքանչիւրը պէտք է տեսնէ Աստուծոյ մէկ արտայայտութիւնը միւսին մէջ, այն ատեն նման ամուսնութիւն մը կ'ոգեւորէ եւ կը ներշնչէ ուրիշներն ալ: Այդ տունը կ'ըլլայ դրախտ: Ոչ թէ ենթակաները սէր կ'ունենան, այլ անոնք սէրը կ'ապրին:

բ- Մարդկային սեր-

Երբ աշխարհի այս պատրանքային կեանքը մեզի համար իրողութիւն է եւ մեր գիտակցութեան մակարդակը տակաւին կեդրոնացած է երկուութեան վրայ, սիրոյ լրիւ փառքով փորձառութիւնն ալ չենք ունենար: Հետեւաբար մեր սէրը կը կարօտի առարկայի մը, որպէսզի կարենանք զայն արտայայտել: Այսպէս

ունինք սէր այր եւ կնոջ միջեւ, սէր ծնողաց եւ զաւկի միջեւ, սէր քոյր եւ եղբօր միջեւ, սէր երկու ընկերներու միջեւ, սէր ուսուցչի եւ աշակերտի միջեւ, սէր նոյնիսկ ծառայի եւ իր տիրոջ միջեւ եւ վերջապէս սէր մարդու եւ Աստուծոյ միջեւ: Համապատասխան մեր գիտակցութեան մակարդակին եւ մեր սիրոյ առարկային հետ մեր ունեցած յարաբերութիւններու պայմանաւորման հետեւանք, սէրը նոյն աստիճան կը պայմանաւորուի երբ կ'անցնի սրտի խակրայէն: Հետեւաբար սէրը փոխուած ու վնասուած, կը ներկայացնէ մարդկային սէրը:

Ուսումնասիրելով մարդկային սէրը, պարտ ենք հասկնալ աստուածային սէրը: Կ'ըսուի թէ հօր մը իր զաւկին հանդէպ ունեցած սէրը կը ծագի խորհուրդներէն եւ իմաստութենէ: Սէրը իրեն կը շնորհէ պաշտպանելու եւ կարիքները հոգալու գիտակցութիւնը: Իսկ մօր մը սէրը կը ծագի զգացումներէ, ինչ որ կոյր է ամէն ինչի: Ճիշդ ասոր համար կ'ըսուի թէ աւելի հոգեզգանչ է (spiritual): Ամուսնական սէրը կը թուի ըլլալ ամենաբարձր արտայայտութիւնը մարդկային սիրոյ: Այս նպատակով է որ կը կարդանք հետեւեալը.

«Վասն այսորիկ Թողցէ այր՝ զհայր եւ զմայր՝ եւ երբիցէ զհեղ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկովեան ՚ի մարմին մի:»

(Մարթէոսի ժԹ: 5)

«Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ եւ իր կնոջ պիտի յարի ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան:»

Գ- ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ՍԵՐ-

Սիրոյ գագաթնակէտը Աստուծոյ հետ հաղորդըւիլն է: Երբ Յիսուս երկու քոյրերու՝ Մարթա եւ Մարիամի տունը ճաշի գնաց, Մարթա ճաշի

պատրաստութիւններով զբաղ էր, իսկ Մարիամ Յիսուսի ոտքերուն քով նստած անոր մտիկ կ'ընէր: Երբ Մարթա իր քոյրն ալ կանչեց գործերուն օգնելու, Յիսուս հետեւեալը ըսաւ.

«Պատրաստան ետ Յիսուս»՝ եւ ասէ. Մարթա՛ Մարթա, դու Ըոգաս՝ եւ պատուում ինձ պատուեալ ես. Բայց աստ՝ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն Բարի ընտրեաց, որ ո՛չ Բարչոյի ՚ի սմանէ:» (Լուկաս Ժ: 41-42)

«Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր. «Մարթա՛, Մարթա՛, դուն շատ բաներու համար հոգ ընելով կը տագնապիս. Բայց մէկ բան պէտք է եւ Մարիամ այն աղէկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի:»

Մարդկային սէրը, որպէսզի ի յայտ գայ, պէտք ունի առարկայի մը, մինչդեռ աստուածային սէրը ենթական կը սիրէ առանց առարկայի մը օգնութեան: Ուրեմն կարեւորը այն է, թէ պէտք է սորվինք ինքզինքնիս՝ մեր Անձը, մեր էութիւնը՝ Քրիստոս սիրել: Աս ըսել չէ սիրել մեր մարմինը, միտքը՝ իմացականութիւնը կամ մեր «Յս»ը, քանի որ բոլորն ալ առարկայական են: Ինքնաճանաչումը սիրոյ փորձառութիւնը ունենալ է: Մարդկային սէրը գուցէ աւելի ճիշդ կ'ըլլայ կոչել յօժարամտութիւն կամ խանդավառանք: Ան պատճառ կրնայ ըլլալ յուզումի: Աստուածային սէրը պաշտամունք մըն է, որու արդիւնքն ալ խաղաղութիւն եւ երանութիւն է: Ճշմարիտ սէր ունեցող անձի մը ամէն մէկ արարքը եւ գոհողութիւնը կ'ըլլայ ազօթք մը: Անձը կը գոյատեւէ սիրոյ մէջ, իբր սէր եւ կը գործէ սիրոյ միջոցաւ: Պարտ ենք պատրաստել եւ փոխել մեր միտքին որակը եւ կարողութիւնը, որպէսզի ընդունակ անօթ մը ըլլանք սիրոյ հոսանքին:

«*Կի եղիջիէ որդիէ Ըօր յերոյ որ յերկինան
 է. Կի Կարեգակն իւր Զադէ 'ի վերայ
 շարաց եւ Բարեաց, եւ աժէ անչրեւ 'ի
 վերայ արդարոց եւ մեղաւորաց : »*

(Մատթէոսի Ե:45)

«Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիներն ըլլաք. վասն
 զի իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛
 բարիներուն վրայ եւ անձրեւ կը դրկէ թէ՛
 արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ:»

Աստուածային սէր կերտելու գաղտնիքը

*Աստուածապաշտութիւնն է: Ինչպէս մարդկային սիրոյ
 հետեւանք մեր միտքը միշտ կը կեդրոնանայ մեր
 սիրոյ առարկային վրայ՝ ամուսին, կին, զաւակ, ծնողք
 կամ սիրահար, նմանապէս մեր միտքը պէտք է
 անընդհատ կեդրոնացած ըլլայ մեր ճշմարիտ
 էութեան՝ Քրիստոսի վրայ: Ինչպէս վերեւ յիշեցինք,
 այս սիրոյ ապացոյցներն են ազնուութիւնը, նրբու-
 թիւնը եւ գուժը: Պէտք է մենք զմեզ ձերբազատենք
 մեր անցեալի ցաւերէն, որպէսզի անոնք չկառավարեն
 մեր կեանքը, ապա թէ ոչ կ'անտեսենք այն անձերը,
 որոնք պատճառ եղած էին այդ ցաւերուն: Այս է
 ճշմարիտ ազատութիւնը եւ ոչ այն ազատութիւնը, որ
 կառավարութիւններ կը քարոզեն եւ այդ ազատու-
 թեան անուան պատերազմներ կը հռչակեն: Ճշմարիտ
 սէրը երկու անձերու միջեւ գոյացած զգացում մը չէ,
 այլ էութեան վիճակ մըն է, գիտակցութեան մակար-
 դակ մըն է, Աստուածայայտնութեան փորձառութիւն
 մըն է: Երկուութեան երեւոյթը կը խափանէ միութեան
 ըմբռնումը եւ տեղի կու տայ ինքնապաշտպանման,
 նախանձի, տիրապետութեան, յանցաւոր զգալու,
 բաժանման եւ ուրիշը կառավարելու փափաքին:
 Ճշմարիտ սէրը նուիրում է եւ իր արտայայտութիւնը՝
 ծառայութիւն:*

Ինչպէս գաւակ մը կը սիրէ իր հայրը ու մայրը, մենք ալ պարտ ենք նման կերպով մօտենալ Աստուծոյ, որպէս իր որդին՝ կարօտ իր խնամքին:

Ինչպէս այր եւ կին զիրար կը սիրեն, մենք ալ պարտ ենք նման կերպով մօտենալ Աստուծոյ, որպէս մեր կեանքի ընկեր: Այս պատճառով է որ մայրապետները ինքզինքնին կը համարեն ամուսնացած Քրիստոսի հետ:

Ինչպէս երկու մտերիմ ընկերներ իրենց գաղտնիքները իրարու կը վստահին, մենք ալ պարտ ենք նման կերպով մօտենալ Աստուծոյ, որպէս մեր ընկերը եւ յայտնել մեր բոլոր գաղտնիքները:

Ինչպէս կը յարգենք եւ կը վստահինք մեր ուսուցիչներուն, մենք ալ նոյնպէս պարտ ենք Աստուծոյ մօտենալ որպէս մեր ուսուցիչը եւ պարզել մեր բոլոր կասկածները:

Ինչպէս ծառայ մը իր տիրոջ կ'ապաւինի եւ հաւատարմօրէն կը ծառայէ անոր, մենք ալ պարտ ենք նման հաւատարմութեամբ մօտենալ Աստուծոյ, ապաւինիլ իրեն եւ ծառայել:

Ինչպէս սիրահարուած երիտասարդ մը կը նայի իր սիրահարին երեսը եւ տեսնելով անոր շնորհքը, երջանկութիւնը կը ժայթքի իր մէջ, մենք ալ պարտ ենք նման հայեացքով մօտենալ Աստուծոյ, համտեսելու համար իր շնորհքին տուած երանութիւնը:

Մարդկային սիրոյ արտայայտութիւնները կը նմանին փոքր կայծերու, բայց Աստուածային սէրը բոցաշատ կրակն է: Մարդկային սէրը կախեալ է պատրանքէ ու կը կապէ անձը ուրիշի մը եւ բնաւ ապահով չէ: Աստուածային սէրը ապահովութիւն է: Պարտ ենք ձերբազատուիլ աշխարհիկ հետապնդումներէն եւ զգայարանքներուն տուած ցանկութիւններէն: Մեր ճշմարիտ բնութիւնը դրականն է, բոլոր

Ժխտականները միայն դրական զօրութեան հոսքին խցման հետեւանքն են: Սէրը, մեր զգացական պէտքերը հոգալու համար մէկ կամ երկու հոգիի հետ մտերիմ ըլլալ չէ: Անձեր, կացութիւններ, հարստութիւն կը կորսուին, գեղեցկութիւն կը թառամի, կարողութիւններ եւ կեանք կը թռին կ'երթան, բայց Քրիստոսի սէրը յաւիտեան կը մնայ:

Մեր կեանքի ընթացքին ունեցած յարաբերութիւններու անձնաւորութիւնները եւ փորձառութիւններու կացութիւնները, բոլորն ալ զօրութեան խտացած հաւաքածոներու արտայայտութիւններ են՝ պատրաստ ձեւաւորուելու եւ պայմանաւորուելու աստուածային սէրով: Այդ սէրն ալ կը գործէ մարդկութեան միջոցաւ: Նման սէրը անձին կու տայ մտքի թեթեւացում եւ բացարձակ մեղմացում, առանց պրկումի եւ լարուածութեան ինքզինքին եւ ուրիշներու հանդէպ, այն գիտակցութեամբ, թէ ամէն ինչ մէկ է եւ բարի է: Բարձրագոյն սէրը իմաստութիւնը ինքն է: Սէրը ամէն ինչ տեսնել է առանց վախու եւ առանց այդ տեսողութիւնը խափանող առարկայականի համար եղած ցանկութեան:

Անասնական սէրը առարկայական է, հակառակ որ կը թուի ենթակայական ըլլալ, այն իմաստով որ անձը նոյնացած իր «Ես»ին հետ, կը կարծէ թէ ենթական «Ես»ն է, ուրեմն եսասէր է: «Ես»ը ճշմարիտ ենթական չէ, ան ալ առարկայական է:

Մարդկային սէրը թէ առարկայական եւ թէ ենթակայական է:

Աստուածային սէրն է որ ենթակայական է: Ենթական՝ անձին ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է:

Երբ անասնական սէրը անձին միայն եսասիրութիւն կու տայ, մարդկային սէրը կը գերազանցէ աս եւ սիրոյ առարկան կ'ըլլայ ուրիշ անձ մը: Երկու

անհատներու միջեւ նման փոխադարձ սէր կը ներկայացնէ մարդկային սէրը: Աստուածային սէր կերտելու համար նոյնիսկ կարելի է անասնական սէրը օգտագործել: Անձը, փոխանակ կերտելու զօրաւոր կիրքեր եւ փափաքներ գոհացնելու անասնական ցանկութիւնները, ուրկէ կը ծագի «Ես»ին բոլոր ժխտական յատկութիւնները, կարող է իր մտքին ուղղութիւնը փոխել եւ կերտել ինքնայարգանք ու գտնել Ան, որ ի յայտ չէ եղած իր մէջ: Յիսուսի հետեւեալ խօսքը ազնարկ մըն է այս կէտին.

«Ի՛ գասն Ըօր իմոյ օթե՛վանէ Բասու՛մ են .
 ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ յեզ, եթէ
 երթամ եւ պարտաստեմ յեզ գեղի:»
 (Յովհաննէս ԺԳ:2)

«Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի՝ «Հիմա կ'երթամ, որ ձեզի տեղ պատրաստեմ:»

Բ. Տ. Լէինկ (R. D. Laing)՝ հոգեբան մը, կ'ըսէ թէ մեր խորհուրդները շատ աւելի նուազ են քան մեր գիտութիւնը. մեր գիտութիւնը շատ աւելի նուազ է քան մեր սէրը. մեր սէրը շատ աւելի նուազ է քան ինչ որ ունինք, հետեւաբար նոյն նուազութեան համեմատութեամբ կը գոյատեւենք, քան թէ այն ինչ որ կրնայինք ըլլալ: Ուրեմն աւելի վեհ անձնաւորութիւն մը կերտելու կարողութիւնը ունինք, որով կարելի է անասնական սէրը բարձրացնել մարդկային սիրոյ մակարդակին, ուր սիրոյ առարկան փոխանակ իր անձին՝ «Ես»ին, կ'ըլլայ ուրիշ անձ մը: Երբ սիրոյ զօրութիւնը ծառայէ միայն «Ես»ը զօրացներու, որեւէ օգուտ չունենար եւ միայն կը ծառայէ մահուան: Հարկ է յիշել Յիսուսի հետեւեալ խօսքը.

«Ընէն ամէն ասեմ յեզ. եթէ ոչ Ըստն

ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինչն
միայն կայ. ասոս թէ մեռանիցի, Բաստում
արդիւնս ասնէ: Որ սիրէ պանջն իւր՝
արջակէ պնս. է որ ասրեայ պանջն իւր
յաշխարհիս յայսմիկ, ՚ի կէանս յաւիտեանս-
կանս պաշտօն պնս:» (Յովհաննոս ԺԲ:24-25)

«Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. «Եթէ ցորենին հատը
հողին մէջ իյնալով չմեռնի, ինք միայն կը մնայ. բայց
եթէ մեռնի, շատ արդիւնք կը բերէ»: Ան որ իր անձը
կը սիրէ, պիպի կորսնցնէ գանդակ եւ ան որ իր անձը
այս աշխարհին մէջ կ'ատէ, յաւիտեանական կեանքին
համար պիտի պահէ գանդակ:»

**Քաշողական ուժը սիրոյ բնութիւնն է: Երբ
տիեզերքի բոլոր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ
Աստուծոյ մարմինը, հետեւաբար Աստուած ամէն բանի
մէջ է, որով պէտք չէ զարմանանք որ տիեզերքի մէջ
ընդհանուր առմամբ ամէն բան որոշ քաշողական ուժի
մը ազդեցութեան ենթակայ է: Մոլորակները իրարու
կը հակին՝ ձգողութեան ուժի ազդեցութեամբ:
Մանրէները, հիւլները, ինչպէս նաեւ ելեկտրոն եւ
փրոթոնները իրարու կը ձգտին մասնաւոր քաշողական
ուժի հետեւանքով: Այս իրար յարելու բնութիւնը
Աստուածային սիրոյ մէկ արտայայտութիւնն է:
Առանց այս հակման եւ յարումի ստեղծագործութիւնը
գոյութիւն չէր ունենար:**

«Սիրելի՛ք՝ եթէ Լսոյս-առ յայտէս սիրեայ
պմեպ, ասոս է մե՛կ պարտիմէ՛ պմիմիանս
սիրել:» (Լ Յովհաննոս Դ:11)

«Սիրելիներ, եթէ Աստուած մեզ այսպէս սիրեց, ուրեմն
մենք ալ պարտաւոր ենք մէկզմէկ սիրել:»

«Պատուիրանն նոր Գրամ չեպ, պի սիրեցէ՛ք

չմխմխանա՝ որպէս «իրեցի ես զՅեզ, զի ե-
րու՛մ իրեաքի՛ն զմխմխանա:» (ՅովՀաննոս-
ԺԳ:34)

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք ալ մէկզմէկ սիրէք:»

Մայր մը իր զեղեցիկ ու կատարեալ, նաեւ տգեղ ու անկատար զաւակները նոյն չափով կը սիրէ, որովհետեւ ան ոչ թէ անոնց մարմինները կամ միտքերը կը սիրէ, այլ՝ Քրիստոս, որ անոնց ճշմարիտ էութիւնն է: Նոյնն է նաեւ այր եւ կնոջ միջեւ: Եթէ կը սիրեն միայն իրարու մարմինները, այդ ամուսնութիւնը երկար չի տեւեր, բայց եթէ երկուքն ալ սիրահարած են միւսին ներքին Քրիստոսին, այդ ամուսնութիւնը երկրի վրայ դրախտի կը դառնայ:

Պարտ ենք կերտել մարդկային սէրը, որպէսզի անոր հետեւի Աստուածային սէրը: Ինչպէս պարտադրուած մարդկային սէրը երջանկութիւն չի բերեր, նմանապէս պարտադրուած աստուածային սէրն ալ երանութիւն չի տար: Աստուածային սէրը պէտք է հոսի ինքնաբերաբար, որպէսզի սրբէ բոլոր տիրութիւնները, ցաւերը եւ չարչարանքները ու պարգեւէ երանութիւն: Կան որոշ յարանուանութիւններու/աղանդներու պատկանող անձեր, որոնք իրենց առօրեայ խօսակցութիւններու ընթացքին անընդհատ «օրհնեալ է Տէր» (praise the Lord) աղաղակելով կը պարտադրեն «աստուածային սէր»: Ճշմարիտ սէրը անձը չի կաշկանդեր եւ զերիի չի վերածեր: Երբ ենթական նեղմիտ հաւատալիքի մը զերի դառնայ, ենթադրելով թէ գտած է ճշմարտութիւնը, այլեւս առիթն ալ չ'ունենար այդ աստուածային սիրոյ փորձառութեան: Պարտ է յիշենք Յիսուսի հետեւեալ խօսքը.

«Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ որէր որէր, մոցել
յարգայոթիւնն երկնից. այլ որ ասնէ պէսամս

Ըօր իմոյ որ յերկնան է :» (Մարտեոսի Է:21)

«Ոչ թէ ամէն ով որ ինծի «Տէ՛ր, Տէ՛ր, կ'ըսէ, պիտի
մտնէ երկնքի թագաւորութիւնը, հապա անիկա՛ որ իմ
երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ:»

ԻՆՁՊԷԱ ԿԵՐՏԵԼ ԱՍՏՈՒԾԱՅԻՐՆ ԱԵՐ:

Անկեղծ աշակերտ մը առաջին հերթին պարտ է
եսասիրութեան վերջ տալ: Ուշադրութիւնը պարտ է
դարձնել իր անձին դէպի ուրիշներուն եւ անկեղծօրէն
մտահոգուիլ անոնցմով՝ զգայուն ըլլալ ուրիշներու
ցաւերուն եւ դժուարութիւններուն, ուշադրութեամբ
մտիկ ընել անոնց եւ իմանալ՝ ըմբռնել ըսուածը,
ինչպէս նաեւ հետեւցնել չըսուածը: Յետաձգել
անձնական հաճոյքները: Իր զգացումները եւ
խորհուրդները ի գործ դնել լաւագոյնը եւ օգտակարը
խորհելու, խօսելու եւ գործելու համար: Մտակարա-
րել առանց խորութեան եւ «տալ» հարիւր տոկոսով,
նոյնիսկ այն աստիճան, որ ինք խոցելի դառնայ: Միշտ
նկատի առնել եւ յարգել դիմացինին խորհուրդները
եւ տեղի տալ ի պատշաճի: Ան, որ իմաստուն չէ, կարող
չէ Աստուածային սէր տալու: Տալ, մանաւանդ սէր տալ,
ստեղծագործիչ արարք կամ արտայայտութիւն մըն է,
որ ցոյց կու տայ կարողութիւն, զօրութիւն,
վարպետութիւն եւ արդիւնաբեր ըլլալու յատկութիւն-
ները: Աստուածային սիրոյ փոխանցումը անձին կու
տայ բացարձակ գոհունակութիւն եւ կ'արտայայտէ
անձի մը ամենավեհ եւ ազնիւ բնութիւնը:

Ուրեմն սէրը կը կառավարուի չորս օրէնքներով.

ա- Անկեղծ մտահոգութիւն՝ ուրիշի բարօրութեան
համար:

բ- Պատասխանատուութեան զգացում՝ ուրիշի եր-
ջանկութեան համար:

դ- Ակնածածանք՝ ուրիշի հանդէպ- Երբ սիրտէն բխած սէրը կը միանայ գլխէն բխող յարգանքին, ակնածանքը ի յայտ կու գայ:

«Եւղէսարցախո-Թեան առ միմիանս Գլխաթի:

՚ի պարտի- զմիմեամբէլ Ելանել:»

(Հասկացեցիս ԺԲ:10)

«Եղբայրսիրութեան մէջ իրարու գորովալից եղէ՛ք. պատուելու մէջ իրարմէ անցէ՛ք.»

դ- Հասկացողութիւն- Առանց հասկացողութեան ակնածանքը կարելի չէ: Մակերեսային հասկացողութիւնը բաւարար չէ: Աստուածային սիրոյ արտայայտութեան համար պարտ է, որ սիրողը նոյնանայ իր սիրածին հետ: Առանց այդպիսի սիրոյ աշխարհ կ'ըլլայ դժոխք, իսկ երբ այդ սէրը ծաղկի աշխարհ կ'ըլլայ գրախտ:

Միրելու արտայայտութիւնը ունի երեք հանգրուաններ.

ա- Ազնուութիւն, նրբութիւն, գուլթ (ողորմութիւն) եւ օգնութիւն ցուցաբերում.

«... ասէն ասեմ յեւ, որոզէտիւ- արարել միտմ յեղէսարցա ալոցիկ մոտրկանց՝ ինչ արարել:» (Մարտէոս ԻԵ:40)

«... Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քանի որ իմ այս եղբայրներէս ամենէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք:»

բ- Քաջալերել եւ վստահութիւն ներշնչել.

գ- Նրբութեամբ գործունէութեան մղել. անգլերէն առածը կ'ըսէ. «Բարեգործութիւն է անօթի մարդուն ձուկ տալ, որպէսզի ան կշտանայ, բայց աւելի մեծ բարեգործութիւն է անոր ձուկ որսալը սորվեցնել»: Աւետարանն ալ նոյնը կ'ըսէ.

«Եւ զԳոռոսացո- զմիմեանց յորդորմամբէլ

«Իրոյ Գործոյ Բարեաց :» (Եբրայեցի ժ:24)

«Եւ իրարու հոգ տանինք՝ սիրոյ եւ բարեգործութեան մղելով:»

Ամենաբարձր աստուածապաշտութիւնը բոլոր ստեղծագործութիւնը սիրել է: Եթէ կ'ուզենք ուրիշներու օգտակար ըլլալ, հարկ է մեր անձը պատրաստել: Քանի որ ինքնապատրաստութեան ամենակարեւոր արարքը «Ես»ը չէզոքացնել է, այս ուղղութեամբ խոկումը կրնայ կարեւոր դեր խաղալ: Երբ «Ես»ին բռնապետութիւնը վերջ գտնէ, սէր եւ գութ (ողորմութիւն)՝ տիեզերքի ճշմարտութիւնը ինքնաբերաբար ենթակայէն ներս առատօրէն կը խուժեն՝ առանց ենթակային ջանքին եւ առանց յաւելեալ պատճառարկութեան: Անձին էութեան մէջ սրբութիւնը կը ճառագայթէ ամենուրեք՝ իր արտայայտած սիրոյ եւ գութի (ողորմութեան) միջոցով:

Ընդհանուր առմամբ մարդ արարած սէրը կը վատնէ դրամի նման, զայն կը գործածէ առ-ու-տուրի համար: Զայն կը ծախսէ ապահովութեան համար, զայն կը ծախսէ իր զգացական հաճոյքները գոհացնելու եւ զայն կը ծախսէ վանելու համար իր առանձնութիւնը: Սէրը պէտք է թէ՛ խաղաղութիւն եւ թէ՛ ազատութիւն տայ, թէ՛ սիրողին եւ թէ՛ սիրուողին: Սէրը բաժնեկից ըլլալ է թէ՛ լաւին եւ թէ՛ վատին, առանց շահագործելու մէկզմէկուն:

Իմաստութիւնը մտային յատկութիւն մըն է, որ վեցերորդ խակրայէն կու գայ, իսկ սէրը նոյն զօրութիւնն է, որ սրտի չորրորդ խակրայէն կը գործէ: Սիրելու համար պէտք է նաեւ գիտնալ ճշմարտութիւնը, իսկ գիտնալու համար՝ պարտ ենք մեր կապերը խզել այս պատրանքային կեանքի երեւոյթէն: Ըշմարտութիւնը այն է թէ սէրը կարելի չէ

փնտռել եւ գտնել, այլ սէրն է որ մեզ կը գտնէ: Երբ ճշմարիտ գիտակցութիւնը անձին մէջ ծագի, հասկացողութիւնը եւ փորձառական գիտութիւնն ալ անձին ի յայտ կու գան: Այն ատեն անձը պիտի հասկնայ, թէ ինչպէս ճշմարտութիւնը կը համապատասխանէ իրողութեան, ինչպէս Աստուած կը համապատասխանէ ստեղծագործութեան եւ ինչպէս հոգին՝ Քրիստոս կը համապատասխանէ մեր կեանքին: Եթէ մարդ Ս. Գիրքէն միայն մէկ բան սորվի եւ այդ սորվածն ալ սէրը ըլլայ, արդէն իսկ բաւարար է:

Ինչպէս գրութեան սկիզբը անդրադարձած էի, կայ նաեւ երրորդ սիրոյ դասաւորում մը.

- ա- Յարաբերական (relative) սէր-
- բ- Բացարձակ (absolute) սէր-

Ըստ այս դասաւորման, յարաբերական սէրը ունի պահանջներ, պարտականութիւններ, ենթարկումներ եւ պատասխանատուութիւններ: Ան իր ակնկալութիւններով գերի կ'ընէ իր սիրածը եւ կը ցանկայ փոխադարձ սիրոյ: Ան կը կառավարուի «Ես»էն, հետեւաբար կը յարմարի երկուութեան եւ պատրանքային կեանքին: Իսկ բացարձակ սէրը առանց պայմանի է: Կը թուի թէ այս դասաւորումը անասնական եւ մարդկային սէրերը միացուցած է «յարաբերական սէր»ի անուան տակ եւ «բացարձակ սէր»ն ալ նոյնն է Աստուածային սիրոյ հետ:

«Սիրելիք, սիրեաց՝ ի պիմեանս, պի սէր
յԼսորո-ժոյ է. եւ ամենայն որ սիրէ՝
յԼսորո-ժոյ է շնեալ եւ ճանաչէ
պԼսորո-ած:» (Լ Թ՝ ուղն Յովհաննոս Դ:7)
«Սիրելիներ, մէկգմէկ սիրենք, վասն զի սէրը Աստուծմէ է: Ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է ու կը ճանչնայ Աստուած:»

**ԻՆՁ ԵՆ ԱՆՐԱԾԵՑ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԵՐՈՒ, ՈՐ
ՃԱՄԲԱՆ ԿՐ ԲԱՆԱՆ ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ԱԻՐՈՅ:**

- ա-Ներողամտութիւն,
- բ-Համակրանք,
- գ-Մառայութիւն,
- դ-Գուլթ (ողորմութիւն)

ա- Ներողաստուութիւն- Միտք մը, որ զբաղ է դատելով եւ դատապարտելով ազատ չէ թռիչք առնելու եւ սիրելու: Անձը առաջին հերթին պէտք է ինքզինքին ներէ: Որեւէ հակասութիւն կամ ատելութիւն կը խափանեն հոգեւոր յառաջացման ճանապարհը, հետեւաբար նաեւ սիրոյ արտայայտութիւնը:

Ներումը օրհնութիւն է ներուած անձին համար եւ աւելիով օրհնութիւն՝ ներողին: Ճշմարիտ ներողամտութիւնը կը դառնայ գուլթի (ողորմութեան): Մարդ կը դատէ ուրիշներ այն չափով, որ ինք կը դատուի եւ կը դատէ ինքզինք: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Մի դատել՝ եւ ոչ դատեցել. մի պատել՝ եւ ոչ պատեցել, արձակեցել եւ արձակեցել: Կոտ՝ եւ Կոտ յեւ. շափ Թարոտ թաթաղուն շարժուն պեղուն՝ Կոտն ՚ի Գոգս յեր. նովին շափով որով շափել՝ շափեացի յեւ:» (Ղուկաս 9:37-38)

«Մի՛ դատէք ու պիտի չդատուիք: Մի՛ դատապարտէք ու պիտի չդատապարտուիք: Ներեցէ՛ք ու ձեզի պիտի ներուի: Տուէ՛ք ու ձեզի պիտի տրուի: Աղէկ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գողը. քանզի այն չափով՝ որով դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի:»

Ներողամտութեան արգելքներն են հպարտութիւնը եւ դժգոհութիւնը: Դժգոհութիւնն ալ, իր կարգին, կը ծագի հին ցանկութիւններու տուած յուսախաբութիւն-

ներէն: Ինքնադատապարտութիւնը կը ծնի ինքզինք
 չկարենալ ներելէ եւ ցոյց կու տայ միտքին ինքն
 իրմով զբաղ ըլլալը, որ եսասիրութեան մաս կը կազմէ:
 Ներողամտութիւնը մտքի ուղղութեան փոփոխութիւն
 մըն է՝ «Ես»էն դէպի անձին ճշմարիտ էութեան՝
 Քրիստոսի: Քանի որ Քրիստոս բոլորին ալ էութիւնն է,
 ուրեմն ներողամտութիւնն ալ կ'ըլլայ բոլորին
 հանդէպ: Եթէ դատողութիւն չըլլայ, նոյնիսկ
 ներողամտութեան պէտք չ'ըլլար: Անձը կ'ըլլայ բոլորին
 հանդէպ սիրով լի՝ առանց որեւէ ակնկալութեան:
 Ներողամտութեամբ կարելի է գերազանցել «Ես»ը, որ
 կը խափանէ աստուածայայտնութիւնը: Այն չափով որ
 մենք կը կարողանանք մենք զմեզ ներել, նոյն չափով
 ալ կը կարողանանք նաեւ ուրիշները ներել: Այն չափով,
 որ մենք կը կարողանանք մեր «Ես»ին յաղթել, նոյն
 չափով ալ կը կարողանանք համակրանք ցոյց տալ
 ուրիշներուն:

Բ- ՀԱՄԱԿՐԱՆՔ- Նախապաշարում, չարակամութիւն
 եւ ատելութիւն կը խափանեն համակրանք (sympathy)
 ցոյց տալու կարողութիւնը: Իսկ հպարտութիւնը եւ
 սնափառութիւնը կը խափանեն համակրանք ստանալու
 կարողութիւնը:

Նախանձուած անձէն համակրանք ստանալ անկա-
 րելի է: Կեանքը մէկ է, բայց արտայայտութիւնները
 բազմաթիւ: Ուրեմն պարտ ենք թէ՛ սուրբին եւ թէ՛
 մեղաւորին համահաւասար համակրանք ցոյց տալ:

«Լուսարուտ ապա՛վէն զի ասացաւ. «Իրեացեա
 քանկեր ին, եւ արեացեա զԲշնամին ին: Եւ
 ես ասեմ յեզ. «Իրեցե՛տ զԲշնամին» յեր.
 օրհնեցե՛տ զանիթիշ» յեր. Բարի արարե՛տ
 արելեաց յերոց. եւ աղօթս 'ի վերայ

այնոցիկ՝ որ լիկեանն զՅեզ է- Հալաթէն:»

(Մատթէոսի Ե:43-44)

«Լսեր էք որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ասես»: Բայց ես ձեզի կ'ըսեմ. «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց Համար որ ձեզ կը չարչարեն ու կը Հալածեն:»

Գ- ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ-

Մատակարարողին համար ծառայութիւնը շատ աւելի կարեւոր է, քան թէ շահը ու հարստութիւնը՝ վաճառականին համար: Ծառայութիւնը կեանքի ծիսակատարութիւններէն մին է, որ իր գագաթնակէտին կը հասնի Աստուծոյ հետ հաղորդութեամբ: Ծառայութիւնը կը ցոլացնէ անձին սիրոյ մակարդակը: Բայց նոյնիսկ բարի նպատակաւ եղած արարքներն անգամ կրնան շատ դիւրութեամբ ծառայել «Ես»ին եւ անձին տալ հպարտութիւն: Ճիշտ ասոր համար Աւետարանին մէջ գրուած է.

«Եյլ դո՛ւ յորժամ ողորմո՞ւթիւնն ասնիցէս, մի գիտասցէ յախ ի՞նչ զի նշ Գործէ աջ ի՞նչ որպէս զի եղիցի ողորմո՞ւթիւնն ի՞նչ յաշուի. է- Հայրն ի՞նչ որ պէտասնէ ՚ի յաշուի՝ Հաստասցէ ի՛նչ յաստասցէս:»

(Մատթէոս 9:3-4)

«Իսկ դուն երբ ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող չգլխոնայ աջ ձեռքիդ ինչ տալը, Որպէս զի քու ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ եւ քու Հայրը որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս Հատուցում պիտի ընէ:»

Ինչպէս պարտ ենք ուրիշներու սխալները եւ պակասները անտեսելու, նմանապէս պարտ ենք մեր սխալ եւ պակասներն ալ սրբագրելու: Ծառայութիւնը եսասիրութեան բուժման դեղն է: Երբ մենք զմեզ կը տեսնենք ուրիշներէ անջատ եւ տարբեր՝ ազգութեամբ,

կրօնքով կամ որոշ ընկերային դասակարգով, զատողութիւն ըրած կ'ըլլանք, որ մեզ կը սահմանափակէ: Կը խափանենք Անհունին եւ Իր սիրոյ մեր մէջ ներգործութիւնը: Այն սրտին մէջ, ուր ճշմարիտ սէրը կը գործէ, այդ սիրտը այլեւս միայն անձնական երջանկութիւն չի փնտռեր: Ի՞նչ արժէք ունի երկրային երջանկութիւնը որ փնտռուի, երբ անձը արդէն իսկ երանութեան մէջ կ'ապրի: Ծառայութիւնը ալ աւելի օգտակար է ծառայողին, քան թէ անոր՝ որուն կը մատակարարուի: Ծառայութիւնը, մատակարարողին մէջ սուրբ սիրտ կը կերտէ: Ան որ ճշմարիտ ծառայութիւն կը մատուցանէ, պէտք է երախտապարտ ըլլայ մատակարարողին: Ճշմարիտ ծառայութիւնը կ'ըլլայ կատարեալ գիտակցութեամբ եւ ձեռքազատուած ծառայութեան բոլոր արդիւնքներէն:

«Երբ՝ եղերո՞ւի դո՞ւի կապարեալի, որպէս
 է- Լայրն յեր երկնա-որ կապարեալ է:»
 (Մարտիրոսի Ե:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր
 Հայրն ալ կատարեալ է:»

Ծառայութիւնը սիրոյ արտայայտութիւն՝ աստուածապաշտութիւն է: Բարեբախտութիւնը ունեցած եմ գութ եւ նման ծառայութեան գիտակցութիւն ունեցող անձեր ճանչնալ, նաեւ մեր փոքր համայնքին մէջ:

դ- ԿԱՐԵԿՅՈՒԹԻՒՆ - ԳՈՒԹ (ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ)- Գութը (compassion) միտքէն ծագող Աստուածային եղանակաւորում մըն է: Ան ճշմարիտ սիրոյ զգացումն է, որ կուտայ ահաւոր կարողութիւն: Այս կարողութեան կ'ընկերակցին նաեւ ազնուութիւն, համերաշխութիւն, նրբութիւն, մեղմութիւն եւ քաղցրութիւն:

«Ե- Գլո-խ ամենայնի, պի Լամամիտի

Իցե՛վ, Համակարծի, Եղբայրսաներ՛
 ասնո՞ւս-Գործի, խոնարհով:» (Լ Պէրրոս Գ:8)
 «Վերջապէս ամէնքդ մէկ մտքի վրայ եղէք, կարեկից,
 եղբայրսաներ, ողորմած ու քաղցրաբարոյ:»

Երբ մեր խորհուրդները, խօսքերը եւ գործերը համերաշխ են, խաղաղութիւնը եւ գուլթը, որոնք սիրոյ արտայայտութիւններ են, ինքնաբերաբար կը յայտնուին մեր անձին միջոցով: Գուլթի գոյութիւնը կը ցուցաբերէ ներքին ներդաշնակութիւն, հոգատարութիւն, պատասխանատուութիւն, հասկացողութիւն եւ յարգանք: Ճշմարիտ գուլթը կը բխի ինքնաբերաբար եւ երջանկութեան աղբիւր է: Երբ անձը մէկու մը ցաւը երկիւղով կը դիմաւորէ, ատիկա մեղքնալու զգացում (pity) է: Բայց, եթէ անձը նոյն ցաւը սիրոյ զգացումով դիմաւորէ, այդ կ'ըլլայ գուլթ: Գուլթ ունեցող անձ մը երբ տեսնէ ուրիշի մը չարչարանքը եւ ցաւը, անկարելի է որ չօգնէ անոր: Սէրը, ինչպէս նաեւ գուլթը անձին ուսերուն վրայ կը դնէ մեծ պատասխանատուութիւն: Ահա՛ Յիսուսին, Պետրոսին ուսերուն վրայ դրած պատասխանատուութիւնը:

«Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցԱրմոզն Պէրրոս Յիսուս. Սիմոն Յովնանու, սիրե՞ս զիս աստեղ ինն զտոսս: ասէ ցնա. այո՞ րէր, եւ դո՞ւ Գիցիս զի սիրեմ զիւզ: ասէ ցնա, արաժեա՛ զԲաստինս իմ: Դարչեալ ասէ ցնա, Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս: ասէ ցնա. այո՞ րէր, եւ դո՞ւ Գիցիս զի սիրեմ զիւզ: ասէ ցնա՛ արաժեա զոշխարս իմ: Եսէ ցնա երիցս անԳամ:

Սիմոն Յովնանոս սիրե՞ս պիս: Տրտմեցաս՝
 Պէտրոս՝ պի սասց ցնա երիցս՝ Դէ սիրես
 պիս. եւ սաէ ցնա. Տէր՝ դոս պամենայն
 Գրիգէս. եւ դոս իակ՝ պամենայն Ճանաչես,
 եւ եԴէ սիրեմ պէէպ: Լաէ ցնայ Յիսոսս.

արաջեա պոշխարս իմ:» (Յովնանոս ԻԼ:15-17)

«Երբ ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսին. «Սիմոն, Յովնանին որդին, զիս ատնցմէ աւելի կը սիրե՞ս»: Անիկա ըսաւ անոր. «Այո՛, Տէ՛ր, դուն գիտես թէ քեզ կը սիրեմ»: Ըսաւ անոր. «Արածէ՛ իմ գառնուկներս»: Նորէն երկրորդ անգամ ըսաւ անոր. «Սիմոն, Յովնանին որդին, զիս կը սիրե՞ս»: Ըսաւ անոր. «Այո՛, Տէ՛ր, դուն գիտես թէ քեզ կը սիրեմ»: Ըսաւ անոր. «Արածէ՛ իմ ոչխարներս»: Ըսաւ անոր երրորդ անգամ. «Սիմոն, Յովնանին որդին, զիս կը սիրե՞ս»: Պետրոս արտմեցաւ, որ երեք անգամ իրեն ըսաւ թէ «Ձիս կը սիրե՞ս» եւ ըսաւ անոր. «Տէ՛ր, դուն ամէն բան գիտես, դուն գիտես թէ ես քեզ կը սիրեմ»: Ըսաւ անոր Յիսուս. «Արածէ՛ իմ ոչխարներս»:»

ԳուԹը երեք գործօն յատկուԹիւններ ունի.

ա- Սիրել,

բ- Տալ

գ- Ներել:

ա- Գործօն սէրը գուԹն է: Երբ եկեղեցւոյ մէջ

«Տէր Ողորմեա» աղերսանքը կ'երգուի, այդ Աստուածային սէրը եւ գուԹը՝ ողորմութիւնը ստանալու խնդրանք մըն է: Այդ խնդրանքը, անձին իր սիրոյ ճամբան բանալու համար, ինքզինքին ըրած մէկ կոչն է, որպէս զի սիրոյ գօրութիւնը խակրաներէն ներս խուժէ առանց խափանումի: Ճիշտ այդ նպատակով ալ այդ աղերսանքը կ'ըլլայ ծնկաչոք, իբր նշան խոնարհութեան եւ հեզութեան՝ նշան «Ես»ին նուազեցման:

բ- ԳուԹը միայն մեր աւելորդէն տալ է, ինչ որ

կ'ըլլայ միայն պարզ բարեգործութիւն մը (charity): Գթալը, առանց վերապահութեան, ի պատշաճի, մեր բոլոր ունեցածը տալ է, ինչպէս Յիսուս համայն մարդկութեան համար տուաւ իր բոլոր ունեցածը՝ իր կեանքը:

Գ- Ներելը կը գերազանցէ տալը: Տալը կը սրբագործէ միտքը, բայց ներելը կը բարձրացնէ հոգին: Տալը կ'օգնէ ուրիշին, բայց ներելը կ'օգնէ թէ՛ ներողին եւ թէ՛ ներողողին: Ներելը Աստուծմէ ստացուած շնորհքը ուրիշին փոխանցել է: Ներելը զօրութեան նշան է եւ ոչ տկարութեան: Միթէ Յիսուս ալ նոյնը չըրա՞ւ:

«... Եւ որեւեալ Յիսուսս սուստոս նոցա՝
ասէ ցանդամաւոյժն. Եողեալ լիցին իւր
մեղէ ին:» ... «սինչ որորին է. ասել՝
Եողեալ լիցին իւր մեղէ ին, Եւ ասել՝ արի
եւ շրջեաց:» (Մարգէնոս Թ: 2, 5)

«...Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ
անդամաւոյժին. քաջալերուէ որդեակ քու մեղքերդ քեզի
ներուած են:» ... «Քանզի ո՞րը աւելի գիւրին է. քու
մեղքերդ ներուած են ըսե՞լը. թէ ելիր ու քալէ՛ ըսելը:»

Մարդկային աշխարհիկ կեանքը եւ ապրելա-
կերպը հիմնուած է մրցակցութեան վրայ, իսկ
Աստուածային ճանապարհը հիմնուած է գութի վրայ:
Մարդու մը վեհութիւնը կամ ազնուութիւնը իր
Փրփրքական, մտային եւ նիւթական գերազանցութեան
մէջ չի կայանար, այլ՝ իր ծառայութեան մէջ: Գթալ կը
նշանակէ ուրիշին ցաւը զգալ: Գթալը առանց պայմանի
սիրել է:

Ողորմութիւնը Աստուծոյ գութն է՝ հանդէպ
մարդկութեան: Ողորմութեան, անձին տուած
բարիքները պահուած են նոյն ինքն ողորմութեան մէջ:

Ասոնցմէ ամենակարեւորն ալ ինքնաքննութիւնն է: Եսասիրութիւնը զգացական է, բայց ողորմութիւնը անձին կու տայ իր տկարութիւնները տեսնելու քաջութիւնը: Յուզում եւ ատելութիւն սխալ խորհուրդներու եւ հասկացողութիւններու հետեւանք են: Ողորմութեան հիմքը կը կազմեն ճշգրիտ խորհուրդներն եւ հասկացողութիւնը: Սերտ կապ կայ ողորմութեան եւ հիմաստութեան միջեւ:

Ողորմութեան արգելքներն են.

ա- Յուզումներ- Ասոնք հետեւանք են ներքին մտային բախումներու, որոնք կը ստեղծուին «Ես»էն, հետեւաբար կը խափանեն սիրոյ եւ ողորմութեան ներգործումը:

բ- Հպարտութիւն- Ուրիշներու կողմէ սիրուելու կամ գնահատուելու փափաքն է, որ ծնունդ կ'առնէ «Ես»էն:

Ամէն անձ պէտք ունի ողորմութեան: Երբ կ'երգենք «Տէր ողորմեա» աղերսանքը անկեղծութեամբ ու սրտանց եւ ոչ որպէս «բերնի ծամոց», ան մեր մէջ դժգոհութիւնը կը փոխէ ներողամտութեան, ատելութիւնը՝ բարեկամութեան եւ սիրոյ ու վախն ալ՝ յարգանքի եւ քաջութեան: Ողորմութեան սկիզբը աղօթքն է: Երբ ի նպաստ ուրիշի կ'աղօթենք, այդ կը նշանակէ զանոնք մեր սրտերէն ներս ընդունիլ, անոնց հետ նոյնանալ, անոնց ցաւերուն, չարչարանքներուն, յուզումներուն, առանձնութեան, շփոթութիւններուն եւ վախերուն բաժնեկից ըլլալ: Այս աղօթքը մեր կողմէ կոչ մըն է առ Աստուած որպէսզի անոնք արժանանան Աստուծոյ օրհնութեան: Հոս յարմար է վերյիշել անցեալին մօրս ինծի պատմած 1915ին պատահած դէպքը (Տես «Ինչ է աղօթքը» Գլուխ Է, էջ 173): Ասիկա բացարձակ ապացոյցն է աղօթքի զօրութեան եւ անոր շնորհած Աստուածային ողորմութեան:

Գուժը, Աստուծոյ սիրոյ մարդկային արտայայտութիւնն է: Գուժը արտաքին երեւոյթներէն կարելի է հասկնալ կամ չափել: Ան մտային վիճակ մըն է, որ կը պայմանաւորէ արտաքին երեւոյթը՝ գործունէութիւնը: Ան մտային վիճակ մըն է, որ կը ցանկայ բոլորին տալ սանձարձակ ազատութիւն, ցաւէ ձերբազատում եւ երջանկութիւն:

Գթալ՝ ընդունիլ է չգնահատուիլը:

Գթալ՝ երբեմն, հարցումներ հարցնել է, քան թէ պատասխաններ տալ:

Գթալ՝ ոչ թէ միայն Փիզիքական, այլ նաեւ մտային ազատութիւն տալ է:

Գթալ՝ դռները բանալ է քան թէ գոցել:

Գթալ՝ հաւատք ունենալ է անձին վրայ եւ ազատութիւն տալ ուզածը ընելու:

Գուժը անձին էութեան մաս կը կազմէ: Գթասիրտ ըլլալու համար միայն պարտ ենք անհետացնել մեր եասաէր սովորութիւնները: Երբ կերտենք առողջ ինքնագիտակցութիւն եւ զգայնականութիւն (sensitivity) մեր ճշմարիտ էութեան հանդէպ, առանց վախնալու, տարակոյսի եւ մեղքնալու (pity), բայց բոլորին հանդէպ լաւատեսութեան զգացումով, արժանապատուութեամբ, անկեղծութեամբ եւ ուղղամտութեամբ, գուժը անձին մէջ ինքնաբերաբար ի յայտ կու գայ: Գուժը ինդիր մը կամ դժուարութիւն մը լուծելու համար յառաջ չի գար, բայց գուժէն կը բխի որեւէ գործունէութիւն կամ արարք, որ պիտոյ է:

Գուժը սիրոյ արտայայտութիւնն է, ուրեմն շատ դիւրին է մեր սիրելիներուն հանդէպ գթասիրտ ըլլալ՝ մինչեւ ինքնագոհողութիւն, որովհետեւ զիրենք կը սիրենք: Երբ այս տողերը կը գրէի, հեռատեսիլի լուրերէն իմացայ, թէ Գէպէք (Quebec) նահանգին մէջ, ծերունի մը եւ իր թոռնիկը երբ սառած լիճին վրայ կը

սահէին, սառը կը կոտորի ու պզտիկը ջուրը կ'իյնայ: Մեծ հայրն ալ թոռնիկը ազատելու համար ջուր կը ցատկէ: Դժբախտաբար երկուքն ալ դժուարութեան կը մատնուին: Զիրենք դիտող մեծ մայրն ալ, անոնք ազատելու նպատակաւ ջուր կը մտնէ: Մեծ հայրը կը մեռնի: Մեծ մայրը ենթաջերմութեամբ հիւանդանոց կը փոխադրուի: Փոքրիկն ալ օր մը ետք հիւանդանոցը կը մեռնի:

Արդեօք քանի՞ հոգիներ նոյնը պիտի ընէին օտարի մը համար, մինչեւ իսկ իրենց կեանքը վտանգելով:

Պարտ ենք օտարին տեղ մեր անձը կամ մեր սիրելիներէն մին դնել եւ վարուիլ այնպէս ինչպէս պիտի վարուէինք մեր անձին կամ սիրելիին հանդէպ:

Միթէ Աւետարանին մէջ ալ նոյնպէս չէ՞ գրուած:

«Եւ որպէս կամիչ թէ արասցեն յեւ մարդիկ, այնպէս արասջիչ է- դու- չնոցայ:» (Ղուկաս .9:31)

«Ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք:»

«Եւ եթէ սիրէի դու- չնոցայ սիրելիս յեր, պի՞նչ շնորհ է յեր. պի է- մեղաւորի սիրեն սիրելիս ի-րեանց: Եւ եթէ Բարի ասնէի Բարերարաց յերոց, ո՞ր շնորհ է յեր. պի է- մեղաւորի չնոցայ Գործէն:» (Ղուկաս .9:32-33)

«Եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ շնորհք կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: Եթէ դուք ձեզի բարիք ընողներուն բարիք ընէք, ի՞նչ շնորհք կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն:»

Գիրքի մը մէջ կարդացի հետեւեալ դէպքը: «Գալիֆորնիոյ կենդանաբանական պարտէզներէն մէկուն մէջ, այր եւ կին մը իրենց երկու զաւակներով սեւակապիկներու (chimpanzee) վանդակին առջեւ կեցած զանոնք կը դիտէին: Յանկարծ երկու արու կապիկներ կը յարձակին երրորդ արու կապիկի մը վրայ: Ան ալ բախուստ տալու համար ցանկափակէն վեր կը մագլցի եւ քովի բաժինը կ'անցնի, ուր խորունկ ակազան մը կը գտնուի: Շփոթութեան եւ աճապարանքին մէջ ջուրը կ'իյնայ: Սեւակապիկները լողալ չեն գիտեր: Կապիկը երեք անգամ ջուրին տակ կ'իջնէ եւ վեր կ'ելլէ, յետոյ ալ այլեւս վեր չ'ելլեր: Զիրենք դիտող ընտանիքին այր մարդը, առանց խորհելու եւ վարանումի կը մագլցի դուրսի ցանկափակը, ներս ցատկելով ջուրը կը մտնէ եւ կապիկը դուրս կը հանէ: Պատահածը տեսնող երկու յարձակող կապիկները կը սկսին ներքին ցանկափակէն վեր մագլցիլ: Դիտող ժողովուրդը, կապիկը ազատելու աշխատող անձը զգուշացնելու համար կը պոռայ: Մարդը կապիկը հոն կը ձգէ եւ կը սկսի դէպի դուրսի ցանկափակ երթալ, բայց երբ կը նշմարէ, որ իր ազատած կապիկը ետ ջուր կը սահի՝ տակաւին մահաքունէն լաւ մը չարթնցած: Մարդը նախ իր ընտանիքին կը նայի, յետոյ ալ՝ կապիկին, որ նորէն ջուրին տակ կ'երթայ: Մարդը դարձեալ ջուր կը ցատկէ եւ դուրս կը հանէ զայն: Կապիկն ալ քիչ մը ակելի կը սթափի եւ խոտերը բռնելով իր դուրս քաշուելուն կ'օգնէ: Մարդը վերջապէս ցանկափակին կը հասնի եւ մագլցելով վերջին վայրկեանին դուրս կը ցատկէ: Երբ իրեն կը հարցնեն թէ ինչո՞ւ իր կեանքը նման արարքով մը վտանգի ենթարկած էր, կու տայ հետեւեալ պատասխանը. «Երբ երրորդ անգամ կապիկը ջուրին վրայ ելաւ, մեր նայուածքները իրարու հանդիպեցան եւ իր աչքերուն մէջ տեսայ «ինծի չե՞ս

օգներ» հարցում-աղերսանքը»: Աս, ինքզինքը ուրիշի մը՝ մարդ կամ անասուն, տեղը դնել է: Աս է ճշմարիտ գուժի արտայայտութիւնը: Առանց տրամաբանելու, առանց դատելու գործելն է, ինքնագոհողութիւնն է: Միթէ կամաւոր պատերազմի գացող զինուորն ալ նոյնը չ'ընէ՞ր: Խօսքս վարձկան զինուորներուն համար չէ, որոնք դրամի համար կը պատերազմին: Կարելոր է գտնել եւ կարգալ կամ իմանալ երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառ Հօր Ատրպէյճանի դէմ երկիրը պաշտպանելու գացող զինուորներուն խօսած ճառը եւ տուած պատգամը: Ան, բացարձակ գուժի օրինակ մըն է:

Մարդոց բարեշրջման մակարդակը չափել շատ դիւրին է: Այդ ի յայտ կու գայ իրենց գործածած գէնքերէն: Երբ կ'ուզեն հարցերը լուծել բռունցքով, դաշոյնով, ատրճանակով, ռումբով եւ պատերազմով, արդէն իսկ կը պարզուի իրենց բարեշրջման ցած մակարդակը: Իսկ երբ հարցերը կը լուծեն հասկացողութեամբ, ներողամտութեամբ, առանց վնասելու եւ սիրով, այդ ալ ցոյց կու տայ իրենց բարեշրջման բարձր մակարդակը: Երբեմն որոշ չափով, առանց ատելութեան եւ սէրէն ծագած բարկութիւն մը ցոյց տալ նպատակայարմար է: Մայր մը իրաւացիօրէն կը բարկանայ իր զաւկին: Այդ բարկութիւնը իսկական բարկութիւնն է, մակերեսային է, իր մէջ ատելութիւն չի պարունակեր: Նպատակը օգտակար ըլլալ է:

Երբ հրամանատարը զինուորին կը բարկանայ, գայն սիրելուն համար է: Զինուորին, այդ բարկութեան հետեւանք սորված դասը, օր մը, պատերազմի դաշտին վրայ կեանքը փրկելուն պատճառ կրնայ ըլլալ: Յիսուս ալ չբարկացա՞ւ, երբ տաճարը պղծողները խարազանով դուրս վռնտեց (Տես «Ի՞նչ է մեղքը» Գլուխ ԺԳ էջ 390-91): Մայրս յաճախ կը բարկանար եւ կը փորձէր զիս փայտով ծեծել: Ես կը փախչէի եւ սեղանին տակ կը

մտնէի, որպէսզի աթոռներուն եւ սեղանին ոտքերուն պատճառով ինք չկարենար փայտը պատշաճ ուժով շարժել: Չափահաս տարիքիս քանիցս շնորհակալութիւն յայտնած եմ, որ փոքր տարիքիս ինծի բարկացած էր եւ ծեծած: Որքան որ ալ այն ատեն կը դժգոհէի եւ նոյնիսկ կու լայի, բայց գիտէի թէ ինք զիս չէր ատեր, այլ կը սիրէր: Այդ բարկութիւնը իր ինծի հանդէպ ունեցած սէրէն կը ծագէր: Իր միւս բոլոր արարքները այդ սէրը ցոյց կու տային: Գիտէի, թէ զիս կը սիրէր, որով իրմէ չէի վախնար եւ չարածճիւթիւններս կը շարունակէի: Երբեմն ինքն ալ ճարահաստ բարկութենէ կը դադրէր եւ կ'ըսէր. «Ըրէ, ինչ որ կ'ուզես ըրէ: Սպասէ, երբ հայրդ տուն գայ եւ ըրածներդ իրեն ըսեմ, դուն այն ատեն կը տեսնես»: Չարմանալիօրէն մուկ կը դառնայի, ձայնս ալ կտրած անկիւն մը բարի բարի կը նստէի: Ուրիշներ պիտի կարծէին թէ հօրմէս կը վախնայի: Իրողութիւնը այն էր, որ վախնալու որեւէ պատճառ չունէի: Հայրս, կեանքիս մէջ ապտակ մը իսկ չէ գարկած: Զինք կը սիրէի եւ կը յարգէի: Վստահ եմ փափաքս իրեն նմանիլ էր: Երբ մայրս ի վերջոյ իրեն կը դանգատէր, ինք միայն կը խնդար: Ս. Գիրքն ալ կը յանձնարարէ նման բարկութիւն եւ ծեծ.

«Մի խնայեար խրատել ցորչայ պի թե Ըարկանեա պնա Գաւապանա՝ ոչ մեռանի: Դու Ըարկանեա պնա Գաւապանա, Բայց պանջն նորա փրկեա 'ի մաԸռանէ:» (Լուսկայ ԻԳ:13)
 «Տղայէն խրատը մի կտրեր, Վասն զի եթէ զանիկա գաւազանով ծեծես, չի մեռնիր: Թէեւ դուն անիկա գաւազանով կը ծեծես, Բայց անոր հողին դժոխքէն կ'ազատես:»

«Լնմբոտ-թիւն Բորթովեալ 'ի սիրոյ երիտասարդի. Գաւապան է խրատ Ըռոյ է

’ի նմանէ : » (Լուսնայ ԻԲ : 15)

«Մանուկին սրտին մէջ յիմարութիւնը կապուած է խրատի գաւազանը գանիկա կը հեռացնէ անկէ :»

«Խրատեալս զորդի ին՝ զի այնպէս եղիցի ինչ յոյս թարի . եւ ’ի թշնամանս մի Ըտարտանար անշամբ ինձ : Զի եթէ Ըտրկանէս զնա Բաւապանս՝ ոչ մեռանի . Թայց զանշն նորա փրկէս ’ի մաւտանէ : »

(Լուսնայ ԺԹ : 18)

«Քանի որ յոյս կայ տղադ խրատէ Եւ անոր մահուանը կամակից մի ըլլար :» (Աշխարհաբար թարգմանութիւնը բաղդատամբ գրաբարի լրիւ չէ)

«Խրատեալս զորդի ին՝ եւ ԸանԳոսացի զիւնչ, եւ Գոսցի զարդ անշին ինձ : »

(Լուսնայ ԻԹ : 17)

«Որտե՞ք քու որդիդ, որպէս զի քեզ հանգստացնէ Եւ քու հոգիդ գուարճացնէ :»

Բնութիւնը մեր մէջ զետեղած է որոշ ժառանգական հարկադրիչ բնոյթներ : Մեր ներկայ բնութիւնը այս բնոյթներուն եւ մեր մանկութեան ընթացքին ձեռք բերուած փորձառութիւններուն խմորումն է : Մեր առօրեայ կեանքը կ’ապրինք եւ կը գործենք ենթակայ յառաջ եկած այս բնութեան : Ասիկա մարդկային տկարութիւն մըն է, ինչ որ պէտք է յաղթահարուի : Յիսուս ալ ենթակայ էր ասոնց, բայց ինք յաղթեց այդ տկարութիւնը :

«Յայնժամ ասէ ցնա Յիսուս . երբ յեղոս իմ աստանայ . զի Գրեալ է՝ Տեառն Լսորոշոյ ինձ երկրորդագոյն, եւ զնա միայն որոշեցես : (Մարթեոս Դ : 10)

«Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Ետիս գնա՛ Սատանայ՝ վանն զի գըրուած է թէ՛ Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես ու միայն գանիկա պաշտես:»»

«... Հայր իմ, եթէ Հնար է՝ անցցէ Քաժակս այս յինչէն. Քայց ոչ որպէս եկամիմ, այլ որպէս դո՛ւ: ... Հոգիս յօժար է՝ Քայց մարմինս սոկար:» (Մարկոս ԻԶ: 39, 41)

«... Ով Հայր իմ, եթէ կարելի է, թող այս գաւաթը ինձմէ անցնի. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, Հապա ինչպէս դուն կ'ուզես: ... Հոգին յօժար է, բայց մարմինը սկար»

«... աբբա, Հայր, ամենայն ինչ՝ լէւզ Հնարաւոր է, անցո՞ւ զՔաժակս զայս յինչէն: Քայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դո՛ւ կամիս: ... հոգիս յօժար է՝ Քայց մարմինս սոկար:» (Մարկոս ԺԴ: 36, 38)

«... Աբբա՛ Հայր՝ ամէն բան քեզի Հնարաւոր է, այս գաւաթը ինձմէ անցուր. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, Հապա ինչպէս դուն կ'ուզես: ... Հոգին յօժար է, բայց մարմինը սկար:»

«Զայս խօսեցայ ընդ յեւ՝ զի ընդ իս խաղաղութիւնն ունիցի. յաշխարհի ասոր՝ նեղութիւնն ունիցի, այլ ինչպէս ինչպէս որպէս ես կամիմ:» (Յովհաննէս ԺԶ: 33)

«Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի ինձմով խաղաղութիւնն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջամիտ եղէք, ես աշխարհին յաղթեցի:»

Ճշմարտութիւնը մեր էութիւնն է, հետեւաբար պէտք է նաեւ ըլլայ մեր բնութիւնը: Այս նպատակաւ պարտ ենք հետեւեալ առաքինութիւնները կերտել:

- միշտ ճշմարտութիւնը խօսիլ,
- ոեւէ մէկու կամ բանի վնաս չհասցնել,
- Ֆիզիքական եւ մտային մաքրութիւն եւ սրբութիւն կերտել,
- հաւատք, յոյս ու սէր կերտել,
- եւ այս բոլորին հետեւանք ծառայութիւն եւ գութ կերտել:

Աստուած մեզի դժոխք չի ղրկեր, անկարելի է, քանի ինք սէր է: Դժոխքը մենք կը ստեղծենք եւ ան ալ հոս աշխարհի վրայ է: Միայն սէրն է, որ կրնայ աշխարհին փոփոխութիւն բերել, բայց այդ ժամանակի կը կարօտի: Սէրէն բխող գութն ալ մտային վիճակ մըն է, որ անձին կու տայ ինքնափոփոխութիւն:

Շատ բան կարելի է ամբարել գիրքեր կարդալով կամ դասախօսութիւններ ունկնդրելով, բայց շատ քիչ գիտութիւն կը ստանանք: Ճշմարիտ գիտութիւնը հեզութեան եւ ծառայութեան արդիւնքն է: Իսկական կրօնքը գոյութիւն ունի սիրոյ մէջ եւ ոչ ծիսակատարութիւններու: Շատ լաւ գիտենք, որ բնագիտութիւնը տիեզերքի բոլոր քաշողական ուժերը դասաւորած է եւ կը ջանայ զանոնք բոլորը միացնող օրէնքը գտնել: Տիեզերքի բոլոր քաշողական ուժերը միացնող միակ եւ ճշմարիտ օրէնքը սէրն է:

Ինչպէս արիւնը կը հոսի մեր երակներուն մէջ եւ կեանք կու տայ մարմնոյն, նոյնպէս սէրն ալ կը հոսի մեր էութեան մէջ եւ կեանք կու տայ մեր հոգիին: Սէրը առաքինութիւն մը չէ, ան անհրաժեշտութիւն մըն է: Ապրելու նպատակը սիրելը սորվիլն է, իսկ սիրելու նպատակը ապրիլը սորվիլն է: Սէրը կոյր է, բայց այդ կուրութիւնը տեսողութեան գազաթնակէտն է: Ուրիշը սիրել կարելի է միայն երբ անձը ինքզինք կը սիրէ, ոչ թէ իր «Ես»ը, այլ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Քրիստոսի հետ նոյնանալ Աստուածապաշ-

տուժիւն է, հետեւաբար սէրը եւ այն բոլորը, որ սէրէն կը ծագին, ճշմարիտ Աստուածապաշտութիւնն են: Ինչպէս առանց խտրութեան բոլորը սիրելը Աստուածապաշտութիւն է, նոյնպէս Աստուածապաշտութենէ կը ծագի բոլոր տիեզերքի հանդէպ սէրը:

Բոլորս ալ Աստուծոյ որդիներ ենք, բայց միայն ան որ ճշմարտապէս կը սիրէ, կ'ըլլայ Անոր սիրելի որդին, որուն Ինք կը հաւնի:

«Եւ ահա յայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ Ըստէցայ:»
(Մարքէոս Գ:17)

«Եւ երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. «Ասկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւնեմ եմ»:»

ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ԱԻՐՈՅ ՊՏՈՒՆԵՐԸ:

-Ձերբազատուիլ աշխարհիկ հաճոյքներէ:

-Ձերբազատուիլ պատիժի վախէն: Սէր եւ վախ նոյն տեղ եւ նոյն ժամանակ չեն կրնար գոյատեւել: Վախը պտուղն է եսասիրութեան:

-Ձերբազատուիլ չարի, տխրութեան, թշուառութեան, հիւանդութեան եւ մահուան գաղափարներէ:

-Անձնատուութիւն, նոյնիսկ մ'ինչեւ իսկ ընդունիլ մահը, ինչ որ Յիսուս ըրաւ՝ «Քու կամքդ ըլլայ»:

Մարդկային միտքը զարմանալիօրէն ճկուն է եւ «Ես»ը անձին տրամաբանութիւնը գործածելով կը խեղաթիւրէ ամէն ինչ, եւ.

-Հրապուրիչ կապը կը ներկայացնէ իբր սէր:

-Մեղքնալը (pity) կը ներկայացնէ իբր գուժ:

-Անտարբերութիւնը կը ներկայացնէ իբր անդորրամտութիւն:

Ամէն ինչ, ներառեալ մեր կեանքը, Աստուծմէ մեզի տրուած նուէրներ են, ինչ որ կ'ընենք անոնցմով, այդ կ'ըլլայ մեր նուէրը Աստուծոյ:

Մեզի տրուած նուէրներն են.

Խօսելու կարողութիւն- պէտք չէ գայն գործածենք սուտ խօսելու, այլ ճշմարտութիւնը յայտարարելու:

Զգայու կարողութիւն- Պէտք չէ զգայարանքներուն եւ զգացումներուն տուած հաճոյքներուն ենթարկուիլ, այլ գութի հետեւանք զգալ ուրիշներու ցաւերը եւ ուրախութիւնները, բաժնելով իրենց ցաւը եւ բազմապատկելով իրենց ուրախութիւնը:

Գործելու կարողութիւն- Պէտք է զգուշանանք մեր արարքներով ոեւէ մէկուն վնասելէ: Մեր բոլոր արարքները պէտք է ըլլան բարի եւ օգտակար բոլորին:

Միտք- Պէտք չէ գայն զբաղեցնել եօթը մահացու մեղքերով, այլ գայն գործածել ինքնագսպումի համար եւ դարձնել սիրոյ գործիքի մը:

Իմացականութիւն- Պէտք չէ գայն գործածել նենգութեան համար, կամ գիտութեան մակարդակը բարձրացնելով աշխարհի եւ մարդկութեան գոյատեւումը վտանգող զէնքեր ստեղծել, այլ գայն գործածելով պրպտել եւ հասկնալ արտաքին կեանքի՝ տիեզերքի բնութեան գաղտնիքները եւ ներքին կեանքի Անձին՝ Քրիստոսի խորհուրդը, որպէս զի անառակ որդիին նման, մենք ալ մեր ճամբան գտնենք դէպի ետ՝ մեր Հօր տունը, ուրկէ եկած ենք, եւ ստանանք մեր ազատութիւնը:

Պատշաճ է այս գրութիւնը վերջացնել Պողոս առաքեալի սիրոյ մասին գրած համարներով.

«Եթէ պլեպոս» մարդկան խօսիցիմ եւ պէրեշրակաց, եւ սեր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ պոզիւն որ Հնչէ, կամ իբրեւ պշնջոյս ուր զաւաղէն: Եւ եթէ ունիցիմ պմարգարեութիւն, եւ գիցիցիմ պխորուոր-

դա ամենայն, է- պամենայն Գրդո-Քի-ն-
է- էՔէ ունիցիմ պամենայն Ըսաստոս՝
մինչէ- պէրինա փոփոխելոյ, է- սեր ոչ
ունիցիմ, ոչնչ էմ: Ե- էՔէ Ջամբիցիմ
պամենայն ինչս իմ աղէտասց, է-
մարնիցիմ պարմինա իմ յայրո-մն, է- սեր
ոչ ունիցիմ, ոչ ինչ օգորիմ: Աէր՝
էրկայնամիդ է, խղցրանայ. սեր՝ ո՛չ
նախանչի, ո՛չ ամպարԸս-աճէ, ո՛չ Ըդար-
դանայ. ո՛չ յանդԳնի, ո՛չ խնդրէ պի-ր,
ո՛չ ԳրԳուի, ո՛չ խորԸի պար. ո՛չ խնդայ
ընդ անիրա-ու-Քի-ն, այլ խնդայ ընդ
սրո-Գո-Քի-ն. ամենայնի ցե-է. ամենայնի
Ըսաստայ. ամենէ-ին յո-ասայ. ամենայնի
Ըամբէրէ: Աէր՝ ո՛չ էրբէ՛ն անկանի. էՔէ
մարԳարէո-Քի-նէ էն՝ խափանեացին. էՔէ
լէպո-է՛ լսեացեն. էՔէ Գրդո-Քի-ն՝ խափա-
նեացի. խնայի փոփոխ ՚ի շարէ Գրդեմէ, է-
փոփոխ ՚ի շարէ մարԳարէանանէ, այլ յորժամ
էկեացէ կարարո-մնն, փոփոխ ՚ի շարէս
խափանեացի: Մինչ որդայ էի՝ իբրէ- պորդայ
խօսէի, իբրէ- պորդայ խորԸէի, իրրէ-
պորդայ Ըամարէի. այլ յորժամ էղէ այր,
պորդայո-Քէանն ՚ի Բայ խափանեացի: Այժմ

դեռ անհամար իբրև ընդ հայելի օրինակաւ,
 այլ յայնժամ զեւ յանդիման. այժմ
 խելամոհմոս եւմ զիտր ՚ի շարեւ, այլ յայնժամ
 Գրգայցից՝ որպէս եւ նայն ծանեաւ պիտի
 Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս սէր,
 սոքա երեւելան. եւ մեծ իան պատաս՝ սէր
 է:» (Լ Արնբացիս ԺԳ:1-13)

«Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչող ծնծղաներու պէս: Եւ եթէ մարգարէութիւն ունենամ ու հասկնամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը եւ եթէ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու ու սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ բոլոր ստացուածքս աղքատներուն կերցնեմ ու իմ մարմինս այրուելու տամ եւ սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար: Սէրը երկայնամիտ է, քաղցր է, սէրը չի նախանձիր, սէրը չի գոռոզանար, չի հպարտանար, Անվայել վարմունք չ'ունենար, իրենը չի փնտեր, բարկութեան չի գրգռուիր, չարութիւն չի խորհր, Անիրաւութեան վրայ չի խնդար. հապա ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ: Ամէն բանի կը գիջանի, ամէն բանի կը հաւատայ՝ ամէն բանի կը համբերէ: Սէրը բնաւ չ'իջնար. բայց եթէ մարգարէութիւններ ըլլան, պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դաղարին, եթէ գիտութիւն, պիտի խափանուի: Վասն զի շատէն քիչը գիտենք ու շատէն քիչը կը մարգարէանանք. Բայց երբ կատարեալը գայ, այն ատեն շատէն քիչը պիտի խափանուի: Երբ տղայ էի, տղայի պէս կը խօսէի, տղայի պէս կը խորհէի, տղայի պէս համարում ունէի. բայց երբ այր եղայ, տղայութեան բաները մէկդի ձգեցի: Քանզի հիմա մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց այն ատեն երես առ երես: Հիմա շատէն քիչ մը տեղեակ եմ, բայց այն ատեն այնպէս պիտի ճանչնամ՝ ինչպէս ճանչցուցայ: Ուստի հիմա կը մնայ, հաւատք, յոյս, սէր: Այս երեքը ու ասոնց մեծագոյնը սէրն է:»



Ըսիր թէ ինձի պիտի պատճէս Դու,
 Զարմանի է, թէ այդ ո՞ր է ըլլալու:

Ուր Դու կաս, այնպէզ չկայ
 պատուհաս,

Իսկ ո՞րն է այնպէզ, ուրպէզ Դու
 չիկաս:

(Օմար Խայեամ)



Լուսինը կը խափանէ
արեւին լոյսը,

իսկ Մեղեք՝

Եսդու-Չոյ լոյսն ու յոյսը



-ԺԳ-

ԻՆՉ Է ՄԵՂԹԸ



Ի՞ՆՉ Է ՄԵՂՔԸ

«Լճէնայն որ զմեզս Գործէ, նա՛ է-
 զանօրէնո-թիւն առնէ, է- ինչն իսկ մեղքն
 անօրէնո-թիւն է:» (Լ Յովհաննոս Գ:4)

«Ամէն ով որ մեղք կը գործէ. անիկա անօրէնութիւն
 ալ կը գործէ. եւ բուն մեղքը անօրէնութիւն է:»

Կը թուի թէ օրէնքի դէմ եղած որեւէ մէկ
 արարք մեղք է: Մեղքը յարմար կերպով ուսումնա-
 սիրելու համար պարտ ենք զայն դասաւորել հետեւեալ
 ձեւով.

ա- Աղամական մեղքը (original sin)

բ- Մովսէսի «Տասը Պատուիրանները»

գ- Մահացու մեղքերը

դ- Աններելի մեղքը

ւ- Աղսմարան սեղքը. Կը թուի թէ Աղամ եւ Եւա
 իրենց գործած մեղքին հետեւանք անիծուեցան:
 Դատապարտուեցան ճակտի քրտինքով ապահովել
 իրենց ապրուստը, վերադառնալ հող՝ ուրկէ որ եկած
 էին եւ կորսնցուցին նաեւ յաւիտենական կեանքը:

«Բրբրամբէ՛ երեսաց խոց կերթցես զհաց խո,

մինչէ- դարձցիս յերկիր ուսորի առար. զի

Հող էիր է- ՚ի Հող դարձցիս:» (Մնննդի Գ:19)

«Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ: մինչեւ գետինը
 դառնալդ. ուրկէ առնուեցար. քանզի հող էիր դուն: ու
 հողի պիտի դառնաս:»

Աղամի օրէն ի վեր համայն մարդկութիւնը կը կրէ
 նոյն անէծքը: Ամէն անձ ուրեմն մեղաւոր կը ծնի ըստ
 սաղմոսերգութիւն.

«Լնօրէնո-թեամբ յղացաս, է- ՚ի մեղս

ճնաս զիս մայր իմ:» (Սաղմոս Ծ:7)

«Ահա ես անօրէնութիւնով ծնայ. ու իմ մայրս մեղքով յլացաւ զիս:» (Սաղմոս ԾԱ:5)

Եկեղեցին կ'ըսէ թէ Մկրտութեան Խորհուրդը կը սրբէ Ադամական մեղքը: Յովհաննէս Մկրտիչ կը մկրտէր մեղքերու թողութեան համար: Գրուած է.

«Եւ եկն յամենայն կողմն յորդանանոս, խարոսել մկրտութիւնն ասպաշխարոսութեան 'ի թողութիւնն մեղաց:» (Ղուկաս Գ:3)

«Ու անիկա եկաւ Յորդանանու բոլոր կողմերը. եւ ասպաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր մեղքերու թողութեան համար:»

«Եւ եղէ՛ պի Յովհաննէս մկրտէր յանասպարի, եւ խարոսել մկրտութիւնն ասպաշխարոսութեան 'ի թողութիւնն մեղաց:» (Մարկոս Լ:4)

«Յովհաննէս անասպարին մէջ կը մկրտէր. եւ ասպաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան համար:»

Երբ աշակերտները ի ծնէ կոյր մարդը մատնանշելով Յիսուսի հարցուցին, թէ այդ անձը իր, թէ ոչ իր ծնողքին մեղքերուն համար կոյր ծնած էր, պատասխանը եղաւ.

«Պատասխանի ետ Յիսոս. ոչ զորս զնաս է, եւ ոչ Ըօր եւ մօր իւրոյ. այլ պի յայտնի լիցին Գործիւն Աստուծոյ 'ի զմա:» (Յովհաննոս Թ:3)

«Ոչ ատորն է մեղքը՝ ոչ ալ իր ծնողքին՝ Հապա որպէսզի Աստուծոյ գործերը ատոր վրայ յայտնի ըլլան:»

Մի՛թէ արդա՞ր է Ադամի գործած մեղքին համար անձ մը մեղաւոր ծնի: Ժողովորդային առածը կ'ըսէ. «Ամէն ոչխար իր ոտքէն կը կախուի»: Հակառակ այս բոլորին, չեմ կարծեր թէ մարդ արարած մեղաւոր ծնի: Եթէ այդ

Իրողութիւն մը եղած ըլլար, Յիսուս հետեւեալը պիտի չըսէր.

*Եւ կոշտաց առ ինչն Յիսուս մանուկ մի,
կացոյց պնաս ՚ի մէջ նոցա, եւ ասէ. ամէն
ամէն ասեմ յեւ, եթէ ոչ Գարշնիշ, եւ
լինիջիշ ի Թրեւ պանկորի, ոչ միանիցէ՛լ
յարգայոթիւնն Երկնից: (Մարքէոսի ԺԸ: 2-Յ)*

*Եւ Յիսուս սղայ մը կանչեց իրեն՝ գանիկա անոնց
մէջտեղը կայնեցուց: Ու ըսաւ՝ ձչմարիտ կ'ըսեմ ձեզի՛
Եթէ դարձի չգաք եւ սղոց պէս չըլլաք՝ երկիրքի
Թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք:*

*Ասէ Յիսուս. Թոյլ Գոռէ մանկաւոյդ՝ եւ
մի արգելո՞ւնէ պտոսս Գալ առ իս, պի այդ
պիտեացո՞ր եւ արգայոթիւնն Երկնից:*

(Մարքէոսի ԺԹ: 14)

*Բայց Յիսուս ըսաւ՝ թող տուէք այդ մանր սղոցը՝ եւ
մի արգելէք անոնք ինծի դալէն՝ վասն զի երկիրքի
Թագաւորութիւնը այդպիսինբուն է:*

*Այն օրուայ մանուկները մկրտուած չէին: Եթէ ի ծնէ
մեղաւոր էին, ինչո՞ւ Յիսուս կ'ըսէ թէ երկիրքի
արքայութիւնը անոնց նման եղողներուն համար է:*

*Եթէ անձ մը խորհի թէ ինք մեղաւոր ծնած է,
աշխարհիկ կեանքի նկատմամբ իր ունեցած հայեացքը
կը տարբերի այն հայեացքէն, երբ խորհի թէ ծնած է
աստուածային շնորհքով:*

Բ- ՄՈՎԱԷՍԻ «ՏԱՍԸ ՊԱՏՈՒՐԱՆԵՐԸ».- Շատ լաւ
գիտենք, թէ հին կտակարանը գրուած ժամանակ
մարդկային հասկացողութեան մակարդակը Յիսուսի
սորվեցուցածները հասկնալու մակարդակէն բաւական
տարբեր էր: Ըստ իրենց, Աստուած բարկացող, պահանջ-
կոտ եւ վրէժխնդիր էր: Հատուցումի համար զոհ կը
պահանջէր: Անոնք կը կարծէին թէ Աստուած գիրենք

իրենց մեղքերուն համար կը պատժէր: Մինչդեռ իրենք անգիտակից էին, թէ պատահածները իրենց խորհուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն հետեւանքն էր: Յիսուս ցոյց տուաւ, թէ Աստուած մեզի միայն լաւագոյնը կը կամենայ: Ինք սէր ըլլալով, միայն սէր կը տեղացնէ մեր վրայ: Յանցանքը մերն է, որ կը մերժենք իր շնորհները եւ մեր ընթացքով կը խափանենք անոնց ներգործութիւնը, այսպէսով ալ կը զրկուինք անոնց պարգեւած երանութենէն եւ յաւիտենական կեանքէն:

«**Կի եղիջիտ որդիտ Ըօր յերայ որ յերկնան է. կի կարեգակն իր Զագէ ՚ի վերայ շարաց եւ Բարեաց, եւ աժէ անչրեւ ՚ի վերայ արդարոց եւ մեղաորաց:**»
 (Մարտեոսի Ե:45)

«Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիներն ըլլաք. վասն զի իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը զրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ:»

Մովսէսի ժամանակ ժողովուրդը տակաւին պատրաստ չէր ըմբռնելու միութեան գաղափարը եւ երկուութիւնը կը տիրապետէր անոնց գիտակցութեան: Մովսէս պարտ էր անոնց կեանքի դրական եւ ժխտական արարքները սահմանող օրէնքները տալ, մեղմացնելու անոնց խորհուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն հետեւանքները: Ելից Ի:1-17 կը ներկայացնէ տասը պատուիրանները.

1- Ինծմէ գատ ուրիշ աստուածներ չունենաս:

2- **Դուն քեզի կուռք չշինես:** Հարկ է այս երկուքը միասին վերլուծել: Ամէն ինչ որ մեր խորհուրդներու եւ միաքի ուղղութիւնը կ'որոշէ ու կը գրաւէ, որ կը տարբերի ներքին Քրիստոսէ, կուռք կը

նկատուի: Միթէ Յիսուս ալ նոյնը չակնարկեց հետեւեալ խօսքերով.

«Ոչ ո՛վ կարէ երկուց գերանց շառայել. կամ սմին ասորից՝ եւ սմեանն սիրիցէ. կամ սմին մեծարիցէ՝ եւ սմեանն արճամարճիցէ. ոչ կարէ՛լ Աստուծոյ շառայել եւ մամոնայի:» (Մատթէոս .9:24)

«Մարդ մը չի կրնար երկու տիրոջ ծառայութիւն ընել. վասն զի կամ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ. կամ մէկուն պիտի յարի՝ եւ միւսը պիտի արճամարճէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի:»

3- Տէրոջը, բու Աստուծոյդ անունը պարապ տեղ բերանդ չառնես: «Տէրունական աղօթքի մեկնաբանութիւն» գրութեան մէջ (Գլուխ Է) «Քու Անունդ սուրբ ըլլայ»-ի բացատրութիւնը այն էր, որ ամէն անուանեալ բան Աստուած կը ներկայացնէր: Ուրեմն հարկ էր տեսնել Աստուած ամենուրէք, ամէն անձի եւ ամէն բանի մէջ: Միայն այն ատեն կրնանք անդրադառնալ թէ Իր անունը սուրբ է: Քանի որ ամէն բան զինք կը ներկայացնէ, բոլոր անուններն ալ Իր անուններն են: Մովսէսի ակնարկութիւնը այն է, թէ երբ բազմաթիւն մէջ միութիւնը չտեսնենք, այն ատեն Աստուծոյ անունը պարապ տեղ բերան առած կ'ըլլանք: Ենթական ինչ որ ալ ըլլայ՝ անձ կամ առարկայ, եթէ անոր մէջ Աստուած չենք տեսներ, արտասանուած անունը սխալ նպատակով գործածած կ'ըլլանք: Ասոր նշանակութիւնն ալ մեր աշխարհիկ կեանքին պարապի ապրուած ըլլալն է:

4- Եթեքորդ օրը սուրբ պահէ: Մարդ արարած այն աստիճանի տարուած էր եւ զբաղ իր աշխարհիկ պատրանքային կեանքով, որ Մովսէս պարտադրիչ օրէնք դրաւ Շաբաթ օրը սուրբ պահել, որպէսզի գոնէ շաբթուան մէկ օրը ժողովուրդը ինքնապատրաստու-

Թեան՝ խոկոումի եւ մտախոհութեան առիթը ունենայ: Օրը սուրբ պահելուն նպատակը գործելը կամ չգործելը չէ, այլ անդրադառնալ եւ սորվիլ է, թէ պէտք է կերտել մտային սրբութիւն, միտքի ուղղութեան փոփոխութիւն, որ անհրաժեշտ է: Այսպէսով մեր բոլոր օրերը սուրբ կ'ըլլան:

5- Պատուէ քու հայրդ ու մայրդ: Այն անձը, որ իր ծնունդին միջոց եղող իր երկրաւոր հայրն ու մայրը, որոնք կը տեսնէ ու անոնց խնամքը եւ սէրը կը վայելէ, չի պատուեր, ինչպէ՞ս կրնայ իր երկնաւոր Հայրը պատուել, որուն չէ տեսած, այն Հայրը, որուն կը պարտի իր էութիւնը եւ կեանքը:

6- Սպանութիւն մի ընէր: Անձ մը սպանել կը նշանակէ Աստուծոյ ընտրած մէկ արտայայտութիւնը ջնջել: Մեր իւրաքանչիւր արարքը մեր ապագան կը կերտէ: Ոչ թէ Աստուած իբր դատաւոր կը քննէ ամէն արարք եւ կը հատուցանէ համապատասխան պարգեւ, կամ կը տնօրինէ պատշաճ պատիժ, այլ ամէն անձի արարքէն կը ծնի դրական կամ ժխտական արդիւնք, որը մենք կը համարենք պարգեւ կամ պատիժ: Ամէն խորհուրդ, ամէն խօսք եւ ամէն արարք կ'որոշեն մեր ունեցած զօրութեան որակը եւ կ'ազդեն անոր վրայ: Մեր մարմնի ամէն մէկ բջիջի եւ անոնց մանրէներուն իւրաքանչիւր հիւլէին թրթռացումի յաճախականութիւնը կախեալ է մեր արարքներէն եւ ենթակայ է փոփոխութեան: Աս մեր ընդհանուր թրթռացումի յաճախականութիւնը կ'որոշէ: Այս թրթռացումն է որ կ'որոշէ մեզի պատահած բոլոր ժխտական եւ թէ դրական պատահարները: Ամէն պատահար իր թրթռացումի յաճախականութիւնը ունի: Անոնք, որոնց թրթռացումը ներդաշնակ են եւ կը համապատասխանեն մեր թրթռացումին, կը պատահին մեզի: Մարդոց սխալ ըմբռնումը այն է, թէ պատահածները

Աստուածոյ պարգեւները կամ պատիժներն են: Ճշմարտութիւնը այն է, որ մեր արարքները կ'որոշեն մեր ապագան: Աստուած միայն բարիք (զօրութիւն) կը տեղացնէ: Մենք կ'որոշենք մեր օգտուելու զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը:

«Կմեղաւորս՝ Լուսաթեւն շարիչ. է- արդարոց՝ Լասցեւն քարո-թիւնի:» (Լուսկայ ԺԳ:21)
«Մեղաւորներուն ետեւէն ձախորդութիւն կ'երթայ. Բայց արդարներուն բարիք կը հատուցուի:»

Մեր հիւանդութիւններուն պատճառներն ալ մեր մեղքերն են: Ճիշդ ասոր համար ալ Յիսուս բժշկելու համար կ'ըսէր. «մեղքերդ ներուած ըլլան»:

«... Եւ Կեսեալ Յիսուսս կ'Լասարս նոցայ՝ ասե ցանդամալոյցն. Թողեալ լիցին իւր մեղի ին:» ... «Կնշ Կիւրիսն է. ասել՝ Թողել լիցին իւր մեղի ին, Թե ասել՝ արի է- շրջեաց:» (Մարթեոս Թ:2,5)

«... Եւ Յիսուս անոց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյցին. քաջալերուէ որդեակ քու մեղքերդ քեզի ներուած են:» ... «Քանզի ո՞րը աւելի դիւրին է. քու մեղքերդ ներուած են ըսելը. թէ ելիր ու քալէ՝ ըսելը:»

7- Շնութիւն մի ընէր: Շնութիւնը մէկէ աւելի անձերու հետ սեռային յարաբերութիւն ունենալ է, ինչպէս շուները կ'ընեն: Շնութեան պատճառը ընդհանուր առմամբ սեռային նախագրադոմի հետեւանք է: Սեռային յարաբերութիւնները պէտք է ծառայեն միայն ծննդագործութեան նպատակին, որովհետեւ անոնք պատճառ կ'ըլլան մեծ զօրութեան վատնումի: Զօրութիւն մը, որ անձը պէտք ունի նաեւ իր մարմնոյ եւ մտքի բոլոր միւս գործունէութիւններուն համար: Մինչդեռ շնութեան նպատակը ծննդագործութիւնն է՝ այլ մոլութիւն է, անտեղի բարձր որակով զօրութեան

կորուստ: Ոչ թէ պատիժի ենթակայ մեղք է, այլ այդ գորուծեան վատնումը ինքնին իսկ պատիժն է: Շնուծեան արարքը մարմինին դէմ գործուած մեղք մըն է:

«ճիւղերու-ի ՚ի պոռնկութենէ: Զամենայն մեղսս զոր է- Գործէ մարդ՝ արդարոյ մարմնոյ ի-րոյ է. իսկ որ պոռնկին՝ յի-ր մարմինն մեղանշէ:» (Լ Կորնթացիս .9:18)

«Պոռնկութենէ փախէք. ամէն մեղք զոր մարդ կը գործէ. իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի իր մարմինին դէմ կը մեղանշէ:»

Բոլոր միւս մեղքերը արգելք կը հանդիսանան պատշաճ գորուծեան մեր մարմնէն ներս ներգործութեան, բայց սերնդագործութենէ տարբեր նպատակով եղած սեռային յարաբերութիւնները կը վատնեն այն գորուծիւնը, որ արդէն իսկ մարմինին մէջն է: Յովհաննու Աւետարանի Ը. գլխուն մէջ կը հանդիպինք կնոջ մը, որ շնուծեան ընթացքին բռնուած է, բայց Յիսուս զինք չի դատապարտեր այլ կ'ըսէ.

«... է- ասէ Յիսուս. է- ոչ էս դատապարտեմ զ՛եզ, էրի՛ յայսմէ-տէ մի մեղանշէր:» (Յովհաննոս Ը:11)

«... ու Յիսուս ըսաւ անոր. ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու ասկէ ետեւ մեղք մի գործեր:»

8- Գողութիւն մի ընէր: Ինչ որ ցանես ան կը հնձես: Ինչպէս գողութիւնը, նոյնպէս ալ բոլոր արարքները կ'որոշեն անձին դիրքը: Աս, արարքներու մեր վրայ ազդեցութիւն ունենալու կարողութիւնը ցոյց տուող օրինակ մըն է: Եթէ կը հաւատանք վերոյիշեալ առածին, եթէ մենք կանոնը խախտենք, անխուսափելիօրէն նոյնն ալ մեզի կը պատահի: Իսկ ըստ Սիրաքի եթէ մենք մէկ գողնանք, մեզմէ եօթը

պիտի գողցուի: Երբեմն չենք հասկնար եւ հետեւցնել մեր կեանքին մէջ պատահածները եւ կ'ըսենք թէ բախտ չունինք: Իրողութիւնը այն է, որ ամէն բան կատարեալ է եւ ինչ որ կը պատահի պէտք է պատահի: Եթէ կը դժգոհինք, այդ դժգոհութիւնը պէտք է ուղղենք մենք մեզի, քանի որ մեր կեանքը կերտողը մենք ենք:

«Որդեակ՝ մի շար Գործեր, եւ շար ոչ
Լապոցե վեպ: Յանիրաւաց ՚ի Բաց լեր, եւ
նոյա մերժեացին ՚ի վէն: Յակօսս անիրաւ
մի սերմաներ, զի մի Ընչեացեա
Եւթնապարիկ շար ՚ի նմանէ:» (Սիրաչ Է:1-3)
«Do no evil, and evil will never befall you. Stay away from
wrong, and it will turn away from you. My son, do not sow
the furrows of injustice, and you will not reap a sevenfold
crop.» (The Apocrypha- Sirach 7:1-3)

9- Սուտ վկայութիւն մի ընէր: Վկայութիւնը խօսք մըն է, որ դարձեալ կ'որոշէ անձին դիրքը: Աստուած ճշմարտութիւն է: Սուտ խօսիլ, իրողութիւնը չըսել, ճշմարտութիւնը ուրանալ է: Հետեւաբար Աստուած ուրանալ է: Ոչ միայն սուտ խօսիլը, այլ մեր բոլոր խօսքերը մեր վրայ իրենց ժխտական կամ դրական ազդեցութիւնները կ'ունենան:

10- Դրացիիդ ունեցածներուն մի ցանկար: Յանկութիւնը խորհուրդ մըն է որ կ'ազդէ անձին վրայ: Ուրիշի ունեցածին ցանկալ կը նշանակէ դժգոհ ըլլալ իր ներկայ վիճակէն կամ ունեցածէն: Մեզի տրուած է ամէն ինչ, որ մեզի պիտոյ է եւ մեր դիրքին համապատասխան: Երջանկութիւնը յաւելեալ ստացուածք դիզելու մէջ չէ, այլ ունեցածով գոհանալուն մէջն է: Յանկութենէն կը ծնի ունենալու փափաքը, որուն կը յաջորդէ ստանալու ջանքը: Երբ վերջապէս փափաք-

Լածը ձեռք կը ձգուի, անոր տուած երջանկութիւնը այնքան կարծատեւ կ'ըլլայ որ վատնուած ջանքը, ժամանակը եւ զօրութիւնը չ'արդարացնեն: Վատնուած ջանքը, ժամանակը եւ զօրութիւնը ետ չեն գար:

Յատկանշական է, որ պատուիրաններուն թիւ 8, 9 եւ 10 կը վերաբերին արարքներու, խօսքերու եւ խորհուրդներու: Նպատակը միայն գողութիւնը, սուտ վկայութիւնը եւ ցանկութիւնը չէ, այլ ուշադիր ըլլալ է, որպէսզի մեր բոլոր խորհուրդները, խօսքերը եւ արարքները ըլլան բարի եւ օգտակար, այսինքն Աստուածահաճոյ: Ոչ թէ մեղքը օրէնքէն ծնունդ կ'առնէ, այլ օրէնքն է որ ցոյց կու տայ, թէ ինչ բան մեղք է: Նոր Կտակարանին մէջ ալ նոյնպէս գրուած է:

«Զի 'ի Գործոց օրինաց, ոչ արդարացի ամենայն մարմին առաջի նորա. խանչի օրինօփն է Գիտութիւն մեղաց:»
(Հռոմայեցիս Գ:20)

«Վասն զի անոր առջեւ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը. քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը:»

Գ- ՄԱՆՁՈՒ ՄԵՂՔԵՐԸ.- Հետեւեալները կը ներկայացնեն եօթը մահացու մեղքերը. հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն եւ բղջախոհութիւն (ցոփութիւն), որոնք բոլորն ալ «Ես»ին յատկութիւններն են: Ուրեմն այն անձը, որ այս մեղքերէն որեւէ մին կը յայտնաբերէ, կը նշանակէ թէ իր կեանքին ղեկը յանձնած է իր «Ես»ին: Յիսուս, այս բոլորէն միայն բարկութիւնը ցոյց տուաւ, ան ալ միայն մէկ անգամ, երբ տաճարէն վռնտեց անոնք, որոնք զայն կը պղծէին: Այս արարքը կարելի է նաեւ վերացական իմաստով ալ առնել: Տաճարը կը ներկայացնէ մեր մարմինները: Աւետարանն ալ նոյնը կը գրէ:

«Ո՞չ Գիտէ՛լ եթէ Կաճար է՛լ Ասորո-ժոյ,
 Է- Ըստի Ասորո-ժոյ Բնակեալ է 'ի յեզ»
 (Լ. Կորնթացիս Գ:16)

«Ձէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
 Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի» :

Նման Յիսուսի, մեր բարկութիւնն ալ պէտք է ըլլայ
 մեր մէջ գտնուող եօթը մահացու մեղքերուն հանդէպ,
 որպէսզի կարենանք զանոնք վտարել մեր
 «տաճարներէն» եւ չարտօնել որ մեզ պղծեն: Սակայն,
 ուրիշի հանդէպ բարկութիւն ընդունելի չէ: Տաճարէն
 վտարուող վաճառորդներն ալ վերացականօրէն կը
 ներկայացնեն այդ մահացու մեղքերը:

Ընդհանուր առմամբ այս եօթը մահացու մեղքերը
 ինքնին գոյութիւն չունին: Անոնք դրական հոգեվի-
 ճակի պակասի հետեւանք են: Ինչպէս մութը ինքնին
 գոյութիւն չունի, այլ լոյսի պակասի հետեւանքն է:
 Եթէ կ'ուզենք մութի մէջ չմնալ, պարտ ենք լոյս
 վառել: Նմանապէս ատելութիւնը գոյութիւն չունի, այլ
 սիրոյ պակասն է: Երբ կ'ըսենք թէ պէտք է վտարել այս
 մեղքը՝ ատելութիւնը մեր էութենէն, կ'ուզենք ըսել, թէ
 պէտք չէ խափանենք սիրոյ հոսանքը: Բոլոր մեղքերն
 ալ դրական երեւոյթներու պակասն են:

Բարկութիւնը սիրոյ, խաղաղութեան, հասկացո-
 դութեան եւ ներողամտութեան պակասն է:

Նախանձը սիրոյ եւ գոհունակութեան պակասն է:

Ազահութիւնը եւ որկրամոլութիւնը գոհունակու-
 թեան պակասն են:

Մուլութիւնը սիրոյ եւ ծառայութեան ոգիի
 պակասն է:

Բղջախոհութիւն (ցոփութիւն) (lust) գոհունակու-
 թեան պակասն է, սիրոյ հոսանքի սխալ գործածու-
 թիւնն է եւ վատնումն է: (Տես վերեւ, տասը պատուի-
 րաններու «Մի շնար» մասը, էջ-387):

Այս մեղքերը վտարելու համար պարտ ենք ոչ թէ ժխտականին՝ մեղքերուն վրայ աշխատիլ, այլ՝ դրականին, որոնց մեր մէջ գործելուն արգելք կը հանդիսանանք: Ուրեմն, մեզի պարտ է սէր, գոհունակութիւն, անձնատուութիւն, ծառայութեան ոգի, խաղաղութիւն, հասկացողութիւն եւ ներողամտութիւն կերտել: Մեր հոլթենէն ներս այս դրական յատկութիւններուն պատշաճ գործունէութիւնը խափանողը մեր «Ես»ն է: «Ես»ի չէզոքացմամբ ճամբան կը բացուի անոնց մեր մէջ ի յայտ գալուն, որով ինքնաբերաբար կը վտարուին եօթը մահացու մեղքերը:

Այս մեղքերը ինչո՞ւ մահացու մեղք կը կոչուին: Շատերու մօտ կարծիքը այն է, թէ եթէ մեր աշխարհիկ կեանքի ընթացքին այս մեղքերը գործենք, վերջին դատաստանին յաւիտեան մահուան պիտի դատապարտուինք՝ դժոխք պիտի երթանք: Այս ըմբռնումը սխալ է: Երբ այս մեղքերը կը գործենք, կը նշանակէ, թէ Աստուծոյ սիրոյ հոսանքը մեր հոլթենէն ներս պատշաճ կերպով չի ներգործեր: Հետեւաբար մենք ալ ինքնաբերաբար հոգեպէս մեռած կ'ըլլանք Աստուծոյին երանութեան կեանքին: Յիսուսի հետեւեալ խօսքերը կը յայտնաբերեն այս իրողութիւնը.

«Լաւ ցնա Յիսուս. եկ պննի իմ, եւ թոյլ

դուր մեռելոցն թաղել քան պեռելալս

իւրեանց:» (Մարթէոս Ը:22)

«Յիսուս ըսաւ անոր. «Եկուր իմ ետեւէս ու թող տուր մեռելներուն, որ թաղեն իրենց մեռելները»:»

«Լաւ ցնա Յիսուս. թող պեռելալսն թաղել

պեռելալս իւրեանց, եւ դու երթ՝ պարգոմեա

պարգայոթիւն Լսարո-Չոյ:» (Ղուկաս Թ:60)

«Յիսուս ըսաւ անոր. «Թող տուր մեռելներուն որ
Թաղէն իրենց մեռելները, բայց դուն գնա Աստուծոյ
Թագաւորութիւնը քարոզէ»»

դ- Անսերելի սեղքը.- Միակ աններելի մեղքը Ս.

Հոգիի դէմ եղած մեղքն է:

«Լճէն ասեմ յեւ, պիտի ամենայն թողցի
որդոց մարտկան մեղք՝ եւ
Հայհոյութիւնն՝ որչափ եւ Հայհոյեացեն,
Բայց որ Հայհոյեացէ պնդեն սորք, ոչ
ունիցի թողութիւն յաւիտեան, այլ
պարտապան լիցի յաւիտեանց մեղաց:»

(Մարկոս Գ: 28-29)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի
մարդոց որդիներուն եւ Հայհոյութիւնները՝ որչափ որ
Հայհոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյէ,
յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա
յաւիտեանական դատաստանին պարտաւոր պիտի ըլլայ:»

«Եւ ամենայն որ ասէ Բան պարտոց մարտ
ոց, թողցի նմա. Բայց որ պնդեն սորք
Հայհոյեցէ, մի թողցի նմա: (Ղուկաս ԺԲ: 10)

«Ամէն ով որ Որդի մարդոց դէմ բան ըսէ, պիտի ներուի
անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն
ընէ, պիտի չներուի անոր:»

«... ամենայն մեղք եւ Հայհոյութիւն
թողցին մարտկան, Բայց պնդոցն
Հայհոյութիւնն մի թողցի:» (Մարտկոս ԺԲ: 31)

«... Ամէն մեղք ու Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց.
բայց Սուրբ Հոգեւոյն դէմ եղած Հայհոյութիւնը պիտի
չներուի մարդոց:»

**Ս. Հոգիի զօրութիւնը կը տեղայ բոլորին վրայ՝
անխտիր: Այդ զօրութիւնը չընդունիլ եւ անկէ**

չօգտուելի փախցուած առիթ մըն է, որ ինքնին աններելի մեղքն է, վասն զի անցած ժամանակը եւ առիթը ետ չեն գար, որով փախցուած ժամանակին եւ առիթին կորուստէն ծնած մեղքն ալ աններելի կը համարուի:

Ահա, Քրիստոս կայնած դրան առջեւ, դուռը կը բարխէ՝ ներս մտնելու համար: Արդեօք դուռը չբանալէ եւ զինք ներս չառնելէ աւելի մեծ մեղք կա՞յ, կամ արդեօք ներելի է՞ նման մեղք մը: Այնքան ատեն որ կեանք կայ, կայ նաեւ յոյս Աստուածայայտնութեան: Կարեւորը՝ եղած սխալին անդրադարձումն է: Ըստ Ս. Գրքի կը թուի թէ ամէն մարդ մեղաւոր է: Կարդանք հետեւեալ համարները.

«Զի մարդ ոչ Գոյ 'ի վերայ երկրի՝ որ Գործէ զբարիս, եւ ոչ մեղանշիցէ:»

(Ժողովօղ Է:21)

«Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ չկայ որ աղէկութիւն ընէ. ու մեղք չգործէ:» (Ժողովողի է:20)

«Բանցի ամենեւին մեղան. եւ նոսալեալ էն 'ի փառացն Աստուծոյ:»

(Հոռովմայեցիս Գ:23)

«Վասն զի ամէնը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակասած են:»

Ճշմարտութիւնը այն է որ մեր մեղքերը մեր գործած արարքները չեն, այլ մեր անոնց հանդէպ ունեցած գաղափարներն են, եւ անոնց մեր վրայ ունեցած հակազդեցութիւնները: Մեր մեղքը, մեր խորհուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն հանդէպ զմեզ յանցաւոր զգալն է: Կը կարդանք.

«Եղէ ըստ Գոյնցի զմեղս իմ ակամայ մեղոցեալ.» (Յովբ ԼԼ:33)

«Եթէ յանցանքներս մարդու պէս ծածկեցի: ու անօրէնութիւնս ծոցիս մէջ պահեցի.»

«Չմէղս իմ ցոփացի չեզ, եւ
պանօրէնութիւնս իմ ոչ թաթկեցից 'ի չէն: Լասացի թէ պատմեցից ինչէն պմէղս իմ, եւ
դոս թողցես պամենայն ամպարչոսութիւնս
մէղաց իմոց» (Սաղմոս ԼԼ:5)

Իմ մեղքս քեզի յայտնեցի. ու իմ անօրէնութիւնս
չծածկեցի. ըսի թէ Տէրոջը պիտի խոստովանիմ
յանցանքներս. ու դուն թողուցիր իմ մեղքիս
անօրէնութիւնը.» (Սաղմոս ԼԲ:5)

*Մարդ արարած լաւ կը ճանչնայ ինքզինքը, ինչպէս
նաեւ գիտէ իր մեղաւոր ըլլալը: Ճիշդ ասոր համար
Յիսուս ըսաւ, թէ թող մեղք չունեցողը առաջին քարը
նետէ: Ոեւէ մէկը չի յանդգնեցաւ:*

«... ասէ ցնոսա անմէղն 'ի չէնջ, նախ' նա
ընկեացէ չար 'ի վերայ դորա:» (Յովհաննոս Ը:7)
«... ու ըսաւ անոնց. ձեզմէ անմեղ եղողը՝ առաջ
անիկա թող քար ձգէ ասոր վրայ:»

*Երբ անգիտակցաբար արարքներ գործենք, կը թուի թէ
անոնք մեղք չեն համարուիր, քանի որ հակազդեցու-
թիւն չեն ունենար: Յիսուսի հետեւեալ խօսքը կը թուի
ստուգել այս իրողութիւնը:*

«Լաւ ցնոսա Յիսոսա. եթէ կոյր եի՛տ' ոչ եր
չեր մէղ. Բայց արդ ասէ՛ թէ ցեասնեմէ,
եւ մէղէն չեր 'ի չեզ Լասոսարեալ են:»
(Յովհաննոս Թ:41)

«Յիսուս ըսաւ անոնց՝ եթէ կոյր ըլլայիք. դուք մեղք
չէիք ունենար. բայց Հիմա կ'ըսէք թէ կը տեսնեք.
ասոր համար ձեր մեղքը ձեր վրայ կը մնայ:»

Ուրեմն ի՞նչ է մեղքը:

«Լճեանայն որ ՚ի նա է Հասարակալ, ոչ մեղանշէ. Է- ամենայն որ մեղանշէ, ոչ էրեւս զնա՝ Է- ոչ թանեա- զնա:»

(Լ Յովհաննոս Գ:6)

«Ամէն ով որ անոր մէջ կը կենայ. մեղք չի գործեր. ամէն ով որ մեղք կը գործէ զանիկա տեսած չէ ու զանիկա ճանչցած չէ:»

Մեղքը Քրիստոս չճանչնալն է:

Մեղքը միտքի ուղղութեան «սա», «տա» (դա) եւ «նա»ի վրայ ըլլալն է:

Մեղքը Ս. Հոգիի զօրութեան ներգործութեան արգելք ըլլալն է:

Մեղքը Յիսուսի ցոյց տուած ճամբէն չերթալն է:

Մեղքը այս պատրանքային կեանքով գոհանալն է:

Մեղքը անսահման սէր չունենալն է:

Մեղքը կեանքին սանձը «Ես»ին տալն է:

Մեղքը բազմաթիւ ին մէջ միութիւնը չտեսնելն է:

Մեղքը Աստուածայայտնութեան համար պատշաճ անձնաւորութիւն մը չկերտելն է:

Մեղքը յաւիտենական կեանքի եւ Աստուծային երանութեան համար անսահման փափաք չունենալն է:

Մեղքը Աստուած անտեսելն է:

«Ե- այս իսկ է դասարան. զի լոյս եկն յաշխարհ, Է- սիրեցին մարդիկ զնա-ար ասա-ել խն զլոյս. ...» (Յովհաննոս Գ:19)

«Այս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, ...»

Երեմեայ մարգարէ կ'ըսէ.

«Զի երկոս-ս շարին Գործեաց թողովոս-բո իմ. զիս թողին զաղբերս ջրոյ կենդանոս: Է- փորեցին ի-րեանց Գո-բս թակոս, որդ

«**Ն կարացին ունել ջուր :**» (Երեմիա Բ:13)
 «Վասն զի իմ ժողովուրդս երկու չարութիւն գործեց. Ջրս՝ կենաց ջուրին աղբիւրը թողուցին. եւ իրենց գութեր փորեցին. ծակոտ գութեր՝ որոնք չեն կրնար ջուր պահել:»

Մեղքի հետեւանքը մահ է, այսինքն յաւիտենական կեանքէ զրկուիլ եւ ոչնչանալ՝ երբ պատրանքային կեանքը վերջանայ:

«**այլ իրաւէանշիւր՝ ի մեղս իւր մեռցի .**
 ...» (Երեմիա ԼԼ:30)

«Հապա ամէն մարդ իր անօրէնութեանը համար պիտի մեռնի. ...»

Ջարմանալիօրէն, մարդիկ նոյնիսկ մահուան անկողինին մէջ ալ կը շարունակեն մեղք գործել:

«**սանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրոսմ: Եկաց նա յամենայն ճանադարս որ ոչ է բարի, եւ ՚ի շարէ նա ոչ յանցրացաւ :**» (Սաղմոս ԼԵ:5)

«Իր անկողինին մէջ անօրէնութիւն կը մտածէ. ու կը կենայ այնպիսի ճամբու մէջ որ աղէկ չէ. եւ չարէն չի գգուիր:» (Սաղմոս ԼԶ:4)

Այս մեղաւոր կեանքէն մարդուն համար ապագայի ի՞նչ յոյս կայ: Քանի որ կեանք կայ, մտային ուղղութիւն փոխելու եւ «վերստին ծնունդ»ի համար միշտ յոյս կայ:

«**... այսպէս ասէ Տէր . միշէ որ Գլորիան՝ ո՞չ յառնիցէ . կամ որ խորորին՝ ո՞չ էսս դառնայցէ :**» (Երեմիա Լ:4)

«... Տէրը այսպէս կ'ըսէ. Միթէ անոնք պիտի իյնան ու պիտի չելլէ՞ն. կամ մէկը ճամբայէն կը խոտորի ու ետ չի՞ դառնար:»

Կարելի է բոլոր մեղքերը ակնթարթի մը մէջ մոռցուին եւ ջնջուին, որով մեղքերու թողութեան համար շատախօսելու եւ երկարաշունչ աղօթքներու կարիքը չկայ:

«՚ի շարխօսութենէ ոչ ապրեսցիս ՚ի մեղաց, թէ խնայես ՚ի շրթոռնս՝ իմաստոսն լինիս:»

(Լուսնայ Ժ:19)

«Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ. բայց իր շրթունքները գալովը խելացի է:»

Ի՞նչպէս ջնջել մեղքերը:

Ա- ԿԱՐԵԼԻ Է ԱՆՊՔԵՐԸ ՁԱԶԵԼ ԿԱՐԵԼՈՎ: ՆԵՐԵԼ

բոլոր անոնց, որոնք մեզի հանդէպ մեղանշած են, բայց ալ աւելի կարելոր է անձին ինքզինք ներելը:

«Զի եթէ թողոցո՞ւմ մարդկան պանծանան նոցա, թողցէ եւ յէպ չայն յեր երկնասոր:» (Մատթէոս Զ:14)

«Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները. ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ:»

Ստեփանոս ներեց զինք քարկոծողները եւ ճիշդ իր մահէն առաջ երկինքը բացուեցաւ իրեն:

«Եւ նա իր լի չորսով Արթով. Հայեցայն երկնս՝ եւ երես պիտաս Լստոս. ... եւ ասէ՝ ահա յիտանեմ պերկնս Բայեալ՝ եւ պորտի մարտոյ պի կայ ընդ աջմէ Լստոս: ... Եւ խարկոծ առնէին պիտեփանոս, որ կարտայր եւ ասէր. Տէր Յիսոս՝ ընկալ պորտի իմ: Եր թոռնր՝ եւ աղաղակեաց ՚ի յայն Բարձր. Տէր մի Համա-

բիբր դոոցա զայս մեղս: Եւ զայս իբրեւ
 ասաց՝ ննջեաց. ...» (Գործք արարելոց Է:55,58-59)
 «Բայց անիկա Հոգիով Սրբով լեցուած՝ երկինք նայեցաւ
 եւ տեսաւ Աստուծոյ փառքը. ... եւ ըսաւ. ահա կը
 տեսնեմ երկինքը բացուած ու Որդին մարդոյ՝ Աստուծոյ
 աջ կողմը կայնած: ... Եւ կը քարկոծէին Ստեփանոսը.
 որ աղօթք կ'ընէր ու կ'ըսէր. Տէր Յիսուս ընդունէ իմ
 Հոգիս: Ու ծունկի վրայ զալով բարձրաձայն
 աղաղակեց. Տէր այս մեղքը մի սեպեր ատոնց. եւ զայս
 ըսելով ննջեց:»

*Պետրոս Յիսուսի հարց կու տայ, թէ քանի անգամ
 պէտք է ներել: Պատասխանը կ'ըլլայ եօթանասուն
 անգամ եօթը, այսինքն՝ ամէն անգամ:*

«Լաւ ցնա Յիսուս. ոչ ասեմ չեզ՝ թէ
 մինչեւ յեթն անգամ, այլ՝ մինչեւ
 յեթանասնեկին եւթն:» (Մարքէոս ԺԷ:22)
 «Յիսուս անոր ըսաւ. Քեզի չեմ ըսեր թէ մինչեւ եօթը
 անգամ. Հասկա մինչեւ եօթանասուն անգամ եօթը:»

*Յիսուս չանտեսեց մեղաւորները, այլ նոյնիսկ անոնց
 հետ ճաշեց: Աս, անոնց մեղքերը չտեսնել, կամ արդէն
 ներած ըլլալ է:*

«Եւ եղեւ իբրեւ Բապտիստ էր նա՝ ի
 րանն, եւ ահա մախաւորէ եւ մեղաւորէ
 եկեալ եւ Բապտիստ էին ընդ Յիսուսի՝ եւ
 ընդ աշակերտոս նորոս: (Մարքէոս Թ:10)
 «Ու եղաւ որ տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ
 շատ մաքաւորներ եւ մեղաւորներ եկած ու սեղան
 նստած էին Յիսուսի ու անոր աշակերտներուն հետ:»

*Երբ անառակ որդին իր հօրը տունը վերադարձաւ,
 ներողութիւն խնդրեց թէ՛ Աստուծմէ, թէ՛ ալ իր
 հօրմէն: Հայրը երբ զինք տեսաւ արդէն ներած էր եւ
 այս պատճառով ալ ինճոյք սարքեց: Կարեւորը այն էր
 որ երբ ան որոշեց հօրը տունը վերադառնալ, արդէն*

անդրադարձած էր իր սխալին՝ մեղքերուն ու ետին թողած էր զանոնք: Կերպով մը ինք ինքզինք ներած էր, փոխած էր իր մտքի ուղղութիւնը «սա», «տա» (դա) եւ «նա» է դէպի «Հօրը տունը»: Արդեօք մենք ալ կ'անդրադառնա՞նք մեր մեղքերուն եւ կ'որոշե՞նք մեր երկնաւոր Հօր տունը վերադառնալ:

«յարոցեալ Գնացից աս Ըայր իմ, ե-
ասացից ցնա. Ըայր՝ մեղայ յերկինս՝ ե-
ասաջի իոյ, ե- ոչ ե-ս եմ արժանի կոշէլ
որդի ին.» (Ղուկաս ԺԵ:18)

«Ելլեմ երթամ իմ Հօրս եւ ըսեմ անոր. Հայր մեղանչեցի
երկինքին դէմ ու քու առջեւդ. ու ալ արժանի չեմ քու
որդիդ ըսուելու.»

Մէկ կորսուած ոչխարի առակէն ետք, Յիսուս ալ նոյնը չ'ըսէ՞ր, թէ մէկ ապաշխարողի համար մեծ ուրախու-
թիւն կ'ըլլայ:

«Լմէն ասեմ յեւ. զի այսպէս
որախոտեի-ն յերկինս վասն միոյ մեղա-որի
որ ասաշխարիցէ, ինն իննսոտ-ն ե- ինն
արդարոյ՝ որոնց շիցէ պիտոյ
ասաշխարոտեի-ն:» (Ղուկաս ԺԵ:7)

«Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ
երկինքը մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ. քան
թէ իննսունը ինը արդարներու համար՝ անոնց
ապաշխարութիւն պէտք չէ:»

բ- Մեղը Կ'ԱՆՇԵՏԱՆԱՅ ԵՐԲ ԱԵՐՈ ԿԸ ՏԻՐԷ ԱՆՁԻՆ ԱՅՔ:

Եթէ սէրը կը տիրէ, կը նշանակէ թէ Աստուած կը
տիրէ, քանի որ Աստուած սէր է: Կը կարդանք.

«Վասն որոյ ասեմ իեւ. Թողեալ լիցին ամա
մեղի ի-ր Բաստ-մի, զի յոյժ սիրեաց: Զի

որո՞ւմ շարք թողո՞ցո՞ւ՝ շարք սիրէ, Ե-
 որո՞ւմ սակա՞ւ՝ սակա՞ւ: Եւ սակ ցնա՞. Թող-
 եալ լիցին ինչ մեղքի ինչ:» (Ղուկաս Է:47-48)

«Ասոր համար կ'ըսեմ քեզի. ներուած են ասոր շատ մեղքերը վասն զի շատ սիրեց. բայց որու որ քիչ կը ներուի անիկա քիչ կը սիրէ: Ու ըսաւ անոր. քու մեղքերդ ներուած են:»

«Սախ ինչն սլամե՛նայն սէր սէրդ որ ունել ընդ
 միմեանս. սի սէր՝ Չա՜նկէ սլասլո՞ւթիւն
 մեղաց:» (Լ Պեդրոս Դ:8)

«Եւ ամէն բանէ առաջ իրարու հետ սրտանց սէր ունեցէք. վասն զի սէրը մեղքերու բազմութիւնը կը ծածկէ:»

«...Եւ որ ուղղութեամբ խնդրեն սնա՞
 Գրոցեն սլասլո՞ւթիւն:» (Լուկաս Ժ:9:6)

«Ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ անօրէնութիւնը կը քաւուի ...»

Համայն մարդկութեան ներկայ կացութիւնը կը թուի օրէ օր վատթարանալ: Ազգերու միջեւ անհամաձայնութիւններ, սիրոյ պակասը, մոլեռանդութիւններ, ծայրահեղ արարքներ, թշնամութիւն, ատելութիւն եւ ազահութիւն կը թուին հասարակ եւ սովորական ակնկալութիւնները լլալ: Լրագիրներէն, ճայնասփիւռէն եւ հեռատեսիլէն ստացուած լուրերը առհասարակ ժխտական լուրեր են, դրական լուրեր հազուադիւս կ'իմացուին: Պէտք չէ մոռնանք որ ժխտական լուրերը, նման պարապ տակառի, շատ աղմուկ կը հանեն:

Որքան որ մեղքը կը թուի բազմանալ, Աստուծոյ շնորհներն ալ ալ աւելի կը բազմանան: Հոգեկան գետնի վրայ եւ գիտակցութեան մակարդակի բարձրացման նկատմամբ շատ աւելի մեծ յառաջդիմութիւն կայ: Բայց «պարապ տակառ» չըլլալուն ինքզինքը չի

յալտարարեր: Ս. Գիրքն ալ նոյնը կ'ըսէ.

«Բայց օրէնք 'ի ներքն անկան, զի
յանցանէն Բաշմասցին. զի որ առաւել
եղէն մեղէն, առաւել էա յաւելան
չնորՀին:» (Հոովմայեցիս Ե:20)

«Սակայն օրէնքը մէջտեղ ինկաւ որպէս զի յանցանքը
չատնայ. բայց ուր աւելի եղաւ մեղքը. ալ աւելի եղաւ
չնորհքը:»

Գիտակից մարդը չի յուսահատիր, այլ իր բոլոր
ջանքովը կ'աշխատի ինքնափոփոխութեան նպատակին,
չէզոքացնելով «Ես»ին բռնապետութիւնը՝ զայն խաչին
վրայ մահուան դատապարտելով:

«Զայս Գիտաստէիզ զի Հին մարդն մեր
խաշակից եղէն նորա, զի խափանէացի
մարմին մեղացն, մի էա Զառայել մեզ
մեղացն: Զի որ մեռանին՝ արդարացեալ է
'ի մեղաց անցի: Իսկ եթէ մեռաի ընդ
Քրիստոսի, Հաւարամի թէ է կէցցոտի
ընդ նմա:» (Հոովմայեցիս Զ:6-8)

«Զայս գիտանաք որ մեր Հին մարդը անոր Հետ
խաչուեցաւ. որ մեղքի մարմինը փճանայ. որպէս զի
ասկէ ետեւ մեղքի չծառայենք: Վասն զի ան որ մեղքի
մեռած է. մեղքէ արդարացած է: Արդ եթէ մենք
Քրիստոսի Հետ մեռանք. կը հաւատանք որ անոր Հետ
պիտի ապրինք ալ:»

«Ես»ին մահով շատ դիւրին է մեր կեանքին դեկը
Քրիստոսի տալ: Պողոս առաքեալ ալ նոյնը կը
յանձնարարէ.

«Մի այսոտեցիտ թափափոքեցն մեղքի 'ի
մահկանացոտ մարմինա յեր, Հնաշանդել

ցանկոթեանց նորա: Եւ մի պարտապարտեմ
 պանդուխտ չեմ պէն անիրաւոթեան մեղացն .
 այլ պարտապարտեմ պանձինս ամենայն ար-
 արտոթեան Լստոթոյ, որպէս 'ի մեղաց'
 'ի պանդուխտ . Եւ պանդուխտ չեմ' պէն ար-
 արտոթեան Լստոթոյ: » (Հոգևոց Գ: 12-13)

«Ուստի ալ մեղքը չթաղաւորէ ձեր մահականացու
 մարմինին վրայ. որ անոր ցանկութիւններուն Հնազան-
 դիք: Եւ ձեր անդամները անիրաւութեան գործիք ըլլա-
 լու մի ընծայէք մեղքի. Հապա ձեր անձերը Աստուծոյ
 ընծայեցէք. որպէս թէ մեռելներէն ողջնցած. եւ ձեր
 անդամները արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ:»

**Այս վերոյիշեալ վերջին մէջբերումը նաեւ հարկ է
 կարդալ մինչեւ քսան եւ երրորդ համարը:**

**Հին կտակարանի ժամանակ մարդոց հասկացո-
 ղութեան մակարդակը այն էր թէ Աստուած զոհ կը
 պահանջէր:**

Բայց ըստ Աւետարանի Մատթէոս առաքեալ կը գրէ.

«Երթայ՛ ռասարո՛ւմ, պինչ է՛ պողորմոթեանն
 կամ իմ, եւ ոչ պտու: ...» (Մատթէոս Թ: 13)
 «Գացէք սորվեցէք թէ ի՞նչ է այս խօսքը. Ողորմութիւն
 կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ. ...»

Աստուած զոհ չ'ուզէր այլ խոնարհ սիրտ:

«Ողորմեա ինչ Լստոթ, ըստ մեծի
 ողորմոթեան ինձ, ըստ Բապոմ Գլոս-
 թեան ինձ, ինչեա պանօրէնոթեանն
 իմ» (Սաղմոս Ծ: 1)

«Զճանապարհս իմ ողորմ արա ինչ ըստ
 Բանի ինձ, եւ մի ցորեացեն ինչ

ամենայն մեղքի : » (Սաղմոս ՃԺԹ : 133)

« Ի կարդալ իմում լուսար ինչ Աստուած ըստ արդարութեան, 'ի նեղութեան ինչ անդորր արարեր . ողորմեա ինչ եւ լուս աղօթից իմոց : Որտի՛ն մարտկան՝ մինչեւ յե՞րժ ե՛ն խորասիրտի . ընդե՞ր սիրէ՛ն զնանրութիւն, եւ խնդրէ՛ն զսիրութիւն : Ծանկերո՛ւն զի սխանշելիս արար Տէր արժոյ իրում . եւ Տէր լուսիցե ինչ 'ի կարդալ իմում առ նա : Բարկանայ՛ն՝ եմի մեղանշէ՛ն . զոր ինչ առե՛ն 'ի սիրտս յեր յանկողինս յեր զշացարո՛ւն : Մասոյցէ՛ն պարարա՞տ արդարութեան, եւ յոսացարո՛ւն 'ի Տէր : Բազումն առե՛ն թե՛ ո՞ր ցոյցէ մեզ զբարութիւն . նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց իոց, եւ ետոր ուրախութիւն արտից մերոց : Ի պրոջոյ ցորենոյ Գինոյ յիշոյ իրեանց լցոցեր զնոսա : Խաղաղութեամբ յայս եւ 'ի սոյն ննջեացո՛ւն եւ զարթիցո՛ւն . զի դո՛ւ Տէր միայն առանձին յոսով իով թնակեցոցեր զմեզ : » (Սաղմոս Դ)



«... առ Յիսուս Հայ՝ օրհնեաց եւ երեկ, եւ եր
աշակերտրացն՝ եւ ասէ․

առե՛լ կերայ՛ի՛ այս է մարմինն իմ :
Եւ առեալ Քաժակ Գոհացաւ՝ եր նոցա եւ ասէ․

արժե՛լ ՚ի դմանէ ամենեւնի՛ն, զի այդ

է արիւնն իմ նորոյ ուխտի,

որ ՚ի վերայ Քաջմայ Հեղու ՚ի Քողո-Քիւն մեղաց :»

(Մարտէոս Ի, 9 : 26-28)



ԵԿԵՂԵՑԻՆ ՀԸՅՊԸՆԸՆ

Եկեղեցին Հայկական՝ ծննդաւանձնն է Ընդհանուր
 Ինչպէս խորայր մընդարձակ, պարզ ու խորոհանկ, մտք ու լոյս,
 Իր Գաւիթով Հիւրընկալ. իր լայն թեմով ու Հեռուն
 Սանգուն իր լոռ խորանով՝ որ կարծես նաւ մէջ ծփուն... :

Եկեղեցին Հայկական էս աշխոյ Գոց կը պեանեմ
 Ու կը շնչեմ, կը լսեմ, իր Յիսուսով մանկարեմ
 Իր Սեղանէն մխացող Գոլայ Գոլայ խոնկերով...
 Եւ իր պարերը ցնցող աղօթիկներով ալեխոով... :

Եկեղեցին Հայկական Բարձր թերթն է Հաւարիկն
 Իմ պարերու, որ Հողէն ցայն խոր աս խոր Հանեցին
 Ու երկինքէն իջուցին ցօղ աս ցող, անմտ աս անտ,
 Ու Բաղուտեցան անոր մէջ, Հանդարարութեամբ Հեղութեամբ :
 Եկեղեցին Հայկական՝ մեծ զարագայր մէջ Բանուած
 Որո՞ւ ետեւ, Սկիզբն մէջ կ'իջնէ ինկը Լսարուած,
 Որո՞ւն առջեւ Բլխահակ՝ կոգայ իմ այգս ամբողջ
 Յաղորդել անցեալին Հաց ու Գինով կենսաւորող :
 Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց
 Սաւահանգիստ մէջ խաղաղ, ցոլար Գիշերին՝ Հոլոր է Բոց,
 Ու Գոթակեզ ցերեկին՝ անհաւ մըն է ըստուերոց
 Ուր շոշաւաններ կը ծաղկին շարականի Գեղին մօր... :
 Եկեղեցին Հայկական՝ ամեն մի խորին ցալ Գեղինի
 Դեպի երկինք Քարձրացող Գաղտնի ճամբայ մը ունի :
 Եկեղեցին Հայկական՝ Հայ Հոգիին էս մարմնոյն
 Գրահանդերձն է փայլուն, մինչ իր խաշերն էն դաշոյն
 Եւ սանգակներն էն Բոմբիւն էս երգն է միշտ յաղթութիւն... :

Սահան Թ' Էլեան



-ԺԴ-



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԲ ԴԱՏԱՐԱԳԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Պատարագի բուն բացատրութեան չանցած, անհրաժեշտ է որ հասկացողութեան գետին մը պատրաստենք: Հայաստանեայց Եկեղեցին, ուրիշ Քրիստոնեայ եկեղեցիներու եւ ուրիշ կրօնքներու շարքին, ծիսակատար եկեղեցի մըն է (ritualistic). այսինքն, իր պաշտամունքը կը կատարուի ծէսերով:

Ծէսերը ունին որոշ կարգ ու սարք, ընդհանրապէս կը կատարուին երգեցողութեամբ եւայլն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքը կը բաղկանայ ժամերգութիւններէ եւ Ս. Պատարագէ, որոնց մասին պիտի անդրադառնամ եւ մէջբերում պիտի ընեմ քիչ յետոյ:

Ի՞նչ է ծէսը եւ ծիսակատարութիւնը: Ի՞նչու ծէս եւ ծիսակատարութիւն: Ծիսակատարութիւնը եւ ծէսը դիցաբանութեան մը կատարումն է եւ Ֆիզիքական գետնի վրայ անոր հաստատումը (ritual is enactment of a mythology): Անգլերէնի մէջ «myth» բառը երկու իմաստ ունի. երբ ըսուի «do not believe that, it is a myth» հոս «myth»ին իմաստը առասպել է: Բայց երբ ըսուի «mythology expresses the deepest realization and yearnings of humankind», հոս ան կը թարգմանուի որպէս դիցաբանութիւն: Քանի որ ծէսը եւ ծիսակատարութիւնը կատարումն են դիցաբանութեան, ուրեմն պէտք է նախ հասկնալ թէ ի՞նչ է դիցաբանութիւնը:

Դիցաբանութիւնը որքան որ ալ այլազան երեւայ զանազան եւ տարբեր մշակոյթներու մէջ, իր խորքին կը պարունակէ շատ մը խորհրդանիշեր եւ պատկերներ, որոնք հասարակաց են բոլոր մշակոյթներուն մէջ, ինչպէս վերոյիշեալ անգլերէն նախադասութիւնը

կ'արտայայտէ: Այս խորհրդանիշերը կ'արտայայտեն ամենախորքին ըմբռնումներ, իրողութեան թափանցումներ եւ ճշմարտութեան ձգտումներ: Այս խորհրդանիշերը Ֆիզիքական եւ հոգեկան ուժերէ մղուած, ծնունդ կ'առնեն իբր ծէս եւ ծիսակատարութիւն, մեզ ուղղելու եւ առաջնորդելու համար մեր երկրային կեանքի ճամբորդութեան ընթացքին: Ինչ որ ալ ըլլան կեանքի պայմանները, դիցաբանութիւնը միշտ օգտակար կրնայ ըլլալ մեզ լուսաբանելու, հանգստացնելու, սփոփելու, քաջալերելու, զօրացնելու եւ օգնելու, նաեւ ինչու չէ, մեզ խթանելու եւ մղելու որպէսզի իրագործենք մեր փափաքը եւ կատարելագործենք մեր անձը: Դիցաբանութիւնը կը ծագի էութեան խորքերէն, որ մտածումներու եւ խօսքի հասանելիութենէն դուրս է, շատ աւելի անդին ու հեռու: Ճիշդ այդ պատճառով ան ունի այնպիսի զօրութիւն մը, որուն միջոցաւ կրնայ հաւատքը ազատ արձակել եւ ձերբազատել մշակոյթի հարկադրումէն եւ շղթայումէն: Դիցաբանութիւնը իր ծնունդը կ'առնէ խորհուրդէն (mystery) եւ բոլոր աշխարհը կ'առաջնորդէ դէպի այդ խորհուրդը եւ անոր զանազան տարածքներուն: Եւ ահա այս է անկիւնաքարը եւ հիմը պատարագին: Առանց այդ խորհուրդին՝ Աստուածային Լոյսին ոչ մէկ բան արժէք կ'ունենայ եւ մեր կեանքին բոլոր նպատակը կը կորսնցնենք: Ճիշդ ասոր համար պատարագը կը սկսի «Խորհուրդ խորին»ով:

Քանի որ ժամերգութեանց շարքաւորումին պսակը կամ գագաթնակէտն է պատարագը, անոր բուն բացատրութեան չսկսած, պարտ ենք բացատրել ժամերգութեանց իմաստը: Աս, կերպով մը կը դիրքորոշէ եւ կ'իմաստաւորէ պատարագի դերը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամերգութիւնները,

որոնք անգուգական են, եթէ լիովին կատարուին, նոյն ինքն կեանքը կը ներկայացնեն: Այս ժամերգութիւններու շարքաւորումը կը ներկայացնէ մարդկային անկումը եւ ձգտումը այդ Աստուածային լոյսին եւ ի վերջոյ միանալը Անոր:

Եկեղեցական օրը կը սկսի արեւամուտին եւ կ'աւարտի պատարագով: Երեկոյեան Ժամերգութիւնը, որ Շաբաթ երեկոններ կը կատարուի, կը կոչուի նաեւ Կիրամնաքի Ժամերգութիւն: Կը ներկայացնէ մեր կեանքի երեկոն, երբ արդէն հաւատացեալը Լոյսէն իր կապը խզած, կը ձգտի այդ Լոյսին արժանանալ: Լոյսի ձգտումը շատ յստակ է այս ժամերգութեան մէջ:

Դպիրները կ'երգեն «Լոյսս պարբ» երգը, ապա կղերականը իր Մաղթանքին մէջ կ'ըսէ. «Դո՛ւ ես լոյսս Գողեթի, սորբ՛ ես սոսաջին լոյսս. ... ես պլոյսս ի կենդանի, Տէ՛ր. Զագետա՛ ՚ի սիրտս մեր»:

Երեկոյան Ժամերգութեան կը յաջորդէ Խաղաղական Ժամերգութիւնը: Ենթական կը ձգտի խաղաղութեան, ինչ որ յայտնի է «Շնորհեա՛ մեզ» երգին մէջ. «Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, ՚ի Գիշերի պերկնային պխաղաղութիւն ին. ... Ես Իշխան խաղաղութեան հայր Ըանդերջեւոյ յաւիտենին. Տէր Եսորոսա՛ ընդ մեզ է»: Այս ձգտումը յայտնի է նաեւ քահանային աղօթքին մէջ. Առանց խաղաղութեան անկարելի է Լոյսի ծագումը:

«Շնորհեա՛ ես պմեզ, Տէ՛ր, անխրո՛վ խաղաղութեամբ պԳիշերս անցոցանել. »:

Խաղաղականին կը յաջորդէ Հանգստեան Ժամերգութիւնը: Քահանան իր աղօթքին մէջ կ'ըսէ.

«Եւ այժմ աղաշեմէլ զէւզ, Տէր, Լսիրո՞ւս մեր, զՀանգիսիս Գիշերիս շնորհէ՛ա խաղաղութեամբ անցո՞ցանէլ, եւ Հասանիլ ՚ի պաշտօն առաօրո՞ն» : Երբ ենթական, Աստուծոյ շնորհքով, իր ձգտած խաղաղութեան կը տիրանայ, քունէ արթննալու եւ մահուանէ դէպի կեանք վերադառնալու ժամը հասած է: Որպէսզի Լոյսը ծագի մեր սրտերը պէտք է հանգիստ ըլլան:

Ղուկասու աւետարանին մէջ գրուած է.

«Վասն Գիշերանց եւ ողորմութեան Տեառն մերոյ, որով յայ արասցէ մեզ. Լրեգակն ՚ի Բարձանց. երեւել որոց ՚ի խաւարի եւ ՚ի սրտերս մաւո՞ւ նսրէին. ողորմել զորս մեր ՚ի Ճանապարհս խաղաղութեան.» (Ղուկաս Լ:78-79)

«Մեր Աստուծոյն գթած ողորմութեանը համար, որով Ծագող արեգակը վերէն մեզի այցելութեան եկաւ՝ իսաւարի եւ մահուան ստուերի մէջ նստողներուն լոյս տալու՝ ու մեր սրտերը խաղաղութեան ճամբուն մէջ շտկելու.»

Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամերգութիւններու շարքաւորումին մէջ յաջորդ ժամերգութիւնը Գիշերային Ժամերգութիւնն է, որ պէտք է կատարուի առաւօտուն, արեւածագէն առաջ: Ժամերգութիւնը կը սկսի «Յիշեսցո՞ւնէ ՚ի Գիշերի» երգով: Հաւատացեալը 12 անգամ կը հրաւիրուի արթննալու կամ արթնութեան:

Պօղոս առաքեալի Եփեսացիներու գրած խրատին մէջ կը կարդանք.

«...արի որ ննջեաղ, եւ կանգնեա՛ց ՚ի մեռելոց, եւ լոսասորեացէ պէ՛տեալ-Քրիստոս» (Եփեսացոց Ե:14)

«... Արթնցի՛ր, դուն որ կը քնանաս՝ եւ կանգնէ մեռելներէն ու Քրիստոս քեզի լո՛յս պիտի տայ:»

Քահանան, հետեւելով այս խրատին, գոհութիւն կը յայտնէ իր աղօթքին մէջ. «Գոհանամէ՛ պէ՛են, Տէր Լսրոսաժ մեր, որ պարթոսցեր պէ՛տեալ ՚ի Հանգստեանէ ինոյ շնորհիւ ողորմութեան ին: Զարթո՛ւ պէ՛տեալ մեր արդարութեամբ առ ի՛նչ, Տէր Լսրոսաժ մեր, զի տեսնեն աշխարհ մեր պիտեանութիւնն ին»:

Գիշերային ժամերգութեան կը յաջորդէ Առաւօտեան ժամերգութիւնը: Հաւատացեալը իր հոգեկան քունէն արթնցած Աստուած կը փառաբանէ եւ դարձեալ կը ձգտի այն Լոյսին եւ խաղաղութեան: Այս ժամերգութեան ընթացքին կ'երգուի «Փա՛ռէ՛ ՚ի Բարձրեան Լսրոսոյ» եւ «Սորբ Լսրոսաժ» երգերը: Եւ քահանան կ'ըսէ. «Գոհանամէ՛ պէ՛են, Տէր Լսրոսաժ մեր, որ երեւելի լոսոյ ինչ պարճացոցեր պամենայն արարածս ին. իսկ իմանալի լոսոյ պարտիւնայ ինչ պամենեան լոսասորեցեր պահապանալս ՚ի ինչ»:

Ժամերգութիւնը կ'աւարտի «Անձն՛ որդի՛, պարթի՛, Ը՛արսին լոսոյ ցոռէ՛ աւտի՛» երգով: Երբ երգեցողութեանց բառերուն իմաստին թափանցելով երգենք պիտի զգանք անոնց զօրութիւնը եւ մեզ մղելը դէպի այն Լոյսը, զորս արդէն կը պաշտենք:

Յաջորդ Ժամերգութիւնը Արեւագալի Ժամերգութիւնն է: Ասիկա սկիզբէն մինչեւ վերջը Լոյսի փառաբանութիւնն է, միանգամայն՝ աղաչանք, որպէսզի այդ Լոյսը ծագի նաեւ մեր մէջ: Կ'երգենք. «...Զաօհ'ն 'ի Ըոօի» մեր սլոյսն է՝ իմանալի»: Կղերականը իր Մաղթանքին մէջ կ'ըսէ. «Լուսովոյն է՝ Քրիստոս՝ ամենեւեան լուսաօրէցաւ»:

Լոյսի այս վերջին հրաւերէն յետոյ կը կատարուի Հաշու Ժամերգութիւնը, որ կը բաղկանայ 3 մասերէ: Ծաշի Ժամերգութիւնը կը կատարուի այն օրերուն երբ պատարագ չի մատուցուիր: Իսկ Արեւագալի արարողութեան կը յաջորդէ Պատարագը՝ Ժամերգութեանց գագաթնակէտը:

Ուրբաթը, Յիսուսի չարչարանքներուն եւ մահուան օրն է: Այս պատճառով ալ Ուրբաթ օրերը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ պատարագ չի մատուցուիր: Այդ օրերուն պատարագին կը փոխարինէ ճաշու Ժամերգութիւնը: Քանի որ տակաւին չարչարանքի (suffering) ենթարկման կեանքին մէջն ենք, եւ չարչարանքի պատճառը մեր «Ես»ն է, մինչեւ որ այդ «Ես»ը (ego)ն խաչին վրայ չզոհենք ու չմեռնենք, պատարագի հաղորդութեան պատրաստ չենք: Ծաշու Ժամերգութիւնը պատարագի մասնակցութեան պատրաստութեան վերջին հանգրուանն է: Ենթական ճաշելու՝ սեղան կը հրաւիրուի, բայց տակաւին սեղան նստելու պատրաստ չէ, որովհետեւ չէ կարողացած իր «Ես»ին ազդեցութենէն ինքզինք ձերբազատել: Այս կը ներկայացնէ համայն մարդկութիւնը, ի բացառեալ մի քանիներէն՝ Յիսուս, Պուտտա, Քրիշնա, Րամա եւայլն: Որովհետեւ պատրաստ չենք եւ մինչեւ որ կարենանք «Ես»ը խաչը հանել եւ զոհել տակաւին ողորմութեան

պէտք ունինք: Ճիշդ ասոր համար ճաշու ժամերգութեան երեք մասերն ալ կը սկսին. «Ողորմեա ինչ Լսփոփոշ, ըստ մեջի ողորմութեան խոմ, ըստ բազմամ գլխութեան խոմ, խաւա զանօրէնութիւնս իմ» սաղմոսով: Պատարագը կը պատկանի Յարութեան, «Ես»ին մահուընէ յետոյ Քրիստոսի Յարութեան եւ այդ Լոյսին մեր մէջ ծագման: Քրիստոնէութիւնը այս կը կոչէ փրկութիւն, իսկ Պուտտայականութիւնը՝ չարչարանքէ ազատում: Երկուքն ալ նոյնն են: Եթէ երեւոյթը դիտենք մեծաշխարհային (macrocosmic) անկիւնէ, զայն կը կոչենք փրկութիւն, իսկ եթէ դիտենք մանրաշխարհային (microcosmic) տեսանկիւնէ, զայն կը կոչենք չարչարանքէ ազատում: Երկուքն ալ նոյնն են: Եթէ չարչարանքէ ազատում փրկութիւն չէ, հապա ի՞նչ է: Այս երեւակայական տարբերութիւններու համար կ'ըլլան վիճաբանութիւններ, անհասկացողութիւններ, հակառակութիւններ, նոյնիսկ պատերազմներ:

Ուրեմն պատարագի ծէսը կը կատարենք վերապրելու եւ մենք մեզի յիշեցնելու համար այն դիցաբանութիւնը, որ կը ծագի մեր խորհրդաւոր խորքէն (mysterious depth) կամ (Higher Self), մեզ ուղղելու համար ճշմարտութեան ճամբան, դէպի այդ խորհուրդը (mystery), որ պէտք է ըլլայ մեր ձգտումը եւ կեանքի նպատակը:

Պատարագ բառը կը նշանակէ գոհ եւ նուիրում:

Պատարագիչը, այսինքն քահանան, ունի երկու դեր: Ինք փայլուն եւ սպիտակ զգեստներ՝ լուսոյ զգեստ հագուած, որուն մասին քիչ ետք պիտի անդրադառնամ, ժողովուրդին եւ մարդկութեան առջեւ կը ներկայացնէ Քրիստոս - Աստուած: Ան կը բարձրանայ խորան, որ աւելի բարձր բեմի վրայ կը գտնուի, խորհրդանշելով հոգեկան գետնի վրայ մեր

բարձրագոյն էութիւնը՝ Քրիստոս (Higher Self): Քահանան խորանին առջեւ՝ Աստուծոյ առջեւ, կը ներկայացնէ մեզ՝ համայն մարդկութիւնը: Այս պարագային սպիտակ զգեստը կը խորհրդանշէ մարդուս իր «Ես»ին հետեւանքով եղած աղտեղութիւններէն մաքրուած վիճակը: Ինչո՞ւ երկու դերերը կը կեդրոնանան մէկ անձի վրայ: Ասոր բուն նպատակը մենք եւ Աստուած երկուութիւնը եւ զատողութիւնը մէջտեղէն վերցնել է: Ուրեմն շեշտը այն է, որ միակ իրողութիւնը Աստուած է եւ մենք Աստուծոյ մէջ մէկ արտայայտութիւններն ենք: Ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը՝ նման քահանային, կը ներկայացնէ իր «Ես»ը՝ մարդկային էութիւնը եւ իր բարձրագոյն էութիւնը՝ Քրիստոս:

Սարկաւազը օրուան արարողապետն է (master of ceremonies): Ան ի պատշաճի, ժողովուրդին կ'եղանակէ որոշ հրահանգներ. «Աստուծոյ Երկրպագութեան», «Պրօսթրոմէ», «Սաղմոս ասացէ՛ք...»...:

Պատարագը կը բաղկանայ չորս գլխաւոր մասերէ: Պատարագի առաջին մասը «ՊՆՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԲՆԺԻՆ»ն է: Ժողովուրդը պատարագի պէտք է պատրաստուած գայ, քանի որ քահանան, որ ժողովուրդը կը ներկայացնէ, պատարագի պատրաստուած կու գայ: Այդ օր պէտք է ծոմ պահուի: Մոմապահութիւնը մտային պատրաստութեան մը արտաքին երեւոյթն է: Մոմապահութեան համար Եսայեայ մարգարէ հետեւեալը կը պատուիրէ.

«Ն զանապոստի պահա ընդրեցի՝ ասէ Տէր: Այլ լո՛յժ պկընճիուն անիրաւոնութեան. խակեա՛ պխարդախոնութիւն Բունութեան վաճառաց խոց: Արշակեա՛ պնեղեալս Բողոս-

Դեռ ամբ, եւ զամենայն մտորակա անիրա-
 -տութեան պատարտեա՛: Բրդեա՛ շաղցելոց
 զԼաոց ին, եւ զաղձաբոս անյարկա րա՛ ի
 րոտն ին. ե՞լէ րեասանիցեա զմերկա՛
 զԳեցոցոցանիջի՛ր, եւ յընթանեալ զա-
 ին ին՝ զակն մի՛ արկանիցեա: Յայնժամ
 ժաւալեացի կանոն-իս լոյս ին, եւ թշն-
 րիւն իեւ զաղձաղակի Լաոցե. եւ Գնասցե
 առաջի ին արդարոտ-րիւն ին, եւ փա՛ռ-ին
 Լաբոտ-ժոյ զիւր փակեացին:» (Եսայեայ ԾԸ:6-8)
 «Իմ ընդունած ծոմապահութիւնս՝ Անիրաւութեան
 կապերը քակելը, Լուծին կապերը թուլցընելը, Հարըս-
 տաւարութիւն կրողները ազատ թողուլը, Ամէն լուծ
 կտրելը, Հացը անօթին բաժնելը, Թափառական
 տնանկները տունը ընդունելը, Մերկ մը հագուցնելը
 Ու մարմինը անտեսելն է: Այն ատեն քու լոյսը առաւօ-
 տի պէս պիտի ծագի Ու բժշկութիւնը շուտով պիտի
 յայտնուի: Քու արդարութիւնը քու արջեւէդ պիտի
 երթայ Ու Տերջը փառքը քու ետեւէդ քեզ պիտի
 պաշտպանէ:»:

*Միսակատարութիւնը հաւատքով, ամենայն անկեղծու-
 թեամբ եւ լրջութեամբ պէտք է կատարուի: Ուստի,
 ենթական պատարագի մասնակցած օրերուն անհրա-
 ժեշտ է որ ըլլայ ծոմապահ: Քանի որ արտաքինը
 ցոլացումն է ներքինին, ծոմապահութեամբ պատարա-
 գի մօտեցումը կը նշանակէ ենթակային իր բոլոր
 էութեամբ նպատակին ենթարկուած ըլլալը: Եթէ
 իսկապէս խոկումով եւ միամտութեամբ (single
 mindedness) հոգեկան սնունդի կը ձգտի, այլեւս ինչո՞ւ
 Փրկիքական սնունդի մասին խորհի: Երբ քահանան
 պատարագի կը պատրաստուի, ինքը եւ սարկաւազը*

Փոխնիփոխ կ'արտասանեն 131-րդ սաղմոսը:

«Քահանայի թո՛ւ պօղեցցին պարտարո-թիւն

եւ սորթի թո՛ւ ցնձալով ցնձասցէն»

«Քահանաներդ թող արդարութիւն հագնին եւ քու սուրբերդ ցնծան»:

Մինչ այդ քահանան կը զգեստաւորուի, աղօթքով հագուելով զգեստին իւրաքանչիւր մասը: Նոյն սաղմոսը կը շարունակեն արտասանելու.

«Երիցանց սորա պօղեցոցից պիտկո-թիւն եւ

սորթի սորա ցնձալով ցնձասցէն»

«Եւ անոր երէցներուն փրկութիւն պիտի հագցնեմ՝ ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնծան»:

Պատարագի զգեստները փայլուն եւ պայծառ են, եւ զգեստին իւրաքանչիւր մասը իր նշանակութիւնը ունի: Քահանան, որպէսզի այդ լուսոյ զգեստը հագնելու արժանի ըլլայ, զգեստաւորման կը սկսի իր մեղքերուն համար թողութիւն խնդրող աղօթքով մը: Աղօթքը կը սկսի.

«Որ ըպօղեցեալ եւս պլոյս որպէս Կանդերջ

Տէր մէր Յիսուս Քրիստոս . . .»

«Տէր մեր Յիսուս Քրիստոս որ լոյսը հագուած ես որպէս հագուեստ...»:

Սոյն աղօթքին այս սկզբնատողը ինքնին կը պարզէ պատարագին մատուցման բոլոր պատճառները: Մեր ձգտումն ալ պէտք է ըլլայ նոյն այդ լուսոյ հանդերձը հագուելի: Երբ քահանան երեւութապէս զգեստի զանազան մասերը կը հագուի, իսկութեան մէջ ան ներքնապէս կը հագուի այն բոլոր յատկութիւնները, որոնք պէտք են յաղթելու համար իր «Ես»ին եւ հասնելու իր նպատակին: Ուրեմն պատարագիչը իբր մարտիկ (warrior) կը պատրաստուի պատերազմի:

Որպէսզի իր «Յս»ին դէմ մղած պատերազմը յաղթուլթեամբ պսակուի, ան ինքզինք կը գինէ «ուրախուլթիւնով», «արդարուլթիւնով» եւ «հաւատքով»: Ճերմակ շապիկը հագուած ատեն կ'ըսէ.

«ԶԳեցոյ Տէր ինչ Լանդերչ փրկո-լեան է-
պարմո-ճան ուրախո-լեան» :

Երբ փորուրարը կը հագուի կ'ըսէ.

«ԶԳեցոյ Տէր պարանոցի իմոյ
չարդարո-լեան»

Եւ գօտին կապած միջոցին ալ կ'ըսէ.

«Շորջ պարեցի կամար Լաւարոյ
չմէջս սրդի իմոյ է- մրացս» :




Կը գինուի նաեւ զօրուլթեամբ.

«Տոր Տէր զօրո-լեան աջոյ
չեան իմոյ...» եւ յետոյ «Տոր
Տէր զօրո-լեան յախոյ չեան

իմոյ որդեպի սպասա-որել իւզ անխորո-
լեամբ Լոգո-ոյ է- մարմնոյ»

ու կ'անցնէ երկու բազպանները: Երբ վակասը կը դնէ նորէն կը շեշտէ արդարուլթեան կարեւորուլթիւնը: Շուրջառը կը հագուի որպէս վահան գինք պաշտպանելու չարին յարձակումներէն: Այդ պահուն կ'ըսէ.

«Տէր ողորմո-լեամբ ինձ զԳեցոյ
ինչ զԳեպ պայծառ է- պարսպեայ
ընդ դեմ ներգործո-լեան



շարին» :

Եւ ո՞վ է այդ չարը, որ շատ դիւրաւ կրնայ մեր էութենէն ներս ներգործել: Ան ուրիշ մէկը չէ եթէ ոչ նոյն ինքն մեր «Ես»ը: Ուրեմն պատարագի մասնակցիլ կը նշանակէ պատերազմի երթալ: Միթէ կեանքը պայքար մը չէ՞, պատերազմ մը չէ՞: Միթէ վերոյիշեալ պատրաստութեան նպատակն ալ այս պատերազմը յաղթանակով պսակել չէ՞: Պատարագին մասնակցելուն՝ այս ծիսակատարութեան մասնակցելուն նպատակն է վերահաստատել մեր յաղթանակի բաղձանքը, եւ նոյն ատեն անկէ սորվիլ ամէն ինչ, գորս պէտք ունինք կեանքի մէջ յաղթական ըլլալու համար: Մեր պայքարը պէտք է ըլլայ ուրախութեամբ, հաւատքով եւ գորութեամբ, այսինքն առանց տատամսումի, եւ նաեւ պէտք է ըլլայ արդարութեամբ, որպէսզի պսակաւորուինք «փրկութեամբ»՝ եւ ազատինք «Ես»ին ճիրաններէն: Քահանան զգեստաւորումը շարունակելով կ'ըսէ.



«Դիբ Տէր սաղա-արդ փրկո-ւեան 'ի Գլո-խ իմ, պարերապմել ընդ պօրո-ւի-նս Բշնամ-ոյն» :

Սարկաւազները եւ քահանան թափօրով եկեղեցիէն ներս մուտք կը գործեն, մինչ ժողովուրդը կ'երգէ «Խորհուրդ խորին» երգը: Խորան բարձրանալէ առաջ քահանան իր ձեռքերը կը լուսայ, նշան մաքրութեան եւ սրբութեան: Այդ կը նշանակէ, թէ ենթական Աստուծոյ հետ հաղորդուելէ առաջ պէտք է պատերազմը շահած ըլլայ եւ սրբացած: Սարկաւազները փոխն ի փոխ կ'եղանակեն 99-րդ սաղմոսը.

«Լաղաղակեցէ՛վ ա- Տէր ամենայն երկիր Ժա-

«...այեցե՛ղ Տէառն ուրախութեամբ՝ Մտե՛ղ
 առաջի նորա ցնշութեամբ, շաներո՛ւէ պի
 Նա է Տէր Լսարուած մեր...»: (Սաղմոսաց
 ԴԹ:1-3)

«Աղաղակեցէք Տէրոջը, ո՛վ բոլոր երկիր: Ծառայեցէ՛ք
 Տէրոջը ուրախութեամբ. Անոր առջեւ կեցէք
 ցնծութեամբ: Ճանչցէք թէ Եհովան է Աստուած...»
 (Սաղմոս ձ:1-3)

*Խորան բարձրացումը պէտք է ըլլայ
 ուրախութեամբ եւ ցնծութեամբ եւ ծառայութեան
 ոգիով: Այս մասի ընթացքին երբ վարագոյրը գոց է,
 քահանան կը պատրաստէ գինին եւ նշխարքը: Յետոյ
 վարագոյրը կը բացուի եւ քահանան թափօրով ու
 խնկարկութեամբ խորանէն վար իջնելով եկեղեցիին
 մէջ կը շրջի եւ դարձեալ վեր՝ խորան կը բարձրանայ:
 Ըստ աւանդութեան, այս կը նշանակէ, Յիսուսի՝
 Աստուծոյ որդւոյն, մարդեղութիւնը եւ այս աշխարհի
 վրայ ժողովուրդի մէջ շրջելով ունեցած կեանքը, եւ
 համբարձումը առ Աստուած՝ իր Հօր քով: Բայց շատ
 դիւրութեամբ ալ կրնանք ըսել, որ այս կը ներկայացնէ
 մեր կեանքը այս աշխարհի վրայ: Ուստի ինչպէս
 Յիսուս ըսաւ. «Խաչի առ եւ ետեւես եկուր» եւ «Իմ
 ըրածներէս շատ աւելի մեծ բաներ կրնաք ընել», մեզի ալ
 կը պարտի իր նման մեր «Ես»ը խաչին վրայ գոհել եւ
 բարձրանալ դէպի Ս. Խորան՝ Աստուծոյ, Հօր քով: Այս
 մասին մէջն է որ դարձեալ կը խնդրենք մեղքերու
 թողութիւն եւ Ս. Հոգիի շնորհքը: Քահանան իր ծածուկ
 աղօթքին մէջ կ'ըսէ. «Տէր Լսարուած մեր . . . օրձնել
 եւ սրբել պմեպ, ինձնին դու Տէր, օրձնեայ եւ
 այժմ պառաջարկութեանս պայս ընկալ պառայեկանային
 ին սեղանդ»*

Պատարագի երկրորդ մասն է «ՊԱՅՏՈՍ ԸԱՇՈՒ», ուր ենթական կը հաստատէ իր կեանքին նպատակը հետեւելով Աւետարանի պատգամին եւ ուրախ լուրին, որ է վերհաստատումը «Բան»ին մարմնացման եւ կը խոստովանի իր հաւատքը: Պատարագի երկրորդ մասը կը ներկայացնէ Աստուծոյ խօսքը: Յովհաննէս իր աւետարանին մէջ զայն կ'արտայայտէ հետեւեալ ձեւով .

«Ի սկզբանէ էր Բանն, էւ Բանն էր առ Լսոյոսա՞ իւր Լսոյոսա՞ էր Բանն. Սա էր 'ի սկզբանէ առ Լսոյոսա՞: Ըմբռնայն ինչ նովաւ եղէւ, էւ առանց նորա եղէւ էւ ոչինչ որ ինչ եղէւն: Սովաւ կէանձ էր էւ կէանձն էր լոյս մարդկան էւ լոյսն 'ի խաւարի անոյ լոսաւորէ էւ խաւար մնա ոչ եղէւ Հասոս. Էր լոյսն ճշմարտոյ որ լոսաւոր առնէ պամբռնայն մարդ որ Գալոց է յաշխարհ, Յաշխարհի էր էւ աշխարհ նովաւ եղէւ էւ աշխարհ պնա ոչ ժանտաւ... Եւ Բանն մարմինն եղէւ էւ Բնակտաց 'ի մէջ էւ ցեալն պնատա նորա, պնատա իբրէւ պնա՞ննի առ 'ի Հօրէ, լի շնորհով էւ ճշմարտոյնն»: (Յովհաննոս Ը:1-14)

«Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր: Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր»

ու խաւարը զանիկա չհասկըցաւ: Աստուծոյն զրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան համար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքը անոր միջոցով հաստատան: Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ: Ճշմարիտ Լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չճանչցաւ:... Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Ընդհանրապէս այս կը վերագրուի Յիսուսի մարդեղութեան, բայց հոս այդ մասին որեւէ ակնարկ մը չկայ. որով զայն կրնանք ընդունիլ տարբեր ձեւով ալ, այսինքն «Քան»ին մարմնացումը իբր տիեզերքի եւ նաեւ մեր իւրաքանչիւրին ստեղծագործութեան իմաստով:

«Խոնկ մարտ-ցանեմ առաջի խոյ,
 Քրիստոս, բարոմ Ըոգեւորական: Ընկալ
 պա 'ի սորբ յերկնային եւ յեմանալի խո
 մարտ-ցարանդ 'ի Ըոգ անո-շից, առաջեայ
 առ մեզ փոխարէն պշնորհս եւ պարգեւս
 Հոգոյն Սրբոյ . . .»

Հոս նուէր ընծայելու առաջին նշոյլը կը տեսնուի: Քահանան խունկ կը մատուցանէ իբր հոգեւորական բոյր, որուն փոխան կը խնդրէ Ս. Հոգիին պարգեւը՝ շնորհները: Նուիրուած այս խունկը իր հոգին է:

Վստահ եմ բոլորդ ալ ուշադրութիւն ըրած էք ինկարկութեան կատարման ձեւին, նամանաւանդ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ: Խնկարկութիւնը կ'ըլլայ դէպի խորան, այսինքն Աստուծոյ, քանի որ խունկը կը մատուցուի Աստուծոյ: Մոգերն ալ կնդրուկ՝ խունկ բերին Յիսուսին իր Աստուածութեան համար,

ոսկի տուին իր թագաւոր ըլլալուն համար եւ զմուռս՝ իր մահկանացու մարդ ըլլալուն համար: Խնկարկութիւն կ'ըլլայ նաեւ դէպի ժողովուրդ շատ աւելի մեր եկեղեցւոյ, քան ուրիշ եկեղեցիներու մէջ: Այս կը նշանակէ, որ մեր եկեղեցին արդէն իսկ ընդունած է մարդկութեան Աստուծոյ մէկ արտայայտութիւնը ըլլալը, եւ կը խնկարկէ Քրիստոսը, որ է մարդուս բարձրագոյն էութիւնը եւ անոր կեանքը: Հնդիկները, գիտնալով այս իրողութիւնը, երբ իրար կը բարեւեն, ձեռքերնին միացուցած իրարու կը խոնարհին, իսկութեան մէջ կը խոնարհին մարդոց այն Աստուածային էութեան կամ մասնիկին առջեւ, որ իրենք կը կոչեն «Atman»: Երբ հայերը իրար բարեւեն, միթէ «Բարի Լոյս» կամ «Բարեւ» չե՞ն ըսեր, որ կրճատումն է «Բարի Արեւ»: Եթէ «Բարի Արեւ» կամ «Բարի Լոյս» Աստուած չեն խորհրդանշեր, հապա ի՞նչ են: Ուրեմն հայեր գիրար կը կոչեն Աստուածային՝ Աստուծոյ մէկ մասնիկը, բայց ոչ Աստուած: Ինչպէս ոսկիայ մատանին, որ ոսկիէ շինուած է, բայց աշխարհի բոլոր ոսկին չէ, այլ՝ անոր պատիկ մէկ մասնիկը: Ինչպէս ովկիանոսին վրայի մէկ ալիքը, որ բոլոր ովկիանոսը չէ, բայց անոր մաս կը կազմէ:

Սարկաւազը Աւետարանը բարձրացուցած խորանին ետեւէն կը դարձնէ եւ կողգայ խորանին ձախ կողմը: Այս կը կոչուի «Փոքր Մոյսէ», եւ «Բան»ին՝ Աստուծոյ խօսքին, այսինքն «Logos»ին մուտքն է, յետոյ կը կարդացուի հին եւ նոր կտակարանէն եւ ապա Աւետարանէն հատուածներ: Ասոր կը յաջորդէ Հաւատամքը: Աւետարանի բարձրացումը կը նշանակէ փառաւորումը «Logos»ին, այսինքն Աստուծոյ, կրնանք ըսել նաեւ «OM»ին, որ է «A» եւ «Օ»ն (ալֆան եւ Օմէղան):

Պատարագի երրորդ մասը կը սկսի «ՄԵԾ

Մուսք»ով՝ վերաբերումով, ուր նուէրը կամ զոհը Աստուծոյ խորանը կը բերուի: Այս մասի սկզբնաւորութեան սարկաւազը պատրաստ չեղողներուն կը հրահանգէ հեռու մնալ եւ չմօտենալ յաջորդ մասին:

«Մի՛ ո՛ւր յերախայից, մի՛ ո՛ւր ՚ի թերահասացից եւ մի՛ ո՛ւր յաստաշխարհաց եւ յանմաշխարհաց մերջեացի յաստաշխարհաց խորհուրդս» :

Ի՞նչ է վերաբերումի իմաստը: Երբ սարկաւազը զոհը կամ նուէրը կը բերէ 19-րդ սաղմոսին 6-րդ համարը, 67-րդ սաղմոսին 34-րդ համարը եւ Օրինաց գիրքին 33-րդ գլուխին 2-րդ համարը կ'ըսէ:

«Յարեա՛ս եւսար պիտրան իօր եւ ին՛ն որոյէս մեայ պի ելանէ յաստաշխարհ իօրմէ:» «Ղանասարհ արարէ՛լ այնմիկ, որ նայի յերկնից յերկինս ընդ արեւելս:» եւ «Լաստաշ ՚ի հարասոյ եկեացեւ եւ սորբն ՚ի Փասան լեանէ:» .

«Անոնց մէջ արեւին համար վրան մը կանգնեց: Ու անիկա իր առագաստէն ելած փեսայի պէս է:»

Այս կը նշանակէ «Kundalini»ի արթննալը:

«Անոր ճամբայ շինեցէք՝ որ երկնքի վրայ նստած է դէպի արեւելք:»:

զօրութիւնը (Prana) արեւէն կը հոսի եւ արեւն ալ արեւելքէն կուգայ:

«Աստուած հարաւէն կուգայ եւ սուրբն ալ Փառան լեռնէն:»:

Փառան լեռը շատ հաւանաբար Սինայի լեռն է, ուր Մովսէս Աստուած տեսաւ: Ուրեմն Աստուած հարաւէն

կու գայ եւ սրբութիւնը լերան բարձունքէն, այսինքն «Kundalini»ի վարէն վեր բարձրանալն է եւ երբ գանկի գագաթի խակրային (Chakra) հասնի սրբութիւնը անձին մէջ ի յայտ կուգայ (Տես Գլուխ ԺԵ - Յաւելուածական մասը՝ էջ - 437): Ինչ որ Յիսուսի այլակերպութեան ատեն պատահեցաւ: Յետոյ սարկաւազը բարձրաձայն կ'ըսէ.

«Համբարշէ՛վ իշխան՛է սրբո՛ւնս յեր՛ի վեր,
Համբարշէյնն սրբո՛ւնէ յա՛խրե՛նից եւ մոցե
Խաճա՛որ փառա՛սց» .

«Վեր բարձրացուցէք ձեր դռները որ փառքի թագաւորը ներս մտնէ»:

Դռները կը ներկայացնեն խակրաները «Chakra» եւ փառքի թագաւորը «Prana»ն կամ Ս. Հոգին (Աստուած) :

«Ով է սա Խաճա՛որ փառա՛սց, Տէր Հսօր
սօրո՛ւթեամբ ի՛րող, Տէր կարող ՚ի
պարտաւճի:» .

«Ով է այս թագաւորը՝ որ իր զօրութեամբ Հսօր է եւ Տէր՝ որ պատերազմի մէջ կարող»:

Աս ալ դարձեալ, այդ պատերազմի գաղափարը կը ներկայացնէ: Սարկաւազը անգամ մը եւս կը յիշեցնէ, թէ ինչպէս պէտք է ըլլայ մեր մօտեցումը այս Սուրբ Խորանին .

«Եւ ես խաղաղութեան սէրը աղաչեալ
ցուի: Եւ ես Հաւատարմի եւ սրբութեամբ
կացցուի յաղօթա առաջի սրբոյ սեղանոյս
Աստուծոյ առիւտ, մի՛ խղճիւ եւ Գայթակ-
ղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորաման-
կութեամբ, մի՛ պարտանօ՛ղ եւ խաբէրո՛ւ-

Թեամբ, մի՛ երկմտոթեամբ եւ մի՛ թերա-
 Ըստարոթեամբ, այլ ուղիղ վարոթ, պարզ
 մտով, միամտոյ արտիւ, կարարեալ
 Ըստարով, լցեալ սիրով, լի՛ եւ աստեղ-
 եալ ամենայն Գործովի՛ Բարոթեան:» .

«Խաղաղութեամբ Տէրջը կաղօթենք: Հաւատքով եւ
սրբութեամբ Աստուծոյ Սուրբ սեղանին առջեւ աղօթքի
 կենանք՝ առանց խղճի խայթի կամ գայթակղութեան՝
 առանց նենգութեան եւ խորամանկութեան՝ առանց
 հմայութեան եւ խաբէութեան՝ առանց երկմտութեան եւ
 թերահաւատութեան՝ այլ ուղիղ վարքով՝ պարզ մխարով՝
 միամիտ սիրտով՝ կատարեալ հաւատքով՝ սիրով լեցուն
 եւ շատ բարի գործերով օծտուած:»

Շատ լաւ գիտենք թէ «Kundalini»ն չարթնցուցած
 անձը ինքզինք պէտք է լաւ պատրաստած ըլլայ, ապա
 թէ ոչ հետեւանքը ահաւոր կրնայ ըլլալ:

Ողջոյնի մասը կը ներկայացնէ սիրոյ համբոյրը
 եւ այն համերաշխութիւնը, որ պէտք է ունենանք
 բոլորին հանդէպ: Յաջորդ մասը «ԳՈՐԾԻՅԵՆ ԱՍԱ»ն է,
 ուր բուն նուիրումը կամ գոհողութիւնը կ'ըլլայ:
 Քահանան կ'ըսէ.

«Շնորհի, սէր եւ Եստո-աշային արբարար
 Կորոթի-նն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն
 Սրբոյ եղիցի ընդ յեւ, ընդ
 ամենեւեանդ», եւ սարկաւազն ալ՝
 «Կորո-նս Կորո-նս, ամենայն իմաստո-
 Թեամբ եւ Կորո-շոթեամբ՝ ի վեր ընծայե-
 ցոցեի՛ Կմտոս յեր աստո-աշային»

Երկն-դիւ-» եւ նաեւ «Գոհացարո՞ւ-ի պճեառ-նէ
Բուրբով սրտի-» :

Ասոր կը յաջորդէ «ՅԻՐԱՏԱԿ»ը. Յիսուս վերջին
ընթրիքին ըսաւ. «Այս ըրէք զիս յիշելու համար» եւ
հացը ու գինին առաւ եւ ըսաւ.

«Լու-է-ի կեր-է-ի այս է Մարմին իմ, որ վասն
ձեր ե- Բազմաց Բաշխի, 'ի խառ-թիւն ե-
'ի Խոզո-թիւն մեղաց» եւ շարունակեց
«Լըբէ-ի 'ի սմանէ ամենե-ի-եան, այս է
արիւն իմ նորոյ ուխտի, որ յազա-ի-ս ձեր ե-
Բազմաց Ընդանէ, 'ի խառ-թիւն ե- 'ի
Խոզո-թիւն մեղաց» :

Հացը կը ներկայացնէ մարմինը սնուցանող
ամենակենսական ուտեստեղէնը եւ գինին՝ կեանք
տուող արիւնը: Եթէ մէկու մը արիւնը քամէք անձը կը
մեռնի: Ուրեմն ա՛յս բոլորին իմաստն է. այս
Փիզիքական կեանքը ապրեցէք զիս յիշելու համար,
այսինքն մեր կեանքին նպատակը, Քրիստոս յիշել եւ
զայն լրիւ արտայայտել է: Արիւնը՝ գինին, կը
ներկայացնեն կեանքը, եւ կեանքը տուող «Prana»ն:
Օմար Խայեամ իր մէկ քառեակին մէջ կ'ըսէ.

«Şarap içip güzel sevmek mi daha iyi, iki yüzlü softaları
dinlemek mi. Sarhoşla aşık cehenneme gidecekse,
kimselerin göreceği yoktur cenneti.»

«Գինի խմել եւ գեղեցիկը սիրելը ավելի լաւ է
քան երկերես մոլեռանդները մտիկ ընելը. եթէ
գինովը եւ սիրահարը դժոխք պիտի երթան ոչ
ոք դրախտը պիտի չտեսնէ:»:

Ս. Հոգիին կամ «Prana»ին մասին է անշուշտ իր
ակնարկով թիւնը: Երբ կ'ըսէ գինի խմել եւ գինովնալ,

ակնարկութիւնը Ս. Հոգիով գինովնալու մասին է եւ սիրահարելը՝ սիրահարելն է Աստուծոյ, այն սէրը որուն համար քիչ առաջ մատնանշեցինք սարկաւագի «լցեալ ախրով» բաժնին մէջ: Նոյն բաղադրութիւնը կը տեսնենք նաեւ արեւագալի արարողութեան մէջ երբ կ'երգուի «Ճգնաւոր» երգին վերջին տունը, ուր կ'ըսուի.

«Կամաւոր պարարագի, մանկունի ցիօնի է-
կարարեալ իմաստութեամբ, որի փոխանակ
կաթին՝ արբիչի պիտի նստանայ յիշ»:

Խնդրանքը կ'ըլլայ անոնց, որոնք կամաւոր իրենց «Ես»ը զոհած են, այսինքն պատարագ ըրած են եւ այս ըրած են կատարեալ իմաստութեամբ, եւ փոխանակ կաթին, որ մարմինը կը կերակրէ, «խմեցին զմայլեցուցիչ գինին», որ կը նշանակէ Ս. Հոգին: Քահանան կ'ըսէ

«Եւ պէոյս՝ ի խոյոց լեւզ մարտ-ցանեմի ըստ
ամենայնի է- յաղախ ամենեցոուն» .

«Քուկդ՝ որ քեզմէ է՝ քեզի կը նուիրենք բոլորի կողմէ՝
բոլորին համար»:

Այս ալ կը շեշտէ, որ միակ ճշմարտութիւնը Աստուած է: Ինչ որ մարդ արարած Աստուծոյ կը նուիրէ, արդէն կը պատկանի Աստուծոյ եւ եկած է Աստուծմէ: Մեր նուէրը եւ զոհը ուրեմն պէտք է ըլլայ, Յիսուսի նման, զոհել մեր «Ես»ը խաչին վրայ որպէսզի Քրիստոս լրիւ ի յայտ գայ մեր մէջ, այսինքն յարութիւն առնէ մեր մէջ, այս է Քրիստոսի երկրորդ գալուստը, որ մենք ոչ իմացական, այլ գործնականօրէն գիտակից ըլլանք իր ներկայութեան, ճիշդ ասոր համար ըսաւ. «խաչդ առ եւ ետեւես եկուր»: Սարկաւագը

նորէն կ'եղանակէ

«Որպէսպէ՛ Տէր Լսարո՛ւս ձեր, որ ընկալաւ
 պսա՛ ՚ի սո՛ւրբ, յերկնային եւ յեմանալի իօր
 մարոցարանն, պիտիանանն առաջէսցէ առ
 մեզ պշնորԸս եւ պարգէսս չոգոցն
 Սրբոյ պՏէր աղաշէսցո՛ւ՛»

«Տէր Աստուած՝ որ այս աստուածային գոհը իր
 խորանին վրայ ընդունեց՝ անոր փոխարէն մեզի զրկէ
 Ս. Հոգիի շնորհները եւ պարգեւները»:

Տէրունական աղօթքին կը յաջորդէ «ԼՐՈՒՍ», ուր
 քահանան նշխարքը գինիին մէջ կը թաթիւէ: Այս կը
 նշանակէ Ֆիզիքական կեանքի վերհաստատումը եւ նոր
 մարդուն ծնունդը: Յետոյ նշխարքը կը կոտրէ եւ
 զանազան մասերու կը բաժնէ: Այս կը ներկայացնէ
 բոլոր մարդկութեան եւ, ինչու չէ, բոլոր ստեղծագործ
 ծովեան մէկ ակէ բխիլը, եւ նաեւ ամենուն իրարու
 հաւասար եւ նոյնը ըլլալը կը ստուգէ:

Յետոյ կուգայ հաղորդութիւնը: Ենթական
 հաղորդութիւնը առնելով, կը հաղորդուի Աստուծոյ
 հետ եւ հագած կ'ըլլայ նոր մարմինը՝ լուսոյ հագուստը,
 եւ միացած Աստուծոյ: Կ'երգուին գոհաբանական
 երգեր: Սարկաւազը կ'ըսէ.

«Եւ ես Ըսարո՛ւ ընկալեայ՛ յասարո՛ւս
 թային, սո՛ւրբ, երկնային, անմահ, անարար
 եւ անասական խորհրդոցս պՏեառնէ Գոհա-
 ցարո՛ւ՛»

«Դարձեալ հաւատքով ստացած Աստուածային՝ սուրբ՝
 երկնային՝ անմահ՝ անարատ (մաքուր) եւ հապականող
 խորհուրդին համար Տէրջմէ կը գոհանանք:»

Եւ ժողովուրդը (յանուն ժողովուրդի դպիրները)
 միասնաբար կ'երգեն «Գոհանամ՛ պ՛էն» երգը:

Պատարագի չորրորդ մասը, «ԱրՁԱԿՈՒԱ»ն է: Կը կարդացուի Յովհաննու Աւետարանին առաջին գլուխը, որուն մասին պատարագի երկրորդ բաժնին մէջ ակնարկեցի: Արձակման աղօթքով կը վերջանայ պատարագը:

Ս. Պատարագն ալ, ուրիշ դիցաբանութիւններու կարգին, կը ներկայացնէ նոյն գաղափարը, հոգ չէ թէ իւրաքանչիւր դիցաբանութեան պատմուածքը (text) տարբեր ըլլայ: Ասոնք ընդհանրապէս կը ներկայացնեն պայքար կամ պատերազմ մը. հերոսը կը պատերազմի վիշապին դէմ, զայն սպաննելով կ'ազատէ կամ կը տիրանայ իր սիրահարին: Մեր պատարագին ալ, քահանայի զգեստաւորման ընթացքին անհատը կը պատրաստուի պատերազմի: Կը սպաննէ վիշապը, այսինքն կը գոհէ իր «Ես»ը (ego)ն, կը տիրանայ իր սիրահարին՝ Քրիստոսի: Արեւմտեան դիցաբանութեան մէջ վիշապը միշտ կը պաշտպանէ կամ կը խափանէ գանձի մը մուտքը, նոյնպէս «Ես»ը կը խափանէ մուտքը այն գանձին, որ մարդուս բարձրագոյն էութիւնն է՝ Քրիստոս (Higher Self): Առանց վիշապին, այսինքն «Ես»ին սպաննութեան Քրիստոսի մեր մէջ յարութիւնը կարելի չէ:

Հնդկական դիցաբանութեան Բամայի պատմութեան մէջ ալ կը տեսնենք Բավանայի դէմ մղուած պատերազմը: Բավանա փախցուցած էր Բամայի կինը՝ սիրահարը: Բամա որպէսզի նորէն միանայ իր սիրուհիին կը պատերազմի եւ կը սպաննէ Բավանան: Մահապարատի մէջ ալ Քրիշնա դարձեալ պատերազմի մը ընթացքին է որ Արճունայի կուտայ «Խորհուրդ խորին»ին արքայական ամենամեծ գաղտնիքը:

Մեր դիցաբանութիւնը նաեւ նման է «King Arthur»ի «Quest of the Holy Grail»ի, ուր բոլոր անոնք, որոնք Սուրբ

Սկիհը գտնելու ելան, բոլորն ալ պատերազմող ասպետներ (chevalier) էին, բայց մէջերնէն միայն մէկը յաջողեցաւ զայն գտնել. ան, որ միամիտ եւ մաքուր սրտով էր, «Percival»: Մնացեալ բոլորն ալ անբաղձալի վախճան մը ունեցան: Մեր պատարագն ալ մեզի կը զգուշացնէ որպէսզի այդ ասպետներու վիճակած վախճանը մեզի ալ չվիճակի: Երբոր սարկաւագը կը ձայնէ. «Մ՛ի՛ ո՛վ յե՛ռ-ախայից...», կը զգուշացնէ բոլոր անոնք, որոնք տակաւին «Kundalini»ն արթնցնելու պատրաստ չեն, զայն չարթնցնեն: Սա վերջերս հրապարակուած «Harry Potter»ի պատմութեան մէջն ալ կը տեսնենք, որ միայն ան կը տիրանայ «անմահութեան քար»ին, որ իր անձնական նպատակին համար զայն օգտագործել չ'ուզեր:

Ուրեմն մեզի կը մնայ ինքզինքնիս պատրաստել այս մարտին, զինուկելով խաղաղութեամբ, ուրախութեամբ, արդարութեամբ, հաւատքով, զօրութեամբ եւ անախտութեամբ. ինչպէս նաեւ պէտք է ըլլանք սուրբ, ուղիղ վարքով, պարզ միտքով, միամիտ սրտիւ՝ այսինքն մէկ մտքի վրայ, առանց կեղծիքի, սէրով լեցուն եւ բարի գործերով: Պէտք չէ ըլլանք խղճի խայթով, դայթակղղութեամբ, նենգութեամբ, խորամանկութեամբ, պատրանօք եւ խաբէութեամբ, երկմտութեամբ եւ թերահաւատութեամբ:

Չինական առածը կ'ըսէ. «Հազար մղոննոց ճամբան կը սկսի առաջին քայլով», ուրեմն մենք ալ այս առաքելութեան ճանապարհին սկսինք:



ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԵՐԸ

Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍ

- ա.- Զգեստաւորում
- բ.- Լուացումն
- գ.- Նախամուտ
- դ.- Առաջագորութիւն

Բ. ՊԱՇՏՈՆ ՃԱՇՈՒ

- ա.- Խնկարկութիւն
- բ.- Սկիզբն
- գ.- Մուտք ճաշու (փոքր մուտք)
- դ.- Ընթերցուածք ճաշու
- ե.- Հանգանակ Հաւատոյ
- զ.- Աղօթք զկնի ընթերցուածոց

Գ. ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

- ա.- Վերաբերում
 - 1: Մեծ Մուտք
 - 2: Մատուցում ընծայից
 - 3: Ողջոյն
- բ.- Գոհութիւն
 - 1: Նախերգանք
 - 2: Յիշատակն
 - 3: Վերակոչումն
 - 4: Յիշատակութիւնք
 - 5: Տէրունական աղօթք
 - 6: Խոնարհումն
 - 7: Բարձրացումն
 - 8: Փառաբանութիւն
- գ.- Լրումն
 - 1: Թաթախումն
 - 2: Բեկումն
- դ.- Հաղորդութիւն
 - 1: Նախահաղորդականք
 - 2: Ճաշակումն
 - 3: Գոհաբանութիւն

Դ. ԱՐՁԱԿՈՒՄՆ

ա.- Աղօթք ի մէջ եկեղեցոյ

բ.- Վերջին Աւետարան

գ.- Օրհնութիւն արձակման



Ժողովեալէս 'ի չէն Հայցեմէ
 ընդ ժողովեալ մեքառանին,
 որ զկենարարդ իո մարմին
 Քաշեալ՝ երուր ընդ Քաժակին,
 շնորհեա՛ւ եւ մեզ, Տէ՛ր, ընդ նոսին
 Հաղորդ լինել իոմ սեղանին՝
 Աննայ Հացիդ, յոր փափախեմէ,
 եւ ըմպելւոյդ, ում ժարասեմէ:



Եւ չէ՛ Տէառն 'ի վերայ ...
 ոյ՛է յուսան յողորմութիւն
 նորա :
 (Սաղմոս 1Բ:18)


Տէրօջը աչիւր ... իր ողորմութեանը
 յուսացողներուն վրայ է



Չայս խօսեցայ ընդ Յեզ' զի ընդ իս
 խաղաղութիւն ունիցի՛. յաշխարհի աստ'
 նեղութիւն ունիցի՛, այլ խաղաղութեարու՛տ
 զի էս յաղբեցի աշխարհի:

(Յովհաննոս ԺԶ:33)

Որ յաղբէ՛ ցապ նմա նստել ընդ իս յախոս
 իմ, որպէս է- էս յաղբեցի՛ է- նստայ
 յախոս Ըօր իմոյ: (Յայտնութիւն Գ:21)



-ԺԵ-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

*

Ա - ԻՆՉ ԵՆ ԽԱԿՐԱՆԵՐԸ

Բ - ԻՆՉ Է ԳՈՒՆՏԱԼԻՆԻՆ

Գ - ԻՆՉ Է ԽՈԿՈՒՄԸ

ՅԱԲԵԼՈՒԲԱԾԱԿԱՆ

ԻՆՉ ԵՆ ԽԱԿՐԱՆԵՐԸ

Շնորհանուր առմամբ մարդ արարած կը կարծէ թէ իր Ֆիզիքական մարմինը եւ Ֆիզիքական աշխարհը միակ իրողութիւններն են, քանի որ շնորհիւ իր զգայարանքներուն կարող է միայն ասոնք գիտնալ եւ իմացականութեամբ ալ՝ ըմբռնել: Ասկէ առաջ գրած էի թէ մարդ կը գործէ իր Ֆիզիքական, զգացական եւ իմացական մարմիններու միջոցաւ: (Տես Գլուխ Գ «Ի՞նչ են Մարդկային Բնութիւնները», էջ-59) Կայ նաեւ հոգեկան մարմին մը: Մեզի կը պարտի կերտել անոր գոյութեան փորձառական գիտակցութիւնը:

Հնդկական հին Սանսգրիտ լեզուի «չագրա» (chakra) բառին հայերէնը, ըստ բառարանի, «խակրայ» է: Սանսգրիտ լեզուի մէջ «չագրա» բառին իմաստը «անիւ» է: Խակրաները անիւի կը նմանին եւ կ'ըսուի թէ կը դառնան լոյսի արագութեամբ: Արեւելքի մէջ զայն կը նմանցնեն նաեւ բազմաթիւ թերթերով ջրաշուշան ծաղիկին, որովհետեւ խակրաները կարելի է լրիւ բանալ ինչպէս ծաղիկ մը կը բացուի: (Տես պատկեր թիւ 1) Խակրաները՝ այս անիւները զօրութեան յորձանքներուն մեր մարմիններէն ներս մուտքի դռներն են, ուրկէ կեանքի զօրութիւնը մեր մէջ կը ներգործէ եւ մարմնի զանազան մասերուն՝ գործարաններուն կը տարածուի: Աս, այն զօրութիւնն է որ բաբախիւն է: Ես անձնապէս բարեբախտութիւնը ունեցայ զայն շօշափելով զգալու: Եթէ մարմնի որոշ մէկ մասէն այս զօրութեան հոսքը պակսի, կամ չափազանց աւելնայ,

ՊԱՏԿԵՐ 1



պատճառ կ'ըլլայ հիւանդութիւններու: Այս զօրութիւնն է որ անձին կու տայ թէ՛ Ֆիզիքական՝ մարմնային եւ թէ՛ մտային առողջութիւն: Ամէն մէկ խակրայ մեր Ղլային կազմացքին, մեր բնախօսութեան, նաեւ մեր բնութեան վրայ իր հիմնական եւ էական ազդեցութիւնը ունի: Ներդաշնակ կեանք մը ապրելու համար հարկ է որ բոլոր խակրաները բաց ըլլան եւ միասնաբար համագործեն:

Ս. Պատարագի ընթացքին, սարկաւազը Սկիհը խորանին առջեւ պատարագիչին տալէ առաջ կ'ըսէ.

«Համբարձէք իշխանք զդրոնս ձեր 'ի վեր,
Համբարձին դրոնք յաւիտենից եւ մտցէ
Թագաւոր Փառաց»:

Այդ դռներուն նշանակութիւնը այս խակրաներն են եւ Թագաւոր Փառացն ալ կեանքի զօրութիւնը՝ Ս. Հոգին:

Կան գլխաւոր եօթը խակրաներ, որ կը համապատասխանեն մարմինի զանազան գործողութիւններուն: Անոնց իւրաքանչիւրը կը գործէ թրթռացումի որոշ յաճախականութեան վրայ: Անոնք տեսանելի աշխարհի վրայ կը համապատասխանեն լոյսին, այսինքն ծիածանի եօթը գոյներուն, զորս Անանիա Շիրակացի կոչած է «Աստուածակամար»: Լոյսի եօթը գոյներն ալ իրարմէ կը տարբերին, իրենց ալիքային յաճախականութեան չափերով: Խակրաները լսողութեան աշխարհին մէջ ալ կը համապատասխանեն նօթագրութեան եօթը ձայներուն յաճախականութեան: Շատ հաւանական է որ իրենց կապը միւս զգայարանքներու հետ նաեւ ըլլայ թրթռացումի միջոցով: Շօշափելը կը զգայ ճնշում եւ թրթռացում: Հոտոտելը եւ համտեսելը, որոնք կը կարծուէր թէ միայն քիմիական են, այսօր փաստուած է թէ կախեալ են նաեւ թրթռացումէ:

Աստուծոյ ստեղծագործութիւնն ալ իր կատարելութեան հասաւ եօթը օրէն: Արդեօք ստեղծագործու-

Թեան ամէն մէկ օրը կարելի է՞ որ ներկայացնէ բարեշրջմամբ նոր խակրայի մը յաւելումը: Մարմինները, այսինքն քարը, ջուրը, հողը, օդը եւայլն ունին միայն մէկ խակրայ, որ կ'ապահովէ անոնց գոյութիւնը: Ստեղծագործութեան մէջ բոլոր կենդանի էակները ունին նաեւ երկրորդ խակրան, որ անհրաժեշտ է բազմանալու եւ սերնդագործելու համար: Աւելի յառաջացածները ունին երրորդ խակրան, որ իրենց զգացում ունենալու կարողութիւնը կու տայ: Ասոնց յառաջացումն ալ կրնան աստիճանաւոր ըլլալ: Մարդ արարած ունի եօթը խակրայ: Եօթերորդով կարելի է Աստուածայայտնութիւնը լիովին իրականացնել: Ճիշդ ասոր համար ալ «եօթերորդ օրը» սուրբ եղաւ եւ ստեղծագործութիւնը կատարելագործուած եւ աւարտած:

Գրուած է.

«Եւ օրհնեաց Լսրոսաժ պօրն Եփեթրորդ,
Եւ սրբեաց պնա • պի նմա Ըանգեաւ-
 յամենայն Գործա իւրոց՝ պոր սկսաւ առնել
 Լսրոսաժ»: (Օննորոց Բ:3)

«Եւ Աստուած եօթներորդ օրը օրհնեց ու սրբեց զանիկա Վասն զի անոր մէջ Հանդստացաւ իր բոլոր գործերէն՝ որոնք ստեղծագործութեան մէջ կատարած էր»:

Ըստ հետեւեալ համարին, Աստուած մարդուն, միւս կենդանիներէն յաւելեալ ըլլալով, տուաւ նաեւ անձնաւորութիւն:

«Եւ սրեղծ Տէր Լսրոսաժ պմարդն Ըող
 յերկրէ • Եւ փշեաց յերեաս նորա շոնշ
 կենդանի, Եւ եղեւ մարդն յոգի
 կենդանի»: (Օննորոց Բ: 7)

«Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը եւ անոր ուղուընքներէն կենդանութեան շունչ փչեց ու մարդը կենդանի հոգի եղաւ»:

Երբայերէնի մէջ «շունչ» բառին համար «նէֆս» բառը գրուած է որ երկու իմաստ ունի. շունչ եւ անձնաւորութիւն: Միւս բոլոր կենդանի արարածները, միայն մարդ արարածին տրուած յաւիտենական կեանքի մը անհատականութեան գիտակցութիւնը չունին:

Այո, մարդուն ոչ միայն միւս կենդանիներու նման այս ժամանակաւոր կեանքը տրուած է, որ կը թուինք ներկայիս ապրիլ, այլ նաեւ փորձառութիւն ունենալու եւ յաւիտենական կեանք ապրելու կարողութիւնը: Ըստ վերեւի համարի մէջի «կենդանի հոգի եղաւ» գրութեան, կը թուի թէ մարդ իր Ֆիզիքական, զգացական եւ իմացական «մարմիններուն» յաւելեալ, նաեւ ունի հոգեկան «մարմին» մը՝ Քրիստոսի մեր մէջ գոյութիւնը, որ կը վրիպի մեր ներկայ գիտակցութենէն:

Հետեւեալ համարը յատկանշական է եւ բացայայտ: Մեզի, եօթը խակրաներու նկատմամբ, պատրաստութեան համար տրուած ազգարարութիւն մըն է, որպէսզի Ս. Հոգիի զօրութեան մուտքին խցում եւ տարածման որեւէ արգելք չըլլայ:

«Իմաստութիւնն շինեաց իւր ցոռն, եւ կանգնեաց սիւնս էւթն: Զենս սղեւնլիս իւր, եւ խառնեաց 'ի խառնելիս սղեւնի իւր, եւ պարարեաց սղեւն իւր: Եւ աստիեաց սղեւն իւր, կոշել Բարձր խառնութեամբ 'ի խառնելիս իւր՝ եւ ասէ. Որո՞ք իցէ անսղեամ, եկեացէ՛ առիս: Եւ ցոռակասմիցան ասէ. եկայէ կերայէ 'ի Հացէ իմմէ, եւ

արէ՛ւել զԳիշի իմ զոր խառնեցի Յեւ :
 Թողէ՛ զանզոսման թիւնն եւ կեցջի՛ .
 խնդրեցէ՛ զիմաստութիւնն զի ասորեացի ,
 եւ ողջեցէ՛ Գիտութեամբ զՀանճար . եւ
 ողջիջ ճանաստարՀաւ իմացարո՛ւ զխրատ » :
 (Լուսակաց Թ : 1-6)

«Իմաստութիւնը իր տունը չի ունեց Ու իր Եօթը սիւները կանգնեցուց, Իր անասունները մորթեց, իր գիւնին խառնեց ու իր սեղանը պատրաստեց: Անիկա իր աղախիները զրկեց, Որ քաղաքին բարձր տեղերը կանչէն. «Ով որ պարզամիտ է, թող Հոս գայ»: Ու պակասամիտ եղողին ըսեն. «Եկէ՛ք, իմ Հացէս կերէ՛ք Ու խառնած գինիէս խմեցէ՛ք: Յիմարութիւնը թողուցէ՛ք, որպէս զի ապրիք Ու խոհեմութեան ճամբուն մէջ քալեցէ՛ք»:

Եօթը սիւնները, Եօթը խակրաններն են: Մորթուած անասունները մեր «ես»ը եւ մեղքերն են: Սեղանի պատրաստութիւնը անձին ինքզինք պատրաստելն է: Պարզամիտ եւ պակասամիտները իրենց խորհուրդներու ողողումը դադրեցնողներն են: Անոնք ինչոյքի սեղանին պիտի մասնակցին եւ համտեսեն յաւիտեանականութիւնը եւ Աստուածային յայտնութիւնը:

Պատարագի ընթացքին ալ զգուշացում կ'ըլլայ անոնց, որոնք ինքզինքնին կատարեալ չեն պատրաստած: Մարկաւագը կը ձայնէ.

«Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք 'ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յԱստուածային խորհուրդ»:

Եօթը խակրանները շարուած են նման ողնայարի ուղղածիգուլթեամբ՝ սկսելով վարի մասէն մինչեւ գանկի վերեւը: (Տես պատկեր թիւ 2)

Առաջինը «Հիմնական խակրա»ն է: Ան կը գտնուի ողնայարի վարի ծայրը: Ունի ամենացած թրթռա-

ցումի յաճախականութիւն եւ հետեւաբար կը համապատասխանէ ամենացած թրթռացումի յաճախականութիւն ունեցող ծիածանի կարմիր գոյնին եւ նօթագրութեան «սօ» նօթին: Ան, մեր կապն է տիեզերքի՝ ստեղծագործութեան, աշխարհի հետ: Մեզի կու տայ ըստ պատշաճի յարմարելու, փոխուելու, նաեւ տոկալու եւ մեր Ֆիզիքական կեանքի բոլոր պէտքերը հոգալու կարողութիւնը: Եթէ լաւ չգործէ նոյնիսկ կրնանք ապրելու եռանդը կորսնցնել:



Երկրորդը «ընջակային խակրա»ն է, որ կը գտնուի պորտին եւ ցայլոսկրի միջեւ՝ սեռային գործարաններու մակարդակին վրայ: Անձին կու տայ ինքնաճանաչում եւ ծննդագործութեան՝ սեռային յարաբերութիւններու կարողութիւն: Ան նաեւ կը կառավարէ մօր եւ զակի միջեւ եղած սերտ կապը: Կը համապատասխանէ ծիածանին նարնջագոյնին եւ նօթագրութեան ալ «րէ» նօթին:

Երրորդը «ճառագայթաձեւ (երբեմն արեւի) ջղահիւսքի խակրա»ն է: Ան կը գտնուի կողերու ամենավարի մասին եւ պորտին միջեւ: Ան կը պահէ եւ կը բաժնէ զօրութիւնը միւս խակրաներու՝ ի պատշաճի: Ան կը կառավարէ նաեւ հօր մը իր զակին հետ ունեցած սերտ կապը: Անձին կու տայ ինքնավստահութիւն: Շատ մը ստամոքսային եւ անմարսողութեան

անհանգստութիւններ այս խակրայի խանգարումէն յառաջ կու գան, որովհետեւ զգացումներու հետ մօտէն յարաբերութիւն ունի: Եթէ յաւելեալ զօրութիւն կուտակուի, անձին «ես»ը աւելի կարեւորութիւն կը ստանայ եւ անձին եսասիրութիւնը կ'աւելնայ: Կը համապատասխանէ ծիածանին դեղին գոյնին եւ նօթագրութեան ալ «մի» նօթին:

Չորրորդը «սրտի խակրա»ն է: Կը գտնուի կուրծքին մէջտեղը եւ համապատասխան գոյնը կանաչն է եւ նօթը՝ «Փա»ն: Ան կը կառավարէ սիրտը, արեան շրջումը, թոքերը եւ շնչառութիւնը: Սիրոյ կեդրոնն է: Կարեւոր դիրք կը գրաւէ զօրութեան բարձրացման ատեն (Տէս նաեւ «Ի^oնչ է գունապիւնին» գրութիւնը, էջ-453) Ան, զօրութեան աւելի վերի խակրաներուն բարձրացումը կը կառավարէ: Ճիշդ այս պատճառով ըստած է, թէ փրկութեան ճամբուն վրայ սէրը ամենակարեւոր ազդակն է: Սէր ամէն անձի հանդէպ, նոյնիսկ թշնամիիդ, սէր ամէն կենդանիի, ամէն բոյսի եւ ամէն բանի: Այս բոլոր տեսակի սէրերուն ամբողջութիւնը կ'ըլլայ սէր հանդէպ տիեզերքի եւ Աստուծոյ:

Հինգերորդը «կոկորդի խակրա»ն է, իր կապոյտ գոյնով եւ «սօլ» նօթով: Անոր զօրութիւնը կը կառավարէ խօսքը, խօսելու կարողութիւնը, հաղորդակցութիւնը եւ ընկերակցութիւնը, ինչպէս նաեւ վիզը, ականջը եւ վահանակերպ գեղձը: Ան նաեւ ստեղծագործիչ է: Անձին կու տայ արուեստի կարողութիւն, նաեւ իր ներքին ձայնը մտիկ ընելու կարողութիւնը:

Վերջին երկու խակրաները ողնայարին վրայ չեն այլ՝ գանկին վրայ:

Վեցերորդ խակրան «ճակտի խակրա»ն է: Կը գտնուի երկու յօնքերուն միջեւ: Անոր գոյնը լեզանի (indigo) է եւ նօթն ալ՝ «լա»: Երբեմն ան կը կոչուի նաեւ

«Երրորդ աչքի խակրայ»: Ան կը կառավարէ աչքերը եւ ուղեղը: Անձին կու տայ Ֆիզիքական եւ հոգեւոր կեանք, կը բացայայտէ շատ մը տուեալներու՝ գրուածիւններու իմաստները: Անձին նաեւ կու տայ ներգիտակցութիւն, ինչպէս նաեւ խաղաղութիւն՝ դիւրացնելով Աստուծոյ հետ հաղորդութիւնը:

Եօթերորդը, «գանկի վերեւի խակրա»ն թագը՝ պսակն է անձին, գոյնը մանիչակագոյն է, նաեւ միւս խակրաներու բոլորին գոյներուն խառնուրդը՝ ճերմակ: Նօթն ալ «սի» է: Ան կը կառավարէ միւս բոլոր խակրաները եւ անձին Աստուածային էութեան հետ կապն է: Կեդրոնն է գիտակցութեան եւ արթնութեան: Մեզ կը կապէ ժամանակի եւ միջոցի հետ: Ան, կեանքի զօրութեան՝ Ս. Հոգիի մուտքի վայրն է: Մենք անով կը կապուինք Աստուծոյ հետ եւ իր կեանքի զօրութեան հետ: Երբ ան դադրի գործելէ, անձը կը մեռնի: Ան, մարդու եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող կեանքի կապին՝ արծաթեայ թելին, մարմնոյն միացած տեղն է:

Գրուած է.

«Մինչեւ կործանելալ իցե լար արծաթոյն,
 եւ խարրակելալ մանեակ ոսկոյն. եւ
 մանրեալ սափորն յաղբէրն, եւ ընկրկելալ
 անխնն ՚ի դորն: Եւ դարչցի Ըողն յերկիր
 որպէս եւ Էրն, եւ Ըոգին դարչցի առ
 Լսորոսաթ որ Եր պնա»: (Ժողովոյ ԺԻ:6-7)

«Դեռ արծաթէ թելը չփրթած, Ոսկիէ բաժակը չկտորած, Սափորը աղբիւրին քով չփշրուած Ու Ջրհորին վրայի անիւը չկտորած: Այն ատեն հողը երկիր պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս Ու հողին Աստուծոյ պիտի դառնայ, որ զանիկա տուաւ»:

Երբ այս խակրան ամբողջովին բացուի անձը կը սրբանայ եւ Աստուածայայտնութեան փորձառութիւնը կ'ունենայ: Երբ այս պատահի, զօրութիւնը այն աստիճանով կը խուժէ անձէն ներս որ ուրիշներու աչքին կ'երեւի մարմինին շուրջ որպէս լուսապսակ: Եթէ լուսապսակը տեսնուած չըլլար, այսօր Յիսուսի կամ սուրբերու գլուխներուն շուրջ լուսապսակներով նկարներ չէինք ունենար: Եթէ ոեւէ անձ կը խորհի թէ «փրկուած» է, պէտք է հարց տայ թէ արդեօք ուրիշներ իր գլխուն շուրջ լուսապսակ մը կը տեսնե՞ն: Եթէ ոչ, պէտք է վերաքննէ իր հաւատացածը:

Հայաստանեայց Եկեղեցին այս խակրաներու առնչութեամբ մասնաւոր արարողութիւն մը ունի: Ծաղկազարդի Կիրակի երեկոյեան, «Դոնբացէք»ի արարողութեան նպատակն ալ մեզի յիշեցնել եւ անդրադարձնել է այս դռներուն կատարեալ աշխատիլը եւ բացուիլը կերտելու մեր պատասխանատուութիւնը: Պատահական չէ որ ապաշխարութեան մեծ պահքի տեւողութիւնը եօթը շաբաթ է եւ Դոնբացէքի արարողութենէն եօթը օր յետոյ ալ Յարութեան տօնն է: «Դոնբացէք»ի սկիզբի Տէրունական աղօթքէն յետոյ, արարողութիւնը կը սկսի սարկաւազի հետեւեալ խօսքով.

«Սպասէի Աստուծոյ իմոյ եւ ական ոռնէի կենարարին որ փրկէ զձառայս իւր եւ կեցուցանէ»:

Ասոր կը յաջորդէ Առակաց Գիրքէն Գլուխ Ը 22րորդ համարէն սկսեալ մինչեւ 31երորդ համարի ընթերցումը: Այս համարներուն մէջ իմաստութիւնն է որ կը խօսի եւ բացայայտ են տրուած խորհուրդները: Նոյն Գլխուն մէջ նաեւ գրուած է.

«Լմէնայն ինչ ուղիղ է իմաստնոց. եւ

յարմարեալ է այնոցիկ ոյ՛ Քրիստոսին
պիտիտեան» : (Լուսակայ Ը:9)

«Ամէնքն ալ հասկցողին ուղիղ են Ու գիտութիւն
գտնողներուն շխտակ են»:

Իմաստութիւնը նաեւ կ'ըսէ թէ Ինք սկիզբէն ի վեր,
ստեղծագործութենէ առաջ ալ գոյութիւն ունէր: Նաեւ
նոյն գլխուն 32-35երորդ համարներուն մէջ գրուած է.

«... Երանելի են՝ որ պճանապահու իմ
պահիցեն: ... Երանեալ է այր որ լո՛ւիցե
ինչ, եւ մարդ որ պճանապահու իմ
պահիցե: որէնիցի առ դրոնն իմ
հանապազ. եւ պահիցե պսեամս մորից իմոց:
Քի ելէ իմ են ելէ կենաց. եւ պարտապի
կամէ իմ ՚ի Տէառնէ» : (Լուսակայ Ը:32-35)

«... Վասն զի իմ ճամբաներս պահողները երջանիկ
կ'ըլլան: ... Երանի՛ այն մարդուն որ ինծի մտիկ կ'ընէ,
Ամէն օր իմ գոնեբու քով կը հսկէ Եւ իմ
գրանդեքներս կը դիտէ: Վասն զի զիս գտնողը կեանք
կը գտնէ Ու Տէրոջմէ շնորհք կը ստանայ»:

Կ'երգուի

«Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ
իմաստուն կուսանացն» շարականը, ուր
կ'ըլլայ հետեւեալ աղերսանքը « ... բացցի մեզ
դուռն ողորմութեան երկնաւոր փեսային: ...
Պայծառացին լապտերք Հոգւոց մերոց ...»:

Հոգւոյ լապտերները խակրաններն են: Ասոր կը յաջորդէ
քահանային աղերսանքը.

«Բա՛յ մեզ Տէր. Բա՛յ մեզ Տէր. Բա՛յ մեզ Տէր
զդուռն ողորմութեան, որ ողբալով կարգամք
առ քեզ»:

Վարագոյրին ետեւէն, կղերական մը կամ սարկաւազ մը, իբր թէ խորանէն գար, հարց կու տայ.

«Ո՛վ էն սոքա զի բացից, զի այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանէն ընդ սա»:

Դուռը թակող քահանան կը պատասխանէ.

«Ո՛չ թէ միայն արդարք մտանէն այլ. եւ մեղաւորք խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ արդարացեալք մտանէն ընդ սա»:

Ներսէն կը պատասխանուի.

«Ձի սա է դուռն երկնից ... արդարոց Հանգիստ, մեղաւորաց քաւարան, Քրիստոսի արքայարան, հրեշտակաց բնակարան, սրբոց ժողովարան, տեղի ապաւենի եւ սուն Աստուծոյ»:


Թակող քահանան կը շարունակէ.

« ... քանզի սա է մեզ մայր անարատ, եւ ՚ի սմանէ ծնանիմք որդիք լուսոյ եւ ճշմարտութեան, եւ սա է մեզ յոյս կենաց. եւ սովաւ գտանեմք զփրկութիւն Հոգւոց, եւ զի սա է մեզ ճանապարհ արդարութեան. եւ սովաւ ելանեմք առ Քրիստոս Հայրն մեր երկնաւոր»:

Երեք անգամ կը կրկնուի «Բա՛ց մեզ Տէր» աղերսանքը:

Հայաստանեայց Եկեղեցին լաւ հասկցած է այս խակրաներու՝ անիւներու կարեւորութիւնը եւ նոյնիսկ հայկական խաչերը ընդհանուր առմամբ կը կանգնին այդ անիւին վրայ: (Տես պատկեր 3, 4 եւ 5) Խաչը, որ մահապարտներուն իր վրայ խաչուելուն պատճառով, մահուան նշան էր, Քրիստոսի յարութեամբ դարձաւ փրկութեան նշան: Մեր մէջ Քրիստոսի յարութիւնը կ'ըլլայ Ս. Հոգիի զօրութեան անխաբանելի խուժումով՝ Փառաց Թագաւորի մուտքով:

ՊԱԿՏԵՐ 3,4 ԵՒ 5



Ըստ Ս. Գիրքի, մեզի պարտ է ինքզինքնիս պատ-
 րաստել որպէսզի արժանի ըլլանք այդ յաւիտենական
 կեանքին եւ անոր տուած երանութեան: Այս ուղղու-
 թեամբ վերոյիշեալ մէջբերումը (Առակաց Թ:1-6) շատ
 պարզ եւ բացայայտ է: Ինքզինքնիս պատրաստել կը
 նշանակէ ձեռքազատուիլ որեւէ խորհուրդներէ,
 խօսքերէ եւ գործքերէ, որ կը խափանեն զօրութեան
 ճամբան եւ շտկել եւ բանալ խակրաները, ինչպէս նաեւ
 դադրեցնել խորհուրդները: Գրուած է.

«Լճաւանսիկ կամ ես առ դորս եւ բախեմ.

եթե ոչ լուծեցե յայնի իմում՝ եւ բանայցե

զորոհան, մտից աս նա՛ է- ընթրիս
արարից աս նա, է- նա ընդ իս» :

(Յայտնութիւն Գ:20)


«Ահա ես դուռը կայներ եմ ու կը վարնեմ. եթէ մէկը
իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ
եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ»:

«Ե- յաշոտոյ անտի էլանէին փայլապակ-
մանէ՛ է- ջայնէ՛ է- որոտմանէ՛. է- է-նն
լամբարէ՛ Հրոյ Բորբո՛ղէոյ ասաջի ատոտոյն,
որ էն է-նն Հոգի՛ն Ապոտո-ժոյ» :

(Յայտնութիւն Գ:5)

«Աթոռէն փայլակներ ու ձայներ եւ որոտմներ կ'ել-
լէին: Աթոռին առջեւ եօթը հատ բորբոքած կրակի լամ-
բարներ կային, որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն էին»:

*Այն զօրութիւնը որ այս խակրաներէն՝ դռներէն
ներս կը խուժէ, նոյն զօրութիւնն է որ մեր
մարմինները կազմող ամէն մէկ հիւլէի կազմութեան
պատճառ եղած է: Յաւելեալ զօրութիւնը կ'աւելցնէ
նաեւ ամէն մէկ հիւլէի թրթռացումի յաճախակա-
նութիւնը, փոխելով ընդհանուր անձին թրթռացումի
յաճախականութիւնը: Զարմանալիօրէն Յովհաննէս իր
տեսիլքին մէջ կարծէք կը տեսնէ եօթը փոքր
հիւլէական ռումբի կրակոտ լուսաւորումը (եօթը
կրակի լամբարներ), որ կը ցոլացնէ զօրութեան
մակարդակը:*





«Յարե՛ս եհար զխորան իր ե-
 ինէն որպէ՛ս փե՛սայ զի ելանէ
 յառա՛գաստի իրմէ :»

«Ճանապարհ արարէ՛լ այնմիկ, որ
 նատի յերկնից յերկինս ընդ
 արե՛ելս :»

«Եսդո՛ւս՞ ՚ի հարա՛սյ եկե՛ացէ ե-
 սո՛րժն ՚ի Փառա՛ն լե՛ռնէ :» .

(Տէս Ս. Պատարագի մեկնաբանութիւն Էջ:425-426)

ԻՆՉ Է «ԳՈՒՆՏԱԼԻՆԻ»Ն

«Գունտալինի» բառին հայերէն թարգմանութիւնը չկրցայ գտնել: Ան հին հնդկական Սանսքրիտ լեզուէն բառ մըն է, որուն իմաստը «օձ» է: Խակրաներու գրուածեան մէջ ներկայացուցինք Ս. Հոգիի զօրութեան անձէն ներս ներգործումը խակրաներու միջոցաւ եւ գլխաւորապէս զանկի վերելի եօթերորդ խակրայէն: Նոյն զօրութիւնը սկսելով առաջին խակրայէն նաեւ կարելի է բարձրանայ դէպի վեր, մինչեւ եօթերորդ խակրան:

Ս. Հոգիի զօրութիւնը կու գայ վերէն վար ներկայացնելով ստեղծագործութիւնը եւ Աստուծոյ մարդեղութիւնը: Իսկ վարէն վեր ելլելը մարդուն կու տայ Աստուածայայտնութեան փորձառութիւնը: Միթէ Աւետարանը չըսէ՞ր թէ Աստուծոյ զաւակներ ենք:

«Նոյն ինչն Հոգին վկայէ Հոգոյս մերոմ, եթէ եմէ որդիք. ապա ե-
 ժառանգիք. ժառանգիք Լսարո-ժոյ՝ ե-
 ժառանգակիցիք Բրիսարոսի. ... »:

(Հոովմայեցիս Ը:16-17)

«Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներ ենք. եւ եթէ որդիներ, ուրեմն՝ ժառանգորդներ, Աստուծոյ ժառանգորդները ու Քրիստոսին ժառանգակիցներ, ... »:

«Գունտալինի»ն կը նմանցուի «օձ»ի մը, որ

որորուած կը «քնանայ» կամ կը սպասէ առաջին խակրային տակ: Կարելի է զայն արթնցնել, բայց ոչ առանց ինքնապատրաստութեան: Երբ արթննայ

ՊԱՏԿԵՐ 1 և 2



կը բարձրանայ: (Տես պատկեր 1 եւ 2) Ս. Պատարագին հետեւեալ մասը ակնարկ մըն է այս «գունտալինի»ի բարձրացման: Երբ վերաբերումի ատեն սարկաւազը զոհը կամ նուէրը կը բերէ, ծածկօրէն կ'ըսէ 19-րդ սաղմոսին 6-րդ համարը, 67-րդ սաղմոսին 34-րդ համարը եւ օրինաց գիրքին 33-րդ գլուխին 2-րդ համարը:

«Յարեու եհար զխորան իւր եւ ինքն որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ:»

«Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկնից յերկինս ընդ արեւելս»: Եւ «Աստուած 'ի Հարաւոյ եկեցէ եւ սուրբն 'ի Փառան լեռնէ:»

«Անոց մէջ արեւին համար վրան մը կանգնեց: Ու անիկա իր առագաստէն ելած փեսայի պէս է:»

Այս կը նշանակէ գունտալինիի արթննալը:

«Անոր ճամբայ շինեցէք՝ որ երկնքի վրայ նստած է դէպի արեւելք»:

«Գունտալինի»ի ճամբան բանալ եւ պատրաստել է: Մեր եկեղեցիներու խորաններն ալ բոլորը դէպի արեւելք կը նային:

«Աստուած հարաւէն կուգայ եւ սուրբն ալ Փառան լեռնէն»:»

Փառան լեռը շատ հաւանաբար Սինայի լեռն է, ուր Մովսէս Աստուած տեսաւ: Ուրեմն Աստուած հարաւէն կու գայ եւ սրբութիւնը՝ լեռան բարձունքէն, այսինքն «գունտալինի»ի վարէն վեր բարձրանալն է եւ երբ գանկի գազաթի խակրային (Chakra) հասնի, սրբութիւնը անձին մէջ ի յայտ կու գայ: Ինչ որ Յիսուսի այլակերպութեան ատեն պատահեցաւ: Յետոյ սարկաւազը բարձրաձայն կ'ըսէ.

«Համբարձէք իշխանք զըրոննս ձեր ի վեր, Համբարձցին դրոնք յաւիտենից եւ մնոցէ թագաւոր փառաց:»

«Վեր բարձրացուցէք ձեր դռները որ փռքի թագաւորը ներս մտնէ:»


Հոս դռները կը ներկայացնեն խակրաները «Chakra» եւ

փառքի թագաւորը Ս. Հոգին (Աստուած) է:

«Ով է սա թագաւոր փառաց, Տէր Հգօր
զօրութեամբ իւրով, Տէր կարող ի
պատերազմի»:

«Ով է այս թագաւորը՝ որ իր զօրութեամբ Հգօր է եւ
Տէր՝ որ պատերազմի մէջ կարող»: (Տես պատկեր 3)

ՊԱՏԿԵՐ 3



Գալիլեայի ծովուն վրայ աշակերտներուն փոթո-
րիկէն ընկղմելու վախը եւ Յիսուսի նաւուն մէջ
քնանալը, կարելի է վերացական իմաստով վերլուծել:
Նաւը կը ներկայացնէ անձը, իսկ աշակերտները՝
մարդուն զանազան բնութիւնները եւ նաւուն մէջ
քնացող Յիսուսն ալ՝ անձին մէջի Քրիստոսը, որ կը

Թուի քնանալ: Բայց պէտք է վախ ունենանք, Քրիստոս նաւուն մէջն է, անկարելի է որ այդ նաւը ընկղմի: Միայն պէտք է Զինք արթնցնել, որպէսզի հանդարտեցնէ հովերն ու ծովերը՝ այսինքն մեր խորհուրդներու եւ զգացումներու փոթորիկները:

Երբ «գունտալինի»ն արթննայ զօրութեան հոսանքը կը բարձրանայ, անցնելով մէկ խակրայէն միւսը: Եթէ անձը ինքզինք լաւ է պատրաստած եւ զօրութեան բարձրացման արգելքներ կան, կրնայ աւերներ գործել: Եթէ այս արգելքը երկրորդ եւ երրորդ խակրաներու միջեւ է, բոլոր զօրութիւնը կը գործէ միայն երկրորդ խակրայէն եւ անձին կրնայ տալ սեռային նախագրաւութիւն: Իսկ եթէ արգելքը երրորդ եւ չորրորդ խակրաներու միջեւ է, այս զօրութիւնը կրնայ «Ես»ը զօրացնել եւ անձին տայ եսասիրութիւն եւ հպարտութիւն: Ասոնց կը հետեւին «Ես»ին գործած բոլոր աւերները:

Արդեօք Ադամ եւ Եւայի օձէն խաբուելուն վերացական իմաստն ալ նո՞յնն է: Ադամ եւ Եւայի «գունտալինի»ի զօրութիւնը շարունակ կը հոսէր, հետեւաբար երկուքն ալ կը գտնուէին Աստուծոյ ներկայութեան դրախտին մէջ: «Գունտալինի»ի բարձրացման միջոցին կրնայ Եւայի երրորդ խակրան յաւելեալ զօրութիւն ստացած ըլլալ: Իր «Ես»ն ալ զօրացած, իր վրայ իշխելով անոր տուած է չարը բարիէն զանազանելու գիտութիւնը, այսինքն երկուութեան գաղափարը՝ չար եւ բարի, ես եւ ան, Աստուած եւ մարդ եւ կորսնցուցած է իր մէջի Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը, հետեւաբար վտարուած է դրախտէն: Հետաքրքրական է թէ «օձ»ն է որ խաբած է Եւան, այսինքն պատճառը «գունտալինի»ի զօրութիւնն է: Երբ օձը զօրացուցած է «Ես»ը, յառաջ եկած է գազանը: «Ես»ի «սա», «տա» (դա) եւ «նա»ի հակումով յառաջ

եկած է «սատանա»ն: Աստուած օձը դատապարտեց միշտ սողալու, ուրեմն չբարձրանալու, որով «գունտալինի»ի զօրութիւնը մնացած է առաջին խակրային տակ, առանց բարձրանալու: Միթէ չե՞նք ըսեր. «մարդ Ադամ եւ Եւայով մեղքը մտաւ եւ Յիսուս Քրիստոսով փրկութիւն ստացաւ»: Յիսուս երեսուն տարի ինքզինք պատրաստելէ յետոյ, անապատին մէջ վերջնականօրէն յաղթելով «սատանայ» կոչած իր «Ես»ին, արթնցուց իր «գունտալինի»ն: Ան, այսպէսով մեզի ցոյց տուաւ թէ փրկուելու համար ինչ պէտք է ընենք. Ըսաւ. «ինծի հաւատացէք» եւ «խաչերնիդ առէք եւ ետեւէս եկէք»:

«...Եմէն ամէն ասեմ յեւ, թէ որ
 Հասարայն յիս, զԳործս զոր ես Գործեմ,
 Եւ նա Գործեացէ, Եւ մեծամեծս Ես իսն
 զնոյնս Գործեացէ. ...»: (Յովհաննոս ԺԴ:12)

« ... Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը որոնք ես կը գործեմ, ինք պլ պիտի գործէ. եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ ...»:

«Եւ որ ո՛չ ասնոս զխաչ իւր՝ Եւ Գայ
 զկնի իմ, չէ՛ ինչ արժանի»: (Մարթէոս Ժ:38)
 «Ան որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս գար՝ ինծի արժանի չէ»:

«... Եթէ ո՛վ կամիցի զկնի իմ Գայ՝ ուրասցի
 զանձն, Եւ ասցէ՛ զխաչ իւր՝ Եւ եկեացէ
 զկնի իմ»: (Մարթէոս Ժ:9:24)

«... Եթէ մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ՛ թող իր անձը ուրանայ եւ խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ»:

«... եթէ ոչ՝ կամի Գալ պէնի իմ, ուրասցի
 պանձն իւր, եւ Բարձրե պխաս իւր՝ եւ
 եկեացե պէնի իմ» : (Մարկոս Ը:34)

«... Ով որ կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր անձը
 ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ»:

«... եթէ ոչ կամի պէնի իմ Գալ, ուրասցի
 պանձն, եւ առցե պխաս իւր Հանապաղ, եւ
 եկեացե պէնի իմ» : (Ղուկաս Թ:23)

«... Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր անձը
 ուրանայ եւ ամէն օր իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս
 գայ»:

Հին կտակարանին մէջ կը տեսնենք թէ «օձ»ը
 կ'ըլլայ թէ մահուան թէ ալ փրկութեան նշան: Եթէ
 անձը «գունտալինի»ն արթնցնելէ առաջ ինքզինք չէ
 պատրաստած, «օձ»ը կ'ըլլայ մահուան նշան եւ կը
 ներկայացնէ «սատանան»: Ան կը զօրացնէ «Ես»ը: «Ես»ի
 զօրացման արգելք ըլլալու համար Ս. Պատարագի
 միջոցին, վերաբերումէն առաջ, սարկաւագը ժողո-
 վուրդը կը զգուշացնէ.

«Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք 'ի թերաշաւատից
 եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից
 մերձեսցի յաստուածային խորհուրդս»:

Ինքնապատրաստութեան համար սարկաւագը կ'ըսէ թէ
 ինչպէս պէտք է ըլլայ:

«Խաղաղութեամբ Տերոջը կ'աղօթենք:
 Հաւատքով եւ սրբութեամբ Աստուծոյ Սուրբ
 սեղանին առջեւ աղօթքի կենանք, առանց խղճի
 խայթի կամ գայթակրութեան, առանց
 նենգութեան եւ խորամանկութեան, առանց
 հմայութեան եւ խաբէութեան, առանց
 երկմտութեան եւ թերաշաւատութեան, այլ
 ուղիղ վարքով պարզ միտքով միամիտ սիրտով

կատարեալ Հաւատքով սիրով լեցուն եւ շատ բարի գործերով օժտուած»:

Երբ Հրեաները Եգիպտոսէ ելքէ յետոյ 40 տարի անապատին մէջ կը թափառէին, միջոց մը օձերու (իժերու) յարձակման ենթարկուեցան: Խայթուած ամէն անձ կը մեռնէր: Ուրեմն այս պարագային օձը մահուան նշան եղաւ: Մովսէս, շատերու մահուան պատճառ եղող օձը ձողի մը վրայ բարձրացուց եւ բոլոր անոր նայողները բժշկուեցան: Այս անգամ ալ օձը եղաւ փրկութեան նշան:

«Եւ անափեաց Տէր 'ի ժողովո՛րդն օջ կոորիշ» էւ Ըարկանէին զժողովո՛րդն. էւ մեռաւ ժողովո՛րդ Բապտէլի»: (ԹԻ-՛՛ ԻԼ:6)

«Եւ Տէրը ժողովուրդին վրայ կիզող օձեր զրկեց. ու խածին ժողովուրդը. այնպէս որ Խարայէլէ շատ ժողովուրդ մեռաւ.»:

«Եւ արար Մո՛վսէս օջ պղնձի, էւ կացոյց զնա 'ի վերայ նշանակին: էւ լինէր՝ յորժամ Ըարկանէր օջ զմարդ, Ըայէր ընդ օջն պղնձի էւ կեայր»: (ԹԻ-՛՛ ԻԼ:9)

«Եւ Մովսէս պղինձէ օձ մը շինեց ու վանիկա ձողի մը վրայ դրաւ. եւ եղաւ որ օձ մը երբ մարդ մը խածնէր. անիկա պղինձէ օձին նայածին պէս կ'առողջանար»:

Վերացական իմաստով, եղածը հոգեկան գետնի վրայ մաքրագործում մըն էր: Անոնք, որոնք «գունտալինի»ն մինչեւ եօթերորդ խակրան չէին կարողացած բարձրացնել, մահուան դատապարտուած էին: Անոնք, որոնք յաջողած էին «գունտալինի»ն մինչեւ եօթերորդ խակրան բարձրացնել՝ բարձրացւած օձին նայել, փրկուած էին: Յատկանշական է

վերոյիշեալներուն անապատի մէջ պատահիր: Հոս նշուած անապատի պարապուծիւնը կը ներկայացնէ մարդկային միտքին անապատը՝ խորհուրդներէ պարպուած միտքը: Երբ «գունտալինի»ի զօրութիւնը բարձրանայ մինչեւ եօթերորդ խակրան, անձը կ'ունենայ գիտակցութեան մակարդակի բարձրացում եւ Աստուածայայտնութեան փորձառութիւն: Կ'ապրի երանութեան՝ Աստուծոյ դրախտին մէջ, որ է յաւիտենականութիւն: Անձը կ'առնէ նոր լուսոյ մարմին, ինչպէս Յիսուսին պատահեցաւ այլակերպութեան ժամանակ: Անձին գլխուն շուրջի լուսապսակը ամենուն տեսանելի կ'ըլլայ:


Հոգեկան առողջութեան նշան լուսապսակը յառաջ կու գայ շնորհիւ արթնցած «գունտալինի»ին՝ արթնցած օձին մինչեւ եօթերորդ խակրայ բարձրացումով: Բժշկութեան մէջ ալ բարձրացած օձը կը ներկայացնէ Փրփրքական առողջութիւնը: (Տես պատկեր 4-5)

Մեր եկեղեցւոյ վարդապետական եւ եպիսկոպոսական գաւազաններն ալ կը կրեն օձի կերպը՝ փրկութեան նշանը: (Տես պատկեր 6-7)

ՊԱՏԿԵՐ 4-5



ՊԱՏԿԵՐ 6-7



Թէեւ Մահմետականութեան մէջ խակրաներու եւ «գունտալինի»ի մասին որեւէ ակնարկութիւն չկայ, սակայն Մահմետականութեան ճիւղաւորումներէն միուն՝ Սուփիականութեան հետեւեալ եօթը տուեալները, որոնք աստուածայայտնութեան համար կը յանձնարարուին կատարել, կը համապատասխանեն

«Գունտալինի»ի եօթը խակրաներէն դէպի վեր բարձրացման:

ա- Անձնատուութիւն (Teslim-feragat) - Անձը ինքզինք նախ պարտ է ձերբազատէ եօթը մահացումեղքերէն: Աս կը համապատասխանէ «Գունտալինի»ի բարձրացման սկզբնաւորութեան եւ զօրութեան առաջին խակրայի հասման:

բ- Կատարել օրէնքը (Sheriat) - Կերտել մարմնային եւ մտային մաքրութիւն: Աղօթքով զօրացնել հաւատքը: Հնազանդիլ բնութեան օրէնքներուն եւ խոհեմութեամբ կիրարկել զանոնք: Աս «Գունտալինի»ի զօրութեան երկրորդ խակրայ բարձրանալն է:

գ- Դաւանանք (Tarikat) - Խոկումով յառաջացնել իր հոգեւոր կեանքը՝ բարձրացնել իր գիտակցութեան մակարդակը: Աս՝, զօրութեան մինչեւ երրորդ խակրայ բարձրանալն է, որով անձը պէտք է դաւանի Քրիստոսի, քան թէ իր «Ես»ին: Պէտք է արձանագրած ըլլայ Ս. Պատերազմի (Jihad) յաղթանակը «Ես»ին դէմ: (Անոնք Քրիստոս բառը չեն գործածեր բայց նպատակը նոյնն է:)

դ- Պաշտամունք-սէր եւ գութ (Merhamet-Rahmet) - (Sadakat) Աս կը ներկայացնէ ճշմարիտ սիրոյ արտայայտութիւն եւ սիրոյ հետեւանք պաշտամունք: Երբ զօրութիւնը կը հասնի չորրորդ խակրային, գութը որ սիրոյ արտայայտութիւնն է, կը գրաւէ անձը:

ե- Արտայայտութիւն եւ դաստիարակութիւն (Talimat)- Երբ զօրութիւնը կը հոսի հինգերորդ խակրայէն, անձին արտայայտութիւնները եւ ուսուցումները կ'արտացոլացնեն ճշմարիտ վարդապետին՝ Քրիստոսի արտայայտութիւնները եւ ուսուցումները, այնպէս ինչպէս էր Յիսուսի մօտ:


զ- Կարողութիւն (Marifat) - Ներգիտակցութիւնով փոխարինել իմացականութիւնը եւ ունենալ որոշ չափով փորձառական գիտութիւն: Աս, զօրութեան

վեցերորդ խակրայ հասնիլն է, ուրկէ անձին կրնայ գալ գերմարդկային կարողութիւններ եւ կատարէ արարքներ, որոնք մենք կը համարենք հրաշք:

է- Ճշմարտութիւն (Hakikat) - Աստուածայայտնութեան փորձառութիւն: «Գունտալինի»ի մինչեւ եօթերորդ խակրայ բարձրանալն է, որով անձը կը սրբանայ:

Մեզի կը մնայ մեր անձը պատրաստել՝ «Ես»ը խաչել եւ համբերութեամբ սպասել յարութեան:

«Սպասէի Աստուծոյ իմոյ եւ ակն ունէի կենարարին որ փրկէ զծառայս իւր եւ կեցուցանէ:»





Ձի որպէս փայլահան փայլաբազմալ 'ի
 ներքոյ երկնից՝ ընդ երկնի-է Չափիցէ,
 նոյնպէս է- որդի մարդոյ յառա-րն
 ի-բո-մ:

(Ղուկաս ԺԷ:24)

Սասն զի ինչպէս փայլահը երկնիին քակ մէկ
 դիէն փայլաբազմալո՛ւ՝ մինչէ- երկնիին քակ մի-ս
 դին լոյս կո- քայ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին
 մարդոյ իր Գալու-ն օրը:



Սիրոյ սուրբ Հասարակարէա յիս, Է-
 Հոգի ուղիղ նորոգելա 'ի փորի
 իմում :
 (Սաղմոս Ծ : 12)

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ Էն
արդիւն, զի նոյա զԼսարուած
 Գեացեն : »
 (Մարգէլոս 5 : 8)

ԻՆՉ Է ԽՈԿՈՒՄԸ

Երբ տասը տխմար ընկերներ պտոյտի մը ընթացքին գետի մը եզերքը կը հասնին, կ'որոշեն լողալով գետին դիմացի ափը անցնիլ: Երբ միւս կողմը կը հասնին, վստահ ըլլալու համար թէ բոլորն ալ ապահով հասած են, բոլորի ներկայութիւնը ստուգելու համար, կը սկսին համրել: Առանց բաձառութեան բոլորն ալ ինը հոգի կը համրեն: Անմիջապէս գետին եզերքը կը վազեն, տեսնելու թէ արդեօք իրենց տասներորդ ընկերը դժուարութեան մէջ է՞, օգնութեան պէտք ունի՞: Ամէն ինչ հանդարտ կը գտնեն եւ անսովոր ոչինչ: Այն եզրակացութեան կը հանքին թէ իրենց տասներորդ ընկերը խեղդուած է եւ հոսանքը գինք քշած ու տարած:

Բոլորն ալ գետին եզերքը նստած, կը սկսին լալ եւ իրենց ընկերոջ կորուստը ողբալ: Անցորդ մը հարց կու տայ թէ ինչո՞ւ կու լան: Անոնք ալ պատահածը կը պատմեն եւ լալով կ'ըսեն թէ տասը ընկեր էին եւ հիմա ինը հոգի մնացած են: Անցորդը անմիջապէս անոնց տխմար ըլլալը կը հասկնայ: Կ'ըսէ թէ կրնան սխալած ըլլալ եւ կը թելադրէ անգամ մը եւս համրել: Բոլորն ալ նոր յոյսով եւ եռանդով կը սկսին համրել: Բայց աւա՛ղ, բոլորն ալ դարձեալ ինը հոգի կը համրեն: Անցորդը կը խղճայ անոնց վրայ: Անոնց կը պատուիրէ մէկ շարքի վրայ կենալ եւ թիւ մէկէն սկսեալ իւրաքանչիւրը յաջորդական թիւը ըսել: Առաջինը կ'ըսէ «մէկ», երկրորդը՝ «երկու»: Երբ կարգը կու գայ վերջինին, ան

«տասը» կ'ըսէ: Մեծ ուրախութիւն կը ծագի տխմար ընկերներու մէջ, որովհետեւ կորսուած տասներորդ ընկերը գտնուած էր: Ո՞րն էր տասներորդ ընկերը: Երբ կը համրէին, համրողը ինքզինք համրելու մոռցած էր: Շարքի մէջ համրելով իւրաքանչիւրը ինքզինք գտած էր:

Համայն մարդկութիւնն ալ կը նմանի այս տասը տխմար ընկերներուն: Մարդիկ կը տոկան ամէն տեսակի դժուարութեան եւ կը յաղթահարեն զանոնք: Կ'ամբարեն ամէն տեսակի գիտութիւն, բայց միշտ զուրկ կը մնան կատարեալ երջանկութենէ, որովհետեւ ինքզինքնին կորսնցուցած են եւ չեն գտներ:

Խոկումը (meditation) սկիզբն է մտախոհութեան: Անոր նպատակը «Ո՞վ ես դուն» հարցումին պատասխանը գտնել է: Աս շատ պարզ հարցում մըն է, բայց պատասխանը գտնել շատ դժուար: Մարդիկ ստեղծագործութեան սկիզբէն ի վեր կը ջանան այդ պատասխանը գտնել, բայց ան միշտ անոնցմէ խոյս տուած է, ի բացառեալ մի քանիներէ:

Ամէն անձի կեանքին նպատակը երջանիկ ըլլալ է, անգիտակից՝ թէ իր ճշմարիտ էութեան բնութիւնը երանութիւն է: Մարդ արարած, շնորհիւ իր հաճելի երեւակայութիւններուն, երջանկութիւնը միշտ իրմէ դուրս առարկայական բաներու միջոցաւ փնտռած է: Եթէ նոյնիսկ անոնց պատճառաւ երջանկութիւն մըն ալ գտած է, ան միշտ ժամանակաւոր եւ կարճ եղած է: Անոր հետեւած է տխրութիւնն ու ցաւը:

Բոլոր ստեղծագործութիւնը կազմուած է հինգ տուեալներու վրայ.

ա- էութիւն, բ- Գիտութիւն, գ- Երանութիւն, դ- ձեւ, ե- անուն:

Առաջին երեքը հիմնականներն են եւ Աստուա-

ծայրին: Իսկ վերջին երկուքը մարդոց կողմէ՝ աւելցուած են, հետեւաբար կը կազմեն պատրանքը: Մարդ արարած միշտ իր երջանկութիւնը փնտռած է վերջին երկուքին մէջ, մոռնալով թէ երանութիւնը իր էութեան բնութիւնն է: Խոկումը եւ մտախոհութիւնը մեր ճշմարիտ էութիւնը վերագտնելու միջոցներն են, որ է մեր գիտակցութիւնը եւ անոր ալը՝ Քրիստոս: Նոյն գիտակցութիւնն է որ կը գործէ բոլոր տիեզերքի մէջ, որով մենք անջատ եւ զատ չենք ուրիշ որեւէ բանէ ու անձէ: Խոկումի եւ մտախոհութեան նպատակը փորձառականորէն գիտնալ եւ ճանչնալ է այդ գիտակցութիւնը, որպէսզի կարենանք նաեւ տեսնել միութիւնը՝ բազմաթիւին մէջ: Խոկումը եւ մտախոհութիւնը անձին կողմէ՝ ճանչնալ է անձը, անձին միջոցաւ, ուր թէ՛ ենթական, թէ՛ առարկան, թէ՛ ալ միջոցը կը նոյնանան: Երրորդութիւնը կ'ըլլայ մէկ: Իմացական հասկացողութիւնը բաւարար չէ: Անձը պէտք է գործնականորէն հետապնդէ եւ ունենայ այդ գիտակցութեան փորձառութիւնը: Աս չի նշանակեր իր պարտականութիւնները կատարելէ խուսափիլ, միայն ոտքերը ծալած նստիլ, աչքերը գոցել եւ «օմ» երգել: Ընդհակառակը, կեանքի բոլոր պարտականութիւնները պէտք է լիովին կատարուին, այդ ալ ամենալաւ կերպով, ամենայն ուրախութեամբ եւ առանց տրտնջալու: Բնաւ պէտք է կապուած ըլլալ անոնց արդիւնքներուն, այսինքն արդիւնքներուն նկատմամբ պէտք է ըլլալ անտարբեր: Արդիւնքները կը պատկանին Աստուծոյ: Մեր պարտականութիւնն է մեր լաւագոյնը ընել, կատարել այնպէս, ինչպէս պիտի կատարէինք եթէ այդ Աստուծոյ մէկ ինդրանքը ըլլար: Աս միայն կարելի է երբ բազմաթիւին մէջ միութիւնը կը տեսնենք: Երբ ամէն բանի եւ ամէն անձի մէջ Քրիստոս տեսնենք, այն ատեն կը քաղենք խոկումին պտուղը՝ յաջող մտա-

խորհուրթիւնը:

Ո՛րք անձ պէտք չէ ինքզինք դատապարտէ: Պէտք է մոռնայ իր անցեալի մեղքերը: Կարեւորը ներկան է, ներկային մէջ խորհածը ու ըրածը: Երբ ինք մոռնայ իր անցեալի մեղքերը, Աստուած ալ զանոնք կը ներէ: Ամէն անձ ունի սոսկալի թշնամի մը՝ իր չզսպուած միտքը: Նաեւ ունի հրաշալի եւ օգտակար ընկեր մը՝ նոյն միտքը՝ խորհուրդներէ պարպուած՝ մաքուր սիրտ: Խոհուրթիւն եւ մտախորհուրթեան նպատակը այդ միտքը զսպել՝ մեր ուշադրութիւնը մեր Ֆիզիքական, զգացական եւ իմացական մարմիններէն դէպի մեր իսկական հոլթեան՝ Քրիստոսի դարձնել է: Միտքը, միշտ անհանգիստ, նման անընդհատ ճիւղէ ճիւղ ցատկոտող կապիկի, խորհուրդէ խորհուրդ կը ցատկոտէ: Նախ կարեւոր է միտքը հանդարտեցնել եւ խաղաղեցնել: Յետոյ ալ անոր ուշադրութեան ուղղութիւնը փոխել, փոխանակ անձէն դուրս գտնուող առարկայական բաներու վրայ կեդրոնանալու, կեդրոնանալ ենթակայականին՝ Քրիստոսի, անձին իր հոլթեան եւ գիտակցութեան վրայ:

Միտքը իր երեւակայութիւններուն հետեւանք անձին մէջ կ'արծարծէ փափաքներ: Անոնք ալ անձին կու տան զանոնք իրականացնելու ջանքը: Շնորհիւ այդ ջանքին, փափաքը իրականացնող անձը քիչ մը կ'երջանկանայ:

Տիեզերքի ստեղծագործութեան մէջ ամէն ինչ որ գոյութիւն ունի, ներառեալ մեր մարմինները, զգայարանքները եւ անոնց տուած բոլոր փորձառութիւնները, մեր զգացումները, մեր միտքերը եւ մեր իմացականութիւնը, բոլորն ալ առարկայական են եւ չեն ներկայացներ ենթական:

Խոհուրթ միտքը մարգելով զսպել է, այսինքն՝ սրբացներ: Ասիկա, զայն միայն մէկ կէտի վրայ

կեդրոնացնելով կարելի է: Այսպէսով կ'ըլլանք թէ՛ «աղաւնիներու պէս միամիտ» եւ թէ՛ «օձերու պէս խորագէտ», այսինքն արթուն:

Խոկումի միջոցին միտքը խաղաղեցնելու եւ սրբացնելու շատ մը արգելքներ յառաջ կու գան: Հետեւեալները ասոնցմէ ամենէն կարեւորներն են .

ա- Քուն, քնանալ- Ճիշդ է թէ խորունկ քունի մէջ բոլոր խորհուրդները կը դադրին, բայց ինչ օգուտ: Անձը արթուն չէ, որպէսզի ճշմարտութեան փորձառութիւնը ունենայ:

բ- Անհանգիստ միտք- Միտք մը, որուն խորհուրդները չեն զսպուի: Անձը շատ վիշտ կամ ակնկալութիւններ ունի:

գ- Մտային հակումներ- Հակումներ, որոնք անձը կերպով մը սանձած է, բայց անցեալին այդ հակումներուն անհետացման համար հարկաւոր լուծումներ չեն գտնուած: Ասոնք, խոկումի պահուն, յանկարծ ի յայտ կու գան:

դ- Յարատեւութեան պակաս- Անձը կը կարծէ թէ կարճ ժամանակի մը մէջ պիտի յաջողի, իսկ եթէ խոկումէն անմիջական արդիւնք չառնէ, կը յուսահատի եւ կը դադրի յարատեւելէ: Միտքը սրբացնելը ամբողջ կեանքի մը տեւողութեան յարատեւօրէն կատարուելիք գործունէութեան մը հունձքն է: Յիսուս, իր փափաքած մակարդակին հասնելու համար, երեսուն տարի յարատեւած է:

ե- «Գերմարդկային» կարողութիւններ- Երբ միտքը զսպուի, անձը կրնայ որոշ կարողութիւններ՝ յստակատեսութիւն, հեռաշարժութիւն նշմարել, որոնց գոյութեան գիտակցութիւնը եւ անոնցմէ օգտուելու կարողութիւնը նախապէս չունէր: Ասոնք ալ իրենց կարգին արգելք կրնան հանդիսանալ միտքը սրբացնելու: Անձը պէտք չէ տարուի ի յայտ եկած այս

կարողութիւններէն եւ շարունակէ իր միտքի կեդրոնացումը բուն նպատակակէտին վրայ՝ առանց շեղումի:

զ- Առարկայացնել փորձառութիւնը- Աս ամենակարեւոր արգելքն է: Երբ անձը կ'առարկայացնէ խոկումի արդիւնք եղած խաղաղութիւնը եւ երանութիւնը, դարձեալ երկուութիւն յառաջ կու գայ: Երկուութեան հետեւանք «Ես»ը իրեն կու տայ յաջողութեան հպարտութիւնը: Անձը պէտք է միշտ ուշիմ եւ արթուն ըլլայ, անընդհատ հսկէ, որպէսզի որեւէ փորձառութիւն չառարկայանայ:

Յաջող խոկումի եւ մտախոհութեան պտուղները հետեւեալներն են.

ա- Խաղաղութիւն մը, որ փոփոխութեան ենթակայ չէ: Յիսուս Քրիստոս ըսաւ.

«Խաղաղութիւնն ինքզինքն չէզոքացնուած զոյգութիւնն է, որ արդէս աշխարհս որայ՝ որայ էս չէզոքացնուած է: Ան ինքզինքն չէզոքացնուած է: Ան ինքզինքն չէզոքացնուած է:» (Յովհաննէս ԺԴ:27)

«Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի, ո՛չ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ: Սրտերնիդ չխուզի ու չվախնայ:»

բ- Գոհունակութիւն մը, որ անզուգական է: Ինքնաճանաչման գոհունակութիւնն է: Տասներորդ ընկերը գտնելու գոհունակութիւնն է:

գ- Երանութիւն, որ յաւիտենական երջանկութիւն է:

Երանութիւնը ակնթարթային արագութեամբ ի յայտ կու գայ, ինչպէս ակնթարթային արագութեամբ կը գոցուին վառ արեւին նայող աչքերը: Բազմաթիւին մէջ միութեան փորձառութիւնը ունենալ՝ Քրիստոսի հետ նոյնանալ, ինքնին երանութիւն կու տայ: Երբ

անձը Քրիստոսի հետ նոյնանայ, ինչպէ՞ս երանութեան մէջ չըլլայ: Քանի որ Աստուած սէր է, Քրիստոսի հետ նոյնացմամբ անձին մէջ ինքնաբերաբար կը ծագի սիրոյ գաղափարը: Սէր ամէն ինչի եւ ամէն անձի հանդէպ: Այսպէսով անձը կ'ունենայ բացարձակ ազատութիւն եւ բոլորին ալ կը պարգեւէ բացարձակ ազատութիւն: Ամէն ինչ եւ ամէն անձ իրենց վիճակով կ'ընդունի՝ առանց դատելու: Տարբերութիւն չի տեսներ ափ մը հողի եւ ափ մը ոսկիի միջեւ:

Կ'ըսուի թէ ամէն անձ, իր կեանքին ընթացքին, ուշ կամ կանուխ, նման փորձառութիւն կ'ունենայ, բայց ատիկա հազիւ մէկ երկվայրկեան կը տեւէ: Որովհետեւ անձը չ'ակնկալեր եւ չի սպասեր, նոյնիսկ չ'անդրադառնար թէ ի՞նչ զգացած է: Անձը պէտք է արթուն ըլլայ, աչալուրջ եւ յարատեւ հսկող: Կ'ըսուի թէ խոկումը պէտք է կատարուի մաքուր, հանդարտ, անձայն եւ հանգիստ տեղ մը նստած, աչքերն ալ փակ, որպէսզի զգայարանքներու կողմէ միտքին ուղղութիւնը փոխող որեւէ տուեալ չըլլայ: Անձը պէտք է առարկայականօրէն դիտէ իր մտքի խորհուրդները, իբրեւ թէ այդ խորհուրդները իրը չըլլային: Անձը իր միտքը պէտք է կեդրոնացնէ այն էութեան վրայ որ ականատես է այդ խորհուրդներուն: Ծայրահեղ արթնութեամբ եւ ուշադրութեամբ կեդրոնանալ այն ակնթարթին վրայ, որ կը գտնուի երկու յաջորդական խորհուրդներուն միջեւ: Կ'ըսուի, թէ ժամանակի ընթացքին, երկար յարատեւութեան հետեւանք այս ընթացքը կրնայ խորհուրդներու ողողումը դադրեցնել: Երբ անձը յաջողի այդ ողողումը դադրեցնել, իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս ի յայտ կուգայ իր մէջ: Ըստ ինծի խոկում կամ մտախոհութիւն ամէն օր, մէկ ժամուայ արարք մը չէ, այլ մեր կեանքի ամէն մէկ ըրպէն պէտք է մտախոհութեան պահ ըլլայ: Պէտք է


չարունակել գործել աշխարհի մէջ այնպէս ինչպէս անցեալին գործած ենք եւ պէտք է ապրինք մեր կեանքը առանց փոփոխութեան: Մտախոհութիւնը ոչինչ կը փոխէ: Բայց եթէ մեր միտքերը կեդրոնացած ըլլան այն գիտակցութեան վրայ, որ կը գտնուի մեր ամենուն մէջ, այն ատեն կը տեսնենք Քրիստոս ամէն անձի մէջ, թէ՛ սուրբին, թէ՛ ալ ոճրագործին: Երկուքին հանդէպ ալ մեր յարաբերութիւնը նոյնը կ'ըլլայ: Այն ատեն մենք ալ կրնանք ըսել «Ես եւ Հայրը մէկ ենք»: Ահա այս է վերստին ծնունդը, միտքի ուղղութեան փոփոխութիւնը:

Ընդհանուր առմամբ կը խորհինք թէ երջանիկ ենք, եթէ կեանքի լաւ ընկեր մը, մէկ կամ երկու բարի զաւակներ եւ ապրուստ ապահովող լաւ գործ մը ունինք: Այն ամուսնութիւնները որ կը կարծուէին երջանկութիւն բերել, կրնան կեանքը դժոխքի դարձնել: Եթէ նոյնիսկ անձը իր յուսացած կեանքը ապահովէ, հիւանդութիւններ եւ մահ իրմէ կրնան խլել բոլոր ակնկալած երջանկութիւնը: Նպատակը երջանկութիւնը արտաքին բաներէ կամ յարաբերութիւններու մէջ գտնել չէ, այլ զայն մեր ճշմարիտ էութեանը մէջ գտնելն է, քանի որ անոր բնութիւնը երանութիւն է: Կը նմանինք անձի մը, որ իր բոլոր օրը իր ինքնաշարժին բանալիները կը փնտռէ, անգիտակից թէ անոնք արդէն իր գրպանն են: Կը նմանինք մօր մը, որ իր զաւակը՝ իր աչքին լոյսը, իր հոգիին սէրը, տօնակատարութեան թափօր մը դիտելու համար, քաղաք կը տանի: Զաւակը, թափօրը աւելի լաւ դիտելու համար, փողոցին դիմացի կողմը կ'ուզէ անցնիլ: Մայրը ասոր մէջ անպատեհութիւն մը չի տեսներ եւ կ'արտօնէ, բայց աչքը միշտ զաւակին վրայ է: Երբ թափօրը կը մօտենայ եւ կնոջ առջեւէն կ'անցնի, թափօրին մէջի անձերը կը խաբանեն կնոջ

տեսութիւնը եւ մայրը այլեւս իր գաւակը չի կրնար տեսնել: Ոստիկանները ճամբան գոցած, չեն արտօներ որ ինքն ալ դիմաց անցնի: Մինչեւ թափօրի անցքին վերջաւորումը մայրը իր աչքին լոյսը, իր հոգիին սէրը չի կրնար տեսնել: Երբ թափօրին մէջի վերջին անձն ալ կը հեռանայ, գաւակը մօրը տեսանելի կ'ըլլայ:

Աղամ եւ Եւայի սկսիլ տուած թափօրը տակաւին կը շարունակէ: Թափօրին մէջի անձերը մեր խորհուրդներն են, մինչեւ որ անոնք չվերջանան մենք ալ մեր հոգիին Սէրը, մեր աչքին Լոյսը չենք կրնար տեսնել: Մենք թափօրը դիտողն ենք, նաեւ կազմակերպիչը: Թափօրը շարունակելու կամ կեցնելու որոշումը մերն է: Յիսուս իր թափօրը կեցուց: Ինչո՞ւ մենք ալ չկարենանք:

Խոկումի եւ մտախոհութեան նպատակը անձին ինքզինք գտնելն ու «Դուն ո՞վ ես» հարցումին կարենալ պատասխանելն է: Այդ պատասխանն ալ է «Ան, եմ ես»:





Գիշերը երկնակամարին զրայ, Բազմաթի-
 աստղեր կը փեանես Բայց ոչ առաօտուն, Երբ
 արեւը կը ծագի: Մի՞թէ կարելի է՞ ըսել, թէ
 լոյս օրոտայ մէջ երկնակամարին զրայ աստղ
 Գոյութիւն չունի:

Ո՛վ մարդ արարած, Դու խաւարամտութեանդ
 օրերուն երբ Լստուած չես փեաներ,
 մի ըսեր թէ Լստուած Գոյութիւն չունի:
 (Բ. Բարամահամա)

ՎԵՐՁԱԲԱՆ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հոն ուր արժէքը կը նուազի, արժէքին բարձրութիւնը ցոյց տուող ածականները կը բազմանան:»

Վերոյիշեալ ասացուածքը իրողութիւն մը կը ներկայացնէ: Երբ տարիներ առաջ հիւանդանոց բժշկութեան սկսայ, հիւանդանոցը կը կառավարուէր մայրապետներու կողմէ: Ամէն ինչ լաւ կ'ընթանար, առանց յայտարարելու որեւէ մարդասիրական լոգունգներ, որոնք արդէն լիովին կը գործադրուէին:

Երբ մայրապետները քաշուեցան եւ կառավարութիւնը ղեկավարութիւնը ձեռք առաւ, կարճ ժամանակէ մը յետոյ, սկսան հիւանդանոցի մուտքին պատերուն վրայ հիւանդանոցի առաքելութիւնը եւ մարդասիրական բոլոր օրէնքները մատնանշող յայտարարութիւններ գետեղել, որոնք պէտք էր կատարուէին: Հեզնականը այն է որ անոնք այլեւս լիովին չէին գործադրուէր: Երբ մայրապետներու օրով կը գործադրուէին, անոնց մասին չէր խօսուեր, բայց յետոյ երբ չէր կատարուեր, ամենուրէք կը խօսուէր: Նախապէս ուշադրութեան կեդրոնը հիւանդն էր, իսկ ետքը՝ նիւթականը:

Հոգեկան ճամբորդութեան ընթացքին ալ անոնք, որոնք իսկական հոգեկան գետնի վրայ յառաջացում կ'ունենան, լուռ կը մնան եւ այդ մասին չեն արտայայտուիր: Անոնք կը ճանչցուին իրենց գործերէն: Ասոնց հակապատկերն են անոնք, որոնք ասդին ու անդին կը յայտարարեն թէ «փրկուած» են կամ «վերստին ծնունդ» ունեցած: Ասոնք կը նմանին պարապ տակառի, որ վասն ոչինչի, շատ ազմուկ կը

հանէ: Իսկական փրկութիւնը այս կեանքի ընթացքին Քրիստոս ի յայտ բերել է, մեր ճշմարիտ հոգիները՝ մեր հոգեկան «մարմին»ը գտնել է: Այս ուղղութեամբ «գիտնալը» հետեւանք չէ որոշ տուեալներու ամբարումով գիտութեան աւելացումը, կամ իմացականութեան տրամաբանութեամբ հասկնալը: Այս վերջինները ընդհանրապէս արգելք կը հանդիսանան այն «գիտնալուն», որ ինքնաբերաբար կը յայտնուի՝ առանց խորհելու: Անձը ինքզինք կը ճանչնայ ոչ այնպէս որ ինք կ'ուզէ ըլլալ, այլ այնպէս ինչպէս որ է: Ինքնաճանաչման համար քիչ մը ջանք անօգուտ է, պէտք է անձը լրիւ փոխուի, ապա թէ ոչ նախընտրելի է որ բնաւ չփոխուի: Այդ փոխուիլը ինքնապատրաստութիւնն է: Բոլորս ալ կը փափաքինք «երկինք երթալ»: Այս փափաքը ծնունդ կ'առնէ միտքէն եւ խորհուրդներէն: Փափաքը պէտք է սրտէն բխի եւ ոչ միտքէն: Ճիշդ ասոր համար սէրը անհրաժեշտ է: Սիրտի փափաքը կ'ըլլայ անձին հոգիէն յայտնութեան իրականացումը: Այս իրականացումը անձին կու տայ զօրութիւն մը, որ ոչինչ կրնայ զայն փճացնել: Այս «գիտնալուն» իմաստը դժուար է ըմբռնել, իսկ խորհուրդին եւ մտքին տուած իմաստը շատ յստակ եւ ըմբռնելի է: Հաւատքը կարելի չէ մէկու մը փոխանցել: Ան խորհուրդներէ ալ յառաջ չի գար, այլ կը բխի ուղղակի հոգիէն ստացուած գիտութենէ եւ գիտակցութենէ: Խորհիլ, գիտնալ եւ գիտակցութիւն իրարմէ շատ տարբեր հասկացողութիւններ են:

Այս գիրքին նպատակը որեւէ մէկը համոզել չէ, ոչ ալ գրուածները բացարձակ ճշմարտութիւն են: Ասոնք իմ ներկայ տեսակէտներն են: Կարելի է որ ապագային տարբեր խորհիմ: Ո՞վ գիտէ ինչն է ճիշդը: Խորհուրդները միշտ փոփոխակի են: Այս գիրքին նպատակը ցոյց տալ է, թէ կան նաեւ տարբեր

մեկնաբանութիւններ, ուրիշ տեսակէտներ: Ամէն անձ ինք պարտ է պրպտել եւ հետապնդել ճշմարտութիւնը՝ այն կերպով որ կը համապատասխանէ իր բնութեան:

Կան մի քանի հիմնական իրողութիւններ եւ ճշմարտութիւններ, որոնք անխախտելի են.

ա- Աստուած խտրութիւն չ'ըներ եւ արդար է

բ- Աստուած սէր է

գ- Աստուած ամէն տեղ է

դ- Աստուած ամենակարող է

ե- Աստուած ամենագէտ է

Եթէ այս տուեալներուն կը հաւատանք, անկարելի է որ որեւէ մէկը ատենք: Քանի որ Աստուած ամէն տեղ է, ուրեմն ամէն անձի մէջ ալ է՝ անկապակից անոր պատկանած կրօնքէն՝ Քրիստոնեայ, Մովսիսական, Մահմէտական, Հնդկական, Պուտտայական...: Եթէ Աստուած արտօնէ որ անձ մը կրօնքի մը մէջ ծնի, որ ըստ ուրիշ կրօնքներու դատապարտուած ըլլայ «դժոխք երթալու», խտրութիւն ըրած կ'ըլլայ: Քանի որ Աստուած կրօնքներու միջեւ խտրութիւն չի դներ, ուրեմն որեւէ կրօնք իրեն համար ընդունելի է: Հետեւաբար հարկ չկայ որեւէ մէկը կրօնափոխութեան մղելու: Յիսուս ալ կրօնքներու միջեւ խտրութիւն չդրաւ: Ինք սամարացիին հետ ալ նստեցաւ եւ խօսեցաւ, հռովմայեցիին համար ալ ըսաւ թէ բոլոր Իսրայէլի մէջ ամենաշատ հաւատք ունեցող անձն է: Աշակերտներուն պատուիրեց փրկութեան ճամբան քարոզել այն օրուայ «հեթանոսներուն», այսինքն անոնց, որոնք Մովսիսական կրօնքէն չէին: Մենք ինչո՞ւ խտրութիւն կը դնենք:

Մարդիկ կը նմանին մեքենայի մը, շատ բարդ մեքենայի մը: Մարդ կարող է հասկնալ եւ պատշաճ կերպով գործածել նոյնիսկ ամենաբարդ մեքենան, բայց անկարող է հասկնալ իր մեքենան՝ իր Անձը:

Կ'ապրինք մեքենայի մը նման՝ համաձայն որոշ տուեալներու, ինչպէս պարզ մեքենայ մըն ալ կը գործէ համաձայն որոշ տուեալներու: Զարմանալիօրէն կը գոհանանք նման կեանք մը ապրելով: Խաբէբայու-թիւնը, նենգութիւնը եւ տգիտութիւնը թէ՛ ասոր պատճառն են եւ թէ՛ հետեւանքը: Նոյնիսկ այսօրուայ բժշկութիւնը, որ յառաջդիմած կը համարենք, կը համապատասխանէ այս «մեքենայ»ին նկատմամբ մեր ունեցած տգիտութեան մակարդակին: Մարդ աշխարհի վրայ մեքենայի պէս կը գործէ եւ կ'ապրի անգիտակից իր ըրածէն:

Ես «Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ» ծնելու բարեբախտութիւնը ունեցայ: Ան եղաւ «ծննդավայրը իմ հոգւոյս»: Եօթը տարեկանիս դպրութեան սկսայ: Օրուայ դպրապետը՝ Նիկողոս Թաթարեան հօրս ըսաւ. «Ուշ մնացեր է»: Այն օրուընէ սկսեալ սիրահարուեցայ եկեղեցիիս: Ի բաց առեալ վերջին տասնեակ մը տարիներու, կեանքիս ընթացքին ժամերգութենէ մը իսկ չեմ բացակայած: Եկեղեցիս կը սիրեմ անձիս պէս: Երբ հիւանդ ըլլայի մայրս կ'ըսէր. «Տաքութիւն ունիս, այսօր մի երթար, պառկէ հանգիստ ըրէ»: Պատասխանս կ'ըլլար. «Պիտի երթամ, ես հոն կը բժշկուիմ»: Կազդուրուած տուն կը վերադառնայի: Յաճախ ըսած է. «Կեանքիդ մէջ ամենեւին եկեղեցին մի լքեր»: Ես ալ կը պատասխանէի. «Եթէ զիս դռնէն դուրս նետեն, պատուհանէն ներս կը մտնեմ»: Հայաստանեայց եկեղեցին անգուգական եկեղեցի մըն է: Անոր ծէսերուն մէջ պահուած ու պահպանուած բազմաթիւ հոգեկան ճշմարտութիւններ կան, որ աւա՛ղ այլեւս ոչ կը տեսնենք, ոչ ալ կը հասկնանք: Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդէպ գովասանքս հայկական ծագումէս բխած հպարտութեան մը հետեւանք չէ: Սակայն, այսօր այլեւս հպարտանալու պատճառ մը չկայ:

Ընդհակառակը սիրտս սոսկալիօրէն խռոված է: Մօրս տուած խոստումս չկրցայ պահել, ոչ թէ անոր համար որ ես փոխուած եմ, այլ եկեղեցիս է որ փոխուեցաւ: Մասնակից դառնալ եղած փոփոխութիւններուն, կը նշանակէ փոփոխութիւններուն հաւանութիւն տալ:

Երբ հիւանդ մը իր նեղութեան եւ ցաւին ճար մը գտնելու համար բժիշկին կը ներկայանայ, որոշ դարմանում մը չլիցադրուած հարկ է նախ ախտաճանաչութիւնը կատարել: Ախտաճանաչումը որոշելու համար բժիշկը հարցումներ կը հարցնէ, կ'որոշէ ախտանիշերը եւ հիւանդը քննելէ ետք կը հասնի եզրակացութեան մը: Ասոր վրայ կ'որոշուի դարմանումը:

Նոյն մօտեցումով քննած եմ նաեւ իմ «հոգևոյս ծննդավայրը»՝ սիրելի եկեղեցիս եւ անոր ներկայ վիճակը: Այս ուղղութեամբ ես մասնագէտ չեմ, բայց պէտք չկայ մասնագէտ ըլլալու: Ամենուն յայտնի է, թէ ան հիւանդ է: Ան ապրեցաւ մօտաւորապէս 1650 տարիներ՝ շատ առողջ, հակառակ հազարումէկ համաճարակներու, որոնք սպառնացին իր կեանքին: Զարմանալիօրէն վերջին 60 տարուայ ընթացքին ան տկարացած է: Արդեօ՞ք շատ ծերացաւ: Չեմ կարծեր: Հարցուփորձիս եւ քննութեանս արդիւնք ի յայտ եկան հետեւեալ ախտանիշերը եւ կը թուի թէ ասոնք ըլլան իր տկարութեան նշանները.

ա- Հայաստանեայց Եկեղեցին ունի երկու գլուխ: Արդեօք աս ի՞նչի նշան է:

բ-Ժամերգութիւնները լիովին չեն կատարուիր: Ինչպէս նաեւ Ս. Պատարագը եւ Եկեղեցւոյ Խորհուրդները (sacraments) կը կրճատուին: Նոր սերունդը լուր անգամ չունի թէ ինչ են աւանդական արարողութիւնները: Ոչ սորվեցնող կայ եւ ոչ ալ սորվող: Նոյնիսկ աւելի կարճ նոր «Մաշտոց» մը հրատարակուած է:

դ- Խորհուրդները իրենց զօրութիւնները կորսընցուցած են, որովհետեւ ծէսերը լիովին չեն կատարուիր: Նոյնիսկ «Խոստովանանք»ը լրիւ չըսուիր: Արդեօք առնուած հաղորդութիւնը իմաստալից կ'ըլլա՞յ:

դ- Կիրակի օրուայ պատարագներուն, եկեղեցիներու մէջ, ընդհանուր առմամբ, հաւատացեալներուն ներկայութիւնը շատ քիչ է, իսկ առաւօտեան կրճատուած ժամերգութիւններու ընթացքին եկեղեցին գրեթէ պարապ է: Երբ քաղաքի մը հայ բնակչութիւնը երեսուն հազար է, երեսուն հոգին աննշան ներկայութիւն մըն է: Եթէ նոյնիսկ ներկայութիւնը երեք հարիւր հոգի ըլլայ, ատիկա ժողովուրդին միայն մէկ առ հարիւրն է: Միթէ պէտք չէ՞ խորհինք թէ այս լուրջ ախտանիշ մըն է: Արդեօք ժողովուրդը չի գար, որովհետեւ խորհուրդները իրենց զօրութիւնը կորսնցուցած ե՞ն:

ե- Խորհուրդները (mystery) նաեւ դադրած են խորհուրդ ըլլալէ, քանի որ զանոնք հասկնալի ընելու համար եկեղեցւոյ գրաբար լեզուն փոխուած է աշխարհաբարի: Լեզուն աշխարհաբարի փոխուելով արդեօք ոեւէ մէկը յաւելեալ հասկացողութեան մը հասած է: Ան որ «հասկնալի» է խորհուրդ ըլլալէ կը դադրի: Մարդ արարած Աստուած հասկնալու կարողութիւնը չունի, ուրեմն պէտք չէ անիմաստ կերպով խաբենք ժողովուրդը, լեզուն աշխարհաբարի դարձնելով թէ Զայն հասկնալի պիտի ընենք: Շատ աւելի լաւ կ'ըլլայ եթէ խորհուրդը առանց խանգարելու իբր խորհուրդ պահուի: Զարմանալի է, թէ Ս. Պատարագը տակաւին ինչո՞ւ «Խորհուրդ Խորին»ով կը սկսի: Հաւանաբար տակաւին քիչ մը խորհուրդ մնացած ըլլալու է: Երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի վերջին Թորոնթօ այցելութեան, Նորին Սրբութեան հետ խօսելու կարճ առիթ մը ունեցայ: Այդ տեսութեան ընթացքին ի յայտ

եկաւ, թէ Վեհափառն ալ աշխարհաբարին ծիսակատարութիւններէ ներս գործածութեան համամիտ չէր: Աստուած հոգին լուսաւորէ:

Ինչո՞ւ գրաբար եւ ոչ աշխարհաբար:

Ամէն լեզու ընդհանուր առմամբ, ժամանակի ընթացքին փոփոխութեան կ'ենթարկուի, որովհետեւ բոլորն ալ կատարեալ չեն: Բառերու իմաստները կը փոխուին՝ ի պատշաճի, նոյնիսկ մեր լեզուին երկու տարբեր բարբառներուն՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մէջ նոյն բառը տարբեր իմաստներ ունին: Օրինակի համար եթէ «Պանդոկ գացի» ըսեմ, արեւմտահայը կը հասկնայ թէ «hotel» գացի, իսկ արեւելահայը կը խորհի թէ հանրատուն «brothel» գացի:

Գրուածներուն իմաստն ալ, ժամանակի ընթացքին, կարգացողին կողմէ տարբեր կերպով կը հասկցուի:

Գրաբարի բառերուն ստուգաբանութիւնը եւ հոլովաբանութիւնը նաեւ ուղղագրութիւնը եւ քերականութիւնը՝ բոլորն ալ անփոփոխ են: Գիրերու ձայնաւորումները կատարեալ են: Գրաբար լեզուն կատարեալ ըլլալուն փոփոխութեան պէտք չունի եւ ենթակայ չէ: Ան վստահելի լեզու մըն է, քանի որ անոր բառերուն իմաստները ժամանակի ընթացքին չեն փոխուիր: Անոր ամէն մէկ տառին ձայնը հիմնուած է որոշ թրթռացումի մը վրայ, գիտակցաբար եւ շատ ճշգրտօրէն: Փառք պէտք է տանք Ս. Մեսրոպ Մաշտոցի հանձարին: Գրաբարը եթէ գիտակցաբար գործածուի, կ'ազդէ անձին: Կը փոխէ անոր միտքը եւ խորհելակերպը: Անոր խորհուրդները կ'ըլլան աւելի գեղեցիկ, ճշգրիտ եւ վստահելի: Ասոնց հետեւանք անձը կը վերանայ: Այդ վերացումը մարդուն կը պարգեւէ երջանկութիւն: Գրաբարը մտիկ ընել, նման երաժշտութեան մը ունկնդրման, հոգեկան բարձրաց-

ման առիթ կ'ըլլայ: Այս ազդեցութիւնը կը շարունակէ նաեւ անձին առօրեայ կեանքին ընթացքին: Գրաբարը կարգ եւ կանոն ունեցող լեզու մ'ըն է: Ինչո՞ւ կ'ըսուի թէ Ս. Գիրքի, մեր այսօր գրաբար կոչած, առաջին հայերէն թարգմանութիւնը՝ թարգմանութիւններու թագուհին է: Թարգմանութեան այդ կատարելութեան պատճառով ալ գիրքիս մէջ Ս. Գիրքէն մէջբերումները գրաբար են: Աշխարհաբարն ալ ակեցուցած եմ, պարզ այն պատճառով որ իմ այս գիրքը ծիսակատարութեան գիրք մը չէ, որով կարեւորը հասկնալի ըլլալն է: Իսկ ծիսակատարութիւնը հասկնալու համար չէ, այլ ապրելու համար է: Բառերը հասկնալ օգուտ չունի, կարեւորը ծիսակատարութեան հոգին հասկնալն է: Երբ մէջբերումներու գրաբարը եւ աշխարհաբարը իրարու հետ բաղդատուին, թարգմանութեան մէջ եղած փոփոխութիւնները եւ տարբերութիւնները երբեմն շատ յստակօրէն յայտնի կ'ըլլան:

Ներկայիս եղած բոլոր կրօնական վէճերը եւ պատերազմները համարներու սխալ հասկացողութեան հետեւանք չե՞ն: Սխալ հասկցուած են որովհետեւ ճշգրիտ չեղող լեզուներով թարգմանուած են՝ փոխելով անոնց իմաստները: Գրաբարը կարող է նաեւ տիեզերքի ներդաշնակութեան ճշմարտութիւնները յայտնել՝ շատ կարճ եւ պարզ ձեւով: Լեզու մ'ըն է, որուն օրէնքները կարելի է հասկնալով սորվիլ, քան թէ գոց սորվիլ: Քերականութիւն մը ունի, որ ճշգրիտ է: Մի քանի տասնամեակներ առաջ ՄԱԿի մէջ առաջարկուած էր, որ Հայերէնը միջազգային լեզու ըլլայ: Արդեօք հայերէնը զատեցին, որովհետեւ գրաբարը կատարեալ լեզու մ'ըն է՞ եւ փոփոխութեան ենթակայ չէ: Միշտ արմատ բառերէն կարելի է նոր բարդ բառեր շինել: Դժբախտաբար հայերէնի տեղ շինցու լեզու մը՝ «էսփէրանդօ»ն ստեղծեցին, որ արդէն պատմութեան

անցած է: Արդեօք գիտէի՞ք, թէ «NASA»ն կը խորհի հնդկական Սանսգրիտ լեզուն «NASA»ի միջազգային լեզուն ընել: Սանսգրիտ լեզուն աշխարհի վրայ գրաբարի յատկութիւնները ունեցող միակ լեզուն է: Անգլիացի բանաստեղծ Պայրըն (Lord Byron) հայերէն սորված է եւ զայն ուսումնասիրած: Իր սորված հայերէնը գրաբարն էր: Արդեօք ինչո՞ւ հայերէն սորվեցաւ, հայերը սիրելուն համար, թէ ոչ կատարեալ լեզու մը գտած ըլլալուն համար: Կատարեալին աղօթել կարելի է միա՛յն կատարեալ լեզուով:

զ- Եկեղեցւոյ վարչականներու եւ կղերականներու մտահոգութիւնը կը թուի թէ նիւթականի վրայ է, քան թէ հոգեկանի: Արդեօք մոռցած ե՞ն Յիսուսի տուած օրինակը:

«Նայեցարո՞ւ ընդ շո՛ւշանն՝ որպէս անէ,
 ոչ ջանայ՝ եւ ոչ նիւթէ. ասեմ յեզ, եւ ոչ
 Սողովմոն յամե՛նայն՝ ՚ի փառսն իւր զգե-
 ցաւ իբրեւ զմի ՚ի նոցանէ:» (Ղուկաս ԺԲ: 27)
 «Նայեցէք շուշաններուն՝ ի՞նչպէս կ'անէ. ոչ կ'աշխատին եւ ոչ կը մանեն. բայց ձեզի կ'ըսեմ որ Սողովմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ:»

Արդեօք կը վախնա՞նք որ նիւթականի պակասի պատճառով Քրիստոս իր եկեղեցին կը լքէ: Բացարձակապէ՛ս: Անշուշտ, եթէ այդ եկեղեցին տակաւին իր ցոյց տուած ճանապարհէն կ'ընթանայ:

Եկեղեցւոյ ներկայ տաքնապալի վիճակին համար կղերականաց դասը մեղադրել եւ ամբաստանել շատ գիւրդին է եւ մարդկային: Բայց մեզի չի վիճակիր զիրենք դատել: Աւետարանին մէջ գրուած է.

«Մի դասի՞նչ՝ զի մի դասիցիցի՞նչ:» (Մարթէոս Լ: 1)
 «Մի՛ դասէք, որպէս զի չդատուիք:»

Ամէն անձ ինքզինք լաւ գիտէ: Որով ամէն կղերական թող ինքզինք քննէ, դատէ եւ վերլուծէ, թէ ի՞նչ է իր կղերական ըլլալու նպատակը՝ կոչումը՝ ինքնագոհողութիւն եւ Աստուծոյ ծառայութիւն, թէ ոչ նիւթական վարձատրութիւնը, կամ պաշտօնին տուած փառքը եւ կամ երկուքն ալ: Ըստ իր դատողութեան իրեն կը վիճակի ի պատշաճի հրաժարիլ կամ շարունակել: Եթէ ինքզինք դատէ եւ ճշդէ թէ իր նպատակը նիւթական ապահովութիւնն է, կամ պաշտօնին տուած փառքը քան թէ ինքնագոհողութիւն եւ Աստուծոյ ծառայութիւն եւ տակաւին շարունակէ իր պաշտօնը, պէտք չէ նեղուինք: Ժողովուրդ մը միշտ կ'արժանանայ այն առաջնորդներուն, որոնք յարմար են այդ ժողովուրդին գիտակցութեան մակարդակին: Եթէ կ'ուզենք աստուածավախ եւ աստուածահաճոյ կղերականներ ունենալ, անհրաժեշտ է, որ ամէն մէկ անձ ինքզինք ենթարկէ ինքնաքննութեան եւ պատշաճ փոփոխութեան: Եթէ ժողովուրդէն բաւականաչափ թիւով անձեր կարենան կերտել աւելի վեհ անհատականութիւն մը՝ աւելի բարձր գիտակցութեան մակարդակով, այն ատեն ինքնաբերաբար կղերականները եւ առաջնորդներն ալ կը փոխուին: Անկարելի է փոփոխութիւն տեղի չունենայ:

«Այսարհի մէջ տեսնել ուզած փոփոխութիւնդ, դուն քու մէջդ պէտք է յառաջ բերես:» (Ամնտի)

է- Ըստ իմ հասկացողութեանս եկեղեցւոյ բոլոր խորհուրդները պէտք է անվճար կատարուին: Այսօր մկրտութիւնը, պսակի խորհուրդը... փոխան բարձր սակերու կը մատակարարուին: Այսօրուայ պայմաններով նոյնիսկ մեռնիլն անգամ պէտք է խորհինք: Այս զնացքով, վստահ եմ, օր պիտի գայ հաղորդութիւնն ալ փոխան վճարումի պիտի տրուի: Եթէ մին վճարովի ըլլայ, միւսը ինչո՞ւ ոչ: Երբ Յիսուս հիւանդները

բժշկեց, արդեօք այդ բժշկութիւնները փոխան վճարումի՞ր կատարեց: Քա՛ւ լիցի:

ը- Վերջերս կ'իմանանք, թէ աննախընթաց թիւերով կղերականներ փիլոնագրկուած են: Չէի գիտեր թէ այդքան մեծ թիւով հոգեւորութեան անարժան անձեր կղերական ձեռնադրուած էին: Արդեօք տակաւին քանի՞ անարժաններ կը գործեն որպէս կղերական: Որով պէտք չէ զարմանանք, թէ եկեղեցին հիւանդ է: Թէեւ նոյնիսկ հոգեվարք է:

Թ- Ըստ իմ հասկացողութեան, հիմնուած եկեղեցի մը ամենեւին չի գոցուիր, եթէ իր համայնքը՝ բուն ինքը եկեղեցին, գոյութիւն ունենալէ չէ դադրած: Այսօր ուրախութեամբ ակնատես կ'ըլլանք Ս. Պատարագներու, որոնք կը մատուցուին Թուրքիոյ մէջ մօտաւորապէս 100 տարիէ ի վեր գործօն ըլլալէ դադրած մեր եկեղեցիներէն ներս, ինչպէս Ախթամարի Ս. Խաչ Եկեղեցին, նաեւ Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցին: Բայց, Թորոնթոյի մէջ ակնատես եղած եմ հաստատուած Ս. Խաչ Եկեղեցիին, վերին մարմիններու կողմէ խանութ բանալ գոցելու պէս, «գոցուելուն» եւ տեղը, նոյն համայնքին համար, Վարագայ Սուրբ Խաչ անունով ուրիշ եկեղեցիի մը հիմնուելուն եւ անոր ալ, միջոցէ մը յետոյ, փակեալ հռչակուելուն, առանց համայնքին՝ եկեղեցիին անհետանալուն:

Այս օրերուն կ'իմանանք թէ Ֆրանսայի Նիս քաղաքի մօտաւորապէս 85 տարուայ գործօն եկեղեցին ալ վերին իշխանութեան տնօրինութեամբ գործօն ըլլալէ դադրեցուեր է: Երբ եկեղեցւոյ հիմնական եւ անխախտելի օրէնքները կը խախտուին, կը խախտին նաեւ եկեղեցւոյ հիմքերը: Որով զարմանք պէտք չէ պատճառէ, թէ եկեղեցին հիւանդ է:

ժ- Եկեղեցւոյ խորանէն, Պատարագի ընթացքին,

Ապրիլ 24ի առթիւ տրուած քարոզներու մէջ իմացած եմ «գազան, վայրենի, վայրագ»ի նման ածականներ՝ խորանային պատշաճութենէ հեռու արտայայտութիւններ: Ինչ որ զիս մղած է Ապրիլ 24ի հոգեհանգստեան Պատարագներու ներկայ չըլլալ:

Միթէ Յիսուս խաչին վրայէն զինք խաչողները անիծե՞ց, անոնց վրայ ածականներ տեղացո՞ւց: Ընդհակառակը զանոնք ներեց եւ անոնց համար աղօթեց. «Հայր ներէ անոնց, չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»: Պահ մը խորհինք: Արդեօք Յիսուս յարութիւն առած պիտի ըլլա՞ր եթէ զանոնք անիծած ըլլար:

Չեմ զարմանար, որ սիրելի եկեղեցիս տկարացած ըլլայ: Տարիներու ընթացքին շատ բան տեսած եմ: Գինիի չգոյուլթեան օղիով պատարագ մատուցանել: Ս. Պատարագի ընթացքին խորանին ետեւը ծխախոտ ծխել: Ս. Պատարագին խորանին վրայ հայհոյել: Ս. Պատարագի ընթացքին հրելով՝ Ֆիզիքապէս, խորանին վրայէն ուրարակիր վար նետել: Ս. Պատարագի միջոցին «լօթօ»ի՝ բախդախաղի թուղթը սկիհին քով դնել եւ լեցնել:

Բժշկական ուսուցումը մարդկային մարմնոյն հիւանդութիւններուն եւ անոնց բուժման հետ կապակից գիտութեան մը ուսմունքն է: Ախտաճանաչումներ կարենալ կատարելու գիտութիւնն է: Եկեղեցին ալ Քրիստոսի մարմինն է: Այս «մարմին»ին վրայ ախտաճանաչումներ կատարել թէեւ մասնագէտ եպիսկոպոսներու կը վիճակի, սակայն ես, որպէս ախտաճանաչում կատարելու պատրաստուած անձ, կրնամ հասնիլ որոշ եզրակացութիւններու եւ կատարել որոշ դարմանային թելադրութիւններ:

Եկեղեցոյ «մարմին»ին վրայ մասնագիտութիւն չունենալով, թելադրութիւններս կրնան սխալ ըլլալ, իսկ եթէ ճիշդ են կը կարօտին մասնագէտներուն

վաւերացման: Երբեմն ընտանեկան բժիշկներ իրենց սրտի հիւանդները կ'ուղարկեն՝ իրենց դարմանումի թելադրութիւններով: Երբեմն շատ յարմար երբեմն ալ կարօտ պատշաճ փոփոխութեան:

Մենք նոր զարթօնքի մը պէտք ունինք:

Այս հարցով իմ թելադրութիւններս հետեւեալներն են.

ա- Երկու գլուխը ըլլայ մէկ: Այս հարց մըն է, որ պէտք է լուծուի երկու կաթողիկոսներու միջեւ: Հարցը կը թողում իրենց: Ես հոս կը յիշեմ Յիսուսի խօսքերը.

«... ամենայն Ռաբա-որո-թիւն Քաթանեալ
յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն չաղա՛
կամ ցոռն Քաթանեալ յանձն իւր՝ ոչ
կայցի:» (Մարշէոս ԺԳ:25)

«... Ամէն թագաւորութիւն իրեն մէջ բաժնուած կ'աւերի. եւ ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չի կրնար կենալ:»

«Եւ եթէ ցոռն յանձն իւր Քաթանեացի, ոչ
կարէ կալ ցոռնն:» (Մարկոս Գ: 25)
«Եթէ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը չի կրնար կենալ:»

«... ամենայն Ռաբա-որո-թիւն Քաթանեալ
յանձն՝ աւերի, եւ ցոռն Քաթանեալ յանձն՝
կործանի:» (Ղուկաս ԺԷ:17)

«... Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի եւ տուն մը իրեն դէմ բաժնուած՝ կը կործանի:»

«Որ Քարձրացոցանէ պանձն՝ խոնարհեացի,
եւ որ խոնարհեացոցանէ պանձն՝
Քարձրացի:» (Մարշէոս ԻԳ:12)

«Ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի. եւ ով

որ իր անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ»

«... այլ որ կամեցի՝ ՚ի Յէնջ մեժ լինել, եղբցի Յեր պաշտօնեայ. ե- որ կամեցի՝ ՚ի Յէնջ աս-աջին լինել՝ եղբցի Յեր ամենեցո-ն շատայ:» (Մարկոս Ժ: 43-44)

«... ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ անիկա ձեր սպասաւորը ըլլայ: Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ. անիկա ամէնուն ծառայ ըլլայ:»

բ- Բոլոր արարողութիւնները պէտք է լիովին կատարուին, ներառեալ շարահանները եւ մեղեդիները:

գ- Բոլորովին դադրեցնել աշխարհաբարի գործածութիւնը բոլոր ծիսակատարութիւններէ, ներառեալ գիրքերու եւ ակետարաններու ընթերցումներէն:

դ- Եկեղեցւոյ նիւթական եւ հոգեւոր մատակարարութեան մէջ պարտականութիւններու յստակ բաժանում պէտք է ըլլայ: Եկեղեցւոյ նիւթականով զբաղիլ կը վիճակի միայն ու միայն ընտրեալ վարչականներու գլխաւորութեամբ կազմուած յանձնախումբերուն: Իսկ եկեղեցւոյ՝ համայնքի հոգեւոր մատակարարութեամբ զբաղիլ կը վիճակի կղերականին: Հոգեւորականին առաջին մտահոգութիւնը պէտք է ըլլայ իր հոգեւոր խնամքին յանձնուած ժողովուրդին հոգեկան բարձրացումը:

Եկեղեցւոյ խորհուրդներու մատակարարումը պէտք է անվճար կատարուի: Վստահ եմ ամէն անձ, համաձայն իր նիւթական կացութեան, սրտաբուխ նուիրատուութիւնը կ'ընէ: Ես Կ. Պոլսէն եկած եմ եւ կը յիշեմ երջանկայիշատակ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի օրով, եկեղեցիները ոչ անդամատուրք ունէին, ոչ ալ արարողութեան միջոցին եկեղեցւոյ մէջ պնակ կը պտըտցուէր: Եկեղեցւոյ արձակումէն յետոյ, դուրսը, բակին մէջ, ամէն անձ իր սրտաբուխ նուիրատուութիւնը կ'ընէր: Եկեղեցւոյն նիւթականով

ամենաբարեկիճակ ժամանակը եղած էր:

Ե- Պէտք չէ մոռնանք Ապրիլ 24ը եւ մեր մէկ ու կէս միլիոն նահատակները: Իմ մայրս ալ 12 տարեկանին աքսորուած, բայց ողջ մնալու բարեբախտութիւնը ունեցած էր: Ատելութեամբ, ատելութիւնը յաղթել կարելի չէ, այլ ատելութիւնը միայն ու միայն սէրով կարելի է յաղթել: Ապրիլ 24ին յիշենք մեր նահատակները եւ անոնց համար աղօթենք, բայց աղօթենք նաեւ ցեղասպանութիւնը կատարող մեր անգիտակից եղբայրներուն համար: Մեզ ատողներուն եւ թշնամիներուն փոխան ատելութեան սէր ցոյց տանք: Հոգեհանգստի արարողութեան կից քոնէ աւելցուի աղօթքի կարճ բաժին մը, Աստուծմէ խընդրելով օրհնութիւն մեր ներկայ Թուրք եղբայրներուն համար: Եթէ Աստուած անոնց շնորհէ իր օրհնութիւնները, անոնք ալ կը դադրին մեզի թշնամանալէ:

Այսքան տարուայ հակառակութիւն եւ թշնամութիւն մեզ ո՞ր հասցուց: Կը հաւատա՞նք Յիսուսի հետեւեալ խօսքին.

«Լուսարոտի ասպէ՛նն զի ասացաւ. «Իրեացեա պընկեր ի՞նչ, եւ արեացեա պըշնամին ի՞նչ: Եյլ ես ասեմ յեզ. «Իրեցէ՛տ պըշնամին յեր. օրհնեցէ՛տ պանիճիշս յեր. Բարի արարէ՛տ արելեաց յերոց. եւ աղօթս ՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկէնն զյեզ եւ Ըալաճեն:»

(Մարտէոսի Ե:43-44)

«Լսեր էք որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես»: Բայց ես ձեզի կ'ըսեմ. «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն:»

գ- Բոլոր աշխարհին յայտարարել, թէ Հայաստանեայց Եկեղեցին համահաւասար կ'ընդունի եւ կը ճանչնայ բոլոր քրիստոնեայ յարանուանութիւնները եւ այլ կրօնքները՝ անխտիր: Եթէ որեւէ այլ կրօնքի պատկանող անձ մը խնդրէ ստանալ Եկեղեցւոյ Խորհուրդները, տալ առանց խտրութեան եւ այլեւայլի: Մենք՝ հայերս, որպէս աշխարհի վրայ առաջին քրիստոնեայ ազգ՝ 301 թուականին, զմեզ միշտ հպարտ զգացած ենք: Գուցէ շատեր լուր չունին, թէ աշխարհի առաջին եկեղեցին ալ կառուցուած է Հայաստանի մէջ, (այժմ Հայաստանեայց Եկեղեցւոյ Պարսկաստանի Ատրպատական Թեմէն ներս) որ կը կոչուի Թաղէոսի եկեղեցին՝ հիմնուած Թաղէոս առաքեալէ, 68 թուականին: Ան սեւ քարերով շինուած ըլլալուն, օտարներու կողմէ կոչուած է «Գարա Քիլիսէ»:

Երկրաշարժի հետեւանք քանդուած է: Ան վերակառուցուած է 1329ին եւ 1810 թուականին ենթարկուած է ընդհանուր նորոգութեան: (տես պատկեր 1) Մինչ այդ, 68ական թուականներուն, ուրիշ ազգերու քրիստոնեաները քարայրներու խոռոչներուն մէջ կը հաւաքուէին: Եթէ կ'ուզենք իսկապէս հպարտանալ, պարտ ենք ըլլալ առաջին ազգ եւ քրիստոնեայ յարանուանութիւնը, որ բոլոր յարանուանութիւնները եւ կրօնքները կ'ընդունի համահաւասար: Ո՛չ, պէտք չէ հպարտ ըլլանք: Հպարտութիւնը կը խաբանէ Ս. Հոգիի զօրութեան ներգործումը: Մարդ պէտք չէ հպարտանայ երբ ճիշդ կը խորհի, կը խօսի եւ կը գործէ: Տարբեր կրօնքները եւ

ՊԱԿՏԵՐ: 1



յարանուանութիւնները համահաւասար չընդունիլ, մարդոց միջեւ խտրականութիւն դնել եւ միութեան մէջ բազմազանութիւն տեսնել է, ինչ որ սխալ խորհիլ, խօսիլ ու գործել է, որ պատճառ կ'ըլլայ ամօթ զգալու:

է- Սորվիլ եւ ժողովուրդին սորվեցնել ճշմարիտ փրկութեան ճամբան, այն ճամբան որ Յիսուս ցոյց տուաւ: Համամիտ եմ Կանտիի ըսածին:

Կը սիրեմ՝ ձեր Քրիստոսը, բայց չեմ սիրեր ձեր քրիստոնեաները: Ձեր քրիստոնեաները շատ տարբեր են ձեր Քրիստոսէն:

Ըլլանք մարդկութեան ուղիղ տեսութեան թթխմոր՝ առանց խտրութեան ամենուրեք սփռել սէր:

Ամէն բանէ առաջ թելադրուած դարմանը պէտք է ընդունուի եւ գործադրուի: Եթէ սխալ է, մասնագէտները պէտք է որոշեն ճիշդ դարմանը:

Մեզմէ կախում ունի Քրիստոսի վերստին գալուստը, որպէսզի այս անգամ ալ Հայաստանէն բոլոր աշխարհին յայտարարենք. «Քրիստոս Յարեալ ի մեռելոց»:





ԿԼՏԱՐԵԱԿ ԼՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր ապեղծութեան

Յիշէ Սպեղծիչը

Ուշադրութեամբ դիտելու

դարձութեամբ

Եւ ահարդ յայտնէ Սիրոյ Աղբիւրին :

(St. John of the Cross)

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ճշմարիտ ինքնաճանաչումը՝ Աստուածայայտնութիւնը շատ դժուար է բոլոր անոնց համար, որ կը հաւատան թէ Աստուած աներեւոյթ գաղափար մըն է: Դժուար է անտեսանելի Աստուծոյ մը գաղափարը ըմբռնել: Բայց անոնք, որոնք իրենց միտքերը «միամտօրէն բայց խորագիտութեամբ» կեդրոնացած Աստուծոյ վրայ, իրենց ամէն մէկ արարքով զԱյն կը պաշտեն, Ան կ'ըլլայ անոնց փրկիչը եւ յաւիտենական կեանքը: Հետեւաբար պարտ ենք մեր միտքերը կեդրոնացնել իր վրայ: Երբ Ան, մեր կեանքի ընթացքին, անընդհատ մեր զգացումներուն եւ իմացականութեան առարկան կ'ըլլայ, անխուսափելի կ'ըլլայ նաեւ իր յայտնութիւնը:

Իսկ եթէ անկարող ենք մեր միտքը իր վրայ կեդրոնացնել, գոնէ պարտ ենք պարզապէս աղօթքով եւ ծիսակատարութեամբ շարունակել անկեղծ պաշտամունքը: Եթէ չկարենանք յաճախ աղօթել եւ պաշտամունքներու մասնակցիլ, գոնէ պարտ ենք մեր բոլոր պարտականութիւնները եւ աշխարհիկ արարքները կատարել որպէս Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւններ: Պարտականութիւնները կատարել առանց եսասիրութեան, բաւական է կատարելին հասնելու:

Իսկ եթէ մեր արարքները չկարենանք կատարել վերեւ յիշուած հայեացքով, գէթ պարտ ենք մեր անձը ձերբազատել անոնց արդիւնքներէն՝ յուզումներէն եւ ուրախութիւններէն, որպէսզի մեր հաւասարակշռութիւնը չկորսնցնենք եւ մեր անդորրութիւնը չխանգարուի եւ խաղաղ միտք կերտելով կարենանք ընդունիլ բոլոր պատահարները:

Գիտութիւնը կը գերազանցէ պարզ ծիսակատար-

ընթացումը: Խոհուճը (միտքի կեդրոնացումը) կը գերազանցէ գիտութիւնը: Չսեփականացնել գործքերու արդիւնքները, կը գերազանցէ խոհումը:


Այն անձը, որ չ'ատեր ոեւէ արարած, ընկեր է բոլորին, գութով լի եւ ներողամիտ, առանց եսասիրութեան, միշտ գոհունակութեամբ, խաղաղութեամբ եւ վճռականութեամբ կը բաղձայ Աստուածայայտնութիւնը, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ ուրիշները չի յուզեր եւ ինքն ալ անոնցմէ չի խանգարուիր, ձերբազատած է իր անձը նախանձէ, երկիւղէ, անձկութենէ եւ ցնծութենէ, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ փափաք եւ ցանկութիւններ չունի, սրտով մաքուր է, ինչպէս նաեւ իմաստուն, անկողմնակալ եւ արդար ու իր կեանքի տեւողութեան բոլոր արարքները ցոլացուցած են ճշմարիտ պաշտամունքը, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ ոչ կը տխրի եւ ոչ ալ կ'ուրախանայ, ոչ համակրանք ունի ոչ ալ հակակրանք, կը մերժէ բարիի եւ չարի երկուութեան գաղափարը եւ Աստուած կը պաշտէ անձնատուութեամբ, կ'ըլլայ Անոր որդին:





-ԺԶ-

ԱՌԱՃՆԵՐ

Ա - ԵՊԻԳՏԵՏՈՍ

Բ - ՏԵՐԱԲԷ ԵՒ ՍՈՒՓՐԱԿԱՆ

Գ - ՕՍԱՐ ԽԱՅԵԱՄ


Դ - ԿԱՆՏ

Ե - ՊՈՒՏՏԱՅԱԿԱՆ

Զ - ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐԿԱՆԵՐՈՒ

Է - ԼՍՕ ԶՈՒ

Ը - ԺՈՂՈՎԱՐՊԱՅԻՆ



ԵՊԻԳՏԵՏՈՍ ՈՍԿԵԱՅ ԱՌԱՃՆԵՐ

Բոլոր կրօնքներուն պէտք է Հանդուրժողութիւն ցոյց տրուի, որովհետեւ ամէն մարդ պէտք է դրախտ երթայ իր ձեռով:

Դուն հետզ դիակ պտըտցնող փոքր Հոգի մըն ես:

Ոչինչ բարի կամ չար է, ի բացառեալ անձին կամքը:

Եթէ ուրիշի մը թերութիւնը քեզի կը դառնացնէ,
նախ ինքզինքդ քննէ ու քու տկարութիւններդ ճշդէ:
Այն ատեն բարկութիւնդ, զայրոյթդ պիտի մոռնաս

Երբ որ բարկանաս, գիտցիր թէ այդ չար բոսպէի մը
արդիւնքը չէ, այլ՝ երկայն սովորութեան մը:

Կիրքերդ զսպէ, ապա թէ ոչ վրէժ կը լուծեն:

Ազատութիւնը մեր ուզած ձեռով ապրելու իրաւունքն է:
Աստուած զիս ինձի վստահած է:

Ոչ ոք ազատ է, եթէ ինքզինքին տերը չէ:

Ազատութիւնը կարելի չէ ձեռք ձգել բոլոր
ցանկութիւններու իրականացմամբ, այլ կարելի է անոնց
զսպումով:

* * *

Մի՛թէ ազատութիւնը մեր ուզած ձեւով ապրելու
իրաւունքը չէ՞, եւ ուրիշ ոչինչ:

* * *

Իմաստունին բնութիւնն է Հաճոյքներուն ընդդիմադրել
իսկ անմիտինը՝ անոնց գերի դառնալ:

* * *

Դժուարութիւնները ցոյց կուտան անձին նկարագիրը:
* * *

Գեղեցիկ մարմին մը ունենալ բաւարար չէ: Անհրաժեշտ է
Նաեւ ունանալ Համապատասխան սիրտ եւ Հոգի:

* * *

Նախ գիտցիր, թէ ով ես, ապա ըստ այնմ զարդարուէ:
* * *

Ունինք երկու ականջ եւ մէկ բերան, որպէսզի երկու
անգամ աւելի մտիկ ընենք քան խօսինք:

* * *

Ընդհանուր առմամբ լուռ կեցիր: Խօսէ, միայն երբ
Հարկաւոր է, այդ ալ՝ Հակիրճ:

* * *

Նախ ըսածիդ իմաստը ըմբռնէ, ապա խօսէ:
* * *

Կարելորը քեզի պատահածը չէ, այլ՝ քու ցոյց տուած
Հակազդեցութիւնը:

* * *

Եթէ ճշմարտութիւն կը փնտռես, պիտի չուզես
անպատուելի միջոցներով յաղթանակի Հասնիլ ու եթէ
ճշմարտութիւնը գտնես անպարտելի պիտի ըլլաս:

* * *

Մարդիկ Հարցերէ չեն նեղուիր, այլ անոնց մասին իրենց
ունեցած խորհուրդներէն:

* * *

Եթէ քու մասիդ ըսուած վատ խօսքերը իրողութիւն են.
ինքզինքդ ուղղէ, իսկ եթէ անհիմն են, պարզապէս իննդա՛ :

* * *

Եթէ կը փափաքիս բարի անձ մը ըլլալ,
նախ Հաւատացիր թէ վատ անձ մըն ես:

* * *

Եթէ կ'ուզես ինքզինքդ բարեղաւել,
գոհ եղիր որ քեզ Համար ապուշ եւ տխմար կ'ըսեն:

* * *

Եթէ եղբայրդ քեզի դէմ յանցանք գործէ, յանցանքէն
աւելի, յիշէ թէ ան քու եղբայրդ է:

* * *

Քեզ անարգողը ոչ քեզի վարկաբեկողն է եւ ոչ ալ քեզի
զարնողը, այլ անարգուած ըլլալու քու գաղափարդ է:

* * *

Որեւէ պարագայի բան մը կորսնցուցի մի ըսեր,
այլ ըսէ վերադարձուցի:

Չաւակդ մեռած է՝ Վերադարձ մըն է:

Կինդ մեռած է՝ Վերադարձ մըն է:

Ստացուածքդ , Հարստութիւնդ կորսնցուցի՛ր:

Աս ալ վերադարձ մը չէ՛ :

* * *

Լաւագոյնդ կատարէ ըստ քու կարողութեան, մնացեալը
ընդունէ այնպէս, ինչպէս կը պատահի:

* * *

Երջանկութեան Հասնելու միակ ճամբան, մեր
կարողութեան սահմաններէն դուրս պատահածներուն
Համար չմտահոգուիլ է:

* * *

Մեր դժբախտութիւններուն Համար ուրիշներ մեղադրել կը նշանակէ դաստիարակութեան պակաս: Իսկ եթէ անձը ինքզինք մեղադրէ, այդ կ'ըլլայ դաստիարակութեան սկիզբը: Ոչ ինքզինք եւ ոչ ալ ուրիշներ չի մեղադրել դաստիարակութեան իր աւարտին Համնիլն է:

* * *

Ոչ թէ մահէն կամ ցաւէն պէտք է սոսկանք,
այլ՝ ցաւին ու մահուան վախէն:

* * *

Հարստութիւնը շատ ստացուածք ունենալու մեջ չի կայանար, այլ՝ նուազագոյն պաշտանք ունենալու:

* * *

Փիլիսոփայութեան գլխաւոր նպատակը մարդուն սորվեցնել է ապրիլ այնպիսի ձեւով, որ իր երջանկութիւնը կարելի չափով նուազ կախեալ ըլլայ արտաքին ազդակներէ:

* * *

Մն անձը, որ իր ունեցած Հարստութիւնը բաւարար չի նկատեր, եթէ նոյնիսկ ամբողջ աշխարհին տիրանայ, ինքզինք երջանիկ չի զգար:

* * *

Իմաստուն է ան, որ չունեցածին Համար չի տխրիր, այլ կ'ուրախանայ իր ունեցածով:

* * *

Երթալիք տեղը գիտցողին Համար ճամբան միշտ բաց է:

* * *

Որեւէ մեծագոյն արարք յանկարծ չէ ստեղծուած, նոյնպէս ալ ողկոյզ մը խաղողը կամ թուզը: Եթէ ինձի «թուզ կը փափաքիմ» ըսես, պատասխանս կ'ըլլայ «Ժամանակի կարօտ ե»: Նախ ծառը պիտի ծաղկի, պտուղ պիտի տայ, ապա պիտի Հասուննայ:





ՏԵՐՎԻՇԻ ՄԸ ԽՐԱՏՆԵՐԸ

Քեզի վստահուածին մի՛ դաւաճաներ
Վիճակէդ մի՛ դժգոհիր
Մեծերուդ մի՛ հրամայեր
Անխմաստ բաներու համար մի՛ պնդեր
Տգետին հետ մի՛ զրուցեր
Պարապ տեղը շունչդ մի՛ վասներ
Ճշդապահ եղի՛ր
Միջավայրդ մի աղտոտեր
Կեանքդ մի՛ վասներ
Մարդու շնորհապարտ մի՛ ըլլար
Մարդիկ իրենց ներկայութեան մի՛ գովաբաներ
Մարդու մի՛ հայհոյեր
Վատութեան մի՛ հակիր
Ոնեցածդ պարապի մի՛ ծախսեր
Գաղտնիքդ մի՛ բացայայտեր
Ամէն բանի համար մի՛ մտահոգուիր
Յանցանքդ մի՛ ուրանար
Պատուդ տէր եղի՛ր
Հայրենիքդ մի՛ քեր
Միշտ լաւին ձգտէ՛
Մեծերը յարգէ՛

Նեղութիւնը համբերութեամբ տա՛ր
 Քիչով գոհացի՛ր
 Խօսքիդ տէրը եղի՛ր
 Գիտութեամբդ գործէ՛
 Սխալք ընդունէ՛
 Եթէ անպէտ է, վանէ՛
 Ոնեցածդ ինայել գիտցի՛ր
 Գիտուններու հետ զրուցէ՛
 «Ես»-իդ հետ պայքարէ՛
 Հացդ ուրիշներուն հետ կիսէ՛
 Վնասակարը արգիլէ՛
 Սերդ յայտնէ՛
 Սիրտերը գրաւէ՛
 Հիւրը մեծարէ՛
 Կարօտեալին օգնէ՛
 Գիտնալով հանդերձ խորհրդակցէ՛
 Վտանգէ զգուշացի՛ր
 Իրաւունքը տօ՛ւր
 Եթէ պիտի մոռնաս, արձանագրէ՛
 Մի զլանար, շտրճէ՛
 Խեղճերուն գլծա՛
 Ջանա՛ սիրաշահիլ
 Ախատողը գնահատէ՛
 Յաջողութիւնը շտրճաւորէ՛
 Պատճառաբանութիւնը ընդունէ՛
 Միշտ լաւագոյնդ ըրէ՛
 Հիւանդները այցելէ՛
 Չաւակդ դաստիարակէ՛
 Բարիք թելադրէ՛
 Վատութենէ ձերբազատուէ՛
 Բողորին հանդէպ ինդումներես եղի՛ր
 Եթէ նոյնիսկ վստահիս, ստուգէ՛

ՉՀաւատացողին ապացուցանէ՛
 Աղքատներուն ողորմէ՛
 Բարեգործութեան Համար ծախսէ՛
 ❀❀❀


ՍՈՒՓԻԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆ

Լուսինը կը փայլի իմ մարմինիս մէջ, բայց իմ
 Կոյր աչքերս անկարող են զայն տեսնելու
 Եթէ «Ես»ի եւ «Իմինա»ի սերը մեռնի, այն ատեն
 Տերոջ գործը կատարուած կ'ըլլայ:
 * * *

Չինք փնտուէցի Քրիստոնէսներու մէջ եւ Խաչին
 Քրիստոնէսներուն խաչին վրայ, Չինք չգտայ.
 Չինք փնտուէցի տաճարին մէջ եւ կուստուններու.
 Կուստուններու եւ տաճարին մէջ Չինք չգտայ.
 «Հարդ»ի լեռներուն եւ «Գանտար»ի բարձունքներուն մէջ
 Բլուրներու եւ ձորերու մէջ Չինք չգտայ.
 Վճռական նպատակով բարձրացայ «Գաֆ» լեռան գագաթը
 Փինիկին բնակավայրը, բայց Չինք չգտայ.
 Մեծ յոյսով եւ ակնկալութեամբ Չինք փնտուէցի «Գապա»ի մէջ
 Մեծերու եւ պղտիկներու այդ սրբարանին մէջ ալ Չինք չգտայ.
 «Ավիսէննա»ին՝ «Վո-Տոս»ին գացի բազում հարցումներով,
 Իր կարողութեան սահմաններէն դուրս էր Ան, Հոն ալ
 Չինք չգտայ.
 Նոյնիսկ Աստուծմէ երկու աղեղաչափ հեռաւորութեան
 վրայ փորձեցի
 Եւ այդ Բարձրացեալ Ատեանին մէջ ալ Չինք չգտայ.
 Յետոյ Չինք իմ սրտիս մէջ փնտուէցի
 Չինք Հոն գտայ, ուրիշ տեղ Չինք չգտայ:
 * * *

Ոչ տաճարի մէջ եմ ոչ ալ մկրիթի
 Ոչ «Գապա»ի մէջ եմ ոչ ալ «Քաղա»ի
 Ոչ ծեսերու մէջ եմ, ոչ ալ արարողութիւններու
 Ոչ «Եոկա»ի մէջ, ոչ անձնուրացութեան
 Լապտերը կը վառի բոլոր տուներուն մէջ: Ո՛հ կոյր արարած
 Ի՞նչն զայն չես կրնար տեսնել
 Տէրը քեզի շատ մօտ է, իսկ դուն կը մաքրցիս
 Արմաւենիի ծառին, որպէսզի զայն փնտռես:





ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Մնացած օրը ետ կանչելը իզուր ջանք է, սիրելի՛ ս,
 Վաղուայ մասին անընդհատ լոկ պատրանք է, սիրելի՛ ս,
 Այս վայրկեանը մի կորսնցյալներ առանց գինիի, առանց սիրոյ,
 Կեանքէն մեզի մնացած բաժինին գինը թանկ է, սիրելի՛ ս:

* * *

Միս, մինչեւ էրք միտք ու Հոգիի կրակը ինկած ծխաս պիտի,
 Չորս ու Հինգի, վեց ու եօթի միջեւ մոլորած մնաս պիտի,
 Ապաւինիր գինիին, խմիր բաժակը ինդուլթեան,
 Երբ չես գիտեր թէ ուրկէ՛ եկար եւ ո՛ւր երթաս պիտի:

* * *

Սի՛րտ իմ, կեանքի առեղծուածը եթէ բանանք ես ու դուն,
 Մահուան մութին հարուածին ալ կը դիմանանք ես ու դուն,
 Բայց թէ կեանքէն մտքով ու Հոգով բան չհասկցանք աշխարհէն,
 Հոգի տալէ յետոյ, Հոգի՛ ս ի՞նչ կը հասկնանք ես ու դուն:

* * *

Մե՛հեանի ծուխ, մզկիթի լոյս մինչեւ էրք,
 Դժոխքի ահ, դրախտի յոյս մինչեւ էրք,
 Թէ ամէն բան սահմանուած է ի վերուստ,
 Այսքան վարանում ու տարակոյս մինչեւ էրք:

* * *

Մենք, որոնք սաւառնեցան Հասկացողութեան ոլորսներուն մէջ
 Որ մոմի պէս լոյս սփռեցին Հասկացողութեան ոլորսներուն մէջ
 Եւ չգտան մութ գիշերէն ու քուն մտան պատրանքներով,
 Մի առասպել լոկ Հիւսեցին Հասկացողութեան ոլորսներուն մէջ:

* * *

Տառապանքը աչքիս լոյսը առաւ, ս' աղի,
 Ժամանակը մազիս գոյնը տարաւ, ս' աղի,
 Ճերմակ մազով քու թունդ գինիէն երբ Հարբեցի ,
 Աչքս բացուեցաւ, սիրտս գարուն դարձաւ, ս' աղի:

* * *

Վարդապետի խօսք ու դասէն եթէ փախիս՝ աւելի լաւ,
 Սիրականի Հուսք ու մազէն եթէ կառչիս՝ աւելի լաւ,
 Ժամանակը քու արիւնով դեռ չէ թրջած Հողը քանի,
 Դուն խաղողի արեամբ թասդ թէ թրջես աւելի լաւ:

* * *

Սա՛ղի, սո՛ւր քիմի բաժակ, Աստուած մեծ է ու գթած,
 Եւ կը ներէ իր տկար ծառաներուն անկասկած:
 Մի ձեւանար բարեպաշտ, գինի խմէ՛ դուն գարնան,
 Քանզի կարօտ չէ Աստուած պաշտամունքին մարդկութեան:

* * *

Ըսիր թէ ինձի պիտի պատժես Դու,
 Չարմանք է, թէ այդ ո՛ւր է ըլլալու:
 Ուր Դու կաս, այնտեղ չկայ պատուհաս,
 Իսկ ո՛րն է այնտեղ, ուրտեղ Դու չիկաս:

* * *

Ես մի ապստամբ Հպատակն եմ, Քու ներո՛ւմդ ինչ եղաւ,
 Սեւասիրտ եմ ես, ո՛ւր է առաջնորդ Քու լոյսդ անբաւ:
 Դրախտդ եթէ տաս մեզի փոխարէն արդար գործերի,
 Վարձատրել է այդ, ապա ո՛ւր մնաց Քու շնորհքդ ձրի:

* * *



Յեղ մը կայ կը խորհի, ո՞րն է կրօնք, ո՞րն է Աստուած,
 Խումբ մը կայ կը մտմտայ, թէ ի՞նչ է Հաւատք, եւ ի՞նչ է կասկած:
 Երբ, զարմանք, յանկարծ անյայտ թաքստոյց բարձրացաւ մի ձայն,
 «Ո՛վ անտեղեակներ, ճշմարիտ ուղին ո՛չ այս է, ո՛չ այն»:

* * *

Ո՛վ ճակատագրի գնդակ գաւազանի Հարուածէն դու թուած,
 Ա՛ջ խմէ՛ գինի, ձախ՝ խմէ՛ գինի, խմէ՛ ու լուռ կայ,
 Քանզի ան որ քեզ վազվուտուքի մէջ ձգեց անխնայ,
 Նա գիտէ միայն, Նա գիտէ միայն, Նա գիտէ ու Նա:

* * *

Աստուած է Հոգին Համայն տիեզերքի,
 Տիեզերքը Համայն մարմինը Ասոր,
 Դասերն ու կարգերն Հրեշտակների,
 Ըզգայարանն էս այդ Հսկայ կազմի,

*

Երկինքը տարերք, եւ անդամներն ալ
 Թագաւորութիւնն էս այս բնութեան,
 Միաստուածութիւնն Հէնց այս է որ կայ,
 Եւ խաբէութիւն է ամէն ուրիշ բան:

* * *

Ո՛վ որ այլոց վասն ուզէ, չունի լաւէն ան բաժին,
 Անշեղ իրեն կը դառնայ, ինչ վատ ընէ ուրիշին,
 Ես քու բարիքդ կ' ուզեմ, իսկ ինձ Համար դուն՝ չարիք,
 Չարիք բնաւ չիգար ինձ, եւ չես տեսներ դո՛ւն բարիք:

* * *

Բարի է մարդ աշխարհի մէջ, եթէ լաւ Հոշակ ստանայ,
 Նոյնքան ամօթ եթէ բախտի Հարուածներէն բեկանի նա,
 Հարբել ջրով խաղողի՝ Հազար անգամ լաւ է քան
 Գոռոզանալ ու պանծալ արդարութեամբ սեփական:

* * *



Ժամանակի դէպքերէն մի՛ վախնար յարածին,
 Ինչ առաջ գայ, մի՛ վախնար, կ'անցնի արագ ու դիւրին:
 Անկապտելի շահ սեպէ, մէկ թուպէիդ այս ներկան,
 Թո՛ղ ցաւ չտայ քեզ անցեալն, ու վախ չազդէ ապագան:
 * * *


Մեռեալներու Հանգչած տեղը, շրջած եմ ես քիչ ու շատ.
 Գերեզմաններ եմ տեսած Հարուստ մարդկանց եւ աղքատ,
 Ոչ աղքատը պատանքէ զուրկ մտած է գերեզման,
 Ոչ ալ Հարուստն տարած է աւելի քան մի պատանք:
 * * *

Եթէ պարծենաս քու շքեղ սարքովդ,
 Եւ կամ այս կեանքով ո՞նայն ու չնչին
 Հողմին մահակից՝ վառած ես ճրագ,
 Կամ տուն շինած ես Հեղեղի ճամբուն:
 * * *

Հարունակ սրտիդ իղձերուն Համար
 Կը տանջես, կը մաշեցնես կեանքդ պատուական,
 Չես գիտեր, որ քու ցաւերդ են անոնք,
 Որոնց կարօտը կը քաշես այդքան:
 * * *

Եթէ կը ցանկաս Համնիլ սրբութեան աստիճանի,
 Մի՛ թողուր որ որեւէ մարդու քեզմէ զրկանք Համնի
 Մի վախնար մահէն, եւ մի մտահոգուիր ապրուստի մասին
 Քանզի անպայման անոնք կը Համնին՝ Համներու ժամին:





ԿԱՆՏԻ ՀԱՄԲԱԿՈՐ ԱՊԱԾՆԵՐ

Հաւատքը հասկնալի բան մը չէ, այլ վիճակ մըն է, որու
հասնելու համար պէտք է հասուննալ:

* * *

Հաւատքը պէտք է զինուի իմաստութիւնով ... կոյր
հաւատքը մահուան դատապարտուած է:

* * *

Մահուան վախը մեզմէ կը խլէ քաջութիւնը եւ կրօնքը.
Քաջութիւն ունենալու համար հաւատքի պէտք կայ:

* * *

Ճշմարիտ հաւատքը կեանքի ամենամուխ փոթորիկներուն
կը սովկայ:

* * *

Անհանդուրժողութիւնը կը խաբանէ հաւատքի ճամբան՝
ամէն հարցի մէջ:

* * *

Հանդարտաբարոյականութիւնը հաւատքին պայմանն է:

* * *

Ընկերոջ մը հետ բարեկամանալ դիւրին է: Բայց ինքզինք
քու թշնամիդ նկատողին հետ բարեկամանալ, ճշմարիտ
հաւատքին կորիզն է: Առաջինը՝ պարզ առեւտուր մըն է:

* * *

Խորքին մէջ բոլոր կրօնքները նոյնն են: Միայն իրենց մօտեցումները կը տարբերին:

* * *

Աշխարհի բոլոր կրօնքները, որոշ Հարցերու մէջ ուրքան ալ իրարմէ տարբերին, միամնաբար կը հռչակեն, թէ այս աշխարհի վրայ միակ գոյատեւողը Ճշմարտութիւնն է:

* * *

Անձի մը կրօնքը, ի վերջոյ, իր եւ իր Արարչին միջեւ եղած Հարց մըն է, եւ ոչ ուրիշներու:

* * *

Ճշմարտութիւնը, ի բնութենէ, ինքնայայտ է: Երբ զայն ծածկող սոգիտութեան քօղը վերցնենք, լոյսի նման կը փայլի:

* * *

Ճշմարտութիւնը արդար դատի մը ամենեւին վնաս չի Հասցներ:

* * *

Ճշմարտութիւնը Հաստատ կը կենայ, եթէ նոյնիսկ Ժողովրդային նեցուկ չկայ:

* * *

Աստուած, որպէս Ճշմարտութիւն, ինծի Համար անգին գանձ մըն է: Թող իւրաքանչիւրիս Համար ալ այդպէս ըլլայ:

* * *

Աղօթքի պահուն նախընտրելի է սրտանց աղօթե՛լ սակաւաթիւ բառերով, քան թէ շատախօսե՛լ առանց սրտաբուխ բառերու:

* * *

Մէկ անձի մը՝ մէկ սրտի մը, մի արարքով Հաճոյք մը պատճառել աւելի լաւ է, քան աղօթքի խոնարհած Հազար գրուի:

* * *

Աղօթքը անձի մը անարժանութեան եւ տկարութեան
խոստովանանքն է:

* * *

Ամէն օր աղօթողը կը զգայ, թէ բան մը կ'աւելցնէ իր
կեանքին, որ անկարելի է ուրիշ որեւէ բանի հետ
բաղդատել:

* * *

Աղօթքը ինդրանք չէ: Ան հոգիին կարօտն է:

* * *

Երբ կը հիանամ արեւամուտի հրաշքին, կամ լուսնոյ
գեղեցկութեան, ամբողջ հոգիովս կը պաշտեմ Արարիչս:

* * *

Միակ բռնապետը որուն առջեւ գլուխ կը ծռեմ, իմ'ներքին
լուռ ձայնն է:

* * *

Ամէն անձ իր խաղաղութիւնը ներքնապէս կը գտնէ:
Իսկական խաղաղութիւնը արտաքին ազդեակներէ
չազդուիր:

* * *

Երջանկութիւնը՝ խորհածիդ, խօսածիդ եւ ըրածիդ
համերաշխութեան մէջ կը կայանայ:

* * *

Առողջ դժգոհութիւնը, սկիզբն է յառաջդիմութեան:

* * *

Մինչեւ ժամանակի վերջաւորութեան տոկացող
համբերութիւնն է որ արժէք ունի:

* * *

Կեանքդ ապրէ, այն ենթադրութեամբ, թէ վաղը պիտի
մեռնիս: Սորվէ, ենթադրելով թէ յաւիտեան պիտի ապրիս:

* * *

Ասոնք, որոնք խորհիլ գիտեն, ուսուցչի պէտք չունին:

* * *

Երբ զսպումը եւ քաղաքավարութիւնը կ'աւելցուն ուժին,
ան կը դառնայ անդիմադրելի:

* * *

Աշխարհի մէջ տեսնել ուզած փոփոխութիւնդ, դուն քու
մէջդ պետք է յառաջ բերես:

* * *

Բանի մը Հաւատալ եւ զայն չի գործադրել,
անպարկեշտութիւն է:

* * *

Ինքնայարգանքը ոչինչ նկատողութեան կ'առնէ:

* * *

Ըստ Հիւլէական դարու առասպելին, մարդու մը
վսեմութեան չափանիշը, անոր աշխարհը ի՛նչքանով
փոխելու կարողութիւնն է, մինչդէռ իսկական չափանիշը՝
ինքզինք կարենալ փոխելու կարողութիւնն է:

* * *

Սխալ մը, եթէ նոյնիսկ շատերու կողմէ քարոզուի, կարելի
չէ ճշմարտութիւն Համարել, ինչպէս ճշմարտութիւն մը
սխալ՝ եթէ նոյնիսկ ոչ ոք զայն չէ նշմարած:

* * *

Աչք՝ աչքի դէմ Հասկացողութիւնը բոլոր աշխարհը կը
կուրացնէ:

* * *

Ապագան գուշակել չեմ ուզեր: Իմ զբաղմունքին առարկան
ներկան է: Աստուած, ինձի յաջորդ վայրկեանին վրայ
իշխանութիւն չէ սուած:

* * *

Առանց ուրախութեան կատարուած ծառայութիւնը ոչ
մատուցողին եւ ոչ ալ մատուցուողին օգուտ ունի:
Ուրախութեամբ կատարուած ծառայութիւններու առջեւ
բոլոր Հաճոյքներն ու ստացուածքները կը նսեմանան:

* * *

Խղճի Հարցերուն մէջ «մեծամանական օրէնք»-ը տեղ
չունի:
* * *

Բարկութիւնը եւ անհանդուրժողութիւնը ճիշդ-
Հասկացողութեան թշնամիներն են:
* * *

Կը սիրեմ՝ ձեր Քրիստոսը, բայց չեմ սիրեր ձեր
քրիստոնէաները: Ձեր քրիստոնէաները շատ տարբեր են
ձեր Քրիստոսէն:
* * *

Նախախնամութիւնը ամէն բանի Համար որոշեալ
ժամանակ մը ունի: Մենք արդիւնքները չենք կրնար ճշդեւ
միայն կրնանք ջանք թափել:
* * *

Գրեթէ բոլոր գործածներդ կարեւորութիւն չունին, սակայն
կարեւորը զանոնք գործելդ է:
* * *

Գոհունակութիւնը կատարուած ջանքին մէջն է, եւ ոչ թէ
արդիւնքին, լրիւ ջանքը լրիւ յաղթանակ է:
* * *


Ինքնաճանաչման լաւագոյն միջոցը, ինքզինք յատկայնել է
ուրիշներու ծառայութեան:
* * *


Մարդու մը արժէքը կը բարձրանայ այնքան, որքանով ան
կ'օգնէ ուրիշներու բարօրութեան:
* * *

Երբ անձին գործունէութեան շարժաւիթին մասին
կասկած կը ծագի, բոլոր ըրածները կ'արատաւորուին:
* * *

Անձի մը պարտականութիւնն է միշտ լաւագոյնին ճգնիլ,
այդ ձգտումն ալ իր վարձատրութիւնն է: Մնացեալ ամէն
ինչ կախեալ է Աստուծմէ:
* * *

*Աեանքին բուն նպատակը ճիշդ ապրիլ ճիշդ խորհիլ եւ
ճիշդ գործել է: Երբ մեր բոլոր խորհուրդները կը
կեդրոնանան մարմնին պէտքերուն վրայ, Հոգին
կ'ուժաթափուի:*





ՊՈՒՏՏԱՅԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ

*Երջանկութիւնը ստացուածքներէ կամ
սեփականութիւններէ չի գար, այլ իմաստութեամբ եւ
սիրով լի սրտէ:*

* * *

*Մաշը կեանքի մէջ ամենամեծ կորուստը չէ, այլ այն ինչ որ
կը մեռնի ողջ մարդուն մէջ հոգին:*

* * *

*Քաջութիւնը վախի պակասը չէ, այլ վախէն աւելի
կարեւորին գիտակցութիւնն է:*

* * *

*Ներողամտութիւնը մեր ամենակարեւոր նպաստն է
աշխարհի առողջութեան վերահաստատման համար:*

* * *

*Ներել՝ բանտարկեալը ազատ արձակել է, գիտնալ թէ այդ
բանտարկեալը դուն էիր:*

* * *

*Մի դատեր, երջանիկ պիտի ըլլաս : Ներէ աւելի երջանիկ
պիտի ըլլաս: Ամէն բան սիրէ, շատ աւելի երջանիկ պիտի
ըլլաս:*

* * *

Երբ ինքնագիտակցութեամբ եւ կարեկցութեամբ ապրինք
եւ նաեւ մեր լաւագոյնը գործենք, այլեւս ինչ որ ալ
պատահի չենք զղջար:

* * *

Երբ ուրիշը կը դատես, ան նկարագրած չես ըլլար այլ
ինքզինքդ:

* * *

Գիտնալ ուղածդ եւ փնտռած հրաշքդ՝ քու մէջդ է:

* * *

Մեր ապրուստը կ'ապահովենք մեր ստացածով, իսկ մեր
կեանքը կը կերտենք մեր տուածով:

* * *

Աւելի լաւ է բազմաթիւ փոքր քայլեր նետել դէպի ճիշդ
ուղղութիւն, քան թէ մեծ քայլ նետել ու սայթաքիլ:

* * *

Կեանքը աճելու ընթացք մըն է: Անձը իրարու շղթայուած
վիճակ՝ կացութիւններու շարքաւորումէն կ'անցնի: Երբեմն
որոշ աստիճանի վրայ տեղքայլ կ'ընենք, աս ալ մահուան
մէկ տեսակն է:

* * *

Բարկութեան Համար պիտի չպատժուիս, այլ
բարկութիւնդ քեզ պիտի պատժէ:

* * *

Մարդ արարած իր շուքին մէջ կը կենայ եւ կը զարմանայ
թէ ինչո՞ւ մոլթ է:

* * *

Երբ կը սորվիս՝ սորվեցուր, երբ կը ստանաս՝ տուր:

* * *

Վերջանալուն Համար մի լար, այլ պատահելուն Համար
ուրախացիր:

* * *

Յաւը անխուսափելի է, բայց տառապիլը կամքէ կախեալ է:

* * *

Դատողութիւնը արգելք կը Հանդիսանայ որ երեսոյթներու
եսին գանուող շնորհքը տեսնենք:

* * *

Երբեմն Հարցումները աւելի կարեւոր են քան թէ
պատասխանները:

* * *

Անցեալը քու ներկայի մէջ ըլլալուդ արգելք չի կրնար ըլլալ,
միայն անցեալի մասին քու ունեցած ողբդ կրնայ:

* * *

Եթէ «իրողութեան» մը կը Հաւատաս եւ անոր կառչիս ,
ուրիշ որեւէ նորութիւն չես կրնար Հասկնալ :

* * *

Եթէ կարենանք մեր սրտերը բանալ, ոեւէ անձ, ներառեալ
մեզ նեղողները, մեր ուսուցիչները կրնան ըլլալ:

* * *

Երբ Ժխտական փորձառութիւն մը կը պատահի, իր մէջ կը
պարունակէ ծածկուած մեծ դաս մը:

* * *

Պատահարները կը կրկնուին մինչեւ որ դասը սորվինք:

* * *

Հարցումներուդ մեծամասնութեան պատասխանը կը
ստանաս եթէ Հանդարտօրէն սպասես պատասխանին:

* * *

Այնպիսի պէտք է սիրես, որ սիրածդ ինքզինք ազատ զգայ:

* * *

Չարմանալիօրէն, երբ կը սիրենք, մենատխրութիւն չենք
ունենար:

* * *

Այն անձը որ այլազանութեան մէջ կը տեսնէ միայն
միութիւն եւ իր անձը անոնց իւրաքանչիւրին մէջ, ինչպէս
Նաեւ իւրաքանչիւրը՝ իր մէջ, այդ անձը ամէն ինչ անաչառ
աչքով կը դիտէ:

* * *

Անարժէք են կարդացած սուրբ գիրքերդ եւ արտասանած
սուրբ խօսքերդ, եթէ անոնց Համապատասխան չես
գործեր:

* * *

Չես կրնար յառաջանալ այն ուղիէն, մինչեւ որ դուն ինքդ
այդ ուղին ըլլաս:

* * *

Ճշմարտութիւնը եւ ճանապարհը երկինքի մէջ չեն, այլ քու
սրտիդ մէջն են:

* * *

Ամէն լաւձիդ մի Հաւատար:

Ամէն բանի մի Հաւատար եթէ նոյնիսկ շատերու կողմէ
ըսուի եւ տարածայնուի:

Ամէն բանի մի Հաւատար եթէ նոյնիսկ անոնք քու
կրօնական գիրքերուդ մէջ գրուած են:

Ամէն բանի մի Հաւատար պարզ այն պատճառով որ
անոնք Հեղինակութիւն ունեցող քու ուսուցիչներդ եւ
երէցներդ ըսած են:

Մի Հաւատար աւանդութիւններուն անպայման
ճշմարտութիւն ըլլալուն, պարզ այն պատճառով որ անոնք
սերունդէ սերունդ փոխանցուած են:

Բայց եթէ քննելէ, զննելէ եւ վերլուծելէ յետոյ զանոնք կը
գտնես տրամաբանական ու բոլորին Համար օգտակար,
այն ատեն զանոնք ընդունէ եւ անոնց Համաձայն ապրէ:

* * *

Մեր ինքնութիւնը մեր մտածումներուն արտացոլացումն է:
Ինչ որ խորհիւք ան կ'ըլլանք:

* * *

Ատելութեան զգացումը փոխադարձ ատելութեամբ
կարելի չէ վանել, այլ միայն սերով: Ասիկա
անփոխարինելի օրէնք է:

* * *

Կեանքի ճանապարհին՝ Հաւատքը կեանքի մտունդն է,
բարի գործերը անոր պատասպարանը, իմաստութիւնը անոր
օրուայ ըյտը եւ ակնածութիւնը անոր գիշերային
պաշտպանը: Մաքուր կեանք ապրող անձի մը ոչ մէկ բան
կրնայ վնաս Հասցնել:

* * *

Ճշմարտութեան ճամբուն վրայ մարդ միայն երկու սխալ
կրնայ գործել՝ չարատեսել մինչեւ վերջ եւ չսկսիլ
ճամբորդութեան:

* * *

Մի Հաւատար ամէն ինչ որ կը կարգաս, ուր որ ալ
գրուած ըլլայ, կամ ով որ ալ ըսած ըլլայ, նոյնիսկ եթէ ես
ըսած եմ, եթէ անոնք քու տրամաբանութեանդ եւ
դատողութեանդ կամ ողջմտութեանդ չի
Համապատասխաներ:

* * *

Կը նախընտրեմ Հետաքրքրութեամբ բացուած միտքը քան
թէ Հաւատքի (belief) Հետեանք գոցուած միտք մը:



ՃԱՓՕՆԱԿԱՆ ՊՈՒՏՏԱՅԱՅԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

Բոլոր սուփանքները վշտին սկիզբն են:

* * *

Ամէն չարութիւն մարմնոյն կ'ազդէ:

* * *

Հանդիպումը պարզապէս բաժանման սկիզբն է:

* * *

Ամէն ինչ պարզապէս երազ մըն է:

* * *

Գոյութեան երեք վիճակներուն իւրաքանչիւրն ալ
(Ֆիզիքական, զգացական եւ իմացական) անՀատին
խաղաղութիւն չեն պարգեւեր:

* * *

Չանազան վիճակներու միջեւ իսկական
տարբերութիւնները, ճշմարտութեան Հանդէպ մեր
ունեցած գիտակցութեան մակարդակի
տարբերութիւններուն կը Համապատասխանեն:

* * *

Բոլոր զգացական ցանկութիւնները անխուսափելիօրէն
տիրութեան ծնունդ կու տան:

* * *

Կեանքը, տակաւին Հոյր չսկսած, լապտերի մը բոցին կը
նմանի:

* * *

Մարդկային կեանքը առաւօտեան ցօղին կը նմանի:

* * *

Դժոխքը եւ դրախտը մարդոց սրտերուն մէջն են:

* * *

Եթէ Հունտը չցանուի, ոչինչ կը ծլի:

* * *

Աստուածային բնութիւնը նոյնիսկ կատուին մէջ ալ
գոյութիւն ունի:


* * *

Ուրախութիւն եւ տխրութիւն միայն մտքին մէջ գոյութիւն
ունին::

* * *

Բարի փորձառութիւններ, բարի արարքներու վերադարձն
են, իսկ չար պատահարներ՝ չար արարքներու:





ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՆԻԿՆԵՐՈՒ ԱՍԱՅՈՒՎԾՔՆԵՐ

ԻՃԱՍՏԸ ՓԵՏՈՒՐԵԱՂ ԱՐԵՒԻՆ.

Ամէն ինչ կեդրոնէն կը բխի: Կեդրոնը կը գտնուի
ամէնուրեք, նոյն ժամանակ ան անջատ է բոլոր
շրջանակներէն որոնք կը ճառագայթեն կեդրոնին շուրջ:
«Մեծ Հոգին» նոյն ժամանակ թէ կը գերազանցէ եւ թէ
կը ներգործէ այն բոլորը, որ Իրմէ կը բխի: Շարաւիղները
կը ներկայացնեն Անոր ներգործութիւնը, իսկ շրջանակները
Անոր գերազանցութիւնը:

* * *

Մեզի սորվեցուցած էր Հաւատալ, թէ Մեծ Հոգին ամէն
ինչ կը տեսնէ եւ բացարձակապէս չի մոռնար եւ երկնային
կեանքի մէջ ամէնուն պիտի Հատուցանէ
Համապատասխան Հոգեկան կեանք:

* * *

Ճմարտութիւնը խօսելու Համար շատախօսութեան պէտք
չկայ:

* * *

Մարդը չէ որ Հիւսած է կեանքի ուստայնը: Ան, անոր միայն
մէկ թեղն է: Ինչ որ կ'ընէ այդ ուստայնին, ինքզինքին ըրած
կ'ըլլայ:

* * *

Արարչութեան սկզբնաւորութեան միայն անասուններուն
 իմաստութիւն եւ գիտութիւն տրուած էր, որով «Թիրաւա»
 ուղղակի մարդոց հետ չէր խօսեր: Ան մարդուն որոշ
 անասուններ զրկեց, որպէսզի մարդը Չինք անոնց
 միջոցով տեսնէ, եւ Իր մասին անոնցմէ, ինչպէս նաեւ
 աստղերէն, արեւէն եւ լուսինէն տորվի: Ամէն ինչ
 «Թիրաւա»ի փառքը կը պատմէ:

* * *

Աշխարհի եւ մեր միտքերուն մէջ ամէն ինչ երկու է. բարի -
 չար, գեղեցիկ - սգեղ... , աջ ձեռքը կը զարնէ՝ չարութիւն
 կը գործէ - ձախ ձեռքը, որ սրտին մօտ է, ողորմութիւն
 ցոյց կու տայ, մէկ ոտքը մեզ չարութեան կ'առաջնորդէ -
 միւսը՝ բարութեան:

* * *

Ամէն ինչ նոյն օդը կը շնչէ. անասունը, ծառը եւ մարդը ...
 օդը իր հոգին կը շնորհէ բոլոր կեանքին:

* * *

Մի՛ անարգէր ուրիշի կրօնքը, յարգէ անոնց տեսակէտը եւ
 պահանջէ որ անոնք ալ քուկդ յարգեն: Միտէ կեանքը եւ
 զայն կատարելագործէ: Կեանքիդ ընթացքին ամէն ինչ
 գեղեցկացուր: Չանք ըրէ որ երկար ապրիս, յօգուտ միշտ
 ժողովուրդի ծառայութեան: Կերտէ ազնուութիւն, որ ան
 ըլլայ քու մահուան օրուան երգը:

* * *

Կը հաւատանք որ ստացուածքներու հանդէպ մեր ունեցած
 սերը տկարութիւն մըն է, ինչ որ պէտք է յաղթահարենք:
 Ար սերը կը կապէ ֆիզիքականին եւ եթէ թոյլատրենք,
 ժամանակի ընթացքին, հոգիին անդորրութիւնը կը
 խանգարէ: Որով Հարկ է որ մեր զաւակները մանուկ
 տարիքէն տորվին առատաձեռնութեան առաքինութիւնը:
 Որպէսզի զգան տալու հաճոյքը, պէտք է որ ուրիշին տան
 իրենց ամենայարգի մէկ ինչքը:

* * *

Այնպէս ապրէ, որ մահուան վախը չկարենայ քեզ գրաւել:
 Երբ մահուան ժամը Համնի, մի նմանիւր անոնց, որոնք
 մահուան վախով լի, կ'աղօթեն յաւելեալ ժամանակի
 Համար, որպէսզի իրենց կեանքը վերապրին: Նման տուն
 վերադարձող Հերոսի, ուրախութեան երգովը դիմաւորէ
 մահը:
 * * *

Երբ առաւօտուն արթննաս, փառք տուր կեանքիդ Համար:
 Եթէ փառք տալու պատճառ մը չես գտներ, յանցանքը
 քուդ է: Ոեւէ մէկը եւ որեւէ բան մի' նախատեր:
 Նախատէր իմաստուն մարդը կը վերածէ տիամարի եւ իր
 գիտակցութեան Հոգին կը խլէ իրմէ:
 * * *

Հեղութեամբ միշտ ճշմարտութիւնը ըսէ բոլորին
 Միայն այն ատեն է որ կ'ըլլաս կատարեալ մարդ (Միու)
 * * *

Ամէն ինչով եւ ամէն կերպով բոլորս ալ ազգական ենք:
 (Միու)
 * * *

Սիրեցէք զիրար եւ ուրիշի դժբախտութիւն մի' ցանկաք:
 (Անէքա)
 * * *

Յաւիտեանս պիտի ճանչցուինք մեր ձգած/թողած
 Հետքերէն:(Տաքօթա)
 * * *

Ամէն անձ իր իսկ դատաւորն է: (Փիմն)
 * * *

Դրացիդ մի' դատեր, մինչեւ որ անոր Հողաթափներով
 երկու լուննի ժամանակաշրջան չքալես: (Հայէն)
 * * *

Մաշ գոյութիւն չունի, այլ կայ միայն աշխարհներու
 փոփոխութիւն: (Տուամիշ)
 * * *

Քանի որ անցեալին տեղի ունեցած արարքի մը
պատահելուն այսօր արգելք ըլլալ կարելի չէ, պէտք չէ
անոր վրայ ողբալ:
* * *

Ան որ անցած է եւ անկարելի խափանել պէտք չէ անոր
վրայ ողբալ: (Փառնի)
* * *

Գիտութիւնը, որ չ'օգտագործուիր, վասնուած կ'ըլլայ:(Գրի)
* * *

Շատ դիւրին է Հեռուէն քաջ ըլլալ: (Օմահա)
* * *

Փնտռէ իմաստութիւն եւ ոչ գիտութիւն:
Գիտութիւնը անցեալէն է
Իմաստութիւնն ալ՝ ապագայէն: (Լամպի)
* * *

Երբ մարդ բնութենէ կը Հեռանայ, իր սիրտն ալ կը
կարծրանայ: (Լաբօթա)
* * *

Առ միայն այն որուն պէտք ունիս եւ երկիրը ձգէ այնպէս,
ինչպէս որ գտար: (Արափահօ)
* * *

Աստուած ամէն մէկուն երգ մը տուած է: (Ութէ)
* * *

Անոնք, որոնք յաջողած են, Հարկ է որ բան մը երազած
էին: (Մարիգօբա)
* * *

Կեանքը մահէն անջատ չէ, միայն այդպէս ըլլալ կը թուի:
(Պէք Տութ)
* * *

Այլեւ բաւարար չէ խաղաղութիւն Հռչակել: Պարտինք
խաղաղութեամբ վարուիլ եւ խաղաղութեամբ ու
խաղաղութեան մէջ ապրիլ: (Շէնանտաւ)
* * *

Բոլորս ալ իրարու ընկեր ենք, որով պարտինք իրարու
դժուարութիւնները յաղթահարելու համար իրար օգնել:

(Օսակէ)

* * *

Երբ ծնար, դուն լացիր, սակայն աշխարհ ուրախացաւ:
Այնպիսի կեանք մը ապրէ որ երբ մեռնիս, աշխարհ լայ եւ
դուն ուրախանաս: (Չերօքի)

* * *

Եթէ յաճախ փնտուենք, գիտութեան (գիտակցութեան)
նուէրը կու գայ: (Արափահօ)

* * *

Եթէ մարդ մը օձի չափ խորամանկ է, կարող է նաեւ
ազաւնի մը չափ անախաս ըլլալ: (Շայէն)

* * *

Երբ հարցումներդ սրտէդ կը բխին, պատասխաններդ ալ
սրտէն պիտի գան: (Օմահա)

* * *

Հոգին ծիածան պիտի չունենար, եթէ աչքերը արցունք
չունենային: (")

* * *

ԱՄԵՐԻԿԱԿԻ ԲԵՒԿՆԵՐՈՒ ՏՍԱՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Յարգանքով վարուէ երկրին եւ անոր բոլոր բնակիչներուն հետ
Միշտ մօտ եղիր Մեծ Հոգիին (Աստուծոյ)

Բացարձակ յարգանք ցոյց տուր բոլոր մարդոց

Միշտ մարդկութեան օգտին համար գործէ միասնաբար
Միշտ հասիր եւ ազնուութեամբ վարուէ, երբ օգնութեանդ պէտք կայ

Ըրէ այն, որ կը խորհիս թէ ճիշդ է

Հոգ տար մարմնոց եւ մտքիդ առողջութեան

Չանքերուդ մէկ մասը շնորհէ ամբոխի բարութեան

Միշտ ճշմարտախօս եւ պատուաւոր եղիր


Արարքներուդ պատասխանատուութեան լիովին տէր կանգնէ

* * *

ԼԱՔՕԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՆԵՅՈՅ

Բարեկամ Հետեւեալը ըրէ. այսինքն
 Կեանքիդ ընթացքին ինչ որ ընես, քու բոլոր սրտովդ եւ
 մտքովդ միշտ լաւագոյնդ ըրէ:
 Եւ երբ այդպէս կը գործես,
 Տիեզերքի Չօրովիներ քու օգնութեանդ կու գայ
 եթէ սիրտդ եւ միտքդ Համերաշխ են:
 Երբ մարդկութեան մէջ կը գտնուինք պարտ ենք
 պատասխանատու ըլլալ քանի որ բոլոր
 ստեղծագործութիւնը իրար շղթայուած է:
 Մէկուն ցաւը, բոլորին ալ ցանն է: Մէկուն պատիւը,
 բոլորին ալ պատինն է: Եւ ինչ որ ընենք կ'ազդէ տիեզերքի
 մէջ գտնուող ամէն բանի վրայ:
 Եթէ այդպէս ընես, այսինքն սիրտդ եւ միտքդ իսկապէս
 միացած, իբր մէկ - ինչ որ խնդրես,
 այնպէս ալ պիտի ըլլայ:





ԼԱՕ ՁՈՒ ԱՊԱԾՆԵՐ

Մերան ատեն որ կը յամառփնք «եին»-ը «եանկ»-էն զատել, անոնց Հասներու յոյսը չէնք կրնար ունենալ: Եթէ կը փափաքինք հեծեքանիւով ճամբորդել, պէտք չէ երկու ոտնակալին ալ նոյն պահուն ճշէնք:

Մը պարագային յառաջխաղացում տեղի չ'ունենար: Յառաջանալու Համար երբ ոտնակալներէն միուն կը ճշէնք, միւսը պէտք է թողունք: Յառաջացումը կ'իրականանայ երբ նոյն միջոցին կը կատարուի թէ ճշում, թէ ալ ազատ արձակում: Ճնշումը հետեւանքն է թող արման: Մյապէսով իւրաքանչիւրը, իր կարգին, կ'ըլլայ միւսին պատճառը:

* * *

Երբ ուաման կը ձգտիս, ամէն օր նոր բան մը ձեռք կը
ձգես:

Երբ Աստուածայայտնութեան կը ձգտիս,
ամէն օր բանէ մը պէտքէ ձերբազատուիս:

Գործունէութիւններդ Հետզհետէ կը պակսեցնես
Մինչեւ որ ոչինչ գործես:

Երբ ոչինչ կը կատարուի, չկատարուած ոչինչ կը մնայ:
Աշխարհ, ամէն ինչ իր գնացքին մէջ թողելով կը
կառավարուի

* * *

Երկնքի եւ երկրի գոյութենէն առաջ բան մը գոյութիւն
ունէր՝ չսահմանուած, չբացատրուած եւ կատարեալ:
Որքան լուռ էր եւ Հանդարտ, նաեւ՝ անձեւ, առանձինն,
Հասնելով ամենուէք՝ առանց փոփոխութեան
էնթարկուելու: Չայն կարելի էր նկատել ամէն ինչի ակը:
Անունը չգիտնարով զայն Թօսօ՝ Հանապարհ Գնացք՝
Արտակարգ կը կոչեմ:

* * *

Անիւի մը երեսուն շառակիղները կը միանան միջանիւին,
սակայն անիւին գործածութեան կարելիութիւնը կախեալ է
առանցքին անցած պարապութենէն:
Կառով կարելի է ամաններ շինել,
սակայն անոց գործածականութիւնը
կախեալ է ամանին փոսութենէն՝ պարապութենէն:
Յարկաբաժին մը յառաջ բերելու Համար պատերուն մէջ
դուռեր եւ պատուհաններ կը շինուին, սակայն
յարկաբաժնի գործածականութիւնը կախեալ է անոր
ունեցած օգտագործելի տարածքէն՝ պարապութենէն:
Հետեւաբար ինչ որ գրական գոյութիւն ունի կը ծառայէ
շահաբեր ձեւաւորման եւ ինչ որ գոյութիւն չունի
պարապութիւն է, կը ծառայէ գործածման:

* * *

Ճշմարտապէս բարի մարդը չ'անդրադառնար իր
բարութեան,

Հետեաբար բարի է:

Անմիտ մարդը կը ջանայ բարի երեւալ,
այդ պատճառով ալ բարի չէ:

* * *

Բարձր գիտակցութեան տէր մարդը բան մը չ'ընէր,
տակայն չեղած բան մըն ալ չի թողուր:
Հասարակ մարդը միշտ կ'աշխատի,
բայց տակաւին շատ ընելիք կը մնայ:

* * *

Ամենաբարձր առաքինութիւնը առանց «ես»ի գործէն է:

Ամենաբարձր ազնուութիւնը առանց պայմանի տալն է:

Ամենաբարձր արդարութիւնը հարցերը առանց
նախընտրութեան տեսնելն է:

* * *

Երբ Թաօ (Աստուած) կորսնցնէք, կը մնայ բարութիւնը:

Երբ բարութիւնը կորսնցնէք, կը մնայ
բարոյականութիւնը:

Երբ բարոյականութիւնը կորսնցնէք, կը մնան ծէսերը:

Ծէսերը ճշմարիտ հաւատքին միայն կեղեւներն են,

Սկիզբը քառսի:

* * *

Բարձր գիտակցութեան տէր մարդը կը Հետեւի իր
բնազդին

եւ չի խաբուիր կեանքի թակարդներէն:

Կ'ըսուի թէ.

«Ան կը կեդրոնանայ պտուղին եւ ոչ աղուամազին վրայ»

«Ան կողմնորոշուի արժանահաւատին Հետ եւ ոչ
անմիտին:»

«Ան կողմնակից է ճշմարտութեան եւ ոչ կեղծիքին:»

* * *

Մահը կը թուի կեանքի Հարցը ըլլալ քանի որ ամէն տասնէն երեքը որ կը ծնի, տասնէն երեքն ալ կը մեռնի: Ուրեմն ինչո՞ւ ամէն մէկ տասնէն երեքը մահ կը ծնանին, պարզապէս բազմանալու յիմարութեան Համար: Բայց կ'ըսեն. կայ տասնէն մէկը, որ կեանքէ այնքան վստահ, վագրն ու վայրի ցուրը իր ճամբէն կը հեռանան:

Պատերազմի դաշտին վրայ, զէնքերուն ուղղութիւնը կը շեղին իրմէ: Տուլին եղջիւրը չի գիտեր ուր խոցէ: Վագրին ճիրանները չեն գիտեր զինք ինչպէս փարատել: Չէնքերը չեն գիտեր զինք ուրկէ ծակել:

Եւ ինչո՞ւ, որովհետեւ ան մեռնելիք մահ չունի:

* * *

Անոնք որոնք գիտեն, չեն ըսեր. Անոնք որոնք կ'ըսեն, չեն գիտեր: Պէտք չէ, որ լեզուն թոյլ ըլլայ Հապա պարտ ենք զայն զսպել: Պէտք չէ անհամբեր ըլլալ կամ գրգռուած, այլ պարզ եւ Հանդարտ ըլլալ յստակ տեսողութեամբ, առանց շփոթութեան, Հակակշիռը գտնել: Ան, որ իր Հաւասարակշռութիւնը կը պահէ Հակառակ սիրոյ եւ ատելութեան ճոճումներուն, Հակառակ շահու եւ վնասի դրութիւններուն, Հակառակ գովեստի կամ մեղադրանքի կարելիութիւններուն

Ան, միայն կը Հասնի աշխարհի վրայ ամենաբարձր աստիճանի:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐ

Բոլորին Հանդէպ բարեացակամ եղիր, քանզի ամէն մարդ
անձնական պայքար մը ունի:

* * *

Անխոհեմ արտայայտութիւններ կրնան մահացու հետեանը
ունենալ:

* * *

Եթէ կ'ուզես երազներուդ իրականացումը, պէտք չէ երկար
քնանաս:

* * *

Հագուատիդ-կապուատիդ տեսքէն ալ աւելի կարեւոր է
արտայայտութեանդ թողած տպաւորութիւնը:

* * *

Եթէ կ'ուզես լաւ ընկեր ունենալ, լաւ ընկեր եղիր:

* * *

Երջանկութիւնդ կախեալ է խորհուրդներուդ որակէն:

* * *

Ամենածանր բեռը որ անձ մը կրնայ կրել՝ ոինն է:

* * *

Միակ բանը, որ ուրիշի տալով Հանդերձ տակաւին կրնաս
անոր տէր ըլլալ՝ սուած խօսքդ է:

* * *

Մարդու մը ըսած ամենամեծ սուտը ինքնախաբէութիւնն
է:

* * *

Եթէ գործ մը սկսելու քաջութիւնը չունիս, արդէն իսկ
վերջացած ես:

* * *

Կորսուած ժամանակը ետ չի գար:

* * *

Գաղափարները չեն իրականանար, եթէ դուն զանոնք
կեանքի չկոչես:

* * *

Մարդու միտքը նման է անկարգելի (parachute), եթէ
չբացուի օդուտ չունի:

* * *

Երջանկութեան Հետապնդումը ամբողջ կեանքի մը
նպատակն է:

* * *

Բնաւ ուշ չէ ըլլալ այն, ինչ որ պետք է ըլլայիր:

* * *

Կեանքը շատ կարճ է զոջումներով անցնելու Համար:

* * *

Ամէն բան նպատակի մը Համար կը պատահի:

* * *

Եթէ երկրորդ աւիթ մը ձեռքդ անցնի, մի փախցնէր եւ
եթէ այդ քեզ պիտի փոխէ՝ փոխուէ:

* * *

Երբ կը ջանանք կողմնորոշուիլ, թէ ով է ճիշդ եւ ով է
սխալ մտուացութեան կը մասնուի, թէ ինչ է ճիշդն եւ ինչ
է սխալը:

* * *

Ելը ջուր կրնաս տանիլ, բայց չես կրնար ստիպել որ
խմէ:

* * *

Ինչպէս խողը օճառի պետք չունի, նոյնպէս անմիտն
ալ՝ խրատի:

* * *

Երբ ազուէսը խաղողի ողկոյզին չի կրնար Համնիլ, կ'ըսէ,
թէ անոնք խակ են:

* * *

Շունը կը Հաջէ, կարաւանը կը քալէ:

* * *

Գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ:
* * *

Հազար խորհէ, մէկ խօսէ:
* * *

Խենդ մը հորը քար մը ձգեց, տաս խելացի չկրցաւ հանել:
* * *

Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ:
* * *

Երբ հովը փչէ յարդը կ'երթայ, Հացահատիկը կը մնայ:
* * *

Երկաթը տաքը տաքին կը ձեծուի:
* * *

Երջանիկ ըլլալը շատ պարզ է, բայց շատ դժուար է պարզ
ըլլալը:
* * *

Երբ թիժուն ուտես, անուշը կը գնահատես:
* * *

Վրէժինդուրովեան պատճառաւ գոհունակութիւնը պահ
մը միայն կը տեսէ. ներողամտութեան պատճառաւ
ուրախութիւնը մշտատես է:
* * *

Նախատինքի մը վրէժը լուծել իր թշնամիին հաւասարիլ է.
Ներել անոր՝ շատ վեր բարձրանալ է անկէ:
* * *

Ծաղկալից ճամբաները միշտ փառքի չեն տանիր:
* * *

Բարի համբաւը աւելի կ'արժէ քան ոսկի գօտին:
* * *

Երբ ձեռքդ չի կրնար, սի՛րտդ պէտք է ողորմութիւն տայ:
* * *

Սիրելի՛ ըրէք ձեր անձը ձեր կեանքին օրինակովը:
* * *

Ճիգը ունայն է եթէ յարատեւ չըլլայ:
* * *

Ճշմարիտ երջանկութիւնը խղճի Հանդարտութեան մէջ կը
կայանայ:

* * *

Չանձրոյթը աշխարհ մտած է ծուլութեան միջոցաւ:

* * *

Բարիքի դէմ բարիք՝ ամէն մարդու գործ.

Չարիքի դէմ բարիք՝ ազնիւ մարդու գործ:

* * *

Լաւ վարմունքը աւելի կ'արժէ, քան լաւ պաշտօնը:

* * *

Չարերը տեսնել եւ մտիկ ընել անոնց, արդէն չարութեան
սկզբնաւորութիւն մըն է:

* * *

Չեր երջանկութեան վրայ մի՛ խօսիք մարդու մը հետ, որ
ձեզմէ նուազ երջանիկ է:

* * *

Սմէնէն Հզօր միտքը ան է որ իր տկարութիւնը կը
ճանչնայ:

* * *

Մի՛ պահանջեր որ ուրիշ մը կրէ այն բանը որուն դուն չես
կարող Հանդուրժել:

* * *

Մէկ վարդով գարուն չի գար:

* * *

Լուութիւնը տխմարներուն սրամտութիւնը՝ եւ
իմաստուններուն առաքինութիւններէն մէկն է:

* * *

Չկայ թշնամի մը որ՝ այնքան սպառնայ մարդուս մտքին,
որքան բարկութիւնը:

* * *

Լոկ մէկ վայրկեանի Հաճոյք վատաւողջ
Կը թունաւորէ մեր կեանքը ամբողջ:

* * *

Փորձառութիւնն է մեծարժէք գոհար
 Չէն բաւեր անոր գանձեր անհամար,
 Քանի որ զայն ձեռք ձգելու համար
 Պէտք է սպառել ջանք ու կեանք երկար:
 * * *

Խօսք ըսածդ կըրր է. Խորհէ՛, ետքը գըրրէ:
 * * *

Մի՛ ըներ բան անօրէն. Կը գանես Երկնաւորէն:
 * * *

Ինչ որ ընես՝ զայն կը գանես. Ինչ որ ցանես՝ զայն կը
 հսձես:
 * * *

Մէկը հազար կ'արժէ. Հազար կայ մէկ չ'արժէր:
 * * *

Բախտ կայ փորձանք կը բերէ. Փորձանք կայ բախտ կը
 բերէ:
 * * *

Մի՛ ըլլար ըկ հացի ընկեր. Եղի՛ր նաեւ ըացի ընկեր:
 * * *

Հազա՛ր ըտ, մէկ խօսէ՛: Հազա՛ր խորհէ, մէկ գործէ՛:
 * * *

Նախ քննէ՛ անձը, Յէ՛ տոյ տուր գանձը:
 * * *

Սէրի հէշտ է առողջութիւնը ինամել, քան հիւանդութիւնը:
 * * *

Լաւ է քնանալ հանգիստ խղճով, քան աղօթել նենգ
 մտածումներով:
 * * *

Չարը ածուխի պէս է, եթէ չայրէ, կը սեւցնէ:
 * * *

Կարելի չէ ձին առանց սանձի, ոչ ալ մեծութիւնը առանց
 խեղճի կառավարել:
 * * *

Շահը անուշ է, մարդս կը թովէ.
Մարդ շահու համար էչն իսկ կը գովէ:

* * *

Շատ խօսողը գործէն, շատ գործողը խօսքէն չ'ախորժիր:

* * *

Ծառին ուժը իր արմատներուն մէջն է:

* * *

«Աղօթեղը» սիրել եւ խորհիլ է միաժամանակ:

* * *

Ծուրլթիւնը բոյն մըն է, որուն մէջ իր հաւկիթները կ'ածէ
չարութիւնը:

* * *

Թէ որ առատ է ոսկիդ, կը հաւատան սուտ խօսքիդ,
Թէ փող չունիս ա՛յ Դաւիթ, ո՛վ հաւատայ իրաւիդ:

* * *

Երանի այն մարդուն՝ որ աջ ձեռքը կրօնի կ'երկարէ, իսկ
ձախը գիտութեան:

* * *

Պատուաւոր մարդը չի ստորնանար երբեք. առիւծը կը
մեռնի անօթութենէ, հոտած միս չ'ուտեր:

* * *

Մէկը բաւ է, երկուքը լաւ է, երեքը ցաւ է:

* * *

Չարին չարիք հատուցանել՝ փոքրահոգի մարդու գործ.
Չարին բարիք հատուցանել՝ մեծահոգի մարդու գործ:

* * *

Էջը ի՞նչ գիտէ նուշը, կ'երթայ կ'ուտէ փուշը:

* * *

Լաւ է աչքով կոյր ըլլալ, քան՝ մտքով:

* * *

Երեք բաներ՝ որոնցմով մարդ կեանքին մէջ կը յառաջանայ.
Առողջ մարմին, մշակեալ միտք, ազնիւ սիրտ:

* * *

Հոն ուր արժէքը կը նուագի, արժէքին բարձրութիւնը ցոյց
տուող ածականները կը բազմանան:

* * *

Շէն բնատրութիւնը ազդու դեղ է տիրութեան դէմ:

* * *

Նշմարատրութիւնը գիտութիւններու արեւն է:

* * *

Սէրը ստեղծագործող է, նախանձը՝ թունաւորող,
աստելութիւնը՝ սպաննող:

* * *

Սուաքինութիւնը թանկագին քար մըն է, որքան պարզ
այնքան գեղեցիկ:

* * *

Գերիշխողը զգացումն է, խելքը նրա լոկ ծառան:

* * *

Չորս բաներ, զորս կարելի չէ ետ բերել. նետուած քարը,
բերաննէդ ելած խօսքը, պատահած դէպքը, անցած
ժամանակը

* * *

Դուն թէ գիտես Հազար բան, մէկ գիտցողէն բան
Հարցուր, գուցէ առնես պատասխան, քու Հազարէդ նոր եւ
սուր:

* * *

Խելքը մօրուքի հետ չի մեծնար:





Մայր ԹԵՐԵԱՍ

Մարդիկ ընդհանրապէս անխիղճ եւ անձնասէր են:

Բայց եւ այնպէս դուն զիրենք ներէ:

**Եթէ դուն ազնիւ եւ բարեացակամ ըլլաս,
կը խորհին, թէ յետին նպատակ մը ունիս:**

Բայց եւ այնպէս դուն ազնիւ եղիր եւ բարեացակամ:

**Եթէ դուն պարկեշտ եւ պատուաւոր ըլլաս,
քեզ կը խաբէն:**

**Բայց եւ այնպէս դուն շարունակէ պարկեշտ եւ
պատուաւոր ըլլալ:**

Եթէ դուն երջանիկ ըլլաս, քեզ կը նախանձին:

Բայց եւ այնպէս դուն շարունակէ երջանիկ ըլլալ:

**Քու այսօր գործած բարիքներդ կրնան վաղը
մոռցուիլ:**

Բայց եւ այնպէս դուն շարունակէ բարիք գործել:

**Եթէ դուն միշտ լաւագոյնդ ընես,
բնաւ ալ բաւարար պիտի չըլլայ:**

Բայց եւ այնպէս դուն շարունակէ քու լաւագոյնդ ընել:

Քանզի, ի վերջոյ Հարցը քու եւ քու Աստուծոյդ միջեւ է:

Որովհետեւ Հարցը երբեք քու եւ անոնց միջեւ չէր:



-ԺԷ-

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

*

Ա - ԵՐԵՔ ԾԱՌԵՐ

Բ - «ԳԱԶԻ»Ի ԹԱԳԱԲՈՐԸ

Գ - ԹԱԳԱԲՈՐԸ ԵՒ ԾԱՌԱՆՆ

Դ - ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ



ԵՐԵՔ ԾԱՌԵՐ

Բլուրի մը գագաթը երեք ծառեր կային: Օր մը սկսան զրուցել իրենց երազներուն եւ յոյսերուն մասին:

Առաջինը ըսաւ. «Ես կ'ուզէի օր մը թանկագին գանձեր պարունակող տուփ մը ըլլալ: Ձիս գեղեցիկ փորագրութիւններով զարդարէիս, որպէսզի ամէն տեսնող զմայլեր:»



Երկրորդը անոր յաջորդելով ըսաւ. «Ես կը փափաքէի Հոյակապ նաւ մը դառնալ: Կ'ուզէի թագաւորներ ու թագուհիներ տանիլ ծովէ ծով, մինչեւ աշխարհի ամենաՀեռաւոր ծայրերը: Իմ ամուր կազմովս ամէն անձ ինքզինք ապահով պիտի զգար:»



Երրորդ ծառն ալ ըսաւ. «Ես կ'երազեմ այն աստիճան մեծնալ, որ բոլոր անտառին մէջ ըլլամ ամենաբարձր եւ ուղիղ ծառը: Բոլոր մարդիկ, ինձ տեսնելով եւ ճիւղերուս Հիանալով, իրենց միտքերն ու Հոգիները բարձրացնեն դէպի երկինք՝ դէպի Աստուած, եւ

տեսնեն, թէ ես որքա՛ն մօտ եմ Վնոր: Պիտի ուզէի ըլլալ ամենաբարձր ծառը, որ ամէն անձ զիս միշտ յիշէ»:

Երեքն ալ անընդհատ աղօթեցին իրենց փափաքներուն իրականացման համար:

Մի քանի տարի յետոյ, օր մը փայտահատներ անտառ եկան եւ այս երեք ծառերը տեսան: Անոնցմէ մէկը առաջին ծառին նայեցաւ եւ ըսաւ.

«Աս դիմացկուն փայտ է, զայն կրնամ ատաղձագործին ծախել» եւ սկսաւ ծառը կտրել: Ծառը ուրախ էր, խորհելով թէ ատաղձագործը իրմով թանկագին գանձերու տուփ պիտի շինէր:



Ուրիշ փայտահատ մը, երկրորդ ծառին համար ըսաւ. «Աս փայտը իսկապէս պինդ ու ամուր է: Կրնամ նաւաշինարարական արհեստանոցի ծախել»: Երկրորդ ծառն ալ շատ ուրախ էր, քանի որ իր երազը պիտի իրականանար:

Երրորդ ծառը սարսափած էր, որովհետեւ գիտէր, թէ եթէ կտրուէր, իր երազը երբէք պիտի չիրականանար: Ուրիշ փայտահատ մը ըսաւ. «Ճիշդ է թէ առայժմ պէտք չունիմ այս ծառի փայտին, սակայն յետագային կ'որոշեմ ինչ նպատակի համար գործածել» եւ սկսաւ կտրել:

Առաջին ծառը ատաղձագործին ծախուեցաւ: Ան, այդ ծառով տաշտ մը շինեց, որ քարայրի մէջ դրուեցաւ եւ կենդանիները կերակրելու համար մէջը խոտով լեցուեցաւ: Աս իր աղօթքներուն իրականացումը չէր:



Երկրորդ ծառէն ձկնորսական փոքր նաւակ մը շինեցին: Փառուար նաւ մը դառնալու եւ թագաւորներ ու

Թագուհիներ փոխադրելու իր երազը անհետացած էր:

Երրորդ ծառը պահեստի դրուեցաւ: Ան, անձկութեամբ, փայտահատին որոշումին սպասեց:

Տարիներ անցան եւ ծառերը մուռցան իրենց երազները:

Օր մը, այր եւ կին մը քարայր մտան՝ գիշերելու:

Կինը յոյ էր: Ծնունդ տուաւ որդիի մը, որ պառկեցուցին խոտով լեցուն տաշտին՝ մառին մէջ: Ծառը հասկեցաւ, թէ թանկագին գանձեր պարունակող տուփ ըլլալու փափաքը իրականացած էր: Արժանացած էր իր գիրկը ընդունելու բոլոր ժամանակներու ամենամեծ Գանձը:



Տարիներ յետոյ, խումբ մը մարդիկ երկրորդ ծառով շինուած ձկնորսի նաւով կը ճամբորդէին: Անոնցմէ մէկը յոգնած, կը քնանար: Յանկարծ ծովը փոթորկեցաւ: Փոթորիկը այնքան ուժգին էր որ բոլորը սարսափեցան: Արթնցուցին քնացողը: Ան, «խաղաղութիւն» հրամայեց եւ փոթորիկը դադարեցաւ: Ծառը հասկեցաւ, թէ թագաւորներու Թագաւորը փոխադրելու իր փափաքին իրականացման արժանացած էր:



Վերջապէս երրորդ ծառն ալ օգտագործեցին: Անով խաչափայտ շինեցին եւ մարդու մը կոնսակը բեռցուցին: Ժողովուրդը կը ծաղրէր



այդ անձը: Երբ ամբօխը բլուրին գագաթը կանգ առաւ, խաչակիրը խաչափայտին գամեցին եւ խաչափայտն ալ հողին մէջ մխրձեցին: Թողուցին որ խաչեցեալը այդպէս մահանայ:



Իւրաքանչիւր ծառ ստացաւ այն ինչ որ երազած էր, բայց ոչ այն ձեւով ինչպէս ինք երազած էր:


* * *

Պէտք է գիտնանք, որ Աստուծոյ ճամբաները մեր ճամբաներուն նոյնը չեն: Անոր ճամբաները միշտ լաւագոյնն են:

Երբ դէպքերը մեր մտածած ուղղութեամբ չեն ընթանար, յիշէնք որ Աստուած միշտ լաւագոյնը կը կամենայ մեզի համար:

Վստահինք Իրեն եւ միշտ գոհ ըլլանք մեր ներկայ վիճակէն:





«ԳԱԶԻ»Ի ԹԱԳԱՒՈՐԸ

Հին Հնդկաստանի Գազի քաղաք-Թագաւորութիւնը կառավարման տարօրինակ օրէնքներ ուներ: Ամէն քաղաքացի, եթէ փափաքը յայտնէր, Թագաւոր ըլլալու կարելիութիւնը ուներ: Թագաւորութեան շրջանը ժամանակաւոր էր՝ միայն հինգ տարի: Ըստ օրէնքի, շրջանը աւարտող Թագաւորին ոտքերը եւ ձեռքերը կը կապէին եւ վնք նաւակով մօտակայ գետին դիմացի ափի անտառին մէջ կը ձգէին: Այդ անտառը վայրի կենդանիներով լեցուն էր: Շրջանը աւարտող ամէն Թագաւոր երբ հոն կը ձգուէր, կարճ ժամանակէ մը վերջ անոր մահուան ճիչերը կ'իմացէր՝ կենդանիներուն վայրագ գոռումներուն խառնուած: Շուտով լռութիւն կը տիրէր: Այդ աղետալի վախճանին

Համար շատ քիչեր կը փափաքէին թագաւոր ըլլալ: Երբեմն մի քանիներ, իրենց կեանքի դժուարին կացութենէն ազատելու նպատակաւ, կը խորհէին չմեռած քոնէ Հինգ տարի թագաւորական կեանք ապրիլ եւ յետոյ մեռնիլ: Ասոնք անգամ առաջին տարուայ վերջաւորութեան, կը սկսէին մտահոգուիլ եւ կը զոյջային իրենց տուած որոշումին համար: Ասոնք, որոնք խոհեմ էին, կը խուսափէին թագաւոր ըլլալէ:

Սովորութիւն էր որ թագաւորին գահակալութեան Հինգ տարուայ վերջաւորութեան քաղաքին բոլոր բնակչութիւնը գետին եզերքը հաւաքուէր եւ թափօրով թագաւորը դէպի մահ ճամբէր: Խեղճ թագաւորներուն աղաչանքները ի զուր էին, եւ օրէնքը առանց փոփոխութեան կը կիրարկուէր:

Նման օր մը, Ժողովուրդը դարձեալ գետին եզերքը հաւաքուած էր: Մինչեւ այդ թուական ոեւէ թագաւոր անխուսափելի վախճանէն չէր ազատած: Ժողովուրդը զարմանքով տեսաւ թագաւորին արքայական շուքով մուտքը, անման իր նախորդներուն, հանդարտ եւ առանց աղաչանքի: Իրեն կը ճետեւէին իր բոլոր նախարարները: Նաակը պատրաստ էր: Թագաւորին նաւ մտնելուն օգնեցին: Երբ թագաւորը տեսաւ որ նստարանը պարզ տախտակէ էր, իր նախարարներուն հարց տուաւ, թէ ճիշդ է՞ր որ մինչեւ գետին դիմացի ափը հասնիլը ինք տակաւին թագաւոր էր: Ասոնց պատասխանը դրական եղաւ: Ուրեմն թագաւորը պահանջեց որ զինք թագաւորի մը պատշաճ ձեւով ճամբորդէն: Փոքր իրարանցումէ մը յետոյ, նախարարները անմիջապէս պէտք եղած բարձերը բերին եւ նաակին մէջ տեղաւորեցին, որպէսզի թագաւորին ճամբորդութիւնը հանգիստ ըլլայ: Երբ նաւը ցամաքէն կը հեռանար, թագաւորը ժպտերես, ձեռքի արքայական ուղղոյնի շարժումով, Ժողովուրդէն հրաժեշտ առաւ:

Տարիքոտ նաւավարին պատասխանատուութիւնն եւ պարտականութիւնն էր, ի գին ամէն բանի, թագաւորը գետին դիմացի ափը Հասցնէլ: Ար թուէր, թէ թագաւորը դիմացի ափ կամաւոր կ'ուզէր երթալ, իր ուղբերը եւ ձեռքերը չէին կապուած: Նաւավարը, իր աչքին ծայրով կը դիտէր թագաւորը: Չարմանքով Հարց տուաւ. «Տէր թագաւոր գիտնալով որ կարճ ժամանակէ մը յետոյ մահուան Հետ դեմ առ դեմ պիտի գաք, ինչպէ՞ս Հանդարտ, խնդումերես եւ առանց մտահոգութեան նստած էք»: Երբ թագաւորը աս լսեց բարձրաձայն ինդաց եւ սկաւ ուրախութեան երգ երգել: Նաւավարը ալ աւելի զարմացաւ ու ըսաւ. «Եթէ ձերոգ վեհութիւնը կը խորհի թէ պիտի կարենայ փախուստ տալ, ամենայն յարգանօք կ'ըսեմ թէ ի գին ամէն բանի պարտ եմ այդ արարքին արգելք ըլլալ»: Որպէս նախագգուշութիւն, կ'որոշէ թագաւորին ուղբերը եւ ձեռքերը կապել, մարմինն ալ՝ նստարանին: Թագաւորը դարձեալ բարձրաձայն կը ինդաց եւ կ'արտօնէ որ զինք կապէ: Երբ ճամբուն կեսին կը Հաննին, նաւավարը Հետաքրքիր դարձեալ կը Հարցնէ թէ չէր վախնար վայրի կենդանիներուն կեր ըլլալ: Թագաւորը զարմանքով կ'ըսէ. «Ի՞նչ ըսիր, վայրի կենդանիներ, ո՞ր, գետին միւս կողմը: Յայտնի է որ դուն Հինգ տարի է գետին միւս կողմը չես անցած, նաեւ այս Հինգ տարուայ ընթացքին եղած երթեւեկէն ալ տեղեակ չես»: Թագաւորը կը մեղքնայ խեղճ նաւավարին եւ կ'ըսէ. «Քեզի պատմեմ թէ ինչ եղաւ անցեալ Հինգ տարուայ ընթացքին: Գետին միւս ափին ոչ վայրի անտառ կայ, ոչ ալ վայրի կենդանիներ: Ես միւս թագաւորներուն պէս չեղայ: Թագաւոր օծուած առաջին օրէս մտահոգութիւնը զիս ալ գրաւեց, բայց որոշեցի ճար մը գտնել: Նախկին օրերուն կը թուէր թէ այս մտահոգութիւնը պիտի խանգարէր իմ անդորրութիւնս եւ պիտի չկարենայի թագաւորական

կեանքս վայելել: Բայց ես յաղթեցի իմ այդ խորհուրդներս եւ սկսայ վայելել իմ օրերս: Հինգ տարուայ ծրագիր մը պատրաստեցի: Գիտէի թէ գետին միւս կողմը երթալէ խուսափիլ անկարելի էր: Չգացի թէ դժոխքը դրախտի փոխելու կարողութիւնը եւ թագաւորական զօրութիւնը ունէի: Որոշեցի գետին միւս ափի անտառը, որ մինչեւ այսօր նախորդ բոլոր թագաւորներուն Համար դժոխք եղած էր, դրախտի վերածել: Առաջին տարին յաճախ որսորդներու բանակներ ղրկեցի, որ բոլոր գազանները սպաննեն: Երկրորդ տարին երկու Հազար փայտահատներ ղրկեցի, որ ծառերը կտրեն եւ անտառը մաքրեն: Երրորդ տարին ճարտարապետներ եւ երկրաշափեր ղրկեցի, որպէսզի պալատներ կառուցեն: Պալատներ՝ գեղեցիկ պարտէզներով, մարզադաշտով եւ նաեւ լճակներով: Չորրորդ տարին ինծի Հաւատարիմ անձեր զատեցի եւ իրենց նախարարութեան պաշտօններ տուի: Անոնց պատուիրեցի նոր քաղաքը արդարօրէն կառավարելու օրէնքներ պատրաստել: Հինգերորդ տարին՝ Ժողովուրդին մէջէն բարի, առաքինի եւ Հաւատարիմ եղողներուն հրամայեցի իմ Հիմնած «Նոր Գաղի» քաղաքը գաղթել: Բոլոր գաղթողներուն ձրի բնակարան տրուեցաւ: Հիմն, մեր այս ճամբորդութիւնը զիս կը տանի Հոն, ուր պիտի թագաւորեմ երկար Ժամանակ: Խեղճ նաւավար նայէ՛, Հեռուէն որքան գեղեցիկ կը տեսնուի իմ նոր քաղաքս: Չէ՛ս տեսներ, նախարարներս գետին եզերքը գալուստս կը սպասեն, որպէսզի թափօրով քաղաք մտնեմ: Չէ՛ս տեսներ նուագախումբը եւ չէ՛ս իմանար ուրախութեան երգը որ կ'երգեն: Հոն Հինգ տարուայ սահմանափակում չկայ: Ես յաղթեցի իմ ճակատագրիս: Ես իմ բաղդիս տեր մարդ մը չէ՛մ: Եթէ կը փափաքիս, դուն ալ Հոս կեցիր եւ իմ նաւավարս եղիր:» Նաւավարը, գետին միւս ափի փառաւոր քաղաքը կը տեսնէ: Նաեւ կը տեսնէ Հոծ

բազմութիւն եւ զարդարուած փիղեր, թագաւորը պատշաճօրէն թափօրով քաղաք առաջնորդելու պատրաստ եւ թագաւորին կապերը կը քակէ: Ար օրուքնէ ետք թագաւորը արդարութեամբ եւ ուրախութեամբ կը կառավարէ «Նոր Գազի»ն:

* * *

Մեր ապրած կեանքը կը ներկայացնէ Գազին: Մենք, մեր կեանքին ինքնաշնչակ կառավարիչներն ենք: Բայց մեր այս թագաւորութիւնը ժամանակաւոր է եւ կարելի չէ նոյնիսկ մէկ երկվայրկեան զայն երկարել: Չենք օգտագործեր մեզի տրուած զօրութիւնը: Շահելով ծախսելով արտադրելով եւ անպէտ հաճոյքներով կը վասնենք մեր ժամանակը եւ զօրութիւնը: Երբ տխուր վերջամուտը կու գայ, կը մեղադրենք մեր ճակատագիրը, աստղերը եւ նոյնիսկ Աստուած: Չենք անդրադառնար թէ մենք կերտած ենք մեր ճակատագիրը: Նման «Նոր Գազի»ի թագաւորին, կանխատեսութեամբ, Հեռատեսութեամբ եւ յարատեւ ջանքով իմաստութեամբ եւ վճռականութեամբ մենք ալ մեզի համար կրնանք պատրաստել յաւիտենական երանութեան եւ խաղաղութեան կեանք մը: Այն ատեն անդորրութեամբ կրնանք ապրիլ մեր առօրեայ աշխարհիկ կեանքը, որ կը թուի սահմանափակուած ըլլալ «Ժամանակի եւ միջոցի», նաեւ «պատճառ եւ արդիւնք»ի օրէնքներու սահմաններուն ներքեւ:

Ճակատագիրը մեր սխալ արարքներուն Հետեւանքը եւ արդիւնքն է: Կարելի է մեր ներքին զօրութիւնը եւ կարողութիւնը օգտագործելով այն աստիճան բարձրանալ, որ ճակատագրին ազդեցութիւնը չկարենայ հոն հասնիլ:

Մենք ալ պարտ ենք մեր «Նոր Գազի»ն պատրաստել:





Ընդ ժամս մեղաւորի
մի նախանշիր,
չի զհապարած նորս
«Ն Գիտէ» :
(Սերաֆ 9:16)



ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԾԱՌԱՆՆ

«ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԱԵԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԱԷՋ ԲԱՒ ԶԻ ԽՈՏՈՐԻՐ»

Աստուծոյ նախահնամուխեան չհաւատացող թագաւոր մը ունէր ծառայ մը, որ ամէն առիթով կը կրկնէր. «Աստուած իր նախահնամուխեան մէջ բնաւ չի խոտորի» ու յաճախ կ'աւելցնէր. «Արքայ իմ, մի յուսահատիք, այն ինչ որ Աստուած կը մատակարարէ միշտ լաւագոյնն է»:

Օր մը, երբ թագաւորն ու ծառան որսի գացած էին, վայրի անասուն մը թագաւորին վրայ կը յարձակի: Թէեւ ճարպիկ ծառան կը յաջողի վայրի անասունը սպաննել եւ թագաւորը մաշէ ազատել, սակայն այս յարձակման ընթացքին թագաւորը իր ճկոյթ մատը կը կորսնցնէ:

Թագաւորը, փոխանակ զինք ստոյգ մաշէ ազատող այս ծառային իր շնորհակալութիւնը եւ գնահատանքը

յայտնելու, զայրացած անոր երեսն ի վեր կը պուժկայ. «Այս է Աստուծոյ նախախնամութիւնը: Եթէ Աստուած բարի կամեցողութիւն ունենար վայրի անասունը վրաս չէր յարձակեր եւ ես ալ մատս չէի կորսնցնէր»:

Ծառան խոնարհաբար կը պատասխանէ. «Արքայ իմ, ամէն ինչ իրարմէ կախեալ է: Ես միայն գիտեմ, թէ Աստուած բարի է եւ Ինք գիտէ ամէն բանի պատճառը: Ինչոր Աստուած կ'ընէ կատարեալ է եւ Ան իր նախախնամութեան մէջ բնաւ չի խոտորիր»:

Ծառային այս խօսքերը թագաւորին զայրոյթը կը սաստկացնեն: Կը հրամայէ ծառան ձերբակալել ու բանտարկել:

Թագաւորը, ուրիշ օր մը, առանձինն որսի կ'երթայ: Վայրի մարդոց յարձակումին կ'ենթարկուի եւ անոնց գիւղը գերի կը տարուի: Անոնք, ըստ իրենց սովորութեան, կը պատրաստուին գերեվարուած թագաւորը իրենց չաստուծոյն զոհ մատուցանել: Երբ անոր ոտքերն ու ձեռքերը կապուած զոհի սեղանին վրայ կը պառկեցնեն, իրենց «շաման»ը՝ արարողապետը կը նշմարէ, թէ զոհը՝ թագաւորը փոխանակ տասը մատի, միայն ինը մատ ունի: Մատերէն մին կը պակսի: Իրարանցումէ մը վերջ կը յայտարարեն, թէ Ֆիզիքապէս անկատար մարդ մը որպէս զոհ մատուցանել պատշաճ չէ: Թագաւորը ազատ կ'արձակեն:

Երբ թագաւորը պալատ կը վերադառնայ, ծառային ազատ արձակումը կը հրահանգէ: Մեծ ուրախութեամբ զինք կը դիմաւորէ ու կ'ըսէ. «Սիրելի ծառաս, Աստուած իսկապէս ինձի ցոյց տուաւ իր նախախնամութիւնը: Ես հիմա վայրենի մարդոց կողմէ մեռցուած պիտի ըլլայի, բայց մասներէս միտն պակաս ըլլալուն համար զիս ազատ արձակեցին»: Ապա հարց կու տայ. «Եթէ Աստուած այդքան բարի է եւ նախախնամող, ինչո՞ւ արտօնեց որ

քեզ բանտարկեմ)»:

Ճառան հետեւեալ ձեւով կը պատասխանէ. «Արքայ իմ, եթէ ես բանտը չըլլայի, ձեր վեհութեան հետ որսի պիտի երթայի: Քանի որ ես ֆիզիքապէս պակասաւոր չեմ, իրենց չաստուծոյն որպէս զոհ զիս պիտի մատուցանէին: Կը յիշէք քանիցս ըսած եմ. Ինչ որ Աստուած կ'ընէ կատարեալ է եւ Ինք բնաւ չի խոտորիր իր նախախնամութեան մէջ»:

* * *

Մարդիկ, իրենց անհաճոյ թուող կեանքի պայմաններէն եւ կացութիւններէն յաճախ կը գանգատին, մոռնալով թէ անոնք գիպուածով, կամ ըստ պատահման չեն, այլ նպատակաւոր են:

Ամէն առաւօտ պարտ ենք միշտ Աստուծոյ փառք տալ. Իրմէ խնդրել որպէսզի Ան մեր խորհուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն ոգեւորիչն ու ներշնչողը ըլլայ, ինչպէս նաեւ հանդարտեցնէ մեր զգացումները:

Աստուած Իր նախախնամութեան մէջ բնաւ չի խոտորիր:

Աստուծոյ ճամբաները կատարեալ են եւ Իր «խօսք»ը առանց ապականութեան, քանի որ Ինքն է Ճանապարհը բոլոր անոնց, որոնք Իրեն կ'ապաւինին:

* * *

Արդեօք գիտե՞ք թէ ես այս գիրքը ինչո՞ւ համար փափաքեցայ գրել: Աստուած գիտէ:

«Աստուած Իր նախախնամութեան մէջ բնաւ չի խոտորիր:»





ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Ինչնաճանաչող-մը իմաստութեան սկիզբն է:
 (Լըիստոպէլ)

Ճշմարտից իմաստութեանը գիտնալ է, թէ ոչինչ
 գիտենի:
 (Սոկրատ)

Տխմարը կը խորհի թէ իմաստուն է, բայց
 իմաստուն մարդը իր տխմար ըլլալը գիտէ:
 (Վելեամ Շէկսփեր)

Երբ ինչպիսի՞ր մեծամասնութեան Համակարծիք
 կը Համարիս, գիտցիր որ կանգ առնելու է-
 մտախորհելու պահը Հասած է:
 (Մարի Գուէյն)



ՄԱՀՐ

*Հիւանդը, երբ զինք քննող բժիշկը կը պատրաստուէր
քննութեան սենեակէն դուրս ելլելու, ըսաւ.*

*«Բժիշկ, մեռնելէ շատ կը վախնամ, Հաճիս ըսէր, թէ միւս
կողմ ի՞նչ կայ»:*

*Բժիշկը, ամենայն Հանդարտութեամբ պատասխանեց.
«Չեմ գիտեր»:*

*«Դուն չե՞ս գիտեր» Հարց տուաւ Հիւանդը, «դուն որ
Հաւատացեալ մարդ ես եւ չես գիտեր ի՞նչ կայ Հոն»:*

*Երբ բժիշկը դռան բռնակը կը բռնէր, դռան միւս կողմէն
ճանկուտուքի եւ ճզարու ձայներ իմացուեցան: Երբ դուռը
բացաւ, շուն մը մեծ ուրախութեամբ իր վրայ ցատքեց:*

*Բժիշկը Հիւանդին դառնալով ըսաւ. «Շունս տեսա՞ր:
Մինչեւ այս պահը այս սենեակին մէջ չէր գտնուած եւ չէր
գիտեր, թէ Հոս ինչ կայ: Միակ գիտցածը իր տիրոջ այս
սենեակին մէջ գտնուիլն էր, որով երբ դուռը բացուեցաւ,
առանց վախու ներս ցատքեց: Ես ալ մահէն անդին ինչ
կայ չեմ գիտեր: Միայն մէկ բան գիտեմ...:*

Գիտեմ որ Տէրս Հոն է: Արդ ալ բաւարար է»:



ԿԵԱՆՔԸ

Կեանքը առիթ մըն է օգտուէ՛
 Կեանքը շնորհալի գեղեցկութիւն մըն է Հիացի՛ր
 Կեանքը երազ մըն է իրականացո՛ւր
 Կեանքը մարտահրաւեր մըն է դիմագրաւէ՛
 Կեանքը պարտականութիւն մըն է կատարէ՛
 Կեանքը խաղ մըն է խաղա՛
 Կեանքը խոստում մըն է իրագործէ՛
 Կեանքը վիշտ եւ ցաւ է Համբերութեամբ յաղթահարէ՛
 Կեանքը երգ մըն է ուրախութեամբ երգէ՛
 Կեանքը պայքար մըն է ընդունէ՛
 Կեանքը ողբերգութիւն մըն է դիմագրէ՛
 Կեանքը արկածախնդրութիւն մըն է
 քաջութեամբ ձեռնարկէ՛
 Կեանքը բաղդ մըն է կերտէ՛
 Կեանքը չափազանց թանկագին է մի՛ փճացնէր
 Կեանքը կենցաղ մըն է պայքարէ՛ անոր Համար:
 (Մայր Թերեզա)



ՍԷՐԸ

Աչքս բացի
Մայրս տեսայ ու սիրեցի.
Գիտցայ, թէ սերով ծնած էի:

Հայրս գրկեց՝
Տաքով մարմնին մօտ ու սիրեցի.
Գիտցայ, թէ սերով ծնած էի:

Քաղէլ սկսայ՝
Հորիզոնս Հեռացաւ ու սիրեցի.
Գիտցայ, թէ սերով ծնած էի:

Հասկնալ սկսայ՝
Տեսայ ամէն ինչ ու սիրեցի.
Գիտցայ, թէ սերով ծնած էի:

Բոցը տեսայ՝
Ան ալ շատ սիրեցի.
Քանի, որ սերով ծնած էի:

Բռնել ուզեցի
Մասս այրեց.
Ատերը սորվեցայ:

Դպրոց դացի
Ուսուցիչներես ոմանք սիրեցի,
Ոմանք ասեցի:

Սկսայ դատել՝
Թէ արժանի է սիրել,
Կամ արժանի է ասել:

Տեսայ մի Հրեշտակի երես՝
Սիրահարուեցայ.
Յիշեցի, թէ սերով ծնած էի:

Երբ սիրով էի
Ժամանակն ալ սիրեցի.
Իսկ յետոյ զայն ասեցի:

Քանզի ան խլեց ինձմէ
Հայր, մայր ու սիրահար՝
Ան բոլորը զոր սիրեցի:

Մութ ու տխուր օրերուս
Իմացայ մի լուս ձայն՝
Սրտիս խորքէն միմեջող:

Յոյսի Լոյս մը ծագեցաւ
Երբ իմացայ որ կ'ըսէր.
«Սիրէ ու սիրէ եւ դարձեալ սիրէ»:

«Սիրէ, առանց Հօր ու մօր,
Սիրէ, առանց սիրահարի,
Սիրէ անխտիր բոլորին»:

Պարտիմ' կերտել նման սեր,
Քանի եկայ սերով
Նաեւ պետք է երթամ սերով:

*

Վաճէ Սվաճեան



ԻՆՉ Է ՍԷՐԸ

Ֆիզիքականին՝
 Չգոյական ուժն է ան.
 Սէրը գոյականին՝
 Ստեղծագործիչ պատուիրան:

Կեանքին՝
 Հրապուրիչ ուժն է ան.
 Բազմանալու ոճին՝
 Սեռային պատուիրան:

Չգացականին՝
 Հմայական ուժն է ան.
 Վերաբերումին՝
 Սիրալիր պատուիրան:

Մտայինին՝
 Չոհաբերական ուժն է ան.
 Ողորմութեան ու գութին՝
 Վէհանալու պատուիրան:

Իմացականին՝
 Հասկնալու ուժն է ան.
 Անհունի կամքին՝
 Կենցաղօգուտ պատուիրան:

Հոգեկանին՝
 Յառաջացման ուժն է ան.
 Հանապարհին՝
 Պայծառատես պատուիրան:

Քրիստոսին՝
 Քաշողական ուժն է ան.
 Ամէն մի էակին՝
 Սրբանալու պատուիրան:

*

Վաճէ Սվաճեան



ԱՉԱՏ ԿԱՄՔ

Կենդանիներէ կը տարբերի մարդ,
 Իրեն պարգետուած ազատ կամքով,
 Աստուծոյ մէկ շնորհքը՝ մարթ
 Որ ան գործէ ճիշդ Հայեացքով:

Անասունը չէ պատասխանատու
 Իր ըրածէն լաւ ու վատ,
 Իր արարքներն են բնազդու
 Կամքէ անկախ ու զատ:

Մարդ կարող է դատել
 Թէ ի՞նչ է բարի կամ ի՞նչ է չար,
 Նաեւ կարող է գատել
 Օգտակար է՝ թէ վնասակար:

Ջախջախիչ մեծամանութին,
 Կարծելով թէ ազատ կամքով,
 Տոյց կու տայ գործունէութիւն
 Իր ծնած բնոյթով:

Պարտ ենք կերտել իմաստութիւն
 Ճիշդ խորհելու ու խօսելու,
 Ազատ կամքով գատողութիւն՝
 Լաւագոյնը գործելու:

Դժուար է յաղթել մեր բնութեան,
 Կը կարօտի զօրաւոր կամքի
 Եւ Աստուածային օգնութեան՝
 Ի պատասխան մեր աղօթքի:

Որով մարդը կը տարբերի
 Անասունէն ապա ի՞նչով
 Եթէ ոչ իր երանելի
 Հրաշագործ Քրիստոսով:

*

Վաճէ Սվաճեան



ԻՐՆՉ Է ԱՂՕԹ-ՔԸ

Խաւարամիտին՝
 Առեւտուրի ցանկն է ան,
 Բաղձանքներուն ու կարիքին
 Ստանալու անարժան:

Մեղաւորին՝
 Խոստովանանքն է ան,
 Իր մեղքերուն ու Հաւատքին
 Արժանի քաւութեան:

Աստուածակախին՝
 Երկրպագութիւնն է ան
 Ստեղծագործիչին՝
 Երկիւղածութեան նշան:

Հոգեւոր ճամբորդին՝
 Աղերանքն է ան,
 Սիրոյ դաւանողին՝
 Հաւատք եւ յոյս ստացման:

Ամէն մի անհատին՝
 Անճնատուութիւնն է ան
 Աստուծոյ կամքին՝
 Արդիւնքներէ անջատման:

Չարթուցեալին՝
 Փառաբանութիւնն է ան,
 Անհունին՝
 Երանութեան նշան:

Գլխարտին՝
 Օրհնութիւնն է ան,
 Միջոց Աստուածային
 Բարիքներու գործադրման:

Ներհայեցողին՝
 Կենցաղն է ան,
 Մաքուր սիրտ կերտողին՝
 Պայմանը սրբացման:

Վա՛Հէ Սվաճեան



ՃԱՆԱԴԱՐՀԸ ՀԱՒԱՏՔԻ

Աստուածային շնորհքով
 Մարդ կը ծնի Հաւատքով
 Կը մոռնայ զայն շուտով
 Կամբէ անկախ պատճառով:

Մեր մանկական օրերու
 Կարողութեամբ մոռածերու,
 Տուեալներ բազմաթիւ
 Կ'ըլլան Համոզումներ անթիւ:

Ճամբորդութիւն մըն է ան
 Կեանքի մը տեսողութեան,
 Համոզումն է յառաջընթաց
 Իսկ Հաւատքն ալ վերջնականաց:

Ի պատշաճի կացութիւններ
 Կը փոփոխեն Համոզումներ
 Ի յայտ բերելով մտածումներ
 Եւ կից շատ մը Հարցումներ:

Սկիզբն է Հաւատքի
 Նշոյլներ վարանումի
 Հանդէպ Համոզումներու
 Որ պարտ են վերջանալու:

Հաւատքը անխախտելի է
 Երբ իմաստութեամբ կերտուած է
 Ու զինուած շարունակական
 Փորձառութեամբ անձնական:

Տեր ճշմարիտ Հաւատքի
 Անհատը երանելի
 Ճամբան կը բանայ յոյսի
 Եւ սիրոյ անսահմանելի:

«Հաստեա Հաւատով,
 Հաստատեա յուսով
 Հիմնեցի սիրով»
 Ճամբորդել է Քրիստոսով:

Վահէ Սվաճեան



Ո՛Վ

Ո՛վ եմ ես

Ո՛վ ես դուն,

Պարզ է կարծես

Այս գիտութիւն:

Պատասխանը յայտնի է

Մեր անունն է որ կ'ըսենք,

Բայց «ի՛նչ է անունը» չէ

Ան Հարցումը որ կը ըսենք:

Ես մի բան կը յիշեմ

Փիլիսոփայի մը ըսածը,

«Ար խորհիմ Հեռեւաբար Եմ»

Կը պատասխանեմ նմանը:

Բոլոր խորհուրդները

Կու գան ու կ'երթան,

Հակառակ ըսուածները

Անոնք չեն յաւերժական:

Կը դժուարանայ Հարցը,

Մեծ շփոթութեան մէջ

Կ'ըսենք մեր արհեստը

Աս ալ չ'ըլլար մի վերջ:

Ճարաչառ կը խորհինք

Թէ մենք մեր զգացումներն ենք

Բայց Հարցը ետք կու գայ ինք

Յայտնելով թէ մենք անոնք չենք:

Լոյս մը կը ծագի ցարդ-

Եւ մեր մարմինը ցոյց կու տանք:

Ներքին ձայնը կ'ըսէ «Ո՛վ մարդ»

Խորհէ եւ յետոյ սուր պատասխանք:

Միլիոնաւոր բջիջներ

Կու գան ու կ'երթան ամէն օր,

Փոփոխութեան կ'ենթարկուէր

Այդ մարմինը նաեւ Հզօր:

Պարզ չէ եղեր այս գիտութիւն

Պատասխանը այդ Հարցումին,

Ան կը գրաւէ մեր էութիւն

Կ'ըլլայ զբաղմունքը մեր մտքին:

Ո՛վ է գիտակից մեր խորհուրդին

Եւ թափանցած մեր մարմնին,

Ականատես մեր զգացումին,

Որ է Հասարակ բոլորին:

Գիտակցութիւնն է ան

Ամէն մի ողջ էակին,

Որ է միշտ անապական

Այդ Լոյսը Աստուածային:

Կեանքն է ան ամէն անհատի

Անմահ Կեանքը Քրիստոսի:

Ուստի պատասխանն է Հարցումի

«Ան եմ ես, Ան ես դուն» երանելի:

Վաճէ Սվաճեան



ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գարոցական կեանքի մէջ
 Կը սորվինք շատ մը նիւթեր:
 Եւ բոլոր ուսումէն վերջ
 Կ'ըլլանք մէկմէկ «գիտուններ»:

Արդե՞՞ք այս է այն գիտութիւն
 Որուն մենք միշտ կը բաղձանք,
 Որ մեզի կու տայ ազատութիւն,
 Որ բնաւ չտեսնենք տանջանք:

Գիտութեան նպատակն է
 Վտարել սխալ ըմբռնումներ:
 Ճշմարտութիւնը ի յայտ բերել է,
 Մեզ դարձնելով զարթուցեալներ:

Արդ գիտութիւնը կը խուսափի
 Ընդհանուրին գիտակցութենէ:
 Ան միայն կ'ըլլայ յայտնի
 Գիտակցութեան մակարդակէ:


Ան գիտնալ ու տեսնելն է
 Միութիւնը բազմութիւն:
 Ան տեսնել ու ճանչնալն է
 Ներգործութիւնը Անհունին:

Հաւատք եւ յոյս կարելոր են
 Այս ուղղութեամբ ընթացողին:
 Սէրն ալ կը յայտնուի ինքնիրեն
 Այս ճանապարհը ճամբորդողին:

Անդադար յարատեւութեամբ
 Հարկ է կերտել իմաստութիւն
 Անձնական փորձառութեամբ,
 Որ է Աստուածային գիտութիւն:

*

Վահէ Սվաճեան



ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի մէջ երկրաչափութեան
Բոլոր ձեւերու գոյութեան
Եռանկիւնը անխափան
Նշանն է կայունութեան:

Տիեզերքի մէջ բոլոր
Երրորդութիւնն է որ
Կը տիրէ ասոր ու անոր
Անհրաժեշտ է եւ կարելոր:

Ամէն մի էակի վերաբեր,
Նախ ի յայտ կու գան խորհուրդներ
Անոնց կը հետեւին խօսքեր
Որոնց կը յաջորդեն գործքեր:

Նշոյն երջանկութեան
Կապուած է երրորդութեան,
Ասինքն համերաշխութեան,
Խորհուրդ, խօսք եւ գործունէութեան:

Մարդիկ լի են փորձառութիւնով
Իրենց ֆիզիքական մարմնով
Եւ կազմուած զգացումներով
Որ կը վերլուծուին սրամաքանելով:

Անբաժան է նաեւ ան
Ծովի, ջուրի եւ ալիքի նման
Երեքէն մեկուն բացակայութեան
Գոյութիւն չ'ունենար որեւէ բան:

Է Աստուածային յատկութիւն
Հայր Աստուծոյ Էութիւն,
Ս. Հոգու Գիտութիւն
Եւ Քրիստոսի Երանութիւն

Յիսուս ըսաւ հետեւեալը.
-«Ես եմ ճշմարտութիւնը»
Երկրորդը՝ «ճանապարհը»
Իսկ երրորդը՝ «կեանքը»:

Ստեղծագործութեան գալով
Հայր Աստուածն ալ ըլլալով
Ս. Հոգու զօրութիւնով,
Մարմնացած է Քրիստոսով:

Հետեւաբար երակացութիւնը՝
Հայր Աստուած է ճշմարտութիւնը,
Ս. Հոգին ալ ճանապարհը,
Իսկ Քրիստոս ալ մեր կեանքը:

Հոգեւոր ճամբորդութեան,
Պայմանը յաջողութեան,
Հաւատք, յոյս եւ սէր երրորդութեան,
Կերտումն է հրամայական:

ՎաՀէ Սվաճեան



ՍԷՐԸ

Սէրը պէտէ է յարապէս ասել :
Սիրոյ զօրութեան նպաստակը
Եստուր-աժայտայտութիւնն է,
Ընդհանուր
«իրելը «պէղծագործել է :

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՅԱՆԿ

ԿՐՕՆԱԿԱՆ		ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՓՈՐՉԱՌԱԿԱՆ
ՄԻՋԻՆ ԱՐԵԿԵԼՔ	ԱՐԵԿԵԼՔ	
Հայր Աստուած	Վիշնու	Եղականութիւն
Սուրբ Հոգի	ՊրաՀմա	Մութ զօրութիւն
Քրիստոս	Շիվա	Աստուածայայտնութիւն
	Ադման	Ստեղծագործութիւն
		Տիեզերք
Փրկութիւն	Նիրվանա	Լրիւ գիտակցութիւն
Մեղք	Գարմա	Չօրութեան Հոսանքի խցում
		Չօրութեան թրթուացումի ցած յաճախականութիւն
Հոգի	Ադման	Կենսատու զօրութիւն
Ոգի (Տես Հոգի)		
Սասանայ	Ճիվա	«Ես» կամ Իդոս (Id)
Աշխարհիկ կեանք	Մայա	Ներկայ գիտակցութեան մակարդակ
		Պատրանքային կեանք



ԱՌՄՓՕՏ ԼՈՒՍՆ

Լուսաօր լուսոյ ժողովող Քարեաց, Ճառագայթ փառաց, Ուղիղնր փառաց,
 Երբեքնն արդար ժողովեա եւ սին, Ճանապարհ ինչ ցոյց, Ուսմ Ընդհոյս արքո,
 Լու իս լոյս ծագեա, ժողովն անդրանկաց: Ճիւղել ՚ի յերկինս: Ուս ցոյց ինչ լուսոյ

Բնիստն ՚ի Ըօրէ, Ի վէն Տէր Ըայցեմ, Միջնիւր Ըօր, Սէր անուն Յիսուս,
 Բնիւեա ՚ի Ընդհոյս, Ի Մարդասիրէր, Մոյժ սին յառագայտ Սիրով փով ճղմեա,
 Բան վեպ ՚ի Ըստոյս: Ինչ Քժշկութիւն: Մախոր Ըարտանկաց: Սիրր իմ փարեղէն:

Գանձր ողորմութեան, Լէր կեանկ մեռելոյս Յորժամ Բառ փառօվ, Վասն Բնութեան,
 Գանձիւր ծածկելոյս, Լոյս խաւարելոյս, Յաւագին առորն, Վասն ողորմութեան,
 Գըսող սին արա: Լուծանող ցառոյս: Յիշեա սին Քրիստոս: Վէրորին կեցո:

Դառն ողորմութեան, Խորճրոց Բիբոց, Նորագոյ Ընտրեանց, Տենչալուոյր քելեմամբ
 Դառանողին Քաց, Խաւարին շնորճեա, Նորագեա եւ սին, Տառ ինչ յագեմալ
 Դառնցո վերնոցն: Խորճառոյ լուսաօր: Նորագ ցարարեա: Տէր Յիսուս Քրիստոս

Երբեկ մեռելեան, Մանուր Ըօր ծոցոյ, Ընտրագոյ Քարեաց, Բաժնուր երկնաօր,
 Եղելոց ինանող, Մաճկելոյսըստուէրա ընտրեա սվառութիւն Բարեա ցալակէրոս,
 Եւ ինչ ողորմեա: Մագեա լոյս փառաց: Ընտրեա սնողութեան Բանց երկնայնոց:

Զարեի Տէր, յօգնել, Սենարար փրկելչ, Ուրտեսաց, Տէր, Յօղ արեան վն Տէր,
 Զարեո ըզմեմեալոց, Սէցո ըզմեմեալոց, Ոգոյս փրկութեամբ, Յօղեա ՚ի Ընդհոյս,
 Զորարեանց նմանիլ: Սանգեա սվալորեալոց: Ոյր վասն եմ ՚ի սոսգ Յնչժոցոկ անչն իմ:

Էր Ըայց անկողին, Ըարեա Ըաւարով, Զար մշակողին, Ինչեմալոց մեղօվ,
 Էակից Որդի, Ըարարեա յոսով Զար սերմանց նորին, Ինչեմալոց աղաշեմ,
 Է միշտ Սառեմ Ընգի: Ընմեկոց սիրով: Զարաց ցարոց: Ինչեմալոց ին Քարին:

Ընկալ սին Բընաժ, Զայնիս աղաշեմ, Պարգեւելչ Քարեաց, Փրկելչ Քալորից,
 Ընկալ ողորմած, Զեռօվն ցարարիմ Պարգեւեա իմոց, Պարեա սին փրկել
 Ընկալ Մարտաւեր: Զիր Քարեաց շնորճեա Պարարեաց ինողութեան: Փարձութեանց մեղաց:

Թագաօր փառաց, Վամբարամբ լուսոյ, Զոր շնորճեա աշացո Բառելչ յանցանաց,
 Թողութեանց քրոզ, Վեկնար ճարար, Զէրմ Ըեղուլ ցարարոյ Բառեա ցօրճեմեան,
 Թող ինչ ըլլանցան: Վողեալոց ամացո: Զընջել սլանցանս: Բըլեւ երգել սլանս: